ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
MARDI
2 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·264 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20·264

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

Ի՞ՆՉ ԿԸ ԾՐԱԳՐԷՆ ԱՄՆ-Ը

ԹԱԼԻՊԱՆՆԵՐԸ ԱՍՊԱՐԷԶ ԿԸ ԿԱՐԴԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Մինչ Միացեալ – Նահանգները կը ջանան տապալել Թալիպաններու վարչակարգը, Աֆղանիստանի Թալիպանները ասպարէզ կը կարդան Ամերիկայի : Փաքիստանի իրենց դեսպանը յայտարարեց Սեպտեմբեր 30-ին, որ Պէն Լատէն Աֆղանիստան է «իր իսկ ապահովութեան համար» եւ թէ «միայն ապահովութեան պատասխանատուները գիտեն թէ ո՞ւր է»։ Ծշդած է նաեւ թէ Պէն Լատէն ստացած էր Աֆղաններու «ֆաթվա»ն յանձնուելու համար, բայց, չէր պատասխանած։ Միւս կողմէ, Թալիպաններու գերագոյն պետը՝ Մոլլահ Օմար կեռխլայի պատճառը ըրած է Ամերիկայի եւ Զահէր Շահ Թագաւորի, եթէ Թալիպաններու վարչակարգը տապալի : Այս յայտարարութիւնը կ'ըլլայ այն ատեն, երբ «չուքի պատերազմ մը» սկսած է տեղւոյն վրայ, ուր բրիտանական եւ ամերիկեան յատուկ ուժերու անդամները ժամանած են քանի մը օր է, գտնելու համար Պէն Լատէնի թաքստոցը : Ըստ անգլիական «Օպզէրվըր» թերթին, հիմնուելով ամերիկեան եւ բրիտանական աղբիւրներու վրայ, Ուաշինկթըն եւ Լոնտոն անմիջական յարձակում մը նախատեսած են : Միւս կողմէ, Քաթարի անկախ հեռատեսիլը յայտարարած է որ ամերիկեան յատուկ ուժերու երեք անդամներ Թալիպաններու ձեռքն ինկած են, ինչ որ Քապուլ եւ Ուաշինկթըն կը հերքեն : Մեծն – Բրիտանիոյ վարչապետը համոզուած կը թուի որ Սեպտեմբեր 11-ի ոճրափորձերուն մէջ գլխաւոր դեր ունի Պէն Լատէն, հակառակ անոր որ փաստերը կը պակսին :

– ՍԻԱ-ն, երեք տարի առաջ ալ պատուիրակութիւններ ղրկած էր Աֆղանիստան համոզելու համար Թալիպաններու ընդդիմադիրները որ ձեռք անցընեն եւ ի հարկին սպաննեն Պէն Լատէնը, կը գրէ «Նիւ – Եորք Թայմզ» : Տեղեկատուութեանց գաղտնի սպասարկութեան գործակալներ փորձած էին գործակցիլ Մասուտի հետ եւ ամբողջ գործողութիւնը ձախողութեամբ վերջ գտած էր : Գիրքերն բացատրած է որ իր կառավարութիւնը սկսած էր զօրագունդեր մարզել Պէն Լատէնի դէմ, բայց, տեղեկատուութեան պակասի եւ կարգ մը կառավարութեանց գործակցութեան չգոյութեան պատճառաւ ձախողած էր :

– Հետապնդումներ կը շարունակուին Միացեալ – Նահանգներու, բայց նաեւ Եւրոպայի եւ մասնաւորաբար Գերմանիոյ մէջ : Կասկածներ կան նոյնիսկ, որ ոճրափորձերու պատրաստութիւնը Համպուրկ տեսնուած է :

Աշխարհի ամէն կողմերը մինչեւ հիմա 400 հոգի ձերբակալուած է : Այս ձերբակալութիւններէն ոմանք կատարուած են Միացեալ Նահանգներ, Մեծն - Բրիտանիա, Սպանիա, Մաւրիտանիա, Գերմանիա, Պելճիա, Ֆրանսա, Էքուաթոր : Վիզպատընի մէջ (Գերմանիա) ձերբակալուած են Թուրք մը եւ 2 Եմէնիներ : Կասկած կայ որ ասոնք մասնակցած են Միացեալ – Նահանգներու ոճրափորձերու կազմակերպութեան : Իրենց մօտ գտնուած են զէնքեր, կեղծ ինքնաթուղթեր, մեծ գումարներ, դրամատան քարտեր եւ Լոնտոն - Իսլամապատ օդանաւային ճամբորդութեան մը հաշուեցոյցը :

– Սեպտեմբեր 29-ին եւ 30-ին, կեղծ ահազանգներ բաւական խուճապ ստեղծեցին, նախ Օրլի – սիւտ օդակայանը, յաջորդ օրն ալ Էյֆէլի աշտարակը : Հեռաձայնով, անանուն անձեր ազդարարած էին Շաբաթ օր թէ ռումբ կայ եւ – աննախընթաց դէպք – ամբողջ օդակայանը, ուր 6000 ճամբորդ կար, պարպուած էր : Որոշ թռիչքներ ջնջուած էին, եւ ոչ մէկ տեղ, ոչ մէկ ռումբ կար : Կիրակի օր ալ Էյֆէլի աշտարակը պարպուած էր ժամ մը :

– Աֆղանիստանի նախկին Թագաւորը՝ Մոհամէտ Զահէր Շահ, որ Հռոմ կ'ապրի, զանազան տեսակցութիւններ կ'ունենայ այս օրերուն : Սեպտեմբեր 30-ին ամերիկեան Գոնկրէսի անդամներ Հռոմ գացած էին խորհրդակցելու համար իրեն հետ եւ ապահովելու իր մասնակցութիւնը յետագայ իշխանութեան մը, երբ Թալիպաններու վարչակարգը տապալի : Թագաւորը, որ 87 տարեկան է միայն չունի դահը վերահաստատելու :

– Միացեալ - Նահանգներու մէջ, տնտեսական կացութիւնը վատթարացած է եւ կարգ մը ճիւղեր ալ շատ մտահոգ են, ինչպէս դրօսաշրջութիւնը, ճամբորդական գրասենեակները, նոյնիսկ ընթացիկ առեւտուրի մարզի մէջ : Ամէնէն աւելի խուճապի մէջ են ապահովագրութեան ընկերութիւնները, երկու ոճրափորձերու վնասները 50–էն 60 միլիառ տոլար կը գնահատուին :

– Պէն Լատէն, բացարձակապէս կը հերքէ որեւէ մասնակցութիւն Նիւ–Եորքի եւ Ուաշինկթընի ոճրափորձերուն մէջ, հարցազրոյցի մը ընթացքին որուն վաւերական բնոյթը չէ հաստատուած եւ կ'ազդարարէ որ, եթէ անհետանայ, ճիհատը կը շարունակուի : «Հարցը, կ'ըսէ Ուսաման չէ այլ՝ իսլամը» : «Քապուլէն Ուսաման չէ ալ՝ իսլամը» : «Քապուլէն Չէչէնիա, անցնելով Պաղեստինէն, Պոսնիայէն, Սուտանէն, Պիրմանիայէն, Գաշմիրէն եւ բազմաթիւ այլ երկիրներէ, ծիհատի կազմակերպութիւնները գործի վրայ են» : Կ'աւելցնէ որ դրամական հարստութեան ստեղծումը որեւէ հետեւանք չունի : Ինչ կը վերաբերի իր պատասխանատուութեան, կը պատասխանէ .– «Լուր չունէի այդ յարձակումներէն : Զօրավիգ չեմ ըլլար անմեղներու սպանդին : Այդ սպանդները հետեւանք են Ալլահի անէծքին Ամերիկայի դէմ, իր յրածնեբուն համար անցեալին, այլ կրօնքներու, այրերու, կիներու, մանուկներու դէմ, ի մասնաւորի մահմետականներու» : Թերթը կը ճշդէ որ հարցումներ ղրկած էր Պէն Լատէնի Քապուլի ազդեցիկ Թալիպաններու միջոցաւ :

– Քապուլի մէջ, Սեպտեմբեր 30-ին, վերսկսած է մարդասիրական կազմակերպութեանց ութ անդամներու դատավարութիւնը : Ձերբակալուած էին Օգոստոսին, այն ամբաստանութեամբ, որ քրիստոնէութիւն կը քարոզեն :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԱՖԱԹ – ՓԵՐԷՍ տեսակցութենէն ի վեր (Սեպտեմբեր 27) 17 Պաղեստինցիներ սպաննուած են, ինչ որ ցոյց կուտայ որ հրադադարը բացարձակապէս չի յարգուիր : Իսրայէլ 48 ժամ պայմանաժամ տուած էր պաղեստինեան իշխանութեան որպէսզի յարգել տայ հրադադարը, այլապէս «Իսրայէլի Դահլիճը նիստ կը գումարէր եւ անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռք կ'առնէր ինքնապաշտպանութեան իր իրաւունքը գործադրելու համար» : Շ· Փերէս, որ աջին կողմէ կը քննադատուի որովհետեւ Արաֆաթին (ահաբեկիչին) հետ տեսնուած է, այլեւս չի կրնար համբերել եւ կ'ամբաստանէ բանակը որ հրադադար չուզեր : Աւելին, համոզուած է, ըստ Եռիխթ Ահարոնոթ թերթին, որ ցահալը (Իսրայէլի բանակ) կ'ուզէ սպաննել Արաֆաթը : Եւ քննադատելով իսրայէլեան մամուլը կ'ըսէ · – «Երեւակայենք որ Արաֆաթէն ազատինք, ո՞վ պիտի փոխարինէ զայն · Համասը, Ճիհատը կամ Հեզպոլլահ» :

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԼԱՆՏԱՅԻ մէջ, կաթողիկէ լրագրող մը սպաննուած է Սեպտեմբեր 28–ին : Տըլլըրի Սընտէյ Ուըրլտ շաբաթաթերթին թղթակիցը կնոջը հետ տուն կ'երթար, Պելֆասթի հարաւ–արեւմուտեան մէկ արուարձանը, երբ կառք մը կեցած է քովը, մարդ մը իջած է կառքէն ու կրակ բացած Մարթին օ'Հականի վրայ, որ քիչ ետք մեռած է : Հիւսիսային Իրլանտայի բողոքական զաղաքազօրքերը տէր եղած են մահափորձին :

Լ· ԺՈՍՓԷՆ, երրորդ անգամ ըլլալով Թուլուզ գնաց Սեպտեմբեր 28–ին եւ այս անգամ 1,5 միլիառ ֆրանքի օժանդակութիւն մը խոստացաւ աղէտեալ շրջանին, ուղղակի կամ անուղղակի : Զուգեց, սակայն, դիրք ճշդել աղէտին պատճառներուն մասին : Անկախ պետական, քաղաքապետական եւ Թոթալի յանձնաժողովներէն, ամէն կողմ բարեսիրական ձեռնարկներ կը կազմակերպուին, հեռատեսիլէն թէ բեմերէն ի նպաստ աղէտեալներուն :

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ, չորրորդ ամիսն ըլլալով, գործազրկութիւնը յաւելում կրեց Սեպտեմբերին եւ 50·000 նոր գործազուրկներ կան վերջին երկու ամիսներուն : Այժմ, գործազրկութեան համեմատութիւնը 9%–էն աւելի է :

ՖՐԱՆՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ 9–րդ վեհաժողովը որ տեղի պիտի ունենար Հոկտեմբեր 26 – 28-ին Պէյրութ, կրնայ գալ տարուան յետաձգուիլ միջազգային կացութեան պատճառաւ : Կազմակերպութեան պատասխանատու նախարարը՝ Ղասան Սալամէ յայտարարած է որ Պէյրութ «կայուն եւ ապահով» վայր մըն է եւ թէ Լիբանան պատրաստ է ընդունելու Ֆրանսախօս 55 պատուիրակութիւնները :

ԻՏԱԼԻՈՅ հարաւի Գաթանծարոյի նաւահանգիստին մօտ նաւ մը խրած է 463 գաղտնի գաղթականներով, մեծամասնութեամբ Քիւրտ : 26 Սրի – Լանքացիներ ալ, ողբալի վիճակի մը մէջ գտնուած են Գերմանիայէն Անգլիա (Տուվրի նաւահանգիստը) հասած բեռնակառքի մը մէջ :

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑ Ռ· ՔՈՉԱՐԵԱՆԻ ԴԷՄ

«Հանրապետութիւն» կուսակցութեան կազմակերպած Սեպտ· 28–ի ցոյցին որ ընթացած է նախկին վարչապետ Ա· Սարգսեանի եւ Երեւանի նախկին քաղաքապետ Ա· Բաղէեանի ղեկավարութեամբ, շուրջ տասը հազար հոգիի ներկայութեան պահանջուած է նախագահ Ռ· Քոչարեանի հրաժարումը : Խօսք առնողները բոլորն ալ ծանրացած են այս կէտին վրայ, յայտարարելով որ ստորագրութիւններու հաւաքի մը ձեռնարկուած է այդ նպատակով : Ցոյցին մասնակից երեսփոխանները հոն, տեղւոյն վրայ ստորագրած են փաստաթուղթը · «Հանրապետութեան» գործակից «Ժողովրդական Կուսակցութեան» եւ «Ազգ· միաբանութեան» երեսփոխաններուն մասին յայտարարուած է թէ գայն կը ստորագրեն Խորհրդարանին մէջ :

Ա· Սարգսեան յայտնած է թէ ցոյցը աւելի բազմամարդ կ'ըլլար, եթէ իշխանութիւնները միջոցներու ձեռնարկած չըլլային զայն խոչընդոտելու համար :

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Սեպտ· 29/Հոկտ· 1)

ԱԶԱՏ ԱՐՇԱԿԵԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԱՏԵԱՆԻՆ ԴԻՄԱԾ Է

Նախկին երեսփոխան, «Անկախութեան բանակ» կազմակերպութեան անդամ Ազատ Արշակեան իրեն պատկանող մթերանոցի մը մէջ զէնք ու զինամթերք պահելու ամբաստանութեամբ ձերբակալուած ու Սեպտեմբեր 18-ին երկու ամսուան բանտարկութեան դատապարտուած էր : Փաստաբանը Սեպտեմբեր 27-ին դիմած է վերաքննիչ դատարանին, պնդելով որ խնդրոյ առարկայ մթերանոցը ոչ թէ նախկին երեսփոխանին, այլ հօրը կը պատկանի եւ երկու տարիէ ի վեր կ'օգտագործուի «Անկախութեան բանակ»ին կողմէ :

***

Ժ· ՇԻՐԱՔԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐԸ 1700–ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹԻՒ

1700–ամեակին առթիւ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ·ի շնորհաւորական հեռագիր յղած է Ֆրանսայի նախագահը : Ժ· Շիրաք յոբելեանը որակած է խանդավառ յուզումներու շրջան մը որուն իր անմիջական մասնակցութիւնը կը բերէ Ֆրանսայի Հայ համայնքը :

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐԸ ՄԵՐԺՈՒԱԾ

Գերմանիոյ Խորհրդարանին դիմումնագրերու յանձնաժողովը մերժած է Խորհրդարանին քննարկումին ներկայացնել ցեղասպանութեան ճանաչումի աղերսագիր մը որ կը կրէր 14 հազար ստորագրութիւն : Մերժումին համար տրուած պատճառաբանութեան մէջ կ'ըսուի թէ «նկատի առած Հայաստան – Թուրքիա ներկայի յարաբերութիւնները, Գերմանիոյ երկու միլիոն Թուրքերու այս նիւթին նկատմամբ զգայնութիւնը եւ անաբեկչական արարքները, վերջին ծայր օգտակար կ'ըլլայ ցեղասպանութեան առընչութեամբ վճիռ մը չարձակել» :

Դիմումնագրերու յանձնաժողովը այս եզրակացութեան յանգած է Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութեան կցորդներուն հետ տեսակցութիւններէ ետք :

«Հիւրրիյէթ» (Սեպտեմբեր 29) լուրը հաղորդելով կ'աւելցնէ թէ Գերմանիոյ Ժողովրդավար ընկերվարական կուսակցութեան երեսփոխան, Ու· Հիքշ որ նախաձեռնողներէն եղած է յիշեալ դիմումնագրին, պիտի շարունակէ այլ կուսակցութիւններու հետ իր բանակցութիւնները :

ՇԷՆ-ՖՐԱՆՍ Պ· ՊՕՂՈՍԵԱՆԻ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Սեպտեմբեր 29 – 30-ի մեր թիւով տեղեկացուցած էինք թէ Սեպտեմբեր 25–ին Երեւանի Առագաստ սրճարանի մէջ դիակը գտնուած էր Վրաստանի Ջաւախքի շրջանի բնակիչ Պ· Պօղոսեանի : Հայաստանեան մամուլը լայն տեղ կու տայ պատահարին, ծանրանալով սպանութեան մը վարկածին վրայ : Նոյնիսկ խնդրոյ առարկայ կ'ընէ սպանութեան մէջ նախագահ Ռ· Քոչարեանի թիկնապահներուն պատասխանատուութիւնը · անոնք տեղւոյն վրայ կը գտնուէին, քանի որ հոն էր նաեւ նախագահը, ընկերակցութեամբ Շ· Ազնաւուրի եւ այլ հիւրերու : Եւ անոնց մեկնումէն շատ կարճ ատեն ետք տեղի ունեցած է երիտասարդին մահը :

«Շէն – Ֆրանս» Սեպտեմբեր 29 թուակիր հաղորդագրութեամբ մը կը դատապարտէ Ջաւախքի իր պատասխանատու Պ· Պօղոսեանի անձին վրայ կատարուած մահացու յարձակումը, պահանջելով որ ձերբակալուին ու դատուին յանցաւորները որոնց մասին կ'ըսուի թէ Հանրապետութեան նախագահին թիկնապահներու խումբէն են : Կազմակերպութիւնը անընդունելի կը նկատէ նման արարք երկրի մը մէջ որ կը ջանայ ժողովրդավար պետութիւններու շարքին մաս կազմել :

ԲԱՑ ՆԱՄԱԿԱՆԻ

ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՒՈՐ ԱՂԱՆԴՆ ԸՆԴՄԻՇՏ ՊԱՐՏՈՒԱԾ Է

ԼԵՒՈՆ ՄԻՐԻՋԱՆԵԱՆ

ԵՐԵՒԱՆ («Յառաջ») .–

Քաղաքներն էլ, մարդկանց նման, ենթակայ են ճակատագրի պատեհապաշտութեանը, մինչեւ իսկ՝ իրենց անունների հարցում:

Յեղափոխական Կամօ Տէր–Պետրոսեանը Նոր Բայազէտի հետ ոչ մի կապ չի ունեցել: Այդ կողմերում երբեւէ չի էլ եղել: Բայց դա չխանգարեց, որպէսզի Նոր Բայազէտը վերանուանէին նրա անունով: Նոյնը կրկնուեց նաեւ Եղիշէ Չարենցի պարագային: Մեծ տառապեալը երբեք չի եղել ներկայումս իր անունը կրող քաղաքում, քանի որ նրա օրօք դրա տեղում ամայի ու անջրդի մի տափարակ է եղել: 1967–ին, երբոր պէտք է տօնուէր մեծ բանաստեղծի 70–ամեակը, նրա անունով վերակոչեցին այդ տափարակում 1946 թուականից ի վեր բարձրացած Լուսաւանը, որն արդէն համբաւաւոր արդիւնաբերական քաղաք էր՝ համամիութենական չափանիշով:

Այսօր կարող է տարօրինակ թուալ, որ անուանափոխութիւնը քաղաքի հետ նախապէս չհամաձայնեցուեց: Բայց այն ժամանակուայ համար դա սովորական մի բան էր: Ինչ–որ մէկն ասել էր, թէ Չարենցը եղել է Լուսաւանից ոչ հեռու գտնուող Ծաղկաձորում, եւ այդքանը բաւական էր համարուել ծանրակշիռ անուանափոխութեան համար:

Ի դէպ, արդար լինենք պատմութեան առջեւ եւ ասենք, որ Չարենցն, այնուամենայնիւ, ինչ–որ «կապ» ունի իր անունը կրող քաղաքի... տարածքի հետ: Ծաղկաձոր՝ գրողների հանգստեան տուն գնալիս, նա ի հարկէ Ֆանտան գիւղի բարձունքից նայած պիտի լինի անջրդի տափարակին: Մանաւանդ այն օրը, 1937ի յուլիսեան այն չարաղէտ օրը, երբ նրան պաշտօնապէս արտաքսեցին Ծաղկաձորից: Այդ օրը, կնոջն ու դստրիկներին սայլի վրայ տեղաւորած, բարձրաձայն նզովելով աշխարհիս անարդարութիւնները, Չարենցը վերջին անգամ անցել է Ծաղկաձոր–Երեւան ճանապարհին ընկած Ֆանտան գիւղով՝ մի խռովայոյզ հայեացք նետելով նաեւ ներքեւում փռուած տափարակին...:

Ամէն անգամ Երեւան – Սեւան մայրուղուց դէպի Չարենցաւան թեքուելիս, ես ակամայ յիշում եմ չարենցեան ողբերգութիւնը, որը քսաներորդ դարի անաւորոյն ողբերգութիւններից է՝ իր տեսակի մէջ, թերեւս նախընթացը չունեցող: Այս մասին, սակայն, յետոյ՝ մի ուրիշ օր: Այսօրուայ ասելիքս այլ է:

Ես տնից դուրս եկայ այն հաշուով, որ ժամանակին կը հասնեմ Չարենցաւան եւ ներկայ կը լինեմ նորահիմն ու նորօծ եկեղեցու երեկոյեան ժամերգութեանը: Չարենցաւան ես յաճախ եմ գնում, եւ դրանում առանձին հարց չկայ. տակսի միկրոաւտոբուսն ինձ Աջափնեակից հասցնում է Արովեանի պուրակ, այնտեղից էլ երթուղային որեւէ աւտոբուս՝ Չարենցաւան:

Բայց ի զուր չի ասուած, թէ՝ մարդը որոշում է, Աստուած՝ կատարում: Բնաւ մտքովս չէր անցնի, թէ այս անգամ Աստուած ուշացնելու է ինձ եւ այն էլ, ի՞նչ էք կարծում՝ ո՞ւմ, Վլադիմիր Պուտինի միջոցով: Ռուսաստանի Դաշնութեան նախագահը, որ Հայաստան էր ժամանել նախորդ օրը, այսօր պէտք է այցելէր Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետին, Մատենադարան եւ Երեւանի Պետական Համալսարան: Ես, մեղաւորս, այդ հանգամանքը հաշուի չէի առել եւ, ահա, ուղիղ դէպի Արովեանի պուրակ գնալու փոխարէն, մեր միկրոաւտոբուսը, ոստիկանների ուղեցոյց փայտիկներին հնազանդելով, ստիպուած է չարունակ անցնել զառուղի փողոցներով, չէնքերի բակերով, ճեղքել մեքենաների խառնակուսակ գետը՝ գնալով, ուր պատահի: Նալբանդեան փողոց հասնելով, մեքենավարը յայտարարում է.

–Իջէք, ես էստեղից եա եմ դառնալու...

Այստեղից դէպի Արովեանի պուրակ եւ աւելի վեր՝ մեքենաների երթեւեկը դադարեցուած է: Գնում եմ ոտքով՝ ե՛ւ սրտնեղած, ե՛ւ գոհ այն բանից, որ տեսնում եմ, թէ մայթերին չարք – չարք կանգնած ժողովուրդն ինչպէս է համբերութեամբ սպասում Պուտինի՝ Համալսարան գնալուն, նրան մի պահ տեսնելու ու հեռուից ողջունելու համար: Բոլորի հայեացքն ուղղուած է Մատենադարանի կողմէ, որտեղից պիտի երեւայ կառավարական մեքենաների չարասիւնը:

Թաւշեայ, սքանչելի աչուն է: Երանութիւն է քայլել խաղաղ, անմեքենայ Աբովեանն ի վեր, մանաւանդ վերյիշելով ուսանողական տարիներդ՝ Համալսարանի հին չէնքի մօտով անցնելիս:

Արովեանի պուրակում պարզւում է, որ Սեւանի ուղղութեամբ մեկնող մեքենաները կանգնած են Հարեւան փողոցում՝ Գետառի ափին: Այս ժամանակաւոր դժուարութիւնն էլ է յաղթահարւում, եւ ես, վերջապէս. Չարենցաւան տանող միկրոաւտոբուսի մէջ եմ: Ուղեւորները յոխ են, նոյնիսկ երեք հոգի էլ՝ ոտքի վրայ, բայց ճանապարհը բացելու հրամանն ուշանում է: Պուտինը դեռ Համալսարան չի գնացել:

– Կայ–չկայ, Մատենադարանը Պուտինին չատ է դուր եկել, – կարծիք է յայտնում առջեւի չարքում նստած մի տիկին:

– Բա ո՞նց, – ձայնակցում է մի ուրիչ տիկին՝ մտաւորականի դիմագծերով, երեւի թոչակառու մանկավարժ, – լուրջ մարդը Մատենադարան մտնի ու չո՞ւտ դուրս գայ...

– Համալսարան ամէն տեղ կայ, բայց մեր Մատենադարանը միակն է, է՛, – իր համաձայնութիւնն ու մեկնաբանութիւնն է բերում թաչկինակով անընդհատ ճակատի քրտինքը սրբող մի պատկառելի պարոն:

Մանկավարժ թուացող տիկինը ոգեւորւում է.

– Ես միշտ էլ ասել եմ, որ մենք Ռուսաստանից չպէտք է կտրուենք, մեզ համար Ռուսաստանն անփոխարինելի է:

– Մե՞զ ես ասում: Մեր «խելօքներին»ասա, նորից առաջին չարքի տիկինն է:

Զրոյցն այս ոգով բաւականին երկարում է, մինչեւ որ, վերջապէս, փողոցը միանգամից հոնդում է սուրացող մեքենաներով: Շարժւում է եւ մեր մեքենան: Պուտինն արդէն Համալսարանում է:

... Ահա եւ նա ինքը՝ Չարենցաւանի նորակերտ, առաջին եւ ընդամէնը մի քանի չաբաթ առաջ օծուած Ս. Փրկիչ եկեղեցին: Կանգնած է նա քաղաքի հիւսիսային մասում, բարձունքի վրայ: Որ կողմից էլ գաս, նա քո առջեւ յառնում է միանգամից, ամբողջութեամբ: Եւ առաջին իսկ ակնթարթից ներկայանում է հին ծանօթի նման:

Այն ե՞րբ էր, որ Երեւանի Ս. Յովհաննէս եկեղեցու երիտասարդ սարկաւագ Նորայր Սարգսեանը ինձ՝ հաւատացեալ դարոցականիս, սովորեցրեց, որ եկեղեցի մտնելիս պէտք է խաչակնքել ու ասել. «Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ»: Դա առաւել քան կէս դար առաջ էր: Յետոյ սարկաւագ բարեկամս դարձաւ Տէր Նորայր, ապա մեկնեց Լենինական, ուր բարի համբաւով քահանայագործում էր, եւ հիմա օրհնութեամբ է յիչւում ահաւոր ու անբնական երկրաշարժի զոհերի տանկում...

Ահա, այս անգամ եւս, ես անթերի կատարում եմ երջանկայիշատակ բարեկամիս պատգամը, որը չեմ մոռացել երբեք: Եւ, չեմից ներս մտնելուս պէս, կէս դար առաջ սովորածս աղօթքը դեռ չաւարտած, ես ինձ բառացիօրէն զգում եմ եկեղեցու գրկում: Ի՛նչ ընդարձակածաւալ աղօթարահ: Կարելի է ասել, եկեղեցին ամբողջութեամբ աղօթարահ է: Պարզ, անսեթեւեթ, բայց ճարտարապետական համարձակ ու ինքնատիպ լուծումներով այս եկեղեցին առաջին իսկ պահից առինքնում է իր գեղեցկութեամբ, սրտաբացութեամբ, հարազատութեամբ, լուսառատութեամբ, մտերմութեամբ եւ մասամբ նորին:

Հայկական բազիլիկի աւանդոյթներով եւ արդիական մօտեցումներով գերազանց կերտուածք՝ ծիրանաւուն տուֆից, Ս. Սեղանը՝ բաց-սրճագոյն տուֆից եւ մօզայիկ ոճով, իսկ նախասրահի գըլխին՝ գողտրիկ վերնայարկ՝ երգչախմբի համար:

– Ե՞րբ է սկսուելու ժամերգութիւնը, – հարցնում եմ մոմավաճառուհուն:

– Ժամերգութիւնն սկսուել է ժամը 17–ին եւ աւարտուել, – լինում է պատասխանը:

Իսկ ես այնպէս տրամադիր էի լսել «Լոյս զուարթ»ը, որ վաղուց, չատ վաղուց չեմ լսել:

Բակում ծանօթանում եմ եկեղեցու միակ քահանայի՝ Զարենցաւանի հոգեւոր հովիւ Իսահակ Քհնյ. Մարգարեանի հետ: Ծագումով պարսկահայ է, կրթութեամբ՝ երաժշտագէտ: Ուրախութեամբ ընդունում է եկեղեցու վերաբերեալ հիացումիս արտայայտութիւնները եւ հաճոյքով պատասխանում հարցերիս: Եկեղեցին առնուազն 800 հոգի կարող է տեղաւորել: Երգչախումբը կազմաւորուած է երաժշտական ուսումնարանի սաներից: Տէրհօր ցանկութիւնն է «պրոֆեսիոնալ երգչախումբ ստեղծել»:

Մեր զրոյցը չարունակ ընդհատւում է «ներեցէք»ներով. հաւատացեալները խորին յարգանօք եւ ըստ պատշաճի դիմելով տէրհօրը, իրենց հետաքրքրող հարցեր են պարզում վաղուայ պատարագի վերաբերեալ:

...Կիրակի է: Զարենցաւանի Ս. Փրկիչ եկեղեցու առաջին Խաչվերացը:

Քաղաքի վրայ հանդիսաւորապէս տարածւում են պատարագի սկսուելն ազդարարող Ս. Փրկչի զանգերի ղօղանջները: Եկեղեցին լցւում է տարբեր տարիքի հաւատացեալներով: Ամէն ինչում զգացւում է, որ տեղաբնակները եկեղեցու կարօտ ունեն: Պէտք է տեսնել, թէ ինչպիսի երկիւղածութեամբ են ծունկի գալիս՝ հաւատով խոստովանելիս, պէտք է լսել, թէ ի՛նչ ջերմեռանդութեամբ են արձագանգում, երբ ամէն անգամ հնչում է «Խաղաղութիւն ամենեցուն»ը:

Առայժմ միաձայն՝ երգչախումբն իր դերի մէջ է բաւականին յաջող: Լսում եմ նրանց եւ դպիր պատանիներին, որոնցից ամենակրտսերը հպարտութեամբ է կատարում պատարագչին սպասաւորելու պատասխանատուութիւնը, եւ մտածում եմ. «Այս ե՞րբ սովորեցին այսպէս անթերի չարական ու պատարագ երգել, այսպէս վարժ, յաճախ՝ անգիր, սաղմոս ասել: Ո՞ւր է մնում մեր լեզուաբան ա-րերի հէքեաթաբանութիւնն այն մասին, թէ իբր այսօրուայ սերնդին դժուար մատչելի են ազգային ուղղագրութիւն ու գրաբարը»... Ի դէպ, որեւէ եկեղեցում ես երբեք չեմ հանդիպել այս հէքեաթասաց տիտղոսազարդ լեզուաբան պարոններին: Նրանք Ազգի, Եկեղեցու, Ժողովրդի հետ ոչ մի առընչութիւն չեն ունեցել եւ չունեն:

Այս պահին արեւմտեան կիսագնդում երկու հոգու ականջ անպայման «կանչում է»: Դրանք են Գանատահայեր Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Էլիզ Տէրվիչեան, որոնց արդեամբ «կառուցավ (ո՛չ նրանց մեղքով՝ Վ–ով – Լ.Մ.) Սուրբ Փրկիչ եկեղեցիս»...:

Թող որ եկեղեցիս տակաւին լուրջ հոգսեր ունի՝ նոր զգեստների եւ ճաշակաւոր սպասքի հայթայթում, բակի յարդարում, պարսպապատում եւ այլն, մենք, սակայն, չտապենք մեր երախտագիտութեան խօսքը յղել պատուարժան բարերարներին՝ Զարենցաւանին այսպիսի հրաշալի եկեղեցի պարգեւելու համար:

Այսօր չատ է խօսւում Հայաստանում օր ըստ օրէ զօրացող աղանդների մասին: Նրանց ազգաքայքայիչ գործունէութիւնը, դժբախտաբար, հաւաքական դիմադրութեան չի հանդիպում: Նրանց դէմ պէտք է պայքարի մեզանից իւրաքանչիւրը՝ թէ՛ բանիւ, թէ՛ գործով: Նրանց արագ բազմացումն ու խանգարիչ ուժը յրջօրէն զգացւում է նաեւ Զարենցաւանում եւ մերձակայ բնակավայրերում: Բայց մենք քաջալերուած ենք այն գիտակցութեամբ, որ սուրբգրական մեր հողը օտարամուտ սերմեր չի սնուցի:

Մանաւանդ, իսկ սա ամենակարեւորն է, ամենավտանգաւոր աղանդը՝ խորհրդային աթէիզմը, մէկ ընդ միշտ պարտուած է...:

Սեպտեմբեր 20

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԻՏԱԼԻՈՅ ՊՈԼՈՆԻՈՅ, ՖԵՐՐԱՐԱՅԻ ԵՒ ՏՐՋԱԿԱՅՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ

Միջնադարեան Իտալիոյ հայկ. գաղթօճախները ԺԳ. – ԺԴ. դարերուն բարգաւաճման ընթացքի մէջ էին չնորհիւ Կիլիկիայէն եւ Հայաստանէն նոր հասնող գաղթականներու, որոնք ստուարացուցին նախորդող մէկ–երկու դարերուն տարբեր քաղաք–պետութիւններու մէջ կազմաւորուած հայկական համայնքները, ինչպէս նաեւ այլ քաղաքներու մէջ նոր համայնքներ կազմաւորուեցան: Բարգաւաճ եւ կարեւոր գաղթօճախներ կազմաւորուեցան նաեւ Պոլոնիոյ, Ֆերրերայի եւ չրջակայքին մէջ:

ՊՈԼՈՆԻՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՋԱԽԻՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ

Միջնադարեան Իտալիոյ հայկ. ամէնէն կարեւոր համայնքներէն մէկը կը կազմէր Պոլոնիոյ հայ գաղթօճախը, որ բաւական ժամանակ ազդեցիկ հեղինակութիւն եղած է քաղաքին մէջ:

Պոլոնիա, լատիներէն հնչումով՝ Պոնոնիա, քաղաք մըն է հիւսիսային–կեդրոնական Իտալիոյ մէջ, ծովու մակերեւէն 55 մեթր բարձրութեամբ յայնատարած դաշտավայրերու վրայ. անիկա էթրուսքեան հին բնակավայր մըն էր, ուր բարբարոսներու ներխուժումներէն ետք հաստատուեցան հոներ, գոթեր եւ լոմպարտացիներ: Աւստատիրական չրջանին անիկա կազմաւորուեցաւ իբրեւ ազատ համայնք, որ հաստատուեցաւ Հռոմէական Սրբազան կայսրութեան կայսրերուն կողմէ: Իբրեւ ազատ համայնք Պոլոնիոյ մէջ մեծ ընտանիքներ կազմաւորուեցան, ինչպէս նաեւ չրջակայ գաւառներէ վերաբնակիչներ հաստատուեցան հոն. անոնք նոր կառուցումներով գեղեցկացուցին ու ամրացուցին քաղաքը եւ ապահով բնակավայրի վերածեցին զայն: Նշենք, որ մինչեւ հիմա ալ Պոլոնիա պահած է միջնադարեան իր դիմագիծը, իր կամարաշարք ծածկուած փողոցներով ու խրայատուկ ճարտարապետութեամբ բնակարաններով, որոնք հին հռոմէական քաղաքի մը տպաւորութիւն կը ձգեն: Հոն կան Ասինելլի եւ Կարիսենդա աշտարակները, որոնք կառուցուած են 1109 – 1119 տարիներուն եւ մեծ դեր կատարած են քաղաքի ինքնապաշտպանութեան համար մղուած պատերազմներուն ժամանակ: Պոլոնիոյ համալսարանը, կառուցուած՝ ԺԱ. դարուն, Եւրոպայի ամէնէն հիներէն է եւ մեծ համբաւ ունեցած է ԺԲ. – ԺԳ. դարերուն:

Հայեր Պոլոնիոյ հետ կապեր սկսան հաստատել ԺԳ. դարուն, երբ Կիլիկիոյ եւ չրջակայքի անապահովութենէն ու

պատերազմներէն փախչելով, ինչպէս նաեւ առեւտրական նպատակներով Իտալիա հասնող Հայերէն ոմանք, իբրեւ ապահով բնակավայր, Պոլոնիա գալին հաստատուեցան: Պոլոնիոյ հայ համայնքը արագօրէն ստուարացաւ նոր հասնող գաղթականներով, եւ նոյն՝ ԺԳ. դարուն իսկ Հայերը քաղաքի բնակչութեան կարեւոր համեմատութիւնը կազմեցին:

Պոլոնիա արագ բարգաւաճումի ընթացքի մէջ էր շնորհիւ այն իրողութեան, որ այդ ժամանակ տակաւին անիկա զերծ էր աւատապետական տուներու միջեւ պատերազմներէն, եւ որովհետեւ հիւսիսէն հարաւ եւ արեւելքէն արեւմուտք երկարող ճանապարհներու հանգոյց էր (մինչեւ հիմա ալ անիկա ճանապարհներու խաչմերուկ է): Այսպէսով Պոլոնիա առեւտրական կարեւոր կեդրոնի վերածուեցաւ եւ հոն հաստատուող Հայերը առեւտուրի ձեռնարկելով՝ փայլուն դիրքերու տիրացան. շատեր արագօրէն հարստանալով՝ ազդեցիկ ուժ դարձան:

Այս ժամանակ պոլոնացի հարուստ ընտանիքները (որոնց մէջ հաւանաբար նաեւ Հայերը) մրցակցութեան մէջ էին մէկը միւսէն աւելի գեղեցիկ, աւելի շքեղ պալատներ կառուցելու համար (որոնցմէ շատեր կանգուն են մինչեւ հիմա). անոնցմէ յիշենք, օրինակ, Փալացի Քոմունալէօ (քաղաքային սրահը), Փոտեսթա, Մերքանծիա (առեւտրական կեդրոն) եւ Ռէ Էնցիօ (ուր Ֆրէտէրիք Բ. կայսեր զաւակը՝ Էնցիօ Թագաւոր արգելափակուեցաւ 1249էն մինչեւ մահ՝ 1272), իսկ Փալացօ Պեւիլաքուան հոյակերտ կառոյց մըն է:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՈՒ ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Հայեր այնքան ազդեցիկ դիրքերու տիրացան եւ այնքան արագօրէն հարըստացան, որ 1303-ի տուեալներով, արդէն հայկական երեք եկեղեցիներ կային Պոլոնիոյ մէջ. Ս. Աստուածածին, Ս. Յովհաննէս-Մկրտիչ եւ Ս. Հոգի: Ասիկա ինքնին ապացոյց է, որ Հայեր մեծ թիւ կը ներկայացնէին եւ հարուստ էին:

Բաղդատական մը կատարելու համար նշենք, որ նոյն ժամանակ տեղացիք իրենք քանի մը եկեղեցի ունէին. Սան Տոմենիքօ (ուր 1221-ին ամփոփուած է համանուն սուրբին մարմինը), Սան Ֆրանչեսքօ (1236 – 1263) եւ հռոմէական կոչուող չորս եկեղեցիները. այսինքն քաղաքի ինը եկեղեցիներէն երեքը հայկական եղած են: Յետագայ կառոյցներէն յիշենք Սան Փեթրոնիօն, որուն կառուցումը սկսաւ 1390-ին, որ սակայն մինչեւ հիմա ալ չէ աւարտած. հոն Քարլ Ե. Կղեմէս Է. պապին կողմէ Հռոմէական Սրբազան կայսրութեան կայսր օծուեցաւ:

Մօտաւորապէս այս ժամանակաշրջանին ճենովայէն, Բարսեղեան ուխտի հայ կրօնաւորներ Պոլոնիա հասնելով, հոն քաղաքի պարիսպներէն դուրս, Սանթա Մարիա Քարպելատա անունով վանքը կառուցեցին: Հայկական այս վանքը հռչակաւոր դարձաւ իր սրբակենցաղ կրօնաւորներով: Յովհաննէս ԻԲ. Պապը 1321 Հոկտ. 8-ի կոնդակով մեծ գովեստով արտայայտուած է Պոլոնիոյ հայ Բարսեղեաններուն մասին՝ իբրեւ աղքատութեան մէջ ապրող միաբաններ, եւ յանձնարարած է տեղացի ժողովուրդին՝ վեհանձնութիւն ցոյց տալ եւ նպաստել եղբայրներուն. Պապը կոնդակին մէջ նաեւ թողութիւն կամ «Ներողութիւններ» շնորհած է բոլոր անոնց, որոնք Պոլոնիոյ հայ Բարսեղեան կրօնաւորներու եկեղեցին կ՚այցելեն:

Մարտինոս Ե. Պապի 1426 Յուլիս 4-ի գրութեան համաձայն, հայ կրօնաւորներուն տունը Սուրբ Հոգիի հովանիին տակ կը գտնուէր: Այս ժամանակ վանքին վանահայրն էր Պօղոս Վրդ. Յովհաննէսեան, որ բարձր արժանիքներով օժտուած էր, որուն համար ալ Պապը արտօնեց, որ ան ցկեանս պահէ մեծաւորի իր պաշտօնը:

Պոլոնիա հայ մշակոյթի եւ ձեռագիրներու ընդօրինակման կարեւոր կեդրոնի վերածուեցաւ, ուր գալին հաստատուեցան նաեւ մշակոյթի երախտաւորներ ու գրիչներ. առաջին անգամ 1324-ին յիշատակութիւն կայ Պոլոնիոյ մէջ գործող հայ մշակոյթի եւ գրչութեան օճախի մասին: Հոն երկար տարիներ ապրեցաւ եւ ստեղծագործեց Պօղոս աբեղայ գրիչ. ան 1381-ին ընդօրինակեց «Միսալ»ը (Հռոմէական պատարագամատոյց), որուն մէջ արձանագրած է. «Ձեռամբ փծուն եւ անարհեստ գրչի, Պօղոս անուն աբեղայի Առաքելցւոյ ի գաւառին իտալացւոց, ի մայրաքաղաքիս, որ կոչի Պօյօն, ընդ հովանեաւ Ս. Հոգւոյն եւ ի պատիւ Ս. Աստուածածնին»:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՃՊԻՏ

Դատաւորը դիմում է մեղադրեալին.

– Եթէ ցանկանում էք, դատարանը կարող է ձեզ փաստաբան տրամադրել:

– Շնորհակալ եմ, բայց աւելի լաւ կը լինէր եթէ ինձ երկու խելքը գլխին վկաներ տայիք...

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԳՐԻՉԷՆ

Երեւանեան փողոցները գեղեցկանում ու մաքրւում են աղբից միայն այն ժամանակ, երբ փոխւում է քաղաքապետը: Եւ հէնց այստեղ մեր բախտը բերում է:

Եւ որպէսզի մեր բախտը միշտ բերի, առաջարկում եմ շուտ – շուտ փոխել քաղաքապետերին...

ԱՆԱՀԻՏ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ
«Շաւիղ»

***

Միամի՛տ, միամի՛տ մարդիկ են նրանք, ովքեր մերթ ընդ մերթ հաւաքւում են կառավարութեան շէնքի դիմաց ու կառավարութիւնից խնդրում... իրենց աշխատավարձը, թոշակը, նպաստը, ջուրը...

Ախր մի՞թէ չգիտեն, որ իրաւունքը ոչ թէ խնդրելով, այլ պահանջելով են պաշտպանում, թէ չէ իրենք մուրացկաններից ինչո՞վ են տարբերւում:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Երեւան, Թիւ 11 դպրոց

***

Մեր այսօրուայ իշխանաւորները կարծում են, թէ իրենք ծնուել են միայն ընտրուելու համար (գուցէ՝ նշանակուելո՞ւ), իսկ միւսները ընդամէնը ընտրագանգուած են, ասել է թէ՝ միայն ընտրելու իրաւունք ունեն:

Բայց չէ՞ որ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացի ոչ միայն ընտրելու, այլեւ ընտրուելու իրաւունք ունի:

ԱՐՇԱԿ ՍԵՄԻՐՋԵԱՆ
«Շաւիղ»

***

Հայ պաշտօնեայի մօքի Թուիչքը հնարաւոր չէ պատկերացնել: Ուրիշ էլ ո՞ր մի երկրի ո՞ր մի պաշտօնեան կարող է այսպիսի հանճարեղ համեմատութիւն անել. «Սեւանի մակարդակի իջեցումը անցեալ տարուայ համեմատ նուազել է»:

ԼԻԼԻԹ ԱՒԱԳԵԱՆ
Երեւանի Թիւ 173 դպրոց,
7-րդ դասարան

***

Սկսուեցին դասերը, եւ արդէն դպրոցներում հաւաքւում են դասագրքերի վարձավճարները: Պատկառելի՛ գումար է: Իսկ ի՞նչ անեն այն ծնողները, որ դպրոցում սովորող 3-4 երեխայ ունեն: Նրանք կարո՞ղ են վճարել 20-25.000 դրամ: Եւ դա միայն դասագրքերի համար: Յետոյ էլ ասում ենք, թէ ինչու են երեխաները դպրոցից դուրս մնում ու մուրացիկ դառնում:

Եթէ կառավարութիւնը խելք ու մի քիչ էլ խիղճ ունենար, ապա թոյլ չէր տայ, որ երեխաները դպրոցներից դուրս մնային: Թոյլ չէր տայ, որ վարձավճարի պատճառով ԲՈՒՀ-երից ուսանողներ դուրս մնային:

ԱՐՇԱԿ ՍԵՄԻՐՋԵԱՆ
«Շաւիղ»

***

Այսօր երկրի կառավարիչները չեշտում են, որ Հայաստանում առաջընթաց է տեղի ունեցել: Զգում ենք, չէ՞: Ի հարկէ զգում ենք: Այսօր էժան ու մատչելի գնով՝ ընդամէնը 10 դրամով,, մուրացկանից կարող ենք բարեմաղթանք գնել:

ԼԻԼԻԹ ԱՒԱԳԵԱՆ
Երեւան, Թիւ 173 դպրոց,
7-րդ դասարան

***

Բայց կը գայ, չէ՞, մի ժամանակ, երբ ժողովուրդը ելքը կը տեսնի ոչ թէ իր արտագաղթման մէջ, այլ նրա՛նց արտագաղթեցման մէջ, ով պատճառ է դարձել այս ծանր վիճակի...

ՀԱՅԿ ԱՊՐԵՍԵԱՆ
Երեւան, Թիւ 175 դպրոց,
«Շաւիղ»

«Կանչ»,
Օգոստ. 29, Սեպտ. 5-12

ՀԱՅԱՍՏԱՆ

Տ. ԱԶՆԱՒՈՒՐ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԷՋ

Շ. Ազնաւուր Սեպտ. 25-ին այցելած է Վանաձոր ուր դիմաւորուած է մեծ խանդավառութեամբ եւ ուր Մշակոյթի պալատը այսուհետեւ կը կրէ իր անունը: Ազնաւուր դացած է իր հաստատած հիմնադրամին աջակցութեամբ կառուցուած վարժարանները, «Յոյս» ծերանոցը: Իրեն ընկերացած է Մխիթարեան ուխտէն Հ. Ռափայէլ Վրդ. Անտոնեան:

***

«ԼՈՆԺԻՆ»ՆԵՐ 1700-ԱՄԵԱԿԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՈՎ

Զուիցերական ժամացոյցներու հանրածանօթ «Լոնժին» ընկերութիւնը համաձայնած է արտադրած ժամացոյցներէն 100-ին վրայ գետեղելու 1700-ամեակի խորհրդանիշը: Արդէն անոնցմէ 50 հատ ղրկուած է Երեւան:

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐՇԱՒԻՐ ԵԱՍԵԱՆ

– Այո՛, – ըսաւ երկու անձերէն մին, – բայց բարեբախտաբար վէրքը թեթեւ է եւ անվտանգ:

– Ուրկէ՞ զարնուած է:

– Ոտքէն:

Արշաւիր ինք ալ խօսքի խառնուեցաւ եւ նուաղեալ ձայնով մը ըսաւ.

– Թշուառական սրիկաները թէեւ փորձեցին գլխէս զարնել, բայց չյաջողեցան, գիտէ՞ք, օրիորդներ, քիչ մը առաջ ձեզի կ՚ըսէի, որ եթէ գլխուս նշան առնեն, իրենց հարուածը ոտքիս կու գայ, ճիշդ ըսածիս պէս կատարուեցաւ:

– Այո, – հաւաստեց օրիորդը, – այդպէս ըսիք մեկնելէ առաջ, կարծես նախազգացիք, թէ այս գիշեր փորձանք մը պիտի գար ձեր գլխին, մենք ձեզի այնչա՛փ աղաչեցինք, որ դուրս չելլէք, մտիկ չըրիք:

– Եթէ այսօր չընէին՝ վաղը կամ միւս օր պիտի ընէին:

Արշաւիրի ընկերացող երկու անձերը, որոնց մին Նշան կը կոչուէր ու իր անձերը ձագն էր, արդէն ծանօթ էր՝ տան մէջ ուրիշ անգամ եկած ըլլալով հոն, իսկ միւսը Թաղին գիշերապահն էր:

Նշան այս վերջինը ճամբու դրաւ՝ փոքրիկ նուէր մը սահեցնելով ձեռքը:

Յետոյ Արշաւիրի թեւը մտնելով՝ զայն վեր հանեց սանդուխէն ու առաջնորդեց իր սենեակը:

Վէրքը այնքան աննշան էր, որ Արշաւիր գրեթէ առանց օգնութեան կրցաւ երթալ իր սենեակը:

Երբ երկուքը առանձնացան հոն եւ դուռը գոցեցին, չարաշուք ժպիտ մը գծագրուեցաւ դաւաճանին շրթունքներուն վրայ:

– Ի՞նչ կ՚ըսես այս եղածին, – հարցուց իր անձերձագին:

– Կարծեմ յաջողեցանք, – պատասխանեց այս վերջինը:

– Արդեօք գիշերապահը որեւէ կասկած ունեցա՞ւ:

– Բնա՛ւ երբեք, արդէն անիկա հրացանի պայթումէն բաւական ետքը եկաւ:

– Վախցայ, որ կ՚ելլես ծանրապէս կը վիրաւորես զիս:

– Բարեբախտաբար հրացէն գործածելու բաւական վարժութիւն ունիմ:

– Հիմա ջանանք այս արկածէն կարելի եղածին չափ օգուտ քաղել. ես անկողին կը մտնեմ, կը պառկիմ. դուն նախ գնա՛, բժիշկ մը դրկէ ինծի, յետոյ վազէ, իրողութիւնը պատմէ քոմիսէրին, ըսէ, որ հրացէնը պարպողը երկայնահասակ երիտասարդ մըն է, որուն ուրիշ երկու երիտասարդներ կ՚ընկերանային, թէ երեքը մէկէն խոյս տուած են դէպի Թաքսիմ պաշի. յետոյ, իսկոյն թելեֆոն ըրէ Նաեւ իքինճի չուպէ միւտիրի ճէմալ պէյին եւ ըսէ, որ ծանրապէս վիրաւորուած եմ եւ կը փափաքիմ մեռնելէ առաջ իմ վըկայութիւնս տալ իրեն եւ խնդրէ, որ անմիջապէս գայ զիս տեսնելու:

– Շատ աղէկ, – պատասխանեց Նշան, – հիմա կ՚երթամ, բայց նախ դուն անկողնիդ մէջ մտիր:

Արշաւիր աճապարանքով հանուեցաւ եւ մտաւ անկողին:

Իսկ անձերձագը մեկնեցաւ կատարելու համար դաւաճանին յանձնարարութիւնները:

Վարի յարկը տանտիրուհիները իրեն կը սպասէին:

– Ի՞նչպէս է Արշաւիր էֆէնտին, – փութաց հարցնելու օրիորդներէն մին:

– Աղէկ չէ, տաքութիւն ունի, – պատասխանեց Նշան, – վէրքը իմ կարծածէս աւելի ծանր է, վախնամ գնդակը ոսկորին դպած է:

– Ի՞նչ կ՚ըսես, միսիւ՛ Նշան:

– Հիմա կ՚երթամ կոր բժիշկ մը բերելու:

– Արդեօք բանի մը պէտք ունի՞:

– Եթէ կ՚ուզէք՝ մէյ մը քովը ելէք, հարցուցէք:

– Հիմա կ՚երթամ:

Արդարեւ օրիորդը անմիջապէս փութաց վիրաւորին քով:

– Արշաւի՛ր էֆէնտի, բանի մը պէտք ունի՞ք, – հարցուց:

– Լիմոնատ մը եթէ շինէք ու բերէք՝ շատ շնորհակալ կ՚ըլլամ, – պատասխանեց Արշաւիր նուաղկոտ ձայնով մը, – ներսիդիս կ՚այրի կոր:

– Արդէն այնպէս է, վիրաւորները միշտ ծարաւ կը զգան, կեցէ՛ք, հիմա բերեմ:

Եւ հինգ վայրկեան ետքը վերադարձաւ գաւաթ մը լիմոնատով:

Երիտասարդը զայն խմեց անյագօրէն, յետոյ սիկառէթ մը վառեց.

– Ինչպէ՞ս կը զգաք դուք ձեզի, – հարցուց օրիորդը:

– Բաւական լաւ:

– Խօսիլը ձեզ չյոգնեցնէ:

– Ո՛չ, ո՛չ... միայն թէ վէրքս սարսափելի կը ցաւի կոր: Թշուառականները քիչ մնաց գլուխս պիտի ուտէին:

– Ուրեմն մէկ հոգի չէ՞ր ձեր վրան յարձակողը:

– Երեք հոգի, օրիորդ, – գոչեց Արշաւիր, – երեք հոգի...

– Գոնէ կրցա՞ք զիրենք ճանչնալ:

– Մէկ հատը, այսինքն հրացէնը պարպողը ճանչցայ, գոնէ զինքը մէկու մը նմանցուցի:

– Դուք ինչո՞ւ ձեր զէնքը չքաշեցիք:

– Ժամանակ չեղաւ, հազիւ թէ հրացէնը պարպեց, երեքը մէկ փախչիլ սկսան, բարեբախտաբար նոյն միջոցին Նշանը մօտեցաւ ինծի եւ բռնեց զիս, որ վար չիյնամ:

– Ի՜նչ բարեբախտութիւն, որ հոն գտնուեր է:

– Այո՛, մեծ բարեբախտութիւն, ինքն ալ հոս կու գայ եղեր զիս տեսնելու:

Քիչ յետոյ բժիշկը եկաւ, վէրքը քննեց, յայտարարեց, թէ աննշան բան մըն էր եւ թէ մէկ-երկու օրէն կրնար ոտքի ելլել: Արշաւիրի սախպումներուն վրայ, սակայն, խնամով վիրաւոր ոտքը բամպակներով ու լաթերով փաթթեց ու մեկնեցաւ:

Արշաւիր անկողնին մէջ երկնցած՝ մտքովը ծրագիրներ կը յօրինէր իր հակառակորդները ծուղակը ձգելու համար:

(Շար. 72)

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Հոկտեմբեր 7,

ՓԱՐԻԶԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ

97-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Այս առթիւ, ժամը 10·30–ին Մայր Տաճարին մէջ կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ մատաղ կ'օրհնուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի

Ի ժամու պատարագի, Գոհաբանական Մաղթանք *կը կատարուի Մայր Եկեղեցւոյ ի կեանս եղող բարերարներուն եւ անոնց ընտանիքներուն արեւշատութեան համար:*

Յաւարտ պատարագի Հոգեհանգիստ *կը կատարուի եկեղեցաշէն բարերար* Աղեքսանդր Մանթաշեանի, Մանթաշեան *ընտանիքի եւ Մայր Տաճարի հանգուցեալ բարերարներուն համար:*

Կը հրաւիրուին բոլորը, այդ օր, մասնակցելու Մայր Տաճարի 97–ամեակի այս տօնախմբութեան եւ չարունակելու արտայայտել իրենց հոգածութիւնը իրենց հոգեւոր Տան պայծառութեան հանդէպ:

Ս. ՅՈՎՀ.–ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՆ ԵՆ. –

Եկեղեցաշէն բարերար՝ Աղեքսանդր Մանթաշեան, Արուսեակ Ազարեան, Հմայեակ Ալեքսանեան, Ջապէլ Ալթունեան, Արաքսի Ակոնայեան, Մարիամ եւ որդի Գուրգէն Ակոնայեան, Հայկ Աղապէկեան, Հրանդ Աղապէկեան, Վերթհայմ Աղապէկեան, Նոյեմի Ամպէրեան, Վահրամ Արսլանեան, Վիքթորիա Արսլանեան, Ժան - Փիէռ Անուանեան, Լէոնդին Անուանեան, Լիւսի Աչճեան, Եւփիմէ Աւետիսեան (Անայիս), Մարիամ եւ Յովհաննէս Բարսեղեան, Միհրան եւ Թագուհի Գավէզեան, Սեդրակ Գաւուննեան, Մայրանոյշ Գործունեան, Արմենակ Գույումճեան, Պերճ Գույումճեան, Սրբուհի Զատիկեան, Նշան եւ Հայկանոյշ Զէյվէյեան, Հայկ Զրուանդեան, Աթանագինէ Էգնայեան, Օննիկ Էթմէքճեան, Իրեն Էնկէլ – Գույումճեան, Յովհաննէս Ըշըլեան, Վարդան եւ Երանուհի Թիւթիւնճեան, Աստրա Թորոսեան, Զարուհի Թորոսեան, Խաչիկ Թորոսեան, Յարութիւն Ժամկոչեան, Եսթեր Իչքալացեան, Վահագն Իչքալացեան, Ճէյմս եւ Ռոզա Խըտըրշահ, Բիւզանդ Խոտիկեան, Սիլվարդ Խուկանեան, Տիգրան եւ Մարիամ Կակազեան, Անդրանիկ եւ Փայլիկ Կէնճեան, Վրոյր Հալէպլըեան, Արմենակ Համբարձումեան, Գաբրիէլ Համբարձումեան, Աբրահամ Ղուկասեան, Վալանթէն Ղուկասեան, Անիձա Ծիհանեան, Սարգիս – Մինաս Ծիհանեան, Յովհաննէս Մալեանց, Արմէն Մամէզ, Եսթեր Մամէզ – Գարամանեան, Ռափայէլ Մարկոսեան, Արմինէ Մելիք – Գալէնտէրեան, Միհրանոյշ Մեսրոպեան, Տիրուհի Միքայէլեան, Գառնիկ Մոմճեան, Զօհրապ Մուրատեան, Զարմայր և Վարդուհի Մուսայեան, Կարապետ Յակոբեան, Յարութիւն Որբերեան, Ռուբէն եւ Մարի Որբերեան, Մարգրիտ Ուզունեան, Ցոլինէ Չիլինկիրեան, Ռոզա Պադըրճեան, Գաբրիէլ Պալապանեան, Արա Պարթեւեան, Եդուարդ Պապեան, Երուանդ Պարկիրճեան, Թամար Պարպիրօթ, Թագուհի Պետոյեան, Արմէն Պետրոսեան, Խաչատուր Պետրոսեան, Մելքոն Պետրոսեան, Մուշեղ Պետրոսեան, Սոֆիա Պետրոսեան, Ջապէլ Պէօձէքեան, Վեհանոյշ Ջրբաշեան, Զօհրապ Սանթուրճեան, Բարսեղ եւ Թագուհի Սարաֆեան, Յարութիւն Սետիկեան, Վահրամ Սէֆէրեան, Լէա Սէրայտարեան, Թադէոս Սթաթեան, Հայկազ Սինանեան, Սիմոնն Տակուռեան, Օհան Տակուռեան, Մարտիկ Տակուռեան, Բարսեղ եւ Աղնիւ Տամլամեան, Յակոբ եւ Մարիամ Տամլամեան, Մովսէս եւ Նարդուհի Տէմիրճեան, Մարի Ա. Տէտէյեան, Արաքսի Տէր – Մեսրոպեան, Թորգոմ Տէր – Մեսրոպեան, Մեսրոպ Ա. Քհնյ. Տէր – Մեսրոպեան եւ Երէցկին Փերուզ Տէր – Մեսրոպեան, Յակոբ Տէր – Յակոբեան, Սիրարփի Տէր – Ներսէսեան, Բարգէն Տէր – Սարգիսեան, Զաւէն Տէր – Սարգիսեան, Գրիգոր Փաթթուքեան, Առլէն Փափազեան, Հերմին Քանթար, Սօֆի Ռօզ Քանճեան, Սեդրակ Քարեան, Մանիա Քոչարեան, Ստեփան Քոչարեան, Աշոտ Ֆրէնկեան, Սիրանոյշ Ա. Ֆրէնկեան, Մօրիս Օպէր, Աղաւնի Թորոսեան, Սրբուհի Թորոսեան, Արամ Մարտիրոսեան, Անտրէ Յարութիւնեանց, Սեդրակ եւ Ալիս Յովսէփեան, Արա Սերոբեան, Մարգրիտ Փափազեան, Վերժին Մոմճեան, Մարիամ Տակուռեան, Միհրան Եփրեմեան, Գառզուհի Զաքարեան, Վարդավառ Կէօվչէնեան, Փերուզ Յակոբեան, Մարի Պէկեան, Ցոլինէ Պէրպէրեան, Նուրհան Ֆրէնկեան, Սիրարփի Սանթուրճեան-Հալէպլեան, Յարութիւն Ֆիրէնկիւլեան, Ահարոն Հիւիւեան, Արեգնազ Հիւրէ, Գոհար Միլոֆ, Սարգիս Միլոֆ, Լուսիա Միտիլեան, Յարէթ Յարութիւնեան, Ժեռմէն Անուանեան - Աւանեան, Ժիրայր Գարաճեան, Գրիգոր եւ Սաթենիկ Եափքարտաշեան, Յարութիւն Միւթէվէլեան, Սելմա Պաքմաչեան, Արմենուհի Աղաճանեանց եւ բժ. Նիկոլա Աղաճանեանց, Մարիամ Գաւուննեան, Օննիկ Թորոսեան, Քրիսթոֆ–Խաչիկ Խաչիկոֆ, Համազասպ-Կապրիէլ Մոմճեան, Յովհաննէս Միտիլեան, Միշէլ Սահակեան, Անահիտ Փաստըրմաճեան, Արշալոյս Միւթէվէլեան, Թագուհի Յարութիւնեան, Վահէ Չիլինկիրեան, Արա Յարութիւնեան:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Ի ԿԵԱՆՍ ԵՂՈՂ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՆ ԵՆ. –

Անանուն բարերար մը, Աննիձա Ալեքսանեան, Մարի Ժամկոչեան, Միշէլ Ժամկոչեան, Նշան Ժամկոչեան, Արմենուհի Խոտիկեան, Պատրիկ Կէնճեան, Սոնիա Կէնճեան, Արաքսի Մուրատեան, Գէորգ Պադըրճեան, Անահիտ Ռափայէլ Պետոյեան, Գարօլ-Անոյշ Պետոյեան, Էմմանուէլ-Աստղիկ Պետոյեան, Մարիամ – Սէսիլ Պետոյեան, Միշէլ Պետոյեան - Քրէթիէն, Սարգիս Պետոյեան, Վարդգէս Տակուռեան, Էտմոն Ղազերեան, Մարգրիտ Ղազերեան, Հայկանոյշ Մարտիրոսեան, Հուրի Երեւանեան, Պարպարա Միլոֆ, Սաթենիկ Ֆիրէնկիւլեան, Սիլվա Սերոբեան, Սուրէն եւ Սոնիա Սարգիսեան, Միքայէլ եւ Մատլէն Յակոբեան, Անուանեան–Աւանեան ընտանիք, Ալիս Իսրայէլեան, Ալիս Մոմճեան, Տարօն եւ Անի Սարհատեան, Միշէլ եւ Վիրժինի Միհրան եւ զաւակները, Լեւոն Զարդարեանթճեան, Մառի – Ժագլին Զարդարեանթճեան:

REUNIONS PUBLIQUES AVEC UN CONSTRUCTEUR HUMANITAIRE
FONDS ARMENIEN DE FRANCE

MARSEILLE

Sous le haut patronage de Monsieur Jean-Noël GUERINI
Sénateur, Président du Conseil Général des Bouches du Rhône

Jeudi 4 octobre à 19h30
Salle des Délibérations — Hôtel du Département
52, avenue du Saint-Just, 13004 Marseille

TOULON

En partenariat avec ABRIS'S CLUB
Sous la présidence d'honneur de Monsieur Hubert FALCO,
Sénateur-Maire de Toulon

Vendredi 5 octobre à 20 h
Salle des Fêtes de l'Hôtel de Ville
Avenue de la République, 83000 Toulon

AVIGNON

En partenariat avec l'Association Culturelle Arménienne
d'Avignon et de Vaucluse

Samedi 6 octobre à 16 h
Médiathèque Jean-Louis Barrault
Rocade Charles de Gaulle, 6, rue Perrin Morel, 84000 Avignon

Projections de films, témoignages
Entrée libre

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Շէն – Ֆրանս, Հայաստան, Արցախ եւ Միացեալ – Նահանգներ իրենց խոր ցաւակցութիւնը կը յայտնեն Պօղոս Պօղոսեանի մօր, կնոջ, զաւակներուն, հարազատներուն եւ Ջաւախքի հայութեան, որուն սիրուած եւ գործօն անդամն էր հանգուցեալը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի Ա. Թադէոսեան մասնաճիւղի ժողովը Շաբաթ, Հոկտեմբեր 6, ժամը 14·30–ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ
17, rue Bleue — 75009 PARIS

–ՎԵՐԱՄՈՒՏ–

Իսիի Հայ Առաքելական Եկեղեցիի «Քրիստոնէական Դասընթացք»*ի Զորեքշաբթի օրուան դպրոցը կը բանայ իր դռները յառաջիկայ Զորեքշաբթի օր,* Հոկտեմբեր 3–ին:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը կը դասաւանդէ Կրօնք, Հայոց Պատմութիւն *եւ* Հայաստանի աշխարհագրութիւն, *նաեւ* Կրօնական եւ ազգային երգեր:

Իսկ ուսուցչուհի Տիկին Սեդա Հէլվաճեան *կը դասաւանդէ Հայ Լեզուն լաւ գրելու եւ սահուն կարդալու միջոցը:*

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Զորեքշաբթի առաւօտները ժամը 9–էն 12·30: *Մըտոն–Լա–Ֆոռէ, Գլամար եւ Իսի–լէ–Մուլինօ օթօքարի սպասարկութիւն՝ գլխաւոր պողոտաներէն:*

Շաբաթ օրերը, Օր. Միշլին Ասլանեան կ'ուսուցանէ Հայկական պար *եւ* Հայ երաժշտութիւն *–երկու շաբաթը անգամ մը–:*

Արձանագրութեանց համար դիմել քարտուղարուհի Տիկին Ռոզէթ Տէրվիշեանին, Եկեղեցւոյ քարտուղարութեան՝ Հեռ. – 01· 46· 44· 28· 52:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

Rentrée des classes

L'Ecole Hebdomadaire
de Langue et de Culture Arméniennes
«KHATCHADOUR ABOVIAN»
de Marseille
est heureuse de vous annoncer que
la RENTREE SCOLAIRE 2001-2002
aura lieu
le MERCREDI 10 OCTOBRE
à 10 heures
Dans la Salle Ardzrouni TCHERPACHIAN
du Centre Culturel SAHAK-MESROP
339, avenue du Prado, 13008 Marseille
Tous les mercredis de 10h à 16h
des cours de langue et de culture arméniennes sont donnés ainsi que des cours de danse, de chant et d'éducation religieuse.

Pour tous renseignements et inscriptions les responsables de l'école tiendront une permanence
le Mercredi 10 octobre de 14h à 17
ou par téléphone
au Secrétariat de la Cathédrale :
04 91 77 84 70

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

LA CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section «Saténig»
de Vaulx-en-Velin
organise

un Grand Bal

animé par le chanteur
MARTEN YORGANTZ
ET SON ORCHESTRE

le Samedi 6 octobre à partir de 20 h
au Centre Culturel **«Charlie Chaplin»**
Place de la Nation à Vaulx-en-Velin
(parking surveillé)
Bar et Buffet
de spécialités arméniennes
— Entrée : 100 F —
Réservations :
04 78 80 22 53 / 04 72 04 80 90
ou 06 61 35 36 61

— ● —

Journée de détente

La Croix Bleue d'Issy-les-Moulineaux vous propose une **Journée de Détente** le **Dimanche 14 OCTOBRE.**

La journée commencera par la visite du JARDIN DES SERRES d'AUTEUIL. Rendez-vous à la Maison de la Culture Arménienne, 45, rue de la Défense à Issy-les-Moulineaux, à partir de 9h15.

Le car partira à **9h30** et fera un arrêt à **9h45** devant l'Eglise apostolique arménienne, 6, avenue Bourgain.

Après la visite, le repas traditionnel sera servi au Châlet de Vaupéreux à BIEVRES et sera animé par le chanteur bien connu HOVIG.

Prière de se faire inscrire rapidement auprès des khatchouhies en s'adressant à
Annick — Tél.: 01 47 36 18 09;
Alice — Tél.: 01 46 42 90 68;
Jacqueline — Tél.: 01 40 95 81 33
Dernier délai d'inscription: 10 Octobre.

— ● —

La Section **«HELEN PUZANT»**
d'Alfortville
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec **l'Orchestre GAIDZAG'S**
et attraction surprise...
Renseignements et réservations :
☎ **01 43 76 55 89**

— ● —

"NAVASART" *à Asnières*

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30

— Billets : 100 F. et 120 F.
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 3
MERCREDI
3 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար · 1·400 Ֆ · — Վեցամսեայ : 725 Ֆ ·
Արտասահման : Տար · 1·650 Ֆ · (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ · (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·265

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20·265

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԱՐՄԷՆՓՐԷՍ

(Հոկտեմբեր 1 / 2)

ԼՂՀ

«ՀԻՒՍԻՍ – ՀԱՐԱՒ» ՄԱՅՐՈՒՂԻԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Ղարաբաղի հիւսիսի եւ հարաւի ծայրամասերը միացնող 170 քիլոմեթր երկարութեամբ կառուղիին 30 քիլոմեթրնոց առաջին հատուածին բացումը կատարուած է Սեպտեմբեր 30-ին : Այս հատուածը կը բաղկանայ երկու մասէ · առաջինը Դաչբուլաղ – Կիչան 20 քիլոմեթրնոց կը-տորն է, երկրորդը Կարմիր շուկայ – Դրախտիկը (10 քիլոմեթր) : Ճամբուն լայնութիւնը 10 մեթր է : 30 քիլոմեթրին կառուցումին համար ծախսուած է 3 միլիոն 300 հազար տոլար : Ամբողջ ճամբան պիտի արժէ 25 միլիոն տոլար :

Բացման հանդիսութեան ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասեան Արցախի ժողովուրդին կողմէ շնորհակալութիւն յայտնած է Սփիւռքի հայութեան · ըսած է թէ ճամբան բացառիկ կարեւորութիւն ունի ԼՂՀ պաշտպանութեան եւ տնտեսութեան զարգացումին համար : Ելոյթներ ունեցած են «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրէն Վ · Տէր – Ղեւոնդեան եւ հոգաբարձուներու խորհուրդի փոխ նախագահ Գ · Ցարութիւնեան :

ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ

Նախագահ Ռ · Քոչարեանի Սեպտեմբեր 29ի հրամանագրով իր պաշտօնէն արձակուած է Հայաստանի Գերմանիոյ դեսպանը Աշոտ Ոսկանեան : Նոյն օրուան մէկ այլ հրամանագրով Նախագահը վերջ տուած է Յունաստանի դեսպան Ա · Պետրոսեանի պաշտօնին :

***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՍԹՐԱԶՊՈՒՐԿԵԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ

Եւրոպայի Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին (Սեպտեմբեր 24 – 28) աշխատանքներուն մասնակցած էր նաեւ Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններու նախագահ Յովհաննէս Յովհաննիսեանի գլխաւորած հայաստանեան պատուիրակութիւնը : Ան եռակողմ հանդիպում ունեցած է Վրաստանի ու Ազրպէյճանի պատուիրակութիւններուն հետ · որոշուած է Դեկտեմբերին կրկին հանդիպիլ ու քննել ռազմագերիներու, պատերազմին կորսուածներուն եւ Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան դաշինքի մը ծրագրման հարցերը :

Պատուիրակութենէն Արմէն Ռուստամեան հերքած է այն լուրերը թէ իրենք Սթրազպուրկի մէջ Ղարաբաղի հարցին առնչութեամբ փաստաթուղթ ստորագրած են, ուր լուծումը կը հիմնուի տարածքային ամբողջականութեան սկզբունքին վրայ : Ան ըսած է թէ եղած է փաստաթուղթ մը ուր առաջին անգամ ըլլալով Ղարաբաղի հարցին լուծումին համար նախատեսուած են զուգահեռ երկու սկզբունքներ · ազգերու ինքնորոշման իրաւունքով եւ տարածքային ամբողջականութեան :

Հայաստանի պատուիրակութիւնը երկու գրաւոր հարց ալ ներկայացուցած է, որպէսզի 45 օրուան ընթացքին քննարկուին Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումն եւ Ազրպէյճանի քաղաքական ղեկավարութեան ռազմատենչ յայտարարութիւնները :

Նոյն վեհաժողովին Ազրպէյճանի պատուիրակութիւնը շրջանառութեան մէջ դրած է փաստաթուղթ մը որով կը խօսուի Եւրոպայի Խորհրդարանին մէջ Ղարաբաղի հարցին քննարկման անհրաժեշտութեան մասին · ան ստորագրուած է 50 պատուիրակի կողմէ, ինչ որ հայկական պատուիրակութեան կարծիքով, լուրջ թիւ է եւ շատ հաւանական է որ դիմումը իրականութիւն դառնայ :

***

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹԱԼԻՊԱՆՆԵՐԸ (կրօնքի ուսանողներ) յայտարարած են Քապուլի մերձաւոր Ա · Ի · Փ · գործակալութեան իրենց մէկ պատասխանատուին միջոցաւ, որ կը նախատեսեն իրենց իշխանութեան բաժանումը երեք զաւառներու վրայ : Այս որոշումը առաջին նահանջ մը կը նկատուի, երբ կ'իշխեն ամբողջ երկրին վրայ : Այս նոր դիրքորոշումը կը պատահի, երբ նոյն ատեն, Հռոմի մէջ, նախկին Թագաւորին շուրջ, համաձայնութիւն մը գոյացած է ընդդիմութեան կողմէ Աֆղանիստանի ազգային միասնականութեան գերագոյն Խորհուրդի մը ստեղծման համար : Միւս կողմէ, Պուշ իր հաւանութիւնը տուած է զաղտնի օժանդակութեան մը Հիւսիսի զինակցութեան (Աֆղանիստանի ընդդիմութիւն) : Ալժէի մէջ ալ, Վեարին յայտարարած է · – «Աֆղան ժողովուրդին ապագան աւելի լաւ կ'ըլլար եթէ Թալիպաններու վարչակարգը անհետանար» : Փարիզի մէջ, քննութեան տակ առնուած է եւ արգելափակուած Ճամէլ Պեկալ, որ ձերբակալուած էր Յուլիսի վերջ Տուպայ (արաբական իշխանապետութիւններ) : Այս ալժերաֆրանսացին, 35 տարեկան, բաւական երկար կեցութիւն մը ունեցած կ'ըլլայ Պէն Լատէնի հակակշիռը վայելող մարզումի կայանի մը մէջ : Տուպայ ձերբակալուած ատենն ալ յայտնած կ'ըլլայ ոստիկաններուն, որ իսլամապաշտ այն խումբը, որուն կը պատկանէր, ծրագրած էր ահաբեկչական մը գործել Փարիզի ամերիկեան դեսպանատան դէմ :

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ հարաւը, Հոկտ · 1-ին, կառք մը պայթած է փարքինկի մը մէջ, առանց զոհ պատճառելու : Արարքին տէր եղած է Ճիհատը : Այս պայթումէն քիչ ետք, Շարոնի մէկ խորհրդատուն Արաֆաթը ամբաստանած է որ չի յարգեր իր յանձնառութիւնները, կամ ըրածը քիչ է կամ բնաւ բան մը չըներ : Հակառակ այս դէպքին, Իսրայէլի բանակն է որ ամբաստանեալի աթոռին վրայ է, քանի ինքզինք չի զսպեր եւ իսրայէլեան Հա'արեց օրաթերթը իր խմբագրականով կ'ըսէր · – «Վերջին օրերուն մեռած Պաղեստինցիներու թիւը (17, 48 ժամուան մէջ) մեզ պէտք է մղէ լուրջ հարցումներ տալու մենք մեզի : Բանակին ստանները պէտք է իրենք իրենց հարց տան թէ ինչո՞ւ այդքան Պաղեստինցի մեռած է : ... Կառավարութիւնը որոշած է աւելի ժամանակ տալ Արաֆաթի որպէսզի կարենայ փաստել իր ոգեմտութիւնը : Լաւ կ'ըլլայ որ կառավարութիւնը նոյն պահանջը ունենայ իրեն հանդէպ ալ» : Միւս կողմէ, Պրիւսէլի արդարադատութիւնը յայտնեց թէ Շարոն կրնայ հետապնդուիլ Պելժիոյ մէջ, մերժելով Իսրայէլի պատճառաբանութիւնները, որ պելժիական արդարադատութիւնը անձեռնհաս կը գտնէր : Ամբաստանող Սենեակը Հոկտեմբեր 3-ին քննութիւնը պիտի սկսի թղթածրարին եւ յայտնէ թէ Շարոն կրնա՞յ հետապնդուիլ Պելժիոյ մէջ Սապրա եւ Շաթիլա գաղթակայաններուն ջարդերուն համար (Պէյրութ, 1982) :

ԺՈՍՓԷՆ, Հոկտեմբեր 1-ին, այցելեց Թրափի եւ Լա Վեռիէռի արուարձանները, տեղւոյն վրայ դատելու համար «դժուար» կամ «զգայուն» մկրտուած քաղաքներու վիճակը : Կառավարութիւնը կ'ուզէ դրական դարձնել «Քաղաքի» իր քաղաքականութիւնը եւ 35 միլիառ Ֆրանք խոստացաւ, հինգ տարուան վրայ, բարելաւելու համար այդ արուարձաններու ապահովութեան միջոցները : Արդէն իսկ, կարգ մը քաղաքապետներ բուռն քննադատութեան անցան, դիտել տալով թէ պէտք չէ սին խոստումներ ընել : Ուրկէ՞ 35 միլիառ պիտի գտնէ կառավարութիւն մը, որ 35 ժամերու ստեղծած հաշուեցոյցին գումարն իսկ չունի : Բայց, պէտք չէ անտեսել թէ աջ ամ ձախ, ընտրապայքարի ձեռնարկած են արդէն :

ՄՈՍԿՈՒԱ, Չէչէնիոյ վրայ յարձակումէն ճիշդ երկու տարի յետոյ, դիրք չի փոխեր եւ ապստամբներու անձնատուութիւնը կը պահանջէ, առանց քաղաքական լուծում մը առաջարկելու : Առջի օր, մերժեց Շեւարնածէի միջնորդութիւնը, զոր կ'առաջարկէին չէչէն պարագլուխները : Արդէն, շատ հաւանական չէր, որ Մոսկուա ընդունի, քանի միշտ մերժած է օտար միջամտութիւնները : Մնաց որ, Կրեմլին հակահարեկչական միացեալ համաձայնութենէն օգտուելով, հրաւիրած է Վրաստանը որ «միանայ հասարակաց պայքարին շօշափելի արարքներով, ինչպէս յանձնումը 13 չէչէն ապստամբներու» :

ԳՈՐՍԻՔԱՅԻ ազգայնականները վերջին ազդարարութիւն մը ըրին Ֆրանսական կառավարութեան : Գորսիքա Նացիոնէէն ետք, Ինտէփէնտէնցա կազմակերպութիւնն ալ, որ կը համախմբէ ազգային շուրջ 10 շարժումներ, որոշեց առկախել իր մասնակցութիւնը Մաթինեոնի գործընթացին : Կրկին անգամ կը պահանջեն ազգայնական բանտարկեալներու ազատ արձակումը :

ՀԱՐԱՒԱՅԻՆ – ՎԻԷԹՆԱՄԻ նախկին Նախագահը՝ Նիուկէն Վան Թիէօ մեռած է, Սեպտեմբեր 29-ին, Պոսթընի մէկ հիւանդանոցը, 78 տարեկանին : Նախագահ եղած էր, ԱՄՆ-ու զօրակցութեամբ 1967-էն մինչեւ Սայկոնի անկումը 1975 :

ՄԱՐԶԱԿԱՆ

ՍԱՄԲՕ · – Գիւմրեցի սամբիստ Յովհաննէս Դաւթեան (52 քկ ·) Քիշինեւ տեղի ունեցող Եւրոպայի երիտասարդներու եւ պատանիներու ախոյենութեան նուաճած է Եւրոպայի ախոյեանի տիտղոսը : Իսկ Շողիկ Գէորգեան (44 քկ ·) արժանացած է արծաթէ մետալի :

ԿՈՓԱՄԱՐՏ ·– Սարայեւոյի մէջ վերջ գտած է կռփամարտի Եւրոպայի երիտասարդական ախոյենութեան մրցաշարքը : Միակ Հայը որ յաջող արդիւնք արձանագրած է, էջմիածինցի մարզիկ Անդրանիկ Առաքելեանն է (75 քկ · դասակարգ) որ սակայն կէս աւարտականին պարտութիւն կրելով ստիպուած եղած է գոհանալ պրոնզէ մետալով :

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Տասը օրուան յապաղումով, Հոկտեմբեր 1-ի երեկոյեան ընթէրքոնթինանթալ պանդոկին գեղեցիկ սրահներուն մէջ Ֆրանսահայութիւնը նշեց Հայաստանի անկախութեան տասնամեակը, պատասխանելով դեսպան Է · Նալպանտեանի ու յատուկ առաքելութեամբ դեսպան Շ · Ազնաւուրի հրաւէրին : Ներկայ էին Ֆրանսայի քաղաքական մարզի բազմաթիւ ներկայացուցիչներ, ինչպէս՝ Ժ · Փ · Շըվէնըման, Ռ · Տիւմա, Ֆր · Ռոշպլուան, Ժ · – Ժ · Գէյսօ Խորհրդարանի հետ յարաբերութեան նախարար, որ կը ներկայացնէր կառավարութիւնը, Ժան Թիպէրի, Փիէր Լըլուշ եւ ուրիշներ, օտար պետութիւններու դեսպաններ, գաղութի կրօնական, մշակութային, գործի, մամուլի շրջանակներէն դէմքեր ու մեծ բազմութիւն մը :

Հայկական պտուղներով, ուտելիքներով զարդարուած սրահին մուտքին Հայաստանի զոյգ դեսպանները կ'ողջունէին հրաւիրեալները, ընդունելով շնորհաւորութիւնները · ներսը փոքր նուագախումբ մը ղեկավարութեամբ Հայկ Դաւթեանի հայկական մեղեդիներ կը նուագէր : Երեկոյթին պաշտօնական մասը սկսաւ Ֆրանսական եւ հայկական փառերգներով, ապա դեսպան Է · Նալպանտեան ամփոփ ելոյթով մը (ֆրանսերէն) անդրադարձաւ անցած տասնամեակին :

Անկախութեան վերատիրացումը բազմաթիւ սերունդներու երազին իրագործումը նկատեց ան, չեշտելով որ 1700-ամեակին հետ այդ հանգրուանին զուգադիպումը կը նշէ դժուարութիւններու, նաեւ յաջողութիւններու շրջան մը : Ապա ծանրացաւ այդ ընթացքին Ֆրանսայի կողմէ Հայաստանի ցոյց տրուած մշտական զօրակցութեան վրայ :

Է · Նալպանտեանի ելոյթէն ետք Շ · Ազնաւուրի Pour toi Arménie երգին ձայնասփռումով սրահ բերուեցաւ տասնամեակի կարկանդակը : Պաշտօնական անձնաւորութիւններու մեկնումէն ետքն ալ երկար ատեն շարունակուեցաւ երեկոյթը :

ՄԱՄՈՒԼ

«OH LA!» (8 octobre)

JEAN-PAUL II EN ARMENIE

Շաբաթաթերթը, երկու էջերու վրայ նկարներ հրատարակած է Պապին Ծիծեռնակաբերդ այցելութենէն, որոնցմէ երկուքը կը վերաբերին Շ · Ազնաւուրի : Գրութեան մէջ, կը յիշուի որ Պապը իր յարգանքը մատուցանեց 1915-ի մէկ ու կէս միլիոն նահատակներուն, խուսափելով ցեղասպանութիւն բառը գործածելէ (ի դէպ, բոլոր թերթերը չեշտեցին այս կէտը, այն տպաւորութիւնը թողլով որ հրահանգի պէս բան մը եղած է այդ ուղղութեամբ, այլապէս քիչ մը զարմանալի պիտի ըլլար որ նման միահամուռ չեշտաւորում մը ըլլայ) : Թերթին աշխատակիցը բաւական ինքնատիպ տող մըն ալ ունի · – «L'Arménie attribue ce génocide à la Turquie, qui dément depuis quatre-vingts ans», այլ խօսքով հո'ս, ցեղասպանութիւնը չէ որ խնդրոյ առարկայ է, այլ անոր հեղինակը... :

ԱՐԱՐԱՏԸ ՊԱՊ ԱԼ ՏԵՍԱՒ

Տարիէ մը ի վեր ներսով ու դուրսով, մեծով ու պզտիկով հոլովուած 1700-ամեակը իր զոյգ գագաթնակէտերը նուաճած պէտք է նկատէ: Այդ կէտերէն մէկը, –անշուշտ հայկական ակնոցով–, Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին օծումն էր, միւսը՝ Յովհ. – Պօղոս Բ. քահանայապետին այցը, եթէ նոյնիսկ աշխարհին անընդունելի թուի նման զուգահեռ: Այդ աշխարհը չի կրնար գիտնալ, ոչ ալ հետաքրքրութիւնը ունի գիտնալու թէ ի՛նչեր արժեց այդ տաճարը ԽԱ. դարու չեմին հասած հայութեան. մանաւա՛նդ անոր Հայաստանի հատուածին: Խօսքը միլիոնաւոր տոլարի պիտաճէին մասին չէ որ կրնար, պէ՛տք էր, յատկապէս քրիստոնէական նման հանգրուանի, ծառայէր 1700-ամեայ այդ ոգիին գործնական արտայայտութեան, նկատի առած՝ Հայաստանի մէջ մնացած ժողովուրդին տնտեսական, ընկերային ու բարոյական վիճակը: Այլ, ակնարկութիւնը այն արհամարհանքին մասին է որ 1700-ամեակի «նուէր»ը եղաւ այդ նոյն ժողովուրդին: Ըսուածին պերճախօս փաստը չէ՞ր տաճարին օծումի հանդիսաւոր արարողութեան օրը անոր մուտքին փակումը Հայաստանցիներուն առջեւ («Ցառաջ», Սեպտ. 26). ներսի տեղերը յատկացուած էին նախ քաղաքական ու կրօնական անձնաւորութիւններու, հիւր ու տեղացի, ինչ որ բնական էր, ապա Սփիւռքէն ուխտաւորներու...: Կարծէք Հայաստանցին չէր կրնար ուխտաւոր ըլլալ: Այս խտրական կարգադրութեան լոյսին մէջ, թերեւս տարօրինակ է որ չատերու ուշադրութիւնը գրաւող Հայաստանցիին բաժին հանուած այս յաւելեալ արհամարհանքէն աւելի, անոր խիտ շարքերով փողոցէն ականջալուր եղած ըլլալն էր աղօթքներու ներսէն հասնող արձագանգներուն: Բայց ինչպէս Հայուն Աստուածը վարժուած է իր որդիներուն հազարամեայ ճակատագրին, այդ ճակատագիրը կրողներն ալ սորված են չզայրանալ, չընդվզիլ, չդատնանալ ու մանաւանդ՝ չհակազդել: Այդ բոլորը, ինչպէս՝ երէկ Արեւմտահայը, այսօր Արեւելահայը կը խտացնէ ամէնէն կրաւորական պատասխանին մէջ, ձգել երթալով: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ Սեպտ. 23-ին, այդ պատմական օծումին օրը, Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մոմերու գիները ի՛նչ դրամանիշով նշանակուած էին. հայաստանեան դրամո՞վ, թէ ամերիկեան տոլարով:

Ներհայկական այս լուսանցքին քով, անհամեմատօրէն լայն ու միջազգային հնչեղութիւն ունեցաւ Յովհ. – Պօղոս Բ.ի այցը: Առաջին անգամն էր որ Պապ մը ոտք կը դնէր առաջին քրիստոնեայ պետութեան հողին վրայ: Իսկապէս պատմական դրուագ մը որուն եթէ Հայը էջեր, հատորներ պիտի յատկացնէ, Վատիկանի ժամանակագրութիւնն ալ անպայման պիտի անդրադառնայ ու թուականը արձանագրէ իր պատմութեան գիրքին մէջ:

Որքան ալ աննախընթաց այս այցը 1700-ամեակի շրջանակին մէջ զետեղուեցաւ, ծանօթ է որ Յովհ. – Պօղոս Բ.ի առաջին մտադրութիւնը այդ նշումին կապուած չէր: Հայաստան 2-3 տարի առաջ ալ պատկած էր սրբազան քահանայապետին ճամբորդական ժամանակացոյցին մէջ: Յայտնի են Ս. Էջմիածնի դժբախտ գահակալին՝ Գարեգին Ա.ի հիւանդտես երթալու անոր նպատակը, յետագայ զարգացումները, որոնք քիչ մը «յետաձգուած» ճամբորդութեան մը կատարումին կը վերածեն ներկայի այցը: Կայ տակաւին Վատիկանէն ո՛չ թէ Երեւան թռչելու, այլ դէպի Ղազախստան ուղղուած մեկնումի պարագան. օտար լրասփիւռներ իսկ մատնանշեցին այս կէտը: Կարելի՞ է ըսել թէ Հայաստանի 1700-ամեակը պատրուակ ծառայեց Պապին Ղազախստանի այցին. այդ պարագային Երեւանը պիտի չըլլա՞ր առաջին թիրախը:

Այսօր, աւելորդ է հաւանաբար յամենալ նման կէտերու վրայ. սակայն, հետաքրքրական է որ 2-3 տարի ետք տեղի ունեցած այս այցը ուրիշ «արդեօ՞ք»ներ ալ կը բերէ միտքերու. առաջին ծրագրուած շրջանին կամ աւելի առաջ եթէ կատարուած ըլլար ան, Հռոմի քահանայապետ հիւրընկալող Հայաստանէն տարբեր պատկեր մը պիտի տայի՞ն միջազգային լրասփիւռները, Յովհ.–Պօղոս Բ.ի խօսակից Գարեգին Ա.ով:

Այս հարցականները կը ծագին յատկապէս այն տուեալէն որ Պապը իր անձին մէջ կը մարմնաւորէ թէ՛ կրօնական բարձրագոյն դէմքը, թէ՛ պետութեան մը ղեկավարը: Իր եռօրեայ այցին ընթացքին ալ շատ որոշակի զանազանուեցաւ այդ երկուութիւնը, գլխաւորաբար Ծիծեռնակաբերդի Եղեռնի զոհերուն յուշարձան տրուած այցին:

Հոն Քրիստոսի հետեւորդ կրօնաւորն էր որ ակներեւ յուզումով կը խոնարհէր ամբողջ ժողովուրդի մը բնաջնջումին յիշատակին առջեւ. ծաղիկ կը զետեղէր անոր զոհերուն կոթողին ու հաւատացեալ մարդու մրմունջով աղօթք կ՚ուղղէր Աստուծոյ, խնդրելով որ Ան լսէ իր ձայնը:

Սակայն, նոյն ատեն քաղաքական ղեկավարը չէ՞ր որ կը յայտնուէր նոյն դողդոջուն, սպիտակազգեստ անձին մէջ, երբ ան 1915-ի ոդեկոչումը կ՚ընէր անգլերէն լեզուով, հիանալի զգօնութեամբ մը շրջանցելով սարսափազդու բառը որ կը հագնէր «բնաջնջում»ի տարազը, բայց հայերէն արտայայտութիւն գտնելով «Մեծ Եղեռն»ով: Վաղորդայնին, լրատուները արդէն կը տեղեկացնէին այցին նախորդած սակարկութիւններու մանրամասնութիւնները: Հայուն համար այլեւս ամէն չահեկանութենէ զուրկ են անոնք. բնական էր որ Անգարա զգուշացնէր Վատիկանի պետութեան ղեկավարը, չարատաւորելու Թուրքիան եւ Թրքական պատմութիւնը, Հայերուն հաճոյք պատճառելու համար: Նոյնքան բնական էր պետութեան նախագահ Յովհ.– Պօղոս Բ.ին պատասխանը թէ Թուրքերը մտահոգուելու պատճառ չունէին: Ինչ կը վերաբերի մնացեալին, «Մեծ Եղեռն» ոռակումին որպէս հակազդեցութիւն Անգարայէն Վատիկանի յղուած յուշագրին, առիկա բեմադրութեան «յետ գրութեան» մասն է զոր կարդալ, կամ չկարդալ բան չի փոխեր:

Էականը այն է որ Էջմիածնէն Երեւան գոհունակութեան ալիք մը կը ծածանի, նաեւ հաւանաբար մինչեւ Վատիկան ուր կրօնապետ – ղեկավարը կը ծրագրէ իր յաջորդական այցերը, երեւանեանին պարտադրած բծախնդրութենէն ձերբազատած թեթեւ սրտով:

ԱՐՓԻ ԹՈԹՈՑԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԻՏԱԼԻՈՅ ՊՈԼՈՆԻՈՅ, ՖԵՐՐԱՐԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹՕՃԱԽՆԵՐԸ

(Բ. եւ Վերջին Մաս)

ՊՈԼՈՆԻՈՅ ԳԱՂԹՕՃԱԽԻՆ ԱՆՇՔԱՑՈՒՄԸ

Պոլոնիոյ երեւելի ու հարուստ ընտանիքները՝ Փեփոլիները, Պենթիվոլիոները եւ Վիսքոնթիներուն մէկ ճիւղը, մեծ ուժի վերածուելով՝ պայքարի դաշտ իջան իրարու դէմ, քաղաքին առաջնորդող ուժը դառնալու եւ միւսներուն վրայ գերակշռութիւն հաստատելու նպատակով: Այս պատճառով ալ տոհմերը քաղաքական երկու հոսանքներու բաժնուեցան. մէկ մասը միացաւ պապական Կուէլֆ կուսակցութեան, իսկ միւս մասը՝ կայսերական Կիպէլլին կուսակցութեան: Հակադրութիւնները սրեցան եւ քաղաքը իրարու թշնամի թաղամասերու բաժնուած՝ կռիւներու թատերաբեմ դարձաւ:

Փեփոլիները, որոնք հարուստ առեւտրականներ էին եւ Պոլոնիոյ աւանդական ղեկավարները, մեծ դեր ունեցած էին քաղաքին զարգացման մէջ, իսկ Ռոմէօ տէ՝ Փեփոլի եւ անոր զաւակը՝ Թատէօ, ժամանակի ամէնէն հեղինակաւոր աւատապետներէն եղած են: Թատէոյի զաւակները երկար պայքարեցան Վիսքոնթիներուն դէմ եւ ի վերջոյ կորսնցուցին իրենց հեղինակութիւնը: Իսկ Պենթիվոլիոները, որոնք 1323-ին հրապարակ իջած էին իբրեւ Կուէլֆ կուսակցութեան առաջնորդներ, փոփոխակի յաջողութիւններով աշխատեցան պահել իրենց ուժը. Ճիովաննի Պենթիվոլիօ, որ 1401-ին սենիոր հռչակուած էր, 1402-ին պարտուեցաւ Միլանոյի Վիսքոնթիներէն, որոնք գրաւեցին Պենթիվոլիոներուն տիրոյթները: Աննիպալ Պենթիվոլիոյի ըսպանութիւնը՝ 1445-ին, պատճառ դարձաւ, որ կռիւները վերսկսին ամենասաստիկ կերպով. Պենթիվոլիոներ իրենց տոհմապետ հռչակեցին Սանթէն, որ միացաւ Միլանոյի Սֆորցաներուն, բայց պարտուեցաւ: Ճիովաննի Բ. Պենթիվոլիօ (1443 – 1508) վերահաստատեց իր տոհմական իշխանութիւնը Պոլոնիոյ վըրայ եւ հովանաւորեց գրականութիւնն ու արուեստները:

Պոլոնիոյ մէջ շարունակուող այս տեւական կռիւները պատճառ դարձան, որ քաղաքը կորսնցնէ իր երբեմնի ապահով ու ազատ բնակավայր ըլլալու իրողութիւնը եւ առեւտրական դիրքը:

Այս պայմաններուն տակ հոնկէ սկըսան հեռանալ Հայերը, ինչպէս նաեւ՝ այլ բնակիչներ. հայ առեւտրականներու հարուստ դասակարգը հրապարակէն անհետացաւ, իսկ գրչութեան ու մշակոյթի օճախն ալ փակուեցաւ: Պոլոնիոյ հայկական երբեմնի չէն ու հարուստ գաղթօճախը այսպէսով անչքացաւ:

Պոլոնիոյ քաղաքացիական պայքարներն ու կռիւները շարունակուեցան մինչեւ 1506, երբ պարտուած Պենթիվոլիոները հոնկէ հեռացան եւ գացին Ֆերրարա հաստատուեցան (ուր մինչեւ ԺԸ. դար պահեցին իրենց հեղինակութիւնը), իսկ քաղաքը իր շրջակայքով պապական տիրոյթներուն մէջ մտաւ: Պոլոնիոյ հեղինակաւոր ուժը կրկին անգամ մնացին Փեփոլիները, որոնք տուին ականաւոր զինուորականներ, գրչի եւ մշակոյթի երախտաւորներ ու դատաւորներ, իսկ ԺԹ. դարուն մեծ դեր ունեցան Իտալիոյ միաւորման պայքարներուն մէջ:

ՖԵՐՐԱՐԱՅԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽՆԵՐԸ

Ֆերրարա քաղաք մըն է Պոլոնիայէն հիւսիս-արեւելք, Փոյի հարկատու Փօ – տի Վոլանոյի ափին. անիկա հին Ֆորում Ալիէնի բնակավայրը եղած է, որ 774-ին պապական իշխանութեան փոխանցուեցաւ եւ Ժ. դարուն անկախ համայնք դարձաւ: 988-ին զայն գրաւեց Թետալտո տի Քանոսսա, 1101-ին՝ Թոսքանայի Մաթիլտա կոմսուհին, իսկ 1158-ին՝ Ֆրէտէրիք Շիկամօրուս: ԺԲ. դարուն բուռն պայքարներ ծայր տուին Սալինկերրա եւ Ատելարտի ընտանիքներուն միջեւ, մինչեւ որ Ատելարտիները Էսթէի տան հետ խնամութեամբ իրաւունքներ ձեռք ձգեցին, իսկ 1240-էն ետք ամբողջական հակակշիռ հաստատեցին քաղաքին վրայ:

Ֆերրարա այսպէսով հզօր իշխանութիւն դարձաւ. Ատելարտիներ զարկ տըւին քաղաքի զարգացման ու շինարարութեանց եւ հովանաւորեցին մշակոյթը, որուն շնորհիւ ալ Ֆերրարա մշակոյթի կարեւոր կեդրոն դարձաւ եւ ճանապարհներով կապուեցաւ Պոլոնիոյ, Փատովայի, Վենետիկի ու Ռաւեննայի, ինչպէս նաեւ երկրագործութեան եւ յատկապէս պտուղներու արտադրութեան չսեմարանի վերածուեցաւ (մինչեւ հիմա ալ Ֆերրարայի դաշտերը Իտալիոյ երկրագործական ամէնէն հարուստ շրջաններէն են):

Ֆերրարայի հարուստ, բարգաւաճ ու խաղաղ վիճակը նկատի ունենալով, ԺԲ.-ԺԳ. դարերուն հիւսիսային Իտալիա հասնող Հայերէն ոմանք գացին բնակութիւն հաստատեցին հոն: Ֆերրարայի գաղթօճախը արագօրէն ստուարացաւ նոր հասնող գաղթականներով, եւ ԺԳ. դարու վերջաւորութեան ստուար համայնք մը կազմաւորուեցաւ հոն: Ֆերրարայի առեւտրական դիրքը եւ ճանապարհներու կարեւոր հանգոյց ըլլալու իրողութիւնը նկատի ունենալով, Հայերը առեւտուրով սկսան զբաղիլ եւ բարեկեցիկ վիճակի հասան:

Ֆերրարայի Հայերը ԺԴ. դարուն սկիզբը արդէն կարեւոր թիւ կը կազմէին. այնպէս որ, 1304-ին անոնք ձեռնարկեցին եկեղեցւոյ կառուցման. Պոլոնիոյ հայկական եկեղեցիներու կողքին, անիկա հիւսիսային Իտալիոյ մէջ հայկական ամէնէն հին եկեղեցիներէն դարձաւ:

Ֆերրարա ԺԴ. դարուն զարգացման յարաճուն ընթացքի մէջ էր, եւ անոր հետ նաեւ՝ հայութիւնը. այս ժամանակ ալ քաղաքին առեւտրական հարուստ բնակիչները (որոնց մէջ հաւանաբար նաեւ Հայերը) ընկերային դիրքի ու հարստութեան իբրեւ խորհրդանիշ՝ դղեակներ ու ապարանքներ կառուցեցին իրենց բնակութեան համար. յիշենք, օրինակ, Քաստելլօ Էսթենսէն (Էսթէ դղեակը), որուն կառուցումը սկսաւ 1385-ին եւ աւարտեցաւ 1570-ին, Փալացօ տէլ Քոմունէն, Փալացօ տելլա Ռաճիոնէն եւայլն, իսկ 1391-ին հիմնուեցաւ Ֆերրարայի համալսարանը:

Ֆերրարա հասնող Հայերէն ոմանք ալ շրջակայ գիւղերուն մէջ բնակութիւն հաստատեցին, ուր անոնք հաւանաբար երկրագործութեամբ սկսան զբաղիլ: Ամէնէն աւելի հայութիւն կեդրոնացաւ Փոլիրոնէ գիւղին մէջ, որ Ֆերրարայէն հիւսիս արեւմուտք, Փօ գետի հարաւային ափին կը գտնուի:

Փոլիրոնէ գիւղէն քիչ մը հեռու, Փօ գետէն հիւսիս գտնուող Մանթովա քաղաքին մօտակայ Ս. Պենեդիկտոս վանքին մէջ, հոն, ուր թաղուած է 1016-ին վախճանած սուրբ եւ սքանչելագործ Սիմէոն Ճգնաւոր, այս ժամանակ Հայ վանականներ հաստատուեցան, ուր նաեւ հայկական գաղութ մը կազմաւորուեցաւ:

Փոլիրոնէ գիւղին եւ Ս. Պենեդիկտոս վանքին մօտիկութեան շնորհիւ Հայ գըրիչներ Փոլիրոնէի մէջ հաստատուեցան, ուր ձեռագիրներ ընդօրինակեցին. Վանայ ծովու Լիմ կղզիի անապատին մէջ պահուած Աւետարան մը 1335-ին հոն ընդօրինակուած էր:

Ֆերրարայի եւ շրջակայքի հայկական գաղթօճախները սկսան տկարանալ շրջանի աւատական տուներուն միջեւ պատերազմներուն պատճառով: Արդարեւ, ԺԵ. դարուն սկիզբը Ֆլորանսի եւ Պոլոնիոյ շրջանի աւատապետներէն ոմանք միացան Մանթովայի շրջանի աւատապետներուն՝ Կոնծականերուն (Կոնծակա. անոնց աւատական Կոնծակա դղեակը, համանուն գիւղին մէջ, Մանթովայէն Ռեճճօ տարածուող դաշտերուն մէջ, անխորտակելի ամրոց մը կը նկատուէր) եւ յարձակեցան Վիսքոնթիներուն վրայ: Կռիւները այնուհետեւ սաստկացան եւ ընդգրկեցին այլ տոհմեր: Շրջանի բնակավայրերը ձեռքէ ձեռք անցան. անիշխանութիւնը տարածուեցաւ, եւ ճամբաները անապահով դարձան. իւրաքանչիւր բընակավայր, աւատապետի մը իշխանութեան տակ, ինքն իր մէջ առանձնացած, պատերազմի մէջ էր շրջապատին հետ: Այս պայմաններուն տակ, 1494-ին Ֆրանսայի Շառլ Ը. թագաւորը հիւսիսային Իտալիա ներխուժեց, որուն դիմադրելու համար Գերմանիայէն Իտալիա մտաւ Քարլ Ե. կայսրը: Նոյն օրերուն Ֆրանչեսքօ Կոնծակա միացուց իտալական ուժերը եւ Ֆորնովոյի ճակատամարտին մեծ հարուած հասցուց ֆրանսական ուժերուն:

Շարունակուող այս կռիւներուն պատճառով շրջանի հայկական գաղթօճախները անչքացան, եւ երբ Ֆերրարա 1598-ին պապական տիրոյթներուն միացաւ, արդէն հայութեան հետք չէր մնացած հոն:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

«Ազդակ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին, Եւրոպայի Խորհրդի «Երկնագոյն սրահ»ում, Եւրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովում Հայաստանի խորհրդարանական պատուիրակութեան ղեկավար Յովհաննէս Յովհաննիսեանի եւ ԵԽ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Քրիստիան Տէր-Ստեփանեանի անունից ընդունելութիւն տրուեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային տօնի՝ Անկախութեան 10-ամեայ տարեդարձի կապակցութեամբ:

Ընդունելութեանը հրաւիրուած էին եւ մասնակցեցին ԵԽԽՎ նախագահ Լորտ Ռասըլ Ճոնսթընը, ԵԽ Գլխաւոր քարտուղար Վալթէր Շուիմէրը, Եւրոպական դատարանի նախագահ Լուցիուս Վիլտաբերը, ԵԽ Մարդու իրաւունքների հարցերով յանձնակատար Ժիլ Ռոպլէսը, Խորհրդարանական վեհաժողովում տարբեր երկրների պատուիրակութիւնների ղեկավարներ, դեսպաններ, ԵԽ Գլխաւոր քարտուղարութեան տնօրինութիւնների պաշտօնեաներ, Սթրազպուրկի քաղաքապետարանի պաշտօնեաներ, հայ համայնքի ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ ներկայ էր մօտ 300 հոգի:

Ելոյթներով հանդէս եկան ԵԽԽՎ նախագահ Լորտ Ռասըլ Ճոնսթընը, ԵԽ Գլխաւոր քարտուղար Վալթէր Շուիմէրը եւ Եւրոպայի Խորհրդում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Քրիստիան Տէր-Ստեփանեանը:

ԵԽ պաշտօնեաներն իրենց ելոյթներում շնորհաւորեցին Հայաստանի անկախութեան 10-ամեայ տարեդարձի, ինչպէս նաեւ եւրոպական ընտանիքին միանալու կապակցութեամբ, ողջունեցին Հայաստանի ժողովրդավարական առաջընթացը, ԵԽ-ին Հայաստանի անդամակցութիւնը գնահատեցին իբրեւ երկրի եւ հայ ժողովրդի ապագայի համար կարեւոր իրադարձութիւն, յաջողութիւններ մաղթեցին առաջիկայ աշխատանքներում: ԵԽ Գլխաւոր քարտուղարը նաեւ ԼՂ խնդրի հնարաւորինս արագ կարգաւորման յոյս յայտնեց:

ՀՀ դեսպանն իր ելոյթում մասնաւորապէս նշեց.

«...Մենք յուզմունքով ենք այսօր տօնում այս իրադարձութեան տարեդարձը, որն էական նշանակութիւն ունի հայ ժողովրդի պատմութեան համար: Այն նաեւ նշանակալից է ժամանակակից պատմութեան համար՝ ամբողջատիրութեան դէմ պայքարի ու Եւրոպայի վերամիաւորման գործում ներդրման տեսակէտից: Ճիշդ տաս տարի առաջ, արտայայտելով անկախութեան օգտին, հայ ժողովուրդը կրկին տէր դարձաւ իր ճակատագրին եւ վճռականօրէն ընտրեց ազատութիւնն ու ժողովրդավարութիւնը: Այս առումով Եւրոպայի եւ եւրոպական երկրների հետ մերձեցումը, անկախութեան առաջին իսկ օրերից, արձանագրուեց Հայաստանի արտաքին քաղաքականութեան առաջնայնութիւնների թւում:

... Մենք կարողացանք առաջ շարժուել քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների, հասարակութեան ժողովրդավարեցման, իրաւական պետութեան կառուցման, շուկայական յարաբերութիւնների հաստատման ուղղութեամբ: Այս արժէքներին մեր հաւատարմութեան ակնյայտ արդիւնքը Եւրոպայի Խորհրդին անդամակցութիւնն է»:

ՀՀ մշտական ներկայացուցիչը խօսեց նաեւ 2001թ. միւս կարեւոր իրադարձութեան՝ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի մասին՝ նշելով, որ հայ ժողովուրդը դեռեւս 17 դար առաջ որդեգրել էր քրիստոնէական արժէքներ, որոնք նաեւ համամարդկային արժէքներ են: Նշուեց նաեւ, որ այս օրերին Երեւանում է գտնւում Հռոմի Պապ Յովհաննէս-Պօղոս Բ.ը:

ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆ

Սթրազպուրկ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՎԻԶԱՆԵՐԸ

2001-ին, ինչպէս 2000 թուականին, 50%-ով պակսած է Երեւանի ֆրանսական դեսպանատունէն տրուած մուտքի արտօնագրերուն թիւը: Պատճառը այն է որ այդ ուղղութեամբ ճամբորդական գործակալութիւններուն հետ գործակցութիւնը դադրած է: Տրուած արտօնագիրներուն 46%-ը գործի մարդոց կը տրուի, 13%-ը ընտանեկան պատճառներով, 35%-ը զբօսաշրջիկներու, 6-ն ալ պաշտօնական այցերու առթիւ:

ՇԱՔԱՐԱԽՏԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԼՐՋՕՐԷՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՄԱՐԴՈՑ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը կը նախատեսէ, որ աշխարհի տարածքին շաքարախտի պարագաները մինչեւ 2025 աւելի քան կը կրկնապատկուին՝ հասնելու համար 300 միլիոնի: Կը նախատեսուի, որ բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող շրջանները, յատկապէս՝ Ասիա եւ Ափրիկէ, ամէնէն աւելի նոր պարագաներ արձանագրեն: Մտահոգիչ է մանաւանդ շաքարախտի պարագաներու աճը՝ կարգ մը տարիքներու: Ըստ Հիւանդութեան Հակաչափ եւ Կանխարգիլման ամերիկեան կեդրոններու (Սի.Տի.Սի.) մէկ տեղեկագրին, Միացեալ-Նահանգներու մէջ 40-ի շուրջ տարիքով անձերու մօտ շաքարախտի պարագաները 1990-էն 1998 40 առ հարիւր աճ մը արձանագրած են, մինչ 30-ի շուրջ մարդոց մօտ՝ 70 առ հարիւրի:

Ամերիկացի մասնագէտ Տոքթ. Արթըր Ռուպընշթայն կ'ըսէ, թէ շաքարախտը երիտասարդներու հիւանդութիւն մը դառնալու ընթացքին մէջ կը գտնուի:

Ան դիտել կու տայ, որ պատանիներու մօտ Բ. տեսակի (type-2) շաքարախտի պարագաներու աճը չափազանց մտահոգիչ է, որովհետեւ հիւանդութիւնը կրնայ տասնամեակներու պէտք ունենալ իր ամէնէն ահռելի ազդեցութիւնները յայտնաբերելու համար. կուրութիւն, երիկամներու աշխատանքի դադրեցում, կաթուած, սրտի հիւանդութիւն:

Մինչեւ վերջերս ներկայիս «type-2» կոչուած հիւանդութիւնը ծանօթ էր իբրեւ հասուն տարիքին ծայր տուող շաքարախտ: Միւս՝ Ա. տեսակը, որ type-1 կը կոչուի, շատ փոքր տարիքին կը հարուածէ եւ բոլորովին տարբեր հիւանդութիւն մըն է: Տոքթ. Ռիչըրտ Հիլմըն կ'ըսէ, թէ բազմաթիւ մարդիկ շաքարախտէ կամ դայն նախորդող վիճակէ մը կը տառապին, սակայն չեն գիտեր, թէ այս է պարագան: «Ախտանշանները խրայատուկ չեն եւ ընդհանրապէս ուշ կը յայտնուին», դիտել կու տայ ան: Հետազօտողներ տակաւին կ'ուսումնասիրեն բոլոր այն միջոցները, որոնցմով արեան շաքարի բարձր համեմատութիւններ վընաս կը հասցնեն:

Ազդեցութիւններէն մէկը երակներուն վրայ է, յատկապէս՝ աչքի, երիկամներու եւ ծայրամասերու: Շաքարը կը թուի միաժամանակ տկարացնել մազերակներու պատերը եւ փոքր երակները խցել: Արիւնահոսութիւններ ցանցենին կը քանդեն, իսկ արեան վատ շրջագայութիւնը կեղերու (խուլէր) պատճառ կը դառնայ սրունքներուն եւ ոտքերուն մէջ ու ասոր միակ դարմանը կրնայ անդամահատում ըլլալ: Սրտի հիւանդութեան վտանգը կը կրկնապատկուի տղամարդոց պարագային, իսկ կիներու պարագային անիկա կը քառապատկուի:

Մասնագէտները կ'ըսեն, թէ հակառակ այս բոլորին, մարդիկ կը շարունակեն շաքարախտը համեմատաբար անվնաս նըկատել: «Չկայ շաքարախտ մը, որ վատ չէ. բոլոր տեսակները յուրջ են», կ'ըսէ Շաքարախտի ամերիկեան ընկերակցութեան բժիշկներէն Անն Տէյլի:

ՇԱՔԱՐԱԽՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Համեմատաբար հազուադէպ Ա. տեսակի շաքարախտը ընդհանրապէս կը յայտնուի պրրունքի շրջանին եւ ցկեանս կը մնայ: Այս պարագային փանքրէասը, որ պէտք է բնականաբար էնսիւլին արտադրէ, երբ արեան շաքարի համեմատութիւնները բարձրանան, չի կատարեր իր պաշտօնը:

Հետազօտողներ ասիկա մարմնին բնական պաշտպանութեան կապուած հիւանդութիւն մը կը նկատեն եւ կ'ըսեն, թէ անոր պատճառը ժառանգական կրնայ ըլլալ: Բ. տեսակի շաքարախտը շատ աւելի բարդ է եւ խանգարում կ'ենթադրէ փանքրէասը, լեարդը, մկանները, ջիղերը, իւղի բջիջները եւ ուղեղը գիրար կապող միջոցներուն մէջ:

Այս պարագային մկանային բջիջները կը մերժեն շաքար ներծծել արիւնէն, վիճակ մը, որ էնսիւլինին հանդէպ դիմադրողականութիւն կը կոչուի:

Գէթ սկզբնական շրջանին այս հիւանդները ընդհանրապէս էնսիւլինի բնական արտադրութիւն կ'ունենան: Անոնք նոյնիսկ բնականէն աւելի բարձր համեմատութիւններ կրնան ունենալ, որովհետեւ իրենց փանքրէասը հետզհետէ աւելի ու աւելի շաքար կ'արտադրէ փորձելով քայլ պահել արեան բարձրացող շաքարի համեմատութիւններուն հետ:

Սակայն ժամանակի ընթացքին մարդիկ կրնան աւելի եւս էնսիւլինի կարիքը ունենալ, քան ինչ որ իրենց փանքրէասը կը հայթայթէ, եւ այս հիւանդները նաեւ, ինչպէս Ա. տեսակի հիւանդները, կախեալ կը դառնան էնսիւլինի սրսկումներէ:

Հետազօտողներ կ'ըսեն, թէ անխուսափելիօրէն ժառանգականութիւնը դերակատար է այս հիւանդութեան մէջ:

Անոնք գտած են, թէ մարդկային թիւ 1 քրոմոզոմին վրայ ծինի մը մէկ տարբերակը կը թուի 25 առ հարիւրով աւելցնել Բ. տեսակի շաքարախտի վտանգը: Բ. տեսակի շաքարախտին եւ սոնքութեան միջեւ կապը անժխտելի տեղեկագիր մը գտած է, թէ ուսումնասիրութեան առարկայ ենթականերուն 13,5 առ հարիւրը շաքարախտէ եւ սոնքութենէ կը տառապի՝ բաղդատմամբ բնական ծանրութիւն ունեցող շաքարախտաւորներու 3,5 առ հարիւրին:

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ»

(Մնացեալը յաջորդով)

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐՇԱՒԻՐ ԵԱՍԵԱՆ

Ինչպէս ընթերցողները տեսան, այդ մահափորձը պարզապէս իր կողմէ սարքուած խաղ մըն էր եւ նպատակ ունէր ձերբակալել տալ կարգ մը անմեղ հընչակեաններ իբրեւ այդ «ոճրափորձ»ին հեղինակները կամ թելադրիչները:

Նշան վերադարձաւ իր ազգականին քով եւ յայտարարեց, թէ բոլոր յանձնարարութիւնները կատարած էր:

– Ճէմալ պէյին թելեֆոն ըրի՞ր, – հարցուց Արշաւիր:

– Բնականաբար եւ մեծ բարեբախտութիւն էր, որ տակաւին չէր մեկնած իր պաշտօնատեղիէն:

– Ի՞նչ ըսաւ:

– Երբ վիրաւորուիլդ լսեց՝ շատ խռար անցաւ եւ մանրամասն տեղեկութիւն ուզեց ստացած վէրքերուդ մասին, – պատասխանեց Նշան:

– Ի՞նչ պատասխանեցիր:

– Ըսի, որ տակաւին բժշկական քննութիւն չէր կատարուած ,յայտահանդերձ վէրքը բաւական ծանր կ'երեւէր: Ասոր վրայ ըսաւ, թէ ոստիկանութեան բժիշկը հետն առած անմիջապէս պիտի գայ, հիմա ճամբան ըլլալու է:

– Անունը, հասցէն լաւ մը բացատրեցի՞ր:

– Այո՛, այո՛, ապահով եղիր:

Քառորդ ժամ ետքը կառքի թաւալումի ձայն մը լսուեցաւ:

– Կարծեմ եկաւ, – գոչեց Նշանը:

Արդարեւ կառքը քիչ յետոյ կեցաւ տան դրան առջեւ:

– Դուն քիչ մը ետքը մեզ առանձին ձըգէ՛, – պատուիրեց Արշաւիր, – թերեւս իրարու ծածուկ ըսելիքներ ունենանք:

– Շատ աղէկ, արդէն ես ալ ստիպուած եմ երթալու, մէկու մը հետ ժամադիր եղած եմ:

Նոյն րոպէին, դրան զանգակը հնչեց, եւ օրիորդներէն մին գնաց բանալու:

Երկու հոգի կառքէն իջան, եւ իրենցմէ մին հարցուց.

– Արշաւիր էֆէնտիին տունը ա՞յս է:

– Այո՛, հրամեցէ՛ք, – պատասխանեց օրիորդը:

– Կ'ուզենք զինքը տեսնել:

– Բայց վիրաւորուած ու անկողինը պառկած է:

– Գիտենք եւ ճիշդ ատոր համար եկած ենք զինքը տեսնելու:

– Ուրեմն, եթէ կը հաճիք, սենեակը սպասեցէք, մինչեւ որ իրեն իմաց տամ. թերեւս կը քնանայ կոր:

– Նոյնիսկ եթէ կը քնանայ կոր, արթնցուցէ՛ք զինքը, – ըսաւ օրիորդին հետ խօսող անձը տիրական շեշտով մը:

Յետոյ աւելցուց.

– Ըսէք իրեն, որ իքինճի շուպէ միւտիրի Ճէմալ պէյը եկած է ոստիկանութեան բժիշկին հետ եւ զինքը անպատճառ տեսնել կ'ուզէ:

Օրիորդը տեսնելով որ գործը պաշտօնական անձերու հետ է, աւելի յարգալից կերպարանք մը առաւ:

– Կը խնդրեմ, պէ՛յ էֆէնտի, րոպէ մը սենեակը մտէք, մինչեւ որ երթամ, իմաց տամ Արշաւիր էֆէնտիին:

– Շատ աղէկ, – հաւանեցաւ պէյը:

Քիչ յետոյ օրիորդը վերադարձաւ եւ երկու հիւրերը առաջնորդեց վիրաւորին քով:

Արշաւիր երախտագիտական քանի մը բառեր թոթովեց նուաղեալ ձայնով մը:

Թուրք ոստիկանական պաշտօնեան ուզեց, որ իրեն ընկերացող ոստիկանական բժիշկը վէրքը քննէ:

– Արդէն ուրիշ բժիշկ մը քննեց, մաքրեց եւ կապեց, – ըսաւ Արշաւիր, – եւ խստիւ պատուիրեց, որ չբացուի մինչեւ վաղը գիշեր, հակառակ պարագային, ըսաւ թէ, կրնայ բորբոքում մը յառաջ գայ, ուստի կը խնդրեմ, որ վէրքը չըբանանք այժմ:

– Արդէն անպատճառ վէրքը նայելու պէտք չկայ, – յայտարարեց բժիշկը, – քանի որ արդէն նայուած ու կապուած է, կը յուսամ, որ ոսկորը չէ վնասուած:

– Ձեմ կարծեր, – ըսաւ Արշաւիր, – վէրքը թէեւ բաւական խոր էր:

– Շատ ցաւ կը զգա՞ք:

– Սկիզբները շատ ցաւեցաւ, բայց հիմա դեղերուն վրայ լաւ է:

– Քանի որ ցաւ չունիք, ըսել է՝ ոսկորները չեն վնասուած: Տեսնենք տաքութիւնիդ ինչպէ՞ս է:

Բժիշկը իր քննութիւնը կատարելէ ետքը յայտարարեց.

– Բայց, Արշաւի՛ր էֆէնտի, գրեթէ բնա՛ւ տաքութիւն չունիք:

– Քիչ մը առաջ ունէի, բայց հիմա անցաւ, – ըսաւ վիրաւորը:

– Ինչ որ է, ամէն պարագային՝ եղածը անկարեւոր բան մըն է, – յայտարարեց Ճէմալ պէյ, – եւ շատ գոհ եմ, որ այդպէս է: Քիչ մը առաջ, երբ ինծի թելեֆոն ըրին, վիճակդ բաւական ծանր ներկայացուցին:

– Իրաւ է, որ նոր զարնուած ատենս այնպէս էի, բայց յետոյ բժիշկին խընամքներուն շնորհիւ, շուտով ինքզինքս գտայ:

– Պարզապէս կ'երեւի, որ չափազանց վախցեր ես, ինչ որ է, տօքթօր էֆէնտի, կարծեմ թէ դուք կրնաք երթալ, պարապ տեղը ձեզ հոս վար չդնեմ, մանաւանդ որ գործ ալ ունիք:

Բժիշկը ոտքի ելաւ եւ մնաք բարով ըսելով՝ ուղղուեցաւ դէպի դուռը. իրեն հետեւեցաւ նաեւ Նշան:

(Շար. 73)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Մակի Գույումճեան, զաւակներն ու թոռները, Պ. Աղեքսանդր Գույումճեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Հոկտեմբեր 7, յետ պատարագի Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, իրենց ամուսնոյն, հօր, մեծ – հօր եւ եղբօր՝

ԱՐԹՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

Ն Ա Մ Ո Ւ Լ

I S T I N A

Եռամսեայ պարբերականին 2001–ի թիւ 1–ը (Յունուար – Մարտ) կը պարունակէ հայկական ցեղասպանութեան մասին յօդուած մը, որուն հեղինակն է Իգոր Տորֆման – Լազարեւ, նաեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ վերաբերող երկու գրութիւններ, զորս ստորագրած է Պերնար Տիւփիւի (**Istina,** 45, rue de la Glacière, 75013 Paris).

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Թորիկեանէ 200 Ֆրանք Արթօ Գույումճեանի մահուան քառասունքին առիթով:

***

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի Էլէն Բիւզանդ մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Յակոբ Նոտարեանէ 500 Ֆր.:

UGAB — PARIS

VENEZ A LA RENCONTRE DE L'EMOTION...

Conférence musicale avec

YERSO

et JACQUES E. ROUSSELON

le vendredi 5 octobre à 20h30

A l'occasion de la sortie de son nouvel album CD **"ZARTONG", Elise YEGHIGUIAN-OHANNESSIAN** alias **Y E R S O**, nous fait le grand plaisir de venir nous rendre visite pour une conférence musicale que vous n'êtes pas près d'oublier. Elle sera accompagnée de **Jacques-E. ROUSSELON**, son compositeur-arrangeur-producteur.

Au cours de cette conférence d'un genre nouveau, **Y E R S O**, nous racontera la genèse de cet album et nous interprètera, pour notre plus grand bonheur, quelques-unes de ses nouvelles chansons.

«ZARTONG», c'est l'album d'une chanteuse pas comme les autres, Yerso, qui a la particularité de chanter une terre, un pays dans lequel elle n'avait jamais mis les pieds jusqu'au tournage d'un documentaire en mai 2000. Ce pays, c'est l'Arménie, que ses parents ont fuie en 1923 avec sa sœur aînée alors âgée de quelques mois.

Nous vous attendons nombreux pour cette nouvelle conférence musicale, qui ne manquera pas de vous émouvoir et à l'issue de laquelle Yerso se fera un plaisir de vous dédicacer son album.

A bientôt pour ce nouveau rendez-vous passionnant.

P.A.F. : 30 F

U G A B
118, rue de Courcelles, 75017 Paris
(Métro : Courcelles)

Téléphone : 01 45 20 03 18
ou 01 42 27 12 26
E-mail : ugabfr@aol.com

CDCA

LANCEMENT DU PRIX DU CDCA

Communiqué

Le CDCA lance un prix qui récompensera l'auteur d'un travail universitaire ayant abouti à l'obtention d'un diplôme durant l'année 2001.

Ce concours, ouvert à toutes les disciplines, récompensera les meilleurs travaux dont le sujet porte, directement ou indirectement, sur l'Arménie ou les Arméniens.

Toutes les disciplines sont concernées: histoire, géographie, sociologie, économie, science de la vie ou de la terre, arts, sciences politiques, sciences physiques, droit, littérature, psychanalyse, architecture, cinéma etc...

Prix?

Trois prix ainsi qu'une possibilité de publication, récompenseront les meilleurs travaux :

— 1er prix:2300 euros (envrion 15090F)

— 2ème Prix:1500 euros (environ 9800F)

— 3ème Prix:765 euros (environ 5020F)

Pour qui?

Tout étudiant titulaire d'un diplôme Bac+3 (niveau Licence ou équivalent) jusqu'à Bac+5 (DEA-DESS ou équivalent).

Type de document?

Tout document rédigé en français ou en anglais ayant donné lieu à la délivrance d'un diplôme par des organismes d'enseignement français : rapport de stage, mémoire, document de fin d'études, film etc...

Jury

Un jury pluridisciplinaire composé de chercheurs, professeurs et universitaires déterminera les trois œuvres jujées les meilleures tant sur le plan de l'originalité du thème que de la forme.

Inscription, remise de documents et des pièces justificatives : **avant le 31 janvier 2002.**

Remise des prix: **1er mai 2002.**

Règlement et formulaire d'inscription à retirer auprès du Comité de Défense de la Cause Arménienne (C D C A), 17, rue Bleue, 75009 Paris, Tél. : 01 44 83 07 02

Règlement du concours disponible sur **http://www.cdca.asso.fr**

Paris, le 24 septembre

–ՎԵՐԱՄՈՒՏ–

Իսի Հայ Առաքելական Եկեղեցիի «Քրիստոնէական Դաստիարակութեան» Ձորեքշաբթի օրուան դպրոցը կը բանայ իր դռները յառաջիկայ Ձորեքշաբթի օր, Հոկտեմբեր 3–ին:

Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը կը դասաւանդէ Կրօնք, Հայոց Պատմութիւն եւ Հայաստանի աշխարհագրութիւն, նաեւ Կրօնական եւ ազգային երգեր:

Իսկ ուսուցչուհի Տիկին Սեդա Հէլվաճեան կը դասաւանդէ Հայ Լեզուն լաւ գրելու եւ սահուն կարդալու միջոցը:

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Ձորեքշաբթի առաւօտները ժամը 9–էն 12.30: Մըտոն–Լա–Ֆոռէ, Գլամար եւ Իսի–լէ–Մուլինօ օթօքարի սպասարկութիւն՝ գլխաւոր պողոտաներէն:

Շաբաթ օրերը, Օր. Միշլին Ասլանեան կ'ուսուցանէ Հայկական պար եւ Հայ խաղ մասնագիտութիւն -երկու շաբաթը անգամ մը-:

Արձանագրութեանց համար դիմել քարտուղարուհի Տիկին Ռոզէթ Տէրվիշեանին, Եկեղեցւոյ քարտուղարութեան՝ Հեռ. – 01. 46. 44. 28. 52:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Հոկտեմբեր 7,

ՓԱՐԻԶԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ

97-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Այս առթիւ, ժամը 10.30–ին Մայր Տաճարին մէջ կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ մատաղ կ'օրհնուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԳԻՍՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ

Կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի

Ի ժամու պատարագի, Գոհաբանական Մաղթանք կը կատարուի Մայր Եկեղեցւոյ ի կեանս եղող բարերարներուն եւ անոնց ընտանիքներուն արեւշատութեան համար:

Յաւարտ պատարագի Հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցաշէն բարերար Աղեքսանդր Մանթաշեանի, Մանթաշեան ընտանիքի եւ Մայր Տաճարի հանգուցեալ բարերարներուն համար:

Կը հրաւիրուին բոլորը, այդ օր, մասնակցելու Մայր Տաճարի 97–ամեակի այս տօնախմբութեան եւ չարունակելու արտայայտել իրենց հոգածութիւնը իրենց հոգեւոր Տան պայծառութեան հանդէպ:

Ս. ՅՈՎՀ.–ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՆ ԵՆ. –

Եկեղեցաշէն բարերար՝ Աղեքսանդր Մանթաշեան, Արուսեակ Ազարեան, Հմայեակ Ալեքսանեան, Զապէլ Ալթունեան, Արաքսի Ակոնայեան, Մարիամ եւ որդի Գուրգէն Ակոնայեան, Հայկ Աղապէկեան, Հրանդ Աղապէկեան, Վերթհայմ Աղապէկեան, Նոյեմի Ամպէրեան, Վահրամ Արսլանեան, Վիքթորիա Արսլանեան, Ժան - Փիէռ Անուանեան, Լէոնդին Անուանեան, Լիւսի Աչճեան, Եփիմէ Աւետիսեան (Անայիս), Մարիամ եւ Յովհաննէս Բարսեղեան, Միհրան եւ Թագուհի Գալէզեան, Սեդրակ Գաւուեան, Մայրանոյշ Գործունեան, Արմենակ Գույումճեան, Պերճ Գույումճեան, Սրբուհի Զատիկեան, Նշան եւ Հայկանոյշ Զէյվէլեան, Հայկ Զրուանդեան, Աթանագինէ Էդնայեան, Օննիկ Էթմէքճեան, Իրէն Էնկէլ – Գույումճեան, Յովհաննէս Ըշըլեան, Վարդան եւ Երանուհի Թիւթիւնճեան, Աստրա Թորոսեան, Զարուհի Թորոսեան, Խաչիկ Թորոսեան, Յարութիւն Ժամկոչեան, Եսթեր Իշքալացեան, Վահագն Իշքալացեան, Ճէյմս եւ Ռոզա Խըտըրչահ, Բիւզանդ Խոտիկեան, Սիրվարդ Խուկանեան, Տիգրան եւ Մարիամ Կակազեան, Անդրանիկ եւ Փայլիկ Կէնճեան, Վրոյր Հալէպլըեան, Արմենակ Համբարձումեան, Գաբրիէլ Համբարձումեան, Աբրահամ Ղուկասեան, Վալանթէն Ղուկասեան, Անիճա Ծիհանեան, Սարգիս – Մինաս Ծիհանեան, Յովհաննէս Մալեանց, Արմէն Մամէզ, Եսթեր Մամէզ – Գարսմանեան, Ռաֆայէլ Մարկոսեան, Արմինէ Մելիք – Դալէնտէրեան, Միհրանոյշ Մեսրոպեան, Տիրուհի Միքայէլեան, Գառնիկ Մոմճեան, Զօհրապ Մուրատեան, Զարմայր և Վարդուհի Մուսայեան, Կարապետ Յակոբեան, Յարութիւն Որբերեան, Ռուբէն եւ Մարի Որբերեան, Մարգրիտ Ուզունեան, Ցոլինէ Չիլինկիրեան, Ռոզա Պագըրճեան, Գաբրիէլ Պալապանեան, Արա Պարթեւեան, Եդուարդ Պապեան, Երուանդ Պարկըրճեան, Թամար Պարպիրօթ, Թագուհի Պետոյեան, Արմէն Պետրոսեան, Խաչատուր Պետրոսեան, Մելքոն Պետրոսեան, Մուշեղ Պետրոսեան, Սոֆիա Պետրոսեան, Զապէլ Պէօճէքեան, Վեհանոյշ Ջրբաշեան, Զօհրապ Սանթուրճեան, Բարսեղ եւ Թագուհի Սարաֆեան, Յարութիւն Սետիկեան, Վահրամ Սէֆէրեան, Լէա Սէրայտարեան, Թադէոս Սթաթեան, Հայկազ Սինանեան, Սիմոնն Տակառեան, Օհան Տակառեան, Մարտիկ Տակառեան, Բարսեղ եւ Աղնիւ Տամլամեան, Յակոբ եւ Մարիամ Տամլամեան, Մովսէս եւ Նարդուհի Տէմիրճեան, Մարի Ա. Տէտէյեան, Արաքսի Տէր – Մեսրոպեան, Թորգոմ Տէր – Մեսրոպեան, Մեսրոպ Ա. Քհնյ. Տէր – Մեսրոպեան եւ Երէցկին Փերուզ Տէր – Մեսրոպեան, Յակոբ Տէր – Յակոբեան, Սիրարփի Տէր – Ներսէսեան, Բարգէն Տէր – Սարգիսեան, Զաւէն Տէր – Սարգիսեան, Գրիգոր Փաթթուքեան, Աւլէն Փափազեան, Հերմին Քանթար, Սօֆի Ռօզ Քանճեան, Սեդրակ Քարեան, Մանիա Քոչարեան, Ստեփան Քոչարեան, Աշոտ Ֆրէնկեան, Սիրանոյշ Ա. Ֆրէնկեան, Մօրիս Օպէր, Աղաւնի Թորոսեան, Սրբուհի Թորոսեան, Արամ Մարտիրոսեան, Անդրէ Յարութիւնեանց, Սեդրակ եւ Ալիս Յովսէփեան, Արա Սերոբեան, Մարգրիտ Փափազեան, Վերժին Մոմճեան, Մարիամ Տակառեան, Միհրան Եփրեմեան, Գառնուհի Զաքարեան, Վարդավառ Կէօվչէնեան, Փերուզ Յակոբեան, Մարի Պէկեան, Ցոլինէ Պէրպէրեան, Նուրհան Ֆրէնկեան, Սիրարփի Սանթուրճեան-Հայէպլեան, Յարութիւն Ֆիրէնկիւլեան, Ահարոն Հիշիչեան, Արեգնազ Հիւրէ, Գոհար Միլօֆ, Սարգիս Միլօֆ, Լուսիա Միտիլեան, Յարէթ Յարութիւնեան, Ժեռմէն Անուանեան - Աւանեան, Ժիրայր Գարաճեան, Գրիգոր եւ Սաթենիկ Եօլքարտաշեան, Յարութիւն Միւթէվէլեան, Սելմա Պաքմաչեան, Արմենուհի Աղաճանեանց եւ բժ. Նիկոլա Աղաճանեանց, Մարիամ Գաւուեան, Օննիկ Թորոսեան, Քրիսթոֆ–Խաչիկ Խաչիկօֆ, Համազասպ-Կապրիէլ Մոմճեան, Յովհաննէս Միտիլեան, Միշէլ Սահակեան, Անահիտ Փաստըրմաճեան, Արշալոյս Միւթէվէլեան, Թագուհի Յարութիւնեան, Վահէ Չիլինկիրեան, Արա Յարութիւնեան:

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Ի ԿԵԱՆՍ ԵՂՈՂ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՆ ԵՆ. –

Անանուն բարերար մը, Անիճա Ալեքսանեան, Մարի Ժամկոչեան, Միշէլ Ժամկոչեան, Նշան Ժամկոչեան, Արմենուհի Սոխոտիկեան, Պատրիկ Կէնճեան, Սոնիա Կէնճեան, Արաքսի Մուրատեան, Գէորգ Պագըրճեան, Անահիտ Ռաֆայէլ Պետոյեան, Գարօլ-Անոյշ Պետոյեան, Էմմանիւէլ-Աստղիկ Պետոյեան, Մարիամ – Սէսիլ Պետոյեան, Միշէլ Պետոյեան - Քրէթիէն, Սարգիս Պետոյեան, Վարդգէս Տակառեան, Էտմոն Ղազերեան, Մարգրիտ Ղազերեան, Հայկանոյշ Մարտիրոսեան, Հուրի Երեւանեան, Պարպարա Միլօֆ, Սաթենիկ Ֆիրէնկիւլեան, Սիլվա Սերոբեան, Սուրէն եւ Սոնիա Սարգիսեան, Միքայէլ եւ Մառլէն Յակոբեան, Անուանեան–Աւանեան ընտանիք, Ալիս Իսրայէլեան, Ալիս Մոմճեան, Միշէլ եւ Տարօն եւ Անի Սարհատեան, Միշէլ եւ Վիրժինի Միհրան եւ զաւակները, Լեւոն Զարգավաթճեան, Մառի – Ժագլին Զարգավաթճեան:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի Ա. Թաղէոսեան մասնաճիւղի ժողովը Շաբաթ, Հոկտեմբեր 6, ժամը 14.30–ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ

17, rue Bleue — 75009 PARIS

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

LA CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section «Saténig»
de Vaulx-en-Velin
organise

un Grand Bal

animé par le chanteur
MARTEN YORGANTZ
ET SON ORCHESTRE

le Samedi 6 octobre à partir de 20 h
au Centre Culturel **«Charlie Chaplin»**
Place de la Nation à Vaulx-en-Velin
(parking surveillé)

Bar et Buffet
de spécialités arméniennes
— Entrée : 100 F —

Réservations :
04 78 80 22 53 / 04 72 04 80 90
ou 06 61 35 36 61

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55835

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 4
JEUDI
4 OCTOBRE
2001

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO : 6,00 F

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.266

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20.266

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Շ. ԱԶՆԱՒՈՒՐԻՆ ՃՇԴՈՒՄՆԵՐԸ

Լուրերու Ֆրանս–Փրէս գործակալութիւնը (ԱՖՓ) կը տեղեկացնէ թէ ակնարկելով Ջաւախքէն Պօղոս Պօղոսեանի Երեւանի Առագաստ սրճարանը սպանութեան, Շ. Ազնաւուր ըսած է. «Ոչ ոք չանաց ինծի մօտենալ, ոչ իմ հասնելուս, ոչ ընթրիքի ընթացքին, ոչ ալ մեր մեկնումին»: Յայտնի է որ սպանութիւնը գործուած էր երգիչին, այլ հիւրերու նախագահ Ռ. Քոչարեանի հետ սրճարանէն մեկնումէն քանի մը վայրկեան ետք: Ֆրանսական գործակալութիւնը կը նշէ այս պարագան ալ, աւելցնելով որ Հայաստանեան մամուլը հիմնուելով վկաներու որոնց ինքնութիւնը չի բացայայտուիր, սպանութեամբ կ'ամբաստանէ Նախագահին ապահովութեան պաշտօնեաները: ԱՖՓ-ին տրուած հաղորդագրութեամբ մը երգիչը կ'ըսէ. «Նստած էի Ռ. Քոչարեանի կողքին, անընական ոչինչ նշմարեցի, ոչ ալ ինծի ընկերացողները. մօտ քսան հոգինոց խումբ մըն էինք (փրանսացի լրագրող մը, կաթողիկէ վարդապետ մը, արուեստագէտներ): Ոչ մէկ արտակարգ միջադէպ նշմարեցինք հոն»:

***

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՊԱՅԱԿՈՅՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հոկտեմբեր 2-ին Երեւան հասած է Ռուսաստանի սպայակոյտի պետ զօրավար Ա. Կուաշնին, սովորական, ծրագրուած այցով, ինչպէս ըսած է լրագրողներուն: Պատասխանելով ամերիկեան օդանաւերու առջեւ Հայաստանի օդային տարածքը բանալու որոշումին նկատմամբ իրենց վերաբերումին մասին հարցումներու, զօրավարը ըսած է թէ բնական է ատիկա, քանի որ Աֆղանիստան դիմող օդանաւերը պիտի անցնին սահմանակից երկիրներու օդային տարածքէն:

Նոյն օրը զօրավար Կուաշնին հանդիպում ունեցած է Նախագահ Ռ. Քոչարեանի, Պաշտպանութեան նախարարին հետ: Հոկտեմբեր 3-ին ան կը մեկնէր Գիւմրի, ուր հանդիպում կ'ունենար ռուսական 102-րդ ռազմակայանի անձնակազմին հետ:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 2 / 3)

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԹՈՒՐՔԵՐՈՒ ՅՈԽՈՐՏԱՆՔԻՆ

Ս. Սարգսեան Հոկտեմբեր 2-ին պատասխանած է Ատրպէջանի Պաշտպանութեան նախարարին որ յայտարարած էր թէ Թուրքիա պատրաստ է օգնելու իրենց, Ղարաբաղի մէջ ռազմական գործողութիւններ սկսելու համար: Հայաստանի Պաշտպանութեան նախարարը ըսած է. – «Ես քանիցս ասել եմ ու կրկնում եմ որ որեւէ մէկն իրաւունք չունի յոխորտալու: Որեւէ մէկը, ով էլ նրան օգնի, իրաւունք չունի զէնքի ուժով հարցը լուծելու փորձ կատարել: Եթէ այդպիսիք ցանկացողներ կան, նրանք իրենց ձեռքերը կը վառեն»:

***

ԱԼԵՔՍԻ Բ.Ի ՀԱՇՏԱՐԱՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ

Մոսկուայի եւ համայն Ռուսաստանի պատրիարք Ալեքսի Բ. յայտարարած է թէ ռուսական Ուղղափառ Եկեղեցին պատրաստ է Ղարաբաղի հարցին լուծումին հաշտարար ջանքերը շարունակելու:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՏՃԱՌԱՒ

ԹՈՒՐՔԻԱ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ ՊԱՊԸ ԵՒ ԲՈՂՈՔ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

Թուրքիա հրաւիրած է Անգարայի Վատիկանի դեսպանը արտայայտելու համար իր սահմռկումը (Ֆիկարօ գոնսթերնասիոն բառը կը գործածէ) Յովհ. Պօղոս Բ.ի հայկական ցեղասպանութեան դատապարտումին համար, ԱՖՓ-ի յայտնած է թուրք դիւանագէտ մը: Ցաւ յայտնած է որ Պապը տէրը չէ մնացած իր խոստումին, զոր ըրած էր նախագահ Սեզէրի ուղղած իր նամակին մէջ, նախքան իր այցելութիւնը Հայաստան, ապահովութիւն տալով որ այդ այցելութիւնը առիթ պիտի չըլլար Թուրքերուն պատկերը սեւցնելու:

ՄԱՄՈՒԼ

«LE FIGARO» (3 octobre)

UN CHATIMENT ADAPTE

MICHEL MARIAN

Ֆիկարօ իր «վիճարկում և կարծիքներ» էջին մէջ հրատարակած է Միշէլ Մարեանի (Փարիզի Քաղաքական Ուսումներու Հիմնարկի դասախօս) գրութիւնը ուր ան կը վերլուծէ ստեղծուած ներկայ կացութիւնը, սկիզբէն շեշտելով.– «Ո՞վ է յանցաւորը: Մարդոց խմբակ մը, պետ մը եւ իր կազմակերպութի՞ւնը, ոչ թէ մէկ միլիառ հաւատացեալներ: Բոլոր մահմետականները իսլամապաշտ չեն եւ բոլոր իսլամապաշտները ալ ահաբեկիչ չեն: Այս հաստատումէն ետք, հարկ է նախընտրութիւն մը տալ թիրախ ունեցող հակադարձութեան մը, որ հարուածէ Պէն Լատէնը եւ իր գործակալները առանց վնասելու Քապուլի բնակչութիւններուն, որոնք տառապեցան Խորհրդային հրաւումէն, քաղաքացիական պատերազմէն եւ Թալիպանական լուծէն»: Ապա, դէմ առ դէմ դնելով արեւմուտքը եւ իսլամը, կը խորացնէ հարցը, առարկայօրէն բացատրելով պարզուած պատկերը, պատասխանատուութիւնները եւ նախատեսելի լուծումները:

Որպէս այդ, ան խօսած է Հայաստանի ու Ատրպէջանի հոգեւոր առաջնորդներու նոր հանդիպումի մը հաւանականութեան մասին:

***

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՐՁԱՆԸ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԲԱԿԻՆ ՄԷՋ

Հոկտեմբեր 2-ին հողի օրհնութիւն կատարուած է Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին բակը ուր որոշուած է գալ տարի Սեպտեմբերին կանգնել զօրավար Անդրանիկի 9 մեթր բարձրութեամբ արձանը: Այդ նպատակով Լոս – Անճըլըսէն Վահրամ Շիրինեան 70 հազար տոլար նուիրած է: Քանդակը պիտի պատրաստէ Արա Շիրազ:

***

ՄԱՐԶԱԿԱՆ

ԹԷՆԻՍ. – Հոնկ–Քոնկի մրցաշարքին (400 հազար տոլար պարգեւով) անակնկալ պարտութիւն մը կրած է Սաֆին-Սարգսեան զոյգը քառորդ աւարտականներէն դուրս մնալով: Անոնք զիջած են Պլէք (Զիմպապուէ) – Շիմատա (Ճափոն) զոյգին 4/6, 2/6 արդիւնքով:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՊՈՒՇ ԵՒ ՊԼԵՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Որքան ալ նիւթը երգիծական չէ, կարելի չէ, այս առթիւ, չանդրադառնալ Գաճառ Անշէնէի խորագրին՝ «Վերջին պատրաստութիւններ առանց ճակատի պատերազմին»: Արդարեւ, թէ Պու՛շ եւ քիչ մը աւելի ալ Թ. Պլէր ռազմաշունչ ելոյթներով պատրաստ են պատերազմի, հիմնայատակ քանդումներու խոստումներ ալ կ'ընեն, եթէ..., բայց, ո՞ւր, ո՞ր ճակատին վրայ: Ճիշդ է որ Ամերիկա ցարդ ուրիշ երկիրներ գործածած է որպէս ճակատ, բայց, այս անգամ հարցը տարբեր է: Այդ իսկ պատճառաւ, Պուշ Պաշտպանութեան իր նախարարը ղրկած է Սաուտի Արաբիա, Եգիպտոս եւ Օման, ապահովելու համար անոնց զօրակցութիւնը: Գալով Թ. Պլէրի, ալ աւելի բուռն է: Իրեն համար ոչ մէկ կասկած կայ Պէն Լատէնի պատասխանատուութեան մասին եւ ուրեմն անոր կայաններուն դէմ յարձակումը անխուսափելի է, Թալիպաններուն կը մնայ գործակցիլ կամ յարձակումին ենթարկուիլ: «Գործողութիւնը որուն պիտի ձեռնարկենք թիրախ պիտի ունենայ եւ համեմատական պիտի ըլլայ, մարդկայնօրէն ամէն ինչ պիտի ընենք որպէսզի քաղաքացիներ զոհ չերթան» շեշտած է Մեծն – Բրիտանիոյ վարչապետը Պրայթընի մէջ, աշխատաւորական համագումարին առջեւ:

Ուաշինկթըն իր կողմէ, յայտարարած է որ 30 հազար զինուոր, սաւառնակիր երկու նաւեր եւ շուրջ 350 պատերազմական օդանաւեր շրջանը ղրկուած են: Թալիպանները, Փաքիստանի իրենց դեսպանին միջոցաւ յայտնած էին թէ նոր հակամարտութեան մը տեղ բանակցութիւն կը նախընտրեն, բայց, Պուշ մերժեց եւ բանբերը շեշտեց՝ «պահը ոչ վիճաբանութիւններու է, ոչ ալ բանակցութիւններու, այլ՝ գործի»:

***

Ամէն օր, գրեթէ ամէն ժամ, նորութիւններ կը հրապարակուին Սեպտեմբեր 11-ի ոճրափորձերու կապակցութեամբ, որոնք ոստիկանական թերթօնի մը երեւոյթն ունին: Այսպէս, կը յայտնուի որ Ուսամա Պէն Լատէն, ոճրափորձերու նախօրեակին հեռաձայներ է մօրը, յայտնելով թէ «կարեւոր բան մը պիտի պատահի» որ արգելք պիտի ըլլայ իրենց հաղորդակցելու որոշ շրջան մը: Լուրը տուած է Նիւ – Եորք Թայմզ, աղբիւր նշելով «օտար պատասխանատու մը»: Պէն Լատէնի մայրը, որուն միակ զաւակը կ'ըլլայ, հեռաձայնային այդ խօսակցութիւնը ունեցեր է Սեպտեմբեր 9-ին կամ 10-ին, երբ արձակուրդի էր Դամասկոս:

***

Ժամալ Պեկալ, ալժերաֆրանսացին, որ ձերբակալուեցաւ, կը շարունակէ խոստովանութիւններ ընել: Մանրամասնօրէն նկարագրեր է Փարիզի ամերիկեան դեսպանատան դէմ ոճրափորձին ծրագիրը: Այս խոստովանութիւնները հետեւանք են եղեր, արաբ իշխանապետութեանց (Տուպայ ձերբակալուած էր, Յուլիսին) ոստիկաններու խորամանկութեան: Անոնք հանդիպում մը կազմակերպեր են կրօնապետներու հետ, որոնք իրեն բացատրեր են որ ճիշդ ճամբու վրայ չէ եւ թէ պէտք է խօսի, արժանանալու համար Ալլահի ներումին: Պեկալ «արդար իսլամի ճամբան» գտեր է, նորէն կարդացեր է Գուրանը եւ ուրացեր իր յանձնառութիւնը...:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԵՐՁԱՒՈՐ – ԱՐԵՒԵԼՔԻ կացութիւնը ալ աւելի լարուեցաւ Հոկտ. 1-ին եւ 2-ին, երբ Պաղեստինցիներ յաջողեցան մուտք գործել, Հոկտեմբեր 2-ի գիշերը, Գազայի հիւսիսային շրջանի հրէական գաղութներէն ներս եւ կրակել: Երկու իսրայէլցի զինուորներ մեռած են, կան նաեւ 15 վիրաւորներ, բայց, արարքին տէրն ալ – Համասը – 3 հոգի կորսնցուցած է: Շարոն անմիջական հակադարձութեան ձեռնարկած է եւ Հոկտեմբեր 3-ին, Զրեքշաբթի առտու հրասայլերով եւ պատերազմական թռաններով յարձակումի անցած է: Քարուքանդ եղած է պաղեստինեան ապահովութեան սպասարկութեան մէկ կեդրոնը: Միւս կողմէ եւ առաջին անգամ ըլլալով ամերիկացի նախագահի մը համար, Պուշ յայտարարեց որ կողմնակից է պաղեստինեան պետութեան մը ստեղծումին:

ԱՏՐՊԷՋԱՆ ԵՒ ՎՐԱՍՏԱՆ, Սեպտեմբեր 29-ին, համաձայնագիր մը ստորագրած են ատրպէջանական բնական կազին փոխադրութեան եւ վաճառքին շուրջ, Բաքու – Թիֆլիս – Էրզրում ճամբով, ինչ որ ԱՄՆ ողջունած են Հոկտեմբեր 1-ին: Ծրագիրը կը նախատեսէ 900 քիլոմեթր երկարութեամբ կազուղի մը Կասպից ծովու Շահտէնիզի հանքէն Էրզրում, զոր կը շահագործէ միջազգային գոնսորսիոմ մը բրիտանական Պէ – Փէ քարիւղային խումբին հակակշիռին տակ: Պիտի արժէ շուրջ մէկ միլիառ տոլար:

ՍՈՒԻՍԷՌ, զուիցերական օդանաւային համբաւաւոր ընկերութիւնը սնանկացած է եւ Հոկտեմբեր 2-ին, ոչ մէկ օդանաւ կրցաւ թռչիլ քերոզինը վճարուած չըլլալով երկար ատենէ ի վեր: Քսան հազար ճամբորդ մէջտեղ մնացին, մինչ ընկերութեան անձնակազմը շատ մտահոգ է: Խօսք կայ որ փրկութեան լուծումներ գտնուին, բայց, մեծ յոյս չկայ եւ մինչ այդ օդանաւերը օդակայանները կը մնան:

ԳԱՇՄԻՐԻ ամէնէն գործօն կեռիլլայի խմբակը, հնդկական Ժայիշ Ժ–Մոհամատ (Մոհամատի բանակ) հակակշռին տակ, Հոկտեմբեր 1-ին, տէր եղած է կառքով անձնասպանական ոճրափորձի մը, որուն հետեւանքով 34 հոգի մեռած է եւ 40 ուրիշներ ալ վիրաւորուած Սրինակար, Գաշմիրի ամառնային մայրաքաղաքը: Արարքը գործուած է գաւառական խորհրդարանին առջեւ, որ խորհրդանշական վայր մըն է: Խումբին կեդրոնը Փաքիստան կը գտնուի եւ այս վերջինը դատապարտած է ոճրափորձը: ԱՄՆ-ու գործակցութեան հրաւէրը պատճառ եղած է որ Փաքիստան մտահոգ ըլլայ:

ԹՈՒՐՔԻԱ կ'ուզէ ամրապնդել իր դըրամատուներու ելմտական կառոյցը, որպէսզի անոնք կարենան համարձակ քայլեր առնել մասնակցելու համար տնտեսութեան վերականգնման: Նոյեմբերի, Դեկտեմբերի եւ Փետրուարի յաջորդական տագնապները կէս առ կէս պակսեցուցած են առեւտրական դրամատուներու դրամագլուխը, ստիպելով որ կառավարութիւնը իր հակակշռին տակ առնէ 10 դրամատուն:

ՉէՉԷՆՆԵՐՆ ալ հաստատեցին որ Շամիլ Բասայեւի կողքին կռուող անկախապաշտ գլխաւոր պատերազմական ղեկավարներէն մէկը՝ Ապու Եագուպ մեռած է: Ան սպաննուած է Սեպտեմբեր 30-ին Չէչէնիոյ հարաւ – արեւելեան շրջանը, կռիւներու ընթացքին:

ԾԻԾԵՌՆԱԿԸ ԲՈՅՆ ԿԸ ՇԻՆԷ ՆԱԽԱՐԱՐՆ ԱԼ ՊԱՆԴՈԿ

Սեպտեմբերի առնական մթնոլորտին մէջ քիչ մը լուսանցքէն անդին մնաց լուրը թէ Երեւան օժտուած էր նոր պանդոկով մը: [illegible]

[illegible] գուրը մնալը, ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին օծումին արարողութեան:

Որքան ալ բոլոր էջերը կարդացուած, բոլոր դասերը սերտուած ըլլան, դժուար է, այսուհանդերձ, արգիլել հիմնական հարցական մը. արդեօք, իսկապէ՞ս Հայաստանի վերնախաւը ու բազմութիւնները կարողութիւններու յստակ գիծով մը բաժնուած են. մէկ կողմը կան ճարպիկ, վարպետ, հնարամիտ, յանդուգն տիպարներ, միւս կողմը՝ ապիկարներու, վախկոտներու, անկարողներու բազմութիւնե՞ր: Նման շուարումի առջեւ բնական է որ առաջին յուշարարը Ֆրիկը կ'ըլլայ, իր «Մէկին հազար ուլ ու մաքի»...ով: Կան սակայն այժմէական մատնանշումներ ալ. անոնց ամէնէն թարմերէն էջ մը ունի «Առաւօտ»ը (Սեպտեմբեր 12), նախկին նախարար ու վարչապետի խորհրդական Գագիկ Պօղոսեանի սպանութեան առթիւ: Թէեւ այդ էջը գրի առնուած է այլ պարագաներու մէջ, սակայն, տողեր կան որոնք անկարելի է չյիշել «Մեթրոփոլ»ին բացումին նկարագրականին հետ. «Իշխանական տանիք չունեցող մեծահարուստներ Հայաստանում պարզապես չկան» կ'ըսուի հոն. ապա «պետութեան քաղաքակիրթ պատկեր»ին պահպանումը դժուարացնող ազդակներ կը նկատուին «Թանկարժէք հագուստների եւ վզկապների տակ օրէցօր աւելի պարզորոշ գեղջկական աղաների տրեխները եւ դաշտային հրամանատարների ծպտումը»:

Այս նշումը մտածել ու տալ նաեւ բացատրութեան մը մասին. պանդոկատէր նախարար Ա. Մանուկեանն ալ, Սեպտեմբեր 11-ին իր տանը դրան ամրացուած ռումբով սպաննուած Գ. Պօղոսեանն ալ պետական եկամուտներու աթոռը գըրաւած անձեր եղած են. ճարպիկներու եւ ապիկարներու սահմանը չփոթա՞ծ մըն էր երկրորդը, որ փոխանակ մեծամեծներու շուքով օրինակ՝ իր անունը կրող չքեղաշուք ճաշարանի մը բացումը կատարելու, ինկաւ գրեթէ ձեռքին մէջ զետեղուած ռումբով: Թէ՞ հոս ալ պէտք է յիշել Ֆրիկը:

Նախարար-գործատէր պանդոկատիրոջ կարելի է, ինչպէս նախագահը ըրած է, երկրին շինարարութեան սատարողի անկիւնէն ալ մօտենալ. նման փարթամ ներդրում Հայաստանի զբօսաշրջութեան ոլորտին, հպարտութիւն առթող բան մը պէտք է ունենայ, անշուշտ եթէ ամէն տարի 1700-ամեակ մը եւ այդ պատճառով Հայաստանի ճամբան բռնող լեցուն գըրպաններ ճարուին: Թերեւս աւելորդ չէ զովելի բան մը տեսնել անգործներու բանակէն հարիւրեակի մը գեղչով որ կարելի պիտի ըլլայ, կամ արդէն եղած է, պանդոկին համար նախատեսուած անձնակազմին հաշւով:

Նման անկիւններէ, ուրախացնող, մըխիթարող երեւոյթ իսկ կարելի է նկատել նախաձեռնութիւնը. գրեթէ, գրեթէ բոյն շինող ծիծեռնակին նմանութեամբ: Թերեւս կը յայտնուի նոր օրերու Աղայեան մըն ալ որ գրէ օրինակ.

«Նախարարը պանդոկ շինում
եւ շինում է եւ խնդում.
սոված, տկլոր ժողովուրդին
հնդաստղանից ո՞նց է սազում»...:

Մէկդի ձգած անդրադարձին լուրջն ու կատակը, մարդ կը վերադառնայ այն համոզումին թէ իսկապէս աւելորդ է նման առիթներով «ի՞նչպէս»ներ, «ինչո՞ւ»ներ ձեւակերպել. անոնք դատապարտուած են անպատասխան մնալու այնքան ատեն որ Հայաստանի իրականութիւնը կրնայ առանց դժուարութեան մարսել պետական եկամուտներու նախկին երկու նախարարներու այնքա՛ն ներհակ ճակատագիրները. անոնցմէ մէկը կը յանգի չքեղաշուք պանդոկի մը տիրութեան, միւսը՝ ռումբով մը սպաննուելու վերջաբանին: Մանաւանդ, որ ոչ ոք կ'ակնկալէ ոճիրին լուսաբանումը:

ԱՐՓԻ ԹՈԹՈՑԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՅՔՐՈՍՈՖԹ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆԸ ԿԸ ԿԵԴՐՈՆԱՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հաղորդակցութեան ճարտարարուեստի հսկաներէն՝ Պիլ Կէյթս'ի Մայքրօֆթ ընկերութեան հրատարակած համայնագիտարանի 2002 տարուան համարը լոյս տեսաւ Սեպտեմբեր ամսուան մէջ. աշխարհի ամենատարածուածը նկատուող այս համայնագիտարանը առաջին անգամ ըլլալով տեղ տուած է հայկական ցեղասպանութեան նուիրուած յօդուածի մը: Փրոֆ. Վահագն Տատրեանի կողմէ շարադրուած այս գրութիւնը ունի վեց ստորաբաժանումներ ուր մեթոտիկ կերպով կը նկարագրուին պատմական յեղաշրջումի գլխաւոր փուլերը, որոնք յանգեցան Ա. աշխարհամարտի հայկական ցեղասպանութեան: Ատոնցմէ են Ապտիւլ Համիտի շրջանէն դէպի Իթթիհատական վարչակարգը երկարող տասնամեակները, որոնց հոլովոյթով հայ ազգայնականութեան ծրարձակումը տեւական բախումի մէջ գտնուեցաւ Օսմանեան-Թուրք բռնապետութեան իշխանութիւններուն հետ: 1900-ի Ատանայի ջարդը կանխանշան մըն էր, որ երիտասարդ Թուրքերը ոչ մէկ կերպով չէին կրցած իւրացնել եւ սեփականացնել իսկական իմաստը Ֆրանսական յեղափոխութեան՝ եղբայրութեան, հաւասարութեան եւ ազատութեան կարգախօսներուն, որոնց անունով անոնք հրապարակ իջած էին տապալելու համար Սուլթան Ապտիւլ Համիտի բռնապետութիւնը: Առաջին Պալքանեան պատերազմի ընթացքին իրենց կրած ջախջախիչ զինուորական պարտութիւնները իրենց համար յոյժ նուաստացուցիչ էին քանի որ յաղթականները իրենց նախկին հպատակ ազգերն էին, այսինքն, Սերպերը, Յոյները եւ Պուլկարները, որոնք արհամարհանքով «սորուկներ» կոչուած եւ ստորադասուած էին: Բայց ալ աւելի չըմեցուցիչ էին հողային, նիւթական եւ տնտեսական կորուստները: Թուրքիա Եւրոպայէն գրեթէ ամբողջութեամբ դուրս շպրտուած էր եւ հայկական բարենորոգումներու վերարծարծումը 1912 – 1913 թուականներուն, որ յանգեցաւ 1914 Փետրուարի նոր համաձայնագրի մը, Թուրքերու համար ահազանգի մը նշանակութիւնը ստացաւ: Իրենց համար բարենորոգումները ահաւոր ազդանշան մը եղան այն իմաստով որ, Պալքաններուն պէս, Արեւելեան Թուրքիան ալ ուշ կամ կանուխ կորուստի պիտի ենթարկուէր ի շահ Հայերուն: Իրենց բոլոր կուտակուած մաղձը առաջին առիթով պիտի թափուէր Թրքահայերուն վրայ եւ Ա. աշխարհամարտը ընծայեց այդ չարաբաստիկ առիթը:

Ցեղասպանութեան Մեծ Ոճիրին վերլուծման մէջ փրոֆ. Տատրեան կը զատորոշէ չորս հանգրուաններ որոնց միջոցաւ ոճիրը իր սկզբնական շրջանէն զարգանալով սաստկացաւ եւ ի վերջոյ իր լրումին հասաւ: Շեղելով ցարդ ամրացած այն տեսադաշտէն, ուր Ապրիլ 24-ի ձերբակալութիւնները կը նկատուին ցեղասպանութեան ծրագրի իրականացման սկիզբը, Տատրեան ութ ամիս ետ երթալով այդ սկիզբը կը զետեղէ Օգոստոս 9, 1914 թուականին վրայ երբ Իթթիհատական իշխանութիւնները Գերմանիոյ հետ գաղտնի քաղաքական եւ զինուորական դաշինք մը ստորագրելէ անմիջապէս յետոյ 20 – 45 տարեկանները զինուորագրութեան հրաւիրեցին Ընդհանուր Զօրակոչ յայտարարելով: Ասով է, որ կը սկսի Թրքահայ ժողովուրդին գլխատումը: Շատ քիչ հայ զինուորներ կրցան խուսափիլ յետագայ կազմակերպուած նախճիրներէն, որոնց զոհ գացին հայ զինուորներու մեծ մասը, զինաթափ ըլլալէ յետոյ:

Երկրորդ հանգրուանը կը զուգադիպի Ապրիլ 24-ի լայնատարած ձերբակալութիւններուն, որոնք Պոլսէն անդին, տեղի ունեցան կայսրութեան բոլոր մեծ քաղաքներուն, յատկապէս Արեւելեան նահանգներուն մէջ, ընդգրկելով, ըստ Թրքական տուեալներու, ընդամէնը 2345 հայ մտաւորականներ, քաղաքական գործիչներ, գրողներ եւ բանաստեղծներ, ուսուցիչներ եւ կղերականներ:

Երրորդ հանգրուանը կը վերաբերի հայ ժողովուրդի զանգուածային բռնագաղթին, որ սկսաւ արեւելեան նահանգներէն եւ հետզհետէ կլանեց արեւմտեան, հարաւ-արեւմտեան եւ հիւսիս-արեւմտեան նահանգներու հայ բնակչութիւնը, ներառեալ Ատրիանապոլիսը (Էտիրնէ): Չորրորդ հանգրուանը կ'առընչուի Սուրիոյ անապատներուն մէջ տեղի ունեցող այն ահաւոր սպանդներուն, որոնց 1916-ի ամրան զոհ գացին քանի մը հարիւր հազար Հայեր, այն խլեակները, որոնք հրաշքով մը դեռ ողջ մնացած էին, տառապալից տեղահանութեան արհաւիրքներէն անցնելէ յետոյ: Այս հանգրուանը փրոֆ. Տատրեան կը դասաւորէ իբրեւ երկրորդ եւ մանրանկարային ցեղասպանութիւն մը (մինի ժէնոսիտ), բաղդատմամբ 1915-ի նախընթաց Մեծ սպանդին:

Այս բացատրականէն յետոյ Տոքթոր Տատրեան շեշտը կը դնէ այն օրհասական պայմաններուն վրայ, որով հայ ժողովուրդը բնաջնջումի եզակի մեթոտներով կոտորուեցաւ: Բացատրելէ յետոյ, որ Թուրք իշխանաւորները մարդկային պատմութեան մէջ աննախընթաց հանդիսացող որոշումով մը կայսրութեան բանտերէն ազատ արձակեցին հազարաւոր արիւնարբու ոճրագործներ, ան կը թուէ երեք գլխաւոր ոճրակերպեր, որոնք կիրարկուեցան սպանդի համար. նախ, տարրական մահասփիւռ գործիքներ ինչպէս՝ սուր, մուրճ, մանգաղ, դաշոյն, կացին եւ նոյնիսկ սղոց. յետոյ, ծովամոյն ընելու եղանակը որով տասնեակ հազարաւոր Հայեր Սեւ ծովի մէջ, ինչպէս եւ Եփրատ գետի զանազան ճիւղերուն մէջ դաժան պայմաններով խեղդամահ եղան. վերջապէս կոտորածի թերեւս ամենավայրագ եղանակը՝ ողջ ողջ այրել: Արդարեւ Խարբերդ եւ Հալէպի նահանգի ենթակայ անապատներուն մէջ, բայց մանաւորաբար Մուշ եւ Մշոյ դաշտի 90-ի մօտ գիւղերու բնակչութիւնը, 70-80.000 Հայեր, գոմերու, մարագներու եւ յատկապէս պատրաստուած հսկայ փոսերու մէջ հրկիզուելով սպաննուեցան:

Անցնելով հայ զոհերու ընդհանուր թիւի հարցին, փրոֆ. Տատրեան անդրադառնալէ յետոյ, որ յետ-պատերազմեան Թուրք Ներքին գործոց նախարար մը 1919 Մարտին ընդունեց, որ 800.000 Հայեր սպաննուեցան միայն բռնագաղթի կապակցութեամբ, եւ ըստ իրեն, Տատրեանի, 100.000-ի մօտ երախաներ եւ կիներ ալ բռնի կերպով մահմետական դարձան, ան կու տայ 1,2 միլիոնի թիւ մը, ընդհանուր 1,8 միլիոն հայ բնակչութենէ մը, որմէ շուրջ 250.000 մարդիկ կրցան փախչիլ եւ ապաստան գտնել Կովկասի մէջ:

Վերջապէս անդրադառնալով յետ-պատերազմեան քրէական պատերազմական ատեաններու դատաստաններուն եւ առհասարակ պատժամիջոցներով արդարութիւն կիրարկելու վտիտ փորձերուն, Տատրեան կը հաստատէ, որ այս բոլոր փորձերը գրեթէ վիժեցան: Ո՛չ սուլթանական, ո՛չ յետագայ քէմալական կառավարութիւնը, ոչ ալ յաղթական բայց խոստամնադրուժ դաշնակիցները լրջօրէն արդարութիւն եւ պատիժ որոնեցին, այդպէսով անխուսափելիօրէն քաջալերելով չարայարութիւնը այն միւս ցեղասպանութիւններուն, որոնք անխափան կերպով գործադրուեցան յետագայ տասնամեակներուն:

ԻՐԱԶԵԿ

ՇԱՔԱՐԱՒՏԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ԼՐՋՕՐԷՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՄԱՐԴՈՑ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

ԾԻՆԱՅԻՆ ՆՈՐ ԴԱՐՄԱՆՈՒՄՆԵՐ

Արեան շաքար – ինսուլին շատ բարդ կապը բազմաթիւ առիթներ կ'ընծայէ դարմանումներու ճամբով միջամտելու: Բնականաբար ինսուլինը կ'օգտագործուի: Տարիներ ամբողջ տրամադրելի միակ ինսուլինը կ'առնուէր կովերէ կամ խոզերէ, սակայն ներկայիս մարդկային ինսուլին կ'արտադրուի ուղղակի ծինային ճարտարագիտութեան ճամբով:

Դեղաշինութեան ընկերութիւններ աւելի եւս անդին երթալով՝ կ'արտադրեն նոր եւ բարելաւուած ինսուլին մը, որ մարմնին մէջ աւելի երկար կը դիմանայ կամ աւելի դիւրաւ կը ներծծուի բջիջներէ ներս: Մինչեւ վերջերս ինսուլինը պէտք է մորթին տակ սրսկուէր, կարգ մը պարագաներու՝ օրական մինչեւ 5-էն 7 անգամ, ուտեստեղէնի սպառումի, էներժիի արտադրութեան եւ ինսուլինի համեմատութեան կապուած բարդ հաշիւներէ ետք՝ արգիլելու համար, որ արեան շաքարը շատ բարձրանայ կամ շատ ցած համեմատութիւններու իջնէ:

Ներկայիս կարելի է կրել ինսուլինի յատուկ սարք մը եւ զայն ծրագրել այնպիսի ձեւով, որ անիկա որոշ համեմատութեամբ ինսուլին հայթայթէ անհրաժեշտ պարագային: Մօտ ատենէն նման սարք մը կարելի պիտի ըլլայ մարմնին մէջ զետեղել:

Ինչ կը վերաբերի ծինային դարմանումին, ծինաբաններ վերջերս կը յայտնէին, թէ մուկերուն ծիներ ներարկած են, որպէսզի անոնք մարդկային ինսուլին արտադրեն: Մուկերը, առանց շաքարախտ դիմագրաւելու, շարունակած են ապրիլ, նոյնիսկ երբ քանդուած են անոնց փանքրէասի բջիջները, որոնք բնականաբար ինսուլին կ'արտադրեն: Գանատայի Ալպըրթա համալսարանի հետազօտողներու տեղեկագիրը երկու ամսուան մէջ երկրորդն էր, որ կ'ըսէր, թէ ծինային ճարտարագիտութիւնը կարելի է օգտագործել դարմանելու կամ նոյնիսկ բուժելու համար շաքարախտը: Բնականաբար հիւանդներու մօտ դարմանումի

ձեռնարկել առաջ, տակաւին շատ երկար փորձարկումներ պէտք է կատարել:

ՄՆՆԴԱԿԱՆՈՆ ԵՒ ՄԱՐԶԱՆՔ ՇԱՔԱՐԱԽՏԸ ԿԸ ԿԱՆԽԱՐԳԻԼԵՆ

Մասնագէտներ կ'ըսեն, թէ շատ ապահով միջոց մը կայ արեան շաքարը հակշռի տակ պահելու եւ շաքարախտի կապուած բարդութիւնները նուազեցնելու, անհրաժեշտ է առողջ սնդականոն մը ունենալ: Հետզհետէ յաւելեալ փաստեր կը գտնուին նաեւ, թէ մարզանքի պակասը կրնայ շաքարախտի պատճառներէն ըլլալ:

Նոյեմբերին կատարուած Ֆինլանտական ուսումնասիրութիւն մը աւելի հեռու երթալով կ'ըսէ թէ ցած համեմատութեամբ իւղ պարունակող եւ բարձր համեմատութեամբ «ֆիպր» ընդգրկող սննդականոն մը եւ մարզանքը կրնան հասուն տարիքին յայտնուող շաքարախտի շուրջ 60 առ հարիւր պարագաները կանխարգիլել:

Անիկա կ'ըսէ նաեւ, որ նոյն այդ փոփոխութիւնները կը նուազեցնեն նաեւ արեան գերճնշումը եւ արեան մէջ իւղի համեմատութիւնները, ինչ որ կարեւոր է սրտի եւ արեան շրջագայութեան հիւանդութեանց կանխարգիլման համար:

Մէրիլընտ համալսարանի մասնագէտներէն Տոքթ. Ալըն Շուլտինըր, որ Ֆենսիլվանիոյ մէջ էյմիշ ընտանիքները ուսումնասիրած է, կ'ըսէ թէ անոնց մէջ շաքարախտի պարագաները Միացեալ – Նահանգներու ազխտակամորթներու պարագաներէն 50 առ հարիւր նուազ են, հակառակ անոր որ անոնց սննդականոնը աւելի առողջապահական չէ եւ հասուն տարիքի մարդիկ կրնան գէր ըլլալ: Սակայն, անոնք տարբեր են, որովհետեւ ինքնաշարժ չունին, կը քալեն կամ «պքութըր»ներով եւ «ռոլըր սքէյթ»ներով կը պտըտին: Նկատի ունենալով, որ հեռաձայն չունին, անոնք երկար ժամանակ կ'անցընեն իրարու մօտ երթալով՝ պարզապէս խօսելու համար: Իսկ հեռատեսիլի բացակայութեան պատճառով «ընդնաւ կարելի չէ սոնքութենէ տառապող էյմիշ երախաներ տեսնել», կ'ըսէ Շուլտինըր:

Բնական է, որ հազուագիւտ են նման կեանք ապրիլ ուզող մարդիկ, սակայն թերեւս կարելի է 18-րդ դարու ապրելաձեւին եւ արդի կեանքին միջեւ միջին ապրելաձեւ մը գտնել, որպէսզի շաքարով արեան թունաւորումը կանխարգիլուի:

ԼԵԱՐԴԸ ԳՈՐԾՕՆ ԴԱՐՁՆՈՂ ԱՐԵԱՆ ԲՋԻՋՆԵՐ

Մարդոց լեարդը կրնայ դարձեալ գործօն դառնալ արեան մէջ գտնուող «սթէմ» բջիջներու միջոցով: Այս յայտնաբերումը կը նշանակէ, թէ հիւանդներ կրնան իրենց սեփական լեարդի պատուաստները աճեցնել ոսկորի ծուծ գործածելով, կ'ըսեն գիտնականներ: Անոնք գտած են, թէ հիւանդներ, որոնք ոսկորի ծուծի պատուաստումներ ստացած են, իրենց լեարդին կարգ մը բջիջները օգտագործած են:

Ասիկա յաւելեալ փաստ մըն է թէ «սթէմ» բջիջները, որոնք ծանօթ են իբրեւ «գլխաւոր բջիջներ», որովհետեւ կրնան բազմաթիւ տարբեր տեսակներու բջիջներ արտադրել, կրնան օր մը մըղուիլ՝ ստեղծելու կարիքի համաձայն պատուաստումի գործարաններ:

Միայն Միացեալ-Նահանգներու մէջ, շուրջ 68 հազար հոգի կը սպասէ գործարաններու եւ գլխաւորաբար լեարդի պատուաստումներու: Օրական միջին հաշուով անոնցմէ 10 հոգի կը մեռնի:

Լեարդը գործելէ կը դադրի զանազան պատճառներով, ալքոլամոլութիւն, հեփաթիթի պարագաներ եւ այլ հարցեր: Երբեմն դարմանումներով լեարդը կրնայ ինքզինք նորոգել: Նիւ-Եորք համալսարանի բժշկագիտութեան դպրոցին մասնագէտներէն Տոքթ. Նիլ Թէյզ կ'ըսէ, որ լեարդը ինքզինք վերակենդանացնելու անհաւատալի կարողութիւն ունի՝ իր սեփական բջիջները օգտագործելով:

Հետեւաբար անոր խմբակը որոշած է փնտռել այլ բջիջներ, որոնք կրնան լեարդին այս գործընթացին օժանդակել:

Անոնք քննած են տղամարդոցմէ ոսկրային ծուծի պատուաստում ստացած երկու կիներու լեարդները:

Ոսկորի ծուծը հարուստ է «սթէմ» բջիջներով եւ յաճախ կ'օգտագործուի օգնելու համար արեան քաղցկեղէ տառապող հիւանդներու: Անոնց դարմանումը կը կայանայ ոսկորին ծուծին քանդումին եւ անոր առողջ ծուծով փոխարինումին մէջ:

Տարբեր ուսումնասիրութիւններ սկսած են ցոյց տալ, թէ գէթ կարգ մը «սթէմ» բջիջներ կարողութիւնը ունին կարգ մը պայմաններու տակ, ո՛չ միայն արեան բջիջներ արտադրելու, այլ նաեւ՝ այլ գործարաններու բջիջներ:

Նկատի ունենալով, որ միայն տղամարդիկ «իկրէք» քրոմոզոմը ունին, Թէյզի խմբակը լեարդին մէջ փնտռած է բջիջներ, որոնք այդ քրոմոզոմը կը կրեն եւ զանոնք գտած է:

Գիտնականներ տակաւին չեն գիտեր, թէ ինչո՛ւ այդ բջիջները կիներուն լեարդներուն մէջ յայտնուած են, նկատի ունենալով, որ անոնց լեարդը յայտնապէս առողջ եղած է:

«Կը թուի, թէ լեարդին վերակենդանացումը եւ դարձեալ առողջ բջիջներով օժտուիլը մաս կը կազմէ իրարու կապուած շատ բարդ գործընթացի մը», կ'ըսէ Թէյզ: Անիկա միջոցը ունի այդ բջիջները «ներս կանչելու», եւ եթէ կարելի ըլլայ գտնել այդ միջոցը, հնարաւոր պիտի ըլլայ նաեւ լեարդի հարց դիմագրաւող մարդոց հայթայթել զայն՝ օգնելու համար անոնց մարմնին, որ ինքզինք նորոգէ:

Գիտնականը կ'ըսէ որ այլ ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, որ ուղեղը, կմախքը եւ թոքերը նոյնպէս այլ տեղերէ «սթէմ» բջիջներ «կը կանչեն»: Մասնագէտներ այլ ձեւերու մասին կը մտածեն՝ «սթէմ» բջիջներու օգտագործումով լեարդի հիւանդութիւն դարմանելու համար:

Կարելի է արիւնէն «սթէմ» բջիջներ առնել, զանոնք մղել, որ հեփաթոսիթի (լեարդի բջիջ) վերածուին, ապա զանոնք դարձեալ հիւանդին սրսկել, որպէսզի ան լեարդի բաւարար գործօն բջիջներ ունենայ:

ՌՈՒՍԵՐԸ ԱՆՑԵԱԼԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՆ ԿԸ ԴԻՄԵՆ

Խորհ. Միութեան քայքայումէն ի վեր Ռուսաստանի դիմագրաւած քաղաքական եւ տնտեսական տագնապներուն եւ անոր նոր ձեռք բերած ազատութիւններուն կողքին, հին օրերու հիւանդութիւններ վերադարձած են երկրին մէջ:

Թոքախտը, որ 1991-էն առաջ գրեթէ հակակշռի տակ առնուած էր, համաճարակի մը վերածուած է Խորհ. Միութեան քայքայումէն ի վեր:

Ըստ կարգ մը մասնագէտներու, անիկա դեղերու հանդէպ դիմադրողականութիւն ցուցաբերող թոքախտի տեսակի աշխարհի մեծագոյն համաճարակն է: Հեփաթիթի, սիֆիլիսի եւ ՍԻՏԱ-յի պարագաները նոյնպէս մեծ աճ արձանագրած են: 1990-ական թուականներու կէսերուն երկիրը հարուած ստացած էր կեղծմաշկի համաճարակի մը պատճառով:

Իսկ աւելի փոքր, շրջանային տարողութեամբ մալարիայի, փոլիոյի, թոքատապի, կրիփի համաճարակներու մասին տեղեկութիւններ գրեթէ առօրեայ հերթականութեամբ կը հաղորդուին:

Առողջապահութեան մասնագէտներ Ռուսաստանի բանտային դրութիւնը կը նկատեն այնպիսի վայր մը, որ անդադար երկրին թոքախտ «կը հայթայթէ»: Ռուսական ծագումով թոքախտի պարագաներ հետզհետէ աւելի կը յայտնաբերուին Պալթեան երկիրներու մէջ, ինչպէս՝ Գերմանիա եւ Իսրայէլ:

Պետական առողջապահական ծրագիրներ իրենց շատ փոքր պիւտճէներով անզօր են պայքարելու թափ ստացող հիւանդութիւններու դէմ, որոնց կողքին բնակչութիւնը կը դիմագրաւէ աղքատութեան, ընկճուածութեան, ալքոլամոլութեան, գերխճողումի (տուներու, բանտերու մէջ) եւ սրսկումներով թմրեցուցիչի գործածութեան մեծ թիւով պարագաներ:

Մոսկուայէն 500 քմ. հարաւ գտնուող

[illegible]

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՀԱՄԵՐԳԸ

«Միջերկրականի հոգեւոր երգերու փառատօն»ի ծիրէն ներս Սահակ-Մեսրոպ երգչախումբը, ղեկավարութեամբ Խ. Երլմազեանի, համերգ մը կու տայ, Հինգշաբթի, Հոկտեմբեր 19, ժամը 20.45-ին Տինեը քաղաքի հսկայ Նոթր-Տամ Տաճարին մէջ, ուր ան կը մեկնաբանէ Մեսրոպ Մաշտոցէ, Գրիգոր Նարեկացիէ, Կոմիտասէ եւ Եկմալեանէ միաձայն եւ բազմաձայն շարականներ, մեղեդիներ եւ երգեր: Սոյն համերգին իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Եգիպտոսէն Ղպտիներու Եկեղեցւոյ արհեստավարժ երգչախումբը:

LIVRES REÇUS

Kariné
La francophone

Jean-Pierre BADONNEL

L'Harmattan, Paris 2001

Վորոնէժ ճարտարարուեստականացած քաղաքը կը ցոլացնէ երկրին ընդհանուր վիճակը, ինչ կը վերաբերի օրինակ, թոքախտին: Ինչպէս Ռուսաստանի մէջ այլ վայրեր, թոքախտաւորներու թիւը գրեթէ կրկնապատկուած է 1993-էն ի վեր, եւ տեղւոյն համաճարակին աղբիւրը մեծ համեմատութեամբ գտնուած բանտն է: Քաղաքին այն բնակիչները, որոնք թոքախտէ կը տառապին, եւ որոնց համար անքակտելի է դեղ ապահովել, կը դիմեն անցեալի միջոցներու:

Բժիշկներ հիւանդներու փորին մէջ ասեղով մը օդ կը սրսկեն: Ցաւ պատճառող նախնական այս միջոցը՝ թոքախտի դէմ պայքարելու համար, տասնամեակներէ ի վեր չի գործածուիր Արեւմուտքի մէջ: Բժիշկներ յաճախ այս միջոցին կը դիմեն պայքարելու համար թոքախտի տեսակներու դէմ, որոնք դիմադրականութիւն կը ցուցաբերեն սովորաբար գործածուող դեղերու դէմ:

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ»

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐՇԱՒԻՐ ԵԱՍԵԱՆ

Օրիորդներէն մին որ դուռը կը գոցէր, երկու հիւրերը ճամբու դրաւ եւ յետոյ աճապարանքով ելաւ վեր ու դրան ետեւէն ականջ դրաւ ներսի խօսակցութեան:

Այդ երկու Թուրքերուն գալուստը չափազանց շահագրգռած էր զինքը: Մինչեւ այն ատեն չէր գիտեր, թէ իրենց երիտասարդ վարձակալը ի՛նչ գործ կամ պաշտօն ունէր: Երեք քոյրերը այնպէս կը կարծէին, թէ Արշաւիր առեւտրական գործով կը զբաղէր: Բայց իր վերադարձին առթիւ յանկարծ օսմանական բարձր պաշտօնեայի մը այցելութիւնը բժիշկի մը ընկերակցութեամբ ծանր կասկածներ ներշնչած էր իրենց Արշաւիրի ինքնութեան մասին: Եւ իրենցմէ մին լուսաբանուելու համար որոշած էր ամէն միջոցներուն դիմել եւ չէր վարանած գալ դրան ետեւէն մտիկ ընելու միրաւորին սենեակին մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը:

Երբ Արշաւիր եւ Ճեմալ պէյ առանձին մնացին, բաւական ժամանակ լռութիւն տիրեց սենեակին մէջ: Ի վերջոյ, դրան ետեւէն, օրիորդը լսեց սա խօսքերը, զոր Թուրքը կ'ուղղէր հայ երիտասարդին.

– Եա, Արշաւիր էֆէնտի, փոլիսճիլիին սօնու պու տուր...

Այս խօսքերը յայտնութիւն մը եղան օրիորդին համար:

Ասպէս ուրեմն, իրենց վարձակալը օսմանական պաշտօնեայ մը, հաւանօրէն լրտես մ'էր:

Հիմա կը բացատրուէր, թէ ինչու Արշաւիր կը վախնար «թշնամիներէ»:

Ուրեմն, այսպէս, իրենք անգիտակցաբար, իրենց տան մէջ հիւրընկալած էին դաւաճան մը: Այս մտածումը չափազանց կը տագնապեցունէր հէգ աղջիկը:

«Ոտքի ելլելուն պէս պէտք է զինքը վռնտել տունէն», – կը խորհէր:

Եւ սակայն այդ բանը ընելու քաջութիւնը պիտի ունենայի՞ն:

Այդ մատնիչ լրտեսը կրնար իրենց գլուխը փորձանք մը բերել սուտ զրպարտութիւններով:

«Իցի՛ւ թէ հարուածը գլխուն զար ու սատկէր», – կ'ըսէր ինքնին:

Ցետոյ կրկին մօտեցաւ դրան եւ սկսաւ մտիկ ընել:

Արշաւիր այժմ մանրամասնօրէն կը պատմէր իր վրայ կատարուած «մահափորձ»ին պարագաները:

Երբ պատմութիւնը աւարտեց, Ճեմալ պէյ հարցուց.

– Կը կարծե՞ս, որ այս գործին մէջ Տրդատ եւ իր ընկերները բաժին ունենան:

– Բնականաբար, - պատասխանեց Արշաւիր, - արդէն կասկած չի կայ, թէ մահափորձը անոնց ձեռքով պատրաստուած է:

– Պէտք է, որ Արշակը տեսնենք եւ այս մասին իր կարծիքն ալ առնենք:

– Ըստ իս՝ պէտք է անմիջապէս ձերբակալել տալ Տրդատը:

– Այդ դիւրին է, բայց մենք կ'ուզենք միւս ընկերներն ալ երեւան հանել ու ամէնքը միասին ձերբակալել: Արշակ ինծի ըսաւ, որ այդ բանը կարելի պիտի ըլլայ մէկ – երկու օրէն:

– Ես նորէն կը կրկնեմ, որ անմիջապէս Տրդատը ձերբակալելու է, – պնդեց Արշաւիր, – կրնայ ըլլալ, որ ի վերջոյ նշմարէ, թէ Արշակ զինքը կը խաբէ կոր, ու ինքն ալ անյայտանայ:

– Այդ մասին Արշակ շատ ապահով է, - պատասխանեց Թուրքը, - եւ բնաւ այդպիսի երկիւղ մը չունի:

– Վերջին անգամ ե՞րբ տեսած էր Արշակ Տրդատը:

– Երէկ առտու, - պատասխանեց Ճեմալ պէյ, - եւ իրարու հետ համաձայնած են, որ վաղը իր միւս երկու ընկերներով գայ ու միամին բանակցին:

– Ուրեմն մինչեւ վաղը կրնանք սպասել, բայց շատ իս լաւագոյն է, որ վաղը այդ երեք անձերը անմիջապէս ձերբակալել տաք:

– Ես ալ այնպէս կը խորհիմ, թէեւ Արշակ խորհուրդ կու տայ քիչ մը ժամանակ եւս սպասելու:

Օրիորդը, որ դրան ետեւէն կը լսէր բոլոր այս խօսքերը, բուռն յուզումի մը մատնուած էր, որովհետեւ կը զգար, թէ այդ երու մարդիկը պարզապէս կարգ մը անմեղ Հայերու դէմ կը դաւաճանէին նոյն միջոցին:

Եւ իրեն այնպէս կը թուէր, թէ ինքն ալ կերպով մը մեղսակից էր այդ դաւաճանութեան:

«Ա՛խ, – կը մտածէր, - եթէ այդ Տրդատը ճանչնայի եւ կարենայի իրեն իմացնել սպառնացող վտանգը»:

Բայց ափսո՛ս, որ իր ծանօթներուն մէջ բնաւ չէր յիշեր այդ անունով մէկը, գտնուէր ալ, դարձեալ չէր հետեւեր, թէ այդ Տրդատը խնդրոյ նիւթ եղող անձն է:

Այս մտածումներուն մատնուած էր, երբ լսեց, թէ տան դրան զանգակը կը հնչեցնեն:

Իր երկու քոյրերը արդէն իրենց սենեակը քաշուած էին, պառկելու համար:

Օրիորդը ինքը վար վազեց դուռը բանալու:

Եկողը անծանօթ մըն էր իրեն համար:

– Ո՞վ կ'ուզէք, - հարցուց՝ առանց դուռը բոլորովին բանալու:

– Արշաւիր էֆէնտին, - պատասխանեց միւսը:

– Պառկած է:

– Գիտեմ, որ պառկած է, քանի որ այս իրիկուն տունէն դուրս ելած միջոցին ոտքէն վիրաւորուեցաւ, բայց կ'ուզեմ զինքը տեսնել անպատճառ:

– Քովը հիւր կայ:

– Ճեմալ պէյը. այն ալ գիտեմ, բայց աւելի լաւ: Արդէն զայն ալ անպատճառ տեսնել կ'ուզէի:

– Բայց դուք ո՞վ էք, - հարցուց աղջիկը:

– Իրենց ծանօթն ու բարեկամն եմ, - ըսաւ անծանօթը, - դուռը բացէք ու թող տուէք, որ ներս մտնեմ:

(Շար. 74)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԷՓԻՆԷ. – Տէր եւ Տիկին Ռուլան Մարկոսեան 1000 Ֆր. առ ի գնահատութիւն տարուած աշխատանքին:

***

ԳԱՆՆ. – Տէր եւ Տիկին Վ. Ճազմատարեան 600 Ֆր.:

***

ՍԷՆ-ԿՌԱՄԻԷՆ.– Տէր և Տիկին Տ. Գալէզեան 600 Ֆր.:

***

ՍԷՆ-ԳԼՈՒ.– Օր. Ժագլին Գանարեան 300 Ֆր.:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի Ա. Թաղէոսեան մասնաճիւղի ժողովը Շաբաթ, Հոկտեմբեր 6, ժամը 14.30–ին, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ

17, rue Bleue — 75009 PARIS

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Vernissage
le Jeudi 11 octobre
à partir de 18 h 30

Exposition du 11 au 20 octobre tous les jours sauf le mardi et le dimanche

Demande d'emploi

Dame arménienne recherche emploi. Garde personne âgée ou couture ou emploi maison.

Etudiera toutes propositions.
Tél. : 01 43 75 49 69

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱԿԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՓՈՓՈԽ ԵՆ 1999 ՆՈՅԵՄԲԵՐ 1-ԷՆ Ի ՎԵՐ ՀԱԿԱՌԱԿ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԾԱՆՐ ԲԵՌԱՆ, ՅԱՒԵԼՈՒՄ ՊԻՏԻ ԿՐԵՆ ՆՈՅԵՄԲԵՐ 1-ԷՆ ՍԿՍԵԱԼ ԻԲՐԵՒ ՀԵՏԵՒԱՆՔ ԳԼԽԱՒՈՐԱԲԱՐ ԹՂԹԱՏԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՍԱԿԵՐՈՒ 50% ԲԱՐՁՐԱՑՄԱՆ 4 ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ԹՈՒՂԹԻ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՅԱՒԵԼՄԱՆ ԵՒ ԴԺԲԱԽՏԱԲԱՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՆՈՒԱԶՄԱՆ:

76 տարիէ ի վեր «Յառաջ»ի միակ եկամուտը կ'ապահովեն բաժանորդագրութիւնները եւ ծանուցումները որոնց մեծ մասը առեւտրական բնոյթ ալ չունին: Նաեւ բարգաւաճման փոնտին եղած ինքնաբուխ նուէրները: Այս պայմաններուն տակ օրէ օր կը ծանրանայ վարչութեան բեռը եւ կ'ակնկալենք մեր բաժանորդներէն որ ա՛լ աւելի չդժուարացնեն մեր գործը:

Խորին շնորհակալութիւն մեր այն –մեծամասնութիւն կազմող, բարեբախտաբար– բաժանորդներուն, որոնց կանխիկ եւ կանոնաւոր վճարումներուն շնորհիւ կարելի կը դառնայ թերթին կանոնաւոր հրատարակութիւնը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ»Ի

Rentrée des classes

L'Ecole Hebdomadaire de Langue et de Culture Arméniennes **«KHATCHADOUR ABOVIAN»** de Marseille est heureuse de vous annoncer que **la RENTREE SCOLAIRE 2001-2002** aura lieu **le MERCREDI 10 OCTOBRE à 10 heures**

Dans la Salle Ardzrouni TCHERPACHIAN du Centre Culturel SAHAK-MESROP 339, avenue du Prado, 13008 Marseille **Tous les mercredis de 10h à 16h** des cours de langue et de culture arméniennes sont donnés ainsi que des cours de danse, de chant et d'éducation religieuse.

Pour tous renseignements et inscriptions les responsables de l'école tiendront une permanence **le Mercredi 10 octobre de 14h à 17** ou par téléphone au Secrétariat de la Cathédrale : **04 91 77 84 70**

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

LA CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section «Saténig» de Vaux-en-Velin
organise

un Grand Bal

animé par le chanteur MARTEN YORGANTZ ET SON ORCHESTRE

le Samedi 6 octobre à partir de 20 h au Centre Culturel **«Charlie Chaplin»** Place de la Nation à Vaulx-en-Velin (parking surveillé)

Bar et Buffet de spécialités arméniennes

— Entrée : 100 F —

Réservations : 04 78 80 22 53 / 04 72 04 80 90 ou 06 61 35 36 61

— ● —

Journée de détente

La Croix Bleue d'Issy-les-Moulineaux vous propose une **Journée de Détente le Dimanche 14 OCTOBRE.**

La journée commencera par la visite du JARDIN DES SERRES d'AUTEUIL. Rendez-vous à la Maison de la Culture Arménienne, 45, rue de la Défense à Issy-les-Moulineaux, à partir de 9h15.

Le car partira à **9h30** et fera un arrêt à **9h45** devant l'Eglise apostolique arménienne, 6, avenue Bourgain.

Après la visite, le repas traditionnel sera servi au Châlet de Vaupéreux à BIEVRES et sera animé par le chanteur bien connu HOVIG.

Prière de se faire inscrire rapidement auprès des khatchouhies en s'adressant à :

Annick — Tél.: 01 47 36 18 09;
Alice — Tél.: 01 46 42 90 68;
Jacqueline — Tél.: 01 40 95 81 33
Dernier délai d'inscription: 10 Octobre.

— ● —

La Section **«HELEN PUZANT» d'Alfortville** organise UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre GAIDZAG'S et attraction surprise...**

Renseignements et réservations : ☎ **01 43 76 55 89**

— ● —

"NAVASART" *à Asnières*

Pour son action liée à l'enfance, La section d'Asnières de la CBAF vous invite à un **SPECTACLE EXCEPTIONNEL** avec l'Ensemble folklorique **"NAVASART"** de retour d'Arménie. au Grand Théâtre d'Asnières **le Samedi 20 octobre à 20h30**

— Billets : 100 F. et 120 F. en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Հոկտեմբեր 7,

ՓԱՐԻԶԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ

97-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Այս առթիւ, ժամը 10.30–ին Մայր Տաճարին մէջ կը մատուցուի Հանդիսաւոր պատարագ եւ մատաղ կ'օրհնուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի

Ի ժամու պատարագի, Գոհաբանական Մաղթանք կը կատարուի Մայր Եկեղեցւոյ ի կեանս եղող բարերարներուն եւ անոնց ընտանիքներուն արեւշատութեան համար:

Յաւարտ պատարագի Հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցաշէն բարերար Աղեքսանդր Մանթաշեանի, Մանթաշեան ընտանիքի եւ Մայր Տաճարի հանգուցեալ բարերարներուն համար:

Կը հրաւիրուին բոլորը, այդ օր, մասնակցելու Մայր Տաճարի 97–ամեակի այս տօնախմբութեան եւ շարունակելու արտայայտել իրենց հոգածութիւնը իրենց հոգեւոր Տան պայծառութեան հանդէպ:

UGAB — PARIS

VENEZ A LA RENCONTRE DE L'EMOTION...

Conférence musicale avec

YERSO

et JACQUES E. ROUSSELON
le vendredi 5 octobre à 20h30

A l'occasion de la sortie de son nouvel album CD **«ZARTONG»**, **Elise YEGHIGUIAN-OHANNESSIAN** alias **YERSO**, nous fait le grand plaisir de venir nous rendre visite pour une conférence musicale que vous n'êtes pas près d'oublier. Elle sera accompagnée de **Jacques-E. ROUSSELON**, son compositeur-arrangeur-producteur.

Au cours de cette conférence d'un genre nouveau, **YERSO**, nous racontera la genèse de cet album et nous interprètera, pour notre plus grand bonheur, quelques-unes de ses nouvelles chansons.

«ZARTONG», c'est l'album d'une chanteuse pas comme les autres, Yerso, qui a la particularité de chanter une terre, un pays dans lequel elle n'avait jamais mis les pieds jusqu'au tournage d'un documentaire en mai 2000. Ce pays, c'est l'Arménie, que ses parents ont fuie en 1923 avec sa sœur aînée alors âgée de quelques mois.

Nous vous attendons nombreux pour cette nouvelle conférence musicale, qui ne manquera pas de vous émouvoir et à l'issue de laquelle Yerso se fera un plaisir de vous dédicacer son album.

A bientôt pour ce nouveau rendez-vous passionnant.

P.A.F. : 30 F

UGAB
118, rue de Courcelles, 75017 Paris
(Métro : Courcelles)

Téléphone : 01 45 20 03 18
ou 01 42 27 12 26
E-mail : ugabfr@aol.com

SOIREE EXCEPTIONNELLE

organisée par la **CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE**
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

ARMENIAN JAZZ FESTIVAL

le Vendredi 19 et Samedi 20 octobre à 20 heures
le Dimanche 21 octobre à 16 heures

PARIS NEW MORNING
7-9, rue des Petites-Ecuries, 75010 PARIS

- **Vendredi 19**
  Arto Tunçboyaciyan Trio — **Alla Levonyan / Arthur Grigorian**
- **Samedi 20**
  Sophia Domancich Trio avec **Claude Tchamitchian** et **Simon Goubert**
  Armenian Navy Band
- **Dimanche 21**
  Edmond Hosdikian / Gaguik Mouradian
  Didier Malherbe Trio avec **Patrick Meyer** et **Philippe Foch**
  invité **Loy Ehrich**

Réservations :
Fnac, Carrefour, France Billet
Tél.: 0 892 683 622 (2,21 FF/mn), 3615 Fnac (2,21 FF/mn), www.fnac.com
Virgin Megastore, Auchan, Galeries Lafayette, Cultura, BHV
Tél. : 0 825 346 346 (0,99 FF/mn), www.ticketnet.fr
Coopération-Arménie. Tél. : 01 42 36 06 79

Site Web : http://armenianjazzfestival.free.fr
Armenian Jazz Festival: 50, rue E. Marcel, 75002 Paris.
Organisé par l'association Coopération-Arménie au profit de ses actions.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՈՒՐԲԱԹ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 5
VENDREDI
5 OCTOBRE
2001

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO : 6,00 F

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·267 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.267

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՀԱՄԱՅՆՔՐԷՍ»

(Հոկտեմբեր 3 / 4)

ԴՈՒՄԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի Բնական եւ ընկերային գիտութիւններու ակադեմիային հրաւէրով, Հոկտեմբեր 3-ին, Երեւան հասած են Ռուսաստանի Դումայէն երեսփոխաններ՝ Ա. Միտրոֆանով, Ա. Ցիլատով, Ե. Սոկոլ եւ Անդրանիկ Ամասեան։ Անոնք կը մասնակցին Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայի մէջ հայեւռուս գիտնականներու ժողովին։ Պատուիրակութիւնը որ մինչեւ Հոկտեմբեր 8 կը մնայ Հայաստան, հանդիպում կ'ունենայ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի, երեսփոխաններու, կուսակցութեան ներկայացուցիչներու հետ. կ'այցելէ Մատենադարան, Ծիծեռնակաբերդ, Սարդարապատ։

***

ԲԱՑՈՒՄ ՆՈՐՔԻ ՀԱՅՈՐԴԱՑ ՏԱՆ

Գարեգին Բ.ի եւ Ռ. Քոչարեանի մասնակցութեամբ Հոկտեմբեր 3-ին բացումը կատարուած է Մայր Աթոռի ու ՀԲԸՄ.-ի կողմէ նորոգուած Հայորդաց տան որ կը գտնուի Նորքի մէջ։ Հոգեւոր – գեղագիտական կրթութեան այդ կեդրոնը որ Երեւանի մէջ գործող նման երեք հաստատութիւններէն մէկն է, ունի 4 – 17 տարեկան 1200 աշակերտ։ Անոնք կը ծանօթանան յարդարական – կիրառական հայկական արուեստին, կը սորվին պար ու երգեցողութիւն, նոյն ատեն ստանալով հոգեւոր կրթութիւն։ Բացումին ներկայ գտնուած է նաեւ Երեւանի քաղաքապետը։

***

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՊԱՅԱԿՈՅՏԻ ՊԵՏԸ ԳԻՒՄՐԻԻ ՄԷՋ

Ռուսաստանի Սպայակոյտի պետը Ա. Կուաշնին Հոկտ. 3-ին այց մը տուած է Գիւմրի հաստատուած ռուսական զինեալ ուժերու 102-րդ ռազմակայանին։ Քաղաքին մուտքին ան դիմաւորուած է Շիրակի մարզպետ Ֆ. Փիրումեանի, զօր. Մ. Յարութիւնեանի, Գիւմրիի քաղաքապետին եւ Ռուսաստանի ու Հայաստանի բարձրաստիճան զինուորականներու կողմէ։

Ա. Կուաշնին մասնակցած է հակօդային զօրքերու տողանցքին, ապա ծանօթացած կայանի զինուորներուն առօրեային, այցելելով զօրանոցները, ճաշարան, ակումբ, եւլն.։ Զրուցելով սպաներուն հետ, ան խօսած է այն բարդ ու պատասխանատու շրջանին պահպանութեան մասին որ վստահուած է 102-րդ կայանին. «այդ պատասխանատուութիւնը աւելի կարեւորութիւն կը ստանայ այսօր, երբ աշխարհը լեցուած է ահաբեկիչներով, իսկ թմրեցուցիչներու ապօրինի ներածումը դէպի ՀԱՊ-ի երկիրներ, կը սպառնայ ամբողջ բնակչութեան» ըսած է ռուս զօրավարը։

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հոկտեմբեր 4-ի մեր թիւին Ա. էջի կարգ մը թիւերուն վրայ, Բ. սիւնակի խորագիրը թեքնիք պատճառներով խաթարուած էր, պէտք է ըլլար. – «ԹՈՒՐՔԻԱ ԿԱՄԲԱՍՏԱՆԷ ՊԱՊԸ»։

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՖՐԱՆՍԱ ԶՕՐԱՎԻԳ Է, ԲԱՅՑ...

ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀ ԿԸ ՄՆԱՆ

Ժոսփէնի ելոյթը Ազգային Ժողովին առջեւ, Հոկտեմբեր 3-ին, իսկական վիճարկումի մը առիթ տուաւ։ Նախարարապետը կոչ մը ըրաւ ազգային միասնականութեան եւ պարզեց այն միջոցները, զորս Ֆրանսա կ'առնէ պայքարելու համար ահաբեկչութեան դէմ եւ զօրակցելու Միացեալ – Նահանգներուն։

Նախապէս, Նախարարաց Խորհուրդը որոշած էր Ֆրանսայի օդային տարածքը տրամադրել ամերիկեան օդուժին։

Ազգային Ժողովի նիստին, երեսփոխանները որոշ վերապահութիւն մը արտայայտեցին այն միջոցներուն նկատմամբ, զորս կառավարութիւնը կ'առնէ, զօրակցելու համար Ամերիկայի եւ Անգլիոյ, բայց, նաեւ ներքին ճակատի վրայ։ Ինչ կը վերաբերի զօրակցութեան, Ֆրանսա երկու մարտանաւերով, նաեւ զինուորներով եւ օդուժով կազմ ու պատրաստ է։ Իսկ ներքին կարգադրութիւններուն, քննադատութիւնները չատ են։ Արդարեւ, Ժոսփէն յայտնեց թէ, նոյնիսկ առանց կասկածելի երեւոյթներու, կառքերը կրնան խուզարկըւիլ, ելեկտրոնային նամակագրութիւնը հսկողութեան տակ կ'առնուի, ապահովութեան պաշտօնեաներ կրնան որեւէ ատեն ստուգումներ ընել հանրային վայրերու մէջ, եթէ զգան որ սպառնալիք կայ։ Վիժիփիրաթի այս ամրապնդուած միջոցներու կողքին, կայ նաեւ Պիոթոքս ծրագիր մը, զոր կառավարութիւնը վաւերացուց եւ որ կը վերաբերի կենսաբանական զէնքերու դէմ պայքարին։ Այս նոր ծրագիրը, ալ վերանորոգումն է Փիրաթոքս ծրագրին։ Օդի եւ ջուրի դէմ յարձակումներու յայտնաբերման եւ քննութեան միջոցները պիտի ամրապնդուին եւ տարրալուծարաններն ալ զօրակոչի ենթարկուած են, հակաթոյներ պատրաստելու համար։ Յայտարարուած միջոցներուն մէկ մասը խոր քննադատութիւններու առիթ տուած է։ Ձախ հակումով, ատենակալութեան սենոթքան «չըլմորած» է ի լուր Ժոսփէնի կարգադրութիւններուն (կառքերու խուզարկում, նամակագրութեան հակակշիռ եւ այլն) ու կը չեշտէ.– «Հիմնական ազատութիւններ են զորս կառավարութիւնը կ'ուզէ առկախել թացառիկ օրէնսդրութեամբ մը, պատրաստուած ԱՄՆ-ու ռճրափորձերու յուզումին ազդեցութեան տակ»։

***

Ազգային Ժողովի վիճարկումին ատեն ալ, այլ տեսակի քննադատութիւններ եղան, ոչ միայն ընդդիմութեան այլեւ մեծամասնութեան շարքերուն մէջ։

Պալատիր համաձայն է չափաւոր հակազդեցութեան մը։ Կը չեշտէ. - «Ահաբեկչութեան դէմ պայքարը ոչ մէկ կրօնքի, ոչ մէկ ցեղի, ոչ մէկ մշակոյթի դէմ պայքար մըն է։ Պայքար մըն է քաղաքակրթութեան համար իսկ»։ Ժիսքար համաձայն է կարճատեւ գործողութեան մը։ Կը փափաքի որ Ֆրանսա յստակ կերպով գծէ բաժանումի գիծը իսլամապաշտ արմատական ահաբեկչութեան դէմ պայքարին եւ Իսլամի նկատմամբ դիրքորոշման միջեւ։ Միջին Արեւելքի համար ալ, կ'ուզէ որ միջազգային հասարակութիւնը սահմանէ «խաղաղութեան վիճակ մը», որու ընկերանայ պաղեստինեան Պետութեան մը հաստատումը։ Շըվէնըման նաեւ համաձայն է զօրակցելու ԱՄՆ-ու։ Համայնավար կուսակցութեան պարագլուխը՝ Ռ. Հիւ բացաճակապէս դէմ է ամերիկեան որեւէ զինուորական գործողութեան։ «Մահացու թոյն» որակելով հանդերձ ահաբեկչութիւնը եւ անոր զօրավիգ գաղափարաբանութիւնները, համամիտ չէ Միացեալ – Նահանգներու որեւէ գործողութեան եւ, անշուշտ, ֆրանսական զինուորական մասնակցութեան, ցորչափ նման նախաձեռնութիւն մը նախապէս վաւերացուած չէ ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին կողմէ։ Կը գտնէ որ «պէտք է յարձակիլ ֆինանսական դրամատիրութեան հովանիին տակ ներկայ համաշխարհայնացման կողմէ գործուած բռնութեան եւ անհանդուրժելի անարդարութեանց դէմ»։

Ընդդիմութեան կարգ մը դէմքեր «միջակ», «թոյլ», «առանց հեռանկարի» գտած են Ժոսփէնի ելոյթը։

***

ԹՈՒՐՔԻՈՅ ԵՐԿԴԻՄԻ ԴԻՐՔԸ

Պիւլէնթ Էճէվիթ, յայտարարած է Հոկտեմբեր 2.-ին. – Եթէ Միացեալ – Նահանգները համոզուած են Ուսամա Պէն Լատէնի յանցագործութեան, ես ալ համոզուած եմ»։ Սկզբունքով, Թուրքիա առանց նախապայմանի զօրավիգ է Ամերիկայի, ինք որ ՕԹԱՆ-ի մահմետական միակ անդամն է, բայց, կէտ մը կայ։ Այդ կէտը կը վերաբերի Իրաքի, արդարեւ, Անգարայի զօրակցութիւնը կրնայ խախտիլ եթէ ահաբեկչութեան դէմ համաշխարհային արշաւանքը ուղղուի նաեւ Իրաքի դէմ։ Ներկայիս Թուրքիա օդային իր տարածքը, նաեւ օդակայանները դրած է ԱՄՆ-ու տրամադրութեան տակ։ Թուրքիա լաւ կը ճանչնայ Աֆղանիստանը եւ զօրավիգ է ընդդիմութեան, որու զօրքերը թիւրքմէն եւ ուզբեկ, թրքերէնի մօտ լեզու մը կը խօսին։

***

Պուտին, Պրիւսէլի մէջ, յայտարարած է Եւրոպայի Միութեան եւ ՕԹԱՆ-ի պատասխանատուներուն որ Ռուսաստանի «նշանակալից» մերձեցումը կը փափաքի արեւմտեաններու հետ ԱՄՆ-ու ոճրափորձերէն ետք։

***

Միացեալ – Նահանգներու մէջ, հայրենասիրութեան զգացումներ գլած անցած են բոլոր համեմատութիւնները։ Պատճառ է նաեւ որ աչքը բաց առեւտրականներ լաւ գործ ընեն։ Վերջին նորութիւնը կտածումն է, դրօշակ, թի-չըրթ արդէն ժամանակավրէպ դարձած են։ Ամերիկուհի մը կը խոստովանի. – «Ամերիկուհիի մորթիս մէջ, այնպիսի ցաւ մը կը զգայի, որ որոշեցի ամերիկեան դրօշակը կտածել տալ ուսիս վրայ»։

Բոլոր կառքերն ալ դրօշազարդուած են, ձայնասփիւռները նոյն երգերը կը սփռեն «Պորն ին Ամերիքա» (Ամերիկա ծնած) «Կոտ պլէս Ամերիքա» (Աստուած օրհնէ Ամերիկան)։ Այս վերջին երգը կը սփռուի մերթ ընդ մերթ ընդմիջուելով Պուշի ճառերու հատուածներով...։

ԱՄՆ ԿԸ ՋՆՋԷ՞Ն ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ՊԱՏԻԺԸ

«Ուաշինկթըն փոսթ» լաւատեղեակ թերթը տեղեկացուցած է թէ նախագահ Պուշ դէպի Աֆղանիստան իր արշաւին մէջ սիրաշահելու համար Ատրպէյճանը, կը մտածէ ջնջել թիւ 907 յօդուածը. ան կ'արգիլէր Գոնկրէսին օժանդակութիւնը այդ երկրին, այնքան ատեն որ ան շրջափակումի տակ կը պահէր Հայաստանը։ Այդ յօդուածը ընդունուած էր 1992-ին, Գոնկրէսին կողմէ, հայկական լոպիին յամառ ջանքերուն շնորհիւ։ Անկէ ի վեր Պաքու հետեւողականօրէն աշխատանք կը տանի ջնջել տալու համար զայն։

Հայկական համագումարը Հոկտ. 3-ին զգուշացուցած է Պուշի կառավարութիւնը որ եթէ կենայ յօդուածը ջնջելէ, կամ առկախելէ, քանի որ Ատրպէյճան տակաւին վերջ չէ տուած Հայաստանի շրջափակումին։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍԻՒԻՍԷՐ պետական եւ դրամատուներու օժանդակութիւնը ստացաւ Հոկտեմբեր 3-ին եւ յաջորդ օրն իսկ, մասնակի թռիչքներ կատարուեցան։ Կառավարութիւնը մօտ 2 միլիառ ֆրանք յատկացուց սահմանափակելու համար օդանաւային ընկերութեան անկումը։ Ինչ որ ալ ըլլայ, Զուիցերացիք ազդուած են եւ «ազգային աղէտ» կ'որակեն պատահածը։ Կը փորձեն հասկնալ թէ ի՞նչպէս աշխարհի ամէնէն հարուստ երկիրներէն մէկը կը հասնի հոն, ուր օդանաւային իր համբաւաւոր ընկերութիւնը քերոզէնը վճարելու դրամ չունի։ 39 հազար ճամբորդ մէջտեղ մնացած էին աշխարհի զանազան օդակայաններու մէջ Հոկտեմբեր 3-ին, 19 հազար ալ նախորդ օրը։ Ժողովուրդին մէջ, բուռն յարձակում կը կատարուի գլխաւորաբար երկու դրամատուներու դէմ՝ Իւ - Պէ - Էս եւ Գրետի Սուիս, որոնք այս ընթացքը բռնած են 250 հազար հոգիի նկատմամբ, որոնք տուժ գնած են եւ 44 հազար փոքր բաժնետէրերու։ Երկիրը իսկապէս ցնցուած է, նուաստացած կը զգայ ինքզինք, նաեւ ծիծաղելի կողմ մը կայ, որ դրամատուներու երկրին մէջ, դրամ չըլլայ...։

ԱԼԺԵՐԻՈՅ ՄԷՋ, Թամազիկթը (պէրպէր լեզու) հաւանաբար ազգային լեզու դառնայ, երբ Սահմանադրութիւնը բարեփոխուի այդ ուղղութեամբ։ Այս պահանջը մէկն էր Քապիլիոյ բողոքի Շարժումին պահանջներէն, արտայայտուած Ապրիլին ցոյցերով որոնք քանի մը տասնեակ մահ պատճառած էին։ Նախագահ Պութեֆլիքա այս որոշումը տուաւ Հոկտեմբեր 3-ին, մինչ նոր ցոյց մը նախատեսուած էր Հոկտեմբեր 5.-ին։ Ցարդ, երկրին միակ ազգային լեզուն արաբերէնն է։

ԵՐԿՈՒ ԻՐԱՔՑԻՆԵՐ սպաննուած են եւ երրորդ մըն ալ վիրաւորուած անգլեւ-ամերիկեան ռմբակոծութեան մը ատեն երկրին հարաւը։ Ըստ Պաղտատի, այդ ռմբակոծութիւններէն մեռնողներու թիւը 368-ի հասած է եւ 1057 վիրաւոր ալ կայ, 1999.-էն ի վեր, երբ ռմբակոծութիւնները սաստկացան։

ԹԷՆԸՍԻԻ ՄՕՏ (ԱՄՆ) Մանչեսթըր 6 հոգի մեռած է հանրակառքի մը արկածի հետեւանքով։ Արկածը պատահած է, երբ խրուած անցագրի տէր ճամբորդ մը դաշունահարած է վարորդը։ Սկզբունքով կապ մը չէր տեսնուեր ահաբեկչական արարքներու հետ։

ԹԱՓԱՌՈՒՄՆԵՐ ՆԵՂՈՍԻ ԱՓԻՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐ

Գ.

ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Բանաստեղծական հատորներու երկու խորագիր, կը յուշէ դէմքը Սարգիս Սահակեանի: Ցաջորդական կարգով Զորավանք (1936) եւ Բարձրբերդ (1946): Միջահասակ՝ նկարագրով բարեհամբոյր, բանաստեղծական միջինի պարկեշտ տիպար մը կը մնայ ան, անկասկած: Այս եզրակացութեան կը յանգի մէկը, որ թէ՛ չափով մը վայելած է անոր մտերմութիւնը, թէ՛ ալ առիթէ առիթ պատեհութիւնը ունեցած է կարդալու անոր քերթուածները:

Ս. Սահակեանի քանքարաւոր, գլխաւոր վարպետը՝ «հանդիսաւոր եւ վէս», *կը կոչուի Թէքէեան: Ցայտնապէս լեզուի ճամբով է, որ ան ուղեկից, եթէ կ'ուզէք ըսէք՝ հետեւորդ, կը դառնայ անոր: Ճարտար քերթողին պէս, կը սիրէ «կառուցանել» իր տողերը, շարել իր տուները՝ միշտ յատուկ ուշադրութիւն դարձընելով լեզուին: Այսպէս է, որ անորը յղկուած, մշակուած, պիտի ըսէինք նոյնիսկ «կոճկուած» նկատուելու չափ կոկ է: Շատ ուշադիր է յանգերուն, հընչիւնային կարգին, արտասանութեան հնչեղութեան:*

– Ու դուն կ'անցնիս երբեմըն լուռ
որպէս աղբիւր հեզակարկաչ,
Կ'ըլլաս աղօթք ու շարական, կ'ըլլաս
մրմունջ, կ'ըլլաս հառաչ,
Բայց եւ գըրո՛հ կ'ըլլաս դուն մերթ
ու գահավէժ կ'երթաս յառաջ
Որպէս ամբոխ, որպէս բանակ,
որպէս ջրվէ՛ժ մեծաշառաչ,
(Տաղ առ Հայերէն)

Սահակեան զգայնութեամբ հարուստ է: Ցուզումները անկեղծ են: Չէ՞ որ անոր երգը, ըսենք՝ տրտունջը, ենթահող ունի իր հայ մարդուն վիճակուած ճակատագիրը, – տարաբնակ, տարագիր բեկորի անվերջ կոտտացող վէրքը: Կսկծանքը ցաւատանջ սրտին:

Ստէպ կ'անդրադառնայ մեր անցեալին՝ անկէ մանաւանդ հպարտութիւն առթող արժէքներ գտնելու եւ ցուցադրելու համար: Ասոնք հաւասար չափով կրնան դէմք, դէպք, անուն թէ տեղանուն ըլլալ: Նոյնիսկ՝ աւանդութիւն: Ի՛նչ փոյթ: Կարեւորը սիրտը գովացնելն է: Ցուսադըրուիլ եւ յուզադրել:

ԳԷՈՐԳ ԶԷՔԻՃԵԱՆ

Սփիւռքեան քանի մը օրաթերթերու եւ գրական հանդէսներու մէջ ստէպ կ'երեւէին անոր անուան հետ աղերս ունեցող քերթուածներ: Ցաճախ կը յաճախէր մեր երբեմնի «Նաւասարդ» ակումբը, ի Գահիրէ, հանրային աշխատանքներու շրջագիծով: Արդէն, հոն կը բարախէր անուցիչ տաք սիրտը սփիւռքեան ազդեցիկ ջահակիրներէն Ցուսաբերի:

Առհասարակ սակաւախօս, այլ սակայն հաղորդական, – ժպիտով կը մօտենար, կը բարեւէր, խրախուսական ու քաջալերական մէկ – երկու խօսք կ'արտասանէր: Մենք, դեռահասներս, մեր կարգին յարգանօք կը պատասխանէինք:

Այս պահուս, բանաստեղծական երկու հատոր անգամ մը եւս կը նկարէ դէմքը անոր: Ասոնք են, – Աստղերուն տակ (1942) *եւ* Բարձունքն ի վեր (1947):

Զգայնութիւններով հարուստ է անոր ներաշխարհը: Առանցքը բոլորին ալ գրեթէ մէկ է, – Հայ մարդը, կամ՝ Հայը պարզապէս: Ի վերջոյ յատակ նկատելի է իր մօտ իր սերունդին բաժին ինկած դժնեայ ճակատագիրը: Բնաւեր մէկը չի կրնար մոռնալ իր երբեմնի չէն բոյնը: Արմատախիլ եղած մէկը չի կրնար չյիշել տեղահանութիւն, աքսոր, տաժանք ու մահուան տագնապ:

Զմռնանք՝ կան անբուժելի վէրքեր, կան ցմահ տեւող ցաւեր:

Այս այսպէս ըլլալով հանդերձ, Զէքիճեանի մօտ զերծ չեն ներանձնական ապրումները, համամարդկային զգայնութիւնները: Մարդը գիտէ սիրել, գիտէ վշտակցիլ, գիտէ խորհրդածել եւ, ազգայինին հետ եւ անոր կողքին՝ խնդրարկուի անկեղծ հոգիով աղօթել՝ Բարձրեալին եւ Խաչեալին: Ու դեռ յիշել Աստուածամայր եւ ոգեկոչել Խաչելութեան ու Ցարութեան Խորհուրդները:

Հետեւցնենք: Հայրենական զգացական բխում, հայրենասիրական ցոլքերու շողարձակում, մարդկայնական եւ զուտ անձնական սրտբաց խօսք, այս բոլորն ալ դուք, անպայման, կը գտնէք անոր քերթուածներուն մէջ:

Արտասանուած մեղմ ձայնով:

– Չենք խօսիր կրտսեր եղբօրը Բիւզանդ Կոանեանի (Զէքիճեան) մասին: Անոր որ գլխաւորաբար իր «Կեանքը մերն է հիմա» *ուշագրաւ հատորով (1948), կը դառնայ անուն՝ մեր արձակ բանաստեղծութեան սեռին մէջ: Մինչեւ յետ Համաշխարհային Բ. պատերազմ Եգիպտոս ապրած, ստեղծագործած ու հանրային – կուսակցական գործունէութեամբ աթոռ գրաւած Բ. Կ., 1950–ի առեններու կը մեկնի Միացեալ – Նահանգներ, իբր քարտուղար Հայ Կրթական Հիմնարկութեան, Գալիֆորնիա:*

Ստեղծագործական փաստակով պարտի մաս կազմել ամերիկահայ գրական կեանքին:

ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Հայրենապաշտ եւ աստուածապաշտ: Մարդ այս ընդհանուր եզրակացութեան կը յանգի, երբ մօտէն կը հետեւի անոր հարուստ գրական բերքին: Երբ ուշադիր կը կարդայ բանաստեղծին քերթուածները՝ սփռուած բազմաթիւ հատորներու մէջ, սփիւռքեան այլ եւ այլ հանդէսներու էջերուն:

Երկար ժամանակ առաջ, հարցազրոյցի մը ընթացքին, քերթողը կը ճշդէ իր դաւանանքը: «Իմ միակ կուսակցականութիւնս՝ բանաստեղծութիւնն է: Իմ միակ քաղաքականութիւնս՝ աստուածապաշտութիւնն է: Իմ միակ քաղաքականութիւնս՝ հայութիւնն է...»:

Ատամփաշարցի զաւակ, ծնունդով Երուսաղէմցի, 1919–ին, դեռ մանուկ, ընտանեօք կը փոխադրուի Գահիրէ: Հո՛ս է, որ կ'ապահովէ նախակրթարանի ուսում՝ գլխաւորաբար տեղւոյն Գալուստեան Ազգային Վարժարանը: Եւ, քիչ ժամանակ ետք ալ քիմիագէտ – դեղագործի վկայական՝ մայրաքաղաքին Պետական Համալսարանը, 1942: Գրեթէ տասնամեակ անց կը մեկնի Աւստրալիա: Քիչ ետք կը վերադառնայ բուրգերու երկիրը, հոնկէ կ'երթայ Պէյրութ (1956): Այնուհետեւ կրկին Աւստրալիա եւ, ապա՝ 1968ին վերջնապէս կը հաստատուի Փասատենա, Լոս – Անճըլըսեան հայաշատ արուարձան, Միացեալ – Նահանգներ:

Քերթողին անդրանիկ «Գաղտնի ճամբա» (1938) *հատորը եւ, տարիներ անց լոյս տեսած* «Մեղրալուսին» (1948) *ակնյայտօրէն կը հաստատեն անոր քնարերգուի յատկանիշը, չեշտ գիծերով: Զգայուն հոգիով կը մօտենայ մարդուն (Իր) սրտին հայոց աէրերուն, տագնապներուն, յոյզերուն եւ տենչերուն: Բնութիւնը անոր մօտ զգացական գոյներով կը յայտնուի: Կը ներկայանայ իր դալար հասակով, կենարար, կենսատու աւիշով:*

Հոգի եւ բնութիւն: Խորազգած կապ, անկասկած: Ապրումներու դուռ բացող խօսուն, թրթռուն լարեր, անպայման:

Զի բնութիւնն զգայութիւն է համբուն
Ու բանաստեղծն զգայնութեան
նկարիչ:

կամ՝

Ես չեմ տեսներ վարդ հովհարը
ցայգուն,
Ու չեմ լսեր սրինգն հովին,
այլ կ'զգամ,
Գիրգ թոյրի մէջ թաթխած գրչով մը
փարթամ՝
Կը նկարեմ լոկ զգացածն իմ
հոգուն..

«Խենթ սիրերգակ»ը (ինքն իր մասին) է՛ նաեւ հայրենապաշտ: Տարագիր տղայ, հող – չէն կորսնցուցած ամէն արեւմտահայու նման, կը սիրէ ամուր կառչիլ կորուսեալ հայրենիքին անունին, անոր անցեալին, փառքին, արժէքներուն: Ամէն գիտակից սփիւռքահայու նման հաստատ կ'ըմբռնէ լեզուին, մշակոյթին ազդու դերը ազգային դիմագիծին պահպանման մեր դժնեայ մարտին մէջ: Վկայ անոր «Մեսրոպաշունչ»ը (1946): *Հոս արդէն ան յաճախ պատգամախօս է, հրապարախօս է, միշտ ոգեշնչող, միշտ գօտեպնդող, միշտ մարտի կանչող:*

Կը յիշեցնէ, –

Զի հայ լեզուն միակ լաստն է
հայութեան տարագիր.
Ուր կարենայ կառչիլ Հայն՝ իր
յաւերժին ի խնդիր...

կամ՝

Դպրոցն ահա հայկազեան...
Մեսրոպակուռ զինարան՝
Իր բովին մէջ կը ձուլուին սուրն ու
ասպարն հայ հոգւոյն,
Մինչ կատարին՝ ծագէ ծագ
կը ծածանի երեսուն
Եւ ութ երփնեան դրօշակն
Այբուբենին Մաշտոցեան:

Ցանկարծահաս եւ յանկարծաբաց: Տենդագին՝ կը փարի Բարձրեալին: Անբաւ սիրով, տարապայման ջերմով (ջերմեռանդութեամբ) փառքը կը հիւսէ Ամենակալին, Աստուածորդւոյն, Աստուածամօր: Ի հետեւութիւն իր ներքին բարեպաշտ տրամադրութեանց՝ անոր խօսքը այլեւս կը դառնայ աղօթքի նման բան: Ստուգիւ, այլեւս անոր բառացանկին գերատիճան անունները կ'ըլլան Ս. Գիրքով նուիրականացած սուրբեր եւ սրբութիւններ: Աստուածապաշտ խորքով քերթուածներ կ'երեւին բանաստեղծական հատորներու մէջ, – «Աստուծոյ փառքին համար» (1959), «Ցիսուսաբոյր» (1965): *Ուշադրութիւն՝ անոր աղօթատունը առաքելական դրոշմով օծուն, այսօր իր 1700–ամեայ պատմութեամբ փառաւորեալ մեր Հայաստանեայց Եկեղեցին է: Հո՛ն է ան՝ ծնրադիր դիրքով, ջերմեռանդ հոգիով: Արձակ տողերով կ'ընդգծէ, –*

– Արարատ եւ Էջմիածին: Անբաժանելի: Մէկը միւսով ամբողջ ու կատարեալ: Մէկը միւսով արժէքաւոր ու իմաստաւոր: Երկու կեդրոնաձիգ բեւեռները հայ հոգիին»:

Անպայման պէտք է քանի մը խօսք ըսել անոր լեզուին գլխաւոր յատկանիշներէն միոյն մասին: Գիտէ օգտագործել մեր լեզուին անբաւ եւ անգին հարստութիւնը: Այսպէս է, որ բանաստեղծին բառապաշարը ճոխ է ու փարթամ: Առոք հասկերու տեսքով կը ներկայանայ: Ճարտար գրիչ՝ կը յաջողի ճշգրիտ բառերու ընտրութեամբ եւ, կերտուած պատկերազդու բարդութիւններով՝ պատկերներ վրձինել, նկարել, խոհ ու խոկ քանդակել:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ-ՇԱՄԼԵԱՆ

Արդէն խօսած ենք հանգամանօրէն մեր քանքարաւոր գրիչին մասին («Յառաջ», Մարտ 3, 2001):

Ինքնամփոփ կեանքի մը թաքուն եւ, միաժամանակ, խորունկ խռովքներով հարուստ ձայնն է ան: Ցանկուցիչ եւ հըրապուրիչ: Մանաւանդ՝ երբ սիրտին խօսքերը անոր, միտքին դատումները անոր, գեղեցկահիւս արձակով մը կը հըրամցուին ընթերցողին: Եւ մեր ոսկեղինիկը իր կախարդական աշխարհով կը փռուի, կը տարածուի մեր աչքին առաջ:

ԽՈՐԷՆ ՏԷՏԷԵԱՆ

Եգիպտահայ երգիծանքը՝ իբր գրական սեռ, ծանրութեամբ պարծենալու չա՛տ քիչ բան ունի: Գրեթէ ոչինչ: Քանի մը անուն եւ, այսքան: Քանի մը վիպակ - զաւեշտ չա՛տ պարզ չափանիշով: Միջինէն վար գործեր, բոլորն ալ:

Պարոյր Մասիկեան իր քանի մը զաւեշտներով, հազիւ թէ կշիռի մը վրայ տեղ գրաւելու իրաւունքը ունենայ: Խորէն Տէտէեան աւելի ներկայութիւն մը կը դառնայ Եգիպտահայ բեմին վրայ, քան երգիծաբանութեան մէջ: Իզմիրցի դերասանը, – այս մարզին մէջ ծանօթ անուն բեմերու, – որքան գիտենք, կը թատերականացնէ Օտեանի այնքան ժողովրդականացած «Ընտանիք, պատիւ, բարոյական» վէպը: Լոյս կ'ընծայէ «Երիտասարդի մը յուշատետրը» վիպակը՝ խուրձ մը խայթոց՝ մարդոց ունայն սովորամոլութիւնները ձաղկող: Հաւանաբար, ունի քանի մը այլ պատմուածք կամ թատերախաղ:

Վերջակէտէն առաջ, տողեր համեմելու մտօք, «մանրավէպ» մը անոր կեանքէն:

Դեռ Պոլսէն անուանի, Հայ Տրամաթիքի ճամբով արդէն փայլ ու պատիւ ամբարած դերասանապետ մը, կը դիմէ երիտասարդ, սկսնակ դերասաններու՝ առաջարկելով բեմադրել Ծիածոմէթթիի «Քորրատօ»ն (*):

– Դուք դրամի պէտք չունիք, նոր էք, նոր ասպարէզ կը մտնէք: Ձեզի կը թողում, իբր վարձատրութիւն... չորս հանդերձ՝ զոյգ մը фрак, *հոգեւորականի սեւ կապայ եւ ազնուականի գլխարկ, ասոնք ալ երկուական:*

Ակնապիշ՝ կը համաձայնինք:

Վարագոյրը իջնելէն եւ դերասանապետին մեկնումէն կարճ ժամանակ ետք, դուռը կը զարնուի եւ առջեւնիս կը տընկուի հագուստները վարձու տուած յոյն վաճառականը: Կ'ուզէ թէ՛ фракները, *թէ՛ երկու դեղին ոսկի: Շփոթած կուտանք: Առտու մըն ալ իր հասակը ցոյց կու տայ Մխիթարեան վարժարանի տեսուչը խընդրելով ետ վերադարձնել կապաները...*

Հասկցանք, թէ Պոլսեցի դերասանապետը մեր քիթին խնդացած էր: Առօք - փառօք կծիկը դրած էր:

Բնականաբար, հարցնող - հարցնողի: Անո՞ւնը:

– Ո՞վ կ'ուզէք որ ըլլար... Վահրամ Փափազեան կը կոչուէր...

ԺԻՐԱՅՐ ՄԻՐԻՃԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Նշան Պէշիկթաշլեանի «Թատերական ծաւալուն աչդէմքեր» խիստ շահեկան խատութեան մէջ, (Անթիլիաս, 1969), կը ճշդէ, – Բուն անունով «Քաղաքական մահ», դերասաններու կողմէ կոչուած նաեւ «Ոճրագործին ընտանիքը»:
Ժ. Մ.

ԼՈՒՍԱՆՑՔԻ ՎՐԱՅ

ԱՐԺԷՔԱՒՈՐ ԿՐԹԱՆՊԱՍՏ ՄԸ ԵՒ ԱՐԺԱՆԱՒՈՐ ՕՐԻՆԱԿ ՄԸ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1988–ի երկրաշարժէն կամ ղարաբաղեան պատերազմէն աւելի առաջ, Հայաստանի վիճակը տարիներու ամէնէն աղէտալի երեւոյթը արտագաղթն է անշուշտ:

Երկար առենէ ի վեր վէճեր կը լսենք թիւին մասին: Հարիւր հազար ըլլայ թէ մէկ միլիոն, երեւոյթը չի փոխուիր (ինչպէս որ ցեղասպանութիւն մը չի դադրիր ըլլալէ՝ 100.000 թէ 1.000.000 մեռեալներու պարագային): Թիւէն աւելի, մտահոգիչը ուղեղահոսքն է, գիտնականներու եւ կրթեալ մասնագէտներու հեռացումը:

Այս երեւոյթին դէմ պայքարելու նպատակով, 2000 թուականին խումբ մը ամերիկահայ գիտնականներ կազմակերպած են Հայկական Գիտական և Կրթական Հիմնադրամը, որ դրուած է Միացեալ - Նահանգներու Արեւելեան (Էջմիածնական) Առաջնորդարանի հովանիին տակ,

նպատակ ունենալով նիւթապէս զօրավիգ կանգնիլ Հայաստանի գիտահետազօտական աշխատանքին:

Նիւթական յանձնառութեան ամենավերջին օրինակը կու գայ ամերիկահայ վաղամեռիկ գիտնականի մը՝ Ուիլիըմ Մեսրոպեանի ընտանիքէն, որ վերջերս «Մեսրոպեան» Հիմնադրամը հաստատած է Հայկական Գիտական եւ Կրթական Հիմնադրամի ծիրէն ներս, նպատակ ունենալով ամենամեայ մէկ-երկու դրամաշնորհներ (grant) յատկացնել աստղագիտական հետազօտութեան կամ Հայաստանի աստղագիտութեան պատմութեան ուսումնասիրութեան: Ինչպէս որ կանոնն է Հիմնադրամին, թեկնածուները պարտին իրենց ծրագիրները ներկայացնել ԱՄՆ-ու գիտական դատակազմի մը: Ցարդ «Մեսրոպեան» հիմնադրամը 53.000 տոլարի անձեռնմխելի գումար մը գոյացուցած է: Առաջին յատկացումը պիտի կատարուի յառաջիկայ Յունուարին:

Ուիլիըմ Ս. Մեսրոպեան (1943 – 1998) Թուաբանութեան, բնագիտութեան եւ աստղագիտութեան իր ուսումը ստացած է Սիրաքիւզ, Ուէզլէյըն եւ Փիթզպուրկի համալսարաններուն մէջ: 1960-ական թուականներուն վերջերը Հայաստանի կառավարութեան հրաւէրով Բիւրականի աստղադիտարանը այցելած է: 1970-75-ին աշխատած է որպէս աստղագիտութեան հետազօտող եւ դասախօս Ուէզլէյըն համալսարանին մէջ, հրատարակելով 11 գիտական յօդուածներ: 1975-ին լքած է աստղագիտական ասպարէզը եւ անցած՝ համակարգչային ճարտարագիտութեան: Սակայն, իր հին սէրը միշտ վառ մնացած է իր մէջ մինչեւ իր մահը:

Մեսրոպեան Հ. Յ. Դաշնակցութեան շարքային էր, Հայ Դատի Յանձնախումբի գործօն մասնակից եւ Ուաթըրթաունի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ (Արեւելեան Ամերիկայի Կիլիկեան Թեմին պատկանող) անդամ:

Ամերիկահայ միջավայրին մէջ, ուր դեռ կուսակցական – եկեղեցական իրերամերժ պայքարներ կը շարունակուին (էջմիածի՞ն թէ Անթիլիաս, Դուրեան Արք.՝ նահատա՞կ թէ ստահակ, եւ մասամբ նորին), դեռ «զարմանալի» պարագաներ կան, երբ մէկ հոսանքին պատկանող ընտանիք մը կը փորձէ այլ հոսանքի մը հովանիին տակ գտնուող ձեռնարկի մը զօրավիգ կանգնիլ: Նոյնիսկ եթէ Հայաստանի ի նպաստ ուղղուած ըլլայ այդ ձեռնարկը, երբ գիտենք, որ վերջին տասնամեակին ա՛յդ դարձած է աններելի խաչաձեւումի բեղուն դաշտ մը:

Հաճելի զարմանք մը անշուշտ, որ մարդ պիտի մաղթէր շատ աւելի յաճախակի կերպով տեսնել՝ հաւատալու համար մեր հանրային կեանքի առողջացումի կարելիութեան...:

Վ. Մ.

Նիւ-Ճըրզի

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 10-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Ուրբաթ, Սեպտեմբեր 21, երեկոյեան ժամը 8-էն սկսեալ Հայ Մշակոյթի Տան Ժ. Մառանճեան սրահին մէջ նշուեցաւ Հայաստանի Անկախ Հանրապետութեան 10-ամեակի հանդիսութիւնը, զոր կազմակերպած էր Տան վարչական կազմը եւ տնօրէնը, Պր. Աշոտ Յակոբեան:

Բազմաթիւ բարձրաստիճան անձնաւորութիւններ տեղ գրաւած էին գեղեցիկ զարդարուած սրահին մէջ, ուր միեւնոյն ժամուն կը սփռուէր Հայաստանի Անկախութեան փառատօնը:

Տեղւոյն նախկին նախագահը Պր. Բասգալ Բաբախեան իր բարիգալուստի խօսքէն ետք բեմ հրաւիրեց իրեն յաջորդող նախագահը Տիկին Մոնիք Ադամեանը, որ իր կարգին Մշակոյթի Տան անունով շնորհաւորեց Հայաստանի Անախութեան տօնը, ողջունեց պաշտօնական հիւրերը եւ ներկաները. ապա ամփոփ կերպով ներկայացուց 2001 թուականի պատմական եղելութիւնները հայ ժողովուրդի կեանքէն ներս: Ֆրանսայի կողմէ ցեղասպանութեան ճանաչումը, Քրիստոնէութեան 1700-ամեակի տօնակատարութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ. խօսեցաւ նաեւ Հայ Մշակոյթի Տան գործունէութիւններուն, ժրաջան անդամներուն եւ ջերմեռանդ ընկերային մթնոլորտին մասին:

Յաջորդաբար խօսք տուաւ մասնաւորաբար հրաւիրուած Լ. եւ Ն. Պիւլիւքեան հիմնարկի նախագահին Ժան – Փիէռ Գլավերանի, Տիկին Քրիսթին Գրիլֆոյի որ կը ներկայացնէր Իզէր նահանգի ընդհ. Խորհուրդը, Անտրէ Վալինիի երեսփոխան Ռիշար Քազընաւի եւ Կրընոպլի քաղաքապետ՝ Միշէլ Տեսթօյի, որոնք ջերմապէս շնորհաւորեցին Անկախութեան տասնամեակը որուն հետեւած էին սկիզբէն եւ բաժնած անոր տխուր եւ ուրախ պահերը: Գնահատեցին Մոնիք Ադամեանի մարդասիրական գործունէութիւնները նաեւ հայ ժողովուրդին ազնուութիւնը եւ հաւատարմութիւնը. ներշնչեցին յոյս եւ խոստացան օգտակար ըլլալ Հայաստանին:

Երեկոն տեւեց մինչեւ ուշ գիշեր սիրուած երգիչ Մանուէլի գեղեցիկ երգերով, ներկաները խանդավառուած մասնակցեցան հայկական պարերով:

ՇԱՔԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՈՒ ՅՈՎՀ.-ՊՕՂՈՍ Բ. ՊԱՊԸ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Տեղեկատուական համակարգ, 2001, Սեպտեմբեր 29 Թ. –

Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի առիթով Հռոմէական կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ. Պապի հայաստանեան այցի ընթացքում, Սեպտեմբերի 27-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Սրբազան Քահանայապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստորագրեցին հետեւեալ համատեղ յայտարարութիւնը:

«Քրիստոնէութեան Հայաստանում կրօն հռչակման 1700-ամեակի տօնախմբութիւնը ի մի է բերել Հռոմի Եպիսկոպոս եւ Կաթոլիկ Եկեղեցու Հովուապետ Յովհաննէս Պօղոս Բ. Պապին եւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Գոհութիւն ենք մատուցում առ Աստուած, որ պարգեւեց մեզ այս ուրախ առիթը վերստին միասնաբար աղօթելու՝ ի փառաբանութիւն Իր Ամենասուրբ Անուան: Օրհնեալ է Սուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ եւ յաւիտեանս:

Հրաշափառ այս տօնակատարութիւնը նշելիս խոնարհումով, երախտագիտութեամբ եւ սիրով ենք յիշում մեր Տէր Յիսուս Քրիստոսի մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, ինչպէս նաեւ իր գործակիցներին ու յաջորդներին, ովքեր լուսաւորեցին ոչ միայն հայ ժողովրդին, այլեւ Կովկասի հարեւան երկրներին ժողովուրդներին: Շնորհիւ իրենց վկայութեան, նուիրումի եւ օրինակի հայ ժողովուրդը 301 Թ. ընդունեց Աստուածային լոյսը եւ ի սրտէ դարձաւ Քրիստոսին՝ Ճշմարտութեանը, Կեանքին եւ Փրկութեան ճանապարհին:

Նրանք երկրպագեցին Աստծուն՝ իրենց Հօրը, խոստովանեցին Քրիստոսին՝ իրենց Տիրոջը եւ վկայակոչեցին Սուրբ Հոգուն՝ իրենց սրբարարին: Նրանք սիրեցին առաքելական տիեզերական Եկեղեցին՝ իրենց Մօրը: Քրիստոսի գերագոյն պատուիրանը՝ սիրել Աստծուն ամէն ինչից վեր եւ մեր դրացուն՝ ինչպէս ինքներս մեզ, դարձաւ կեանքի ճանապարհ բոլոր Հայերի համար: Օժտուած մեծ հաւատքով՝ Նրանք ընտրեցին կրել ճշմարտութեան վկայութիւնը եւ ընդունեցին մահը, երբ անհրաժեշտ էր, որպէսզի յաւիտենական կեանք ժառանգեն: Այսպիսով, Ի սէր Քրիստոսի մարտիրոսութիւնը դարձաւ բազում հայ սերունդների վիթխարի ժառանգութիւնը: Այդ մեծարժէք գանձի սերունդէ-սերունդ փոխանցումը նշան էր Աւետարանի նկատմամբ ունեցած երկիւղածութեան, որպէսզի Սուրբ Հոգու շնորհով երիտասարդները դառնան վճռակամ՝ իրենց նախնիների նման կրելու վկայութիւնը ճշմարտութեան նկատմամբ: Մէկ եւ կէս միլիոն հայ քրիստոնեաների կոտորածը, որ ընդհանրապէս համարւում է 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը, եւ դրան յաջորդող զանգուածային ոչնչացումը ամբողջատիրական նախկին ռեժիմի ներքոյ ողբերգութիւններ են, որ տակաւին ապրում են ներկայ սերնդի յիշողութեան մէջ: Այս անմեղները, որ ի զուր մորթուեցին, չեն սրբացուել, սակայն նրանցից շատերը վստահաբար եղել են Քրիստոսի անուան խոստովանողները եւ նահատակները: Աղօթում ենք նրանց հոգիների հանգստութեան համար եւ յորդորում, որ հաւատացեալները երբեք չըմոռանան նրանց զոհողութեան նշանակութիւնը: Գոհութիւն ենք յայտնում Աստծուն այն իրողութեան համար, որ քրիստոնէութիւնը Հայաստանում վերապրեց անցեալ 17 դարերի ողբերգութիւնները եւ, որ Հայ Եկեղեցին այժմ ազատ է իրականացնելու իր առաքելութիւնը՝ Բարի Լուրը տարածել Հայաստանի Հանրապետութիւնում եւ հեռու – մօտիկ այն վայրերում, ուր հայկական համայնքներ կան:

Հայաստանը վերստին անկախ երկիր է, ինչպէս Տրդատ արքայի եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի օրերին: Հաւաստի է, որ անցած 10 տարիներին Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները ազատօրէն կարողացան պաշտել իրենց կրօնը: Հայաստանում եւ Սփիւռքում հայկական նոր հաստատութիւններ հիմնուեցին, կառուցուեցին եկեղեցիներ, բացուեցին ընկերութիւններ ու դպրոցներ: Այս ամէնի մէջ տեսնում ենք Աստծոյ սիրառատ ձեռքը: Քանզի Նա տեսանելի դարձրեց Իր հրաշքները փոքր ազգի շարունակուող պատմութեան մէջ, որն իր քրիստոնէական հաւատքի շնորհիւ պահպանեց իր իւրայատուկ ինքնութիւնը: Շնորհիւ իր հաւատքի եւ Եկեղեցու, հայ ժողովուրդը զարգացրեց քրիստոնէական եզակի մշակոյթ, որը, անշուշտ, արժէքաւոր ներդրում է ողջ քրիստոնէութեան գանձարանում:

Քրիստոնեայ Հայաստանի օրինակը վկայում է, որ ի Քրիստոս հաւատքը յոյս է բերում մարդկութեանը բոլոր իրավիճակներում՝ անկախ դժուարութեան չափից: Աղօթում ենք, որ քրիստոնէական հաւատքի փրկարար լոյսը ծագի տկարի եւ ուժեղի, աշխարհի զարգացած եւ զարգացող ազգերի վրայ: Ի մասնաւորի այսօր միջազգային իրավիճակների բարդութիւններն ու մարտահրաւէրները պահանջում են ընտրութիւն՝ բարու եւ չարի, խաւարի եւ լոյսի, մարդկայինի եւ անմարդկայինի, ճշմարտութեան եւ կեղծիքի միջեւ: Իրաւական, քաղաքական, գիտական եւ ընտանեկան կեանքում արդիական են եւ շօշափւում են մարդկութեան նպատակներին եւ նրա կոչմանը վերաբերող հարցերը, որոնցով զբաղուողները կոչուած են լինել այսօրուայ քրիստոնեաները, ոչ պակաս քան այլ ժամանակների մարտիրոսները, որ վկայեցին ճշմարտութիւնը նոյնիսկ ի գին ամէն ինչի:

Այս վկայութիւնը կը լինի աւելի համոզիչ, եթէ Քրիստոսի բոլոր աշակերտները միասնաբար խոստովանեն միեւնոյն հաւատքը եւ բժշկեն բաժանման վէրքերը իրենց մէջ: Թող Սուրբ Հոգին առաջնորդի քրիստոնեաներին եւ, անշուշտ, բարեկամ բոլոր ժողովուրդներին հաշտութեան եւ եղբայրութեան ուղիներով: Այստեղ Սուրբ Էջմիածնում մենք վերանորոգում ենք հանդիսաւոր մեր յանձնառութիւնը աղօթքով եւ աշխատանքով արագացնելու միութեան օրը Քրիստոսի հաւատաւոր հօտի անդամների միջեւ՝ ճըշմարիտ յարգանքով հանդէպ մեր սրբազան աւանդոյթները:

Աստծու օգնութեամբ մենք չպիտի ընդդիմանանք սիրոյն. «Ուրեմն մենք եւս, որ մեր շուրջ վկաների այնչափ բազմութիւն ունենք, թօթափենք ամէն հպարտութիւն եւ ծանր մեղք, համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առջեւ» (Եբր. 12:1):

Յորդորում ենք մեր հաւատացեալներին անդադար աղօթել, որ Սուրբ Հոգին լցնի մեզ բոլորիս, ինչպէս մարտիրոսներին բոլոր ժամանակներում եւ ամէնուր, իմաստութեամբ եւ խանդավառութեամբ հետեւելու Քրիստոսին՝ Ճանապարհին, Ճշմարտութեան եւ Կեանքին»:

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐՇԱՒԻՐ ԵԱՍԵԱՆ

– Բայց Արշաւիր էֆէնտին պատուիրած է, որ առանց իրեն նախապէս իմաց տալու քովը մարդ չտանինք:

– Լաւ, ուրեմն, ըսէ՛ք իրեն, որ Արշակը եկած է ու անպատճառ զինքը տեսնել կ'ուզէ, նոյն բանը կրնաք ըսել նաեւ Ճէմալ պէյին:

Արշակ անունը լսելով՝ օրիորդը ցնցում մը ունեցաւ: Յիշեց, որ քիչ մը առաջ այդ անունը տուած էին Արշաւիր եւ Ճէմալ պէյ:

– Սպասեցէ՛ք այս սենեակը, որպէսզի երթամ իմաց տամ իրենց, – ըսաւ՝ նորեկը առաջնորդելով գետնայարկի խուցը:

– Բոլորովին անօգուտ ձեւակերպութիւն մըն է այս, – դիտել տուաւ մարդը սենեակ մտնելով:

– Ինչ ընեմ, քանի որ այնպէս պատուէր տուած է, եւ այս իրիկուան դէպքէն ի վեր ալ աւելի պէտք է զգուշութեամբ վարուինք:

– Արդեօք կը կարծե՞ս, որ ես ալ մահափորձ մը ընելու եկած եմ, – ըսաւ Արշակ խնդալով:

Օրիորդը առանց այս հեգնութեան պատասխանելու վեր գնաց եւ քիչ յետոյ վերադարձաւ յայտարարելով, թէ Արշաւիր իրեն կը սպասէր:

– Կը տեսնա՞ս, որ օտարական մը չեմ, – գոչեց Արշակ յաղթականօրէն:

Երբ մտաւ վիրաւորին սենեակը, մտերմական ողջոյններով ընդունուեցաւ:

– Վերջապէս քու Տրդատ բարեկամդ իր ծրագիրը գործադրեց, - ըսաւ Արշաւիր:

– Ի՞նչ ծրագիր, - հարցուց Արշակ զարմացած դէմքով մը:

– Զիս սպաննելու ծրագիրը:

– Ապահո՞վ ես, որ այդ գործին մէջ մատ ունի:

– Վստահ եմ, որ վրաս յարձակող երեք անձերէն մէկը ինքն էր, – հաստատեց Արշաւիր:

– Իսկ ես քեզ կ'ապահովցնեմ, թէ ինք հոն չէր եւ լուր անգամ չունէր եղածէն:

– Ինչպէ՞ս, - գոչեց Արշաւիր դժգոհ դէմքով մը:

– Ոճրափորձը ժամը քանի՞ն տեղի ունեցաւ, - հարցուց Արշակ:

– Ժամը ութն էր, երբոր դուրս ելայ տունէն եւ հազիւ քանի մը վայրկեան ետքը տեղի ունեցաւ դէպքը:

– Արդ, ժամը 8-էն մինչեւ 9 ես ու Տրդատ միասին նստած էինք յոյն գինեպանի մը խանութը:

– Ուրեմն Տրդատ չկրնար մասնակից ըլլալ ոճրափորձին, - ըսաւ Ճէմալ պէյ:

– Թերեւս ես սխալ տեսած եմ, - ստիպուեցաւ խոստովանիլ Արշաւիր:

– Ապահովաբար սխալ տեսած ես, – պատասխանեց Արշակ, – քանի որ նոյն միջոցին իրեն հետ միասին էի եւ կարծեմ, այս ըսածիս չէք կասկածիր բնաւ:

– Երբեք կասկածի խօսք մը չըսի ես, – գոչեց դաւաճանը: – Միայն թէ Տրդատին հոն չգտնուիլը չկրնար փաստ մը համարուիլ, թէ ինք տեղեկութիւն չունէր մահափորձէն, եւ կամ ինք իսկ չէր պատրաստած զայն:

– Ատոր ըսելիք չունիմ, - պատասխանեց Արշակ, - միայն թէ պատճառներ ունիմ հաւատալու, որ իրաւցընէ լուր չունէր այդ մահափորձէն, եւ թէ նոյնիսկ այդ մահափորձը հնչակեաններու կողմէ չէ կատարուած:

– Զարմանալի՛ բան, - գոչեց Արշաւիր յուզուած ձեւով մը, – ուրեմն ո՞վ ըրաւ այդ մահափորձը:

– Չեմ գիտեր, թէ ով ըրաւ, բայց ո՛չ Տրդատ եւ ո՛չ ալ իր ընկերները դեր մը ունին այդ գործին մէջ:

– Ի՞նչ փաստով պիտի հաստատես ըսածդ:

– Շատ պարզ է, անոնք, որ դարանակալ եղան քու վրադ զէնք պարպելու համար, անշուշտ գիտէին, որ դուն ուր կը բնակիս, քանի որ տանդ շատ մօտերը կեցած են եւ նոյնիսկ գիտէին նաեւ, թէ ո՛ր ժամերուն դուրս կ'ելլես, այնպէս չէ՞:

– Այդ մասին տարակոյս չի կայ, - պատասխանեց Ճէմալ պէյ, – ապահովաբար այդ մարդիկը տունդ գիտէին:

(Շար. 75)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Մակի Գույումճեան, զաւակներն ու թոռները, Պ. Ալեքսանդր Գույումճեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Հոկտեմբեր 7, յետ պատարագի Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, իրենց ամուսնոյն, հօր, մեծ - հօր եւ եղբօր՝

ԱՐԹՕ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

Centre Culturel SAINT MESROB
A PARIS

Conférence - Débat

avec projection de diapositives sur le thème :

AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par

JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle

et

VINCENT TARAKDJIAN
Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris V[e]
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre - Cocktail —

UGAB — PARIS

VENEZ A LA RENCONTRE DE L'EMOTION...

Conférence musicale avec

YERSO

et JACQUES E. ROUSSELON
le vendredi 5 octobre à 20h30

A l'occasion de la sortie de son nouvel album CD **"ZARTONG"**, **Elise YEGHIGUIAN-OHANNESSIAN** alias **YERSO**, nous fait le grand plaisir de venir nous rendre visite pour une conférence musicale que vous n'êtes pas près d'oublier. Elle sera accompagnée de **Jacques-E. ROUSSELON**, son compositeur-arrangeur-producteur.

Au cours de cette conférence d'un genre nouveau, **YERSO**, nous racontera la genèse de cet album et nous interprètera, pour notre plus grand bonheur, quelques-unes de ses nouvelles chansons.

"ZARTONG", c'est l'album d'une chanteuse pas comme les autres, Yerso, qui a la particularité de chanter une terre, un pays dans lequel elle n'avait jamais mis les pieds jusqu'au tournage d'un documentaire en mai 2000. Ce pays, c'est l'Arménie, que ses parents ont fuie en 1923 avec sa sœur aînée alors âgée de quelques mois.

Nous vous attendons nombreux pour cette nouvelle conférence musicale, qui ne manquera pas de vous émouvoir et à l'issue de laquelle Yerso se fera un plaisir de vous dédicacer son album.

A bientôt pour ce nouveau rendez-vous passionnant.

P.A.F. : 30 F

UGAB
118, rue de Courcelles, 75017 Paris
(Métro : Courcelles)

Téléphone : 01 45 20 03 18
ou 01 42 27 12 26
E-mail : ugabfr@aol.com

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, Հոկտեմբեր 7,

ՓԱՐԻԶԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՕԾՄԱՆ

97-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Այս առթիւ, ժամը 10·30-ին Մայր Տաճարին մէջ կը մատուցուի հանդիսաւոր պատարագ եւ մատաղ կ'օրհնուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԳԻՍՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Կաթողիկոսական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի

Ի ժամու պատարագի, Գոհաբանական Մաղթանք կը կատարուի Մայր Եկեղեցւոյ ի կեանս եղող բարերարներուն եւ անոնց ընտանիքներուն արեւշատութեան համար:

Յաւարտ պատարագի Հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցաշէն բարերար Աղեքսանդր Մանթաշեանի, Մանթաշեան ընտանիքի եւ Մայր Տաճարի հանգուցեալ բարերարներուն համար:

Կը հրաւիրուին բոլորը, այդ օր, մասնակցելու Մայր Տաճարի 97-ամեակի այս տօնախմբութեան եւ շարունակելու արտայայտել իրենց հոգածութիւնը իրենց հոգեւոր Տան պայծառութեան հանդէպ:

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Vernissage
le Jeudi 11 octobre
à partir de 18 h 30

Exposition du 11 au 20 octobre
tous les jours
sauf le mardi et le dimanche

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Փարիզի Ս. Թադէոսեան մասնաճիւղի ժողովը Շաբաթ, Հոկտեմբեր 6, ժամը 14·30-ին, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ

17, rue Bleue — 75009 PARIS

Rentrée des classes

L'Ecole Hebdomadaire de Langue et de Culture Arméniennes **«KHATCHADOUR ABOVIAN»** de Marseille est heureuse de vous annoncer que

la RENTREE SCOLAIRE 2001-2002
aura lieu
le MERCREDI 10 OCTOBRE à 10 heures

Dans la Salle Ardzrouni TCHERPACHIAN du Centre Culturel SAHAK-MESROP 339, avenue du Prado, 13008 Marseille

Tous les mercredis de 10h à 16h des cours de langue et de culture arméniennes sont donnés ainsi que des cours de danse, de chant et d'éducation religieuse.

Pour tous renseignements et inscriptions les responsables de l'école tiendront une permanence

le Mercredi 10 octobre de 14h à 17

ou par téléphone
au Secrétariat de la Cathédrale :
04 91 77 84 70

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

LA CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
Section « S a t é n i g »
de Vaulx-en-Velin
organise

un Grand Bal

animé par le chanteur
MARTEN YORGANTZ
ET SON ORCHESTRE

le Samedi 6 octobre à partir de 20 h
au Centre Culturel **«Charlie Chaplin»**
Place de la Nation à Vaulx-en-Velin
(parking surveillé)

Bar et Buffet
de spécialités
arméniennes

— Entrée : 100 F —

Réservations :
04 78 80 22 53 / 04 72 04 80 90
ou 06 61 35 36 61

— • —

Journée de détente

La Croix Bleue d'Issy-les-Moulineaux vous propose une **Journée de Détente le Dimanche 14 OCTOBRE.**

La journée commencera par la visite du JARDIN DES SERRES d'AUTEUIL. Rendez-vous à la Maison de la Culture Arménienne, 45, rue de la Défense à Issy-les-Moulineaux, à partir de 9h15.

Le car partira à **9h30** et fera un arrêt à **9h45** devant l'Eglise apostolique arménienne, 6, avenue Bourgain.

Après la visite, le repas traditionnel sera servi au Châlet de Vaupéreux à BIEVRES et sera animé par le chanteur bien connu HOVIG.

Prière de se faire inscrire rapidement auprès des khatchouhies en s'adressant à :

Annick — Tél.: 01 47 36 18 09;
Alice — Tél.: 01 46 42 90 68;
Jacqueline — Tél.: 01 40 95 81 33
Dernier délai d'inscription: 10 Octobre.

— • —

La Section **«HELEN PUZANT» d'Alfortville**
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France

le Samedi 20 octobre à 20h30

Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville

avec l'Orchestre GAIDZAG'S
et attraction surprise...

Renseignements et réservations :
☎ **01 43 76 55 89**

"NAVASART" à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique

"NAVASART"

de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30
— Billets : 100 F. et 120 F.
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— • —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour du 29 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Dîner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 10 décembre
Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— **01. 42. 36. 33. 73** (la journée)
— **01. 46. 58. 03. 17** (le soir)

— • —

ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին առիթով, Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, Հոկտեմբեր 16, ժամը 20·30-ին, Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ Կրթարանի սրահին մէջ:

Կը դասախօսէ՝

ՆԵՐՍԷՀ Ծ. ՎՐԴ. ՊԱՊՈՒՃԵԱՆ

«Ե. դարու թարգմանիչ վարդապետներու հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը» նիւթին շուրջ:

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուրբ Մեսրոպ Մշակութային Միութեան Սուրբ Խաչ շաբաթօրեայ վարժարանը կը վերաբանայ իր դռները Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 14-էն 17, Սուրբ Խաչ Եկեղեցւոյ կից սենեակներուն ու սրահին մէջ

13, rue du Perche, 75003 Paris

5-էն 12 տարեկան աշակերտներու համար:

Կը դասաւանդուին հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, հայկական երգեր ու պարեր:

Արձանագրուելու համար, հեռաձայնել՝ 01 - 44 - 59 - 23 - 50 թիւին:

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

*
**

La Section «TER-DAVTIAN» de Chaville de la Croix Bleue des Arméniens de France organise

le Samedi 27 octobre
UNE SOIREE DANSANTE
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
88, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՇԱԲԱԹ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 6
SAMEDI
6 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.268

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20.268

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 4 / 5)

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Հայաստանի Համայնավար կուսակցութիւնը Հոկտեմբեր 4-ին հանրահաւաք մը ունեցած է Ազատութեան հրապարակին վրայ, քննարկելու համար երկրին ընկերատնտեսական վիճակը, Ռուսաստան – Բելառուս միութեան միանալու անհրաժեշտութիւնը: Ա. քարտուղար Վլ. Դարբինեան գոհունակութիւն յայտնած է Ռուսաստանի հետ վերջին օրերու մերձեցումէն: Հանրահաւաքին ընդունուած բանաձեւով մը դիմում եղած է Հանրապետութեան Նախագահին, վարչապետին ու անյապաղ բանակցութիւններու սկսին Ռուսաստան – Բելառուս միութեան անդամակցելու համար: Առաջարկուած է նաեւ տնտեսական յաջողագոյն ճիւղերու սեփականաշնորհումը դադրեցնել եւ վերականգնել խորհրդային շրջանի ընկերային համակարգը: Համայնավարները տեղին կը նկատեն որ Սահմանադրութիւնն ալ փոխուի, երկիրը խորհրդարանական ղեկավարում ունենայ, ուսուցումն ու բժշկական օգնութիւնը ձրի ըլլան, եւայլն:

***

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Գերմանիոյ Խորհրդարանին փոխ-նախագահ տիկին Ա. Ֆոլմերին Հոկտ. 4-ին հանդիպում մը ունեցած է Ազգ. Ժողովի նախագահ Ա. Խաչատրեանի հետ: Ան ըսած է թէ իր երկիրը մեծ հետաքրքրութեամբ կը հետեւի կովկասեան զարգացումներուն եւ տրամադիր է օգնելու այդ շրջանի հակամարտութիւններուն խաղաղ լուծումին: Տիկին Ֆոլմերին խնդրանքով Ա. Խաչատրեան յայտնած է Ղարաբաղի հարցին նկատմամբ Հայաստանի դիրքը: Քննարկուած են նաեւ այլ հարցեր:

***

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՆՈՐՎԵԿԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Եօրեայ այցով Երեւան գացած են Գաղթականներու հարցերու Նորվեկիական խորհուրդին գլխաւոր քարտուղարը Ս. Սոլլին եւ Նորվեկիացի 19 լրագրողներ: Անոնք հանդիպում կ'ունենան Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեանի, ՄԱԿ-ի Հայաստանի ներկայացուցիչներուն հետ: Այս կազմակերպութիւնը 1996-էն ի վեր կը գործադրէ Հայաստանի մէջ գաղթաշինութեան, նորոգութեան, մարդու իրաւունքներու բազմազան ծրագիրներ որոնց գումարը շուրջ 1,5 միլիոն տոլարի կը հասնի:

ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՕԳՆԱԿԱՆՆ ԱԼ ԱՐՏԱԳԱՂԹԱԾ

«Ազգ» օրաթերթը Հոկտ. 5-ի թիւով կը տեղեկացնէ թէ ԱՄՆ-էն քաղաքական ապաստանեալի կարգավիճակ ստացած է նախկին վարչապետ Արմէն Դարբինեանի օգնականը Նեկտար Խոջխոունի: Ան վարչապետին հրաժարումէն անմիջապէս ետք, 1999-ին ԱՄՆ մեկնած էր ուսանելու: Ներկայիս Կ'ապրի Նիւ – Եորք, մինչ իր հարազատները Երեւան են ու «յաջողութեամբ կը դրամին առեւտուրով» ինչպէս կ'ըսէ թերթը:

Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ Ն. Խոջխոունի քաղաքական հալածանքի ի՛նչ տարբերակով պատճառաբանած է ապաստանի իր դիմումը երբ մամուլը առաջին անգամն է որ կը նշէ իր անունը:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԹԵԼ-ԱՎԻՎ – ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿ ՏՈՒՊՈԼԵՒԸ ՋԱԽՋԱԽՈՒԵՑԱՒ ՍԵՒ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ

ԱՐԿԱ՞Ծ, ՈՃՐԱՓՈ՞ՐՁ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՍԽԱ՞Լ

ԿԱՐԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Սիբիրեան խոլայնգի Տուպոլեւ Տու 154-ը Թել – Ավիվի Պէն Կուրիոն օդակայանէն իր թռիչքը կ'առնէր, Հինգշաբթի, Հոկտ. 4-ի առաւօտեան 9.58-ին տեղական ժամով 76 կամ 78 հոգիով որոնց 12-ը անձնակազմի անդամներ էին: Ճամբորդներու մեծ մասը (57), ծագումով ռուս Իսրայէլացիներ, վերջերս միայն Իսրայէլ հաստատուած էին եւ Նովոսիբիրսկ կ'երթային, այցելութիւն մը տալու իրենց ազգականներուն: Քանի մը ժամ ետք, օդանաւը պայթում մը պիտի ունենար եւ Սեւ Ծով իյնար, հայկական օդանաւային գիծերու օդանաւին օդաչուին աչքերուն առջեւ: Ան անմիջապէս լուր կուտայ Հսկողութեան կեդրոնին, երբ 9000 մեթր բարձրութեան վրայ կը տեսնէ օդանաւին պայթումը: Արմէնիըն խոլայնգի պատասխանատու Կ. Յովհաննիսեան կը պատմէ. – «Օդաչուն բոցեր տեսած է: Շփման մէջ մտած է Հսկողութեան ցամաքային կեդրոններուն հետ տեղեկանալու համար թէ ռազմափորձեր կա՞ն: Այո, պայթում մը պատահած է եւ օդանաւին բեկորները ծովը ինկած են»: Օդաչուին տուած վկայութիւնը ոճրափորձի մը տարբերակութիւնը կու տայ, բայց, կը շեշտուի որ Թել – Ավիվի օդակայանը մէկն է անոնցմէ, ուր ամէնէն խիստ հակակշիռը կը կիրարկուի: Ճամբորդները, թռիչքի մեկնումէն 3 ժամ առաջ արդէն բոլոր ստուգումներուն ենթարկուած են: Երբ լուրը կը հասնէր Թէլ - Ավիվ, բոլոր թռիչքներու մեկնումները կ'առկախուէին, մինչ նոյն պահուն, իսրայէլացի ոստիկանի համազգեստով ծպտուած Պաղեստինցի մը կրակ կը բանար Իսրայէլի հիւսիսը Աֆուլա կայարանին ճամբորդներուն վրայ: Երեք հոգի մեռած է եւ 15 ուրիշներ ալ վիրաւորուած են, ոմանք ծանրօրէն: Պաղեստինցին սպաննուած է իսրայէլեան ոստիկաններուն կողմէ:

Ինչ կը վերաբերի ջախջախուած օդանաւին, Ուրբաթ առտու, Հոկտ. 5-ին, դեռ յստակ չէին պատահածին պատճառները: Առաջին առթիւ, Ամերիկացիք կը յայտնէին թէ Ղրիմէն ուկրանական զինուորական ուժեր, որոնք ռազմափորձեր կը կատարէին, սխալմամբ հրթիռ մը արձակած են օդանաւին ուղղութեամբ: Այս բացատրութիւնը հող չառած էր օդանաւին ջախջախումէն քանի մը ժամ ետք եւ Ռուսերն ալ հաստատած էին, երբ Ուկրանիա բացարձակապէս հերքեց: Ուկրանացիք կը պնդեն որ իրենց հրթիռներուն տարողութիւնը 10 քիլոմեթր է, մինչ օդանաւը 185 քիլոմեթր հեռու էր Ղրիմի ծովափէն: Այս հերքումը շատ համոզիչ չի թուիր, որովհետեւ նախընթացներ կան: Նոյն Ուկրանացիները այլ ռազմափորձերու ընթացքին սխալմամբ հրթիռ մը արձակած են տունի մը վրայ եւ երեք հոգի մեռած է: Այդ գետնին վրայ, ուկրանական ռազմական ուժերու համբաւը շատ լաւ չէ: Մնաց որ նման սխալներ ուկրանական մենաշնորհ չեն, 1988-ին ամերիկեան պատերազմական նաւու մը Օրմուզէն արձակած հրթիռները վար առած էին պարսկական օդանաւ մը եւ 290 ճամբորդներ մեռած էին:

Ուկրանական այս «վրիպումէն» զատ, կը մնան երկու այլ վարկածներ: Գլխաւորը կը վերաբերի ոճրափորձի մը, բայց, այդ ալ դրեթէ անկարելի կը համարուի Թել – Ավիվի օդակայանին խիստ հսկողութեան եւ քննութիւններուն պատճառաւ: Կայ նաեւ մարդկային սխալի մը վարկածը, չի հասկցուիր թէ ինչո՞ւ օդանաւը շեղած է իր բուն ճամբէն եւ գտնուած հոն, ուր պէտք չէ գտնուէր: Դեռ թեքնիք պատճառներն ալ կը յիշուին, ռուսական օդանաւները, ընդհանրապէս հին են, մաշած կազմածներով, բայց, այս Տուպոլեւը միայն 10 տարուան անցեալ ունէր եւ Սիբիր օդանաւային ընկերութիւնը լաւ համբաւ կը վայելէ:

Պուտին եւ Շարոն որոշեցին գործակցիլ եւ Ուրբաթ առտու (Հոկտեմբեր 5), ռուսական արդարադատութիւնը ոճրային քննութիւն մը կը բանար, որու Իսրայէլ պիտի մասնակցէր:

ՓԱՍՏԵ՞Ր ՊԷՆ ԼԱՏԷՆԻ ԴԷՄ

Այլեւս ճշդուած կը թուի ըլլալ որ Սեպտեմբեր 11-ի Նիւ – Եորքի եւ Ուաշինկթընի ոճրափորձերուն հեղինակը Պէն Լատէնն է, իր ցանցերուն միջոցաւ:

Թոնի Պլէր համոզուած էր արդէն եւ Հոկտեմբեր 4-ին փաստեր ալ ներկայացուցած է Խորհրդարանի մէկ արտակարգ նիստին: 21 էջնոց փաստաթուղթ մը կը բովանդակէ քննութիւններու արդիւնքները: Կը հաստատուի որ Պէն Լատէն «ուղեղն է», յայտնաբերուած են հեռաձայնային խօսակցութիւններ Սեպտեմբեր 9, 10-ին: Կարգ մը փաստեր, ըսած է Թոնի Պլէր, չեն կրնար հրապարակուիլ:

Նոյն օրը, Մոնփըլիէի մէջ, Շիրաք ալ իր համոզումը յայտնեց նոյն ուղղութեամբ: «Ամէն ինչ, ըսաւ Շիրաք, մատնանիշ կ'ընեն Պէն Լատէնը եւ իր ցանցերը ոճրափորձերու որպէս հեղինակները եւ հարկ է պատժել ոճրագործները»: Շիրաք կը ճշդէ սակայն. – «Մեր մասնակցութիւնը գործողութեան կ'ենթադրէ սակայն, որ մասնակցինք նպատակներուն եւ միջոցներուն սահմանումին»:

Ինչ որ ամէնէն յատկանշականն է, այն է որ Փաքիստան ալ այլեւս նոյն համոզումը ունի, ինչ որ ենթադրել կու տայ որ ԱՄՆ-ու ներկայացուցած փաստերը գոհացուցիչ եղած են: Ուրեմն, Փաքիստան Ամերիկայի կողքին է, բայց, շուզեր բոլորովին լքել Թալիպանները: Այս վերջինները եւ ժողովուրդը դիւրին դիւրին չեն կրնար համակերպիլ Փաքիստանի ամերիկամէտ քաղաքականութեան եւ կրնան վտանգաւոր կացութիւն մը ստեղծել երկրին մէջ:

***

Աֆղանիստանէն Փաքիստան գաղթականներու հոսքը կը շարունակուի ողբերգական պայմաններու մէջ: Մանուկներ, անօթի, հիւանդ, վիրաւորուած կը խճողեն հիւանդանոցները: Պուշ կ'ուզէ օգնել ժողովուրդին եւ 295 միլիոն տոլարի օժանդակութիւն մը պիտի տրուի: ՄԱԿ-ի համաձայն 6 միլիոն Աֆղաններ սովէ կը տառապին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՈՒՐՔԻՈՅ երեսփոխանները Սահմանադրութեան բարեփոխումը քուէարկեցին Հոկտեմբեր 3-ին, ինչ որ ողջունուեցաւ Եւրոպական Յանձնախումբին կողմէ, հակառակ անոր որ «ակնկալութիւններէն շատ հեռու կը մնայ», բազմաթիւ կէտերու շուրջ, որոնց կարգին մահապատիժը: Ազգային Ժողովը 16-ի դէմ 474 ձայնով քուէարկած է շարք մը սրբագրութիւններ, որոնց կարգին մահապատիժը, բացի պատերազմի առեն եւ ահաբեկչական արարքներու պարագային: Աւելի լայն գործածութիւն մը կը նախատեսուի քրտերէնի հանրային կեանքի մէջ: Աւելի պիտի դժուարանայ քաղաքական կուսակցութեանց արգելքը եւ կը ջնջուին կարգ մը սահմանափակումներ արտայայտութեան ազատութեան վերաբերեալ:

ԻՍՐԱՅԷԼ հակազդեց Հոկտեմբեր 4-ի ահաբեկչական արարքին (Աֆուլայի կայարանը) եւ Ուրբաթ առտու իսկ, Հեպրոնի մէջ 5 Պաղեստինցի սպաննեց, 45 ուրիշներ ալ վիրաւորուեցան: Իսրայէլեան 50 հրասայլեր Հեպրոն մտած են: Միւս կողմէ, Շարոն ազդարարութիւն մը ըրաւ Արեւմտեաններուն, շեշտելով. – «Իսրայէլ Չեխոսլովաքիա պիտի չըլլայ: Մի՛ փորձէք համաձայնիլ Արաբներուն հետ ի վնաս Իսրայէլի»:

ՔԱԲՈՒԼԻՈՅ ՄԷՋ, Ալժէի արեւելքը, ենթամահանգապետ մը եւ Հանրապետութեան դատախազ մը սպաննուած են Հոկտեմբեր 3-ի գիշերը զինեալ իսլամապաշտներու կողմէ:

ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՆ կ'առաջարկէ քանի մը հատորներ տրամադրել Իտալիոյ վարչապետին՝ Սիլվիօ Պէրլուսքոնիի իսլամական քաղաքակրթութեան մասին, որպէսզի զարգանայ եւ իր տեսակէտը փոխէ «արեւմտեան քաղաքակրթութեան գերազանցութեան» մասին:

ՄԱՄՈՒԼ

«FRANCE DIMANCHE»

(5/11 octobre)

CH. AZNAVOUR

DEVANT LE PAPE, IL N'A PU RETENIR SES LARMES D'EMOTION

Շաբաթաթերթը պատկերազարդ երկու ամբողջական էջեր նուիրած է Պապին Հայաստան այցելութեան, առաւելաբար, անշուշտ, Շ. Ազնաւուրի պատճառաւ, քան Յովհ.-Պօղոս Բ.ի:

Լրագրողը՝ Ժերար Ժիլպէր կը գրէ թէ Ազնաւուր կենդանի առասպել մըն է իր

(Շար.ը Դ. էջ)

ՎԱՂԸ՝

«ՅԱՌԱՋ - ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ»

Վաղը լոյս կը տեսնէ «Յառաջ – Միտք եւ Արուեստ»ի նոր (274) թիւը հետեւեալ բովանդակութեամբ. –

Մարինէ Պետրոսեան՝
Հայաստանի ծովափին
ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

Երեւանը մեծ քաղաք է
ՄԱՐԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Quelques propos au sujet
de la première édition
de l'Armenian Jazz Festival
LILIANE DARONIAN

Le Fauteuil d'Orchestre
EDOUARD EXERJEAN

Aïda Kazarian :
Le rythme de l'iris
CHAKE MATOSSIAN

ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՊՈԼՍՈՅ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ինչպէս յայտարարուած էր, Սեպտ. 23 – 25 Պոլսոյ մէջ տեղի ունեցաւ Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբին հերթական հանդիպումը. ոչ նշուած օրերուն, ոչ ալ յաջորդներուն տեղական հայկական կամ թրքական մամուլի մեր տեսած անունները կարեւոր արձագանգ տուին հանդիպումին միջուկին մասին: «Մարմարա»ն Սեպտ. 26–ի թիւով ամփոփ տեղեկատուութիւն մը կ'ընէր («Յառաջ», Սեպտ. 28), աւելի ծանրանալով պատրիարքարանի ընդունելութեան վրայ: «Արմէնփրէս»ի Սեպտ. 28ի լրաշարը տեղ տուած էր յանձնախումբին կողմէ հանդիպումին աւարտին հրապարակուած Յայտարարութեան մը լուրին, մէկ–երկու նախադասութեամբ մէջբերումներ ալ ընելով անկէ:

Հոկտ. 2–ին հասած «Ակօս» շաբաթաթերթը խմբագրապետ Հրանդ Տինքի գրիչով ամբողջ էջ մը յատկացուցած էր հանդիպումին, կցելով Սեպտ. 25–ի Յայտարարութեան պատճէնն ալ: Հանդիպումներուն փուլերուն ներկայ չգտնուելով հանդերձ, Հ. Տինք յանձնախումբին հայ անդամներուն հետ ունեցած զրոյցներէն բաւական հետաքրքրական տպաւորութիւններ քաղած է, որոնք իրեն տեղին մատնանշումներ ընելու եւ եզրակացութիւններու յանգելու կարելիութիւն կու տան:

Առաջին մատնանշումը այն է որ յանձնախումբը վերջերս հայկական շրջանակներու մէջ քննարկումի, բանավէճի գլխաւոր նիւթը դարձած է եւ «պէտք է խոստովանիլ որ նախաձեռնութեան համակրանքով մօտեցողներու թիւը ընդդիմացողներու թիւէն բաւական ցած է»: Այս շեշտումը հայկական լայն շրջանակներու ծանօթ ըլլալով հանդերձ, կ'արժէ արձանագրել որպէս գլխաւոր փաստ «Ակօս»ի խմբագրապետին անկախ ու ինքնուրոյն մօտեցումին. քանի որ տրուած տեղեկութիւնները գրեթէ ամբողջութեամբ հիմնուած են յանձնախումբին հայ անդամներուն հետ զրոյցներու վրայ, ան կրնար այդ պարագան ալ ներկայացնել անոնց տեսանկիւնէն. այլ խօսքով՝ կրնար կրկնել թէ հայութիւնը մեծամասնութեամբ դրական վերաբերում ունի, իրենց ըրածին զօրավիգ է, եւլն.: Արտայայտութիւններ որոնք քանիցս լսուեցան նոյն քառեակէն:

Նախաձեռնութեան մասին Հ. Տինքի միւս մատնանշումն ալ այն է որ թուրք հանրային կարծիքը, հակառակ ըլլալով Հայերուն, որպէս շատ սովորական երեւոյթ, անտարբեր մնաց, Թուրքիոյ «բազէ»ներն ալ ակնկալուած աղմուկ–աղաղակը չբարձրացուցին: Իսկ անցնելէ առաջ իր հայ խօսակիցներէն քաղածներուն, ան հարկը կը զգայ ընթերցողին յիշեցնելու թէ նման հանդիպումներու շատ բաներու մասին կը խօսուի, սակայն քիչ բան կարելի կ'ըլլայ գրել:

Գրուելիք կէտերէն առաջին երկուքը կը վերաբերին հայ մասնակիցներէն երեքին անդրադարձներուն. Վ. Գրիգորեան եւ Ա. Միհրանեան նկատած են որ թուրք հանրութեան մօտ ցեղասպանութեան նման Հայերն ու Թուրքերը բաժնող նիւթերու մասին իրենց կարծածէն աւելի լայն տարբերակումներ կան. ատիկա հետեւցնել կու տայ թէ աւելի սերտ յարաբերութիւններ հարկ է մշակել թէ՛ հանրութեան, թէ՛ պետութեան հետ:

Գրեթէ նոյն կարծիքը յայտնած է Դ. Յովհաննիսեան, խօսքը մասնաւորելով թուրք մտաւորականներու ընտրանիին. «Անոնք մեր հիմնական հարցերուն, յատկապէս ցեղասպանութեան մասին մեզմէ բաւական տարբեր տեսակէտներու տէր են» կ'ըսէ ան, աւելցնելով որ Պոլսոյ հանդիպումին նիւթ եղած է մասնաւորաբար ցեղասպանութեան մասին թուրք ընկերութեան առջեւ բաց ուսումնասիրութիւններ ընելու պարտաւորութիւնը:

Հ. Տինք իր գրութեան մէջ կը կրկնէ թէ «յոգնած, պարտասած» գտած է իր խօսակիցները. մարմնական չէ այդ յոգնութիւնը, այլ՝ հետեւանք յանձնախումբէն ներս արձանագրուած գաղափարական բախումներու: Կ'ըսէ թէ լաւատեղեակ են որ ժողովները միշտ յարգալիր նրբանկատութեան, սիրալիր փոխանակումներու մթնոլորտի մը մէջ չեն գումարուիր: «Երբեմն, շատ շեշտակի եւ բացայայտօրէն արտայայտուած գաղափարներ, համոզումներ կրնան լարուած, դժուարին պահեր ստեղծել»: Այդ եղած է պարագան, օրինակ, Սեպտ. 24–ի յետմիջօրէին Անգարայի «Հայկական ուսումնասիրութիւններու հիմնարկ»ին տնօրէն Եօ. Է. Լիւթէմի եւ քաղաքական գիտութիւններու փրոֆ. Մ. Սոյսալի հետ գումարուած ժողովին: «Ծանուցուած այլ թուրք անձնաւորութիւններ մասնակցած չըլլալով հանդերձ անոր, յիշեալ երկու դէմքերուն յատկապէս ցեղասպանութեան մասին արտայայտած պաշտօնական տեսակէտները լայնօրէն բաւած են հայ անդամներուն հասկցնելու թէ ի՛նչ է Թուրքիոյ իրականութիւնը» կը գրէ Հ. Տինք:

Յայտնապէս, եռօրեային ընթացքին ներքին սպառող հաշուեյարդարի մը պատճառ եղած է թուրք անդամներէն Սանպէրքի ծանօթ յայտարարութիւնը թէ յանձնախումբին կազմութեան գլխաւոր նպատակը ցեղասպանութեան ճանաչումի ջանքերը խոչընդոտելն էր: Հայկական կողմը խստիւ քննադատած է այդ յայտարարութիւնը: Եւ հաւանաբար այդ կողմը գոհ է իր քննադատութենէն, քանի որ եռօրեային վերջին օրը հրապարակուած միասնական Յայտարարութեան մէջ տեղ գտած է այդ կէտը... Հետեւեալ ձեւով. «Յանձնախումբը կ'ընդունի որ իր անդամներուն վերագրուած որոշ բացատրութիւններ պատճառ եղած են սխալ ընկալումներու, զորս հարթելու ջանք կը տարուի»: Իսկապէս շատ յստակ ու անկեղծօրէն կատարուած բանաձեւում. կարդացողը եթէ տեղեակ չէ այդ խոհանոցին, շատ դիւրութեամբ ու իրաւացի կերպով կրնայ կարծել որ խօսքը հայ անդամներէն մէկուն կամ միւսին վերագրուած սա կամ նա բացատրութեան մասին է եւ անոնք են որ սխալ հասկացողութեան տեղի տուած են, կացութիւնը սրբագրելու տարհապարակ աշխատանք մըն ալ պարտադրելով արդէն ծանրաբեռնուած օրակարգով ժողովներուն:

«ՍՏԱՑՈՒԱԾ ԴԱՍԸ»

Այս ենթախորագիրով Հ. Տինք կը խօսի այն հաւանական դասին մասին զոր ստացած պէտք է ըլլան հայ անդամները: Ահա, լման այդ պարբերութիւնը, թարգմանաբար.

«Թուրքիոյ մէջ, Հայկական հարցին մասին, անկարելի է որ որեւէ քաղաքացիական կազմակերպութիւն պետական տեսակէտէն անկախ, ինքնուրոյն թեզ մը զարգացնէ: Այս ուղղութեամբ պետութեան ճնշումը ա՛յն աստիճան հզօր է որ նման թեզի ո՛չ նպատակը, ո՛չ ալ յանդգնութիւնը ունենալ կարելի կ'ըլլայ: Նոյն ձեւով՝ որպէս անհատ, մտաւորականներն ալ կացութեան մը մէջ են որ կը ցոլացնէ ընկերութեան պետութեան կողմէ պաշարումը: Յարմար դատուածը կը կրկնեն որպէս պատասխան, ո՛չ կը մտածեն, ո՛չ ալ կը փորձեն պետութեան թեզին սահմաններէն դուրս ելլել: Իսկ նման բան փորձողները արդէն թէ՛ պետութեան, թէ՛ ընկերութեան կողմէ անմիջապէս կը մերժուին»:

Գրութեան վերջին մասին մէջ Հ. Տինք կրկին կ'անդրադառնայ թրքական լրատուներու պահած լռութեան, անտարբերութեան. ուշադրութիւնը դրաւած է յատկապէս Սեպտ. 25–ի ճաշը որուն հրաւիրեալ 37 լրագրողներէն միայն եօթը ներկայ գտնուած են: Իր տպաւորութիւնը այն է որ այդ անտարբերութիւնը խորքին մէջ նախընտրելի բան է: Նոյն երեւոյթը պարզուած է յանձնախումբին ու հայ համայնքին շփումներով ալ. նախապէս ծրագրուած ըլլալով հանդերձ, տեղի չեն ունեցած Սեպտ. 25–ին Կեդրոնական վարժարան այցն ու Պատրիարքին հետ հանդիպումը, նաեւ յաջորդ օրուան Ս. Փրկիչ հիւանդանոց այցը: Միայն իրականացած է վերջին երեկոյեան Պատրիարքին ու անոր խորհրդականներուն հետ ընթրիքը:

Գրուեցաւ արդէն թէ յաջորդ հանդիպումին համար որոշուած վայրը Նիւ–Եորքն է (Նոյ. 18–21): Յանձնախումբը հոն առիթ պիտի ունենայ շփումներու այն հիմնարկին հետ որ յաջողութիւն արձանագրած է Հարաւային Ափրիկէի ցեղապաշտութեան դէմ պայքարին մէջ: Այդ շփումները նպատակ պիտի հետապնդեն այդ փորձառութենէն օգտուելու:

Ինչ կը վերաբերի միասնական Յայտարարութեան, հետաքրքրական կէտեր են հետեւեալները.

— Յանձնախումբը՝ արժեւորեց իրեն դէմ Հայաստանի, Թուրքիոյ եւ միջազգային լրատուներու հակազդեցութիւնները,
— Հաշտութեան մասին իրարմէ տարբեր մօտեցումներու ներկայացուցիչ մտաւորականներու, ակադեմականներու, պրպտողներու, լրատուներու, գործի մարդոց, մշակոյթի մասնագէտներու հետ հանդիպում ունեցաւ:
— Վիճարկեց Հայերու եւ Թուրքերու միջեւ փոխադարձ ընկալումներն ու ակընկալութիւնները,
— Իր գործունէութեան առընչուած «ներքին» վէճեր ունեցաւ,
— Որոշեց հայ անդամներու թիւը աւելցնել,
— Վիճարկեց քաղաքական թելադրանքներ բանաձեւելու նիւթը,
— Համաձայնութեան յանգեցաւ քարտուղարութիւն մը եւ համացանցին վրայ կայքէջ մը ունենալու մասին:

Գոնէ հայկական շրջանակներու մեծագոյն մասին համար նորութեան բնոյթով բան չկայ ամբողջ էջին մէջ: Այսուհանդերձ, հետաքրքրական է տեսնել որ իրարմէ հեռու, անջատ անկիւններու եզրակացութիւնները նման են իրարու:

Յանձնաժողովին գործունէութեան յաջորդական արձագանգներուն մէջ մինչեւ հիմա տեղ չգտաւ պիւտճէի նիւթը: Լաւ պիտի ըլլար այս մասին ալ անկեղծ տեղեկութիւն ստանալ յարմար առիթով մը, որպէսզի լուսաբանուէին տակաւին մութ մնացած մէկ–երկու կէտեր:

Ամփոփեց՝
ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԴԱՍ ԻՇԽԱՆԱՒՈՐՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾ ՄԸ

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐԵԱՆ

Իր Սեպտեմբեր 11–ի թիւով թրքական «Ջաման» օրաթերթը կը տեղեկացնէր թէ Թուրքիոյ ընդհանուր ապահովութեան փոխ–տնօրէն Էյիւպ Շահին վերջերս նոր թուրքերէնով վերահրատարակած է ռուս զօրավար Վլատիմիր Մայեվսքիի ընդարձակ մէկ տեղեկագիրը, որ կ'առընչուի 19–րդ դարու վերջին տասնամեակին տեղի ունեցած համիտեան ջարդերուն եւ Թրքահայաստանի, յատկապէս Վան եւ Բաղէշ (Պիթլիս) նահանգներու, հայ բնակչութեան ազգագրական եւ վիճակագրական տուեալներուն: Ըստ նոյն յօդուածին, հրատարակութիւնը տնօրինած եւ հսկած է զօրավար Օսման Սոլաքօղլու, որ նախագահն է թրքական Սպայակոյտին ենթակայ՝ «Ռազմական պատմութեան եւ Ռազմավարական Ուսումնասիրութիւններու Կեդրոն»ին: Անդրադառնալով այս գործին, Ահմէթ Կիւնէշ գրած է յօդուած մը այդ թերթին մէջ, ուր որոշ բացատրութիւններ տալէ յետոյ կ'եզրակացընէ, որ «այսպէս կոչուած հայկական ցեղասպանութեան» պնդումները անհիմն են եւ թէ Հայերն են որ գրգռիչ արարքներով կոտորածներու եւ հակամարտութիւններու պատճառ դարձած են:

Բայց արդէն հոս մարդ անմիջապէս կրնայ ստուգել թէ որքա՛ն վստահելի են թուրք լրագրողները: «Ջաման»ի յօդուածագիրը չի յայտներ երբեք իր ընթերցողներուն, որ Մայեվսքիի տեղեկագիրը միայն ու միայն կ'առընչուի 1896 – 1998–ի դէպքերուն եւ տուեալներուն, գրուած է այդ թուականներուն, եւ որեւէ կապ չունի 20 տարի յետոյ տեղի ունեցած տեղահանութեան եւ ջարդի դէպքերուն հետ: Յօդուածը շարադրուած է այնպէս մը, որ եթէ թուրք ընթերցողը անտեղեակ է պատմութեան, պիտի համոզուի, որ ռուս զօրավար մը ոչ միայն կը ժխտէ հայկական ցեղասպանութիւնը, այլ եւ Հայերը յանցապարտ կը նկատէ:

Գալով տեղեկագրին ծագումին, պատմութեան, եւ բովանդակութեան, կացութիւնը «Ջաման»ի մէջ ներկայացուածէն բաւական տարբեր է: Վերոյիշեալ թուականներուն Մայեվսքի, որ այն ատեն Սպայակոյտի գնդապետի աստիճան ունէր, 5 տարի հիւպատոսի պաշտօն վարեց Վանի եւ Կարինի մէջ, եւ 1913–ին կարճ ժամանակի մը համար Տրապիզոնի մէջ: Իր պրպտումները կատարուած էին ռուսական սպայակոյտին համար եւ հետեւաբար տեղեկագիրը «գաղտնի» պիտակը կը կրէր: Բայց Առաջին ընդհանուր պատերազմին պայթելէն քիչ առաջ, թրքական Յատուկ կազմակերպութեան լրտեսական բաժինը ձեւով մը ձեռք ձգած էր զայն: Որով, թրքական Սպայակոյտի Բ. բաժնի գործիչներէն հեծելազօրային հազարապետ Մէհմէտ Սատըք զայն օսմաներէնի թարգմանեց: Երբ Առաջին ընդհանուր պատերազմին նախօրեակին Վան եւ Բաղէշ նահանգներու համար բարձրաստիճան սպաներ պաշտօնի կը կոչուէին, հազարապետ Սատըքի թարգմանութենէն ամէնուն մէյ մէկ օրինակ կը տրուէր քաղաքականօրէն «կողմնորոշուելու» համար: Ասոր կողքին, նոյն Սպայակոյտի բաժնի վարիչները Սատըքի թարգմանութիւնը այս անգամ ֆրանսերէնի թարգմանել տուին եւ օրինակներ Պերլին ղրկեցին, Գերմանիա եւ այլուր բաժնելու համար: Նկատելի է, որ այս վարիչները ռուսերէն բնագիրը անտես առին եւ մէկ թարգմանութենէն անցան ուրիշ թարգմանութեան: Շուտով յայտնի եղաւ սակայն, որ սա նպատակաւոր էր: Գերմանիոյ թուրք դեսպանը փոխանցած էր այս ֆրանսերէն օրինակները գերման Արտաքին գործոց նախարարութեան, նշելով որ ներկայացուած թարգմանութիւնը կատարուած էր «խնամքով» (soigneusement):

Գերմանիոյ Արտաքին գործոց նախարարութիւնը սակայն, յանձին փրոֆէսէօր Օյկէն Միթվօխի, որ այդ նախարարութեան Քարոզչութեան բաժնի տնօրէնն էր այն ատեն, հրաւիրեց օսմանագէտ եւ իսլամաբան գերմանացի փրոֆ. Մարթին Հարթմանը, որ վաւերացնէ թարգմանութեան ճշգրտութիւնը: Երբ փրոֆ. Հարթման բաղդատականներ ըրաւ, նախ համեմատելով ֆրանսերէնը ռուսական բնագրին եւ յետոյ թրքականը ռուսերէն բնագրին հետ, անմիջապէս նկատեց անկանոնութիւններ եւ անճշդութիւններ:

Նախ, ֆրանսերէնը յար եւ նման էր թրքերէն թարգմանութեան, բայց երկուքն ալ, թէ՛ թրքերէնը եւ թէ՛ ֆրանսերէնը շատ մը տեղեր չէին համապատասխաներ ռուսերէն բնագրին: Զոր օրինակ, շատ մը ռուսերէն պարբերութիւններ բացառուած էին. յետոյ ան ֆրանսերէն թարգմանութեան մէջ գտաւ նախադասութիւններ, որոնք ռուսերէնին մէջ գոյութիւն չունէին. ուրիշ խօսքով Մայեվսքիին վերագրուած էին խօսքեր զոր ան չէր արտայայտած: Վերջապէս փրոֆ. Հարթման ստիպուեցաւ տեղեկացնել գերման Արտաքին նախարարութեան, որ «ռուսական բնագրէն թարգմանուած մասերը անկապ արտայայտութիւններ են, որոնք ոչինչ կ'ապացուցանեն. ատոնց խարդախութիւն մը ըլլալը չի բացառուիր, ֆրանսերէն թարգմանութիւնը արժէքէ զուրկ է (wertlos):

Ուրեմն յայտնի կ'ըլլայ որ գաղտնի գործակալ եւ սպայ Սատըք կեղծումի դիմած է, որուն յաջողութեան համար յաւելեալ քայլ մըն ալ առնելով ոչ–թուրքերուն ֆրանսերէն թարգմանութիւնը մատուցած է ուր կ'արտացոլան իր օսմաներէն թարգմանութեան բոլոր խախտումները: Իր եզրակացութեան մէջ

փրոֆէսօր Հարթման կը շեշտէ, որ Մաքսվելի տեղեկագրին այս խարդախ ներկայացումը «կը միտի Հայերը դիտումնաւոր կերպով արդարացնելու. բացայայտ է, որ սա քարոզչութեան անճարակ փորձ մըն է արդարացնելու համար Թուրքերու 1895 – 1896-ի ահաւոր վայրագութիւնները Ռուսի մը բերնով»։

Այս առիթով հարկ է կանգ առնել ուրիշ նման թարգմանութեան մը վրայ, որ նոյն պատկերը կը ներկայացնէ։ Հարցը կը վերաբերի 1918-ին ռուս փոխ – գնդապետի մը հրապարակած նման գործի մը թրքերէնի թարգմանութեան։ Երբ բոլշեւիզմը պայթեցաւ եւ ռուսական հսկայ բանակը, որ 1917-ին մխրճուած էր Թուրքիոյ սիրտը, գրաւելով Կարինը, Երզնկան եւ Տրապիզոնը, շուտով շոգիացաւ, կարգ մը ռուս բանակայինները մնացին Կարինի բերդը, իբր թէ օգնելու համար Անդրանիկի հրամանատարութեան տակ կազմուող հայ կամաւորներու զինախումբերուն։ Ասոնցմէ էր Թվէրտօ – Խլէպօֆ սպան, որ իր գործով այպանեց Հայերը իբրեւ վայրագ ջարդարարներ եւ այդ շրջանի Թուրքերը ներկայացուց իբրեւ անմեղ զոհեր։ Իր գրքոյկը առկէ ի վեր սուրբ գրքի պէս կը փայփայուի եւ շարունակ կը յիշատակուի Թուրք հեղինակներու կողմէ։ Թուրք զօրավար Քէազըմ Գարապէքիր զայն մանրամասն կը նկարագրէ եւ կը յիշէ իր բոլոր գործերուն մէջ։ Նոյնիսկ Թալէաթի յետ–մահու հրատարակուած յուշերուն մէջ լայն տեղ տրուած է Թվէրտօ–Խլէպօֆի ամբաստանութիւններուն։ Երբ սուլթանական կառավարութեան պատուիրակութիւնը Փարիզի հաշտութեան վեհաժողովին ներկայացաւ լսելու համար յաղթական դաշնակիցներու հաշտութեան պայմանները, իրենց ինքնապաշտպանութեան յուշագրին մէջ լայն տեղ տրուած էր այս սպային վկայութիւններուն։

Յետագայ պրպտումները ցոյց տուին սակայն, որ հոս ալ դիտումնաւոր եւ կողմնակալ սուտ վկայութիւններու մեծ բաժին մը կայ այդ գործին մէջ։ Նախ եւ առաջ ստուգուեցաւ որ այդ ռուս սպան ծագումով ազերի թաթար մըն է, որ ճանչցուած է իբրեւ Թրքասէր սպայ մը. յետոյ, ըստ զօրավար Սեպուհի Յուշերուն (հատոր 2, էջեր 31, 68 – 69), ան սերտ կապի մէջ էր ուրիշ ազերիի մը հետ, Սէյիտօֆ անունով, որ յատկապէս Կարին եկած էր հակահայ գրգռութիւններ ընելու, եւ մխանգամայն լրտեսելու։ Զօրավար Անդրանիկի թիկնապահը նոյնպէս կը յայտնաբերէ, որ Խլէպօֆ Թրքական տուներու մէջ բնակութիւն հաստատած էր եւ կաշառուելով անցած էր Թուրքերուն զինուորապէս աջակցելու գործին, որով իր հրետանին գործածած էր ընդդէմ հայ կամաւորներու։ Իսկ գալով իր Յուշերուն, անոնք գրուած էին երբ ան Թրքական Սպայակոյտին հսկողութեան տակ էր։

Այս երկու պարագաներու ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ թէ ի՞նչեր կարելի է ակնկալել Թրքական արխիւներու պարունակած այն փաստաթուղթերու թղթածրարներէն, որոնք կ՚առնչըուին հայկական հարցին եւ յատկապէս հայկական ցեղասպանութեան։ Պատմաբաններու որեւէ խմբակ կամ յանձնախումբ, որուն պարտականութիւն կը տրուի անաչառօրէն պրպտել նաեւ Թրքական արխիւները եւ որոնել փաստեր ցեղասպանութեան պնդումներու հարցը լուծելու յոյսով, պէտք չէ երբեք մտահան ընէ այս երկու պարագաներու թելադրած ակնբախ դասը։ Վերջապէս ուրիշ ի՞նչ կարելի է ակնկալել կողմէ մը, որ խնդրոյ առարկայ ոճիրին հեղինակներուն հետ, տակաւին անքակտելիօրէն կը բաժնէ ազգային ինքնութիւնը։

Վ. Տ.

ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂ ՄԸ ՄԵՆԱՄԱՐՏԻ ԿԸ ՀՐԱՒԻՐԷ ՖՐԱՆՍԱՆ

Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթը (Սեպտեմբեր 28) կը տեղեկացնէ թէ Թուրք լրագրող Սէֆա Գոյունճու ցեղասպանութեան եւ յատկապէս անոր Ֆրանսայի կողմէ ճանաչումին մասին հատոր մը հրատարակած է, «Տոն Քիշոթեան ախտանշանը Հայերու ցեղասպանութեան կատակերգութիւնը» խորագրով։ Լրագրողը որ մաս կը կազմէ ազգայնական հակումով ծանօթ «Թիւրքիյէ» օրաթերթին խմբագրութեան, մեծ նմանութիւններ կը տեսնէ «Հայերու ցեղասպանութեան կատակերգութիւնը բեմադրողներու եւ հոլմաղացներու դէմ կռիւի ելած յիմար փախուկ մարդուն միջեւ»։ Պատճառը այն է որ առաջիններն ալ որոնց գըլխաւորը կը նկատուի «Ցետարդիական Տոն Քիշոթը՝ Ժագ Շիրաք» օրէնք մը քուէարկած են. ապա իրենք ալ չեն կըրցած իմաստ մը տալ անոր։ Գիրքին խորագիրը կ՚ուզէ շեշտել նմանութիւնը որ կայ Սէրվանթէսի հերոսներուն հիւանդագին հոգեբանութեան եւ Ֆրանսացի օրէնսդիրներուն միջեւ։

Ս. Գոյունճու այդ հատորին մէջ ուր մենամարտի հրաւէր կ՚ուղղէ Ֆրանսայի, մէկտեղած է նիւթին մասին իր յօդուածները եւ այլ թերթերէ քաղուած լուրեր։ Բնականաբար ներկայ է անշրջանցելին. «մենք չէինք, մենք չըրինք»ը։ «Ձեզ կը վստահեցնեմ որ մենք՝ Թուրքերս, ոչընչացնելու մտադրութեամբ միակ Հայ մը իսկ չսպաննեցինք։ Միշտ մենք սպաննուեցանք» կ՚ըսէ հեղինակը. այս պնդումին որպէս փաստ ալ կը յիշէ հետեւեալ դրուագը. Գոնիայի իր գաւառակին մէջ մինչեւ այսօր կը գործածուի «Հա՛յ» (էրմանը) բառը, որակելու համար աւերը, անառակները, դէշերը։ «Ոճրագործներու, ահաբեկիչներու, աւազակներու համար «Վա՛յ էրմանը, վա՛յ» կ՚ըսուի» կը գրէ Գոյունճու, ապա կը բացատրէ որ Գոնիայի մէջ Հայերու ծանօթ կարեւոր կոտորած տեղի չէ ունեցած. հայկական հրոսակներ իրենց տեղափոխութիւններուն ընթացքին ճամբուն վըրայի գիւղերն ու աւանները կը թալանեն եղեր, այդքան։ Դար մը ետք, այսօր իսկ գործածուած «Վա՛յ էրմանը, վա՛յ»ասութիւնն ալ Թուրք ժողովուրդին վրայ խոր հետքեր ձգած այն դառն օրերուն յիշատակն է։

ՀԱՅԱՍՏԱՆ

ՖՐԱՆՍԱՅԷՆ ՑՈՐԵՆ ԵՒ ԱԼԻՒՐ

Երաշտին հետեւանքները դարմանելու համար Ֆրանսայի կառավարութեան տրամադրած 250 թոն սերմնացու ցորենը մօտ օրէն Հայաստան կը փոխադրուի։ Անցեալ տարի Ֆրանսա նոյն նպատակով 6 հազար թոն ալիւր տրամադրած էր, իսկ այս տարուան առաջին կէսին 3·650 թոն։

***

ՎԻՊԱԳԻՐԸ ՆՈՅՆ ԿԱՐԾԻՔԸ ՉՈՒՆԻ

Թերթին նոյն թիւին մէջ, «Միլլիյէթ» օրաթերթին Սեպտ. 23-ի կիրակնօրեայ յաւելուածէն ժամանակակից Թուրք ծանօթ վիպագիր Օրհան Փամուքի հետ կատարուած զրոյցին ալ ակնարկութիւն մը կայ։ Զրուցավարը երբ հարց կու տայ ամերիկացի քննադատներէ գտած ընդունելութեան մասին, վիպագիրը կ՚ըսէ թէ հոն հատորի մը յաջողութիւնը գրեթէ ամբողջապէս կախում ունի քանի մը ծանօթ քննադատի արժեւորումէն, ինչ որ անառարկելի չափանիշ կը նկատուի։ Այդ մարդիկը հանրային ճաշակ ձեւաւորողներ են ու այդ երեւոյթին առջեւ կարելի չէ ժողովրդավարութեան մասին խօսիլ։ Ինք նախորդ երկու վէպերուն՝ «Նոր կեանք»ին ու «Սեւ գիրք»ին մասին ժխտական արժեւորում ստացած է այդ շրջանակէն. «այդ քննադատները հայկական կոտորածներու մասին հրատարակութիւններու տէր անձեր էին» կ՚ըսէ Օրհան Փամուք, առիթը իր անբախտութիւնը կոչելով։ Ապա կը շարունակէ. «Չեմ ըսեր թէ այդ մարդիկը ինծի հանդէպ շատ նախապաշարումներ ունէին։ Սակայն, լաւ չքննադատեցին գիրքերս։ Ու բերնիս մէջ դառն համ մը մնաց անկէ։ Ոչ ոքի կրցայ այս մասին խօսիլ, որովհետեւ կը հաւատամ թէ Թուրքիոյ անցեալին մէջ այդ տեսակի մութ բան մը կայ»։

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄ

Սեպտեմբեր 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եպիսկոպոս օծած է չորս առաջնորդ վարդապետներ. առաջինը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս Վրդ. Ներսիսեանն է, երկրորդը՝ Արմաւիրի թեմի առաջնորդ Սիոն Վրդ. Ադամեանը, երրորդը՝ Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Ծ. Վրդ. Աջապահեանը եւ չորրորդը՝ Հարաւային Ռուսաստանի թեմի առաջնորդ Մովսէս Վրդ. Մովսիսեանը։

Արարողութեան ընթացքին նորօծ եպիսկոպոսներուն յանձնուած են եպիսկոպոսական իշխանութեան խորհրդանիշերը. գաւազան, մատանի, Աւետարան։ Անոնց տրուած են նաեւ եպիսկոպոսական զգեստաւորումի մաս կազմող եմիփորոններ։ Գարեգին Բ. յաւարտ պատարագի տեղի ունեցած ընդունելութեան ընթացքին անոնց նուիրած է պանակէներ։

ԳՈՂԳՈԹԷԷ ԳՈՂԳՈԹ

ՊԷՅՐՈՒԹԻ «Թուչնոց Բոյն»ի շրջափակին մէջ, Սեպտեմբեր 11-ին, տեղի ունեցած է Թուչնոց Բոյնի տարեկան փառատօնին բացումը, հովանաւորութեամբ նախարար՝ Ժան - Լուի Քըրտահիի։ Բոյնին հիմնադրութեան 80-ամեակին առթիւ, տեղի ունեցած է Մարիա Եաքոպսընի շիրիմին շուրջ ծաղկեպսակի զետեղում եւ մոմավառութիւն, ապա բարի գալուստի խօսք արտասանած է փառատօնի յանձնախումբի ատենապետը՝ տոքթոր Յակոբ Կարապետեան, իսկ նախարարը կատարած է ձեռնարկին բացումը։ Փառատօնի օրերուն հանդէս եկած են լիբանահայ արուեստագէտներ, երգերով, նուագով, երգչախումբով։ Փառատօնի փակման հանդիսութիւնը տեղի ունեցած է Կիրակի, Սեպտեմբեր 16-ին, երեկոյեան ժամը 9·30-ին Խաչվերացի թափորով։

***

ՄՈՆՐԷԱԼԻ Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ, Սեպտեմբեր 19-ին, 1700-ամեակի լաարանին 5-րդ դասախօսութիւնը տրուած է, որուն նիւթն էր «Պայքար հաւատքի եւ խղճի ազատութեան համար Վարդանացէն Նուարսակ»։ Դասախօսը եղած է Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Շահէ Ծ. Վրդ. Փանոսեան։ Նախքան դասախօսութիւնը, Առաջնորդական Փոխանորդ Խաժակ Եպիսկոպոս Յակոբեան ներկայացուցած է դասախօսը։

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐՇԱՒԻՐ ԵԱՍԵԱՆ

– Լաւ ուրեմն, - ըսաւ Արշակ, - Տրդատին եւ իր ընկերներուն փափաքն էր տանդ տեղը սորվիլ եւ ասոր համար ինծի հետ յարաբերութեան մտած էր եւ նոյնիսկ դրամական պարգեւներ տուած։ Եթէ քու բնակարանդ գիտնային՝ ի՞նչ պէտք ունէին ինծի կաշառել ջանալու. ուստի կը հետեւցնեմ, որ մահափորձը ընողները ձեր կասկածած հնչակեանները չեն։

Արշակի խօսքերը ա՛յնչափ տրամաբանական էին, որ Ճէմալ պէյ շատ արդարացի գտաւ ըսածները, իսկ Արշաւիր լռութիւն պահեց։

– Եւ սակայն, – դիտել տուաւ ոստիկանութեան Թուրք պաշտօնեան, – իրողութիւն մը կայ մէջտեղ, զոր կարելի չէ ուրանալ, այն է՝ Արշաւիրի վիրաւորւած ըլլալը, արդ, որո՞նք են ուրեմն այդ մահափորձը կատարողները։

– Ճիշդ ես ալ այդ կը մտածեմ ու չեմ կրնար գտնել, – պատասխանեց Արշակ։

– Ես ձեզի պիտի ապացուցանեմ, թէ հնչակեաններու գործն է, – ըսաւ Արշաւիր։

– Ինչպէ՞ս, – հարցուց Ճէմալ պէյ։

– Իրենց իսկ խոստովանութեամբ։

– Եթէ այդ կարենաս ընել՝ այն ատեն խնդիրը կը լուծուի։

– Ես ձեզի քանի մը անձեր ցոյց պիտի տամ եւ պիտի խնդրեմ, որ զանոնք անմիջապէս ձերբակալել տաք եւ իմ ներկայութեանս բերէք, պիտի տեսնէք, որ ամէն բան, պիտի խոստովանին։

– Ուրեմն անմիջապէս ըսէ՛ այդ մարդոց անունները։

– Վաղը առտու ձեզի կու տամ ցանկը, – պատասխանեց Արշաւիր։

Ճէմալ պէյ եւ Արշակ քիչ մըն ալ մնացին Արշաւիրի քով ու մեկնեցան։

Վարը, դրան առջեւ ոստիկանութեան պաշտօնեային կառքը կը սպասէր։ Երկուքն ալ մտան մէջը, եւ կառքը ճամբայ ելաւ։

– Ի՞նչ կ՚ըսես այս դէպքին, – հարցուց Ճէմալ պէյ լրտեսին։

– Կ՚ըսեմ, որ շատ տարօրինակ դէպք մըն է, գրեթէ անբացատրելի։

– Ինծի ալ այս գործը շատ մութ կ՚երեւայ։

– Կը ներէք, որ այս մասին իմ համոզումս անկեղծօրէն յայտնեմ։

– Անշուշտ, խօսէ՛, տեսնենք, գիտես, որ ես քու վրադ մեծ վստահութիւն ունիմ։

– Շատ շնորհակալ եմ, պէ՛յ էֆէնտի, լաւ ուրեմն, ես կը կարծեմ, թէ որեւէ դէպք չէ պատահած։

– Ինչպէ՞ս գոչեց Թուրքը, – Արշաւիր վիրաւորուած չէ՞։

– Չեմ գիտեր, թերեւս ոտքէն թեթեւապէս վիրաւորուած ըլլայ, բայց, ատոր ալ վստահ չեմ, քանի որ վէրքը չեմ տեսած, գոնէ դուք տեսա՞ք։

– Ո՛չ։

– Բայց կարծեմ ոստիկանութեան բըժշկին հետ եկաք։

– Այո՛, սակայն Արշաւիր ըսաւ, թէ մենէ առաջ ուրիշ բժիշկ մը եկած ու վէրքը կապած է ու պատուիրած է, որ չբացուի, մենք ալ չպնդեցինք։

– Թեթեւ վէրք մը այդչափ զգուշութիւններու պէտք չունի եւ տարակոյս չի կայ, որ Արշաւիրի վէրքը շատ թեթեւ է։

– Ուրեմն երեք դարանակալներու պատմութիւնը բոլորովին սո՞ւտ է, եւ Արշաւիր որեւէ վէրք չէ՞ ստացած, բայց հրացէնի ձայները լսեր են տնեցիները եւ գիշերապահն ալ։

– Կրնայ հրացէն պարպուած ըլլալ եւ նոյնիսկ կրնայ ոտքէն ալ թեթեւապէս վիրաւորուած ըլլալ, բայց ասիկա չապացուցաներ, թէ հնչակեան դաւադրութիւն մը կայ գործին մէջ։ Այդ դէպքին իբրեւ վկայ, Արշաւիրէն զատ, երկու հոգի կան, մէկը Նշան եւ միւսը՝ գիշերապահը։ Ես տուն գալէ առաջ պահականոց գացի եւ քննութիւն մը կատարեցի։ Գիշերապահը իրաւ հրացէնի ձայն լսեր ու գացեր է դէպի ձայնը եկած կողմը, բայց բան մը չէ տեսեր, միայն Արշաւիրը գըտեր է ոտքէն թեթեւապէս վիրաւորուած, իսկ Նշան ըսեր է, որ ինք տեսեր է երեք հոգի, որոնք խոյս կու տան եղեր. այդ Նշանը, դուք ալ իմացաք, անշուշտ, Արշաւիրի անբաժան է, եւ բաւական տարօրինակ է, որ ճիշդ այդ միջոցին հոն գտնուեր է։

– Վերջապէս ի՞նչ ըսել կ՚ուզես, - գոչեց Ճէմալ պէյ։

– Ըսել կ՚ուզեմ, որ ասիկա կրնայ խաղ մը ըլլալ Արշաւիրի ու Նշանի միջեւ կարգադրուած, – պատասխանեց Արշակ։

(Շար. 76)

ՍՏԱՑԱՆՔ

ԲԵՄԻ ԿԵԱՆՔՍ ԵՒ ԿԵԱՆՔԻՍ ԲԵՄԸ
(Յիշատակներ թատերական, գրական եւ ազգային կեանքէս, պատկերազարդ)

ԺԻՐԱՅՐ ԱՐԱՄ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Փարիզ, 2001

(Շար. Ա. էջէն)

նախնեաց երկրին մէջ եւ որպէս ապացոյց կը յայտնէ թէ իր արձանը բարձրացած է Գիւմրի։ Բայց, ոչ այդ արձանը, ոչ ալ իր անունով մկրտուած Երեւանի պողոտան գինք յուզած են։ Ինչ որ խորապէս յուզած է, Պապին այցելութիւնն է Ծիծեռնակաբերդ եւ երբ Ազնաւուր Ամէ Մարիան երգած է յուշարձանին բոցին առջեւ եւ Յովհ.-Պօղոս Բ. զինք շնորհաւորած է, չէ կրցած իր արցունքները զսպել։ Նախորդ օրը, արդէն, Պապը ուզած էր զինք առանձին տեսնել եւ հարցապնդած էր արուեստագէտի իր կեանքին մասին։ Լրագրողը կ'արձագանգէ Ազնաւուրի խօսքերուն 1915-ի ջարդերուն մասին, Իգմիթ, իր նախնեաց փոքրիկ գիւղը, ուր Ապրիլ 24-էն 25-ի գիշերը սարսափ կը տիրէ, մայրը՝ Քնար Պոլիս է, բայց անոր հայրը, մայրը, եւ երկու եղբայրները կը ջարդուին։

Ժ. Ժիլպէր կ'անդրադառնայ ցեղասպանութեան ճանաչման, Ազնաւուրի հիմնած կազմակերպութեան ի նպաստ Հայաստանի, երկրաշարժին վաղորդայնին։ Բայց, Ազնաւուր կը ճշդէ որ իր հայրենիքը Ֆրանսան է, Հայերը կ'ուզեն զինք երեսփոխան ընտրել, իր գործը չէ. – «Կ'օգնեմ դուրսէն, երբ ամէն բան աւելի լաւ ընթանայ, քաղթս եւ կու տամ» (յատուկ առաքելութեամբ դեսպանի)։ Այս լուրերու կողքին, առանձին շրջանակով եւ ցայտուն խորագրով մը՝ «L'odieux mensonge qui a gâché son retour», որ հրատարակուած է նաեւ կողքին վրայ եւ համապատասխան է թերթին նկարագրին. հարցագրոյց մը կայ Պօղոս Պօղոսեանի մահուան պարագաներուն առընչութեամբ։ Արձագանգելով Երեւանի մամուլին, որ Ռ. Քոչարեանի թիկնապահներուն խնչտանգումներուն կը վերագրէ երիտասարդին մահը, լրագրողը հարց կու տայ Ազնաւուրի, որու անունը կը յիշուէր այդ առթիւ, թէ ի՞նչ անցած դարձած է։ Ազնաւուր վրդովուած է, կը կրկնէ որ ոչ ոք փորձած է իրեն մօտենալ եւ թէ ենթական (Պօղոս Պօղոսեան) սրտի տագնապէ մեռած է։ Մնացեալը քաղաքական տխուր խաղի մը կը նմանցնէ։ Ըստ երեւոյթին, ինք, անկեղծօրէն համոզուած է այդ ուղղութեամբ։

CENTRE CULTUREL
SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN
Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

Rouben ELBAKIAN
Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91. 77. 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

Ի ՅԻՇԱՏԱԿ

Արշալոյս Գասպարեանի թարմ յիշատակին Տէր եւ Տիկին Գրիգոր Փափազեան 500 Ֆր. կը նուիրեն Ս. Մեսրոպ Կրթարանին (ստանալ՝ «Յառաջ»էն) եւ 500 Ֆր. «Յառաջ»ին։

ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին առիթով, Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, Հոկտեմբեր 16, ժամը 20.30-ին, Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ Կրթարանի սրահին մէջ։

Կը դասախօսէ՝
ՆԵՐՍԷՍ Ծ. ՎՐԴ. ԲԱՊՈՒՃԵԱՆ

«Ե. դարու թարգմանիչ վարդապետներու հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը» նիւթին շուրջ։

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուրբ Մեսրոպ Մշակութային Միութեան Սուրբ Խաչ շաբաթօրեայ վարժարանը կը վերաբանայ իր դռները Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին։ Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 14-էն 17, Սուրբ Խաչ Եկեղեցւոյ կից սենեակներուն ու սրահին մէջ

13, rue du Perche, 75003 Paris

5-էն 12 տարեկան աշակերտներու համար։

Կը դասաւանդուին հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, հայկական երգեր ու պարեր։

Արձանագրուելու համար, հեռաձայնել՝ 01 – 44 – 59 – 23 – 50 թիւին։

MAISON ARMENIENNE
DE LA JEUNESSE
ET DE LA CULTURE
MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES
DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Vernissage
le Jeudi 11 octobre
à partir de 18 h 30

Exposition du 11 au 20 octobre
tous les jours
sauf le mardi et le dimanche

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

LES CONFERENCES D'ISSY
AUTOMNE 2001

1700ème ANNIVERSAIRE DE L'ADOPTION
DU CHRISTIANISME PAR L'ARMENIE EN 301

Jeudi 11 octobre à 20 heures 45

«FAISONS CONNAISSANCE AVEC L'EGLISE APOSTOLIQUE ARMENIENNE»
M. KERAM TOROSSIAN

Lieu des conférences : Eglise Evangélique Arménienne d'Issy-les-Moulineaux
28, ave. Bourgain et 55, ave. Victor-Cresson, 92130 Issy-les-Moulineaux

Renseignements : 01 47 36 02 50 — Entrée libre — Bienvenue à tous.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Journée de détente

La Croix Bleue d'Issy-les-Moulineaux vous propose une **Journée de Détente** le **Dimanche 14 OCTOBRE.**

La journée commencera par la visite du JARDIN DES SERRES D'AUTEUIL. Rendez-vous à la Maison de la Culture Arménienne, 45, rue de la Défense à Issy-les-Moulineaux, à partir de 9h15.

Le car partira à **9h30** et fera un arrêt à **9h45** devant l'Eglise apostolique arménienne, 6, avenue Bourgain.

Après la visite, le repas traditionnel sera servi au Châlet de Vaupéreux à BIEVRES et sera animé par le chanteur bien connu HOVIG.

Prière de se faire inscrire rapidement auprès des khatchouhies en s'adressant à :

Annick — Tél.: 01 47 36 18 09;
Alice — Tél.: 01 46 42 90 68;
Jacqueline — Tél.: 01 40 95 81 33
Dernier délai d'inscription: 10 Octobre.

— • —

La Section **«HELEN PUZANT» d'Alfortville**
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France

le Samedi 20 octobre à 20h30

Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville

avec **l'Orchestre GAIDZAG'S et attraction surprise...**

Rensignements et réservations :
☎ **01 43 76 55 89**

— • —

"NAVASART" *à Asnières*

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30

— Billets : 100 F. et 120 F.
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— • —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour
du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Diner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— **01. 42. 36. 33. 73** (la journée)
— **01. 46. 58. 03. 17** (le soir)

— • —

Centre Culturel
SAINT MESROB
A PARIS

Conférence-Débat
avec projection de diapositives
sur le thème :
AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par
JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche
au Muséum National d'Histoire Naturelle
et
VINCENT TARAKDJIAN
Technicien forestier
à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris Ve
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre · Cocktail —

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

ԿԻՐԱԿԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 7
DIMANCHE
7 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Թիւ 274

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար · 1·400 Ֆ · — Վեցամսեայ : 725 Ֆ ·
Արտասահման : Տար · 1·650 Ֆ · (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ · (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·269 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.269

ՄԱՐԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՈՎԱՓԻՆ

Խորհրդային կարգերու անկումին յաջորդող առաջին տասնամեակը կ'ամբողջանայ 2001-ի աւարտին: Այդ տասնամեակը գրական արտայայտութեան ազատութիւն բերաւ Հայաստանին. միաժամանակ՝ գրականութեան նեցուկ կանգնող հին տնտեսական համակարգին ամբողջական փլուզումը: Առաջինը չկրցաւ «յաղթել» երկրորդին: Ընդհանրապէս հասկնալի է այս: Տնտեսութեան փլուզումը, քաղաքական անվերջանալի ճգնաժամը, ընկերային տագնապը, արտագաղթը, մշակութային բարոյականի չգոյութիւնը արգելք եղան յետ-խորհրդային հայաստանեան գրականութեան զարթօնքին:

Ամբողջատիրական ընկերութեան մը անկումը միշտ բազմածալք է, քանզի ամբողջատիրութիւնը միայն հանրային կեանքին տիրապետելով չի բաւականանար: Կը փորձէ թափանցել նաեւ անհատական կեանքին մէջ, որովհետեւ իր դատումով՝ վտանգաւոր է անհատին երեւակայութիւնը, անոր հոգեկան եւ մտաւորական արժանապատուութեան ոգին: Ուրեմն, բիրտ ուժով եւ տնտեսական նեցուկ – կաշառքով կարելին ըրած էր խորհրդային համակարգը այդ ոգին ճնշելու, գրեթէ անհետացնելու համար: Եւ 1991-ին յաջորդող տասնամեակին յարաբերական լճացումը, ամլութիւնը՝ գրական – մտաւորական մարզին մէջ, չափանիշն էր երկարամեայ ճնշումի յաջողութեան:

Գրեց՝

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

Բարեբախտաբար վերջին երկու-երեք տարիներուն համեստ վերընձիւղում մը կայ: Նոր գրիչներ, ընդհանրապէս սփիւռքահայ մտաւորականութեան անծանօթ մնացած, կ'իջնեն հրապարակ: 2001ի Ապրիլ 7/8-ին, Լոս-Անճըլըսի մէջ փրոֆ. Փիթըր Քաուիյի կազմակերպած գիտաժողովը, որուն անդրադարձած էր «Յառաջ» (Ապրիլ 25, 26, 27 եւ 28), մէկտեղած էր ոչ միայն հայրենի եւ սփիւռքահայ գրականագէտներ, այլ նաեւ գրողներ: Վերջիններուն ելոյթները յաճախ անյաջող էին, բայց եւ այնպէս գովելի էր ճիգը: Զենք գիտեր թէ ինչ չափանիշերու կիրարկումով «ընտրուած» էր այդ գրողներու խմբակը, ոչ ալ գիտենք թէ անոնք իսկապէս կը ներկայացնե՞ն հայրենիքի մէջ ստեղծագործող նոր գրողներու գեղարուեստական բազմածալք դիմագիծը: Բայց եւ այնպէս քաջալերիչ և հետաքրքրական էր ծանօթանալ յայտնօրէն բազմատարր այդ խմբակին, ունկնդրել իրենց գործերու բեմական ընթերցումը, ծանօթանալ իրենց գիրքերուն: Այդ գիրքերէն մէկն էր Մարինէ Պետրոսեանի «Կանոնական Պատմութիւններ» խորագիրը կրող բանաստեղծութիւններու հատորը, որ հրատարակուած է 1998-ին, Երեւանի մէջ, «Զանգակ – 97» հրատարակչականին կողմէ, եւ (անսովոր երեւոյթ) «հեղինակին ծախքերով»: Պետրոսեան նաեւ հրատարակած է «Բանաստեղծութիւններ» անունը կրող հատոր մը, 1993-ին, եւ թարգմանութիւններ՝ Վահէ Կոտէլի գործէն՝ 1995-ին: (Այս տեղեկութիւնները կը քաղեմ գիրքին կողքին ներսը զետեղուած խտացեալ, ժլատ եւ քիչ մը չփոթեցուցիչ տողերէն): Նկատելի է, նախ՝ որ 1990-ական տասնամեակի հայաստանեան դաժան տարիներուն Պետրոսեան շարունակած է գրել, արտադրել, եւ ապա՝ նշմարելի է նաեւ ֆրանսերէն լեզուին հանդէպ որոշակի հակում, –ոչ միայն Վահէ Կոտէլէն թարգմանութիւններ, այլ նաեւ գիրքին հինգերորդ էջը կը կրկնէ հայերէնով արդէն իսկ տրուած տեղեկութիւնները՝ ֆրանսերէնով, – Mariné Pétrossian, **«Histoires Canoniques»**: Այս օրերուն, երբ ռուսերէնը ընդհանրապէս կը նահանջէ ի շահ անգլերէնի նոր աշխարհակալութեան նախկին Խորհ. Միութեան մէջ, դրական երեւոյթ է տեսնել ֆրանսերէնի ներկայութիւնը, որ կը թելադրէ այլ կապ, այլ մշակոյթի մը հետ, անգլեւամերիկեանէն անդին:

Անսովոր, թերեւս նոյնիսկ խորհրդաւոր է «պատմութիւններ» բառը գտնել ներկայիս, բանաստեղծութեան հատորի մը վրայ: Ճիշդ է, անցեալին, մանաւանդ 19-րդ դարուն եւ 20-րդ դարու սկիզբը, բանաստեղծութիւնը կը պատմէր նաեւ: Պատում մը, դրուագ մը կը գործածէր իբր առանցք, իբր թել, որուն վրայ կը շարուէին շողշողուն բառեր, կամ ժողովրդային իմաստութեան կեղծ ու իրաւ գոհարներ: Վարուժանի «Հարճ»ը, Թումանեանի այլազան ժողովրդական ոտանաւոր-հէքեաթները, Զարենցի ոգեւորուած ու ոգեւորող, ամբոխավար «Ամբոխները խելագարուած»ը, նուաճումներ են չափածոյ պատումի, սակայն անցեալին պատկանող նուաճումներ: Հայաստանի մէջ, բայց մանաւանդ Հայաստանէն արտագաղթող եւ Լոս-Անճըլըս հաստատուող քերթողներէն ոմանց մօտ դեռ կը տոկայ յապաղած, գուսանական հակում մը, փոքրիկ պատումներ, դրուագներ գործածելու իբր մղիչ դրդապատճառ ոտանաւորներու, կամ իբր «կմախք», որոնց շուրջ կը կերտուի, սըխալ պիտի չըլլար ըսել՝ որոնցմէ կը կախուի քերթուածը: Բայց, կրկնենք, բանաստեղծութիւնը, իբրեւ պատում, անցեալին կը պատկանի: Զի բացառուիր որ իսկապէս հանճարեղ եւ յանդուգն արուեստագէտ մը կարենայ զարթեցնել այս՝ այլապէս բանաստեղծութեան պատմութեան թանգարանին մէջ բնակելու դատապարտուած սեռը, սակայն հաւանական չէ:

Աւելի հաւանական է որ Պետրոսեան կը գիտակցի այս իրականութեան եւ ուրեմն «պատմութիւն» բառը ներքին հեգնանքով մը կը գործածէ, դառն, այլ վճռական մօտեցումով, – այսինքն՝ մեր ազգի պատմութեան այս կանոնազուրկ, անկանոն տասնամեակին գրուած տողերուն կը մնայ տալ պատկերը ճիշդ այդ անկանոն, արտասովոր տարիներուն, այնպէս՝ ինչպէս անոնք դիտուած, ապրուած եւ զգացուած են բանաստեղծին կողմէ: Այս բանաստեղծը չէզոք հայելին չէ ապրուած պատմութեան, ոչ ալ կը յաւակնի ըլլալ ամենատես դէտ մը որուն պարտականութիւնն է կարգ-կանոնի ենթարկուած համապատկեր մը ներկայացնել: Ուրեմն՝ գիրքի խորագրին «պատում»ն ալ, «կանոն»ն ալ խայծեր են, ապա նաեւ նշաններ, որոնք նախօրօք կը թելադրեն ընթերցողին որ հոն պարունակուող քերթուածները անհատի մը դիտանկիւնէն կը պատկերացնեն, ոչ թէ իսկապէս «կանոնական պատմութիւններ», այլ կանոնի մը, կարգ-կանոնի մը (խորհրդային) համակարգի մը փլուզումին պատմութիւնը. քանդուող կանոնի մը, մայրաքաղաքի մը (Երեւան) եւ հայրենիքի մը առթած զգացումները, ապրումները:

Նման մօտեցում ինքնին վտանգաւոր է, վտանգալից, դաւադիր: Անշուշտ բոլորովին հասկնալի է փորձութիւնը՝ ազգային կամ հաւաքական մեծ փորձառութիւնները, ճգնաժամերը, Հայութեան պարագային՝ ողբերգութիւնները ներկայացնել անձնական տեսանկիւնէ: Ի՞նչ է Սփիւռքի առօրեայ գրականութեան գլխաւոր վաստակը, 1920-60 տարիներուն, եթէ ոչ հաւաքական ահաւոր փորձառութեան դիւրին անձնականացումը, կամ անձնական դառն փորձառութեան հաւաքականացումը: Երբ Հայկ Պարիկեան իր «Այգեկութք» (Հալէպ, 1961) գիրքի «Կանգուն է ազգն ահա» քերթուածը կը սկսի այս տողերով. –

«Աչքս բացի, ցաւ ու նախճիր ես տեսայ,
Աղի արցունք, սով ու սեւ քաղց
ես տեսայ»:

Ան Հալէպի մէջ վերապրող որբի իր կեանքը եւ ազգին ճակատագիրը նոյնացնելու ձգտումին տիպական բանաստեղծն է: Մանաւանդ Ի. դարու հայ արուեստագէտին համար, այս փորձութիւնը –անձնականն ու հաւաքականը նոյնացնելու– «բնական» կը թուի: Նաեւ գրեթէ նոյնքան «բնական» կը թուի անոր հակոտնեայ տարբերակը, այն ուր բանաստեղծը իր անձնական փորձառութիւնը, անհատական կեանքը կը տեսնէ իբրեւ անջատում իր շրջապատէն: Կրնայ ողբալ այդ անջատումը: Կրնայ այպանել իր հաւաքականութիւնը, մեղադրել զայն որ չի տեսներ ու լսեր այն իրականութիւնները, որ հերոսաբար ինքնանջատ արուեստագէտը կը տեսնէ ու կը պատգամէ, – Պոլէրէն մինչեւ Վահէ Օշական կը տեսնենք ու կը լսենք նուրբ եւ բարդ երանգները այս անջատումի երգին, որ ոչ գոհ է իր առանձնութենէն, ոչ ալ կրնայ լըքել զայն, նետուիլ մեղկ քաղքենիութեան գիրկը: Եւ ուրեմն անջատումի հարկաւոր, ստիպողական վիճակը կը վերածէ առաքինութեան մը: Այս է որոշ տեսակի արուեստագէտի մը գլխաւոր նուաճումը. – արդի կեանքի պարտադիր անջատումը գործածել, վերածել իբր յստակատեսութիւն եւ, ինչո՞ւ չէ, յստակախօսութեան նախապայմանի:

Պետրոսեանի քերթուածներուն տիրապետող թեմաներէն եւ կառոյցներէն մէկն է բանաստեղծի անձին ու հաւաքական կեանքին միջեւ գոյութիւն ունեցող բարդ անջատում-կապին զննումը: Առաջին տողերը գիրքին առաջին քերթուածին, ասոնք են. –

«Ես կանգնած եմ ծովի ափին,
իսկ ծովում քնած են ձկները»:

Կը ներկայացնէ պատկեր մը, որուն բաղադրեալները պիտի կրկնուին գիրքին մէջ, իբրեւ մոթիֆ եւ տարր: Կայ «ծով» մը (Հայաստան Սեւանայ լիճէն անդին ծով չունի, սակայն բանաստեղծութիւնը իրաւունք ունի փորձառութեան աշխարհագրական «վայրի» ճշդումին հանդէպ անտարբեր մնալու): Ծովը մեծ է, արտաքին աշխարհն է, անոր ընդհանուր խորհրդանիշ-պատկերն է: Անոր բնակիչները, «ձուկերը», կ'ապրին ծովու կըլանող ամբողջականութեան մէջ, առանց անդրադառնալու որ անոր մակերեսին վրայ նաւեր կան, կամ որ անոր անծայրածիր թուող ծաւալը ունի սահմաններ, ափեր, եզերքներ ուր ուրիշ փորձառութիւններու կարելիութիւնը կայ: Այդ ծովափին արթուն կանգնած է անհատ մը, անջատ անձ մը որ կը գիտակցի թէ «ծովուն մէջ քնած են ձկները»: Ծովափի անհատը կը գիտակցի թէ ո՛վ կը ննջէ ծովուն մէջ, բայց «ձուկերը» չեն գիտակցիր որ ծովափն ալ ունի իր անհատները, իր տարբերութիւնը: Յստակատեսութեան ընդգծուած անհաւասարութիւն մը կայ հոս, որ անջատ անհատին, ափին ●▶

LE FAUTEUIL D'ORCHESTRE

par
EDOUARD EXERJEAN

Lorsque le rideau s'ouvre, Jacques Weber*, sourire aux lèvres, semble reprendre une conversation ininterrompue. S'adressant au public qu'il paraît avoir délaissé quelques instants, il lui raconte des émotions, faites d'admirations, de coups de griffe, de tendresse, de poésie, de passions. Car on applaudit un talent authentique, inspiré, un vrai comédien pour qui l'effort ne compte plus, pour qui le bonheur d'être là, dans cet espace magique, condense et exalte tous les bonheurs.

Dans un déchaînement de textes allant de Claudel à Beckett en passant par Molière, Courteline, Musset, Marguerite Duras dont l'admirable «Coupeur d'Eau» reste un moment fort et bien d'autres, l'interprète devient multiple: l'enfance, le couple, la vieillesse ponctuent ces deux heures de récital. Un régal, malgré quelques longueurs. Mais il s'agit de soi en définitive. Dire ses enthousiasmes comme ses blessures prend du temps. Un temps salutaire.

***

Au théâtre du Vieux-Colombier, les Comédiens-Français débutent la saison par un coup d'éclat. «Monsieur de Pourceaugnac» de Molière s'impose par la mise en scène endiablée de Philippe Adrien. Il fallait cette sorte d'exploit pour rendre plausible un texte qui n'est pas du meilleur Molière. Ecrite en 1669 pour les fêtes de Chambord, cette comédie-ballet utilise tous les «trucs» qui ont fait le succès de tant d'autres comédies inusables sans vraiment profiter à la pièce

La déception l'emporterait sans cette fougue qui secoue trois actes plutôt fastidieux. Les situations caricaturales à l'extrême freinent le rire, mais la démesure et la truculence des comédiens y pourvoient et justifient le succès.

Car, par séquences successives, on y retrouve en vrac des réminiscences de Scapin, du «Bourgeois Gentilhomme», du «Malade Imaginaire» avec une satire de la médecine haute en clystères et de la justice burlesque en outrances organisées. Tout est prétexte au divertissement le plus loufoque. D'une brillante distribution, se détachent Bruno Rafaelli dont la voix et la taille gargantuesques donnent au gentilhomme limousin une allure idéalement grotesque, Thierry Hancisse, admirable en médecin dont la folie atteint au fanatisme incurable, Alain Pralon, vieux barbon savoureux dans son costume de dindon. Mais tous sont parfaits dans cette guignolade judicieusement orchestrée et ponctuée par les souriants costumes de Claire Belloc.

*** Théatre de la Gaité, Montparnasse**

վրայ մնացած բանաստեղծին այրած սրտի մխիթարանքն է:

Յաջորդ երկու տողերը. –

«Կը գան ու նորից կ'անցնեն
իմ տեսած բոլոր նաւերը».

Կ'արտայայտէ բանաստեղծին համար կարեւոր, զգաստացնող ուրիշ գիտակցութիւն մը, որ կը խորտակէ քնացող ձուկ – արթուն բանաստեղծի ինքնագոհ եւ այդ պատճառաւ ալ վտանգաւոր երկուութիւնը: Արուեստագէտը պէտք չէ ինքզինք շնորհաւորէ, ինքզինք դասէ մարդկութեան զանգուածէն վեր: Բանաստեղծը իր հաւաքականութենէն անջատումը պէտք չէ պարզօրէն վերածէ ռոմանթիկ անհատականութեան ջատագովումի: Գիտակցելով որ կան նաւեր, ան ինքզինքին կը յիշեցնէ որ կան այլ ափեր, այլ անհատներ, այլ փորձառութիւններ, հաւաքական կեանքի թմբիրը ընդհատող ուրիշներ: Այս երկու տողերը ընթերցողին կը զգացնեն նաեւ որ բանաստեղծը որոշ տրտմութեամբ մը կը զգայ որ ինք զրկուած էր, զրկուած է, եւ զրկուած պիտի մնայ նաւով ճամբորդելու փորձառութենէն, կրկնուող արկածախնդրութենէն, որ ուրիշներու տրուած է, բայց ոչ իրեն: Ծովափին դիտողը շատ բան կը տեսնէ ու կը հասկնայ, սակայն թերեւս քիչ մը կրաւորական ձեւով:

Յաջորդ երկու տողերը նոր եւ անթափանցելի պատկեր մը կը բերեն. –

«Ես խաղող եմ ուտում, ու կարմիր
աւազոտ են խաղողի հատիկները»:

Խաղողը, բալը, միրգերը յաճախ պիտի կրկնուին այս 144 էջնոց գիրքին մէջ, իսկ աւազը՝ ա՛լ աւելի: Սակայն այս առաջին պատկերին մէջ յստակ չէ անոնց դերը: Միայն թէ կը տրուի առօրեայ կեանքի հասարակ փորձառութիւն մը, – ծովափին կերուած խաղողներն ալ, սանուիչներն ալ, ամէ՛ն ինչ «աւազոտ» է, որ փոխաբերաբար կը նշանակէ որ ծովուն, ծովափին կանգնելու փորձառութիւնը ամէն ինչ կը պատէ, նաեւ կը պատէ «խաղող»ը, որ ո՛չ ծովի, այլ ցամաքամասի, ի միջի այլոց Հայաստանի տիպական խորհրդանիշներէն է: Ուրեմն՝ մէկ կողմէն ծով – հաւաքականութիւն եւ միւս կողմէ ափ – անջատ անհատի փորձառութեան կողքին կը սկսինք տեսնել ստուերը ուրիշ երկուութեան մը՝ ծով – օտար աշխարհի եւ ափ – խաղող – ցամաք – Հայաստանի երկուութեան, որ կը զարգանայ եւ ձեւ կը ստանայ գիրքին յաջորդող էջերուն եւ քերթուածներուն մէջ:

Եւ վերջապէս կան քերթուածին վերջին երեք տողերը. –

«Եկան ու նորից անցան,
եկան ու անցան իմ մօտով,
նորից ինձ չտեսան առիւծները»:

Հոս, «նորից անցան» բառերը նախ կ'ակնարկեն նախօրօք յիշուած «նաւերուն» (տող 3): Սակայն հնարամիտ բանաստեղծը «անցան» բային կու տայ նաեւ երկրորդ տէր-բայի մը՝ «առիւծները», ցամաքամասի արքայ գազանը՝ Բանաստեղծը որ կը դիտէր նաւերը եւ ծովը, որուն փորձառութիւնը քիչ մը կրաւորական էր եւ որ սակայն կը վայելէր դիտող – հասկցողի, ձուկերէն բարձր հասկացողութիւն ունեցողի իր ինքնանուէր վարկը, յանկարծ կը զգայ պահանջքը ոչ միայն դիտելու եւ տես–նելու, այլ նաեւ տես–նուելու: Եւ կը զգայ նուաստացուցիչ փորձառութիւնը՝ չտեսնուելու առիւծներուն կողմէ: Ձուկէն չտեսնուելէն գոհ բանաստեղծը կը զգայ որ իր կարգին, իր ալ ճակատագիրն է առիւծներէն չտեսնուիլ: Յաջորդող քերթուածներէն յստակ կ'ըլլայ որ այս առիւծները աղուական մեծերը չեն, այլ արիւնարբու գազանները հանրութեան (կը գործածուի Վանօ Սիրադեղեանի անունը, 92 էջ եւք): Այս պարագային՝ առիւծներու կողմէ չտեսնուիլը թէ՛ նուաստացուցիչ է, թէ՛ տեսակ մը բախտաւորութիւն:

Ուրեմն, Մարինէ Պետրոսեանի գիրքին առաջին քերթուածը, որ կը թուի ըլլալ փուխ, շատ մատչելի լեզուով նկարագրուած պատկեր մը, այլապէս կը պարունակէ գիրքին բեղուն կառոյցը, եւ մեկնաբանութիւնն է նաեւ ժամանակակից կեանքին: Ընթերցողը յետոյ պիտի հասկնայ՝ յատկապէս ներկան Հայաստանեան կեանքին: «Դուրսը» կայ ծով – կեանք մը, հսկայ, կլանող, թէ՛ հանգստացնող, թէ՛ ալ օժտուած իրեն յատուկ խեղդելու ձեւով, ուր մարդ – ձուկերը հանգիստ են ու ազատ, մինչ «ափի» եւ «ցամաքի» մարդիկը կը տեսնեն երկուութիւն եւ պանազան կարելիութիւններ, – նաւային ճամբորդութեան, հաճելի արկածախնդրութիւններու, նաեւ վտանգի: Ըստ Պետրոսեանի տեսիլքին՝ Հայաստանը անցեալին եղած է ծովափ ունեցող երկիր մը. –

«Երեւանը քաղաք է
հեռացած ովկէանոսի ափին:
Օրեր կան,
երբ քամին բարձրացնում է
աղը մեռած ծովերի»:

Բանաստեղծը հովէն կ'առնէ աւազի եւ աղի համն ու ներկայութիւնը, յուշը՝ տարբեր անցեալի մը եւ տարբեր կարելիութիւններու: Աշխարհագրականօրէն՝ Երեւանը ոչ իսկ երկրաբանական հեռաւոր անցեալին ծովափ ունեցած է: Այլաբանական իմաստով, սակայն, կային օրեր, ոչ այնքան հեռաւոր, երբ մարդիկ կը զգային պատրանքը, հաւատքը, թերեւս կ'ապրէին նշոյլը տարբեր կարելիութեան մը, – որ Երեւանը աշխարհի ծովուն, ոչ-խորհրդային, օտար, հրապուրիչ, վտանգաւոր այլ՝ առինքնող կեանքի ծովափին կը գտնուէր: Պիտի սկսէր հաւաքական եւ անձնական նոր փորձառութիւնը օտարին: Սկսած էր կարելի թուիլ ոչ օտարէն խորշիլ, ոչ ալ ենթարկուիլ օտարի խորշակին, անոր կողմէ ոտնակոխուիլ ու ջարդուիլ, այլ՝ անոր ափին յամենալու երանելի, եթէ նաեւ քիչ մը կրաւորական, փորձառութիւնը:

Ընդունինք պարզ խօսելու ռիսքը: Այսօր, թէ՛ ամերիկեան, թէ հայկական լուրջ շրջանակի մէջ, բազմամշակութային կեանքի ուղղուած, զայն ջատագովող, անդադար կրկնուող ներբողականին կ'ընկերանայ «օտարի փորձառութիւնը» ընդունելու, գրկելու, անով հրճուելու հրամայականը: Թէ՛ իբրեւ սփիւռքագէտ, թէ՛ ալ իբր հայ մտաւորական, այս տողերը ստորագրողը կը զգայ օտարի փորձառութեան պարտադիր անխուսափելիութիւնը: Սակայն ի՞նչ պիտի ըլլան այդ պարտադրանքին տարբերակները, ռիսքերը, գինը եւ արդիւնքները, եւ ինչպէ՞ս պիտի փոխակերպուի այդ փորձառութենէն ետք, հայկական հաւաքական կեանքի թէ՛ իրականութիւնը, թէ՛ առասպելը: Ասոնք հազիւ թէ սկսած են լրջօրէն մտածուիլ Սփիւռքի մէջ: Մինչեւ վերջերս, չեն մտածուած Հայաստանի մէջ: Հոն «ռուսացում»ի մասին մտածելը, 1980–ական թուականներուն, նոյնը չէ՛ր, համազօր չէ՛ր, – օտարի ուժին, տնտեսութեան, լեզուին եւ մշակոյթին պարտադրումը եւ ներխուժումը տարբեր բաներ են, – չեն արտօներ (Պետրոսեանի պատկերով) ծովուն ափին կենալու եւ ընտրելու պերճանքը, – չեն արտօներ դիտողի, սուզուողի, նաւարկողի կամ ետ, դէպի ներքին ցամաքամաս վերադարձողի դերերէն մեզի յարմարը նախընտրելու կարելիութիւնները: Այսօր, համայնավարութեան տեղ, ուրիշ «համ» մը՝ համաշխարհայնացումը կը սպառնայ մեզի: Խոստմնալից էր համայնավարութիւնը. այո՛, թող չժխտուի, շատ աղուոր տեսիլք մըն էր, որ լեռներու, ցամաքամասի վրայ հազիւ թէ կծկուած Հայութեան կը խոստանար մարդկութեան մեծ ծովուն մէջ ընդգրկուելու գեղեցիկ, այլ նաեւ (ինչպէս պատմութիւնը փաստեց) վտանգաւոր կարելիութիւնը: Չեղաւ: Ձախողութենէն ետք «կղզիացաւ» Հայաստանը, բայց դժբախտաբար ոչ իբրեւ իսկական կղզի, որուն բնորոշ յատկանիշը ծովա՛փն է, հսկայ, վտանգաւոր, հրապուրիչ, օտարի ծովուն հետ յարաբերելու կարելիութի՛ւնն է: Հայաստանը «կղզիացաւ»՝ իզոլէ բառին ցաւոտ իմաստով, sol–ի, լատինական «հող»ին բանտարկեալ «կղզին» իբրեւ: Հայաստանը կրկին վերածուեցաւ անառիկ բերդ–բանտի, որ անցեալին ալ յաճախ իր ճակատագիրը եղած է, – բերդ–բանտի, որ կա՛մ կը խորտակուի օտարին կողմէ, կամ ալ կ'անջատուի անկէ: Բերդ–բանտի, որուն կը զլացուի օտարին հետ կանոնաւոր, ծովափային, ըսենք յարաբերութիւնը: Բերդ–բանտի, որուն կը սպառնայ ոչ միայն Թուրքը, այլ նոր եւ հրապուրիչ համը, համաշխարհայնացումը:

Իբրեւ բանաստեղծ, Պետրոսեան կը գիտակցի որ ամէն անհատ, իր մարմնին մէջ առանձնացած, «կղզիացած», եթէ կ'ուզէք, նման բերդ–բանտ մըն է: Յունական Մինոթաւրոսը բանտարկուած իրեն համար կառուցուած լաբիրինթոսին մէջ, առաջին, միթական պատկերն է մարդ–գազան հոգեկան երկուութեան, «կղզիացած» իր բերդ–բանտին մէջ: Ժերար տը Ներվալի «Լը Փրէնս տ'Աքիթէն ա լա թուր ապոլի»ն արդի գրականութեան տիրապետող պատկերներէն է, ուր անհատական մարմնի բերդ–բանտը կը վերածուի կքող ռազմական աշտարակի մը, «մարտկոց»ի մը՝ պիտի ըսէին Հայաստանի մէջ: Այս պատկերն է որ Թովմաս Էլիոթ իր անգլերէն գլուխ գործոցին մէջ զետեղեց՝ ֆրանսերէն բնագիրը պահելով, եւ որ ուրիշ Թովմաս մը, Թովմաս Փինչըն, կը պահէ իր վէպին մէջ, որ «The Crying of Lot 49» անթարգմանելի վերնագրով օժտուած է: Պետրոսեան համեստ այլ յատկանշական ժառանգորդ եւ գործածողն է համաշխարհային, կամ գոնէ արեւմտեան գրականութեան եւ մտածողութեան պատկանող այս պատկեր–կառոյցին, – այսինքն՝ իւրաքանչիւր անձ իր մարմնին մէջ անջատ անհատ մըն է, ապահով սակայն, բանտարկուած՝ ինքնութեան բերդ–բանտին մէջ: Կարելի չէ լքել այդ բերդ–բանտը. այդ՝ մահ է: Նմանապէս, իւրաքանչիւր հաւաքականութիւն, որ ինքնութեամբ օժտուած է, այսինքն՝ ազգ է, փոխաբերաբար կը գտնուի նման ընտրութեան մը առջեւ: Չի կրնար լքել իր բերդ–բանտը: Պէտք է սակայն որոնէ այլ միջոցներ: Անձերու պարագային մարմնի բերդ–բանտէն դուրս ելլելու միջոցներն են լեզուն եւ սեռը, – մտքերու եւ մարմիններու ընդելուզումը, – լուզում, ոչ լուծում կամ ձուլում: Ազգերու պարագային, լեզուն եւ անոր խորհրդանշած հաղորդակցութիւնը փոխաբերական պատկերներն են այն բոլոր յարաբերութիւններուն, օտարին հետ շփումներուն, որոնք փրկարար դեր կը կատարեն այլապէս նեղօրէն հասկցուած ինքնութեան բանտին մէջ տուայտող ազգերու համար:

Պետրոսեանի գիրքին 130 էջը բանաստեղծութիւն է: Առանց համրելու կարելի է ենթադրել թէ հաւանաբար կը պարունակէ 100–էն աւելի կարճ, մի քանի պարագայի երկար քերթուածներ: Այս գրութիւնը անոնց գրախօսականը չէ, չի կրնար ըլլալ, – այդ պիտի ենթադրէր գիրքին մասին գոնէ գրքոյկ մը գրել: Մի քանի տողերու ընթերցումն է: Սակայն այդ ընթերցումը՝ ամբողջ գիրքը կարդացած, սերտած անձի մը կատարած ընթերցումն է, այսինքն՝ հիմնաւորուած է մեկնաբանութեան մը վրայ, որուն մանրամասն քայլերը այս յօդուածին մէջ չեն տրուած: Իր կարգին, այդ մեկնաբանութիւնը հիմնուած է գրականութեան տեսութեան վրայ: Հսկայ մարդ մը, որմէ այս տողերը ստորագրողը գիտակցօրէն (ապա նաեւ անկասկած՝ անգիտակցօրէն) որդեգրած է որոշ սկզբունքներ, իւրացուցած է որոշ գաղափարներ: Անոնց կիրարկումը կրնայ անտեղի, նոյնիսկ անպատասխանատու ըլ-

ԵՐԵՒԱՆԸ ՄԵԾ ՔԱՂԱՔ Է

ՄԱՐԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բաղրամեանը սառած է,
Մութի մէջ դժուար է ժպտալը, երբ քեզ ոչ ոք չի նայում
Այսօր դեկտեմբերի քսանմէկն է, ամենաերկար գիշերը,
Չեմ ուզում տուն գնալ:

Գիտես՝ ես տեսնում ու չէի տեսնում քո լարուած հայեացքը,
Որովհետեւ ուրախութիւնն այնքան շատ էր՝ բաժակը շրջում էի գլխիվայր, բաժակը մնում էր լիքը,
Յետոյ դարպասներն սկսեցին փակուել, բայց ես չէի հասկանում որ դրանք փակւում են անվերադարձ,
Ես նոյնիսկ հիմա ցաւ չեմ զգում, որովհետեւ այն, ինչ զգում եմ, բոլորովին նման չի ցաւի:

Ինձ թւում է՝ ես իմ անցեալը տեսել եմ երազում՝
Շոգը, խաղաղութիւնը, գիտական կոմունիզմը, գրական երեկոները Գրողների տանը,
Իսկ իրականում Երեւանը ձմեռնային քաղաք է
Հայաստան ձիւնոտ երկրում:

Ուշ է, այնքան ուշ է, որ նոյնիսկ մոմերը չեն վառւում,
Բայց ես գիտեմ՝ այնտեղ, քարերի յետեւում, մարդիկ կան,
Նրանք չեն քնել, բոլորն արթուն են,
Եւ նրանց բոլորի ներսում յոյսն է սեւանում արեւածաղկի նման:

Այսօր դեկտեմբերի քսաներկուսն է՝ ձմեռնային արեւադարձ,
Ինձ թւում է ես իմ անցեալը տեսել եմ երազում՝
Շոգը, խաղաղութիւնը, զգացողութիւնը, որ աշխարհը մեծ է, որ ժամանակի գետը հոսում է ինչ–որ տեղ հեռւում,
Այսօր այն հոսում է իմ պատուհանի տակով,
Եւ նրա շիթերից պատուհանիս ապակիները փշրուած են:
Ես չեմ ների, որ դու այդքան վախենում ես ցաւից,
Որ դու նահանջը նախընտրեցիր պարտութեանը,
Բայց ես ցաւ չեմ զգում, որովհետեւ այն, ինչ զգում եմ, բոլորովին նման չի ցաւի.
Եւ որովհետեւ իմ ներսում յոյսն է սեւանում արեւածաղկի նման:

Երեւանը ձմեռնային քաղաք է, աշխարհի ամենալուռ քաղաքը,
Երբ խաւարը թաց շերտով քսւում է հոգուդ,
Աւելորդ են դառնում բառերը, նիշերը, աղմուկը, թերթերը,
Մնում են Բաղրամեան սառած պողոտան ու գիշերը:

Լուսինը լրիւ է, ինչպէս ուրախութիւնը, որ ապրում էր սրտիս մէջ,
Բաժակը խփում էի քարերին, բայց բաժակը միշտ լիքն էր, միշտ աւելի ու աւելի լիքը,
Մեր հայրենիքն ուրախութեան օրօրուն դաշտերն են,
Բայց մենք չենք ապրում մեր հայրենիքում:

Վաղը նոր տարի է, հինն աւարտուեց երկաթէ դրան շրխկոցով,
Մենք գուցէ այլեւս չհանդիպենք,
Երեւանը մեծ քաղաք է, նրանում տեղ կայ եւ հանդիպման համար, եւ բաժանումի:

Ուրախութիւնն ապրում է քարերի մէջ, մարմնի մէջ ու բառերի,
Բայց սիրտ կայ, որ ուրախութիւն չի պահում, եւ բառեր կան, որոնցից փչում է ցուրտը մահուան,
Ես ուրիշ տեղ չունեմ գնալու, ինձ մնացել է այս լռակեաց քաղաքը,
Որ դատարկ չի, բայց նման է դատարկ հրապարակի:

Տարին աւարտուեց, ձմեռը շարունակւում է,
բայց ձմեռը կ'աւարտուի, գարուն կը գայ, գարունը յետ կը գայ, ես ուզում եմ ապրել մինչեւ գարուն,
Ուզում եմ ջրերը բարձրանան, թրջեն փեղկերն ու փշրեն ապակիները պատուհանիս,
Վաղը նոր, բոլորովին նոր տարի է, ես վաղն ուրախ եմ լինելու՝
Առաւօտեան, կէսօրին եւ միշտ:

Երեւանը մեծ քաղաք է, նրանում տեղ կայ քեզ համար, անգամ եթէ դու քայլում ես սառած փողոցով եւ չգիտես ուր գնալ,
Ճանապարհները բաց են՝ դէպի հարաւ, հիւսիս, արեւմուտք եւ արեւելք,
Բոլոր ճանապարհները բաց են, բայց չկայ ծանօթ ոչ մի փակուղի,
Թէեւ սա քաղաքն է, ուր ես ծնուել եմ:

Սա քաղաքն է, ուր ես ծնուել եմ, բայց սա ուրիշ քաղաք է,
Առաւօտները սառն են մետաղի պէս, քարերն անանուն են ու անգիր,
Ժամանակի գետը հոսում է այնտեղով, ուր առաջ Գետառն էր հոսում,
Եւ նրա սառցէ շիթերից պատուհանիս ապակիները փշրուած են:

Յունուարն է, բայց ոնց որ գարուն լինի,
Մեթրոյի «Երիտասարդական» կայարանում փոքրիկ մուրացիկը կանգնել ու յամառ նայում էր դէմքիս,
Բայց ես նրան ոչինչ չտուեցի:

Մուրացիկները կեանքի նշան են,
կեանքի, որ հոսում է պղտոր առուի նման,
Փտրնան պղտոր առուի նման՝ մութ գիշերի միջով:

Արեւը մայր է մտնում, յետոյ նորից բարձրանում է արեւը,
Բայց մեթրոյի «Երիտասարդական» կայարանում նոյն գոլ կիսախաւարն է:

Կիսախաւարն այլեւս զգացողութիւն է,
ինչպէս զգացողութիւն է արդէն Երեւանի ձմեռը,
Երբ առարկաները չունեն յստակ սահման,
Եւ տագնապը լուծուած է օդի մէջ, ինչպէս աղն է լուծւում գոլ ջրում:

Ո՞վ կը վերադարձնի ինձ իրերի ամառային մերկութիւնը
Եւ կարմիր ծուխը, որ Բաղրամեանի մայթերն էին արձակում օգոստոսեան արեւի տակ:

Մուրացիկները նոր Երեւանի զաւակներն են,
Գուցէ նրանք պատմէին ինձ այն, ինչ փնտռում եմ,
բայց ես նրանց վախենում եմ հարցնել:

Ես ամառն եմ ծնուել, օգոստոսին,
Շոգը Բաղրամեանի շիկացած մայթերից բարձրանում՝
Կէսօրին Արաբկիրի 8 փողոցում անհնար էր դառնում շնչելը:

Բայց Հայաստանի մայրաքաղաքում այլեւս ամառ չի անում,
Առարկաները մառախուղի մէջ են, եւ մարդիկ նման են ձկների:

Ես դրսից, բոլորի պէս, նման եմ ձկան,
Բայց ներսից արեւածաղկի սեւացած դաշտ եմ,
Յունուարի 7-ն է, տասնեօթ օր է՝ խօսում եմ, բայց նոր միայն յոգնեցի:

Քեզ արդէն մոռանում եմ, վաղը լրիւ կը մոռանամ
Ֆրանսիայի նախագահը հեռուում մահանում է,
Բայց ես Ֆրանսիայի նախագահը չեմ,
Ես չեմ մահանայ:

«Կանոնական Պատմութիւններ»
Երեւան – 1998

Մ. Պ.

Aïda KAZARIAN :

le rythme de l'iris

Le parcours d'artiste d'Aïda Kazarian compte de nombreuses balises en Belgique, il évolue et s'approfondit au fil des prix qu'il reçoit des diverses institutions qui en reconnaissent la qualité. Dans sa dernière exposition à la Chapelle de Boendael à Bruxelles, Aïda Kazarian a mené vers un degré de pureté une problématique qui la hante depuis ses premières recherches, celle du nouage et de la trame. La tapisserie ne produit plus un dépassement de la bidimensionalité de la toile elle devient au contraire intériorisée, donnant à penser ce qu'il en est de l'arrière-plan du tableau et du geste de l'artiste. Les travaux présentés à la chapelle relèvent pour la plupart d'une investigation sur la limite du visible et la capture de la lumière. Abstraites, de grandes toiles blanches révèlent des taches irisées,

par
Chaké MATOSSIAN
Docteur en philosophie et théorie de la communication

non pas des taches comme salissures et autres scories mais comme points lumineux, vides optiques et haptiques, ocelles d'une peau d'animal inconnu. A la limite de la disparition, émergeant subtilement du support blanc, les taches de couleur affirment une minéralité de la touche par leur aspect irisé. L'artiste travaille ainsi une sorte d'oxymore en peinture, par l'association du plus dématérialisé (la lumière) au plus inerte (le minéral qui donne lieu au métal). Elle réalise avec et par l'œuvre une expérience alchimique, effectue la transformation de la couleur métallisée en lumière et pose des taches irisées comme autant de miroirs reflétant un monde empli de multiples dimensions qui échappent aux sens. D'où l'abstraction voulue et revendiquée, qui perturbe plus d'un visiteur dans ce lieu ouvert à tous, aux habitants du quartier, aux curieux et aux passants, à ces promeneurs qui ont l'habitude de croire qu'ils «comprennent» un tableau par le simple fait qu'ils y reconnaissent une forme familière. Comble de l'illusion dont Aïda Kazarian s'amuse à démonter le piège en exhibant les taches brillantes, c'est-à-dire en produisant le travail d'un repli de l'icône sur l'indice. Aucun endroit ne pouvait mieux correspondre à la monstration de cette recherche qu'une chapelle. La valeur et la fonction indicielles des taches irisées se renforcent par le rythme que l'artiste leur impose. Loin d'être désordonnées, elles occupent l'espace de la toile en le scandant, de manière répétitive, comme un chant secret de moine ou de prisonnier, un chant doux et salvateur qui offre par sa répétition un autre espace, soit, pour reprendre les termes de Gilles Deleuze et Félix Guattari, une «déterritorialisation». A l'intérieur de la Chapelle, Aïda Kazarian produit, par ses toiles un déplacement des limites spatiales, donnant par la temporalité qui appartient au rythme des taches irisées, une capacité à dépasser et déplacer le territoire. L'artiste a choisi plusieurs formats, ceux auxquels est habitué le spectateur occidental et celui, oriental, du rouleau. Celui-ci occupe la place d'honneur dans la chapelle, un lieu qui entre en accord avec sa forme qui est le rappel de l'émergence du signe graphique, du tracé en colonnes verticales des débuts de l'écriture. Les œuvres font le tour de la chapelle, jouant le blanc sur blanc, l'interrompant parfois par une petite toile verte, un sursaut sur les murs, nous faisant comme un clin d'œil pour nous rappeler qu'il y a l'herbe sous les pieds, la terre avec l'idée, le dehors du dedans. L'un de ces petits tableaux nous présente en gros plan les mailles d'un tricot ou d'un filet, l'autre plus marécageux, se rapproche du camouflage et tous deux sont là comme monstration du piège du regard.

D'où, peut-être, le caractère insolite des titres qui ressortissent aux noms de code, comme par exemple : «AKOOTCD180.3.2000».

Il s'agit d'un encodage, une sorte de code barre, résultant d'une synthèse des initiales de l'artiste, de la technique utilisée, des dimensions et de l'année de création du travail. Mais, au-delà de cet aspect pratique, le titre se fait chiffrage. L'œuvre détient une dimension supplémentaire, secrète et préservée par le nom de code derrière lequel se cache une dédicace qu'il revient à l'artiste de pouvoir révéler. Le secret alchimique est montré dans sa formule qui, en même temps, préserve et masque un certain rapport du tableau au monde vécu et à son interprétation. Le code nous renvoie aussi à l'élaboration de la toile, aux cheminements de la pensée qui surviennent pendant que le travail s'effectue et dont il garde la trace, soulignant la dimension mnésique du travail. Une toile, un tissu, une trame peuvent se faire coffrets et nul doute que, chez Aïda Kazarian, le tableau-toile ne soit la transmutation d'un tapis d'Orient dans l'image duquel, on le sait, quelqu'un a laissé un secret.

լ, եթէ մեկնաբանութեան եւ ընթերցումի ենթարկուող քերթուածներուն բոլորովին խորթ են անոնք: Հոս կը հաստատուի որ խորթ չեն, եւ այդ է Պետրոսեանի գիրքին մէկ կարեւոր առաքինութիւնը: Իր մտածողութիւնը եւ զգացականութիւնը մէկ մակարդակի վրայ՝ իրն են, անձնական են, ինչ որ միշտ ալ պարզած է վաւերական բանաստեղծութեան: Երկրորդ մակարդակի մը վրայ՝ հաւաքակա՛ն են, կու գան դարու տասնամեակի մը փորձառութենէն, կ'արտայայտեն զայն ու կ'արտայայտուին անոր մասին որոշակի տեսանկիւնէ մը: Եւ վերջապէս, այդ տեսանկիւնը նեղ չէ, խեղդիչ չէ, ազգ-բերդ-բանտի կեդրոնական մութ խցիկներէն չի տեսներ եւ խօսիր, այլ բաղձալի, դեռ անգոյ, երեւակայուած ափէն կը տեսնէ եւ կը խօսի. այն ափէն, ուր ցամաքային բերդ-բանտէն դուրս գտնուող աշխարհի հետ պատշաճ շփումի որոնումն է գործին աղանցքներէն եւ ստանձնած պարտականութիւններէն մէկը:

Այդ բերդ-բանտը հայ մարդուն «տուն»ն է, եթէ կ'ուզէք, հարազատ տունը, միշտ կարօտալի եւ միշտ վտանգաւոր:

Տուն ունեցողը չուզեր տունին մէջ բանտարկուիլ: Կ'ուզէ դուրսէն եկող ճամբորդը, թերեւս, այո՛, նոյնիսկ օտար ճամբորդը հիւրասիրել – հիւրը բերդ-բանտին մէջ ծուփ կը ստեղծէ: Ապա նաեւ տուն ունեցողը, տանտէրը, կ'ուզէ ճամբորդել, – նստիլ ծովը կտրող նաւերուն վրայ (յիշելու համար Պետրոսեանի առաջին պատկերը): Կը մնայ տեսութեան յատուկ հարց մը, – իր տունէն դուրս ելլող ճամբորդը կ'ուզէ՞ ինքզինք օտար զգալ, օտար երկիրներու մէջ, ըմբոշխնել իր օտարութիւնը: Կամ, ինչպէս կը հաստատեն որոշ սփիւռքագէտներ, արդեօք տարբե՞ր է իրականութիւնը, եւ ճի՞շդ է ըսել թէ բազմաթիւ ճամբորդներ կամ ստիպողաբար սփիւռքացած ու մանաւանդ տեւաբար սփիւռքացող անձեր, իտէալ պայմաններու մէջ չեն ուզեր զգալ որ «օտար» են զիրենք հիւրընկալող հայրենիքին մէջ, ոչ ալ կ'ուզեն ինքզինքնին «օտար» զգալ իրենց հայրերու ձգած հայրենիքին մէջ: Կարելի՞ է նման իրավիճակ ստեղծել իրական կեանքի քաղաքական, ընկերային ու տնտեսական պահանջկոտ պայմաններուն մէջ: Եթէ ոչ՝ կարելի՞ է արդեօք, գոնէ այդ ըն-տանի-ութիւնը երկուստեք ըզգալ, թէ՛ հիւրընկալ երկրի, թէ՛ հայրենիքի մտքի, արուեստի, լեզուներու, մշակոյթներու ծիրէն ներս, որոնք գոնէ մտաւորականներու եւ արուեստագէտներու երկրորդ հայրենիքներն են: Կարելի՞ է: Բաղձալի՞ է: Նովալիսին վերագրուած խօսք մը կայ, – «Փիլիսոփայութիւնը տունի կարօտն է, փիլիսոփայութիւնը արդիւնքն է մղումի մը եւ փափաքի մը՝ ինքզինք «ամէնուրեք ի տուն զգալու»: Այսինքն, համայն աշխարհը, համայն մարդկութիւնը իբրեւ «տուն» զգալու: Սա կարելի եւ բաղձալի է, օրինակ՝ մաթեմաթիկոսի մը, ֆիզիկոսի մը համար: Այդ կրթանքներու աշխարհը միայն գիտական հմտութեան անձագիրը կը պահանջէ, ազգի ու մարմնի յատուկ բերդ-բանտերը անկարեւոր են հոն: Բայց անոնցմէ դուրս որքա՞ն բաղձալի եւ կարելի է «ի տուն» զգալ ամէնուրեք:

Հայ մշակոյթը բառին իսկական առումով փիլիսոփայութիւն չունի, ինչպէս Կարպիս Քորթեան յանդգնած է հաստատել տասնամեակ մը առաջ: Խորհ. Հայաստանի մէջ մի քանի գրքեր հրատարակուած են հայ փիլիսոփայութեան մասին, սակայն յօրինուած բան մըն է ան: Դժբախտաբար, կամ բարեբախտաբար, հայութեան փիլիսոփայութիւնը իր արուեստին մէջ պէտք է որոնել, – երգի, քերթուածի պատմագրութեան եւ ճարտարապետութեան մէջ, գլխաւորաբար եւ թերեւս այդ կարգով, առանց անտեսելու հայ հրապարակագրութիւնը եւ Յակոբ Օշականէն ետք, քննադատութիւնը: Ասոնք են սեռերը ուր հայ միտքը փիլիսոփայութեան հիմնական հարցերը պեղած է եւ այդ հարցերուն մասին հաւաքական մտածողութիւն մը ստեղծած: «Ներս»ի եւ «դուրս»ի, մտքի եւ մարմնի, տունի եւ օտարի երկուութիւնները լուրջ, անխուսափելի նիւթեր եւ հարցեր են որեւէ փիլիսոփայութեան համար՝ Սոկրատէսէն եւ Պղատոնէն ի վեր: Պետրոսեանի գործը, որուն ընթերցումը այս յօդուածին մեկնակէտն էր ու պիտի ըլլայ վերջակէտը, ունի իրեն յատուկ գեղագիտական տկարութիւններ եւ նկարագիր, որոնք անարդարօրէն, բայց հարկադրաբար, անտեսուած մնացին այս գրութեան մէջ: Ողջունելին, Կանոնական Պատմութիւններ քերթուածներու հաւաքածոյին մէջ, այն է որ հոն նիւթ, պատկեր, խօսք, կառոյց, միասին եւ բաւական հմտօրէն կը ներառնեն անձնական եւ հաւաքական փորձառութիւն եւ մտածում, կը ստեղծեն ու կ'արտայայտեն նման մտածում: Խոստմնալից է այս գիրքը, որուն խոստումը դրական է, սակայն, միանգամայն՝ մտահոգ ու մըտահոգիչ: Բանաստեղծը կը գիտակցի որ ապագան եւ անոր կապուած յոյսերն ու խոստումները հացի պէս կենսական են, սակայն այդ հացը կտրող դանակին պէս վտանգաւոր: Գիրքին վերջին քերթուածին վերջին տողերն են. –

«ինչպէս դանակը, որ արդէն դրուած է հացի կողքին,
դեռ չեն կարդացւում, բայց արդէն գրուած են գրերը»:

ԽԱՉԻԿ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ

quelques propos au sujet de la première édition de l'ARMENIAN JAZZ FESTIVAL

Paris, **New Morning,**
19-20-21 Octobre 2001

Tout s'est passé très vite. Le 1er novembre 2000, nous assistions à un concert au **New Morning,** à Paris, et quelques jours plus tard nous nous lancions dans l'organisation d'un festival de jazz arménien. Que s'est-il passé? Pourquoi le plaisir d'avoir assisté à ce concert ne suffisait-il pas, pourquoi avoir voulu plus encore : un festival. Cette soudaineté, cet emportement nous interrogent encore... Tout s'est passé comme si nous étions prêts à recevoir ce qu'on allait nous donner, mais sans le savoir.

Ce soir-là, entre errance et odyssée, l'étrange navire d'Arto Tunçboyaciyan, l'**Armenian Navy Band** nous entraîne dans son sillage. Un **Navy Band** d'un pays qui n'a pas de mer... Les émotions sont recueillies dans le riche passé musical arménien, dans l'histoire même de l'Arménie et ce passé, ces territoires, ces traces sont redonnés à travers la sensibilité musicale de notre temps. Arto ne se contente pas de reproduire les chants traditionnels, mais grâce au pouvoir créatif du jazz, il les amène jusqu'à nous, c'est-à-dire qu'il nous les fait réellement entendre dans le temps présent. Quitte à les réinventer.

Ce concert provoque une véritable onde de choc. Pour les membres de **Coopération Arménie,** présents dans la salle, naît aussitôt, comme une nécessité, l'idée d'organiser un festival de jazz arménien. L'association **Coopération Arménie** mène prioritairement des actions d'aide à l'Arménie, mais elle s'est impliquée, parallèlement, dans des activités culturelles notamment dans le domaine de l'art contemporain.

Arto Tunçboyaciyan et l'**Armenian Navy Band,** c'est d'abord une symbiose réussie entre Diaspora et Arménie. Le terrain de cette rencontre est celui du jazz ou si l'on souhaite reprendre la définition d'Arto, le **folk d'avant-garde.**

Sur le versant Diaspora, Arto Tunçboyaciyan. Né en Turquie, en 1957, il est encore un enfant lorsque son frère Onno l'initie à la musique .Arto s'exile aux Etats-Unis en 1981 où il finit par frayer avec les plus grands du jazz. Compositeur et interprète, percussionniste et chanteur, créateur de génie, extraverti, il est débordant d'énergie et d'inventivité. Sa musique est la recherche de l'expression d'une vérité, la sienne, et celle d'une terre aussi.

Sur le versant Arménie, l'**Armenian Navy Band** comprend des musiciens de jazz, presque tous issus de l'**Armenian Jazz Band.** Ils sont d'une retenue, d'une intériorité tout orientale. Rappellons que l'**Armenian Jazz Band** fut créé par Constantin Orbelian en 1956, en pleine période soviétique et sous surveillance. Après une éclipse consécutive aux années Glasnost, il connaît, depuis quelques années, un réveil certain sous la direction d'Armen Mardirossian. A ces musiciens de jazz sont venus se joindre des musiciens d'instruments traditionnels comme le doudouk, le zourna, le kamantcha, le kanun.

L'**Armenian Navy Band** est déjà le lieu d'un rassemblement, déjà à lui seul un festival, il ne restait plus qu'à donner corps à ce qu'il insufflait. Si bien que l'on ne s'étonnera pas de la présence d'Arto Tunçboyaciyan en trio pour l'ouverture, puis le lendemain avec l'ensemble du **Navy Band** pour la première édition de l'**Armenian Jazz Festival.**

L'**Armenian Jazz Festival** est-il le premier festival du genre? Pas tout à fait. En Arménie, depuis 1998, des festivals de jazz sont organisés. Dans la mesure où cela se passe en Arménie, on ne s'appesantit évidemment pas sur le caractère «arménien» du festival. Des grands noms du jazz comme Chick Corea sont invités, rencontrent un public enthousiaste et des musiciens arméniens jusqu'alors «isolés dans leurs montagnes»... En France, de son côté, le **Festival de Junas,** qui chaque année invite des jazzmen d'un pays étranger, avait pour son édition 2001, en juillet dernier, fait le choix de l'Arménie et occasionné des rencontres entre musiciens arméniens et français. La thématique arménienne relève ici d'un moment ponctuel.

On peut donc affirmer qu'il existe dans le domaine du jazz une mouvance festivalière toute nouvelle et que l'**Armenian Jazz Festival** participe à ce phénomène. L'une de ses caractéristiques est d'assumer le «syndrome diasporique arménien» qui consiste à toujours se poser la question de son existence dans le monde : «Qui suis-je exactement, quelle part d'arménien en moi, quelle part d'arménien en toi, la musique, en toi, le jazz?». L'autre caractéristique est le désir de perdurer, de questionner et de vivre dans la durée ces phénomènes jazzistiques, de créer un espace favorable aux rencontres entre musiciens, entre ces derniers et un public, en conviant l'élément «temps» qui rapproche, fait et défait, crée et recrée. L'**Armenian Jazz Festival** veut offrir, au fil du temps, des opportunités de rencontres, de maturation, de dévoilement. Il se veut un lieu festif où vivre collectivement des événements musicaux. Il rêve d'un lieu où les créateurs seraient conviés, par le fait même d'un vécu collectif, à des nouvelles aventures intérieures.

par
Liliane DARONIAN

On ne peut s'empêcher d'interroger la nouveauté du phénomène «festival de jazz arménien». En effet, pourquoi ce phénomène apparaît-il maintenant ? C'est ce nouveau, ces premiers pas qu'il faut interroger. Assistons-nous à l'apparition d'une approche nouvelle reconnue comme telle par les amateurs et qui aurait incité à l'instauration de festivals ? S'agit-il d'un jazz émergeant, d'un croisement d'influences multiples, ou tout simplement de l'expression des diverses tendances du jazz actuel ?

Un regard rétrospectif sur des événements survenus au siècle passé permettrait peut-être d'apporter un début de réponse à ces questions et, en tout cas, de comprendre ce qui est advenu à la musique et, plus généralement, à toute création arménienne. Le génocide de 1915 élimine une grande partie de la nation arménienne, chasse les survivants de leurs terres, et par voie de conséquence, frappe de plein fouet la musique arménienne elle-même. La Catastrophe emporte des milliers de musiciens anéantissant du même coup ce qu'ils avaient à transmettre aux générations futures. Puis, la soviétisation de ce qui restait de l'Arménie donne lieu à une société isolée du reste du monde sur laquelle s'exerce un contrôle totalitaire.

En France, le phénomène «festival de jazz» initié par des associations d'amateurs suivi par une politique culturelle des pouvoirs publics commence à prendre son essor dans les années 70 et alors qu'en 75 on ne compte que 5 festivals le guide **Jazz 2000** recense en 1999 «285 manifestations qui affichent une programmation jazz plus ou moins prononcée».

Lacunaire, dispersé, voire empêché, le monde musical arménien n'est pas en mesure de produire un festival de jazz car un festival de jazz est un lieu collectif où musiciens et amateurs se rassemblent et où, en toute liberté et jusqu'au bout de ses potentialités, s'exprime un processus créatif. Il a fallu que le temps passe, il a fallu la fin du monde soviétique symbolisé par la Chute du Mur de Berlin pour que cela devienne possible. D'une manière générale, c'est bien à partir de ce moment que des Arméniens d'Arménie et de Diaspora peuvent réellement trouver les moyens de se retrouver, de se rassembler, tout à fait librement.

Cela ne signifie pas —loin de là— que les Arméniens n'aient pas offert de nombreux talents au monde de la musique durant le XXème siècle. Le patrimoine musical arménien a su résister. Il est étonnant de constater comment, notamment en France, le jazz, cette nouvelle musique, a pu être investi par nombre d'entre eux.

Citons, par exemple, le cas assez extraordinaire de Grégor —figure oubliée— de son vrai nom Krikor Kélékian. Jacques Hélian, dont on peut également rappeler ici la renommée, en France, en tant que chef d'orchestre, évoque le destin peu commun de Grégor dans son ouvrage **«Les grands orchestres du music-hall en France»** édité en 1984. Danseur, chanteur, chef d'orchestre et impresario, celui qui aimait à se faire appeler le «sublime Grégor» fut un véritable précurseur. Né en 1898 à Constantinople, il échappe miraculeusement aux massacres de 1915 dans lesquels périssent son père et plusieurs membres de sa famille. Il finit par trouver refuge en France où, pionnier du grand orchestre de jazz en Europe, il forme en 1928, à Paris, le premier orchestre de jazz français, **Grégor et ses Grégoriens** ou **ses Grégorians.** S'y illustreront de jeunes musiciens de talent comme Stéphane Grapelli. «Presque tous les grands solistes de la première génération lui doivent d'avoir été révélés à eux-mêmes et au public» (**Dictionnaire du Jazz,** 1994). En juillet 1929, il fonde **La Revue du Jazz,** où l'on trouvait pour la première fois l'affirmation que le jazz était une musique spécifique et qu'il devait être enseigne en tant que tel au Conservatoire. Après maintes pérégrinations, il décédera en Allemagne, en 1971.

Rappelons qu'aux Etats-Unis, le légendaire producteur de jazz, George Avakian, produisit et contribua à populariser Miles Devis, Keith Jarett et bien d'autres.

A la question posée d'un festival qui chercherait à présenter une musique spécifique, un jazz particulier, le **jazz arménien,** les organisateurs ne souhaitent pas apporter une réponse prématurée. Il ne souhaitent pas qualifier ce jazz car ce serait l'enfermer déjà. Ils voudraient lui laisser le temps, le laisser évoluer librement, au gré des rassemblements, au gré des rencontres. C'est la musique qui décidera, en définitive. C'est aussi pourquoi le Festival veut inscrire son existence dans la durée.

Nous pouvons avancer, cependant, dès à présent, que depuis quelques années et probablement sous l'influence de la **world music,** des formes musicales traditionnelles arméniennes sont liées à des formes plus purement contemporaines, qu'elles soient jazzistiques ou autres. Souvenons-nous, au début des années 80, en France, du groupe éphémère **Zartong.** Aux Etats-Unis, le groupe **Night Ark** d'Ara Dinkjian, joueur virtuose de **oud,** apparaît en 1986. Arto Tunçboyaciyan est membre de ce groupe. Lorsqu'il se rend en Arménie et rencontre les musiciens qui formeront l'**Armenian Navy Band,** il est déjà riche d'une expérience ouverte aux formes traditionnelles au sein du groupe **Night Ark,**. On remarquera que l'impulsion qui conduit actuellement des musiciens de jazz, en Arménie, à jouer de concert avec des musiciens d'instruments traditionnels, vient des U.S.A. et plus précisément de la diaspora américaine. Depuis deux ans, l'**Armenian Jazz Band** a intégré des joueurs d'instruments traditionnels. Tout récemment, en Arménie, des joueurs de kamantcha, de doudouk, de tar nous faisaient part de leur surprise : «On pensait n'interpréter que le répertoire traditionnel durant toute notre vie...». L'utilisation d'instruments traditionnels dans les orchestres de jazz, cette tentative de faire fusionner le jazz avec des musiques traditionnelles date des années 70. Mais alors qu'au départ, cela exprimait plutôt l'ouverture du monde occidental aux musiques traditionnelles, la tendance contemporaine semble montrer un mouvement réciproque entre les deux parties. Le mouvement musical arménien fait partie de cette tendance actuelle. On remarquera donc la nouveauté du phénomène —hormis quelques précurseurs— et le décalage temporel par rapport à d'autres parties du monde, comme le continent africain, la péninsule indienne, des régions comme la Bretagne...

On découvre que les musiciens n'explorent par les mêmes régions musicales arméniennes, les mêmes styles de musique. On notera, par exemple, l'existence d'un style que l'on pourrait appeler arméno-gréco-oriental, plutôt méditerranéen, avec l'intervention d'un instrument comme le **oud,** ou alors une approche influencée par des répertoires de chants populaires et des arrangements qui avaient cours en Arménie soviétique, ou bien encore il s'agit presque d'un travail d'archéologue qui exhumerait les traces musicales attestant la présence arménienne dans des régions qui en sont actuellement désertées. Les jeunes talents que nous présenterons —cette année, la chanteuse Alla Lévonian— donneront une idée de ce qui se fait actuellement en Arménie, dans la jeune république indépendante. Claude Tchamitchian, contrebassiste (France), «triloguera» avec Sophia Domancich , au piano et Simon Goubert à la batterie. Edmond Hosdikian, saxophoniste (France), engagera un duel avec Gaguig Mouradian au kamantche (Arménie)...

Coexistent, au même titre, recherche d'expression à partir du terreau musical arménien et désir tout aussi fort de partage, d'ouverture au monde, d'universalité. Il est vrai aussi que les artistes pourront déborder du cadre du jazz proprement dit, vers la chanson ou même la musique contemporaine. Mais les éléments de créativité, d'improvisation, cette façon de traiter les instruments, cette liberté, feront la différence.

Le Festival de Jazz arménien, c'est l'occasion d'écouter des musiciens de haut niveau réprésentant les diverses tendances du jazz contemporain. Il ne se cantonnera pas dans la présentation de la rencontre du jazz et de la musique traditionnelle arménienne. On l'aura compris, le Festival veut échapper à tout classement.

Si la diversité peut être appréhendée comme risque, le risque peut l'être comme liberté. Dans tous les cas, ce qui frappe c'est l'authenticité des diverses approches.

L'établissement de ce premier Festival international de Jazz arménien à Paris, capitale d'un pays qui a accueilli le jazz, qui l'a tant nourri et produit, n'est pas neutre. Cette première édition de l'**Armenian Jazz Festival** se sent immergée dans une tradition jazzistique persistante, ouverte, forte.

La présence de Didier Malherbe lors de ce Festival n'est pas neutre non plus. Le parcours de Didier Malherbe est fait d'ouvertures successives sur ce que l'on appelle les «musiques du monde». Une ouverture qui s'effectue à partir de sa pratique du jazz et à partir aussi de son instrument premier, le saxophone. C'est ainsi qu'il rencontre sur son chemin le **doudouk** arménien. Et comme le hasard fait bien les choses, Djivan Gasparian, maître du doudouk, l'invite à participer, au mois d'août dernier, au premier festival consacré à cet instrument. C'est donc après s'être produit devant de milliers de spectateurs arméniens à Gumri et à Erevan que Didier Malherbe nous fera l'honneur d'un concert qui clôturera les festivités, le dimanche 21 octobre.

Septembre 2001

Imprimé sur les Presses du Journal «Haratch» — 83, rue d'Hauteville - 75010 Paris — Commission Paritaire No 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 9
MARDI
9 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.270 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.270

«ԱՐՇԱԼՈՅՍ»

(Հոկտեմբեր 5 / 8)

«ԱՄԷՆ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԳԻՏԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

Գերմանիոյ Խորհրդարանին փոխ - նախագահուհին Ա. Ֆլոմեր որ Երեւան կը գտնուէր, Հոկտեմբեր 5-ին այցելած է Ծիծեռնակաբերդ, ծաղիկներ զետեղած ցեղասպանութեան զոհերու յիշատակին: Այդ առթիւ ան ըսած է. «Ծաղիկները դրի յանուն մեր Խորհրդարանին եւ գերմանացի ժողովուրդին: Մենք բոլորս տեսանք Պապին այցը, մօտիկ ըրինք Ազնաւուրը. միայն քանի մը օր ետք ես հոս եմ եւ ատիկա յուզում կը պատճառէ ինծի: Մենք գիտենք որ ձերը ժամանակակից պատմութեան առաջին ցեղասպանութիւնը եղած է եւ հայ ժողովուրդը շատ տառապած է»: Նկատի առած որ Գերմանիոյ Խորհրդարանը վերջերս մերժած էր օրակարգին բերել ցեղասպանութեան ճանաչման նիւթը, իրեն հարց տրուած է որ Գերմանիա օր մը պաշտօնապէս կը ճանչնա՞յ Հայերու ցեղասպանութիւնը. փոխնախագահուհին պատասխանած է. «Ամէն գերմանացի գիտէ այդ ոճրագործութեան մասին: Յոյս ունիմ որ հայ եւ Թուրք ժողովուրդներուն միջեւ երկխօսութիւն տեղի կ'ունենայ անցեալին եւ ոճիրներուն մասին»: Ան այցելած է նաեւ ցեղասպանութեան Թանգարանը:

***

ՆԱԽԱԳԱՀԸ ՎԵՐՋԻՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նախագահ Ռ. Քոչարեան խումբ մը պաշտօնատարներու հետ Հոկտեմբեր 5-ին այցելած է Կոտայքի մարզը ուր հինգ ձեռնարկութիւններու մէջ քննութիւններ կատարած են նոր աշխատատեղիներ ստեղծելու հեռանկարով: Քննարկումներէն ետք նախագահը Զարենցաւանի քաղաքապետարանին մէջ մամուլի ասուլիս մը տուած է. խօսած է Կոտայքի այցին ու Սեպտեմբեր 25-ին Երեւանի «Առագաստ» սրճարանին մէջ պատահած սպանութեան մասին: Ան շեշտած է թէ ատիկա պէտք չէ մեկնաբանուի որպէս վախի մթնոլորտ ստեղծող պարագայ, ինչպէս կը փորձեն ընել լրատուները: Ան շեշտած է թէ յանցաւորները պիտի պատժուին եթէ նաեւ անոնք իր թիկնապահներէն են: Աւելցուցած ալ է որ անոնք նախկին Նախագահին թիկնապահներուն պէս կարեւոր միջադէպեր միջամուխ եղած չեն մինչեւ այսօր: «Եթէ կան մեղաւորներ, ապա ամէն ինչ բաց պիտի ըլլայ եւ մեղաւորները պիտի պատժուին դատարանի որոշումով» ըսած է ան:

***

ՊԱՊԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԳԱՐԵԳԻՆ Բ.Ի

Յովհ. – Պօղոս Բ. հեռագիրով մը շնորհակալութիւն յայտնած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի, Հայաստանեան այցին իրեն ցոյց տրուած ջերմ ընդունելութեան համար: Ան երախտագիտութեամբ յիշած է Մայր Աթոռին մէջ ընդունելութիւնը, հայ կաթողիկէ համայնքին հետ հանդիպումին, Երեւանի նորօծ Մայր Տաճարին մէջ էքիւմէնիք աղօթքը եւ Կաթողիկէ եւ Հայաստանեայց Եկեղեցիներուն միջեւ բացուած յետագայ արդիւնաւոր գործակցութեան հեռանկարին համար:

***

ՊԱՊԸ ԱԴՐԲԵՋԱՆ Կ'ԵՐԹԱՅ 2002–ԻՆ

Ադրբեջանական «525-րդ» թերթին համաձայն, Պապը ափսոսանք յայտնած է որ ժամանակի սղութեան հետեւանք չկրցաւ համատեղել Հայաստան եւ Ադրբեջան կատարելիք այցերը: «Այսուհանդերձ, կը փափաքիմ ընդունիլ ձեր հրաւէրը եւ այցելել ձեր ընկերասէր ժողովուրդին» ըսած է Յովհ. – Պօղոս Բ.: Ան Բաքու կ'երթայ 2002–ին, Ադրբեջանի եւ Վատիկանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման տասնամեակին:

ԱՄԵՐԻԿԱ ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆԻ ԱՆՑԱՒ

ՀՐԹԻՌ, ՌՈՒՄԲ ԵՒ ՍՆՆԴԵՂԷՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՎՐԱՅ

«ԱՄԵՐԻԿԱ ԱՅԼԵՒՍ ԵՐԲԵՔ ԱՊԱՀՈՎ ՊԻՏԻ ՉԸԼԼԱՅ» Կ'ԸՍԷ ՊԷՆ ԼԱՏԷՆ

Կիրակի, Հոկտեմբեր 7, ֆրանսական ժամով 18.30–ին է որ ամերիկեան օդուժը յարձակումի անցաւ Աֆղանիստանի վրայ, ուր գիշեր էր արդէն (21.30):

Նախագահ Պուշ կարճ ելոյթով մը հաղորդած էր իր ժողովուրդին, որ իր հրահանգով Միացեալ – Նահանգներու բանակը սկսած էր հարուածել Աֆղանիստանի Թալիպաններու վարչակարգին զինուորական հաստատութիւնները եւ Ալ-Քայտայի ահաբեկիչներուն մարզումի կայանները: «Մեզի կ'օգնէ, կ'ըսէր Պուշ, մեր հաւատարիմ զինակիցը՝ Մեծն Բրիտանիա: Այլ զինակիցները, ներառեալ Գանատա, Աւստրալիա, Գերմանիա եւ Ֆրանսա խոստացան իրենց ուժերը տրամադրել գործողութեան ընթացքին:... Մեզի զօրավիգ է աշխարհի հաւաքական կամքը»: Նախագահը կը ճշդէր որ կարգ մը դիմումներ ըրած էր, երկու շաբաթ առաջ Թալիպան ղեկավարներուն, ի շարս որոնց փակել ահաբեկիչներուն մարզումի կայանները, յանձնել Ալ - Քայտայի ղեկավարները եւ ձգել որ օտարները մեկնին: Այսօր, Թալիպանները պիտի վճարեն գինը, քանի այս դիմումներէն ոչ մէկը գոհացում ստացաւ: Միաժամանակ, Պուշ ապահովութիւն կուտայ Աֆղանիստանի ճնշուած ժողովուրդին, որ ան պիտի վայելէ Միացեալ – Նահանգներու առատաձեռնութիւնը, քանի, կը շեշտէ. - «Երբ կը հարուածենք զինուորական թիրախներ, նոյն ատեն սննդեղէն, դեղօրայք պիտի թափենք Աֆղանիստանի կիներուն, այրերուն, երախաներուն, որոնք կը տառապին եւ անօթի են: ԱՄՆ բարեկամ են աֆղան ժողովուրդին եւ բարեկամ են միլիոն մարդոց որոնք իսլամին կը պատկանին: ԱՄՆ թշնամիներն են անոնց որոնք կ'օգնեն ահաբեկիչներուն եւ բարբարոս ոճրագործներուն»:

Ժամը 20.30-ին, յաջորդելով Պուշի եւ Թոնի Պլէրի, Ժ. Շիրաք արտայայտուեցաւ հեռատեսիլէն: Յայտնեց որ գործողութենէն ժամ մը առաջ, Պուշ հեռաձայնած էր իրեն եւ տեղեկացուցած: Շիրաք ապահովութիւն տուած է Պուշի որ ֆրանսական ուժերը կը մասնակցին: Զինուորական գործողութիւնները, ըստ Շիրաք, երկար պիտի տեւեն: Յիշելով Սեպտեմբեր 11-ի «հրէշային» ոճրափորձերը, Շիրաք ըսաւ որ բոլոր ժողովրդապետութիւնները սպառնալիքի տակ են: Իրմէ առաջ արտայայտուած էր Թ. Պլէր եւ Անգլիա արդէն իսկ կը մասնակցի ամերիկեան ռմբակոծութիւններուն եւ հրթիռներու արձակման: Նախապէս արդէն, ամերիկեան օդուժը եւ զինուորներ Ուզպեկիստան տեղաւորուած էին:

***

Նախքան ռմբակոծութեանց սկիզբը, Պէն Լատէն արձանագրած է ելոյթ մը, զոր Քաթարի Ալ - Ճեզիրա հեռատեսիլը սփռած է Կիրակի օր: Ան կ'ըսէ. - «Ահաւասիկ Ամերիկան որ հարուածը կը ստանայ ամենազօր Ալլահէն իր ամէնէն խոցելի կէտին վրայ, քանդելով, Փառք Տիրոջ, իր ամէնէն պատկառելի շէնքերը: Ինչ որ Ամերիկան այսօր կը կրէ, մէկ չնչին օրինակն է մեր կրածին տասնեակ տարիներէ ի վեր» ու իր խօսքը կը վերջացնէ սապէս. – Ամերիկային կ'ուղղեմ կշռուած խօսքեր, կ'երդնում որ Ամերիկան այլեւս երբեք ապահովութիւն պիտի չվայելէ, ցորչափ Պաղեստին ալ չվայելէ եւ ցորչափ արեւմտեան բոլոր անաստուած բանակները չհեռանան սրբազան հողերէն»:

***

Երկուշաբթի առտու, կարելի չէր գաղափար մը կազմել անգլեւամերիկեան ռմբակոծութեանց արդիւնքներուն մասին: Ռումբեր ինկած էին Քապուլի, Ճալալապատի եւ Քանտահարի վրայ, բայց, շատ յայտնի չէր թէ ո՞ւր ինկած էին այդ ռումբերը եւ ինչպէս զինուորական թիրախներ եւ Պէն - Լատէնի ռազմակայանները վնասուա՞ծ են: Կարգ մը տեղեկութիւններու համաձայն Քապուլի մէջ, 20 բնակիչներ մեռած էին, բայց, իրանեան աղբիւրներ կը հաղորդէին թէ զոհերու թիւը շատ աւելի մեծ է, որովհետեւ ռումբեր ինկած են բնակելի շրջաններու վրայ: Արդէն Իրան եւ Իրաք դատապարտած են այս յարձակումները, Թեհրանի համար ռմբակոծութիւնները անընդունելի են:

***

Միացեալ - Նահանգներու կողքին են արեւմտեան պետութիւններէն զատ Ջինաստան, Ռուսաստան: Մահմետական երկիրներու շարքին, միայն Թուրքիան է որ զօրավիգ է Ամերիկայի:

***

Թալիպանները «ահաբեկչական արարք» որակեցին ամերիկեան յարձակումը եւ յայտարարեցին թէ Ուզպեկիստանի վրայ պիտի յարձակին, որ իր հողամասը տրամադրեց ամերիկեան ուժերուն:

***

Ուսամա Պէն Լատէն բազմաթիւ նմանակներ կը գործածէ շփոթութիւն ստեղծելու համար արեւմտեան տեղեկատուութեանց սպասարկութեանց մօտ:

***

Ֆրանսայի ձախ մեծամասնութեան մէջ, բոլոր հոսանքները համաձայն չեն այս յարձակումներուն: Կանաչներն ու համայնավար կուսակցութիւնը բացարձակապէս դէմ են: Հիւի համար «պատերազմական արարք է»:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԱՑԵԱԼ - ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարարը՝ Գոլին Փաուըլ ազդարարած է Իսրայէլի վարչապետին՝ Շարոնի, որ Պուշ «անընդունելի» դատած է նախորդ օրուան իր արտայայտութիւնները: Ծանօթ է որ Շարոն ըսած էր թէ Իսրայէլ Չեխոսլովաքիա չէ (ակնարկութիւն 1938–ի արեւմտեան անձնատուութեան, յանուն խաղաղութեան զոհելով Չեխոսլովաքիան) եւ պէտք չէ որ արեւմտեանները համաձայնին Արաբներուն հետ ի վնաս Իսրայէլի: Շարոն յետ քայլ ըրած է եւ ջատագոված Իսրայէլի եւ Ամերիկայի «խոր բարեկամութիւնը»:

ՄԻԼԱՆՈՅԻ Լինաթէի օդակայանէն Գոփընհակըն մեկնող ՍԱՍ սքանտինաւեան օդանաւային ընկերութեան մէկ օդանաւը Հոկտեմբեր 8–ի առաւօտուն բախած է փոքրիկ օդանաւի մը, երբ թռիչք պիտի առնէր, ապա կառատունի մը մէջ մխրճուած է: 104 ճամբորդ կը փոխադրէր, բոլորն ալ մեռած են:

ՖՐԱՆՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ Թ. վեհաժողովը, որ պիտի գումարուէր Պէյրութ, Հոկտեմբեր 26 - 28-ին, յետաձգուեցաւ ինչպէս կը սպասուէր, Մերձաւոր – Արեւելքի անկայուն վիճակին պատճառաւ:

ԻՏԻԱ ՓՈԼԻԹԻՔԱ, Թրքական եռամսեայ պարբերականին հրատարակութիւնը արգիլուեցաւ ցնոր տնօրէնութիւն: Վեց ամիս առաջ, պարբերականը որ յարգուած հրատարակութիւն մըն է, Թուրք զինուորականներու նկար մը հրատարակած էր, մեծ խորագրով մը՝ «Ի՞նչ բանի կը ծառայէ բանակը»: Ըստ երեւոյթին, զինուորականները գոհ չեն մնացած եւ Սեպտեմբերին վերջին թիւը գրաւուած է եւ

(Շար.ը Դ. էջ)

ՀՌՈՄ

ԵՐԱՆԱՑՈՒՄ ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐՔ. ՄԱԼՈՅԵԱՆԻ

Ինչպէս յայտարարուած էր առաջին առթիւ, Նոթր – Տամի ապրիլեան պատարագին ընթացքին (Ապրիլ 22) Գրիգոր Եպիսկոպոս Կապրոյեանի կողմէ, Հոկտ. 7-ին Պապը երանացումի արարողութիւնը կատարեց Մարտինի նահատակ Իգնատիոս Եպիսկոպոս Մալոյեանի:

«Ֆիկառօ» լուրը կու տար Հոկտ. 8–ի իր թիւով, յայտնելով որ «Յովհ. Պօղոս Բ. պատարագ մը մատոյց, երէկ, որուն ընթացքին երանացումը կատարեց քանի մը կրօնաւորներու եւ մասնաւորաբար Հայ Արքեպիսկոպոս՝ Իգնատիոս Մալոյեանի, զոհ 1915–ի ցեղասպանութեան»:

ՖՈՒԹՊՈԼ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱԺԱԿ 2002

ՀԱՅԱՍՏԱՆ – ՆՈՐՎԵԿԻԱ 1 – 4

5–րդ խումբին մէջ, իր դաշտին վրայ, Հայաստան պարտուեցաւ Նորվեկիայէն 1 – 4: Հայաստանի կէտը նշանակեց Յովսէփեան 72–րդ վայրկեանին: Նորվեկիոյ չորս կէտերը նշանակեցին Պորկերսըն (49-րդ եւ 80-րդ վայրկեաններուն) եւ Գարօու (70–րդ եւ 89–րդ վայրկեաններուն):

Դասաւորման գլուխն է միշտ Լեհաստան 21 կէտով, իրեն կը յաջորդեն Ուկրանիա, Բելառուսիա, Նորվեկիա, Կալէս եւ վերջին դիրքի վրայ Հայաստան 5 կէտով:

***

4–րդ խումբին մէջ Մոլտաւիա իր դաշտին վրայ պարտուեցաւ Թուրքիայէն 0 – 3: Դասաւորման գլուխն է Շուէտ 23 կէտով, իրեն կը յաջորդէ Թուրքիա 21 կէտով:

***

Մինչեւ 21 տարեկաններու Եւրոպայի ախոյենութեան մրցաշարքին ի հաշիւ, Հոկտ. 5–ին, Հայաստանի երիտասարդները կ'ընդունէին Նորվեկիան: Աբովեանի մէջ 500 հանդիսատեսներու ներկայութեան անոնք շատ աւելի յաջող արդիւնք մը ձեռք ձգած են քան իրենց երէցները՝ յաջորդ օրը: Արդարեւ Հայաստան 2 – 0 շահած է մրցումը: Կէտերը նշանակած է Արա Յակոբեան 65–րդ եւ 82–րդ վայրկեաններուն:

***

Պատմական կ'որակուի Ֆրանսա – Ալժերիա հանդիպումը Շաբաթ, Հոկտ. 6–ին, Սթատ տը Ֆրանս, ուր ապահովութեան արտակարգ միջոցներ ձեռք առնուած էին, 80 հազար հանդիսատեսները խուզարկուած էին մրցումի ժամէն 3 – 4 ժամ առաջ: Խաղը պատմական էր, որովհետեւ անկախութենէն ի վեր (1962) Ալժերիոյ եւ Ֆրանսայի առաջին հանդիպումն էր, եւ մրցումն ալ տեղի կ'ունենար բարեկամական մրցումներու շարքին: Մինչեւ խաղին 75–րդ վայրկեանը ամէն ինչ համեմատաբար լաւ ընթացած էր, եթէ նկատի չառնուին այն սուլոցները որոնց առիթ տուին Մարսէյէզը եւ ֆրանսական խումբին խաղացողները: Այդ պահուն է որ դաշտ իջաւ, դրօշակը ձեռքը, ալժերուհի հանդիսատես մը, երբ Ֆրանսա 4 – 1 կը յաղթէր: Այդքանը բաւեց որ 200 Ալժերացիներ հետեւին, իրաւարարը խաղացողները ճամբէ եւ քիչ ետք յայտարարէ որ խաղը վերջ գտած է, չի կրնար շարունակուիլ:

ԽՕՍՔԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՇՈՒԱՐԱԾՆԵՐԸ

«Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆԸ...»

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

Կարող եմ գրազ գալ, որ այն հարցին, թէ որտեղի՞ց եմ մէջբերել վերնագիրը, պատասխանելու էք՝ Յովհաննէսի աւետարանից:

Եւ տանուլ էք տալու գրազը, քանի որ մէջբերումս արուած է մի estampe–ից՝ ասել կ'ուզի տպագրական փորագիր մի դրոշմից, որտեղ պատկերուած է կուսակցական իր ընկերների առաջ ելոյթ ունեցող... Ադոլֆ Հիթլերը (տե՛ս Լիոնել Ռիչար, Նացիականութիւն եւ մշակոյթ, Փարիզ, 1978):

Հիթլերը համոզուած էր, որ բոլոր յեղափոխութիւնները իրենց ծնունդով պարտական են «բան»ին՝ խօսքին: Նաեւ համոզուած էր, թէ բանը որպէս յեղափոխութեան հզօր ուժ օգտագործել են Քրիստոսից սկսած մինչեւ Լենին եւ Մուսոլինի, նաեւ մինչեւ անձամբ ինքը՝ Ֆիւրերը:

Ինչ վերաբերում է Լենինին, ապա ամէն ոք, ով ճակատագրի բերումով ստիպուած է եղել քննութիւն յանձնել «Մարքսիզմ – լենինիզմի հիմունքներ» դասընթացից, լաւ գիտէ, որ 20–րդ դարի ռուսական սոցիալիստական յեղափոխութեան տատմէրը եղել է հէնց նա՝ Լենինը: Նաեւ յայտնի է, որ նա է սովետական լեզուի, նոյնն է, թէ խօսքը իւրովի, այսինքն կամայական իմաստաւորումով օգտագործելու հիմնադիրը:

Սովետական լեզուի նախապայմանն այն է, որ խօսքի բաղադրիչը՝ բառը, ներկայանում է ոչ թէ իր բուն, այլ իմաստային մէկ այլ նշանակութեամբ, որ նրան տալիս է հռետորը:

Այնուհետեւ պարտադիր են դառնում մէջբերումները, որոնք կրկնում են գաղափարական ու քարոզչական պատրաստի բանաձեւեր եւ որեւէ մէկ այլ կարծիք բացառւում է որպէս այլախոհութիւն:

«Անհրաժեշտ է մէկ ընդ միշտ վերջ տալ բոլոր նրանց այն ապուշ պատկերացումներին, ովքեր կարծում են, թէ իւրաքանչիւր մարդ կարող է մտածել իր սեփական գլխով», – գրել է տոտալիտարիզմի առաջնորդներից մէկը: Եւ ընթերցողին եմ թողնում գուշակելը, թէ յատկապէս ո՛ր մէկը Հիթլե՞րը, Ստալի՞նը, թէ՞ Մուսոլինին...

Ո՛չ թէ զուգադիպութիւն, այլ՝ կատարեալ օրինաչափութիւն է, որ անցնելով իշխանութեան գլուխ, ռուսական կոմունիստների օրինակով գերմանական նացիները եւս ձեռնարկեցին նոր լեզուի «շինարարութիւն»: Այդ նոր լեզուն լինելու էր Lingua Tertii Imperii, ասել կ'ուզի՝ Երրորդ Ռայխի Լեզուի: Իսկ Երրորդ Ռայխն էլ, ինչպէս գիտենք, պլանաւորուած էր առնուազն 1000 տարուայ համար:

Ականատեսի վկայութեամբ (տես՝ Վ. Քլեմփերեր, Օրագրութիւններ, Լայփցիկ 1970) «Այն ամէնը ինչ Գերմանիայի մէջ տպագրւում եւ խօսւում էր, ամբողջութեամբ սահմանում էին Ֆաշական կուսակցական մարմինները»:

Սովետական Միութեան մէջ նոյնպէս ամէնը, ինչ տպագրւում էր եւ խօսւում՝ սահմանում էր կուսակցութիւնը: Բայց այս դէպքում, ի հարկէ՝ կոմունիստականը: Փոխւում կամ կորչում էր բառի արժէքը եւ լեզուական քաղաքականութեան առաջնորդների հրահանգներով «լեզուաբաններ»ը ընդհանրապէս գործածութիւնից դուրս էին նետում «ոչ պիտանի» բառեր: Սովետական բառարանների մէջ այդ «անպիտան» բառերը նախ համարւում էին հնացած, որպէսզի աստիճանաբար ընդհանրապէս մոռացութեան մատնուեն ու վերանան: Սովետական լեզուի հայերէն տարբերակի մէջ «հնացած» բառերն աւելի շատ էին: Դրանք մեր առաջին գրական հայերէնից՝ գրաբարից «խցկուած» բառերն էին, որոնց յայտնաբերելն ու որպէս նոր լեզուի թշնամի վերացնելը «լեզուաբաններին» հնարաւորութիւն էր տալիս նոյնիսկ «գիտական թեզեր» պաշտպանել:

Սովետական ու Ֆաշական նոր լեզուները, ճախարակուելով totalitaire, ասել կ'ուզի՝ համապարփակ բռնատիրութեան երկրների մէջ, ունեն քարոզչական նոյն հնարանքները, չարադրանքի ճապաղութիւնը եւ պատկերագրութեան խորհրդանշանները: Երկուսն էլ՝ թէ կոմունիստները եւ թէ Ֆաշականները իշխանութեան գլուխ են անցել լեզուն յագեցնելով ժողովուրդ, կուսակցութիւն, պայքար բառեղբերով: Նոյնիսկ խաղաղ պայմանների մէջ երկուսն էլ խանդավառութեամբ են օգտագործում ռազմաշունչ դարձուածքներ՝ «աշխատանքային ճակատ», «պայքար բերքահաւաքի համար», «հնգամեակի հարուածային տարի» եւ այլն: Այնուհետեւ... Մարքս – Էնգելս – Լենին քարոզչապատկերի Ֆաշական տարբերակը Ֆրիտրիխ. – Բիսմարկ - Հիթլեր քարոզչապատկերն է: Երբ Ստալինն էր ասում. «Մարքսիզմը դոգմա չէ, այլ գործունէութեան ձեռնարկ», ապա Ռոզէնպերկն էր իւրացնում թէ՝ «Նացիականութիւնը դոգմա չէ, այլ յարաբերութիւն աշխարհի հետ»: Ֆաշական կալանավայրերի կարգախօսն էր. «Arbeit match frei» «Աշխատանքը ազատում է», իսկ կոմունիստական ԳՈՒԼԱԳ–ի կարգախօսը՝ «Աշխատանքը պատուի գործ է», 70–ականներից ի վեր մինչեւ այսօր նաեւ՝ «Աշխատանքը վաղաժամկէտ ազատուելու միակ ուղին է»:

Երկու լեզուներն էլ կարճ ժամանակի մէջ իւրացրեցին խօսքի եւ բառեզրի միանշանակութիւնը, երկուսն էլ չեն հանդուրժում բարդ ու երկիմաստ խօսքն ու բառը: Երկուսի գրաւոր, աւելի ճիշդ՝ գրական լեզուն այլեւս չի տարբերւում բանաւորից, իսկ կուսակցական չարադրանքների գրասենեկային լեզուն ներխուժում է խօսակցական լեզուի մէջ:

Աւելին. սկսւում է սեմանտիկ՝ նշանաիմաստային անհեթեթ մի խաղ, որի հետեւանքով իրական աշխարհի մէջ կորչում են խօսքի իմաստը, բառի նշանակութիւնը եւ լեզուի ճշմարիտ արժէքը:

Իմ ձեռքի տակ եղած փաստերի մէջ ամէնից ընտիրը այս է. «Հէնց իր՝ բանւոր դասակարգի ոլորտի մէջ գործող նոր տեսակի հարկադրանքների գլխաւոր միջոցներից մէկը հանդիսանում է այսպէս կոչուող «աշխատանքի ազատութիւնը»... Աշխատաւորութեան տեսանկիւնից յանուն բանուոր դասակարգի ոչ թէ մտացածին, այլ գործնական ազատութեան, անհրաժեշտ է ոչնչացնել այսպէս կոչուող «աշխատանքի ազատութիւնը»... Աշխատանքային պարտաւորութեան եւ բանւորական ձեռքերը բաշխելու պետական կանոնակարգը պրոլետարական դիկտատուրայի ժամանակ արդէն իսկ կազմակերպուածութեան բարձրագոյն աստիճանն է արտայայտում» (Նիկոլայ Բուխարին, Անցման շրջանի տնտեսութիւնը, Մոսկուա 1920):

Այսպիսով, սովետական լեզուով «ազատութիւն» ասելով պէտք է հասկանալ «անազատութիւն», իսկ «անազատութիւն» ասելով՝ «ազատութիւն»: Եւ սովետական լեզուի այս իւրայատկութիւնն էր պատճառը, որ երբ հերթական Առաջնորդը հպարտութեամբ յայտարարում էր, թէ «Կուսակցութեան ու կառավարութեան ծրագրերը կենսագործելով՝ գիւղի աշխատաւորութիւնը այս տարի անցեալ տարիների համեմատութեամբ մի քանի անգամ աւելի հացահատիկի բերք է ստացել», մենք արդէն հասկանում էինք, որ ցորենը գնելու են Գանատայից եւ հացը թանկանալու է:

Սովետական լեզուի հայկական տարբերակը լաւագոյնս բացայայտում է ազգային ինքնութեան բացարիկ արժէքի նկատմամբ կատարուած բարբարոսութիւնը: Հայերէնը «հարստացնելու» ստայօդ պատճառաբանութեամբ եւ, անշուշտ, կուսակցական – պետական որոշումներով ռուսերէնից ներմուծուած եզրերը, որ օրինակ ակտիւ, էֆեկտ, ինվեստիցիա, գրանտ, վիվիսեկցիա, օկուպացիա... (մի խօսքով բացէք բառարանը եւ շարունակէք թուարկել ինքներդ), յստակ նպատակ ունէին՝ նոր մարդու համար ստեղծել նոր լեզու: Եւ քանի որ այդ նոր մարդը լինելու էր հոգեզուրկ, անաստուած եւ ապազգային, ուրեմն նրա լեզուն եւս կորցնելու էր Ոգեղինութիւնը, քրիստոնէական մտածողութիւնն ու էութիւնը, ազգային պատկանելիութիւնն ու Ինքնութիւնը:

Գերմաներէնը պահպանուեց կոտորակուած երկրի արեւմտեան հատուածի մէջ եւ այսօր այլեւս վտանգուած չէ: Հայերէնը նոյնպէս պահպանուեց, բայց արդէն կոտորակուած ազգի արեւմտեան հատուածի մէջ, եւ երբ այսօր յորդորում ենք վերականգնել ազգային մեր ուղղագրութիւնը, ապա ոչ միայն պատմական յիշողութիւնը պահպանելու, այլեւ սովետական լեզուից, հետեւաբար, նաեւ սովետական մտածողութիւնից մէկ ընդ միշտ ձերբազատուելու նպատակով:

Սովետական լեզուի հայերէն տարբերակը «հարստացրած» ամէն մի բառ ունի իր միակ, եզակի նշանակութիւնը: Օրինակ, երբ խօսքը Ֆաշականների մասին է, ապա նրանք օկուպացրել են Ուկրաինան, բայց երբ խօսքը վերաբերում է Կարմիր Բանակին, ապա նա ոչ թէ օկուպացրել, այլ ազատագրել է Արեւելեան Եւրոպան: Պատահական չէ, որ քիչ առաջ իբրեւ օրինակ նշեցի օկուպացիա եզրը, քանի որ սովետական լեզուի հմուտ գիտակները, արտգործնախարարից մինչեւ նախագահական անձնակազմ, շարունակում են ճամարտակել բառերի եւ իմաստների հետ՝ սովետական շրջանին ձեռք բերած փորձառութեամբ խօսելով՝ քօղարկելու կամ ասելով՝ կեղծելու համար:

Սովետական իրենց տեսակին հաւատարիմ լեզուաբանները շարունակ պնդում են, թէ «յատկապէս սովետական իշխանութեան օրօք Հայոց լեզուն ունեցել է աննախընթաց զարգացում»: Յիրաւի, «աննախընթաց» է այդ «զարգացումը», պայմանով միայն, եթէ տառապում ենք հին աշխարհը քանդելու եւ նոր աշխարհ կառուցելու մտագարութեամբ, եւ աշխարհն էլ ընկալում ենք սովետական մարդու աչքերով: Յամենայն դէպս, տասնամեակներ շարունակ սովետական լեզուի եւ մտածողութեան շնորհիւ մեր իրականութիւնը եղել է ոչ թէ իրականը, այլ իրականութեան մասին յօրինած ինֆորմացիան՝ տեղեկատուութիւնը:

Ուզում եմ ասել, որ Երեւանից հեռատեսիլի արբանեակային հաղորդումների վրայ կատարուող վիթխարի ծախսերը «սփիւռքեցի եղբայրների» հայրենասիրական զգացումներին ծառայելու համար չեն, այլ ունեն իրականութիւնը տեղեկատուութեամբ քօղարկելու անթաքոյց նպատակ: Եւ, ուրեմն, նկատի ունենալով համատարած դեզինֆորմացիան, ասել կ'ուզի ապատեղեկատուութիւնը, խոստովանենք, որ Հայաստանի իրականութիւնը դիմայարդարուած ներկայացնելու քարոզչական ծախսերը իրենց արդարացնում են:

(Շար. 1)

ՊԵՐՃԱՇՈՒՔՆԵՐԷՆ ՄՆԱՑԱԾ ՇՈՒՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մեծազմուկ, պերճաշուք հանդիսականութեան օրեր ետին ձգած արդէն, Հայաստան կը վերադառնայ իր առօրեային: Բնական է որ անկախութեան վերատիրացումի տասնամեակը եւ գլխաւորաբար Յովհ.–Պօղոս Բ. քահանայապետին այցով գագաթնակէտին հասած 1700–ամեակը, տակաւին լուսանկարով մը կամ յետ գրութեան նմանող լուրերով, անդրադարձներով կը յամենան մամուլի էջերուն մէջ: Տարբեր չէ պարագան Ազնաւուրի հայաստանեան շաբթուան որ զուգադիպեցաւ նոյն տօնակատարութիւններուն: Բայց, այս վերջինին յուշը ուրախութիւնները եւ խանդավառութիւնները քիչ մը քացախի դարձնող համ մը կ'առնէ երբ մուտք կը բերէ «Առագաստ» սրճարանին մէջ Ջաւախքէն երիտասարդի մը սպանութիւնը: Երիտասարդ մը որուն համար կ'ըսուի թէ մօտենալ ուզած էր իրեն, շատ հաւանօրէն շրջանի հայութեան ծանօթ դժուար պայմաններուն համար դարմանի մը յոյսով: Երիտասարդը նախագահն էր Վրաստանի հայաբնակ այդ գօտիին մէջ գործող «Շէն» կազմակերպութեան մասնաճիւղին. իսկ չէ՞ որ Ազնաւուր համայն հայութեան սիրելի դէմք էր նաեւ 1988–ի երկրաշարժէն ի վեր Հայաստանի ժողովուրդին տուած նեցուկով: Բայց, քանի որ ըստ Հայաստանեան մամուլը ողողած լուրերու, այդ երիտասարդին՝ Պօղոս Պօղոսեանի արարքը ո՛չ հաճելի, ոչ ալ արտօնելի էր Ազնաւուրի եւ Սփիւռքէն այլ հիւրերու ընկերակցութեամբ հոն գտնուող Ռ. Քոչարեանի թիկնապահներուն համար, անոնք կոպտօրէն արգելք եղած էին անոր: Կարճ միջոց մը ետք ալ, երբ նոր մեկներ էին նախագահն ու հիւրերը, խոշտանգումի տակ վայրագօրէն սպաննուած Վիրահայուն դիակը գտնուած էր հոն:

Փակելէ ետք դառնահամ այս փակագիծը որ կարծես առանց բացուելու արդէն փակուած է հոն ուր անկ էր, վերադառնալով զոյգ տօնախմբութիւններուն, անկարելի էր չնշմարել հպարտութեան զգացումը բոլո՛ր մեծերուն մօտ. հպարտութիւնը՝ 1700 տարի առաջ քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակած առաջիններուն շարաւիղը ըլլալուն, հպարտութիւնը՝ այնքա՛ն դժուարութեամբ վերատիրացուած անկախութիւնը տասը տարեկան տեսնելուն: Այդ զգացումը վստահաբար հասարակաց եղաւ անոնց, նաեւ այն բազմութիւններուն որոնք աշխարհի չորս ծագէն դիմեցին Երեւան, ներկայ գտնուելու պատմական օրերու անցքերուն: Նոր տաճար, մեծամեծ հիւրեր, հազարաւորներու բազմութիւն, պապ, կաթողիկոս, պատրիարքներ, նախագահ, հրամանատար, իշխան, թագաւոր ու ամբողջ քառամթերքը որ կը սահմանէ մեծամեծը, ջոջը, իշխանաւորը: Նման հազուադէպ շքախումբ տեսնելու երանութեամբ վերացածները, բնական է, որ պիտի չնշմարէին օրինակ՝ տաճարէն դուրս ձգուած Հայաստանցիներու բազմութիւնը, կամ նոյնիսկ չվրդովէին Վիրահայ երիտասարդին սպանութեամբ:

Այդ շողշողուն օրերը հազիւ աւարտած, ջուրին երես՝ ելան հին ցաւեր որոնք կարծես անհամբեր կը սպասէին ստուերելու փառաբանուածը: Անոնց ամէնէն ուշագրաւներէն է քրիստոնէութեան 1700–ամեակ նշող երկրին մէջ աղանդներու անտարբերութեան մատնուած, այլ՝ վճռակամ յառաջընթացը: Ճիշդ է որ զարմանալու շատ բան ալ չկայ. երբ այդ յոբելեանին հարազատ տէրերը տարուած են հաւատքին, կրօնքին նիւթեղէն մասով հետաքրքրուելու, ուրիշներ ալ բնական է որ առիթը օգտագործեն հոգեւոր մարզը որսալու:

Զարմանալին այն է որ այդ երեւոյթը փոխանակ հակադրութիւն գտնելու, պատիժի արժանի նկատուելու, բաւական յայտնի կերպով կը քաջալերուի՝ Ըսուածէն, փաստը կայ «Իրաւունք» շաբաթաթերթին Սեպտեմբեր 25 – Հոկտեմբեր 1 (74) թիւին էջերուն մէջ: Նիւթը տեղ գտած է նախ Ժողովրդական կուսակցութեան նախագահ Ս. Դեմիրճեանի ուղղուած ընթերցողներու հարցումներու էջին մէջ: Արմաւիրէն Գասպարեան անուն մէկը կ'ըսէ թէ շրջանի դատարանը մեծ ներողամտութեամբ վարուած է ամբաստանեալի մը նկատմամբ որ 12 անչափահաս աղանդի մէջ ներքաշած է, ուրիշներ ալ դրդած որ մերժեն զինուորական ծառայութիւն ընել: Ս. Դեմիրճեան շատ բացասական արտայայտութիւն կ'ունենայ, շեշտելով թէ երկրին մէջ հանրահաւաքի մասնակցութեան, կամ իշխանութիւններու հասցէին տհաճ արտայայտութիւններու համար մարդիկ հետեւողական կերպով կը հետապնդուին, մինչ անդին, «անհասկանալի ներողամտութիւն» կը ցուցաբերուի շատ աւելի լուրջ պարագաներու մէջ: Ատիկա ո՛վ գիտէ քանիերորդ անգամ եզրակացնել կու տայ որ «գործում են երկակի չափանիշերով»:

Յաջորդ էջին վրայ Ք. Սարգսեան ստորագրութեամբ աւելի մանրամասնութեամբ տրուած է խնդիրը: Գլխաւոր ամբաստանեալը Արմաւիրի առաջին ատեանի դատաւոր Մանուէլ Սիմոնեանն է որ արդարացուցած է «Եհովայի վկաներ»ու Մեծամօրի առաջնորդը. այս վերջինը վերոյիշեալ յանցանքներուն տէր է ու արդարացումը, ինչպէս կը գրէ Ք. Սարգսեան, բոլոր աղանդներուն ազատ գործելու կարելիութիւն կու տայ: Նման բանի արժեւորումը դժուար չէ ընել, նկատի առած աղանդներու չարիքը. «մի

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆԻՆ

Քանի մը օրեր առաջ հոգեկան մեծ բաւարարութեամբ ստացայ Սփիւռ-Կոմիտաս երգչախումբի լոյս ընծայած եւ ձեր մեկնաբանած «Մեներգներէն լաւագոյնները» անուանեալ խտացեալ սալը: Զուգեցի անձնապէս ձեզի գրել: Աւելի յարմար նկատեցի իմ համեստ կարծիքը, տպաւորութիւններս և անկեղծ ըզգացումներս հրապարակաւ արտայայտել այդ մասին: Այժմէն կը խնդրեմ ձեր ներողամտութիւնը:

Նախ եւ առաջ կ'արժէ շնորհաւորել այս միտքը յղացած, գնահատելի աշխատանքը տարած, երախտագիտութեան հարազատ արտայայտութիւնը գործնականապէս ցուցաբերած Սփիւռ – Կոմիտասի հմուտ ղեկավար եւ մեր երէց եղբայր՝ Պ. Կարպիս Աֆրիկեանը, վարչականները, եւ բոլոր երգիչ–երգչուհիները:

Բազմաթիւ անգամներ մեծ հաճոյքով ունկնդրեցի գարերու ընդմէջէն մեզի հասած եւ հայ երաժշտութեան առաքեալի՝ Կոմիտասի մաքրամաքուր ձեռամբ մշակուած «Խորհուրդ խորին»ը, «Ով է որպէս» գեղահիւս մեղեդին, «Այ հեւա սիրտս»ը, «Լուսնակն անոյշ»ը, եւ վերջապէս անմահ վարդապետին ամենադըժուար գործերէն, հայ պանդուխտի յոյզերն ու զգացումները, խոհերն ու մտորումները արտացոլող «Անտունի»ն: Անմիջապէս ընդգծեմ, թէ այս բոլոր երգերուն մէջ անքառու յաջողութեամբ կրցած էք ունկնդրին փոխանցել՝ կոմիտասեան անհատնելի հմայքը, գերագոյն գեղարուեստական արժէքը, շնորհիւ ձեր բնածին, ուշագրաւ, հնչուն եւ առինքնող ձայնին: Դժուար է Կոմիտասը հասկնալ եւ մանաւանդ երգել՝ մաքուր եւ ներդաշնակ հնչողականութեամբ, կատարողական նրբերանգներով եւ կոմիտասեան ուրոյն եւ ինքնատիպ մեկնաբանութեամբ:

Յաճախ ունկնդրած եմ կոմիտասեան այս մեղեդիները այսպէս կոչուած «արհեստավարժ» բազմաթիւ երգիչներէ, բայց աւա՜ղ անոնք չեն յաջողած հոգիս շարժման մէջ դնել, հակառակ իրենց լաւ մարզուած ձայներուն: Ինծի համար ամենակարեւորը սիրտ եւ հոգի, կեանք ներդնել է իւրաքանչիւր երգի մէջ: Նոյնիսկ, չափազանցութիւն չըլլար եթէ ըսեմ թէ երգի մը իւրաքանչիւր ձայնանիշը պէտք է ներգործէ, ներթափանցէ ունկնդիրի հոգիէն ներս: Եւ դուք այդ շընորհքը ունիք առատօրէն եւ այս աստուածային ձիրքը կը ցոլացնէք ինչպէս կոմիտասեան, նոյնպէս ալ Կանաչեանի «Պըճինկօ»յի, «Ալվարդի երազը» եւ ի մասնաւորի այլեւս ձեր անունին հետ միասին եւ միատեղ յիշուող «Մշոյ Սուլթան»ի եւ միւս երգերու մէջ:

Յարգելի Պ. Պօղոսեան,

Վստահ եմ, թէ Սփիւռ–Կոմիտաս երգչախումբը եւ անոր արժէքաւոր խմբավարը իրենք զիրենք երջանիկ զգացած են եւ կը զգան քանի որ ձեր անձին մէջ գըտած են հայ երգի սիրահար, սքանչելի ձայնով օժտուած, մաքուր, համեստ եւ ազնիւ եւ հաւատարիմ մեներգիչը: Դուք չէք կրնար երեւակայել ինչքա՜ն մեծ քաջալերութիւն եւ խանդավառութիւն կը յառաջացնէ սակաւ խմբավարի մը դըժուարին աշխատանքին մէջ: Հաստատ համոզուած եմ թէ՝ Պր. Աֆրիկեան նոյնքան եւ աւելի ոգեւորուած է ձեր նախագահի պաշտօնավարութեամբ: Պողպատեայ կամք, յարատեւութեան ոգի, ուժեղ ջիղ եւ խոհեմութիւն կը պահանջէ սփիւռքեան այս անտանելի եւ անհանդուրժելի պայմաններուն մէջ 50 – 60 երգիչ - երգչուհիները ի մի բերել, զանոնք նոյն յարկին տակ եւ նոյն նպատակին շուրջ քանի մը տասնեակ տարիներ պահել, սրահներ, եթէ պէտք է ուրիշ խումբեր, երգիչներ, նուագախումբեր ապահովել, համերգներ սարքել, աղաչելով – պաղատելով տոմսակներ տեղաւորել...:

Առհասարակ, դժբախտաբար, շատ մը տեղեր մեծ ելոյթներ կազմակերպելու ամբողջ հոգը կը բեռնաւորուի երաժիշտին ուսերուն վրայ: Դուք որպէս պատասխանատուութեան գիտակից նախագահ, մօտաւորապէս քառասուն տարիներ շարունակ տարիք այդ ծանր, սակայն քաղցր լուծը առանց փողի եւ թմբուկի: Կասկած չկայ թէ համերգներէն, ելոյթներէն առաջ, գիշերներ շարունակ մնացիք անքուն, թաղուեցաք խոր մտմտուքներու մէջ, անտեսեցիք թերեւս ձեր ազնիւ ընտանիքը, ընկճուեցաք հոգեպէս եւ ֆիզիքապէս, սակայն ձեր խումբին խըմբավարին հետ տարած այս նուիրական աշխատանքը տուաւ իր գեղեցիկ պտուղները:

Փարիզը ծանօթ է որպէս արուեստներու բարձրորակ կեդրոն: Դուք, շնորհիւ ձեր բծախնդիր, պատուախնդիր ոգիին եւ Պր. Կարպիս Աֆրիկեանի գեղարուեստական հմտութեան, տարիներ պահպանեցիք Սփիւռ – Կոմիտասի վարկը, արուեստի վաղնջական մայրաքաղաքին մէջ: Ինչքա՜ն մեծ գոհունակութեան պարագայ մը եղած է եւ է ձեզի համար, երբ տեղական մամուլը գնահատական տողերով արտայայտուած՝ եւ գովքը հիւսած է ձեր միջոցաւ հայ երգին եւ երաժշտութեան:

Սիրելի Պ. Պօղոսեան,

Ձեր եւ ձեր բոլոր գործակիցներուն տարած այս նուիրական աշխատանքը վեր է ամէն բանէ եւ արժանի՝ ջերմ շնորհաւորութեան, քանի որ ան տարիներ շարունակ խթան հանդիսացաւ հայ երաժըշտութեան զարգացման, եւ հպարտութեան առարկայ՝ հայ թէ օտար երաժըշտասէր հասարակութեան մօտ:

Վարձքերնիդ կատար: Ձայներնիդ անըսպառ:

Երաժշտութեամբ լի առողջ եւ երկար տարիներ մաղթելով մնամ յարգանօք եւ անկեղծ զգացումներով՝

ԽԱՉԻԿ ԵԸԼՄԱՋԵԱՆ
Մարսէյլ, Հոկտեմբեր 3, 2001

ԱՐՇԱԿՈՒՆԻ ԱՐՔԱՆԵՐՈՒՆ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Երեւանէն 30 քիլոմեթր հեռաւորութեամբ, Մեծ Հայքի Արագածոտն գաւառին որ ներկայիս Արագածոտն մարզն է, Աղցք գիւղին մէջ, Ամբերդի կիրճին աջափնեայ բարձրադիր դարաւանդին վըրայ կը գտնուի Արշակունի արքաներուն դամբարանը: Երեք տարիէ ի վեր Սեպտեմբերի Բ. Կիրակիէն ետք այդ վայրին մէջ կը նշուի հայկական պետականութեան խորհուրդը իմաստաւորող տօնը:

Դամբարանին շուրջ առաջին պեղումներ կատարուած են 1973–ին: Անոնց ընթացքին յայտնաբերուած են վաղ քրիստոնէական շրջանի տուֆէ ալիւներու քանդակազարդ եզակի նմոյշներ: Այդ շրջանին մէջ գտնուած է նաեւ Ք. ա. ԺԵ. – ԺԴ. դարերու պրոնզէ դարու էթիոնի դահակալներու գերեզմաննոցը:

Սեպտեմբեր 30–ին, դէպի Արշակունի արքաներու դամբարանը կատարուած ուխտագնացութեան մասնակցած է վարչապետ Ա. Մարգարեան: Աղցք գիւղի մուտքին ան դիմաւորուած է աղ ու հացով, ապա բազմութիւնը բարձրացած է դամբարան, ուր հոգեհանգստեան պաշտօն կատարուած է: Խօսք առնելով վարչապետը, ըսած է թէ այդ դամբարանը կը խորհրդանշէ հայկական պետականութիւնը:

Առաջին ուխտագնացութիւնը 1999–ին տեղի ունեցած է հանրապետականներու կազմակերպութեամբ, կուսակցութիւնը որոշած է Յուշարձաններու պահպանութեան վարչութեան յատկացնել 5 հազար տոլար, որպէսզի պեղումները վերսկսին:

Ինչպէս նշած է պեղումներու ղեկավար հնագէտ Յ. Սիմոնեան, հոն ամփոփուած են Անի – Կամախի մէջ թաղուած բոլոր արքաներուն մասունքները: Դամբանադաշտը 50 հեկտարէն աւելի տարածութիւն ունի ուր կան 500 դամբանաբլուրներ:

Հայաստանի Յուշարձաններու պահպանութեան վարչութեան պետ Գ. Գիւրջեանի համաձայն, Արշակունիներու դամբարանը ընդգրկուած է շարք մը հիմնադրամներու, միջազգային կազմակերպութիւններու ծրագիրներուն մէջ, ինչպէս ԻՒՆԷՍՔՕ–ի, ԻՔՈՄՈՍ–ի, եւ այլն, որպէսզի կարելի ըլլայ պեղումները վերսկսիլ:

Երուսաղէմի «քաղաքացի» բարբառը

Երուսաղէմի հին համայնքին խօսակցական «քաղաքացի» բարբառը որ այսօր գրեթէ անհետացած է, արձանագրելով պահելու ծրագիր մշակուած է: 1999–ին Իսրայէլի Գիտութեան ակադեմիայի նախագահ Ե. Զիւ, Հայաստանի Գիտութեան ակադեմիայի փոխ – նախագահ Գ. Բրուտեան եւ Երուսաղէմի Հրէական համալսարանի Հայերէն ուսումներու ամպիոնի դասախօս Մ. Սթոնի կողմէ մշակուած ծրագիրը գործակցութիւնը կը վայելէ նաեւ Երուսաղէմի պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի:

«Քաղաքացի» բարբառը աստիճանաբար գործածութենէ դադրած է ցեղասպանութենէն ետք: Այս ամառ հայագէտ տոքթոր Թ. Մ. վան Լինտ որպէս Թորգոմ պատրիարքին հիւրը, բնակած է Հայկական թաղը ու տակաւին այդ բարբառը գործածող տարեցներու խօսքը արձանագրած, անոնց հետ զրոյցներ ըրած: Ծրագիրը ամբողջացած հըլլալով հանդերձ, հայերէնի այս բարբառին պահպանումի գործին մէջ լուրջ ներդրում է կատարուածը:

շարք մանկական ինքնասպանութիւններ, բանակում ծառայելուց հրաժարուելու բազմաթիւ փաստեր»...:

Նման տուեալի առջեւ անմիջական անդրադարձը կը մղէ հարց տալու թէ «ի՞նչ է ձեռնարկում այս առընչութեամբ Հայ Առաքելական Եկեղեցին». յօդուածագիրը կը յիշեցնէ թէ այլ աղանդի մը գործունէութեան պարագային դիմած են եկեղեցիին որ պաշտօնական տեսակէտ յայտնէ, ստացած են հետեւեալ պատասխանը. «Եկեղեցին պաշտօնական տեսակէտ ներկայացնում է միայն համազգային հարցերի առընչութեամբ»:

1700–ամեակի պանծալի հանդրուանին զուգահեռ, նոյն հաւատքի ոլորտին ուղղուած այս ոտնձգութիւնը «համազգային հարց» նկատուի կամ ոչ, շատ նման է դարաւոր կաղնին կրծող որդին հէքեաթին. այն տարբերութեամբ որ առակախօսը որդին զօրակցութեան գործը կաղնիին ճիւղերուն կամ տերեւներուն վերապահած չէ:

1700–ամեակ - տասնամեակ զոյգին փառաբանումին վաղորդայնին վարկաբեկումի հարուած ստացողը միայն առաջին մարդը չէ եղած: Այնքան փայփայուած, արդար հպարտութեան առարկայ անկախութիւն – դերիշխանութիւն զոյգն ալ ունեցած է իր որդը. զայն կը մատնէ «Արմէնփրէս»ի Հոկտեմբեր 3ի լրատուութիւնը թէ նոյն օրը Երեւանի ամերիկեան համալսարանին մէջ կը դասախօսէ Պուլկարիոյ դեսպան Ի. Իվանչեւ, հայ-պուլկարական յարաբերութիւններու ներկային մասին եւ «դասախօսութիւնը կ'ընթանայ ռուսերէն, անգլերէն համընթաց թարգմանութեամբ». պէտք է հետեւցընել թէ դասախօսութիւնը միմիայն այդ համալսարանին շրջանակին համա՞ր է. բայց, այդ պարագային ի՞նչ գործ ունի «Արմէնփրէս»ին հաղորդաշարին մէջ. թէ՞ Երեւանի ամերիկեան համալսարանին տարածքը Հայաստանի անկախ պետութեան սահմանէն դուրս կը մնայ, ինք իրեն վերապահելով դերիշխանութեան հարցերը տնօրինելու իրաւունքը:

Ե՞րբ, քանի՞երորդ ամեակին կը հասնի փառաբանումներու հետ լուրջ հարցերով ալ զբաղելու ժամանակը:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ԹԻՒ 17 ԽԱՉԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԱՐՇԱՒԻՐ ԵԱՍԵԱՆ

- Քեզի բան մը ըսե՞մ, ես ալ այդ կասկածը ունեցայ: Բայց ահա՛ ինք կ'ըսէ, որ բո՛ւն յանցաւորները երեւան պիտի հանէ, ատոր ի՞նչ կ'ըսես:

- Իցի՜ւ թէ, – պատասխանեց Արշակ թերահաւատ շեշտով մը:

- Ցետոյ ուրիշ անուրանալի իրողութիւն մը կայ մէջտեղ, – շարունակեց Ճէմալ պէյ:

- Ո՞րն է այդ, - հարցուց Արշակ:

- Այսինքն, թէ հնչակեանները իրաւցնէ մահափորձ մը կը պատրաստէին Արշաւիրի դէմ:

- Ատոր հակառակը չեմ ըսեր, քանի որ ես ալ մօտէն տեղեակ եմ ատոր:

- Եւ յետոյ, ի՞նչ շահ ունէր Արշաւիր այսպիսի կեղծ մահափորձ մը կազմակերպելու:

- Պարզապէս առիթ մը ստեղծելու համար, որպէսզի հնչակեանները ձերբակալուին, եւ յետոյ, ինքզինքին զոհի մը ձեւ տալու համար:

Թուրքը չպատասխանեց եւ մտածկոտ կերպարանք մը առաւ: Արշակ այնպէս ենթադրեց, որ իր խօսքերուն ազդեցութեան տակ Ճէմալ պէյ կը խորհրդածէր ինքնիրեն:

– Եթէ կը ներէք, կառքը վայրկեան մը կեցնենք, եւ ես վար իջնեմ, – ըսաւ:

– Շատ աղէկ, - պատասխանեց Թուրքը:

Լրտեսը իր մեծաւորին «գիշեր բարի» մաղթելէ ետքը իջաւ կառքէն:

– Վաղը առտու կանուխ եկուր զիս տեսնելու, - հրամայեց Ճէմալ պէյ՝ մինչ Արշակ կը փութար կառքին դուռը գոցելու:

Լրտեսը առանձին իր ճամբան շարունակեց դէպի Ղալաթիա:

«Իմ խօսքերս կարծեմ բաւական ազդեցութիւն ըրին, – կը խորհէր, – յայտնի կ'երեւայ, որ Ճէմալ պէյ համոզուիլ գոյացուց, թէ ենթադրութիւններս ճիշդ էին: Իսկ գալով Արշաւիրին, անիկա շատ դժգոհ մնաց, եւ կարծեմ թէ իրարու թշնամի պիտի դառնանք»:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՈՒՐ ԿՐԿԻՆ Կ'ԵՐԵՒԱՑ ԱՍՏԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Մեր վերը պատմած դէպքերուն հետեւեալ օրն էր:

Խմբագիրները արդէն հաւաքուած էին «Ժամանակ»ի խմբագրատան վերի սենեակը եւ գրաշարներու ձեռագիր կը հասցընէին տենդային աճապարանքով մը, երբ ներս մտաւ Սեպուհ Ակունի:

– Կարեւոր լուրեր ունիմ, - գոչեց յաղթական ձեւով մը, – որչա՞փ պարապ տեղ ունինք:

– Ուզածիդ չափ, - պատասխանեց Արտաշէս Գալփաքճեան:

– Ուրեմն ուրիշ ձեռագիր մի՛ տաք, մինչեւ որ ես գրելիքներս գրեմ:

– Բայց ի՞նչ է, տեսնենք այդ կարեւոր լուրերդ:

– Թէ՛ ազգային, թէ՛ քաղաքական, պատասխանեց Ակունի խորհրդաւոր դէմքով: – Մահափորձը իմացա՞ք:

– Ի՞նչ մահափորձ:

– Արշաւիր Եասեանի դէմ, երէկ գիշեր զարկեր են Բերա, տունէն դուրս ելած միջոցին:

– Մեռե՞ր է:

– Ոչ, բայց վիճակը ծանր է եղեր, երեք հոգի յարձակեր են վրան, մանրամասնօրէն պէտք է գրել այս մասին, խիստ կարեւոր է:

– Կը կարծե՞ս, - հարցուց Գալփաքճեան թերահաւատ դէմքով մը:

– Բնականաբար այս առթիւ շատ մը ձերբակալութիւններ եղեր են:

– Կուսակցական խնդիր մըն է այդ, որ մեզի համար կարեւորութիւն չունի, իրենց աղտոտ լաթերը իրենց մէջը թող լուան:

– Անանկ չէ, եղբա՛յր, հանրային կարեւորութիւն ունեցող խնդիր մըն է, – պնդեց Ակունի, - ես այնպիսի մանրամասնութիւններ ունիմ, որ ուրիշ ոչ մէկ լրաբեր իմացած է. ականատես վկաներէ լսեցի ամէն բան:

– Ինչ որ է, գրէ՛, տեսնենք:

Ակունի անցաւ գրասեղանին առջեւ իր լուրերը խմբագրելու համար: Հազիւ գրիչը ձեռք առած էր, երբ Աստիկ Մարկոսեան ներս մտաւ սենեակէն:

(Տար. 77)

ԿԻՐԳԶՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Կիրգիզստանի մէջ պաշտօնական տուեալներով 1500, իսկ ոչ. պաշտօնական տուեալներով 3 – 3.500 հայ կ'ապրի: Անոնց մեծ մասը գործի աշխարհի մարդիկ են: Երկրին մեծահարուստներէն է Երիք Բալեան որ տէր է սրճարաններու ցանցի մը: Համայնքը լաւ կազմակերպուած է, ունի կիրակնօրեայ դպրոց, ելեկտրոնային ամսաթերթ եւ կը ծրագրէ հրատարակել նաեւ տպագիր տարբերակը: Բիշքեկի Հայերը կը նշեն հայկական բոլոր տօները:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՕՊԸՆԱ. – Տիկին Ալիս Պուայէ 200 Ֆր. ի յիշատակ իր ծնողքին, որոնք այնքան կապուած էին թերթին:

(Շար. Ա. էջէն)

Սեպտեմբեր 24-ին ալ դատավարութիւն մը սկսած է, որու հետեւանքով թերթին հրատարակութիւնը առկախուած է: Թերթին տնօրէնը՝ Էրոլ Էօզքորայ Իտէա փոլիթիքան հիմնած է 1998-ին եւ 5000 օրինակ կը ծախուի:

ԷԼԱԶԸՂԻ (արեւելեան Թուրքիա) բանտին մէջ, Հոկտեմբեր 4-ին մեռած է Մուսթաֆա Ճոշքուն հացադուլի հետեւանքով: 40-րդ մեռեալն է:

ԳԱԶԱՅԻ գօտիին մէջ, երկու Պաղեստինցիներ սպաննուած են Հոկտեմբեր 8-ի առաւօտուն Իսրայէլացիներուն կողմէ:

ՌՈՒԿՐԱՆԻԱ, հաւանաբար, պատասխանատուն է Տուպոլեւի ջախջախման Սեւ ծովու մէջ, բոլոր քննութիւնները այն եզրակացութեան հասած են, որ թիւրիմացութեամբ հրթիռ մը արձակուած է օդանաւին վրայ:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ, Հոկտեմբեր 13
ՏՕՆ Է ՍՐԲՈՑ
ԹԱՐԳՄԱՆՉԱՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ՝
ՄԵՍՐՈՊԱՅ, ԵՂԻՇԷԻ,
ՄՈՎՍԻՍԻ ՔԵՐԹՈՂԻՆ,
ԴԱՒԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ,
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ
եւ
ՆԵՐՍԻՍԻ ԿԼԱՅԵՑԻՈՅՆ

Տօն է ազգային եւ եկեղեցական՝ ի յիշատակ գիւտի Նշանագրացն Հայոց եւ Թարգմանութեան Սուրբ Գրոց:

Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 10-ին, պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ԹԱՇՃԵԱՆ

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Առնուվիլ – Կոնէս – Վիլիէ – Սարսէլի Աստղիկ մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տիկին Շաքէ Գալուստեանի իր ամուսնոյն Ջաւէն Գալուստեանի, Տիկին Հռիփսիմէ Ալթունեանի իր քրոջ, Տիկին Մաքրուհի Տուտուքճեանի իր մօր մահերուն առթիւ:

ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին առիթով, Ալֆորվիլի Ս. Պօղոս – Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, Հոկտեմբեր 16, ժամը 20.30-ին, Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ Կրթարանի սրահին մէջ:

Կը դասախօսէ՝
ՆԵՐՍԷՀ Ծ. ՎՐԴ. ԲԱՊՈՒՃԵԱՆ

«Ե. դարու թարգմանիչ վարդապետներու հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը» նիւթին շուրջ:

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուրբ Մեսրոպ Մշակութային Միութեան Սուրբ Խաչ շաբաթօրեայ վարժարանը կը վերաբանայ իր դռները Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 14-էն 17, Սուրբ Խաչ Եկեղեցւոյ կից սենեակներուն ու սրահին մէջ

13, rue du Perche, 75003 Paris

5-էն 12 տարեկան աշակերտներու համար:

Կը դասաւանդուին հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, հայկական երգեր ու պարեր:

Արձանագրուելու համար, հեռաձայնել՝ 01 – 44 – 59 – 23 – 50 թիւին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Journée de détente

La Croix Bleue d'Issy-les-Moulineaux vous propose une **Journée de Détente** le **Dimanche 14 OCTOBRE.**

La journée commencera par la visite du JARDIN DES SERRES D'AUTEUIL. Rendez-vous à la Maison de la Culture Arménienne, 45, rue de la Défense à Issy-les-Moulineaux, à partir de 9h15.

Le car partira à **9h30** et fera un arrêt à **9h45** devant l'Eglise apostolique arménienne, 6, avenue Bourgain.

Après la visite, le repas traditionnel sera servi au Châlet de Vaupéreux à BIEVRES et sera animé par le chanteur bien connu HOVIG.

Prière de se faire inscrire rapidement auprès des khatchouhies en s'adressant à :

Annick — Tél.: 01 47 36 18 09;
Alice — Tél.: 01 46 42 90 68;
Jacqueline — Tél.: 01 40 95 81 33
Dernier délai d'inscription: 10 Octobre.

— • —

La Section **«HELEN PUZANT» d'Alfortville**
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec **l'Orchestre GAIDZAG'S et attraction surprise...**
Renseignements et réservations :
☎ **01 43 76 55 89**

— • —

"NAVASART" à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30

— Billets : 100 F. et 120 F. en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— • —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Dîner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— 01. 42. 36. 33. 73 (la journée)
— 01. 46. 58. 03. 17 (le soir)

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI
et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR
du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le dîner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre MASSIS»

l'UGAB invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : «Le Val des Neiges»
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :
au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

LES CONFERENCES D'ISSY
AUTOMNE 2001

1700ème ANNIVERSAIRE DE L'ADOPTION DU CHRISTIANISME PAR L'ARMENIE EN 301

Jeudi 11 octobre à 20 heures 45

«FAISONS CONNAISSANCE AVEC L'EGLISE APOSTOLIQUE ARMENIENNE»
M. KERAM TOROSSIAN

Lieu des conférences: Eglise Evangélique Arménienne d'Issy-les-Moulineaux 28, ave. Bourgain et 55, ave. Victor-Cresson, 92130 Issy-les-Moulineaux

Renseignements: 01 47 36 02 50 **Entrée libre** **Bienvenue à tous.**

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE
12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE
GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Vernissage
le Jeudi 11 octobre
à partir de 18 h 30
Exposition du 11 au 20 octobre
tous les jours
sauf le mardi et le dimanche

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Տիգրան Թորոսեանէ 300 ֆրանք Արթօ Գույումճեանի մահուան քառասունքին առիթով:

Dates à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

Centre Culturel SAINT MESROB A PARIS

Conférence-Débat
avec projection de diapositives sur le thème :
AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par
JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle
et
VINCENT TARAKDJIAN
Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45
au 10 bis, rue Thouin, Paris Ve
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre · Cocktail —

CENTRE CULTUREL SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN
Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

*

Rouben ELBAKIAN
Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45
En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91. 77. 84 70

Au programme :
Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 10
MERCREDI
10 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·271 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20·271

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՎՐԱՅ

ԱՄԵՐԻԿԱ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ԱՅԼ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱԼ

ՀՈՍ-ՀՈՆ ՀԱԿԱՄԵՐԻԿԵԱՆ ՑՈՅՑԵՐ

Հոկտեմբեր 8-ին ալ, միշտ գիշերը, Ամերիկացիք շարունակեցին ռմբակոծել Աֆղանիստանի քաղաքները, գլխաւորաբար Քապուլ, Ճալալապատ եւ Քանտահար: Ըստ ամերիկեան աղբիւրներու, առաջին ռմբակոծումներն ալ – Հոկտ· 7-ի գիշերուան – «մեծ յաջողութեամբ» պսակուած են, այսինքն քանդուած են Թալիպաններու զինուորական թիրախները, հակօդային պաշտպանութեան հաստատութիւններ, հաղորդակցութեան միջոցներու կեդրոններ եւ այլն: Միացեալ-Նահանգներու Պաշտպանութեան նախարարը յայտարարած է որ այս գործողութիւնները երկար պիտի տեւեն, տարիներ հաւանաբար, նոր ջլամարտ մըն է: Ինչ կը վերաբերի թիրախներուն, տարբեր է Թալիպաններու կարծիքը: Կ'ըսեն թէ ռմբակոծուած են բնակելի շրջաններ եւ 25-է աւելի մեռեալ կայ: Ամէն պարագայի մէջ, բնակչութիւնը ահուսարսափի մէջ է եւ կը փախի դէպի Փաքիստան, Պարսկաստան, Տաճիկիստան: Երկրորդ օրուան ռմբակոծութիւններուն, Անգլիացիք չմասնակցեցան: Հակառակ անոր որ առաջին ռմբակոծութիւնները «յաջողութեամբ» պըսակուած էին, ԱՄՆ-ու Պաշտպանութեան նախարարը՝ Տոնալտ Ռըմսֆելտ ճշդեց որ «Դեռ չենք կրնար վստահօրէն ըսել թէ քանդած ենք հակակշռի եւ հրամանատարութեան 12 կեդրոնները եւ մեր զտած կառավարական թիրախները»: Պուշ յայտարարած է որ «զինուորական առաքելութիւնը կատարուած է, ինչպէս նախատեսուած էր» եւ աւելցուցած է՝ «մեր բարի ազգը նաեւ աւելի քան 37 հազար սննդեղէնի եւ դեղերու ծրարներ նետեց ժողովուրդին»:

Հոկտեմբեր 9-ին, Ապահովութեան Խորհուրդը միաձայնութեամբ վաւերացուց անգլեւամերիկեան գործողութիւնները, որոնք «օրինաւոր պաշտպանութիւն» կը նկատուին:

– Ֆրանսա յայտարարեց որ տեղեկատուութեան գործակալներ ղրկած է տեղւոյն վրայ:

– Միացեալ-Նահանգները կը սպառնան տարածել իրենց յարձակումները այլ երկիրներու վրայ: Ասոնց կարգին Իրաքը, ինչպէս յայտարարած է Պաշտպանութեան նախարարութեան կցորդը՝ Վոլֆովեց, ըսելով· – «Իրաք օր մը չէ օր մը թիրախ պիտի ըլլայ», բայց փոխ-նախագահը՝ Տիք Չըյնէ յանձնարարած է իրեն, որ մէկ կողմ դնէ Իրաքի դէմ իր ամբաստանութիւնները: Ի դէպ, փոխ-նախագահը Հոկտեմբեր 7-էն ի վեր գաղտնի վայր մը կը գտնուի, ապահովութեան համար:

Մնաց որ Իրաքը առանձին չէ, ամերիկեան սպառնալիքներու շարքին մէջ: Ուաշինկթըն վճռած է հարուածել այն բոլոր երկիրները, որոնք երկդիմի յարաբերութիւններ ունին Ալ-Քաիտայի ահաբեկչական ցանցերուն հետ, ինչպէս օրինակ՝ Եմէն եւ Սուտան:

***

Հակամերիկեան ցոյցերն ալ կը ծաւալին եւ ամէնէն ծանր դէպքերը պատահեցան Գազա, ուր խլամապաշտ Պաղեստինցիներ բախումներ ունեցան պաղեստինեան ոստիկանութեան հետ: Երկու Պաղեստինցի սպաննուած են եւ աւելի քան 100 վիրաւոր կայ: Ամէն ինչ սկսած էր Երկուշաբթի, Հոկտեմբեր 8, առաւօտեան, երբ շուրջ 500 հոգի փորձած էին փոքրիկ ցոյց մը ընել խլամական համալսարանին առջեւ, ինչ որ արգիլուած էր: Բազմաթիւ ուսանողներ կը բողոքէին ամերիկեան յարձակումներուն դէմ եւ իրենց զօրակցութիւնը կը յայտնէին Պէն Լատէնի, որ կը պաշտպանէր պաղեստինեան դատը: Այդ պաշտպանութիւնը, իրականին մէջ, թունաւոր նուէր մըն է, Պաղեստինցիներուն եւ պաղեստինեան իշխանութեան Ֆրանսայի ներկայացուցիչն ալ յայտարարեց թէ նման շահագործումի հարկ չէր ըլլար, եթէ աւելի քան 30 տարի է Պաղեստինցիներու արդար դատը լուծուած ըլլար:

Հակամերիկեան ցոյցերը չեն սահմանափակուած Գազա: Եգիպտոսի մէջ 10 հազար ուսանողներ բողոքած են Պուշի դէմ՝ «Աստուծոյ թշնամին»:

Բազմաթիւ ցոյցեր եղած են նաեւ Շիքակօ, Աթէնք, Իտալիա, Պելժիա, Պէրլին, Գարէս, Ճափոն ու Փարիզ: Փարիզի ցոյցը տեղի կ'ունենար Հոկտ· 8-ի իրիկունը, Գոնգորտի հրապարակը, ԱՄՆ-ու դեսպանատան առջեւ: Նման ցոյցեր տեղի ունեցած են նաեւ Պրէսթ, Սթրազպուրկ եւ Մարսէյլ: Ամսթերտամի մէջ ալ բողոքի ցոյցեր տեղի ունեցած են, մինչ նախարարապետը կը ջանար արդարացնել անգլեւամերիկեան ռմբակոծութիւնները: ԱՄՆ-ու հիւպատոսարանին առջեւ, ցուցարարները բացագանչած են· – «Վրէժը լուծում չէ»: Ցոյցեր եղած են նաեւ Ութրեխթ, Լէյտէ, Լա Հէ, Հռոմ, եւ այլն, եւ այլն:

***

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այս մասին, քննադատութիւնները շատ են եւ բարեսիրական եւ մարդասիրական կարգ մը կազմակերպութիւններ բառերը չեն ծամծմեր:

Առանց Սահմանի Բժիշկներու նախագահը ուղղակի կատղած է ամերիկեան բանակին արձակած ռումբերուն եւ միաժամանակ սննդեղէնին, զոր «զինուորական քարոզչութեան գործողութիւն» կ'որակէ: Նոյն տեսակէտն ունի Աշխարհի Բժիշկներու կազմակերպութիւնը: Ֆրանսական Կարմիր Խաչի նախագահը կը ջանայ մեղմացնել մթնոլորտը եւ կ'ըսէ· – «Կեցէք, ես կը նախընտրեմ ծրար մը բրինձ ստանալ քան ռումբ մը»: Գուշներ կողմնակից է այս ձեւի օժանդակութեան մը եւ կը քննադատէ... քննադատողները:

***

Երկուշաբթի, Հոկտ· 8, ռմբակոծութիւնները պատճառ եղած են չորս հոգիի մահուան: Ռումբերը ինկած են ականազերծումի գրասենեակի մը վրայ եւ չորս պաշտօնեաներ մեռած են, երկու հոգի ալ վիրաւորուած է:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻԼԱՆՈՅԻ Լինաթէի օդակայանին մէջ, Հոկտեմբեր 8-ին պատահած արկածը ցնցած է ամբողջ Իտալիան: Պարզուած է որ մարդկային սխալի մը հետեւանք է, նաեւ գործածութենէն դուրս մնացած ռատարի մը: Մշուշը եւ վայրին անծանօթ ըլլալը պատճառ եղած է որ զբօսաշրջութեան փոքրիկ գերմանական օդանաւին օդաչուն չհետեւի իր ճամբուն եւ անցնի այլ ուղիի մը վրայ, ուրկէ կ'անցնէր ՍԱՍ-ի օդանաւը 400 քիլոմեթր արագութեամբ, պատրաստուելով իր թռիչքը առնելու: Բախումէն ետք, սքանտինաւեան դիծերու օդանաւը մխրճուած է կառատան մը մէջ, որ կրակ առած է: Մեռեալներու թիւը առնուազն 118 է, 110-ը օդանաւին զոհերն են (104 ճամբորդ, 6 հոգի ալ անձնակազմէն), 4 հոգի գերմանական օդանաւէն եւ 4 ալ կառատունը աշխատող բանուորներ:

ՎՐԱՍՏԱՆԻ անջատողական Աբխազիոյ շրջանը ՄԱԿ-ի դիտերու թռան մը վար առնուած է Հոկտեմբեր 8-ին, կուսողներ...

(Շար·ը Դ· էջ)

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՏԵՍՈՒՄԻ ՓՈՐՁԵՐՈՒՆ ԴԷՄ

Ա·

Հայ Դատի յանձնախումբին Եւրոպայի գրասենեակը Հոկտեմբեր 5-ին ասուլիսի հրաւէր մը ուղղած էր ֆրանսահայ մամուլին, այժմէական երկու հարցերու օրակարգով· առաջինը Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան մասին Ալէն Լամասուրի տեղեկագիրն էր, երկրորդը Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբին գործունէութիւնը:

Ա· Լամասուր Եւրոպական Խորհրդարանին «Եւրոպայի ժողովրդական կուսակցութեան» և «Եւրոպայի ժողովրդավարներ»ուն խմբակէն է· իր պատրաստած տեղեկագիրը մատնանշելով հանդերձ մարդկային իրաւունքներու ժողովրդավարութեան մարզերուն մէջ թերի կէտեր, կ'ողջունէ Թուրքիոյ դէպի բազմատարր ժողովրդավարութիւն բարեփոխումներու տրամադրութիւնը, օրէնսդրական սրբագրութիւններու մտադրութիւնը, եւ այլն:

Ինչ որ տեղեկագիրը նիւթ կ'ընէ ներհայկական քննարկումներու, բողոքի հոսանքներու, այն կէտն է որ կը վերաբերի Թուրքիոյ անդամակցութեան համար Հայերու ցեղասպանութիւնը ընդունելու պայմանին անտեսումին: Արդարեւ, նըշուած պայմանը 1987 Յունիս 18-ի պատմական թուականէն ի վեր տեղ գտած էր նոյն Խորհրդարանին տեղեկագիրներուն մէջ, ինչպէս եղած էր նաեւ նախորդին՝ Մորիյոնի 2000-ի տեղեկագրին պարագային· հոն Թուրքիա կը հրաւիրուէր հրապարակաւ ճանչնալու Հայերու ցեղասպանութիւնը եւ վերցնելու 9 տարիէ ի վեր Հայաստանի կիրարկած շրջափակումը: Իսկ նորը՝ Ա· Լամասուրի պատրաստածը, վերջ կուտայ Հայերու ցեղասպանութեան յօդուածներուն, եւ ինչպէս կը շեշտէ Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբին ահազանգը, «ծրագրելով զօրակցիլ հայեւթուրք հաշտութեան վիճելի յանձնախումբի մը»...:

Հայ Դատի յանձնախումբը Սեպտեմբեր 29-ի հաղորդագրութեամբ մը անդրադառնալով այս պարագային, սրբագրութիւններու առաջարկ մը ներկայացուցած է Լամասուրի տեղեկագրին· կ'ուզէ որ նըշուի 1987-ի բանաձեւը, Թուրքիոյ կողմէ Հայաստանի շրջափակումին ջնջումը, ցեղասպանութեան ճանաչումը· նաեւ՝ մտահոգութիւն կը յայտնէ ցեղասպանութիւնը ընդունած լրասփիւռներու, մտաւորականներու, կրօնաւորներու, ակադեմականներու եւ անհատներու վրայ կիրարկուած ճնշումին պատճառով: Կ'ուզէ որ տեղեկագրին «Թուրքիոյ արտաքին յարաբերութիւններու»ն առնչուած մասին վըրայ կատարուի հետեւեալ յաւելումը· «Կոչ կ'ընէ Թուրքիոյ Հայաստանի հետ իր յարաբերութիւններուն բնականոնացման հեռանկարին մէջ որ Կովկասի խաղաղութեան գլխաւոր պայմանն է, ճանչնալու Հայերու ցեղասպանութիւնը»:

Հայ Դատի յանձնախումբին այս նախաձեռնութեան զուգահեռ հաղորդագրութիւն մը հրապարակած է (Հոկտեմբեր 4) Ֆրանսայի Հայկական խմբաւորումներու կազմակերպութիւնը: Հոն եւս կը քննադատուի պետական եւ կազմակերպչական ամէն նեցուկէ զուրկ Հայեւթուրք հաշտութեան քանի մը անհատէ բաղկացած յանձնախումբին յայտնուած զօրակցութիւնը որ կը վիժեցնէ բոլոր վիճարկումները, հետապնդելով ցեղասպանութեան ճանաչումի հոլովոյթը խոչընդոտելու նըպատակը: Դատապարտելով «այս կարգի խաթարուած ձեռնածումները» Ապրիլ 24-ի կոմիտէն կը պահանջէ որ տեղեկագրին մէջ պահպանուի ցեղասպանութեան ճանաչումին առնչուած պարբերութիւնը:

Լամասուրի տեղեկագիրը առաջարկըւած փոփոխութիւններով քուէարկութեան մը նիւթ կ'ըլլայ Հոկտեմբեր 10-ին: Իսկ տեղեկագրին ընդհանուր քուէարկումը տեղի կ'ունենայ շատ հաւանօրէն Հոկտեմբեր 24-ին:

Հոկտեմբեր 5-ի մամուլի ասուլիսին որ տեղի ունեցաւ Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ, Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբին նախագահուհի Տիկին Հիլտա Չօպոյեան պարզելով վերոնշեալ պարագաները, ըսաւ թէ իրենք վերջերս հանդիպում ունեցած են Ա· Լամասուրի հետ որ տրամադիր երեւցած է ջանք մը ընելու որ խնդրոյ առարկայ պարբերութեան մէջ փոփոխութիւն մը կատարուի: Խօսելով նաեւ Եւրոպայի Խորհրդարանի անդամներուն եւ խմբաւորումներուն մօտ իրենց տարած աշխատանքին մասին, Հ· Չօպոյեան ըսաւ թէ Հայերու նկատմամբ քիչ մը աւելի նպաստաւոր մթնոլորտ մը կը նկատեն, համեմատած նախորդ տարիներուն· բան մը որուն մէջ դեր պէտք է ունեցած ըլլայ Ֆրանսայի, Իտալիոյ եւ այլ երկիրներու կողմէ ցեղասպանութեան ճանաչումը:

Յանձնախումբին աշխատանքը դիւրացընող կարեւոր ազդակ մը պիտի ըլլայ Հայ Դատի եւրոպական գրասենեակի մը բացումը Պրիւսէլի մէջ, կեդրոնացնելու համար Եւրոպայի 9 երկիրներու մասնաճիւղերը եւ աւելի ազդեցիկ աշխատանք տանելու Եւրոպայի խորհրդարանականներուն մօտ:

Մամուլի ասուլիսին ներկայ էին Հայ Դատի Ֆրանսայի երկու ներկայացուցիչները Թալին Թաշճեան եւ Ցոլիկ Մարտիրոսեան: Ինչպէս կը շեշտէր Տիկին Չօպոյեան, ամբողջ աշխատանքին նպատակն էր այժմէական հարցի կարգավիճակը պահպանել ցեղասպանութեան համար եւ արգելք ըլլալ Թուրքիոյ կողմէ անոր անցեալի հարցի մը վերածումին, ծանրութիւնը դնելով քաղաքական բնոյթին վըրայ:

Ա· ԹՈԹՈՅԵԱՆ

ԽՕՍՔԻՉԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԾՈՒԱՐԱԾՆԵՐԸ

«Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆԸ...»

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

ԽՕՍՔԻՉԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Լեզուն հիմնական եւ ամէնից արդիւնաւէտ միջոցն է նոր մարդ ստեղծելու ծրագրերի իրականացնելու համար: Հուսկ ուրեմն, սովետական լեզուն դարձաւ որոշակի աշխարհայեացք ու մտքեր արտայայտելու գործիք, որովհետեւ պէտք է ունենար սովետական մարդը: Սովետական լեզուն բացատրում է բոլոր այն մտքերն ու գաղափարները, որոնք խմորւում էն պետական հովանաւորութիւնից դուրս որեւէ այլ տեղ: Միեւնոյն ժամանակ եւ ամէնից կարեւորը՝ սովետական լեզուն գալիս էր փոխարինելու գրական լեզուին, քանի որ գրական հայերէնը «աղքատ» է, չունէր այն «ճշգրտաբանութիւնը», որ ունէր ռուսերէնը եւ միայն «լուսաւոր լեզուն Պուշկինի ու Լենինի լեզուն չէր, որ ծագեց ու բարգաւաճեց ժամանակակից հայերէնը»: Մի խօսքով, պէտք էր մեռցնել գրական լեզուն՝ նսեմացնելու եւ իր տեղը դնելու էր սովետական պաշտօնական լեզուն, որի կողքին էլ, բնականաբար լինելու էին պաշտօնականացած բարբառները: Նրանք իրենց գաւառների մէջ խօսելու էին գաւառական լեզուով եւ մի հայ գաւառացին չէր հասկանալու մէկ ուրիշ հայ գաւառացուն: Ասենք՝ լոռեցին ղարաբաղցուն, գիւմրեցին զէյթունցուն, երեւանցին թիֆլիսեցուն եւ այլն... Մնում էր ի՞նչ... Մնում էր, որ բոլոր այս կիսագրագէտ նոր մարդկանցները իրար հետ հաղորդակցեն կամ սովետական լեզուի հայկական տարբերակով, կամ ռուսերէնով, որ, այո՛, Լենինի լեզուն էր, բայց Դոստոեւսկու եւ ոչ էլ Չեխովի: Ի դէպ, խմկալիս, ուզում եմ ասել, որ գրական ռուսերէնով խօսելու համար նոյնպէս պէտք է «պարապել»:

Գրական լեզուն էր բուն նշանակութիւնից զրկելու նպատակով էր, որ 1936 թ. ընդունուեց Համ(Կ)Կ կենտրոնի որոշումը, թէ «ժառանգէլների բոլոր պլաութեւները, ուղղագրական տեղեկատունեւրը, տերմինաբանական բառարաններն ու քերականութիւնը, նոյնպէս եւ դրանց մէջ կատարուող ամէն մի փոփոխութիւն ընդունելի կը լինեն եւ օգտագործման կը յանձնարարուեն ոչ այլ կերպ, քան Սովետական Միութեան Կենտրոնական Ազգութիւնների Խորհրդի նախագահութեան յատուկ որոշումով միայն»:

Լեզուի նկատմամբ գաղափարախօսական հսկողութիւնը, ինչպէս նաեւ լեզուն կատարելապէս սովետականացնելու խնդիրը լուծելու համար հարկ էր, որ լեզուն դադարէ պաշտպանական սահմանութիւն լինելուց եւ դառնայ պետական սեփականութիւն: Այդ ժամանակ էլ ստեղծուեց «Մինիստրների սովետի առընթեր տերմինաբանական կոմիտէ»: Այս հիմնարկութեան Սովետական Հայաստանի տարբերակը գլխաւորում էր Գ. Ջահուկեանը, որին եւ իր օգնականներին էլ պարտական ենք հայերէնի լիկւու գործի յաջողման ասպարէզ հասցնելու ջանքեր համար:

Բանի՛ խօսքի նկատմամբ պետական մենաշնորհեան հսկիչ ֆունկցիան միայն տերմինաբանական կոմիտէն չէր: Հրատարակութիւնը իրականացնում էին նաեւ վարչական մարմինները քրէական օրէնսգրքի համապատասխան յօդուածներով՝ պետական յանցագործութիւն (տե՛ս Մ. Գելլեր, Մեքենան եւ պտուտակները, Լոնտոն 1985): Լենինի ամէնիշխան մամլակայնութեան սահմանուած սովետական առաջին քրէական օրէնսգրքի «Պետական յանցագործութիւններ» գլուխ 57 / 10-րդ յօդուածի խօսքի նկատմամբ պետական մենաշնորհը խախտելու համար սահմանւած էր վեց ամիս ազատազրկում: Ստալինը լրացուցիչ յօդուածներով 1928-ից ի վեր պատժի չափը դարձաւ 10 տարուայ ազատազրկութիւն: 1960 թ. հաստատուած նոր Օրէնսգրքով խօսքի նկատմամբ պետական մենաշնորհը խախտողը նոյնպէս պատժւում էր որպէս պետական յանցագործ եւ որպէս յանցանք նկատւ էր առնուած նաեւ «սովետական պետական եւ հասարակական կարգերը արատաւորող զրպարտչական յերիւրանք»ը: Իսկ յերիւրանք համարւում էր այն ամէնը, ինչը չէր հրապարակուած սովետական մամուլի մէջ:

Եթէ քրէական օրէնսգրքի յօդուածները կիրառւում էին որոշակի դէպքուածներով, ապա գրաքննութիւնը սովետական լեզուն ձեւաւորելու գործին լծուած էր գիշեր ու զօր, անդադար եւ հետեւողականօրէն:

Սովետական լեզուաբանների անմիջական մասնակցութեամբ:

Գրաքննութիւնը աշխարհը դիտում է որպէս իմաստանշանային մի համակարգ, որտեղ իրականութիւն է միայն թոյլատրելի տեղեկատուութիւնը: Ինչը, ըստ էութեան, վերն ասուած ապատեղեկատուութիւնն է: Հետեւաբար սովետական լեզուով տրուած սովետական տեղեկութիւնը դառնում է անհեթեթ, քանի որ սուտը թափանցում է բառի մէջ եւ բառը դառնում է սուտ: Եւ բնական է, որ իրականութեան մասին որպէս եզակի ճշմարտութիւն դիտւում է միայն ու միայն գրաքննութիւնից անցած տպագիր խօսքը:

Լեհ գրող Չեսլավ Միլոշը խօսքի վրայ իրականացուած համապարփակ իշխանութիւնը անուանել է լոգոկրատիա, այսինքն՝ խօսքիշխանութիւն (Չ. Միլոշ, Ստրկացուած բանականութիւն, Փարիզ 1980): Իսկ Ֆրանսացի պատմաբան Ալէն Բըզանսոնը խօսքիշխանութեան հիմունքը ձեւակերպել է հետեւեալ կերպ. «Այն վարչակարգի պայմանների մէջ, որտեղ իշխանութիւնը լեզուի ծայրին է, իշխանութեան ընդգրկած ծաւալը առաւելագոյնս դրսեւորւում է «կոճղափայտի լեզուն»տարածուելու չափով (Ալէն Բըզանսոն, Ռուսական անցեալը եւ սովետական ներկան, Լոնտոն 1984):

Ի դէպ, սովետական լեզու ասելով՝ նըկատի ունեմ բոլոր սովետական լեզուները եւ դրանց մէջ նաեւ այսպէս յորջորջուող պետական հայերէնը, որի «մարգարտահատիկները» առատօրէն սփռուած են սովետական եւ ետսովետական գեղարուեստական գրականութեան եւ մամուլ – ձայնասփիւռ – հեռատեսիլի մէջ:

Նաեւ սովետական լեզուաբանների գերակշռող մեծամասնութեան բանաւոր ու գրաւոր խօսքի մէջ:

«ԴԱՐԱԿԱԶՄԻԿ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ» ՀԵՏԵՒՈՐԴՆԵՐԸ

Առանձնակի հետաքրքրութիւն կարող է ներկայացնել այն հարցը, թէ, ի վերջոյ, ինչո՞վ է պայմանաւորուած սովետական լեզուաբանների աչքին իջած փարդան կամ թողը:

Գ. Ջահուկեանը իր դասախօսութիւններ ընթացքին, նոյնիսկ 1956ից յետոյ, ինչպէս վկայում են նրա երբեմնի ուսանողները, անպայման յիշատակում էր Ի. Ստալինի «Մարքսիզմը եւ լեզուաբանութեան հարցերը» աշխատութիւնը, որ ժամանակին յայտարարուել էր «դարակազմիկ աշխատութիւն»: Ու թէեւ Ի. Ստալինի անձի ու գործունէութեան նըկատմամբ իրենք՝ կոմունիստներն էին մշակել երկիմաստ մի վերապահութիւն, սակայն Գ. Ջահուկեանը ուսանողներին գլխի էր գցում ամէնից կարեւորը: Աշխատութեան իսկական հեղինակը, անշուշտ, Ստալինը չէ, բացատրում էր նա՝ բազմանշանակ մի քմծիծաղով: Ստալինը ի՞նչ գիտելիք կարող էր ունենալ լեզուաբանութիւնից... Բայց նա իր ձեռքի տակ ունէր նշանաւոր լեզուաբան ակադեմիկոսներին, որոնք էլ, անշուշտ, ստեղծել են «դարակազմիկը»: Հետեւութիւնը պէտք է անէին ուսանողները: Եւ, ինչպէս յետագայ տարիները ցոյց տուեցին, ուսանողներից ոմանք յաջողութեամբ ընտրեցին իրենց ուսուցչի փորձառութեան ուղին: Երեսանց մերժելով Իոսիֆ Ստալինին, նրանք շարունակեցին «Մարքսիզմը եւ լեզուաբանութեան հարցերը» աշխատութեան դրոյթները զարգացնելու եւ կիրառելու գործը: Եւ արդէն այսօր ստալինեան լեզուաբանութեան այդ տխողոսաւոր նուիրեալները «պատմական անհրաժեշտութեան» շուրջ լըրճուկ դատողութիւններով՝ մտային մարզանքներ են անում ժողովրդի անունից, ինչպէս նաեւ սոցիալիստական մշակոյթի կասկածելի «արժէքները» պահպանելու մասին կոչնակ զարնելով՝ ոտատակ են տալիս եւ ջնջում են դարերի խորքից պահպանուած՝ Հայի յիշողութիւնը:

Սովետական լեզուն ազգային յիշողութիւնը սրբելու գործիք լինելով, միեւնոյն ժամանակ հաղորդակցութեան միջոց է «վերեւների ու ներքեւների», այսինքն՝ կառավարողների եւ կառավարուողների փոխ յարաբերութեան համար: Քանի որ սովետական լեզուն այնպիսի մի համակարգ է, որի նշանները միատեսակ են ընկալւում են թէ «վերեւները» եւ թէ «ներքեւները»: Եւ գլխաւորը. սովետական լեզուն երկրով մէկ համակեցութեան պատրանք է ստեղծում իշխանութեան ու հպատակների միջեւ: Իսկ արտաքին աշխարհի նկատմամբ, ինչպէս գրում է Մ. Գելլերը, «ծնում է միասնականութեան զգացում»: Այնքանով, որքանով սովետական լեզուն իր գոյութիւնը ոչ միայն պահպանել, այլեւ շարունակում է Հայաստանի ժամանակակից իրականութեան մէջ, ուստի համակեցութեան պատրանք եւ միասնականութեան զգացում ստեղծելու նրա հնարաւորութիւնները լիուլի օգտագործում են իշխանութեան ոլորտները:

Այսպիսով, իշխանութիւնը դառնում է «հարազատ», իշխանութիւնը ընկալւում է որպէս «հայրենիք», իշխանութիւնը ստանում է «ազգային գոյն»: Իսկ իշխանութեան եւ նրա հաղորդակցութեան լեզուի հակառակորդները դառնում են թըշնամի՝ «անհարազատ», «հայրենադաւ» ու «ազգադաւ»:

Մի՛ով բանիւ, սովետական խօսքը դարձել է մենախօսութիւն: Մենախօսութիւն է այն պարզ պատճառով, որ երկրորդ կողմ գոյութիւն չունի, զի երկրորդ կողմը՝ թշնամին է: Ուրեմն, բնաւ էլ տարօրինակ կամ զարմանալի չէ, որ Սովետական կողմի մենախօսողների համար լեզուի եւ ուղղագրութեան կամ գրականութեան եւ պատմութեան ոլորտների մէջ կատարուած ձեւախախտումները վերացնելուն լծուած մտաւորականութիւնը, այսինքն մենք՝ բոլորս, կամ գոյութիւն չունենք, եւ կամ գոյութիւն ունենք որպէս թշնամի:

Բայց ոչ թէ թշնամու խօսք է, այլ ազգային իսկական ողբերգութիւն, որ այսօր Հայաստանի քաղաքական, հոգեւոր եւ մշակութային կեանքի մէջ տիրութիւն են անում խօսքիշխանութեան ներքոյ ձեւաւորուած նոր մարդիկ:

Բայց երբե՛ք նոր Հայեր: Այն պարզ պատճառով, որ Հայը հին կամ նոր չի եղել, հին կամ նոր չէ եւ հին կամ նոր չի լինի:

Իմ համոզմամբ հէնց այս իրողութեան մէջ ենք որոնելու բոլորիս մորմոքող այն հարցի պատասխանը, թէ՝ «Վերջն ի՞նչ է լինելու»:

Ոչ թէ ջրիկ լաւատեսութեամբ, այլ մեր պատմական յիշողութեան շնորհիւ կարող ենք վստահ լինել, որ Հայն իր շարունակականութիւնը դարերի հեռաւոր խորքերից պահպանել է ոչ նոր լինելու եւ ոչ էլ հնանալու, այլ միշտ ինքզինքը մնալու ծինաբանական կարողութեան շնորհիւ:

(Շար. 2)

ԹԱՏՐՈՆ

«ԳԱԶԱՆԸ ԼՈՒՍՆԻՆ ՎՐԱՅ» ԹԱՏԵՐԱԽԱՂԸ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՄԷՋ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

100-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՒ 20.000 ՀԱՆԴԻՍԱՏԵՍ

Ընթերցողին քաջ յայտնի է ամերիկացի թատերագիր Ռիչըրտ Կալինոսկիի «Գազանը լուսնին վրայ» թատերախաղին արտակարգ յաջողութիւնը Ֆրանսայի մէջ, որ հինգ «Մոլիէռ» մրցանակներով պսակուած է: 1995-ին հրատարակուելէ ետք, թատերախաղը անգլերէն, ֆրանսերէն ու սպաներէն լեզուներով բեմադրուած է Միացեալ-Նահանգներէն մինչեւ Պէյրութ եւ Ֆրանսայէն մինչեւ Արժանթին: Թարգմանուած է նաեւ գերմաներէնի, յունարէնի եւ ֆինլանտերէնի[1], թէեւ տեղեակ չենք որ այս լեզուներով բեմադրուած ըլլայ:

Այս գործը, իր գտած արձագանգին ու Մեծ Եղեռնի թեմայի ժողովրդականացման առումով, թերեւս օտար գրականութեան մէջ զանգուածային ամէնէն կարեւոր երեւոյթն է Ֆրանց Վերֆէլի «Մուսա Տաղի 40 օրերը» վէպէն ի վեր:

Այս յօդուածով կ'ուզենք համառօտ կերպով ներկայացնել կարգ մը արձագանգներ Արժանթինի մէջ գտած ընդունելութեան մասին, որ բաղդատելի է ֆրանսական երեւոյթին:

Արդարեւ, թատերախաղը առաջին անգամ ներկայացուած էր 1997-ին Պուէնոս-Այրէսի մէջ, նախ անգլերէն, եւ ապա՝ ամիսներ ետք, սպաներէն, նոյն բեմադիրին եւ մասամբ նոյն դերասաններուն ճիգերով: Անգլերէն ներկայացուած է 6 անգամ, իսկ սպաներէն՝ քանի մը ամիս: Արժանթինեան մամուլը՝ սպանախօս թէ անգլիախօս, նպաստաւոր կարծիք յայտնած էր զոյգ բեմադրութիւններուն մասին, թէեւ զանգուածային հետաքրքրութիւն չէին արթնցուցած: Պատճառը թերեւս այն էր, որ նիւթական հարկ եղած միջոցները կը պակսէին ծաւալուն քարոզչութեան մը համար եւ, առաւել եւս, դերասանները ծանօթ չէին:

Այս տարի անսպասելին պատահած է. «Գազանը լուսնին վրայ» երրորդ անգամ ըլլալով բեմադրուած է Արժանթինի մէջ եւ Յուլիս 12-ին իր հարիւրերորդ խաղարկութեան յաղթանակը տօնած՝ քըսան հազար հանդիսատեսներու թիւը նըւաճելով: Այս տողերը գրի առնուելու ժամանակ, ներկայացումները կը շարունակուին:

Հեռու՜-հեռու լսած էինք յաջողութեան մասին ու կարդացած՝ արժանթինեան թերթերէ հատուկէնտ թատերախօսութիւններ: Յուլիսին անձնական կարճատեւ այցելութեամբ Պուէնոս-Այրէս գտնուելով, մեզի բախտ վիճակեցաւ 100-րդ բեմադրութեան ներկայ գտնուելու, ինչպէս եւ մամուլի արձագանգներու ծաւալուն թղթածրար մը ստանալու՝ Պ. Եդուարդ Գօզանլեանի շնորհիւ:

ԾԱՆՕԹ ԴԵՐԱՍԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾՕՆԸ

Այդ թղթածրարէն օգտուելով, պիտի վերականգնենք այս բեմադրութեան պատմութիւնը հայախօս ընթերցողին համար: Բեմադիրը՝ ծագումով հրեայ Մանուէլ Եոլապնին, 1998-ին Փարիզ գտնըւելով, բարեկամի մը միջոցաւ ծանօթացած է թատերախաղին անգլերէն ու ֆըրանսերէն բնագիրներուն: Անոլ խանդավառ, Պուէնոս-Այրէս դարձին թարգմանել տուած ու փոխանցած է իր բարեկամին՝ դերասան Մանուէլ Գալլաուին, որ իր կարգին իրեն ներկայացուցած է դերասանուհի Մալենա Սոլտան եւ 13-ամեայ դերասան Մարթին Սլիփաքը: Ամէն ինչ արագօրէն ընթացած է. Հոկտեմբեր 2000-ին ծրագրուած է, Նոյեմբերին՝ փորձուած, Դեկտեմբերին՝ պատրաստ, եւ Յունուար 3-ին առաջին անգամ բեմ բարձրացած է Մար-տէլ-Փլաթայի մէջ:

Այս քաղաքը արժանթինեան գլխաւոր ամարանոցն է եւ Յունուար – Մարտ ամիսներուն թատերական գործունէութիւնը հոն կը կեդրոնանայ՝ զբօսաշրջիկներու հետքերէն քալելով: Բայց թատերախումբը յանդուգն քայլի մը ձեռնարկած է. ամրան ամիսներուն, թատերախաղը չարաթը չորս անգամ ներկայացուած է՝ Չորեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը Մար-տէլ-Փլաթա, իսկ Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ Պուէնոս-Այրէս: Մարտէն սկսեալ, շաբաթական երեք ներկա-

յացումներ տրուած են Պուէնոս-Այրէսի մէջ:

Գալլաու (Արամ Թոփմասեան) եւ Սոլտա (Սեդա Թոփմասեան) արժանթինցի հանդիսատեսին համար ծանօթ ու ժողովրդական անուններ են: 53-ամեայ Գալլաու թատերական եւ շարժանկարի երեսնամեայ փորձառութիւն մը ունի, բայց ժողովրդային համբաւի տիրացած է 1998-99-ին հեռատեսիլի կատակերգութեան մը մէջ իր մարմնաւորած տիպարով: Իսկ 23-ամեայ Մալենա Սոլտա, որ նոյն կատակերգութեան մէջ երկրորդական դեր մը կատարած էր, իր ասպարէզը զարգացուցած է հեռատեսիլին մէջ՝ թէ՛ կատակերգական եւ թէ տրամաթիք դերերով: «Գազանը լուսնին վրայ» իր առաջին թատերական փորձառութիւնն է:

Հանրածանօթ դերասաններով օժտուած, բեմադրութիւնը արժանթինցի թէ հայ հովանաւորներու ուշադրութեան արժանացած է, ինչ որ նիւթական առումով լայն քարոզչութեան մը ապահովութիւնը տուած է: Անցեալ Յուլիսին, Պուէնոս-Այրէսի մեր շրջած զանազան թաղերու եւ վայրերու մէջ փոքր թէ մեծ որմազդեր տեսնելը իրապէս զարմանալի էր: Եթէ մտածենք, որ «հայ» բառը գրեթէ բացառաբար Ապրիլ 24-ի օրերուն քիչ թէ շատ արձագանգ -ամէն պարագայի՝ սահմանափակ- կ'ունենայ, կրնանք պատկերացնել այս երեւոյթին կարեւորութիւնը:

Եթէ մէկ կողմէ հրապարակային քարոզչութիւնը իր դերը ունեցած է, պակաս կարեւոր չէր մամուլի հետաքրքրութիւնը: Արդարեւ, Պուէնոս-Այրէսի, Մար-տէլ-Փլաթայի եւ Լա-Փլաթայի բոլոր օրաթերթերը՝ «Գլարին», «Լա Նասիոն», «Փախինա 12», «Ամպիթօ Ֆինանսիէրօ», «Պուէնոս-Այրէս Էքոնոմիքօ», «Էլ Տիա», «Լա Գափիթալ», «Պուէնոս-Այրէս Հերըլտ» (անգլիագիր), «Արկենթինիշէս Թակեպլաթ» (գերմանագիր), եւայլն, ինչպէս եւ զանազան պարբերականներ թատերախօսական յօդուածներով, թղթակցութիւններով եւ հարցազրոյցներով անդրադարձած են բեմադրութեան: Շահեկան է նշել, թէ Պուէնոս-Այրէսի հեռատեսիլի չորս մասնաւոր կայանները թղթակիցներ ղրկած էին հարիւրերորդ բեմադրութեան գիշերը:

ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Ինչո՞ւ այս թատերախաղը: Ամէնէն տարածուն օրաթերթին՝ «Գլարին»ին տուած իր հարցազրոյցին ընթացքին, «Հայն ու Արժանթինցին ի՞նչ հասարակաց բան ունին» հարցումին, Գալլաու կը պատասխանէր.-

«Մենք ցեղասպանութենէ[2] մը կու գանք: Տրամայէն այնքան հեռու չենք: Երբ թատերախաղը կարդացի, շատ մը բաներ իմ մէջս հնչեցին. սարսափը, հալածանքը, չարչարանքը, անհետացումները: Այդ կողմը ինծի շատ ծանօթ թուեցաւ. շատ մը հասարակաց բաներ կան, հակառակ Հայու մը եւ մեր միջեւ գոյութիւն ունեցող հեռաւորութեան: Նըւազ ծանօթ միւս երեսակներուն սկսայ ծանօթանալ գործի յառաջացումին զուգահեռ»[3]:

Ամրան ամիսներուն, սովորաբար թեթեւ զաւեշտները կամ շատ կարեւոր դերասաններով խաղերն են որ Մար-տէլ-Փլաթայի հանդիսատեսը կը գրաւեն: Քիչ ծանօթ ցեղասպանութեան մը կապուած նիւթ մը բացարձակ անտարբերութեան կրնար արժանանալ, հոգ չէ թէ ծանօթ ու տաղանդաւոր դերասաններ գործ ունենային հոն: Բայց «Գազանը լուսնին վրայ»ի պարագային ասիկա չէ պատահած: Ո՛չ միայն լեցուն սրահներով դիմաւորուած է ամէն գիշեր ու առաջին գրաւոր դրուատանքներուն արժանացած, այլեւ իր երեք դերասանները շահած են ամէնամեայ «Էսթրելլա տէլ Մար» պարգեւները: Մրցանակաբաշխութիւնը ամբողջ երկրին կը հեռասփռուի: Իր շնորհակալական խօսքին մէջ, Գալլաու հարիւր հազարաւոր հեռադիտողներու բացած է.-

«Արժանթինը, տարեկան 1800 բեմադրութիւններով, աշխարհի երկրորդ երկիրն է նոր խաղերու ներկայացումի տեսակէտէն: Բայց թատրոնին համար ո՛չ աջակցութիւն եւ ոչ ալ յատուկ քաղաքականութիւն կայ: Արուեստի թատրոնի, գաղափարի թատրոնի ծրագիրներ յառաջ տանելու համար նախաձեռնողները պէտք է ճիգ թափեն: Ուրեմն, բարի եկաւ ըսենք այս ''Կար ու չկար''ին, որովհետեւ մրցանակներ կային ու մրցանակ չկար:

(...) Աւարտելու համար, այս մրցանակով կ'ուզեմ յատուկ ձօն մը ընել, եւ ընկերներս համաձայն պիտի ըլլան ինծի հետ, որովհետեւ մեր ''Գազանը լուսնին վրայ'' շատ դաժան պատմութեամբ մը կը սկսի. 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը, զոր Թուրքերը Հայերուն դէմ գործադրեցին 1915 - 1923-ին: Եթէ մարդկութիւնը ոտքի կանգնած ըլլար եւ այդ ոճիրին դէմ արտայայտուած ըլլար, թերեւս ուրիշները պատահած չըլլային: Նոր մահեր չթոյլատրենք, սարսափը չըթոյլատրենք: Հասկնանք որ տարակարծութեան մէջ են ապագայի մը կերտումին մեծ կարելիութիւնները, ինչ որ մեր թատերախաղին նիւթն է:

Հետեւաբար, կ'ուզեմ զայն ձօնել Թուրքերուն կողմէ ջարդուած մէկ ու կէս միլիոն Հայերուն: Թող այս մրցանակը բոլորին եւ անոնցմէ իւրաքանչիւրին նըւիրուած ըլլայ»:

Մար-տէլ-Փլաթայի մէջ իր շնորհալից յաջողութենէն ետք, Մարտին ներկայացումները շարունակուած են միայն Պուէնոս-Այրէսի մէջ, իսկ Ապրիլին անոնք տեղափոխուած են աւելի մեծ եւ յարմարաւէտ սրահ մը: Ժողովրդային դրական հակազդեցութիւնը պատճառ եղած է, որ հեղինակը՝ Ռիչըրտ Կալինոսկի, Արժանթին հրաւիրուի անցեալ Մայիսին: Ինչպէս յայտնի է, քան թատերախաղի հեղինակ լեհ ծագումով թատերագիրը շըրջան մը Հայուհիի մը հետ ամուսնացած էր: Ասկէ զատ, ինչպէս «Պուէնոս-Այրէս Հերըլտ» օրաթերթին տուած իր հարցազրոյցին մէջ նշած է, Արամ Թոփմասեանի կերպարին մէջ իր սեփական հօր կերպարէն որոշ գիծեր -ինչպէս խոր լռութիւնները- մտցուցած է, եւ աւելցուցած.- «''Գազանը լուսնին վրայ'' գրելու պատճառս կապ ունեցած է այս կնոջ - երախայի քաջութեան յայտնագործումին հետ: Առաջին հերթին՝ դիմադրելու քաջութիւնը, եւ ապա այլ տեսակ քաջութիւն մը որ այս մարդը (իր ամուսին Արամը) նուաճելու տեսակ մը վայրենիութեան մէջ կը կայանար»[4]:

Ի դէպ, Կալինոսկիի ծրագիրներուն մաս կը կազմէ Սողոմոն Թեհլիրեանի նուիրուած թատերախաղ մը գրել, որուն մասին արդէն նախնական աշխատանքներ կը կատարէ: Բոգդան Վերդեանի գրեթէ անծանօթ «Ծաղէկներս մնացին հեռում» վէպէն (Երեւան, 1969) եւ Պերճ Զէյթունցեանի «Ոտքի, դատարանն է գալիս» թատերախաղէն (Երեւան, 1981) ետք, ինչպէս եւ Հրայր Թուխմանեանի «Առաքելութիւն Պէրլին» շարժանկարէն ետք (ԱՄՆ, 1980), կ'արժէ տեսնել ի՞նչ մարմնաւորում պիտի ստանայ Թալէաթի ահաբեկումը իրագործող երիտասարդին կերպարը բեմին վրայ:

ՆՇՄԱՐՆԵՐ՝ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վերադառնալով Պուէնոս - Այրէսի բեմադրութեան, նշենք, թէ անոր հեռասփռումի իրաւունքները արդէն վաճառուած են, ուստի հաւանական է, որ ապագային բեմադրութիւնը հեռատեսիլէն ներկայացուի:

1996-ին թատերախաղը կարդալէ եւ 1997-ի բեմադրութիւնները տեսնելէ ետք, մեզի համար թարգմանութեան գեղեցիկ առիթ մըն էր այս նոր բեմադրութիւնը դիտել[5]: Նշենք, թէ վերջինը քիչ մը աւելի հակած է դէպի կատակերգականը՝ քան իր նախորդները: Այսինքն, խաղարկութիւնը ոչինչ կորսնցուցած է իր տրամաթիք երանգներէն, բայց տեղ-տեղ ճնշիչ մըթնոլորտը թեթեւցած է երգիծանքի, գըւարթախոհութեան կամ ուրախութեան պահերու խելացի օգտագործումով: Հայկական երաժշտութիւնը (հայաստանցի, այժմ Արժանթին ապրող դուդուկահար Սարօ Դանիէլեանի մեկնաբանութեամբ), հայկական պարաքայլեր եւ երգերու մանր հատուածներ ո՛չ միայն օգնած են յաւելեալ հարազատութեան մը, այլեւ իւրայատուկ պահերու շեշտադրումին: Երեք դերասանները (Մ. Սլիփաքը կը խաղայ թէ՛ մանուկ եւ թէ ծեր Վինսենթի դերերը, ինչպէս որ թատերական բնագիրը նախատեսած է որպէս այլընտրանք) շատ տպաւորիչ խաղարկութիւն կը ցուցաբերեն, եւ Արամի ու Սեդայի կերպարները բեմին վրայ մեզի կ'երեւին յար եւ նման իրենց հայկական նախատիպերուն:

Հարիւրերորդ բեմադրութենէն ետք տեղի ունեցած մտերմիկ ընթրիքի մը ընթացքին, դերասան Մանուէլ Գալլաու կը շեշտէր, թէ կարեւորը «իմաստը վերագտնելն է, ո՛չ թէ միայն հաւասարակշռութիւնը, այլ իմաստը»: Այս ժամանակներուն, երբ բառը լիովին նենգափոխուած է եւ ոչինչ այն է, ինչ որ կը թուի ըլլալ, թատերախաղին իմաստին հետ հաղորդուող հանդիսատեսին համար՝ «Գազանը լուսնին վրայ» տեղ - տեղ նոյնիսկ աստուածայայտնական (epiphanique) փորձառութիւն մըն է:

Եւ, շրջելով Շահնուրի ծանօթ ասոյթը, «վերջին խօսքս չափազանցութիւն (չ)է»:

Վ. Մ.

Նիւ-Ճըրզի

(1) Shaké Balian, «Life Experience as Inspiration», **Buenos-Aires Herald,** May 25, 2001.

(2) Կ'ակնարկէ 1976-1983 թուականներու զինուորական բռնատիրութեան ընթացքին տեղի ունեցած «անհետացումներուն» եւ սպանութիւններուն, որոնց զոհ գացած են հազարաւոր մարդիկ (փաստականօրէն՝ 10.000, թէեւ սովորաբար 30.000 թիւը կ'արծարծուի): Երկրի ձախակողմեան շրջանակները ընդհանրապէս կը գործածեն «ցեղասպանութիւն» բառը, թէեւ անոր ներկայ սահմանումի լոյսին տակ, չափազանց դժուար է քաղդատական մը գտնել արժանթինեան պարագային եւ, ըսենք, հայկական, հրէական կամ ռուանտական երեւոյթներուն միջեւ:

(3) «Manuel Callau: ''Me gusta hacer de porteno'', **Clarin,** 3 de marzo de 2001.

(4) Shaké Balian, ''Life Experience as Inspiration», **art. cit.**

(5) Այս թատերախաղին մասին, տե՛ս. մեր յօդուածը՝ «Գազանը լուսնին վրայ», *Բաց Նամակ*, 1, 1999:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Միջին - Արեւելքի Աստուածաբանական Դպրոցներու Յանձնախումբին 2001 տարուան ընդհանուր համագումարը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 24 - Հոկտեմբեր 1, Կիպրոսի «Գիքքօ» վանքին մէջ:

Համագումարին մասնակցեցան Լիբանանէն, Եգիպտոսէն, Յորդանանէն, Պաղեստինէն եւ Սուրիայէն ժամանած 80 ներկայացուցիչներ, Աստուածաբանական 17 Դպրոցներու կողմէ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը մասնակցեցաւ երեք ներկայացուցիչներով՝ Մակար Արք. Աշգարեան, Խաժակ Կիս. Սրկ. Նալպանտեան եւ Հրայր Պետուրեան:

Համագումարի գլխաւոր թեման էր «Եկեղեցւոյ դերը վայրագութեան դիմագրաւումին մէջ»:

Դասախօսութեանց առընթեր կատարուեցան բազմաթիւ խորհրդածական հաւաքներ, նաեւ կլոր - սեղանի քննարկումներ:

Դպրեվանքի ներկայացուցիչները նաեւ մասնակցեցան Լիմասոլի Ս. Գէորգ Եկեղեցւոյ տօնակատարութեան, ուր պատարագեց եւ քարոզեց՝ Հայր Մակար եւ խորանին սպասարկեցին երկու սաները:

LIVRES REÇUS

CINQUANTE ANS DE LITTERATURE ARMENIENNE EN FRANCE

Du même à l'autre

KRIKOR BELEDIAN

CNRS Editions, Paris 2001
15, rue Malebranche, 75005 Paris

ԹԻՒ 17 ԽԱՉԻԿԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՈՒՐ ԿՐԿԻՆ Կ'ԵՐԵՒԱՅ ԱՍՏԻԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ

- Վա՛յ, էֆէնտի՛մ, մաշալլահ, ինչպէ՞ս էք, աղէ՞կ էք, - գոչեց՝ թէմէննահներ ուղղելով աջ ու ձախ, - Սերգիս էֆէնտին ո՞ւր է:

- Վարը չէ՞ր, - հարցուց Գալփաքճեան:

- Չէ՛, վարի սենեակը մարդ չի կար:

- Ուրեմն դուրս ելած ըլլալու է, սպասեցէք, հիմա կու գայ, եթէ անպատճառ տեսնել կ'ուզէք:

- Չէ՛, անպատճառ տեսնելու բան մը չունիմ, հոսկէ կ'անցնէի կոր, անգամ մը հանդիպիմ՝ ըսի, հիմա ոստիկանատունէն կու գամ կոր, շատ իրարանցումի մէջ էին, ես գործի մը համար Բէշատ պէյին գացած էի, հագիւ կրցայ հետը մէկ քանի վայրկեան խօսիլ:

Ակունի, որ գրելու պիտի սկսէր, յանկարծ գրիչը վար դրաւ:

- Ի՞նչ կայ, եթէ կարեւոր բան մը իմացար, ըսէ՛, որ գրենք, - ըսաւ:

- Գրուելիք բաներ չեն, - պատասխանեց Աստիկ, - միայն սաչափը գիտեմ, որ կացութիւնը շատ ծանրացած է, մանաւանդ Հայերուն համար, մեծ փորձանք մը կը պատրաստուի կոր մեր գլխին, եւ դըժբախտաբար տեղի տուողը մենք ենք:

- Մենք ի՞նչ ըրած ունինք:

- Երբոր մենք կ'ըսեմ, յեղափոխական կուսակցութիւնները կը հասկնամ, ժամանակը շատ փափուկ է, ու ասիկա չեն ըմբռներ կոր, պէտք է շատ խոհեմութեամբ շարժիլ եւ հանդարտ կենալ:

- Բայց բան մը ըրած չունին:

- Ինչպէ՞ս չունին, անգամ մը Բէշատ պէյին հարցուցէ՛ք: Երէկ գիշերուան եղածը չիմացա՞ք:

- Ի՞նչ եղեր է, - հարցուց Ակունի՝ ոտքէ ձեւանալով:

- Արշաւիր անունով մէկը զարկեր են:

- Ատիկա իմացանք, բայց շատ կարեւորութիւն տալու բան մը չէ, մատնիչ է եղեր զարկեր են, ատանկ բաներ առաջին անգամ չէ, որ կը պատահին:

- Այո՛, բայց վերջապէս շատ կարեւորութիւն կուտան կոր այդ դէպքին, Հնչակեաններն են եղեր զարնողները:

- Ինքն ալ արդէն հնչակեան մըն է, կուսակցական խնդիր մը պարզապէս եւ ոչ ուրիշ բան:

- Խնդիրը ձեր գիտցածին պէս չէ, - պատասխանեց Աստիկ խորհրդաւոր ձեւով մը, - եղածը կառավարութեան դէմ է, եւ հետեւանքը շատ ծանր պիտի ըլլայ, գիտէ՞ք, որ ցանկեր կը պատրաստուին կոր:

- Ի՞նչ ցանկ:

- Վտանգաւոր համարուած Հայերու ցանկեր:

- Ի՞նչ պիտի ըլլան այդ ցանկերը:

- Ո՛վ գիտէ, անշուշտ պարապ տեղը չէ, որ կը պատրաստեն կոր, հաւանօրէն այդ ցանկերուն մէջ անցնողները առաջին առթիւ պիտի քշուին:

- Գիտէ՞ք, թէ որոնք կան այդ ցանկերուն մէջ:

- Չեմ գիտեր, - պատասխանեց Աստիկ խուսափողական ձեւով մը, - բայց սա գիտեմ, որ հարիւրաւոր անուններ անցած են ցանկերուն մէջ:

Այս վրդովեցուցիչ տեղեկութիւնը տալէ ետքը Աստիկ մեկնեցաւ՝ բաւական մըտատանջութեան մատնելով խմբագիրները:

- Դուն այդ Արշաւիրին մահափորձին լուրը մի՛ գրեր, - խորհուրդ տուաւ Գալփաքճեան Ակունիին, - չըլլայ գլուխնուս փորձանք մը չբանայ, ես այս Աստիկ էֆէնտիին բառերուն բնաւ չհաւնեցայ:

- Նայինք ճի՞շդ է ըսածը, անիկա երբեմն ատանկ լուրեր կը հնարէ:

- Նոյն բանը ես ուրիշ տեղէ մըն ալ լսեցի:

Արդարեւ, մահափորձին լուրը չհրատարակուեցաւ «Ժամանակ»ի մէջ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

Արտասովոր իրարանցում մը կը տիրէր այդ օրը: Պապը Ալիի պողոտային վրայ հեծեալ ոստիկաններ հրացանը ուսերնուն կը շրջագայէին վեր - վար: Ամէն փողոցներու անկիւնը մէկ - երկու ոստիկաններ կեցած էին, որոնք անցորդները կը զննէին կասկածելի ակնարկներով:

Ամէնքը հետաքրքիր՝ այդ անսովոր հսկողութեան պատճառը կը ջանային գուշակել ու չէին յաջողեր:

«Ի՞նչ կայ» հարցումին ոստիկանները կը պատասխանէին դաժան դէմքով մը.

- Բան մը չիկայ, ճամբադ քալէ՛:

Եւ սակայն յայտնի էր, որ ծանրակշիռ իրողութիւն մը կար:

(Շար. 78)

(Շար. Ա. էջէն)

րուն կողմէ: Թռանը Թուինք առած էր Սուխումի օդակայանէն, որ Աբխազիոյ «մայրաքաղաք»ն է եւ քառորդ ժամ յետոյ վար առնուած է:

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 8 / 9)

ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԱԽՈՐԺԱԿՆԵՐԸ

Ազրպէյճանի Պաշտպանութեան Նախարարը Ս. Աբիեւ եւ մամուլը տրամադիր կը թուին աշխարհի ներկայ կացութեան մէջ առիթը օգտագործելու, Ղարաբաղը «ազատագրել»ու համար: «Զերկալօ» թերթը գրած է թէ մինչ ԱՄՆ զբաղած են Թալիպաններու, Ռուսաստան ալ Չէչէններուն հետ, Ազրպէյճանը պէտք է առիթը օգտագործէ Ղարաբաղը ազատագրելու համար: Կովկասի մահմետականներուն առաջնորդը շէյխ Ալլահա Շիւքիւր Փաշազէ ալ իր օրհնութիւնը տուած է Պաշտպանութեան եւ Ազգային Ապահովութեան նախարարներուն որ Հայերու «ահաբեկչութեան» դէմ չարժման անցնին Ղարաբաղի մէջ: Արտաքին գործերու նախարար Գուլիեւ հակազդելով Սերժ Սարգսեանի այն սպառնալիքին որ Ղարաբաղի մէջ որեւէ գործողութիւն շատ սուղ կ'արժէ Բաքուին, ըսած է. «Ոչ ոք կրնայ իր հողային ամբողջականութիւնը վերականգնելու Բաքուի իրաւունքին առարկել»:

***

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ԱՐՄԷՆԹԷԼԻ ՄԱՍԻՆ

Փոխադրութեան և Հաղորդակցութեան նախարար Անդրանիկ Մանուկեանի հրամանով կը դադրի Արմէնթէլի կողմէ հեռահաղորդակցութեան սպասարկութեան համար բաժանորդներու հետ պայմանագիրներու կնքումը: Արդէն կնքուած պայմանագիրներն ալ չեղեալ կը համարուին: Հրամանը հետեւանք է հեռաձայնի խոսակցութիւնները վայրկեանի միաւորով վճարել տալու Արմէնթէլի տնօրէնութեան որոշումին որ ժողովուրդին բուռն հակազդեցութեան պատճառ եղած էր:

***

ԱԺՄ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՆՈՐ ՊԱՌԱԿՏՈՒՄ

ԱԺՄ (Ազգ. Ժողովրդավարական Միութիւն) մասնաճիւղերուն պահանջով Հոկտեմբեր 6-ին սկսած է 13-րդ՝ արտակարգ համագումարը: Վարչութեան մէջ Նախագահ Վ. Մանուկեանի ընդդիմադիր թեւը յարմար դատած է նոր կուսակցութիւն վերակազմել: Նոր կուսակցութիւնը աջակողմեան հակում կ'ունենայ եւ կ'առաջնորդուի ազգային ու ազատական գաղափարներով: Նոյն օրը ընտրուած է նոր վարչութիւն:

***

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արտաքին գործերու Նախարարութիւնը Հոկտեմբեր 8ի յայտարարութեամբ ըսած է թէ նոյն օրը Հայաստանին ներկայացուած են ԱՄՆ-ու հետաքննութեան արդիւնքները, Սեպտեմբեր 11-ի ահաբեկչութիւններուն Ալ - Քաիտա կազմակերպութեան մեղսակցութեան վերաբերեալ: Հայաստան ափսոսանք յայտնելով դիւանագիտական ճամբով ահաբեկիչները ԱՄՆ-ու արդարութեան յանձնելու անկարելիութեան, իր զօրակցութիւնը կը կրկնէ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի ճակատին. նոյն ատեն յոյս կը յայտնէ որ ռազմական գործողութիւնները չեն անկայունացներ շրջանը եւ չեն վատթարացներ Աֆղանիստանի խաղաղ բնակչութեան կացութիւնը:

***

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ՍԱՄԲՕ. – Քիչինեւ տեղի ունեցած սամբոյի պատանիներու համաշխարհային ախոյեանութեան մրցաշարքին, Հայաստանի հաւաքականը գրաւած է ընդհանուր դասաւորման 2-րդ դիրքը, շահելով 1 ոսկի եւ 4 պրոնզէ մետալ: 20 երկիրներէ 400 մարզիկներ կը մասնակցէին:

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կիրակի, Հոկտեմբեր 14-ին Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ Մատաղօրհնութեան օրն է:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ

Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի Առաջնորդ Հայոց Փարիզի

Յաւարտ պատարագի կը կատարուի ամտաղի օրհնութիւն եւ ապա հոգեհանգստեան պաշտօն՝ Եկեղեցւոյ վախճանեալ հոգեւոր հովիւներու, հիմնադիրներու, բարերարներու եւ հոգաբարձուներու հոգիներուն ի հանգիստ:

Սկիզբ ժամերգութեանց ժամը 9-ին:

Պատարագ ժամը 10.30-ին:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԼԸՎԱԼՈՒԱ. – Վահէ Պեկոյեան 600 ֆրանք:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի Էլէն Բիւզանդ մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Հրայր Թորոսեանէ, Տէր եւ Տիկին Արամ Թորոսեանէ, Տէր եւ Տիկին Յովհաննէս Թաշճեանէ 500-ական Ֆր., Տէր եւ Տիկին Անրի Թաշճեանէ 300 Ֆր. Արթօ Գույումճեանի մահուան քառասունքին առիթով:

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN

GAGUIK KHAZANDJIAN

KHATCHIK ABRAHAMIAN

Vernissage

le Jeudi 11 octobre

à partir de 18 h 30

Exposition du 11 au 20 octobre

tous les jours

sauf le mardi et le dimanche

VOYAGE en ARMÉNIE

(Oecuménique, culturel, humanitaire)

du 29 octobre au 5 novembre

—— Prix : 7.000 F ——

Extension possible au Karabagh, du 5 au 7 novembre

organisé par **Solidarité Protestante France-Arménie (S P F A)**

1, rue Cabanis, 75014 Paris — ☎ 01 47 35 30 23

Accompagnateur : Pasteur **Samuel SAHAGIAN**

Pour s'inscrire, envoyer un acompte de 1.000 F

(Programme détaillé sur demande)

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ, Հոկտեմբեր 13

ՏՕՆ Է ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ՝ ՄԵՍՐՈՊԱՅ, ԵՂԻՇԷԻ, ՄՈՎՍԻՍԻ ՔԵՐԹՈՂԻՆ, ԴԱՒԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅՆ եւ ՆԵՐՍԻՍԻ ԿԼԱՅԵՑՒՈՅՆ

Տօն է ազգային եւ եկեղեցական՝ ի յիշատակ գիւտի Նշանագրացն Հայոց եւ Թարգմանութեան Սուրբ Գրոց:

Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 10-ին, պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ԹԱՇՃԵԱՆ

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուրբ Մեսրոպ Մշակութային Միութեան Սուրբ Խաչ շաբաթօրեայ վարժարանը կը վերաբանայ իր դռները Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 14-էն 17, Սուրբ Խաչ Եկեղեցւոյ կից սենեակներուն ու սրահին մէջ

13, rue du Perche, 75003 Paris

5-էն 12 տարեկան աշակերտներու համար:

Կը դասաւանդուին հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, հայկական երգեր ու պարեր:

Արձանագրուելու համար, հեռաձայնել՝ 01 - 44 - 59 - 23 - 50 թիւին:

CENTRE CULTUREL SAHAK MESROP

Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN

Soprano

Soliste

de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie

Au piano JULIETTE YILMAZIAN

***

Rouben ELBAKIAN

Ténor

Soliste

de l'Opéra National d'Arménie

Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne

339, avenue du Prado — 13008 Marseille

Tél. : 04 91 77 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini

Verdi — Tchaikovsky...

— Participation aux frais : 100 F —

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՍԷՆ-ԺԵՐՈՄ

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Սէն - Ժերոմի եւ Շրջակայից Սուրբ Սահակ - Մեսրոպ Եկեղեցւոյ Թաղական խորհուրդը պաշտօնապէս կը ծանուցանէ թէ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կը տօնախմբէ Եկեղեցւոյ շինութեան 71-րդ եւ անուանակոչութեան 68-րդ տարեդարձները

Հոկտեմբեր 14, Կիրակի օր

Այս առիթով կը կատարուի հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ հոգեներուն համար Եկեղեցւոյ գլխաւոր հիմնադիր եւ բարերար, երջանկայիշատակ՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿ. ՊԱԼԱՔԵԱՆԻ

հոգեւոր հովիւներուն – սարկաւագներուն – բարերարներուն – հիմնադիր եւ Շինութեան Յանձնախումբի Թաղական Խորհրդոյ անդամներուն – Օժանդակ Տիկնանց Միութեան անդամուհիներուն եւ բոլոր անոնց որոնք նիւթապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս սատարած են Եկեղեցւոյ շինութեան եւ որոնք այսօր առյաւէտ բաժնուած են մեզմէ:

Պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԼՐԷՃԵԱՆ

Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հարաւային Ֆրանսայի

Քարոզի աւարտին օրհնութիւնը Մատաղի եւ ապա հոգեհանգիստ:

Արարողութեանց աւարտին եւ Մատաղի բաշխումէն վերջ տեղի կ'ունենայ «գինեձօն» Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Կը խնդրուի Թաղիս եւ Շրջակայքի հայութենէն որ խուռներամ ներկայութեամբ յարգէ նուիրական յիշատակը Թաղիս ննջեցեալներուն:

Մատաղի մասնակցութիւն փափաքողները կրնան դիմել Թաղականութեան:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները՝ Սրբուհի Չէրքէզեանի մահուան առթիւ. –

Տէր եւ Տիկին Յովհաննէս Միհրանեան, Տէր եւ Տիկին Խաչիկ Պօղլուրդ 200-ական ֆրանք, Տէր եւ Տիկին Միրիճան Գարագայա, Պր. Շահին Եչիլթէփէ 100-ական ֆրանք, Տօքթօր Շարլ Սալսիօն 200 ֆրանք:

***

Ալֆորվիլի Ս. Մեսրոպ կրթարանի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները Սրբուհի Չէրքէզեանի մահուան առթիւ. –

Տէր եւ Տիկին Վահէ Տիչճի, Տէր եւ Տիկին Մագսուտ Խօզպոյաճը 500-ական ֆրանք:

***

Ալֆորվիլի Ս. Մեսրոպ կրթարանի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները՝ Մարի Խօզբաշի մահուան առթիւ. – Տէր եւ Տիկին Միհրան Զաքըրթաշ 100 Ֆր., Տէր եւ Տիկին Աթէշ Մադման 500 Ֆր., Տէր եւ Տիկին Միհրան Տէմիր 1000 Ֆր., Տէր եւ Տիկին Վարդգէս Տուզեան 200 Ֆր., Հայ Արարատ 300 Ֆր., Տիկին Վերժին Գումրուեան, Տէր եւ Տիկին Արսէն Գարեան 200-ական Ֆր., Տէր եւ Տիկին Ռոզա եւ Կուրի Սիմոնեան 1000 Ֆր.:

LES CONFERENCES D'ISSY

AUTOMNE 2001

1700ème ANNIVERSAIRE DE L'ADOPTION DU CHRISTIANISME PAR L'ARMENIE EN 301

Jeudi 11 octobre à 20 heures 45

«FAISONS CONNAISSANCE AVEC L'EGLISE APOSTOLIQUE ARMENIENNE»

M. KERAM TOROSSIAN

Lieu des conférences: Eglise Evangélique Arménienne d'Issy-les-Moulineaux 28, ave. Bourgain et 55, ave. Victor-Cresson, 92130 Issy-les-Moulineaux

Renseignements: 01 47 36 02 50 **Entrée libre** **Bienvenue à tous.**

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE

organisée par la

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

AU PROFIT DE L'ARMENIE

Vendredi 7 décembre

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 11
JEUDI
11 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·272 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20·272

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՄԻՇՏ ՌՈՒՄԲԵՐ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՎՐԱՅ

ԺՈՍՓԷՆ ԶՈՒԶԵՐ ՇԱՏ ՀԵՌՈՒ ԵՐԹԱԼ

Այլեւս միայն գիշերը չէ, որ ռումբեր կը տեղան Քապուլի, Քանտահարի եւ Ճալալապատի վրայ, այլ տեւականօրէն, 24 ժամ 24 ժամի վրայ եւ հակառակ անոր որ Ամերիկացիները կը պնդեն որ քաղաքանդ լրած են Թալիպաններու ռազմական ցանցերը եւ տէրն են Աֆղանիստանի երկինքին, կը հաստատուի որ հակօդային ուժերը դեռ ի վիճակի են բանելու եւ Թալիպանները կը յայտարարեն որ ամերիկեան օդանաւ մըն ալ վար առած են, ինչ որ Ուաշինկթըն կը հերքէ: Ռումբերուն կ'ընկերանան սննդեղէն եւ դեղօրայք, ինչպէս մեծ գոհունակութեամբ կը կրկնէ Պուշ, որու ըստ երեւոյթին ուշք խորհած է դիտել տալ թէ որքան տգեղ ու այպանելի է նման «կարգադրութիւն մը»: Եւ ինչպէս ուրիշներ ալ խորհած էին, Հոկտեմբեր 10-ին, Գանան - Անշէնէ ալ, երկփեղկեան չեզոք անշուշտ, կը գրէ թէ կը մնայ յուսալ որ բրինձին ծրարը Պէն Լատէնի գլխուն չիյնայ, ռումբերն ալ՝ ժողովուրդին:

***

Ազգային Ժողովին առջեւ, Լ. Ժոսփէն արտայայտուեցաւ այս նորօրինակ պատերազմին մասին եւ Ֆրանսայի մասնակցութեան, պատասխանելով երեսփոխաններու հարցումներուն: Ան ապահովութիւն տուաւ որ. - «Եթէ կացութիւնը մեզ պիտի տանէր այնպիսի բարդութեանց, զորս չենք փափաքիր եւ հակառակ մեր կամքին, ինչ կը վերաբերի ինծի, տեղի չեմ տար»: Ժոսփէն չբացայայտելու համար ձախ իր մեծամասնութեան պառակտումը այս հարցին շուրջ, չի փափաքիր որ հարցը քուէարկութեան նիւթ ըլլայ: Ան ալ չի փափաքիր բոլորովին տարբեր պատճառներով: Նախագահական ընտրութենէն եօթը ամիս առաջ, չուզեր վստահութեան քուէ տալ Ժոսփէնի:

***

«Մաչ» շաբաթաթերթի թղթակիցը՝ Միշէլ Փէյրար Թալիպաններու ձեռքը ինկած է Հոկտեմբեր 9-ին, երբ աֆղան կնոջ պէս ծպտուած կ'երթեւեկէր Ճալալապատի արեւելեան շրջանի, փաքիստանեան սահմանի ճամբուն վրայ: Ըստ Թալիպաններու ֆրանսացի լրագրողը «լրտեսութեան պաշտօն» ունէր եւ ոչ մէկ բարեացակամութիւն պիտի վայելէ: «Մաչ»ի խմբագրութիւնը իր ազատ արձակումը պահանջած է, հաստատելով թէ միայն լրագրողի իր աշխատանքը կը տանէր եւ նախորդ օրն ալ թղթակցութիւն մը ղրկած էր շաբաթաթերթին, խորագրուած՝ «Ճալալապատի ճամբուն վրայ»: Առանց սահմանի թղթակիցներու նախագահն ալ դիտել տուած էր թէ կարելի չէ մեղադրել լրագրողները, որ կը ծպտուին, այլապէս չեն կրնար Աֆղանիստան մտնել:

***

Փաքիստանի նախագահը՝ Փերվէզ Մուշարաֆ շատ խիստ միջոցներ ձեռք կ'առնէ, քանի իր դիրքը փափուկ եւ վտանգաւոր է: Ամբողջովին ընտրած է ամերիկեան կողմը, բայց, իր ժողովուրդին մէկ կարեւոր մասին հերոսը Պէն Լատէնն է: Պաշտօնանկ ըրաւ գաղտնի սպասարկութեանց պատասխանատուն եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներ, բայց, վտանգը կայ, մանաւանդ հիւլէական զէնքի, որ կրնայ Պէն Լատէնի կամ իր համակիրներուն ձեռքն անցնիլ:

***

Փափուկ կացութեան մէջ է նաեւ Արաֆաթ, որ պէտք է դէմ դնէ Պէն Լատէնի համակիր Պաղեստինցիներուն, բայց, նաեւ «համոյք» չպատճառէ Իսրայէլացիներուն, որոնք շատ ուրախ կ'ըլլան քաղաքացիական պատերազմէ մը:

***

Անթաքսը (անթրաքս) սկսած է սարսափ տարածել Միացեալ - Նահանգներու մէջ: Այս հիւանդութիւնը (անթրաքս կու գայ յունարէնէն որ ածուխ կը նշանակէ) մէկ հոգիի մահուան, երկրորդի մը վարակման եւ երրորդի մը կասկածելի վիճակին պատճառ եղած է Փալմ Պիչի շրջանը (Ֆլորիտա) վախ կը պատճառէ Ամերիկայի, որ մանրէաբանական պատերազմի մը մղձաւանջը կ'ապրի: Հաւանական կը նկատուի որ Պէն Լատէն քիմիական զէնքեր ունենայ: Ամերիկացիներուն համար, մտահոգիչը այն է որ վարակուած երկու պարագաներն ալ յայտնաբերուած են նոյն վայրը աշխատող անձերու մօտ, ինչ որ դիպուած չի կրնար ըլլալ: Հիւանդութիւնը, որ կը սկսի շնչարգելութեամբ մահացու է 90%, եթէ ժամ առաջ չխնամուի:

***

Վիլէօրպան կայացած հրապարակային ժողովի մը ընթացքին, Ներքին Նախկին նախարար՝ Ժ. Փ. Շվէնըման Ուսամա Պէն Լատէնը բաղդատած է Ժան - Կի Թալամոնիի (Կորսիքայի ազգայնականներու պարագլուխը) հետ: Ան ըսած է. - «Կը խօսիմ Պէն Լատէնի մասին, բայց, կրնայի խօսիլ նաեւ Ժան - Կի Թալամոնիի մասին, նոյնիսկ եթէ նոյն մակարդակի վրայ չէ»: Թալամոնի կը խորհի դատի դիմել:

***

Մեծն - Բրիտանիա յօժարեցաւ Ֆրանսայի յանձնել Ռաշիտ Ռամտան, 32 տա-

(Շար.ը Դ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 9 / 10)

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀՐԱՒԷՐ

Ինչպէս որոշուած էր, Հոկտ. 10 - 19 Հայաստանի մէջ անկախութեան առաջին մարդահամարը տեղի կ'ունենայ. այդ առընչութեամբ վարչապետ Ա. Մարգարեան դիմած է ժողովուրդին որ գործօն մասնակցութիւն բերէ: Մարդահամարը ըլլալով բնակչութեան թիւին եւ տեղաբաշխումին մասին հիմնական աղբիւր, կարեւոր դեր կ'ունենայ երկրին ընկերային ապահովութեան, առողջապահական, կրթական եւ աշխատատեղիներու ծրագիրներուն բարելաւման մէջ:

***

ԷԼԻՆԱ ԴԱՆԻԷԼԵԱՆ ԱՐԱԳ ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵԱՆ

Ճատրակի Եւրոպայի միջազգային վարպետ Էլինա Դանիէլեան Մինսկի արագ ճատրակի Եւրոպայի առաջնորդութեան մասնակից եօթը երկիրներու 56 խաղացողներուն միջեւ ախոյեան հանդիսացած է: Հանդիպումները տեղի ունեցած են 11 շրջանով. ամէն մէկ հանդիպում տեւած է 30 վայրկեան: Է. Դանիէլեան 6-րդ շրջանին առաջին տեղը գրաւած է ու այդ դիրքը պահած մինչեւ վերջ: 11 կարելի կէտերէն ան շահած է 9 կէտ, կէս կէտ ետին ձգելով ռուս Ալեքսանտրա Կոստենեուկը: Գ. տեղը գրաւած է 7,5 կէտով Լիթուանացի Վիկտորիա Չմելիտէն:

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՏԵՍՈՒՄԻ ՓՈՐՁԵՐՈՒՆ ԴԷՄ

Բ.

Ա. Լամասուրի տեղեկագրին առընչութեամբ ու նաեւ անկէ անկախ, Հայ Դատի յանձնախումբին մտահոգութեան պատճառ է Հայեւթուրք Հաշտութեան յանձնախումբը. իր կազմութեամբ եւ գործունէութեամբ: Հոկտեմբեր 5-ի մամուլի ասուլիսին արտայայտութիւն գտաւ այդ մտահոգութիւնը, յատկապէս այն պատճառով որ յիշեալ տեղեկագիրէն ցեղասպանութեան ճանաչումի կէտին շրջանցումը կը կապուէր ուղղակի ատոր:

Տեղեկագրին Թուրքիոյ արտաքին յարաբերութիւններուն գլխուն տակ, 24-րդ յօդուածով կ'ըսուի «Եւրոպայի Խորհրդարանը զօրակից է թուրք եւ հայ նախկին դիւանագէտներու եւ ակադեմականներու խումբի մը քաղաքացիական նախաձեռնութեան որուն նպատակն է անցեալին հասարակաց արժեւորում մը. խորհրդարանը կը մաղթէ որ այդ նախաձեռնութիւնը նպաստէ երկու համայնքներու միջեւ յարաբերութիւններու բնականոնացումի մը»: Զարմանալի ոչինչ կայ իրականութեան մէջ հոս, քանի որ մէջբերումը գործնականացումն է այդ յանձնախումբին Թուրք անդամներէն նախկին դեսպան Էօ. Սանպէրքի ամենայն անկեղծութեամբ բացայայտօրէն ըսածին թէ իրենց նախաձեռնութեան, միակ նպատակն է արգելք ըլլալ ցեղասպանութեան ճանաչումի հոլովոյթին. յատկապէս ԱՄՆ-ու եւ եւրոպական ատեաններու մէջ: Աւելի յստակ ապացոյցի պէտք կա՞յ տեսնելու համար թէ ինչո՛ւ կազմուեցաւ այդ յանձնախումբը որ առաջին յաջողութիւններն ալ կ'արձանագրէ արդէն, չորս Հայերու ալ դժուար բացատրելի մասնակցութեամբ:

Ինչպէս կ'ըսէր նոյն ասուլիսին, Հայ Դատի յանձնախումբին Եւրոպայի նախագահուհին Հ. Զօրայեան, այդ կազմութիւնը առաջին պահուն անմիջական առընչութեան զգացում չարթնցուց Եւրոպայի հայութեան մօտ: Բայց, այսօր, այլեւս անշրջանցելի տուեալ է անոր ջանքը՝ ցեղասպանութիւնը քաղաքական համածիրէն հանելու եւ անցեալի, պատմութեան վերաբերող խնդիրի մը բնոյթով ներկայացնելու:

Երբ առաջին օրէն իսկ բաւական յստակութեամբ յայտնի կը թուէր թէ քաղաքական հաշիւներով, ճապկումներով պատրաստուած բաւական լեղի ապուր մըն էր այդ յանձնախումբով հայութեան հրամցուածը, հետաքրքրութիւնները կ'ուզէին յատկապէս երկու հարցումի պատասխան ունենալ. առաջինը չորս հայ անդամի մասնակցութեան մասին էր, երկրորդը՝ նիւթականին: Այդ տասը հոգին ամէն անգամուն Ժընեւ, Պոլիս, Նիւ Եորք ո՞ր պիւտճէով 2 - 3, կամ աւելի օրերու կայքեր կ'ունենային, հանդիպումի, քննարկումի, տեսակցութեան արդարացումներով:

Հայ Դատի յանձնախումբին Հոկտեմբեր 5-ի ասուլիսին մամուլին համար պատրաստուած թղթածրարին մէջ կար անգլերէն փաստաթուղթի մը պատճէնն ալ. ան ԱՄՆ Գոնկրէսին Արտաքին գործերու, պաշտպանութեան գրասենեակին մէկ յուշագիրն էր, նոյն Հաշտութեան յանձնախումբին եւ ԱՄՆ-ու դերին վերաբերեալ: Այս վերջին կէտին մասին փաստաթուղթը ի միջի այլոց, կ'ըսէ. «ԱՄՆ Արտաքին գործոց նախարարութիւնը հայթայթած է յանձնախումբին գործունէութեան նիւթականը, ինչպէս՝ այլ քաղաքացիական նախաձեռնութիւններու, կամ անհատէ անհատ շփումներու պարագային: Տրամադրուած գումարները ունեցած են ամերիկեան համալսարանի մը տրուած յատկացումի ձեւը, որով այդ համալսարանը կը զօրակցի յանձնախումբին գործունէութեան»: Նշուած է յանձնախումբին համակարգուին անունն ալ. Տէյվիտ Ֆիլիփս որ առընչուած է Ամերիկեան Համալսարանին եւ Արտաքին յարաբերութիւններու խորհուրդին: Նոյն անձը գործօն դեր ունեցած է այլ մարզերու հակամարտութիւններու կարգաւորումին մէջ եւ դասախօս է Վիեննայի Դիւանագիտական ակադեմիային, ուր հայեւթուրք յանձնախումբին նախապատրաստական հանդիպումները տեղի ունեցած են: Ան ըսած է թէ հակառակ ցեղասպանութեան մասին հայ եւ թուրք անդամներուն յստակ անհամաձայնութեան, ան յաճախ խօսակցութեան նիւթ կ'ըլլայ: Ըսած է նաեւ թէ հաշտութեան այդ յանձնախումբը «ճշմարտութեան եւ հաշտութեան» իսկական կազմաւորում չէ: Այդ մասին երկու կողմն ալ չի փափաքիր վէճի մէջ մտնել, սխալելու վախով: Յետագային, եթէ խօսակցութիւնները շարունակելու տրամադրութիւն գտնուի, ծրագիրը աւելի կ'ընդլայնուի:

ԱՄՆ-ու Գոնկրէսին յիշեալ փաստաթուղթը բաւական բան կը բացատրէ նախաձեռնութեան կազմութեան, անոր պիւտճէին ու այլ բաներու մասին: Կը մնայ այլ տուեալ մը ունենալ, բացատրութիւն գտնելու համար հարցումին ալ թէ չորս հայ անդամներու մասնակցութեան մղիչ ուժը ի՛նչ եղած է իսկապէս: Տրուած դեր մը ստանձնելու հնազանդութի՞ւնը, թէ մեկնակէտէն իսկ անկարելի առաքելութիւն մը փորձելու միամիտ արկածախնդրութիւնը: Կամ, արդեօ՞ք համալսարանական դիմակով ներկայացած ԱՄՆ-ու «զօրակցութեան» մէջ պէտք չէ փնտռել այդ պատասխանը:

Ինչ որ ալ ըլլայ պարագան, այլեւս ամենայն յստակութեամբ յայտնի է մէկ բան. ամէնէն լաւատես մօտեցումով իսկ կարելի չէ անտեսել իրականութիւնը թէ Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբը շատ կասկածելի «յաջողութիւններ»էն առաջ, արդէն սկսած է վնասել մեր դատին: Նորագոյն ապացոյցը Եւրոպայի Խորհրդարանին 2001-ի տեղեկագիրն է, ցեղասպանութեան Թուրքիոյ կողմէ ճանաչումի պարտաւորութիւնը կամացուկ մը մէկդի դնելու ճապկումով:

Հարկ կա՞յ նոր փաստերու ալ սպասելու, կարելի ամէն տեղ հասցնելու համար հայկական հակազդեցութիւնը թէ մեր մեծամասնութիւնը չի բաժներ թրքական դգալով ամերիկեան այդ ապուրը ճաշակելու չորս Հայերու ախորժակը:

Ա. ԹՈԹՈՑԵԱՆ

ԽՕՍՔԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՃՈՒԱՐԱԾՆԵՐԸ

«Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆԸ...»

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

(Գ. եւ վերջին մաս)

ՊԱՅՔԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԷՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Սովետական լեզուն սկսել է ձեւաւորուել դեռեւս անցեալ՝ 20-րդ դարի երեսնական թուականներից, որպէս խոշոր սուտը իբրեւ ճշմարտութիւն ներկայացնելու անզուգական միջոց: Եւ 37-ի խոշոր աճարեկչութիւնն էլ յաջողութեամբ իրականացուեց, քանի որ ճշմարտութիւն ու կեղծիքը փոխել էին իրենց իմաստային նշանակութիւնները: Կեղծիքը մատուցւում եւ հարկադրանքով մարսւում էր որպէս ճշմարտութիւն, իսկ ճշմարիտը տեսնելը, առաւել եւս ճշմարիտի մասին խօսելը քրէականօրէն համարւում էր յերիւրանք:

Պետական խոշոր աճարեկչութեամբ աւարտուեց հին մարդկանց գլխապարտութեան լայնածաւալ գործը: Ժողովուրդը կորցրեց հոգեւորական ամբողջ դասը, կորցրեց մտաւոր մշակոյթի գործիչներին, կորցրեց գիտնականներին, ուսուցիչներին, ճարտարագէտներին, որոնց ընդունուած էր անուանել «հնի մնացուկներ»: Իսկ բոլոր նրանք, ովքեր ողջ մընացին եւ վերադարձան ԳՈՒԼԱԳից, արդէն կոտրուած մարդիկ էին, որոնք լուռ ու մունջ եւ սովետական լեզուն մասամբ իւրացրած՝ շարունակեցին իրենց գրականութիւնը, իրենց գիտութիւնը եւ իրենց կեանքը նոր մարդկանց հակահասարակութեան մէջ:

Բայց վերադարձածները իրենց մէջ դեռեւս կրում էին պատմական յիշողութիւնը:

Եւ պատմական յիշողութիւնը կրող այդ սերունդի ներկայութեան էլ սկսուեց համատարած գրոհը մայրենի լեզուի դէմ:

Իբրեւ թէ յանուն «պետական լեզուի», հայերէնի մէջ հետեւողականօրէն սկսեցին ոչնչացնել արմատները: Գրական առաջին լեզուն, որ արհամարհանքով «մեռած» էին համարում, դարձաւ «տերմինաբանական» մարզանքների խաղադաշտ:

Զհրապարակուող շրջաբերականներով, որոնց կիրառողները հրատարակչութիւնների եւ թերթերի համեստ սրբագրիչներն էին, «ուղղւում» էին կեանքից յետ մնացած գրողների շարադրանքները:

Պարտադրւում էր բայց եւ այնպէսը գրել միացուած՝ բայցեւայնպէս, ընդ որում եւ–ն էլ յայտնի սղագրով: Այնպէս որ, արդէն դարավերջի գրաճանաչ երիտասարդութիւնը այլեւս որեւէ արմատական կապ չի տեսնում բայց-ի ու բայցեւայնպէս-ի միջեւ: Ցամենայն բառը սովետական լեզուի գրելաձեւով արդէն ունէր համենայն տեսքը: Այնուհանդերձ, սովետական եզրաբանները, ապաւինելով Ի. Ստալինի «դարակազմիկի» հիմունքներին, պետական որոշում ընդունեցին «յամենայն դէպս» բառակապակցութիւնը գրել որպէս մէկ բառ՝ համենայնդէպս, որ վերջնականապէս կորցրեց իր մասամբ արդէն փրթած կապը արմատական հայերէնի հետ:

Այս օրինակները կարելի է շարունակել, բայց տեղն ու ժամանակն է ափսոս: Ափսոս են մեր նեարդերը՝ նորէն ու նորէն վերապրելու համար մշակութային ցեղասպանութեան տեսանելի ոճիրները:

Գոյութիւն ունեն նաեւ անտեսանելիները: Եւ նորէն խնայելով թէ՛ ժամանակ, թէ՛ տեղ ու նեարդներ, բաւարարուեմ հետեւեալ օրինակներով: Յատկապէս վերջին երկու - երեք տարիներին, երբ կուսակցական անպատկանութեամբ հպարտացող նախագահը կարողացաւ գրպանի մէջ առնել բոլոր պատկան կուսակցականներին, շրջանառութեան մէջ դրուեց միասնական–ութիւն մոգական բառը: Եւ երբ 1999-ի Սեպտեմբերեան ցուցքի շըրջանակի մէջ, Սփիւռքի ներկայացուցիչների այն առաջարկութեանը, թէ հայերէնը պէտք է վերականգնի իր ուղղագրութիւնը: Հայաստանեան ներկայացուցիչները ընդառաջ եկան միասնական ուղղագրութեան առաջարկով: Այս միասնականը, խոստովանենք, ոմանք շատ հաւանեցին: Ցիրաւի, ի՞նչ վատ բան կայ ուղղագրութեան միասնականութեան մէջ: Բայց պէտք է ժամանակ անցնէր, ազգային եւ սովետական ուղղագրութեան պաշտպանները պէտք է սկսէին խսկական մի սուսերամարտ, որպէսզի աստիճանաբար պարզուէր, որ միասնական ասելով սովետականները հասկանում են. «Անվերապահօրէն անցէք սովետականին, եւ կ՛ունենանք միասնական ուղղագրութիւն, հակառակ դէպքում, յիշէք, որ դուք պետութիւն չունէք եւ առանց մեզ՝ դատապարտուած էք»:

Մէկ մոգական բառը պետականութիւն բառն է, որ գործածւում է Հային լացացնելու, զսպելու, վախեցնելու համար:

Ցայտարարւում է. «Պետականութիւն ենք կառուցում» եւ այս կարգախօսը որպէս սպառնալիք է հնչում բոլոր նրանց հասցէին, ովքեր կասկածում են կա՛մ «պետականութեան», կա՛մ ընդհանրապէս որեւէ բան «կառուցելու» վրայ: Կարգախօսը զսպելու աղերս ունի բոլոր նրանց, ովքեր կարող են ընդվզել կա՛մ «կառուցելու» կերպի եւ կա՛մ ընդհանրապէս «պետականութիւն» յորջորջուող այդ որեւէ բանի դէմ: Կարգախօսը կարողանում է լացացնել յուզաթաթաւ հայրենասէրներին, ովքեր շարունակում են ապրել տեսլային Հայաստանով եւ այնպէս էլ չուզեցին որպէս իրականութիւն տեսնել դժոխքի պարունակները, որոնցով անցաւ Հայաստան երկրի բեկորը Ռուսների կոմունիստական տիրապետութեան տակ եւ մինչեւ այսօր էլ դուրս չի եկել յետկոմունիստական պարունակից:

Ուրեմն, ի՞նչ է նշանակում պետականութիւն, եւս առաւել պետականութիւն կառուցել:

Հայերէնը ունի ժամանակին մերժուած տէրութիւն բառեզրը, որպէս «Թագաւորական հարստութիւն»: Դասակարգային պայքարի եւ ազգային յիշողութիւնները ջնջելու նպատակին ծառայող այս մերժումի հետեւանքը եղաւ այն, որ ռուսերէնից ընդօրինակուած «պետականութիւն»ը մտաւ շրջանառութեան մէջ: Հայի ականջը վարժուեց մի բառի եւ բառակապակցութեան, որն, ըստ էութեան ոչինչ է նշանակում: Ինչպէս սովետական բոլոր կարգախօսները: Յիշեցնեմ. «Հասնել եւ անցնել Ամերիկային», Կեցցե՛ն կթուորուհիները, որոնք տալիս են հինգ հազար լիթր կաթ», «Տնտեսութիւնը պէտք է լինի տնտեսվարական», «Ապրելը դարձել է աւելի լաւ, ապրելը դարձել է աւելի ուրախ» եւ այլն:

Եւ երբ ականջը վարժւում է, այլեւս գրեթէ անհնար է դառնում մարդուն գըլխի գցել, թէ, օրինակ, տէրութիւն ընդհանրապէս չեն կառուցում, տէրութիւն ստեղծում են: Հայը ոչ թէ իր պետականութիւնն է կորցրել, այլ տէրութիւնը: Հայի, մեղմ ասած՝ տարօրինակ բնոյթը ոչ թէ մի քանի դար շարունակ պետութիւն չունենալու հետեւանք է, այլ պայմանաւորուած է նրա քրիստոնէական արժանապատուութիւնը եւ ազատասիրութիւնը տժգունելու հանգամանքով: Եւ եթէ Հայը տէրութիւնն է կորցրել, ապա երբեւէ նորէն այն ունենալով՝ կառուցելու առիթը չունի: Քանի որ տէրութիւնը ինքնին կառոյց է: Եւ եթէ թարգմանենք «պետականութիւն ենք կառուցում» կարգախօսը, ապա բնականոն հայերէնով ասելու ենք՝ «տիրակալութիւն ենք կառուցում»: Հէնց այս կէտի վրայ էլ իմաստային մեր որոնումները աւարտում են՝ բացայայտելով Հայաստանի իշխանութիւնների իսկական նպատակը: Ստեղծել տիրակալութիւն եւ ոչ թէ տէրութիւն ունենալ: Բայց ժողովրդավարական կոչուող մի երկրի մէջ տիրակալութիւն ստեղծել, նշանակում է վերադառնալ ֆեոդալական, ասել կ՛ուզի՝ աւատատիրական հեռաւոր անցեալին, որպիսին ոչ մի կապ չունի ժամանակակից քաղաքակրթութեան հետ: Ի դէպ, դատելով հասարակական, տնտեսական եւ մշակութային այն յարաբերութիւններից, որպիսիք արդէն գոյութիւն ունեն Հայաստանի մէջ, կարող ենք հաստատել, թէ ֆեոդալական պետականութիւն կառուցելու գործը յաջողութեամբ աւարտուել է:

Այնպէս որ, պետականութիւն եզրի նշանակութիւնը ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի «Հայերէն բացատրական բառարանով» մէկ անգամ եւս ստուգելուց յետոյ կարող ենք սրբագրել նաեւ քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն յորջորջումը, որ «համաժողովրդական տօնակատարութիւն» նախապատրաստելու տարիներին այնպէս լուաց Հայի ուղեղը, որ հիմա նրա մտքովն իսկ չի անցնում, թէ քրիստոնէութիւնը ժամանակակից տիրակալի սեփականութիւնը չէ, այլ ազգային կրօն: Առաւել եւս, եթէ դարձեալ թարգմանութիւն կատարենք սովետերէնից՝ քրիստոնէութիւնը եղել եւ մնում է տէրունական կրօն, այսինքն մի կրօն, որ ոչ միայն ազգի, այլեւ նրա տէրութեան կրօնն է: Հետեւաբար, թէ ազգը եւ թէ նրա տէրութիւնը քրիստոնէական են եւ այս ներդաշնակութեան մէջ է երեւալու Հայի ազգային ապագան:

Ոչ թէ կրօնը պետականացնելու մէջ:

Ինչպէս պետականացուել են ամենայն՝ մարդու կեանքից մինչեւ ազգային լեզուն, ազգային յիշողութիւնից մինչեւ ժողովրդի պատմութիւնը, հողից ու ջրից մինչեւ քրիստոնէական հաւատը որպէս էութիւն:

Էութիւն, որ փորձում են պարփակել «կառոյցի» որմնաշարուածքի մէջ:

«Շինարարները» միանգամայն իրաւացի են գոնէ այս խնդրի մէջ: Օտարների նախագծած «կառոյցը» կանգուն պահելու համար միակ եւ արդիւնաւէտ միջոցը Ազգային էութիւնը որմնաշարի մէջ թաղելն է:

Այլ կերպ ասած՝ ազգայինն ու ոգեղինութիւնը ի սպառ ոչնչացնելը: Գործողութիւն, որ համապատասխան բառեզր ունի՝ Ցեղասպանութիւն:

***

ՅԱՆՑԱԿԱԶՄ ԿԱՄ «ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ»

«Հայաստան առանց Հայերի» ռուսական կարգախօսը ունեցել է իր ողբերգական հետեւանքները, որոնց մասին վկայում է «Ռուսսկոյէ սլովօ» («Ռուսական խօսք») թերթի թղթակից Սերգէյ Գորոդեցկին, որ 1916 թուականին խմբագրատան յանձնարարութեամբ մեկնեց Վան:

«Հայաստանի պատմութեան մէջ պահեր են եղել, երբ նրա ազգաբնակչութիւնը արտաքսուել է երկրից, որպէսզի իրար դէմ պատերազմող հարեւանները մարտադաշտ ունենան: Ռուսական ցարականութիւնը հռչակեց այս իրողութիւնը արդարացնող «Հայաստան առանց Հայերի» լկտի կարգախօսը: Եւ յաճախ է Հայաստանը եղել առանց Հայերի, եւ Հայերը՝ առանց Հայաստանի», – գրել է Ս. Գորոդեցկին (Հայաստանի եւ հայ կուլտուրայի մասին, Երեւան 1980):

Ռուսական զինուած ուժերի երկրորդ նահանջից առաջ նա յայտնել է իր հաստատ համոզումը, թէ «Ես հաւատում եմ, որ Վանը կը վերածնուի իր բոլոր արհեստներով ու արուեստներով: Ժողովուրդները բնութեան պէս կենսունակ են... Աչքովս եմ տեսել, թէ ինչպիսի յուզումով էին գործիքներին մօտենում ջուլհակները, որոնք պատերազմի պատճառով կտրուել էին իրենց գործից եւ հիմա կարօտով դառնում էին իրենց դազգահներին: Ու տեսել եմ, թէ ինչպէս Վանի աւերակների մէջ ընտանիք կազմուեց: Նոյնիսկ ներկայ եղայ հարսանիքին... Երջանիկ փեսան մեզ դիմաւորեց մոմը ձեռքին... Սենեակին մէջ ընդամէնը մի քանի աթոռ եւ սեղան կար: Բայց որքան ուրախութիւն եւ կենսական ուժ կար հարսենական խնջոյքի մէջ... Վան վերադարձած փախստականներ էին նրանք...» Իսկ ռուսական բանակի դաւադիր նահանջից յետոյ՝ կարդում ենք. «Փախստականները հասել էին մեզ եւ հիմա խումբ – խումբ, դանդաղ ելնում էինք լեռը: Այս օրերին, պատերազմի բովի մէջ սիրտս արդէն քարացել էր, այնուհանդերձ, երբ տեսայ փախստականներին, չդիմացայ, եւ արտասուեցի: Եւ յանկարծ հասկացայ, թէ ինչ ասել է ժողովրդական աղէտ: Այդ պահից Հայաստանն ընդմիշտ դարձաւ հարազատ եւ իմ ծառայութիւնը դարձաւ նուիրաբերումն»:

Ռուս մտաւորականը այդ օրերին չէր կարող պատկերացնել, թէ որքան խոշոր չափերի է հասնում սեփական հողից արտաքսուող Հայերի զանգուածը: Առաւել եւս, նրա մտքի ծայրովն իսկ չէր անցնում, թէ ինքը ականատեսն է կանխամտածուած մի յանցագործութեան, որ իրականացւում էր Հայ – քրիստոնեայի նկատմամբ՝ «Հայաստան առանց Հայերի» ծրագիրը աւարտին հասցնելու նպատակով:

Այդ օրերին նրա մտքով նաեւ չէր կարող անցնել, որ ռուսական ցարականութիւնը խորտակած կոմունիստները ընդամէնը մէկ - երկու տարի անց շարունակելու են նոյն կարգախօսն իրականացնել ուղղափառ հաւատակից տէրութեան ոգորմածութեան ապաւինած Հայերին ապազգայնացնելով ու հաւատազրկելով: Միեւնոյն ժամանակ ձեռնարկուած էր պատմական յիշողութիւնը ջնջելու գործը, որպէսզի Հայը դառնայ սովետական նոր մարդ՝ հիմա արդէն նոր, սովետական լեզուով:

Եւ նոյնիսկ մեր օրերին կարօտի «իր խղճերիան»:

Ընդ որում, ռուս – կոմունիստական ցեղասպանութեան զոհերը հարիւր հազարաւոր Հայերն են, որոնք ոչնչացուել ու արտաքսուել են ոչ թէ մի քանի, այլ եօթանասուն երկար ու ձիգ տարիների ընթացքին: Ցեղասպանութեան զոհն են ազգային մշակոյթն ու այն կրողները՝ Խորէն Ա. Մուրադբեկեան կաթողիկոսից մինչեւ Վահան Թոթովենց, Զապել Եսայեան, Ակսել Բակունց, Եղիշէ Չարենց: Եւ մեզ համար, այդ իրականութեան մէջ ծընուածներիս ու ապրողներիս համար Ալեքսանդր Եւրշենկոյի վկայութիւնը («Ցեղասպանութիւնը Խորհրդային Միութեան մէջ», Միւնիխ 1957) ոչ թէ բացայայտում է գաղտնիքը, այլ հաստատում է մի իրականութիւն, որպիսին գիտական հետազօտութեան է ենթարկել «Խորհրդային Միութեան ուսումնասիրութեան հիմնարկութիւն»ը:

Նոյն հեղինակի վկայութեամբ անցեալ 30–ական թուականներին տեղի է ունեցել լեզուասպանութիւն: Այսինքն՝ մի ոճրագործութիւն, որ մշակութային ցեղասպանութիւն որակաւորումն ունի: Մշակութային ցեղասպանութեան են ենթարկուել ոչ միայն Հայերը, այլեւ Ուկրանացիները, Բելառուսները, Մոլտաւները, Թաթարական ժողովուրդները... Բայց եթէ նրանցից ոմանք այս կամ այն չափով փորձում կամ արդէն կարողացել են վերադառնել իրենց ազգային լեզուի արմատները (ինչպէս, օրինակ, Ազերիները), ապա Հայը, եթէ պահանջատէր է Թուրքիայի նկատմամբ, չի էլ փորձում գոնէ լիզելով՝ ապաքինել այն վէրքերը, որ կոմունիստների իրականացրած կրկնակի՝ կենսաբանական եւ մշակութային ցեղասպանութեան հետեւանք լինելով՝ արնածորում են մինչեւ այսօր:

Եթէ Հայաստանի օրուայ իշխանութիւնները չեն ունենայ մեր ազգային արժանապատուութիւնը ճանաչելու, մեր մշակութային եօթանասնամեայ ցեղասպանութեան դատը պաշտպանելու, մեր ազգային լեզուի ազատագրութիւնն ու նրա ճշմարիտ արժէքը վերականգնելու կարողութիւնը եւ, եթէ հարկ լինի ազգային ինքնութիւնը, մտածողութիւնն ու լեզուն ազատագրելու համար ընկել Միջազգային դատարանի դռները, ապա առաջին հայեացքից՝ երկարաշունչ, բայց իրականի մէջ ընդամէնը որպէս հակիրճ թեզեր ներկայացնող իմ այս խորհրդածութիւնները թող լինեն հաւաստումն այն իրողութեան, որ հայցուորը կարող է ունենալ փաստերի հարուստ թղթապանակ:

... Հայաստանը ի դէմս Վանի ու Արտամետի ճանաչած եւ հայ ժողովրդի նըկատմամբ հարազատութեան զգացումներով ռուս գրողը նաեւ նկատել է. «Երբեք չեն կործանւում այն ժողովուրդները, որոնք կարողանում են ծանր աղէտների ու ստորացումների պահերին պահպանել ազգային արժանապատուութիւնը»:

Փարիզ

CD reçus

BEST OF
MEGUERDITCH BOGHOSSIAN

avec le Chœur SIPAN-KOMITAS
Direction: GARBIS APRIKIAN

Paris 2001

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

Երեւի այսպիսին է դէպի անցեալ տանող ճանապարհը: Նախ մեքենան ընթանում է ասֆալտի վրայով, յետոյ ասֆալտն աւելի ու աւելի անորակ է դառնում եւ, ինչ-որ պահի, ընդհանրապէս անհետանում: Մեքենան թռչում է թըմբերի վրայով, իսկ ուղեւորները սեփական ոսկորներով են հաշւում այդ, այսպէս ասած, ճանապարհի իւրաքանչիւր մեթրը:

Իրականում դա Ախալքալաք տանող ճանապարհն է: Եւ կարեւոր չէ որ կողմից ես գնում. հարաւի՞ց՝ Երեւանից, թէ արեւելքից՝ Թիֆլիսից: Ճանապարհները միանման անորակ են: Եւ յայտնուելով Ախալքալաքում՝ յայտնւում ես անցեալում կամ այդպէս է թւում...

***

ԺԱՄԱՆԱԿԸ

«Փառք ԽՄԿԿ-ին» գրուած է Ախալքալաքի հարաւային մուտքին գտնուող հիւրանոցի վրայ: Հեռւում երեւում է եւս մի գունաթափուած կարգախօս՝ ինչ-որ ժամանակ գրուած սպիտակ ֆոնի վրայ, կարմիր տառերով. «Փառք խորհրդային ժողովրդին՝ կոմունիզմ կառուցողին»: Խորհրդային ժամանակների աչքառու քարոզը լրացնում է «Կեցցէ ԽՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամութիւնը» կարգախօսը:

Արդէն 10 տարի է, ինչ ԽՍՀՄ-ը գոյութիւն չունի, բայց Ջաւախքում թըւում է խորհրդային իշխանութիւն դեռեւս կայ: Խորհրդային Միութեան ոգին է տիրում նաեւ Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա) «Արշալոյս» թերթի խմբագրութիւնում: Այն գտնւում է շըրջանային վարչակազմի շէնքի մի խարխուլ սենեակում, որտեղ թագաւորում է փոշին: Սեղանների մօտ նստած են մի քանի ծերունիներ: Նրանք լրագրողներ են: Նրանցից մէկը՝ ճմրթուած ամառային գլխարկով եւ բաց գոյնի կոստիւմով, նաեւ գրող է: Նրանք ստեղծագործական միութիւնների անդամ են, շըրջանում յարգուած մարդիկ: «Մենք բոլորս փորձուած արհեստավարժներ ենք, – ասում է խմբագիր Մանուկ Կարախանեանը,– լրագրող ենք աշխատում 40-50-ական տարի»: Արհեստավարժները ամիսը մէկ անգամ լոյս են ընծայում 8 էջանոց (A4 ֆորմատի) թերթ: Մայիսեան համարի (որ ինձ նուիրեցին խմբագրութիւնում) ամենաթարմ նորութիւնները վերաբերում էին 1945 թուականին: Մնացած յօդուածները տեղեկացնում էին 1918 եւ 451 թուականների իրադարձութիւնների մասին: Թերթի այդ համարը կարծես թէ գոյութիւն ունի ժամանակից դուրս. այն լիովին կարող էր հրապարակուած լինել հայրենական պատերազմի յաղթանակի տարում կամ երբ մահացաւ Ստալինը, կամ երբ Գորբաչովը իշխանութեան եկաւ... Գաւառային լրագրողները սովորել են գրաքննութիւնը եւ չեն կարողանում ու ազատ գրել: Տեղական իշխանութիւնները չեն էլ խրախուսում ինքնուրոյն լրագրողներին: Ախալքալաքում իշխանութեան մի քանի ներկայացուցիչներ ասացին, որ նամակ են պատրաստում Հայաստանի նախագահին, որ վերջինս արգելի հայկական մամուլում Ջաւախքի մասին բոլոր այն հրապարակումները, որոնք նախօրօք չեն համաձայնեցուած տեղական իշխանութիւնների հետ, այսինքն՝ գրաքննութիւն մտցուի Ջաւախքի մասին հրապարակումների նկատմամբ: Այն, որ Հայաստանի նախագահը իշխանութիւն չունի մամուլի նկատմամբ, եւ այն, որ Ջաւախքը գտնւում է այլ երկրում՝ Վըրաստանում, նրանց չի անհանգստացրել: Չէ՞ որ մինչեւ վերջերս բոլորս մի երկրում էինք՝ ԽՍՀՄ-ում, եւ ցանկացած հրապարակում կարելի էր արգելել:

Շատ բան է յիշեցնում ԽՍՀՄ-ը: Օրինակ, Երկրագիտական թանգարանն իր ցուցանմոյշներով, որոնք տեղեկացնում են ժողովուրդների բարեկամութեան, աշխատանքի հերոսների, յեղափոխականների եւ պատերազմի մասնակիցների մասին: Ի հարկէ, այստեղ նաեւ մի փոքր ցուցատախտակ կայ՝ զոհուած ազատամարտիկներին նուիրուած, բայց դա ընդհանուր տպաւորութիւնը չի փոխում. գաղափարական ուղղուածութիւնը պահպանուած է խորհրդային ժամանակների լաւագոյն աւանդոյթներին համապատասխան: Բայց եւ այնպէս համարել, թէ ջաւախքեցիներն ապրում են Խորհրդային Միութեան ժամանակներում, ճիշդ չի լինի: Աւելի շուտ նրանք ապրում են ժամանակից դուրս: Աւելի ճիշդ կը լինի ասել՝ բոլոր ժամանակներում միանգամից: Փորձենք, բացատրել, թէ ինչ նըկատի ունենք:

Բացատրութիւններն սկսենք ամբողջովին յետխորհրդային ռուսական ռազմակայանից, որը գտնւում է Ախալքալաքում: Վրացական իշխանութիւնները պահանջում են այն շուտափոյթ դուրս բերել երկրից: Բայց Ջաւախքի բնակչութիւնը դէմ է: Ռուսների ռազմական ներկայութիւնը իւրօրինակ երաշխիք է, որը պահպանում է Ջաւախքի հայ բնակչութեանը Թուրքերից: «Եթէ, սակայն, զօրակայանը սկսեն դուրս բերել, ամբողջ Ջաւախքը դէմ կը լինի, – ասում է երեւանեան "Գրական Թերթ"ի խմբագիր Կարինէ Խոդիկեանը: – Մարդիկ վախենում են, որ տարածաշրջանից ռուս զինուորականների դուրս գալու հետ իրենք Թուրքերի դէմ անպաշտպան կը մնան»:

«Մենք զէնք չունենք, – ասում է Ախալքալաքի երկրագիտական թանգարանի մօտ ընկերների հետ զրուցող սպիտակահեր տղամարդը, – զօրակայանը դուրս բերելուց յետոյ Թուրքը կարող է մի աւտոմատով քաղաքի կէսին գնդակահարել»:

Թուրքական վտանգի հանդէպ երկիւղն այստեղ մեծ է: Դեռեւս կենդանի են մարդիկ, ովքեր յիշում են 1918 թուականի ջարդերը, երբ, ինչպէս պնդում են տեղի բնակիչները, Վրաստանը բացեց Թուրքիայի հետ սահմանը, ինչի արդիւնքում Հայերի զանգուածային ջարդեր տեղի ունեցան: Ախալքալաքը դատարկուեց, մարդիկ փախան Վրաստանի ներքին շըրջանները: Այդ պատճառով էլ ռուսական զօրակայանը ընկալւում է որպէս Թուրքերի մուտքից պաշտպանուելու վահան: Այսպիսով, տեղական բնակիչների համար 1918 թուականի սպառնալիքները գոյութիւն ունեն նաեւ այսօր: Նրանց համար Թուրքերը նոյնպիսին են, ինչպիսին գրեթէ մէկ դար առաջ էին, իսկ Ախալքալաքի Հայերը նոյնքան անպաշտպան են ու թոյլ:

ՄԱՐԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ախալքալաք – Երեւան

(Մնացեալը յաջորդով)

«Հայաստանի Հանրապետութիւն»
Սեպտեմբեր 28

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

«ՕՐԻՈՐԴ ԲԵՐՈՅԵԱՆՑ»ին յուշածները

Հայ համայնքային կեանքին մէջ ուր հետեւողականութիւնը բաւական հազուադէպ երեւոյթ է, ուշագրաւ բացառութիւններէն դառնալ սկսած են Հայ Թատրոնի ընկերակցութեան նախաձեռնած Թատերական ընթերցումները: Թերեւս աւելորդ չէ նոր շրջանի մը սկիզբին կրկնել թէ այդ նախաձեռնութիւնը կը կայանայ նուազագոյն բեմայարդարումով եւ բեմադրութեամբ մը Հայ թատերական գրականութեան հարուստ, այլ յաճախ անգիտացուած գանձարանէն նմոյշներ լոյսին բերելու արարքին մէջ: Ինչպէս սահմանումէն յայտնի է, ներկայացումը կ'ըլլայ ընթերցումի ձեւով: Նուազագոյններու այս ընտրութիւնը պարտադրուած է յարմար սրահի, հարկաւոր անձնակազմի, ժամանակի, նիւթականի նման պայմաններու չգոյութենէն: Եւ նոյն ընտրութեան շնորհիւ է որ կարելի եղած է 1996 Ապրիլէն այսօր, աւելի քան չորս տասնեակ թատերգութիւն ներկայացնել, հոգ չէ թէ սահմանափակ թիւով հետեւողներու:

Այս ցանկին ամէնէն «տարեց»ներէն էր Օրիորդ Բերոյեանցը որ կը դառնար իր համոզումներուն, իտէալին անկեղծ հաւատարմութեամբ կապուած երիտասարդուհիի մը շուրջ: Հեղինակը Աղեքսանդր Քիշմիշեան թատերգութիւնը գրած է 1880-ին Թիֆլիս ուր ծնած է 1843-ին: Իւրաքանչիւր ընթերցումի ընկերացող տեղեկատու թերթիկը կ'ըսէ թէ աշակերտած է Մոսկուայի Լազարեան ճեմարանին, ապա վկայուած նոյն քաղաքին համալսարանէն, որպէս բնագէտ: Թիֆլիսի մէջ ունեցած գրական գործունէութենէն մնացած են «Մշակ»ի եւ «Մեղու Հայաստանի»ի մէջ հրատարակուած պատմըւածքները: Ունի ուրիշ թատերգութիւններ ալ որոնց առաջինը անհետ կորսուած է: Ան մահացած է 1914-ին Բաքու, թաղուած՝ Թիֆլիս:

Սեպտեմբեր 30-ին Հ. Բ. Ը. Մ.-ի Ա. Մանուկեան սրահին մէջ ներկայացուած Օրիորդ Բերոյեանցը 1878-ի ռուսեւթուրք պատերազմին վաղորդային համայնապատկերին մէջ զետեղուած խաղ է: Կը չափէ ազգասիրութիւն, նուիրում կոչուած զգացումներու իսկական խորքը, այդ անունով հրապարակ իջած տիպարներու մօտ: Գրուած թուականին համար «համարձակ» որակուած է, ատենին բուռն բանավէճի նիւթ եղած, վստահաբար այն պատճառով որ յիշեալ զգացումները գըտնուած են ամէնէն անսպասելի նկատուած տեղը՝ գիւղի վարժուհիի մը մօտ: Ու ատիկա, շրջանակի մը մէջ ուր այդ յատկանիշով ծանօթ մեծահարուստներ, զարգացած տիպարներ գրուած են միջոցը: Կացութիւն մը որ հետեւողականութեան այս անգամ անբաղձալի յատկանիշով կը ներկայանայ, աւելորդ անգամ մը եւս նըշելու համար թէ հայկական արեւուն տակ նոր, փոխուած բան չկայ...:

Զօրս արարնոց,՝ հեղինակին որակումով «քոմետիա» կոչուած գործը ունի գործող եօթը անձ. անոնք մարմնաւորուած էին Ալպէր Ասատրեանի, Աստղիկ Շինկիթեանի, Վահրամ Աժտէրեանի, Թորոս Գովթիկեանի, Ժիրայր Զոլաքեանի, Հելգա Գէորգեանի եւ Նոյեմի Իւսէֆիի կողմէ. բեմական գործողութիւններուն ընթերցումը կ'ընէր Նայիրի Յովսէփեան: Փորձերը վարած էր Հայ Թատրոնի ընկերակցութեան ղեկավար Արբի Յովհաննիսեան:

ԱՐՓԻ ԹՕԹՈՅԵԱՆ

ԹԻՒ 17 ԽԱՉԻԿԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

– Թերեւս սուլթանը Պոլսոյ կողմը պիտի անցնի, - կ'ըսէին ոմանք:

– Ինչո՞ւ համար, այսօր բնաւ տօն չի կայ, ասկէ զատ եթէ այդպիսի բան մը ըլլար՝ թերթերը կը գրէին:

– Արդեօք դուրսէն բարձրաստիճան հիւր մը եկած է եւ Բ. Դուռ պիտի այցելէ:

– Թերեւս նախարարական փոփոխութիւն մը կայ եւ նոր նախարարներու թափօրին կը սպասեն:

Վերջապէս ամէն մարդ ենթադրութիւններու մէջ մոլորած էր:

Իրիկուան դէմ իրողութիւնը լուսաբանուեցաւ:

– Նախարարներու դէմ մահափորձ մը պիտի կատարուի եղեր, եւ ասոր համար ոստիկանութիւնը զգուշական խիստ միջոցներ ձեռք առեր է:

– Ո՞վ են այդ մահափորձը պատրաստողները:

– Հայերը...

– Կամաց – կամաց խնդիրը աւելի որոշ կերպով երեւան ելաւ:

– Սապահկիւլի կողմէ սարքուած է եղեր այս մահափորձը, – կը փսփսային իրարու:

Եւ ահա չարաշուք լուր մը տարածուեցաւ ուշ ատեն:

Բոլոր ծանօթ հնչակեանները ձերբակալուած էին:

Ներսէս Զաքարեան, Սամուէլ Թումաճեան, Ստեփան Դանիէլեան, Մուրատ, տոքթոր Ճէլալ, Արծրունի, Վահան Զէյթունցեան, Սագօ, Լեւոն Պալասանեան, Ճանկիւլեան, տոքթոր Պէննէ, Փարամազ, Ռուբէն Կարապետեան եւ այլն, եւ այլն ձերբակալուած են:

Սահմանադրութեան հռչակումէն ի վեր առաջին անգամն էր, որ Պոլսոյ մէջ այսպէս Հայերու հաւաքական ձերբակալութիւն մը տեղի կ'ունենար:

Համիտական րէժիմն էր, որ կը վերակըսէր:

Հետեւեալ օրերուն մէջ ձերբակալութիւնները շարունակուեցան:

Ոստիկանութիւնը Փարամազի եւ Ռուբէն Կարապետեանի վրայ խուզարկելով ձեռք անցուցած էր տետրակներ, որոնց մէջ Պոլիս եւ գաւառները բնակող բազմաթիւ անձերու անուններն ու հասցէները կային:

Ոստիկանութիւնը նմանապէս ձեռք անցուցած էր բազմաթիւ շրջաբերականներ, նամակներ, Քօսթանցայի ժողովին որոշումները, ծրագիրներ, տետրակներ, պատկերներ:

Բնականաբար Արշաւիր մեծ բաժին մը ունէր այդ ձերբակալութիւններուն մէջ:

Դաւաճանը ո՛չ միայն անուններ կը հաղորդէր ոստիկանութեան, այլ նոյնիսկ յայտնութիւններ եւ զրպարտութիւններ կ'ընէր անոնց մասին:

Քանի մը օր ետքը, սակայն, ձերբակալուածներէն մաս մը, ինչպէս Մուրատ, տոքթոր Ճէլալ, Ճանկիւլեան, Թումաճեան եւ ուրիշներ, կ'արձակուէին:

Մնացածներն ալ փրկելու համար ազգային իշխանութիւնը բերանացի կամ թաքրիրով դիմումներ կը կատարէր Ներքին գործերու եւ Դատական նախարարութեան եւ Պոլսոյ կեդրոնի հրամանատարութեան:

Բայց այդ դիմումները կարող չեն ըլլար փրկել գլխաւոր ամբաստանեալները, որովհետեւ ծանր փաստեր կային անոնց դէմ:

Մանաւանդ Փարամազի կացութիւնը շատ ծանր էր:

Ինք կը նկատուէր դաւադրութեան բո՛ւն կազմակերպիչը, որ յատկապէս Փարիզէն ղրկուած էր Սապահկիւլեանի եւ Շէրիֆ փաշայի կողմէ իթթիհատական պետերուն դէմ մահափորձ կատարել տալու համար, ինչպէս կ'ամբաստանէր ապահովութեան պետ Պէտրի պէյ:

Այս վերջինը ինք անձամբ կը կատարէր ձերբակալութիւններու հարցաքննութիւնը, եւ իր գլխաւոր հարցումը, ամէնուն համար, գրեթէ միեւնոյնն էր. «Փարամազը կը ճանչնա՞ս, ի՞նչ յարաբերութիւն ունեցած ես հետը» եւ այլն:

Եթէ ձերբակալեալը յայտնէր, թէ ճանչցած էր Փարամազը ու որեւէ յարաբերութիւն ունեցած հետը՝ այլեւս օձիքը ազատելու յոյս չունէր:

Հարցաքննութիւնները նոր սկսած էին, երբ յանկարծ պայթեցաւ եւրոպական պատերազմը:

Դէպքերը գահավիժօրէն կ'ընթանային այլեւս:

Թուրքիա մէկ կողմէն չէզոքութիւն յայտարարելով հանդերձ միւս կողմէ կը պատրաստուէր պատերազմի տենդային հապճեպով մը:

Ու միեւնոյն ատեն Հայերուն բնաջընջումին դժոխային ծրագիրը կը մշակուէր:

Ընդհանուր պատերազմին առաջին արդիւնքը կ'ըլլար, մեզի համար, Հայկական բարենորոգումներու ջուրը իյնալը:

Հօֆ պէյ հազիւ Վան հասած՝ հրահանգ կը ստանար վերադառնալ իր տեղը իր պաշտօնակիցներուն հետ:

Վէսթէնէնկ պէյ, որ արդէն Պոլսէն չէր մեկնած, ճամբայ կ'ելլէր փոխանակ Հայաստան՝ իր երկիրը վերադառնալու համար:

Հայերը, սակայն, յուսահատ չէին:

«Այս ընդհանուր պատերազմէն ետքը մեր խնդիրն ալ պիտի կարգադրուի վերջնականապէս», – կը խորհէին:

Դեռ ո՛չ ոք մտքէն կ'անցընէր մութին մէջ պատրաստուած Մեծ Եղեռնը:

Հոկտեմբերի վերջերը Թուրքիոյ պաշտօնապէս մասնակցութիւնը պատերազմին ա՛լ աւելի ծանրակշիռ դարձուց կացութիւնը:

(Շար. 79)

(Շար. Ա. էջէն)

րեկան, որ 1995-ի Փարիզի ԺԻԱ-ի (Իսլամական զինեալ խումբ) ոճրափորձերուն (Սէն - Միշէլ, 8 մեռեալ) պատասխանատուն կը նկատուի նիւթական գետնի վրայ: 1995 Նոյեմբերէն ի վեր, Լոնտոնի հարաւը գտնուող բանտ մըն էր: Կրնայ, անշուշտ, անգլիական որոշումին դէմ վերաքննութիւն պահանջել եւ առնուազն ժամանակ շահիլ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ կարի նահանգին վրայ, Հոկտ. 9/10-ին տեղատարափ անձրեւները աւեր գործեցին, փողոցներուն եւ բնակարաններուն մէջ: Մէկ գիշերուան ընթացքին այնքան անձրեւ տեղացած է Մոնփըլիէի վրայ որքան կը տեղար երեք ամսուան մէջ: Ողողումները այն աստիճանի հասած էին որ 50 հազար հոգի պարտաւորուեցան հեռանալ իրենց բնակարաններէն: Մոնփըլիէի օդակայանը եւ A-9 կառուղին փակուեցան եւ դէպի Սպանիա երկաթուղային երթեւեկն ալ դադրեցաւ: Կացութիւնը սկսած էր բարելաւուիլ:

ԱԲԽԱԶԻՈՅ մէջ կացութիւնը կը բարդանայ եւ վերջին օրերու կռիւներէն 14 հոգի մեռած է: Բախումները տեղի կ'ունենան անջատողական Աբխազներու եւ վրացի ու չէչէն մարտիկներու միջեւ Գոդորի շրջանը, որ Աբխազիան կը բաժնէ Վրաստանի մնացեալ մասէն: Ըստ Սոխումիի աբխազ իշխանութիւններուն, վրացական երկու օդանաւեր ռմբակոծած են աբխազ գիւղեր: Աբխազիա տէ փաքթօ անկախութիւն հռչակած էր 1992-93-ին, կռիւներէ վերջ որոնց հետեւանքով 10 հազար հոգի մեռած էր: Վրաստան կը հերքէ որ ռմբակոծած ըլլայ աբխազ գիւղերը եւ կ'ամբաստանէ Ռուսերը, որոնք իրենց կարգին կ'ամբաստանեն Վրաստանը որ չէչէն կռուողներու զինուորական կայան կը ծառայէ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ Դուման (Երեսփոխանական ժողով) եւ ՕԹԱՆ-ի Խորհրդարանական ժողովը յետագայ համագործակցութեան համաձայնագիր մը ստորագրեցին Օթաուայի մէջ: Դուման ՕԹԱՆ-ի Խորհրդարանական ժողովին ընկերակից անդամ դարձած էր 1991ին, բայց քաշուած էր 1999 Մարտին, բողոքելով ՕԹԱՆ-ի միջամտութեան դէմ Եուկոսլաւիա:

ՅՈՐԴԱՆԱՆԻ Ապտալլահ Բ. Թագաւորը եւրոպական շրջապտոյտի մը ձեռնարկած է, որ սկսաւ Հոկտ. 9-ին Պէրլինով, ուրկէ պիտի անցնի Իտալիա եւ Թուրքիա:

ԱԼԺԵՐԻԱՅԻ (Ալժերիա) մէջ 10 հոգի սպաննուած է, որոնց ինը զինեալ իսլամապաշտներ, ապահովութեան ուժերուն կողմէ: Իսլամապաշտներն ալ մէկ պարմանուհի սպաննած են եւ ծանրօրէն վիրաւորած երիտասարդ մը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայ Աղքատախնամ Ընկերակցութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները Յունուարէն Յուլիս ամիսներուն. –

Ոմն, Տիկին Արաքսի Գույումճեան, Ոմն տասը հազարական Ֆր., Պր. Ժան Փելըթիէ 9996 Ֆր., Հրաչ Աւետիքեան 1400 Ֆր., Պր. Ժիրայր Աւետիքեան, Տէր եւ Տիկին Կարապետեան, Պր. Ֆիլիփ Շասանեռ, Տէր եւ Տիկին Ռոլան Մարկոսեան, Տիկին Նուարդ Պօյաճեան, Տէր եւ Տիկին Անտրէ Կօրոն հազարական ֆրանք:

(Շար.)

***

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը, շնորհակալութեամբ ստացած է Տիկին Գաթրին Ռեֆէ 500 Ֆր.:

***

Կապոյտ Խաչի Արնուվիլի Աստղիկ մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է 900 Ֆր. Տէր եւ Տիկին Թիրեաքեանէ, հաւաքուած հետեւեալ անձերէն. – Տէր եւ Տիկին Գ. Թիրեաքեան, Տէր եւ Տիկին Վ. Պէզէքեան, Տէր եւ Տիկին Մ. Աւագեան, Տիկին Սոնա Զորմխեան, Տիկին Սոնա Մեկրեպեան, Տիկին Լուիզ Փափազեան, Տիկին Սոնա Փանոսեան, Տիկին Սոլա, Տիկին Յասմիկ Զաւէն Գալուստեանի մահուան առթիւ: Նաեւ 1000 Ֆր. Տէր եւ Տիկին Ս. Եագըճեանէ, 300 Ֆր. Տէր եւ Տիկին Գալճեանէ, 400 Ֆր. Տէր եւ Տիկին Ժ. Էրքէլէ եւ 500 Ֆր. Տէր եւ Տիկին Ն. Կիւրճեանէ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Անիէռի Ակնունի մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը Երկուշաբթի, Հոկտեմբեր 15, ժամը 20.45-ին

Centre Administratif d'Asnières

INFORMATIONS LITTERAIRES

LE MERCREDI DU POETE au FRANCOIS COPPEE

1, bd du Montparnasse — M° Duroc de 15h **précises** à 18h Salle du 1er étage

- **Mercredi 24 octobre**

Invité **Rouben MELIK**, un tisserand en chanteur

Laurent Desvaux présente la poétique de l'auteur au fil de l'anthologie, **En pays partagé**, Le Temps des Cerises éditeur.

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ, Հոկտեմբեր 13

ՏՕՆ Է ՍՐԲՈՑ
ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ՝
ՄԵՍՐՈՊԱՅ, ԵՂԻՇԷԻ,
ՄՈՎՍԻՍԻ ՔԵՐԹՈՂԻՆ,
ԴԱՒԻԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ,
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ
եւ
ՆԵՐՍԻՍԻ ԿԼԱՅԵՑԻՈՅՆ

Տօն է ազգային եւ եկեղեցական՝ ի յիշատակ գիւտի Նշանագրացն Հայոց եւ Թարգմանութեան Սուրբ Գրոց:

Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 10-ին, պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ԹԱՇՃԵԱՆ

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուրբ Մեսրոպ Մշակութային Միութեան Սուրբ Խաչ շաբաթօրեայ վարժարանը կը վերաբանայ իր դռները Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 14-էն 17, Սուրբ Խաչ Եկեղեցւոյ կից սենեակներուն ու սրահին մէջ

13, rue du Perche, 75003 Paris

5-էն 12 տարեկան աշակերտներու համար:

Կը դասաւանդուին հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, հայկական երգեր ու պարեր:

Արձանագրուելու համար, հեռաձայնել՝ 01 - 44 - 59 - 23 - 50 թիւին:

CENTRE CULTUREL
SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN

Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

***

Rouben ELBAKIAN

Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91. 77. 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Exposition du 11 au 20 octobre
tous les jours
sauf le mardi et le dimanche

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

Centre Culturel
SAINT MESROB
A PARIS

Conférence - Débat

avec projection de diapositives
sur le thème :
AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par
JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle

et

VINCENT TARAKDJIAN
Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris Ve
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre · Cocktail —

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կիրակի, Հոկտեմբեր 14-ին Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ Մատաղօրհնութեան օրն է:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ
Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի

Յաւարտ պատարագի կը կատարուի ամատաղի օրհնութիւն եւ ապա հոգեհանգստեան պաշտօն՝ Եկեղեցւոյ վախճանեալ հոգեւոր հովիւներու, հիմնադիրներու, բարերարներու եւ հոգաբարձուներու հոգիներուն ի հանգիստ:

Սկիզբ ժամերգութեանց ժամը 9-ին:
Պատարագ ժամը 10.30-ին:

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՍԷՆ-ԺԵՐՈՄ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Սէն - Ժերոմի եւ Շրջակայից Սուրբ Սահակ - Մեսրոպ Եկեղեցւոյ Թաղական խորհուրդը պաշտօնապէս կը ծանուցանէ թէ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կը տօնախմբէ Եկեղեցւոյ շինութեան 71-րդ եւ անուանակոչութեան 68-րդ տարեդարձները

Հոկտեմբեր 14, Կիրակի օր

Այս առիթով կը կատարուի հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ հոգեներուն համար Եկեղեցւոյ գլխաւոր հիմնադիր եւ բարերար, երջանկայիշատակ՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿ. ՊԱԼԱՔԵԱՆԻ

հոգեւոր հովիւներուն – սարկաւագներուն – բարերարներուն – հիմնադիր եւ Շինութեան Յանձնախումբի Թաղական Խորհրդոյ անդամներուն – Օժանդակ Տիկնանց Միութեան անդամուհիներուն եւ բոլոր անոնց որոնք նիւթապէս, բարոյապէս եւ Փիզիքապէս սատարած են Եկեղեցւոյ շինութեան եւ որոնք այսօր առյաւէտ բաժնուած են մեզմէ:

Պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԸՐԷՃԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի

Քարոզի աւարտին օրհնութիւնը Մատաղի եւ ապա հոգեհանգիստ:

Արարողութեանց աւարտին եւ Մատաղի բաշխումէն վերջ տեղի կ'ունենայ «գինեձօն» Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Կը խնդրուի Թաղիս եւ Շրջակայքի հայութենէն որ խուռներամ ներկայութեամբ յարգէ նուիրական յիշատակը Թաղիս ննջեցեալներուն:

Մատաղի մասնակցութիւն փափաքողները կրնան դիմել Թաղականութեան:

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE

organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE

Vendredi 7 décembre

ARMENIAN JAZZ FESTIVAL

le Vendredi 19 et Samedi 20 octobre à 20 heures
le Dimanche 21 octobre à 16 heures

PARIS NEW MORNING
7-9, rue des Petites-Ecuries, 75010 PARIS

- **Vendredi 19**
Arto Tunçboyaciyan Trio **Alla Levonyan / Arthur Grigorian**

- **Samedi 20**
Sophia Domancich Trio avec Claude Tchamitchian et Simon Goubert
Armenian Navy Band

- **Dimanche 21**
Edmond Hosdikian / Gaguik Mouradian
Didier Malherbe Trio avec Patrick Meyer et Philippe Foch
invité Loy Ehrich

Réservations :
Fnac, Carrefour, France Billet
Tél.: 0 892 683 622 (2,21 FF/mn), 3615 Fnac (2,21 FF/mn), www.fnac.com
Virgin Megastore, Auchan, Galeries Lafayette, Cultura, BHV
Tél. : 0 825 346 346 (0,99 FF/mn), www.ticketnet.fr
Coopération-Arménie. Tél. : 01 42 36 06 79

Site Web : http://armenianjazzfestival.free.fr
Armenian Jazz Festival: 50, rue E. Marcel, 75002 Paris.
Organisé par l'association Coopération-Arménie au profit de ses actions.

ՈՒՐԲԱԹ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 12
VENDREDI
12 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60   FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամենօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 20.273   Fondateur SCHAVARCH MISSAKIAN   77e ANNEE — N° 20.273

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԱՍՏԿԱՑԱՆ

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՌՈՒՄԲԵՐ ԿԸ ԳՈՐԾԱԾՈՒԻՆ

Յարձակման 4-րդ օրը (Հոկտեմբեր 10) ամերիկեան ռմբակոծութիւնները սաստկացան [illegible]

[illegible] որոնք տեղի կ'ունենան գինեալ ընդդիմութեան եւ Թալիպաններու միջեւ, ընդդիմութիւնը յայտարարած է որ տէր դարձած է Ղոր գաւառին: Թալիպաններն ալ ճիհատի կոչ ըրած են Միացեալ Նահանգներ ապրող մահմետականներուն, որպէսզի «արտայայտեն իրենց ընդդիմութիւնը Ամերիկայի գործած վայրագութեան աֆղան ժողովուրդին դէմ»:

***

Դիւանագիտական գետնի վրայ, Քաթար դիմած է Իսլամական Համագումարի կազմակերպութեան (հաւաքուած Տոհա, Քաթար) որպէսզի հարկ եղած միջոցները ձեռք առնէ դադրեցնել տալու համար ամերիկեան յարձակումները: Կազմակերպութեան 57 երկիրներու Արտաքին նախարարները չեն դատապարտած այդ յարձակումները, բայց, արտայայտած են իրենց «մտահոգութիւնը անմեղ զոհերու» համար եւ եզրափակիչ զեկոյցին մէջ, ըսած են թէ «կը մերժեն որ իսլամական կամ արաբական որեւէ երկիր յարձակման ենթարկուի ահաբեկչութեան դէմ պայքարի պատրուակով»:

***

«Մաչ»ի թղթակիցը՝ Միշէլ Փէրար լըրտեսութեամբ ամբաստանուեցաւ եւ կըրնայ մահուան դատապարտուիլ: Իրեն հետ ձերբակալուած են իրեն ընկերացող փաքիստանցի 2 լրագրողներ: Թալիպաններու մօտ աֆղան գործակալութիւնը յայտաբարած է որ պէտք դատուին յատուկ Ատեանի մը կողմէ: Երեքն ալ ցուցադրուած են Հոկտ. 10-ին Ճալալապատի փողոցներուն մէջ, աֆղան կիներու աւանդական հագուստով (պիւրքա) եւ քարկոծուած են ժողովուրդին կողմէ: Մոլլա Մէր յայտարարած է գործակալութեան որ երեք լրագրողները լրտեսական կազմածներ կը կրէին: «Ուեւէ լրագրող, որ ապօրէնի կերպով Աֆղանիստան կը մտնէ ամերիկացի կինուորի մը պէս նկատի պիտի առնուի» աւելցուցած է: «Մաչ»ի երկու խմբագիրներ Փաքիստան մեկնած են բանակցելու եւ ձեռք ձգելու համար Մ. Փէրարի ազատ արձակումը:

***

Հակամերիկեան ցոյցերը կը շարունակուին հոս ու հոն: Ամէնէն բուռն ցոյցերը տեղի ունեցած են Ճաքարթա (Ինտոնէզիա մահմետական առաջին երկիրն է) եւ նախագահը փափուկ կացութեան մատնուած է: Ցուցարարները, որոնց մէջ բազմաթիւ կիներ, բացագանչած են. «Դժոխք գնա՛, Ամերիկա», « Ամերիկացիք եւ Հրեաները բուն ահաբեկիչներն են»:

***

Ածխախտը (անթրաքս) լուրջ մտահոգութեան պատճառ դարձած է Ամերիկա, ուր երրորդ անձ մը, 34 տարեկան կին մը հիւանդանոց փոխադրուած է: Այլեւս հաստատուած է որ ոճրային արարք մը կայ, երեք անձերն ալ նոյն վայրը կ'աշխատէին:

***

Որոշուած է չատ արձագանգ չտալ Պէն Լատէնի արձանագրած տեսերիզներուն, զորս Քաթարի ալ-Ճեզիրա հեռատեսիլը կը սփռէ, կասկած կայ որ գաղտնի հրահանգներ կը տրուին այդ միջոցաւ:

***

Թուրքիոյ Ազգային Ժողովը հրովարտակ մը քուէարկեց որով կ'արտօնէ արտասահման զօրք ղրկել:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՎՃՌԱԲԵԿ ԱՏԵԱՆԸ, Հոկտ. 10-ին, իր լիակատար նիստին ընթացքին, հաստատեց 2001 Յունիս 29-ի հարցաքննիչ Սենեակի վճիռը, ինչ կը վերաբերի ժաք Շիրաքի պարագային: Այլ խօսքով, վըճռեց որ Շիրաք պատժական հետապնդումի չի կրնար ենթարկուիլ նախագահական իր պաշտօնավարութեան տեւողութեան, այսինքն անձեռնմխելի է: Պաշտօնը կորսընցնելէն ետք, կրնայ դատուիլ: Իրաց այս կացութեան մէջ, Շիրաք «պարտաւոր է» յաղթել Մայիսին, եթէ չուզեր դատուիլ հասարակ մահկանացուի մը նման:

ՆԱԽԱԳԱՀ ՇԻՐԱՔ, երրորդ անգամ ըլլալով մերժեց ներում շնորհել Մորիս Փափոնի, որու փաստաբանները դիմած էին, հիմնուելով 92-ամեայ դատապարտեալին առողջական վիճակին վրայ: Փափոն, 1998-ին տասը տարուան բանտարկութեան դատապարտուած էր «մարդկութեան դէմ ոճիրի» ամբաստանութեամբ:

ՈՒԿՐԱՆԻՈՅ նախագահը՝ Լէոնիտ Կուչմա չուզեր որ սխալմամբ արձակուած հրթիռի մը զոհ գացած օդանաւին հարցը մեծ համեմատութիւններ առնէ: Կ'ըսէ. - «Այս խնդիրը ողբերգութեան պէտք չէ վերածել, աւելի մեծ սխալներ կը պատահին»: Օդանաւը Սեւ ծով ինկած էր իր 78 ճամբորդներով:

ՀԱԶԱՐԱՄԵԱՅ ՀԵՌԱՆԿԱՐ ԱԼ ՈՒՆԻՆՔ ՇՆՈՐՀԻՒ ՀԱՅԵՒԹՈՒՐՔ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ

Այլեւս ոչ ոք պիտի կարենայ ձեռքը խղճին դնելով ափսոսալ որ Հայերը չեն գիտեր, կամ չեն կրնար ազգային երկար ժամանակի հեռանկար մշակել: Այս թեւութիւնը սրբագրուած է, ըստ Հայաստանի Արտաքին գործերու նախկին նախարար, ՀՀՇ.-ի ներկայի նախագահ Ա. Արզումանեանի հաւաստումին: Ան որպէս «Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբ»ին չորս հայ անդամներէն մէկը, այդ արտայայտութիւնը ունեցած է Պոլսի հանդիպումէն վերադարձին իրեն ուղղըւած հարցումներու պատասխանելով:

Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրէս»ի Հոկտեմբեր 10.ի հաղորդաշարով տրուած լուրը, Ա. Արզումանեան յայտնապէս, անկախ՝ իրեն ուղղուած հարցումներէն ու անոնց պատասխաններէն, մամուլի ներկայացուցիչներուն հետ հանդիպումը աւիթ նկատած է, նախ հակազդելու բոլոր անոնց որոնք ո՛չ իր պատճառները, ո՛չ ալ համոզումը ունին դրական երեւոյթ նկատելու «հաշտութեան» այդ նախաձեռնութիւնը: Ան կ'ըսէ թէ այդ յանձնախումբին ստեղծումին առթիւ «հիստերիկ դըրսեւորումներ եղան, ինչը անհասկանալի է»: Ապա կը վերադառնայ այն տարբերակին որ ներգրաւուած մարդիկը «անհատական նախաձեռնութեամբ» հոն են եւ անոնցմէ ոչ ոք ամբողջ հայ ժողովուրդը ներկայացնելու յաւակնութիւն ունի:

Այս առաջին մատնանշումով, «հաշտութեան» հայկական քառեակին ու «հիստերիկ դրսեւորում» կոչուած ժխտական հակազդեցութիւններու տէրերուն միջեւ որպէս հասարակաց եզր կը յայտնուի «անհասկանալի»ն: Ճիշդ է որ երկու կողմին համար հակադիր իմաստով: Ա. Արզումանեան եւ իր խմբակիցները չեն հասկընար հակազդեցութիւններուն գոյութեան պատճառը. իսկ փրենց ի հարկին «անհատական» որակուած նախաձեռնութիւնն ալ անհասկնալի կը մնայ մեր բազմութիւններուն. յատկապէս երբ խաղավարները շատ լաւ գիտեն չորս հոգիին մասնակցութիւնը տարածել հայութեան ընդհանուրին:

Գրեթէ բարեսիրական, նուիրումի չեշտ մը կ'առնէ Ա. Արզումանեանի արտայայտութիւնը երբ «հարեւան պետութիւնները պէտք է համերաշխ ապրեն» պատգամով կը փորձէ սահմանել քննադատուած քայլը: Այդ շրջարկին մէջ ալ բնական է որ մերժումի, ժխտումի ամէն ձայն կամ խօսք, «հիստերիկ դրսեւորում» կը դառնայ: Մինչ ոչ մէկ բառ այն մասին թէ ինչո՞ւ այդ «համերաշխութիւնը» կը փնտռուի միայն Թուրքիոյ հետ յարաբերութեան մարզին մէջ, երբ Հայաստան Ազրբէջանի հետ ալ այդ որակի կապ չունի:

Արտաքին գործերու նախկին նախարարը Պոլսոյ հանդիպումին աւարտին հրապարակուած Յայտարարութեան մէջ տեղ գտած ճապկումին օրինակով կ'անցնի Թուրք անդամներէն խօ. Սանպէրքի այն արտայայտութեան վրայէն ալ թէ նման բանի նախաձեռնուած է ցեղասպանութեան ճանաչումը խոչընդոտելու նպատակով. ըսուածը այն է որ «ճննարկուեցին մի քանի անդամների յայտարարութիւններ որոնք կարող են խոչընդոտել աշխատանքային յետագայ գործընթացը: Որոշուեց աւելի զգոյշ լինել արտայայտութիւնների մէջ» եւ այլն: Այլ խօսքով՝ հայ եւ թուրք անդամներու միջեւ ցեղասպանութեան մասին բարեմտօրէն ենթադրուած կեցուածքի հակադրութիւնը հարթելու հարց չկայ. Թուրքերուն համար նախաձեռնութիւնը պիտի պահէ ճանաչումին խոչընդոտի բնոյթը, բայց արտայայտութիւնները աւելի «զգոյշ» պիտի ըլլան, հաւանօրէն չաւելցնելու համար «հիստերիկ դրսեւորում»ներու թիւը...

Նման պարագաներու մէջ ամէնէն տեղինն է հարցումը թէ յանձնախումբին մինչեւ այսօրուան գործունէութեան ընթացքին հայկական կողմին ի նպաստ ի՞նչ յաջողութիւն արձանագրուած է: Պատասխա՞նը. դիւանագիտական փորձառութեան նրբանկատ յիշեցում մը... «Հաշտեցումը միանուագ գործողութիւն չէ, դա գործընթաց է, որը կարող է տեւել ամիսներ, տարիներ կամ հազարամեակներ»: Իսկ ներկայի քննարկումներուն նիւթ հարցերուն մասին Ա. Արզումանեան չէ փափաքած մեկնաբանութիւն տալ:

Պէտք է ըսել որ ըսուածէն ետք հարկ ալ չի մնար մեկնաբանութեան: Բաւական յստակութեամբ յայտնի են կարեւորագոյն կէտերը. ԱՄՆ.ու այս նպատակին յատկացուցած պիւտճէն ամէն երեւակայութիւն գերազանցելու չափ լայն սահմաններ ունի, «հազարամեակներ» տոկալու չափ, երկրորդ՝ շնորհիւ այդ «նուէր»ին, վերջապէս ունեցած ենք հազարամեայ ազգային հեռանկար:

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ԱԲԽԱԶԻՈՅ ՄԷՋ ՏԱՍՆԵԱԿ ՄԸ ՀԱՅԵՐ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Աբխազիոյ կացութիւնը ծայր աստիճան կը մտահոգէ Հայաստանը, քանի որ Հոկտեմբեր 8-ին Գոտորի կիրճին մօտակայ գիւղերուն ռմբակոծումը պատճառ եղած է տասնեակ մը Հայերու մահուան: Նիւթը օրակարգի եկած է Ազգ. Ժողովի Հոկտ. 10-ի նիստին որուն ընթացքին Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեան պատասխանելով այս մասին հարցումի մը ըսած է թէ իշխանութիւնը լըրջօրէն մտահոգուած է եւ թէ Երեւան կապ կը պահէ կողմերուն հետ, փորձելու համար մեղմել պատահարներու հետեւանքները, յատկապէս հայ բնակչութեան համար: «Մենք պէտք է լինենք շատ շրջահայեաց եւ զգօն եւ որեւէ ձեւով չպէտք է թոյլ տանք այլ շահագրգիռ կողմերին սեպ խրել հայեւվրացական յարաբերութիւններում» աւելցուցած է ան:

Երեւանի «Հայկական Ժամանակ»ը նոյն լուրերուն առընչութեամբ գրած է թէ Հայերու սպանութիւնը հետեւանք եղած է ռուսական եւ չէչէնական ուժերու կողմէ կատարուած ռմբակոծումներու եւ թէ Մոսկուա նպատակը կը հետապնդէ վատթարացնելու հայեւվրացական յարաբերութիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԴՐԱՍԵՆԵԱԿԻ ԲԱՑՈՒՄ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Սեպտեմբերի կէսերէն ի վեր Պոլիս կը գտնուի Սեւ ծովեան տնտեսական գործակցութեան Հայաստանի ներկայացուցիչը Արսէն Աւագեան: Ան նախապէս

(Շար.ը Դ. էջ)

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ»

(ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ – ԱԶԳԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)

Հեղինակ՝ Արամ Սարգսեան
Երեւան – 1999

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

Մի՛շտ ալ հետաքրքրական եղած է լսել Հայրենիքին մեր մտաւորականներուն անունը՝ Հայ Եկեղեցին յուզող հարցերու մասին: Սփիւռքի մէջ, առհասարակ, տարածուած է այն համոզումը թէ արեւելահայ մեր հատուածին մէջ չկան եկեղեցական – կրօնագիտական հարցերու մասին հեղինակութիւններ, որոնք ըլլալով որ երկիրը եօթը տասնամեակներ շարունակ կը գտնուէր խորհրդային վարչակարգին տակ, ու մտաւորականութեան համար աւելի «ձեռնտու» էր պարապիլ, գործածել, ... մարքսիզմը վերլուծելով: Այս համոզումը լայն չափով իրականութեան պատշաճեցնել հանդերձ, պէտք է նկատել, սակայն թերեւս, թէ հակառակ աթէիզմին վարչակարգին մը բերած ճնշումներուն, բոլոր սերունդներուն, եկեղեցին եւ կրօնքը անմոռանալի մնացին – անշուշտ շարունակական են չէին Խորհրդային Հայաստանի մէջ, «ի տուէ եւ ի գիշերի»: Բաւարար է ակնարկ մը նետել Մայր Աթոռի պաշտօնաթերթ «Էջմիածին» ամսագրի հին հաւաքածոներուն վրայ, համոզուելու համար թէ 1960-ական թուականներէն սկսեալ (Վազգէն Ա. Հայրապետի օրով) մինչեւ երկրին անկախացումը որքա՛ն առատ եկեղեցագիտական կամ մերձ – կրօնական նիւթեր հրապարակուած են այնտեղ, եւ թէ որքա՛ն մեծ թիւով աշխարհական մտաւորականներ ալ իրենց ստորագրութիւնը դրած են անոնց տակ:

Բնական ու ակնկալելի էր անշուշտ, որ վերջին սա տասը տարիներուն կրօնական գրականութիւնը նոր զարթնում մը ապրէր Հայաստանի մէջ: Մէկ կողմէ Էջմիածնայ Մայր Աթոռին յառաջ տարած քարոզչական գործունէութիւնը (կրօնական մամուլ, պատկերասփիւռային հաղորդումներ եւ այլն), միւս կողմէ Երեւանի Պետական Համալսարանէն ներս հաստատուած Աստուածաբանութեան Ֆակուլտէն, այլ ազդակներու կողքին, գետին պատրաստեցին յառաջացնելու այդ վերթումը: Հիմա այլեւս, պէտք է սպասել այս բնագաւառին մէջ «խորասուզուած» նոր դէմքերու երեւումին, որոնք հետըզհետէ հրապարակ պիտի հանեն իրենց աշխատանքին պտուղները:

Վերջին քանի մը տարիներու հետաքրքրական հրատարակութիւններէն մին է ահաւասիկ Արամ Յ. Սարգսեանի «Ժամանակակից Հայ Եկեղեցին» (Երեւան, 1999, 140 էջ), որ «ժամանակակից կրօնագիտութեան տեսանկիւնից՝ վերլուծութիւնն է հայ եկեղեցու, նրա անցած ուղու, արդի վիճակի, ազգային – քաղաքական, մշակութային գործունէութեան»: Հեղինակին ինքնութիւնը ծանօթ չէ մեզի. թէեւ պէտք է ենթադրել որ նշանակալից վաստակ ունեցող բանասէր մըն է, «փիլիսոփայական գիտութիւններու տոքթոր, Երեւանի պետական ժողովրդական տնտեսութեան ինստիտուտի փիլիսոփայութեան ամբիոնի վարիչ», որուն «30 տարուայ գիտական պրպտումների ու բազմաթիւ աշխատութիւնների իւրօրինակ ամփոփումն է» այս գիրքը, ինչպէս կը հաստատուի հատորին յառաջաբանին մէջ:

Հեղինակը իր այս գրքին հրատարակութիւնը կ'առընչէ 1700-ամեակի նշումներուն: «Հայ ժողովուրդը պատրաստւում է նշելու Հայաստանում քրիստոնէութեան պաշտօնականացման 1700-ամեակը, կը գրէ ան: Յոբելեանական տրամադրութիւնները անաչառ ուսումնասիրութեան համար բնաւ նպաստաւոր չեն, բայց առիթ են եւս մէկ անգամ անդրադառնալու քրիստոնէութեան կատարած ներդրումին: Օգտուենք առիթից, բայց առաջնորդուենք ոչ թէ յոբելեանական տրամադրութեամբ, այլ գիտական կշռադատուածութեամբ» (էջ 6):

Հատորը, որ «բնականաբար» շարուած է սովետահայ ուղղագրութեամբ, բաժնըւած է չորս գլուխներու. – 1) – Քրիստոնէութեան պաշտօնականացումը եւ անցած ուղին, 2) – Հայ եկեղեցւոյ կազմակերպութիւնը, դաւանաբանութիւնը ու պաշտամունքը, 3) – Հայ եկեղեցին եւ արդիականութիւնը, 4) – Ազգային գոյութեան հիմնախնդիրները եւ Հայ եկեղեցին:

Ասոնք նիւթեր են, որոնց մասին բազմիցս խօսուած ու գրուած է անշուշտ, արեւմտահայ թէ արեւելահայ հեղինակաւոր գրիչներու կողմէ հաւասարապէս (Օրմանեան, Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան, Բիւզանդ Եղիայեան, Երուանդ Տէր – Մինասեան, Կարապետ Եպիսկոպոս Տէր – Մկրտիչեան եւ այլն): Նիւթը սպառած չէ սակայն, ու մի՛շտ ալ կարելի է այժմէականացնել զայն նոր օրերու հրամայականներուն լոյսին տակ: Արամ Յ. Սարգսեան ա՛յդ է որ փորձած է ընել:

Ի սկզբանէ քննական փորձաքարի զարնելով Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականօրէն պաշտօնականացման՝ երեւոյթը, հեղինակը կը յայտնէ որ ատիկա ուղղակի պէտք է առընչել «քաղաքական – գաղափարական գործօն»ի մը, որ էր՝ զօրացնել Սասանեան Պարսկաստանի դէմ Հայոց ռազմա – քաղաքական հակազդեցութիւնը: Այդ շրջանին, կ'ըսէ ան, մեր երկրին «անհրաժեշտ էր այնպիսի գաղափարախօսութիւն, որը հակադրուէր պարսկական մշակոյթին, աւանդոյթներին, մտածողութեանն ու աշխարհընկալմանը: Այդպիսին էր քրիստոնէութիւնը, որի պետականացումը Հայաստանում առաջին հերթին հակապարսկական ուղղուածութիւն ունէր» (էջ 11): Այնուհետեւ, Արամ Սարգսեան կը խօսի այն բացառիկ առանձնաշնորհումներուն մասին, որոնք Հայոց արքունիքին կողմէ տրուեցան նորակազմ եկեղեցին ու եկեղեցականութեան, զայն վերածելով «աւատապետական» կառոյցի մը, որ տակաւ իր ձեռքը պիտի առնէր ոչ միայն երկրին կրթական գործն ու գրականութիւնը, այլեւ դատական համակարգն իսկ: Դեռ աւելին, «4-րդ դարում եկեղեցու սեփականութիւնն են կազմել Հայաստանի 15 գաւառներ: Կաթողիկոսն ու եպիսկոպոսն ունեցել են ժառանգատիրութեան իրաւունքով տոհմային կալուածքներ, եկեղեցուն են տրուել պտուղ եւ հաս կոչուող տուրքերը: Եկեղեցականները հաւասարուել են ազատների դասին, իսկ եպիսկոպոսներն ու կաթողիկոսը՝ նախարարների» (էջ 14):

Արամ Սարգսեան չի բաժներ այն տարածուն (ու սրբագործուած) տեսակէտը, թէ Գրիգոր Լուսաւորիչ մեծագոյն կերտիչներէն մին է Հայոց պատմութեան: Հիմնովին կը մերժէ անոր շնորհուած «Լուսաւորիչ» տիտղոսին արդարացիութիւնը: Ըստ իրեն՝ «Գրիգորը քրիստոնէութեան պաշտօնականացմանը նպաստելուց բացի ուրիշ ոչ մի աչքի ընկնող դրական դեր չի կատարել: Եթէ ճիշդ է, որ Գրիգորն է ոչնչացրել հին հայկական մշակոյթը (իսկ պատմիչներ իրենց գործերում կարծես դա են վկայում), ապա անարդար է նրան «Լուսաւորիչ» անուանել» (էջ 16):

451 թուին գումարուած Քաղկեդոնի խնդրայարոյց ժողովը ու անկէ բխած քրիստոսաբանական երկարատեւ ծանօթ վէճերուն բնոյթը (միաբնակ – երկաբնակ) Ա. Սարգսեանի կողմէ պարզաբանուած են առաւելագոյն մատչելիութեամբ, որքան ալ հեղինակը ի՛նք իսկ հաստատած ըլլայ՝ թէ «կրօնական տոկմաները անհասկնալի են բանականութեամբ ու անբացատրելի՝ տրամաբանութեամբ...»: Ծանօթ է, որ Հայ Եկեղեցին (ու իր հետ՝ Հայաստան Աշխարհը) Զ. դարէն սկսեալ բազմաթիւ դժուարութիւններու բախեցաւ՝ Բիւզանդիոնի յոյն եկեղեցւոյ (ու կայսրութեան) հետ իր յարաբերութիւնները բնականոնացնելու ճամբուն վրայ, ի չարս այլ ազդակներու, գլխաւորաբար՝ դաւանական տարակարծութեանց պատճառով: Դաւանաբանական այդ նոյն վէճերը, յետագային, իրենց դրոշմը դրին նաեւ հայ – լատին յարաբերութեանց վրայ, ճակատագրական ու բախտորոշ անդրադարձ ունենալով Կիլիկիոյ հայկական պետութեան տկարացումին եւ անկումին մէջ:

Ա. Սարգսեան չի վերլուծեր «միաբնակութեան» կառչած մնալու Հայ Եկեղեցւոյ աներեր կեցուածքը, ո՛չ ալ քննութեան կ'ենթարկէ այդ հաւատարմութեան դրական կամ ժխտական հաշուեցոյցը (որ խիստ հետաքրքրական կրնար ըլլալ), այլ կը բաւականանայ նշելով, որ «միաբնակութեան ընդունումը խոր հետք թողեց հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի վրայ» (էջ 24):

Հայ Եկեղեցւոյ ու Հռոմի Աթոռին նորօրեայ յարաբերութեանց մասին խօսելով կարեւորութեամբ կը յիշատակուի, թէ «1970 թուականին, պատմութեան մէջ առաջին անգամ հանդիպեցին Հայ եկեղեցու Ամենայն Հայոց կաթողիկոսն ու Հռոմի Պապը (կ'ակնարկէ Վազգէն Ա. – Պօղոս Զ. հանդիպումին – Լ. Շ.): Առաջին անգամ էր, որ Հայ եկեղեցու առաջնորդը Հռոմ էր գնում ոչ թէ «վասն քաղաքական ակնկալութեանց», այլ՝ հաւասարի իրաւունքով»: Կ'աւելցուի սակայն, թէ «1988 թ. երկրաշարժից յետոյ, եւ յատկապէս վերջին շրջանում, երբ փլուզուեց ԽՍՀՄ-ը եւ քանդուեց պատնէշը, կաթոլիկ եկեղեցին դարձեալ իր հայեացքն ուղղեց Հայաստանին, իսկ հայ կաթոլիկների առաջնորդը հանդէս եկաւ «վերադարձ դէպի երկիր» շրջաբերականով, որը Հայ եկեղեցու կողմից դիտուեց որպէս իր իրաւունքների եւ անկախութեան ոտնահարում» (էջ 27):

(Մնացեալը յաջորդիւ)

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ

(Բ. եւ վերջին մաս)

Տեղական բնակչութեանը անհանգստացնում է նաեւ Ջաւախքի հիւսիսային սահման թուրք – մեսխերի վերադարձի հեռանկարը, որոնք այդտեղ ապրում էին մինչեւ 1944 թուականը: Այդ ժողովրդի ծագումը մշուշոտ է. յայտնի չէ, ինչո՞ւ են նրանք թուրք կոչւում, առանձի՞ն ազգութիւն են, թէ ոչ: 1944 թ. Ստալինի հրամանով թուրք – մեսխերը տեղահանուեցին Ուզբեկստան, սակայն 1989 թուականի ազգամիջեան բախումների արդիւնքում ստիպուած էին թողնել այդ կենտրոնասիական երկիրը: Այժմ այդ կրկնակի տեղահանուած ժողովուրդն ապրում է Ռուսաստանի հարաւում եւ երազում է վերադառնալ Սամցխէ-Ջաւախեթի: Վրաստանը Եւրոպայի Խորհրդի առջեւ պարտաւորուել է ընդունել մեսխերին, սակայն տեղական բնակչութիւնը դէմ է նրանց վերադարձին: «Եթէ նրանք գան, մենք կը յայտնուենք թուրքերի շրջապատման մէջ, – ասում են Ախալքալաքում: – Իսկ չէ՞ որ թուրքերը աջակցում են Ադրբեջանին Ղարաբաղի համար պատերազմում»: Եւ այդ անհանգստութիւնն այսօր աւելի ուժեղ է, քան 20-րդ դարակէսին:

Ելեկտրականութեան բացակայութիւնը Ջաւախքի բնակչութեանը տանում է դէպի հեռու անցեալ: Ո՛չ, ելեկտրականութիւն կայ, բայց օրը ընդամէնը 3–4 ժամ: Մընացած ժամանակ նրանք, ովքեր փող ունեն, կարող են գնել փոքր մասնաւոր ՀԷԿ-երի արտադրած ելեկտրականութիւնը վճարելով ամիսը 20 տոլար: Այդ ելեկտրակայանները պատկանում են տեղական քլաններին, որոնց միջեւ էլ բաժանուած է ողջ տարածաշրջանը,, եւ որոնք որոշում ու վերահսկում են ամէն ինչ, այդ թւում եւ ելեկտրականութիւնը՝ պետական (այն այստեղ անուանում են արդիւնաբերական) ու մասնաւոր: Անապահովները վառում են քերոզինէ լամբեր ու մոմեր:

Ռուսական զօրակայանը, այսպէս կոչուած, մեծ աւատապետի է նման: Պաշտօնական տուեալներով այստեղ աշխատում է մօտ 1,5 հազար տեղացի Հայ, բայց արեւմտեան մամուլը գրում է, որ զօրակայանը կերակրում է բնակչութեան կէսին: Ինչո՞ւ եմ ես զօրակայանը աւատապետ անուանում: Որովհետեւ այն տիրում է հողերին, շէնքերին, տեղական բնակչութիւնից հարկ է վերցնում աշխատանքի տեսքով եւ տիրում է այնտեղ ապրող մարդկանց հոգիներին: Նրանցից պահանջւում է ընդունել ռուսական քաղաքացիութիւն, որպէսզի հնարաւորութիւն ունենան աշխատել զօրակայանում:

Ի հարկէ, Ախալքալաքում նաեւ յետխորհրդային ժամանակների նշաններ կան, առանց դրանց անհնար է: Փողոցներում յայտնուել են սրճարաններ, բազմաթիւ մասնաւոր խանութներ, որոնք հիմնականում անցուցանակ են, իսկ երբեմն էլ՝ «Supermarketing» մակագրութեամբ: Կան նաեւ բջիջային հեռախօսներ: Ստացւում է, որ Ջաւախքեցիներն ապրում են ե՛ւ միջնադարում, ե՛ւ 1918 թուականին,, ե՛ւ 1944-ին, եւ ընդհանրապէս խորհրդային ժամանակներում, ինչպէս նաեւ այժմ՝ 21-րդ դարի սկըզբին: Այստեղ ժամանակներ չկան:

ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ

Ջաւախքը Վրաստանի մասն է եւ սահմանակից է Հայաստանին ու Թուրքիային: Սակայն այստեղ ամենաուժեղը Ռուսաստանի ազդեցութիւնն է: Այստեղ, վճարամիջոց է ռուսական ռուբլին: Փողոցներում ռուսական համարանիշերով բազմաթիւ մեքենաներ կան: Ախալքալաքցիները դիտում են ռուսական հեռուստատեսութիւնը եւ ծխում են ռուսական՝ Հիւսիսային Կովկասում արտադրուած ծխախոտ: Շուկայի կեղտոտ կրպակներում յայտարարութիւններ են կախուած. «Այստեղ կարելի է ստանալ Ռուսաստանի Դաշնութեան այցագիր», իսկ կողքին վաճառում են Ախալքալաք-Դոնի Ռոստով կամ Ախալքալաք – Մոսկուա համրակառքի տոմսեր:

Հայաստանի ներկայութիւնը աւելի քիչ է զգացւում: Թէեւ բոլորը խօսում են հայերէն, փողոցների ցուցանակներն էլ հայերէն են: Ջաւախքում ուտում են «Շանթ» եւ «Աշտարակ» պաղպաղակներ: Կարելի է հանդիպել նաեւ հայկական մասնաւոր համալսարանների մի քանի մասնաճիւղերի:

Վրաստանի ներկայութիւնը առօրեայ կեանքում գրեթէ չի զգացւում: Այն երբեմն իրեն յիշեցնում է տեղի բնակչութեան եւ Սամցխէ-Ջաւախեթիի (որի մէջ մտնում է Ջաւախքը) նահանգապետ Գիգլա Բարամիձէի միջեւ խուլ հակամարտութեամբ: «Ամէն ինչում Բարամիձէն է մեղաւոր», – ասում է իր անունը նշել չցանկացող մի ախալքալաքցի:

Ուրեմն, որտե՞ղ, ո՞ր երկրում է գտնւում Ջաւախքը՝ Ռուսաստանում, Հայաստանո՞ւմ, թէ Վրաստանում: Ստացւում է, որ Ջաւախքը աշխարհագրութիւնից դուրս է: Նա ինքն իր համար է՝ միայնակ ու լքուած, սակայն ընդամէնը 250 քմ. հեռու Թիֆլիսից եւ մի փոքր քիչ՝ Երեւանից:

Ի՞ՆՉ Է ՍՏԱՑՒՈՒՄ

Ջաւախքը, իրօք, միայնակ է: Հայկական մամուլում Ջաւախքին վերաբերող հրապարակումները քիչ են: Իսկ վրացական թերթերում Ջաւախքը ներկայացւում է որպէս անջատողական շրջան, որը ձգտում է դուրս գալ Վրաստանի կազմից եւ դառնալ Հայաստանի մասը: «Թիֆլիսեան մամուլի հրապարակումների զգալի մասը, – համարում է Վրաստանի լրագրողների անկախ ընկերակցութեան նախագահ Զվիադ Փոչխուան, – բովանդակում է միայն քաղաքական գործիչների մեկնաբանութիւններ այն մասին, թէ Հայերը կարողական անջատողականներ են եւ պատրաստ են ցանկացած պահի տարածաշրջանում իրավիճակը ապակայունացնելու նպատակով աջակցել Ռուսաստանին ու պահանջել անջատուել Վրաստանից»:

Նման պայմաններում աճում է արտագաղթը: «Ահա մենք երեք հոգի ենք, – ասում է Ախալքալաքում Թանգարանի մօտ կանգնած տղամարդը՝ ցոյց տալով իր երկու ընկերներին, – մէկի երկու աղջիկները Ռուսաստանում են, միւսը մի տղայ ունէր՝ նա էլ է գնացել: Դուստրս Մոսկուայում է, որդիս էլ է պատրաստւում գնալ նրա մօտ: Այստեղ մնացել են միայն մահացածները՝ գերեզմաններում, եւ մենք, որ թաղում ենք մահացածներին»:

Այս խորքի վրայ յաճախակի են դարձել հայկական քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների այցերը Ջաւախք: Անյայտ մնալ ցանկացած երեւանցի վերլուծաբաններից մէկը նշում է, որ իրեն շատ են անհանգստացնում այդ մարդկանց այցերը: «Իսկ մեզ նոր Ղարաբաղ պէտք չէ»:

ՄԱՐԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ախալքալաք – Երեւան

«Հայաստանի Հանրապետութիւն»
Սեպտեմբեր 28

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ԲՐԻՏԱՆԱՑԻՆԵՐԸ ԵՒ ԱՆՁՆԱԹՈՒՂԹԸ

Մեծն Բրիտանիան, ինչպէս անգլիախօս շատ մը երկիրներ որոնցմէ են ԱՄՆ-ը, երկար ատեն մերժած է անձնաթուղթի գործածութիւնը։ Այս մտածումը թէ ամբողջատիրական գաղափարներու տէր ոստիկանապետ մը կրնայ մէկուն անձնաթուղթը պահանջել, անհատական ազատութեան դէմ բան կը նկատուէր։

Մեծն Բրիտանիոյ մէջ գործածութենէ դադրեցան այն անձնաթուղթերը որոնք տրուած էին պատերազմի շրջանին։ Անկէ ի վեր, ամէն անգամ որ կառավարութիւն մը կը ձեռնարկէ վերահաստատելու զանոնք, այն պատճառաբանութեամբ որ ոճիրներու դէմ պայքարը, կամ քաղաքացիներու առօրեան կը դիւրանայ, լուրջ ընդդիմութեան կը բախի։ Նոյնիսկ երբ բրիտանացիները հաւատք ունենան տուեալ շրջանի ղեկավարութեան վրայ, կը վախնան որ անոնց յաջորդները չարաչար կը գործածեն ինքնութեան նման թուղթ։ Այսուհանդերձ, գաղափարը կրկին օրակարգի եկած է։

Անոր կողմնակիցները կ՚ըսեն թէ ներկայի պայմաններուն մէջ անոր նպաստաւոր բազմաթիւ պատճառաբանութիւններ կան. հանրային իշխանութիւնները արդէն որեւէ մէկուն մասին հարկաւոր ամէն բան գիտեն, շնորհիւ համակարգչային տուեալներու, դրամատնային քարտերու, անձին լուսանկարով քշելու արտօնաթուղթերու. այդ բոլորին քով անձնաթուղթը պարզ ձեւակերպութենէն աւելին չի կրնար ըլլալ։ Մնաց որ եւրոպական շատ երկիրներ երկար ատենէ ի վեր ունին անձնաթուղթ, առանց մարդկային իրաւունքներու, ազատութիւններու հարց ունենալու։

Սակայն, բուն հարցը գիտնալն է թէ այդ թուղթը ահաբեկչութեան եւ ոճիրներու դէմ ազդեցիկ պայքարի ազդակ պիտի ըլլա՞յ, թէ ոչ։ Գերմանիոյ մէջ անձնաթուղթը նոր բան չէ։ Այսուհանդերձ, Պաադէրի չարագործները դիւրաւ ձերբակալելու առաջնորդած չէ։ Նոյնն է Սպանիոյ պարագան. անոր քաղաքացիներն ալ շատ արդիական անձնաթուղթեր ունին, սակայն երեսուն տարիէ ի վեր ԷԹԱն արմատախիլ չէ եղած։ Ոչինչ կը փաստէ որ անձնաթուղթի տէր երկիրները աւելի լաւ զինուած են կազմակերպուած ոճիրին դէմ պայքարի համար։

Կողմնակիցները պիտի պնդեն թէ նոր եւ աւելի սուղ թէքնիքներով պատրաստուած նոր անձնաթուղթերը որոնց վրայ պիտի արձանագրուին, օրինակ, իրենց տիրոջ մատնահետքերը, աւելի ազդեցիկ դեր պիտի կարենան կատարել։ Սակայն, այդ պարագային ալ ամէն մարդ պարտաւոր պիտի ըլլայ ամէն վայրկեան իր անձնաթուղթը քովը ունենալու որպէսզի որեւէ պահու կարենայ ներկայացնել։

Կայ նաեւ Ամերիկայի վերջին ահաբեկչութենէն քաղուած դասը. երկիր մը միայն իր քաղաքացիներուն անձնաթուղթ կուտայ. եւ ճիշդ է որ երկրի մը քաղաքացին ալ կրնայ ահաբեկչական արարք գործել. սակայն, ինչպէս Սեպտեմբեր 11-ին պատահածը, արարք մը կրնայ գործը ըլլալ մարդոց որոնք աշխատութեան կամ ուսանողական արտօնագրով մը այդ երկիրը կը գտնուին։ Այս վերջին պարագաներուն, հարցը այնքան ալ անձնաթուղթին չի վերաբերիր, այլ անցաթուղթին օրինաւորութեան եւ այն պայմաններուն որոնց մէջ տրուած է մուտքի արտօնաթուղթը։

Այս կէտերը նկատի առած, անգլիացի լրագրողներ կ՚ըսեն թէ ընդունելով հանդերձ ահաբեկչութեան դէմ լաւագոյնս պայքարելու անհրաժեշտութիւնը, այդ ուղղութեամբ փոփոխութիւններու անհրաժեշտութիւնը, անձնաթուղթը միակ կարելի լուծումը չէ. ան նախ բաւական սուղ պիտի արժէ նախաձեռնողներու, ապա պիտի սահմանափակէ անհատական ազատութիւնները։

ՔԱՂՀԱՆ

ԼՂՀ

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1990-էն ի վեր Արցախի եւ ազատագրուած շրջաններու մէջ ուսումնասիրուած եւ չափագրուած են աւելի քան 1500 հայկական յուշարձաններ, մեծ մասը առաջին անգամ ըլլալով։

Հնագիտական արշաւախումբին ղեկավար Յակոբ Սիմոնեանի տեղեկատուութեամբ, 1992-էն սկսած են աշխատիլ Շուշիի շրջանը, 1993-էն արդէն ներգրաւուած են Քարվաճառի, Մարտակերտի, Աղդամի եւ Ֆիզուլիի տարածքները։ Անդրադառնալով Քաշաթաղի շրջանի Հոկտեմբեր 7-ին վերաբացուած եւ Ս. Գէորգ անուանուած Ծիծեռնավանքի ուսումնասիրութեան, Յ. Սիմոնեան ըսած է թէ աշխատանքի սկսած են 1997-ին, շրջանին վարչակազմի ղեկավար Ալեքսան Յակոբեանի յորդորներով։

Շուրջ հազար քառակուսի մեթր տարածքին հնագիտական պեղումներէն նոր էջ մը բացուած է հայ քրիստոնէական պատմութեան մէջ։ Գտածոներէն են հընագոյն շրջանի կաւէ շինուած սրբապատկերները, բարձրաստիճան կրօնաւորի մատանի - կնիքը, եկեղեցական սպասներ - ճրագ, - բուրվառ-։ Յ. Սիմոնեանի համոզումով Ծիծեռնավանքը հայ քրիստոնէական քաղաքակրթութեան ամէնէն կարեւոր եւ հնագոյն կառոյցներէն է։ Ցայտնաբերուած եկեղեցական սպասները կու գան ամէնէն ուշը Ե. - Զ. դարերէն։ Ըսելով որ պեղումներէն գտնուած են նաեւ Ա. - Գ. դարերու մնացորդներ, ինչպէս՝ կղմինտրներ, որոնք ենթադրել կու տան որ եկեղեցին կառուցուած է 301-էն, քրիստոնէութեան Հայաստանի պետական կրօնք հռչակուելէն առաջ։

Գիտնական Մորուս Հասրաթեանի ուսումնասիրութիւնները Ծիծեռնավանքը կը զետեղեն Զ. - Է. դարերու շրջանին։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Ի՞նչ գիտենք Հայոց կին աստուածներուն մասին

ԱՆԱՀԻՏ

Անահիտ մայրութեան, զգաստութեան, պտղաբերութեան, արգասաւորութեան աստուածուհին է։ Ան Հայոց աստուածներու հայր Արամազդի դուստրն է։ Ստացած է «Ոսկեմայր», «Հայոց տիկին», «Մեծ տիկին», «Սնուցող մայր», «Ոսկեմատն» տիտղոսները։

Անահիտի գլխաւոր սրբատեղին եղած է Բարձր Հայքի Եկեղեաց գաւառի Երիզա աւանը, որուն համար ալ գաւառը նաեւ կոչուած է Անահտական։

Անահիտը եղած է հեթանոս Հայերու ամէնէն սիրելի աստուածուհին եւ կը համապատասխանէ յունական Արտեմիսին, իսկ հռոմէական՝ Տիանային։

ԱՍՏՂԻԿ

Սիրոյ, գեղեցկութեան եւ նուրի աստուածուհին՝ Աստղիկը նկատուած է Վահագն աստուծոյ սիրեցեալը։

Աստղիկի եւ Վահագնի գլխաւոր մեհեանը որ կը կոչուի «Վահագնի սենեակ», կը գտնուէր Տուրուբերան նահանգի Տարօն գաւառի Աշտիշատ աւանին մէջ։

Ըստ աւանդութեան, Աստղիկը գիշերները լողացած է Արածանի - Եփրատի նեղ կիրճին մէջ եւ տղոցմէ աննկատ մընալու համար մշուշով պատած է Տարօնի հովիտը, որուն համար ալ այդ գաւառը կոչուած է Մշուշ եւ ապա՝ Մուշ։

Հայոց Աստղիկը կը համապատասխանէ յունական Աֆրոտիթին։

ՆԱՆԷ

Նանէն հեթանոս Հայերու իմաստութեան եւ ողջախոհութեան աստուածուհին էր։ Ան Հայոց աստուածներու հայր Արամազդի դուստրն էր։

Նանէ դիցուհիին տաճարը կը գտնուէր Բարձր Հայքի Եկեղեաց գաւառի Թիլ աւանին մէջ։ Արզնկա քաղաքէն 8 քիլոմեթր հիւսիս - արեւմուտք։

Նանէն նոյնացած է յունական Աթենաս աստուածուհիին հետ։

Նանէի կոչումն էր ողջախոհութեամբ եւ իմաստութեամբ օժտել Հայերը։

ԾՈՎԻՆԱՐ

Ջուրի, ծովու եւ անձրեւի աստուածուհին՝ Ծովինար, կ՚անձնաւորէր ամպրոպի, փայլակի կամ կայծակի խգական ոգին։

Ծովինար իբրեւ հրեղէն եւ ցասումնալից էակ, ամպրոպի ժամանակ խաղալով ամպերուն մէջ, աղէտաբեր կարկուտ կամ արգասաբեր անձրեւ կը ղրկէ մարդոց։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԺՊԻՏ

Դրախտի դարպասների մօտ է յայտնըւում մի ահաբեկիչ։ Հրեշտակապետը նըրան ասում է.

– Հեռացիր, ահաբեկիչների մուտքը դրախտ արգելուած է։

– Իսկ ես ներս չեմ էլ ուզում մտնել։ Այդ դուք ունէք 20 րոպէ, որպէսզի բոլորին դուրս բերէք...

***

Մի հարբած կանգառում ծառը գըրկած՝ կանգնած է։ Մօտենում է մի ուրիշ հարբած ու հարցնում.

–Ի՞նչ ես անում։

– Աւտօբուսի եմ սպասում։

– Ախմախ, ծառը ձեռքից քեզ ո՞վ կը թողնի աւտօբուս նստես։

***

Մի կին զանգում է շտապօգնութիւն.

– Օգնեցէք, ասֆալտի մեքենան անցաւ ամուսնուս վրայով։

– Փաքսով ուղարկէք...

ԹԻՒ 17 ԽԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

Ընդհանուր զօրակոչը, որ արդէն երկու ամիսէ ի վեր ամէնուն սիրտը դող հանած էր, ճշմարիտ մղձաւանջ մը դարձաւ։

Միեւնոյն ժամանակ կառավարութիւնը յայտնապէս հալածիչ ընթացք մը սկսաւ Հայոց հանդէպ։

Կրկին գաղտնի ցանկերու շարաշուք գըրոյցներ սկսան շրջիլ։

– Վեց հազար հոգինոց ցանկ մը պատրաստուած է, - կը հաւատէին ոմանք, - շատ աղէկ տեղէն գիտեմ։

– Որո՞նք կան այդ ցանկին մէջ։

– Ամէն տեսակ աչքի զարնող մարդիկ, կուսակցականներ, խմբագիրներ, ուսուցիչներ, եկեղեցականներ, վաճառականներ, փաստաբաններ, բժիշկներ եւ այլն։

– Եւ ի՞նչ պիտի ընեն այդ մարդիկը։

– Պիտի ձերբակալեն ու աքսորեն։

– Կարելի չէ, որ կառավարութիւնը այդպիսի բան մը ընէ։

– Ինչո՞ւ կարելի չէ. հիմակ ազատ է բոլորովին, ո՛չ ոք կրնայ դիտողութիւն մը ընել, քափիթիւլասիոնները ջնջեցին արդէն, ուզածնին կրնան ընել, կը կարծէք, որ Գերմանիա՞ պիտի պաշտպանէ մեզի։

– Այդ ցանկերը ինչպէ՞ս պատրաստուած են։

– Ինչպէ՞ս կ՚ուզէք, որ պատրաստուին. հայ լրտեսներու ձեռքով։

Եւ մէկ քանի Հայերու անուններ կը տրուէր, որոնք այդ ցանկերու պատրաստութեան մէջ բաժին ունէին։

Այդ անուններուն մէջ կար նաեւ Թիւ 17 խափիէն։

Այդ տեսակ շիլ ու կեղտոտ արարածներու համար ոսկեդար մըն էր, որ կը բացուէր։

Աջէն ու ձախէն դրամ զարնելու առիթներ կը ներկայանային ամէն օր։

Այդ մարդոց հասոյթի գլխաւոր աղբիւրներէն մէկն էր կաշառքով զինուորական ծառայութենէ մարդ ազատելու գործողութիւնը։

Աստիկ Մարկոսեան չահադիտութեան այդ ճիւղը կը մշակէր գերազանց ճարպիկութեամբ մը։

Շէնք - շնորհք գործակալութիւն մը հաստատած էր ասոր համար։ Իր գրասենեակը լեցուն էր զինուորական տարիքի մէջ գտնուող երիտասարդներով, որոնք հոն իրեն կը սպասէին ժամերով։

Ամէն մէկէն քանի մը ոսկի առհաւատչեա դրամ մը առնելով՝ ճամբու կը դնէր խեղճերը՝ խոստանալով յաջորդ օրը գործերնին լմնցնել։

Շնորհիւ իր այս նոր գործունէութեան այժմ ճոխ կեանք մը կը վարէր՝ չայլորէն դրամ վատնելով։

Բայց եւ այնպէս չէր գոհանար դրամաշորթութեան այդ միակ միջոցովը եւ հասոյթի տարբեր աղբիւրներ կը ստեղծէր իրեն։

Օրեկ մը, երբ քսակը բաւական թեթեւցած էր, իր տօսիէն թեւին տակ, ներկայացաւ հայ վաճառականի մը, Աբրահամ էֆէնտիի, զոր հեռուէն կը ճանչնար։

– Բարեւ, Աբրահա՛մ էֆէնտի, - ըսաւ իր սովորական թէմէննահները շռայլելով, – կը յուսամ որ, Աստուծով, աղէկ ու հանգիստ էք...

– Փառք Աստուծոյ, կ՚ապրինք կոր, – պատասխանեց վաճառականը, – դո՞ւք ինչպէս էք, Աստի՛կ էֆէնտի, ի՞նչ-չիկայ, տեսնենք...

– Սանկ - նանկ կ՚երթանք կոր, - պատասխանեց Աստիկ, – կացութիւնը յայտնի է... շատ խառնաշփոթ վիճակի մէջ են գործերը։

– Այո՛, ընդհանուր պատերազմը տակն ու վրայ ըրաւ ամէն բան։

– Խնդիրը միայն առեւտրական տագնապը չէ, դժբախտաբար քաղաքական կացութիւնը շա՛տ ծանրակշիռ է...

– Այսինքն պատերազմին ընթա՞ցքը։

– Պատերազմին ընթացքը մեզի ինչ, – պատասխանեց Աստիկ, – իմ խօսքս մեր՝ Հայերուս մասին է։

– Մասնաւոր բա՞ն մը կայ մեզի դէմ, – հարցուց Աբրահամ էֆէնտի քիչ մը վըրդովուած դէմքով մը։

– Լուր չունի՞ս ուրեմն։

– Շիտակը՝ ես միշտ իմ գործերովս ըզբաղած եմ, անցած - դարձածէն լուր չունիմ։

– Աբրահամ էֆէնտի, այս միջոցին լաւ կ՚ըլլայ, որ քիչ մը քաղաքականութեան հետեւիս, պատրաստուած ցանկերուն մասին բան մը չլսեցի՞ր։

– Ի՞նչ ցանկեր, - հարցուց վաճառականը, որուն հետաքրքրութիւնը հետզհետէ կ՚աւելնար։

– Կառավարութիւնը ոստիկանութեան միջոցով վտանգաւոր համարուած Հայերու ցանկ մը պատրաստած է։

– Անանկ բան մը իմ ալ ականջիս հասաւ, բայց կարեւորութիւն չտուի, այս միջոցիս անչափ խենթ ու խելառ խօսքեր մէջտեղ ելած են, որ... շիտակը՝ ես շատ չի հաւատացի այդ ցանկին, կառավարութիւնը ուրիշ հոգ չունի՞, որ Հայերով պիտի զբաղի այս միջոցիս։

– Կը սխալիս, Աբրահա՛մ էֆէնտի, այդ ցանկին խօսքը շատ ճիշդ է, ես աչքովս տեսայ։

– Ի՞նչ կ՚ըսես, - գոչեց վաճառականը զարմացական շեշտով մը։

– Այո՛, ցանկը պատրաստ է, եւ մէկ օրէն միւսը կառավարութիւնը կրնայ իր ծրագիրը գործադրել եւ բոլոր նշանակուած անձերը բռնելով՝ աքսորել, այս բանը բացէ ի բաց ինծի ըսին թէ՛ Պէտրի պէյը եւ թէ՛ Րէշատ պէյը, երկուքն ալ իմ դպրոցական ընկերներս են, եղբօր պէս կը տեսնուինք. ինէ բան մը չեն պահեր։

(Շար. 80)

(Շար. Ա. էջէն)

գործունէութիւն ունեցած է Արտաքին գործերու Նախարարութեան մէջ ու այդ տարիներուն բազմաթիւ անգամներ այցելած Թուրքիա, զանազան պատուիրակութիւններու մաս կազմելով:

Գրասենեակին բացման աշխատանքները լրացնելէ ետք, Ա. Աւագեան ձեռնարկած է պաշտօնական դիմումներու, այցելութիւններու, հանդիպումներու: Այց մը տուած է նաեւ Մեսրոպ Պատրիարքին:

Գրասենեակին ներկայի ժամանակացոյցին առաջին թուականն է Հոկտ. 25-26-ը երբ Անթալիայի մէջ նոյն կազմակերպութեան անդամ երկիրներուն Արտաքին գործերու նախարարներու հանդիպումը տեղի կ'ունենայ: Հաւանական կը նկատուի այդ ժողովին Հայաստանէն նախարար Վ. Օսկանեանի մասնակցութիւնը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԵՆՓՐԵՍ»

(Հոկտեմբեր 10/11)

ԱԶԳ. ԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԱԾ Վ. ՍԻՐԱԴԵՂԵԱՆԻ ՀԱՐՑԸ

Ազգ. Ժողովը Հոկտեմբեր 9-ին քննութեան առած է Գ. Նստաշրջանի քուէարկութիւններուն կէսէն աւելիին աւանց յարգելի պատճառի բացակայած երեսփոխան Վանօ Սիրադեղեանի պարագան: Սահմանադրութիւնը կը նախատեսէ դադրեցնել երեսփոխանի մը լիազօրութիւնը եթէ ան նման բացակայութիւն ունեցած է: Պետա-իրաւական յանձնաժողովի նախագահ Վ. Դալլաքեան տեղեկացուցած է որ 2000 Հոկտեմբերին դիմած են երեսփոխանին կնոջն ու ՀՀՇ-ի վարչութեան, տեղեկացնելով քննարկումին մասին. սակայն անոնք պատասխանած են որ նոյն տարուան Ապրիլ 4-էն ի վեր որեւէ լուր չունին թէ ո՛ւր կը գտնուի ան:

Յաջորդ օրը, Հոկտեմբեր 10-ին, փակ քուէարկութիւն տեղի ունեցած է հարցին մասին: Վ. Սիրադեղեանի երեսփոխանական լիազօրութիւնը ջնջելուն դէմ քուէարկած է 36 հոգի, 20 հոգի՝ թեր. եղած է 14 ձեռնպահութիւն: 22 երեսփոխան չեն մասնակցած քուէարկութեան: Այս արդիւնքով՝ Վ. Սիրադեղեան կը շարունակէ մնալ Ազգ. Ժողովի երեսփոխան:

***

ԼՂՀ

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՍՈՒԼԻՍԸ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հոկտեմբեր 8-ին, Ստեփանակերտ այցելած ադրբեջանցի լրագրողներու խումբի մը հետ հանդիպում ունենալով նախագահ Ա. Ղուկասեան ըսած է թէ Հայաստանը Ղարաբաղի եւ ամբողջ հայ ժողովուրդին պատասխանատուութիւնը կը կրէ. իսկ ինչ կը վերաբերի հայկական վերահսկողութեան ենթակայ ազատագրուած տարածքներուն վերադարձի խնդրին, ան պէտք է քննարկուի ԼՂՀ եւ Ադրբեջանի բանակցութիւններով: Ա. Ղուկասեան յատկապէս շեշտած է որ անհրաժեշտ է խաղաղութեան պայմանագիրը որով միայն կը բացառուի պատերազմական գործողութիւններուն վերադարձը: Աւելցուցած ալ է թէ հակամարտութիւնը պէտք է կարգաւորուի յանգի Օ-ԽՍ-ՍԷ-Ը-ի հովանիին տակ: Նոյն կազմակերպութեան նախաձեռնութեամբ է որ ադրբեջանցի լրագրողները այցելած են Երեւան եւ Ստեփանակերտ:

***

Հոկտ. 10-ին ադրբեջանցի լրագրողները այցելած են Ս. Էջմիածին: Զիրենք, յանուն Գարեգին Բ. Կաթողիկոսին, ընդունած է Փառէն Եպիսկ. Աւետիքեան:

ԱԶՆԱՒՈՒՐ ՊԱՏՈՒՈՅ ԼԵԳԷՈՆԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Շառլ Ազնաւուր պատուոյ լեգէոնի հրամանատարի աստիճանին բարձրացաւ Հանրապետութեան Նախագահին կողմէ: Նոյն պատիւին արժանացաւ Անրի Սալվատոր:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ժան - Լիւք եւ Ժան - Ֆիլիփ Մելքոն եւ բազմաթիւ բարեկամներ կը ծանուցանեն որ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Հոկտեմբեր 14, Փարիզի Ս. Յովհ. - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ

ԷՎԸԼԻՆ ՇԱՀՄՈՒՐԱՏԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ:

Ի գիտութիւն յիշատակը յարգողներուն:

Ի ՑԻՇԱՏԱԿ

Տիկին Պերճուհի Սաղաթէլեանի մահուան առթիւ, Տէր եւ Տիկին Փիէռ Թէրզեան 200 Ֆր. կը նուիրեն Դպրոցասէր Տիկնանց վարժարանին (ստանալ՝ «Յառաջ»էն) եւ 200 Ֆր. «Յառաջ»ին:

ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին առիթով, Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, Հոկտեմբեր 16, ժամը 20.30-ին, Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ Կրթարանի սրահին մէջ:

Կը դասախօսէ՝

ՆԵՐՍԷՀ Ծ. ՎՐԴ. ՔԱՊՈՒՃԵԱՆ

«Ե. դարու թարգմանիչ վարդապետներու հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը» նիւթին շուրջ:

Centre Culturel SAINT MESROB A PARIS

Conférence - Débat

avec projection de diapositives sur le thème :

AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par

JACQUES PERIGAUD

Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle

et

VINCENT TARAKDJIAN

Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris V[e]
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre - Cocktail —

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SOIREE DANSANTE

organisée par

La Section «TER-DAVTIAN» de la Croix Bleue des Arméniens de Chaville

le Samedi 27 octobre

A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann

avec la participation de l'Orchestre GAIDZAG'S

***

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE

organisée par la

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

AU PROFIT DE L'ARMENIE

Vendredi 7 décembre

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կիրակի, Հոկտեմբեր 14-ին Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ Մատաղօրհնութեան օրն է:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԳԻՒՏ ԱՐՔ. ՆԱԳԳԱՇԵԱՆ

Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի
Առաջնորդ Հայոց Փարիզի

Յաւարտ պատարագի կը կատարուի աՄտաղի օրհնութիւն եւ ապա հոգեհանգստեան պաշտօն՝ Եկեղեցւոյ վախճանեալ հոգեւոր հովիւներու, հիմնադիրներու, բարերարներու եւ հոգաբարձուներու հոգիներուն ի հանգիստ:

Սկիզբ ժամերգութեանց ժամը 9-ին:
Պատարագ ժամը 10.30-ին:

Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՍԷՆ-ԺԵՐՈՄ

ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Սէն - Ժերոմի եւ Շրջակայից Սուրբ Սահակ - Մեսրոպ Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը պաշտօնապէս կը ծանուցանէ թէ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կը տօնախմբէ Եկեղեցւոյ շինութեան 71-րդ եւ անուանակոչութեան 68-րդ տարեդարձները

Հոկտեմբեր 14, Կիրակի օր

Այս առիթով կը կատարուի հանդիսաւոր պատարագ եւ հոգեհանգիստ հոգեներուն համար Եկեղեցւոյ գլխաւոր հիմնադիր եւ բարերար, երջանկայիշատակ՝

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿ. ՊԱԼԱՔԵԱՆԻ

հոգեւոր հովիւներուն - սարկաւագներուն - բարերարներուն - հիմնադիր եւ Շինութեան Յանձնախումբի Թաղական Խորհրդոյ անդամներուն - Օժանդակ Տիկնանց Միութեան անդամուհիներուն եւ բոլոր անոնց որոնք նիւթապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս սատարած են Եկեղեցւոյ շինութեան եւ որոնք այսօր առյաւէտ բաժնուած են մեզմէ:

Պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝

ՏԱՐՕՆ ԵՊԻՍԿ. ՃԷՐԷՃԵԱՆ

Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի

Քարոզի աւարտին օրհնութիւնը Մատաղի եւ ապա հոգեհանգիստ:

Արարողութեանց աւարտին եւ Մատաղի բաշխումէն վերջ տեղի կ'ունենայ «գինեձօն» Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Կը խնդրուի Թաղիս եւ Շրջակայքի հայութենէն որ խուռներամ ներկայութեամբ յարգէ նուիրական յիշատակը Թաղիս ննջեցեալներուն:

Մատաղի մասնակցութիւն փափաքողները կրնան դիմել Թաղականութեան:

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1[er]

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Exposition du 11 au 20 octobre
tous les jours
sauf le mardi et le dimanche

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Անիէռի Ակնունի մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը Երկուշաբթի, Հոկտեմբեր 15, ժամը 20.45-ին

Centre Administratif d'Asnières

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ, Հոկտեմբեր 13

ՏՕՆ Է ՍՐԲՈՑ
ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ՝
ՄԵՍՐՈՊԱՅ, ԵՂԻՇԷԻ,
ՄՈՎՍԻՍԻ ՔԵՐԹՈՂԻՆ,
ԴԱՒԻԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ,
ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅՆ
եւ
ՆԵՐՍԻՍԻ ԿԼԱՅԵՑՒՈՅՆ

Տօն է ազգային եւ եկեղեցական՝ ի յիշատակ գիւտի Նշանագրացն Հայոց եւ Թարգմանութեան Սուրբ Գրոց:

Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ, ժամը 10-ին, պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՀՆՅ. ԹԱՇՃԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ HAMASKAÏNE

Փ Ա Ր Ի Զ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS

ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ

Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆԸ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»

ՎԵՐԱՄՈՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուրբ Մեսրոպ Մշակութային Միութեան Սուրբ Խաչ շաբաթօրեայ վարժարանը կը վերաբանայ իր դռները Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 14-էն 17, Սուրբ Խաչ Եկեղեցւոյ կից սենեակներուն ու սրահին մէջ

13, rue du Perche, 75003 Paris

5-էն 12 տարեկան աշակերտներու համար:

Կը դասաւանդուին հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, հայկական երգեր ու պարեր:

Արձանագրուելու համար, հեռաձայնել՝ 01 - 44 - 59 - 23 - 50 թիւին:

CENTRE CULTUREL SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN

Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

***

Rouben ELBAKIAN

Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91. 77. 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 13-14
SAMEDI - DIMANCHE
13-14 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամերիկա՝ օդային առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.274 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.274

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՑ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 11 / 12)

ԽԱԲԵԲԱՅ ԿԵՂԾԱՐԱՐԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Հոկտեմբեր 10-ին, Ազգային ապահովութեան նախարարութեան պաշտօնեաները ձերբակալած են «Ասլան ինթէրնեշընըլ»ի տնօրէն երեւանցի Խաչիկ Ասլանեանը. ան չարաշահելով ընկերութեան տնօրէնի դիրքը, արտասահման աշխատելու աւելի քան հազար թեկնածուներ խաբած է անոնցմէ 240 - 480 տոլար գանձելով, փիլիպեաններ մեկնելու համար վիզա առնելու խոյծով։ Խ. Ասլանեանի բնակարանը կատարուած խուզարկութեամբ գտնուած են 520 Հայաստանցիներու անձնագիրներ, գաղթելու քարտեր, փիլիպեաններու կեղծ վիզաներ եւ կնիքներ, եւ այլն։

***

ՏՈՒՆԵՐ ԳԱՂԹԱԿԱՆ 11 ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ

Տաւուշի մարզի կեդրոնը՝ Երեւան ապաստանած գաղթական ընտանիքներէն տասնմէկը Հոկտեմբեր 10-ին բնակարան ստացած են. չորս բնակարան ալ յատկացուած է տեղացի կարօտեալներու։ Կ'ըսուի թէ որոշուած է մինչեւ Դեբեդաւերջ նոյն մարզին Պաղաւան եւ Դեբեդաւան բնակավայրերուն մէջ 26 բնակարան եւս տալ Ատրպէյճանէն գաղթած ընտանիքներու։

***

ՃԱՏՐԱԿԻ ԱԽՈՅԵՆՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 12-ին Երեւանի Օփերայի շէնքին մէջ բացուեցաւ ճատրակի համաշխարհային խմբային 5-րդ ախոյենութիւնը, որ կը տեւէ մինչեւ Հոկտեմբեր 20։ Այդ ախոյենութիւնը տեղի կ'ունենայ չորս տարին անգամ մը։ Բոլոր նախորդները տեղի ունեցած են Զուիցերիա. իսկ ներկայինը ճատրակի միջազգային դաշնակցութիւնը վստահած է Հայաստանի, նկատի առած այդ մարզին մէջ անոր յաջողութիւնները եւ հարուստ աւանդութիւնը։

Հայաստանի խումբը այդ ախոյենութեան առաջին անգամ մասնակցած է 1993-ին եւ չորրորդ տեղը գրաւած. 1997-ին դիրքը բարելաւելով բարձրացած է երկրորդութեան։

Ներկայի կացութեամբ Հայաստանի 4 խաղացողներ մաս կը կազմեն աշխարհի 100 լաւագոյններուն ցուցակին. առաջինը Վլադիմիր Յակոբեան է որ 30-րդ է, կը հետեւին Ռաֆայէլ Վահանեան (38-րդ), Սմբատ Լպուտեան (62-րդ) եւ Կարէն Ասրեան (81-րդ)։ Անոնց հետ Աշոտ Անաստասեան եւ Արտաշէս Մինասեան կը կազմեն Հայաստանի խումբը որուն ղեկավարն է Արշակ Պետրոսեան։ Հայաստանէն զատ մասնակից են Գերմանիան, Ուկրանիան, Ուզբեկստանը, Ռուսիան, Հունգարիան, Իրանը եւ Մակեդոնիան։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՊՈՒՇ ՎԵՐՋԻՆ ԿՈՉ ՄԸ Կ'ԸՆԷ ԹԱԼԻՊԱՆՆԵՐՈՒՆ

ՌՈՒՄԲԵՐԸ ՄԻՇՏ ԿԸ ՏԵՂԱՆ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 300 ՄԵՌԵԱԼ

Ռումբերը կը շարունակեն տեղալ Քապուլի եւ Քանտահարի վրայ եւ այլեւս յստակ է որ մեծ է զոհերու թիւը բնակչութեան մէջ։ Թալիպանները 300 մեռեալի մասին կը խօսին, մինչ ԱՄՆ-ու Պաշտպանութեան նախարարը ստիպուեցաւ ի վերջոյ խոստովանիլ որ, ճիշդ է բնակիչներու մէջ զոհեր կան, բայց «ուզելով չէ» որ նման բան պատահած է եւ ցաւ յայտնեց։ Ռումբեր ինկած են գիւղի մը վրայ, մինչ Թալիպաններու մարզումի կայանները աւելի հեռու էին։ Ռմբակոծութեանց սաստկացման եւ հակապունքը ռումբերու գործածութեան պատճառն է «ամբողջական անապահովութեան ըղձացում մը ստեղծել, ստիպելու համար Ալ Քաիտայի անդամները որ դուրս ելլեն իրենց թաքստոցէն», ինչպէս կը բացատրէ զինուորական Ֆրանսացի մասնագէտ մը։ Փաքիստան երկու օդակայան տրամադրած է Ամերիկացիներուն երկրին հարաւը, ինչ որ բաւական փափուկ կացութիւն ստեղծած է երկրի մը մէջ, ուր ժողովուրդը Պէն Լատէնի կողմնակից է, երբեմն մոլեռանդ կերպով։ Արդէն, Ուրբաթ Հոկտեմբեր 12-ի առաւօտուն, բուռն բախումներ ծագած էին Քարաշիի փողոցներուն մէջ, ոստիկանական ուժերուն եւ ամբոխին միջեւ։

Բրիտանական աղբիւրներու համաձայն, գործողութիւնները կրնան տեւել մինչեւ ամառ, հակառակ անոր որ Ամերիկացիք կը պնդեն որ մեծ վնասներ հասցուցած են եւ թիրախներու 85%-ը քարուքանդ եղած է, բայց, միւս կողմէ կ'ընդունին որ հակօդային հրթիռներ, պաշտպանութեան կայաններ կը գործեն։ Գերարդիական հակօդային հրթիռները Թալիպաններուն ձգուած էին Ամերիկացիներուն կողմէ, որոնք գերարդիական զէնքերով օժտած էին զիրենք կռուելու համար խորհրդային ուժերուն դէմ։

***

– Ոճրափորձերէն ճիշդ ու ճիշդ ամիս մը յետոյ, Հոկտեմբեր 11-ին, Պուշ, առաջին անգամ ըլլալով մամուլի ասուլիս մը տուաւ, որու ընթացքին նոր եւ վերջին կոչ մը ըրաւ Թալիպաններուն, ըսելով թէ վերջին կարելիութիւն մը ունին Պէն Լատէնը յանձնելու եւ այդ պարագային, Ուաշինկթըն կը վերանայ իր քաղաքականութիւնը։

– Կոչ մըն ալ ըրաւ Սուրիոյ, որ միանայ Ամերիկային պայքարելու համար ահաբեկիչներուն դէմ եւ աւելցուց. «Ուաշինկթըն շատ լուրջի կ'առնէ այս հրաւէրը»։

– Պուշ, անգամ մը եւս կրկնեց թէ կողմնակից է պաղեստինեան Պետութեան մը հաստատման, պայմանաւ որ Պաղեստինցիք ընդունին Իսրայէլի գոյութիւնը։

– «Մօտէն կը հսկենք Ս. Հիւսէյնի վրայ» չեշտեց ԱՄՆ-ու Նախագահը, այլ խօսքով Իրաքը չի մոռցուիր։

– Պուշ կոչ ըրաւ Միացեալ - Նահանգներու մանուկներուն, որպէսզի ամէն մէկ երախայ մէկ տոլար տայ Աֆղանիստանի երախաներուն համար։

– ԱՄՆ-ու Նախագահը յայտնեց նաեւ թէ նոր ոճրափորձեր հաւանական են Միացեալ - Նահանգներու մէջ կամ արտասահմանի ամերիկեան շահերուն դէմ։

***

Միացեալ - Նահանգներու մէջ կենսաբանական պատերազմի մը փսիխոզը օրէ օր կը ծաւալի, մանաւանդ ածխախտի երրորդ պարագայի մը յայտնաբերումէն ի վեր։

***

Ըստ «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթին, Ուսամա Պէն Լատէն 100 միլիոն տոլար տրամադրած է Թալիպաններուն վերջին հինգ տարիներու ընթացքին։

***

Հակամերիկեան ամէնէն բուռն ցոյցերը կը շարունակուին Ինտոնէզիոյ մէջ։ «Իսլամի Պաշտպաններու Ճակատը» յայտարարած է որ երկրէն դուրս պիտի քշէ Ամերիկացիներն ու Անգլիացիները։ Նախապէս ալ վերջնագիր մը տուած էր Նախագահին պահանջելով որ խզէ Ուաշինկթընի հետ։ Նպատակն է իսլամական պետութիւն մը հաստատել Ինտոնէզիոյ մէջ (203 միլիոն բնակիչ, 85%-ը մահմետական)։

***

Արաֆաթի դիրքը միշտ փափուկ է եւ Իսրայէլ չուզեր երկխօսութիւնը վերսկսիլ ցորչափ Արաֆաթ քանի մը տասնեակ ձերբակալութիւններու չէ ձեռնարկած։ Հակառակ պարագային ալ, Համաս ու Ճիհատը կը սպառնան Արաֆաթի։ Զինեալ բախումները դադրած կը թուին ըլլալ, բայց, Հոկտեմբեր 11-ին, Համասի մէկ անդամին մահը Նապլուսի մօտ, կը...

(Շար.ը Դ. էջ)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՔՆՆԱՊԱՏ ԿԵՑՈՒԱԾՔԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ինչպէս տեղեկացուցած էինք (Հոկտ. 10), Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան մասին Եւրոպական Խորհրդարանին նոր տեղեկագիր մը պատրաստած էր երեսփոխան Ալէն Լամասուր։ Այդ տեղեկագիրը տեղ չէր տուած անդամակցութեան համար Անգարայի կողմէ Հայերու ցեղասպանութիւնը ճանչնալու պայմանին որ նշուած էր նախորդներու մէջ։ Այդ պատճառով, Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբը փոփոխութիւններու առաջարկ ներկայացուցած էր, Ապրիլ 24-ի կոմիտէն ալ հաղորդագրութեամբ մը նոյն կէտին սրբագրութիւնը պահանջած էր որպէսզի յիշեալ պայմանը չրջանցումի չենթարկուի։

Հոկտեմբեր 10-ին, Խորհրդարանին արտաքին գործերու յանձնախումբը քուէարկած ու առանց փոփոխութիւններու դիմումները նկատի առնելու ընդունած է Ա. Լամասուրի տեղեկագիրը։

Այդ առթիւ Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբը հրապարակած է հետեւեալ հաղորդագրութիւնը։

Le 10 octobre 2001, la commission des affaires étrangères du Parlement européen a adopté le projet de rapport d'Alain Lamassoure sur «les progrès réalisés par la Turquie sur la voie de l'adhésion». Or, les amendements qui ont fait l'objet de compromis entre les groupes politiques n'ont pas fait mention à la reconnaissance du génocide et au blocus de l'Arménie par la Turquie.

Le rapporteur, Monsieur Lamassoure n'a pas cru bon de rappeler à la Turquie sa responsabilité dans ces deux questions. Pourtant, **dans un courrier du 29 mars 2000, Monsieur Lamassoure assurait le CDCA Europe de sa conviction que «les termes de la résolution adoptée par le Parlement européen le 18 juin 1987 restent valables, et doivent être pris en compte dans les relations qu'entretient l'Union européenne avec la Turquie».**

En effet, **dès 1987**, après la reconnaissance par l'ONU, **le Parlement européen avait à son tour reconnu ce génocide et considéré le refus de la Turquie de le reconnaître comme un des obstacles incontournables à son adhésion à l'Europe.**

Le 15 novembre 2000, dans sa résolution du rapport 2000 sur l'adhésion de la Turquie, le **Parlement européen appelait une deuxième fois ce pays à reconnaître le génocide et à lever le blocus qu'elle exerce sur l'Arménie depuis 1993.**

Le choix de la commission des affaires étrangères d'occulter les crimes de la Turquie, reste conforme à l'exigence de ce pays de condamner au silence toutes les instancs qui rappellent sa responsabilité dans le génocide des Arméniens.

Dans ses relations avec la Turquie, l'Union européenne a le choix entre deux approches distinctes: ou bien **elle acceptera la vision négationniste de l'Etat turc et se pliera aux pressions de ce dernier pour passer sous silence ses crimes contre l'humanité**; ou alors **l'Europe fera admettre à la Turquie que la justice est la seule condition pour un dialogue et une réconciliation durable avec le peuple arménien**, comme la réconciliation européenne qui n'a été possible qu'après que l'Allemagne aie condamné son passé nazi et demandé pardon pour ses crimes.

Remplacer la demande de reconnaissance par un soutien à l'initiative «civile» d'un groupe d'Arméniens et de Turcs dont le but serait d'arriver à «une appréciation commune de l'Histoire» relève d'une offense aux un million et demi de victimes du génocide. Il est inconcevable que le Parlement européen permette à un groupe autoproclamé de réviser l'histoire du génocide. **L'Europe ne peut condamner le révisionnisme d'un génocide et encourager ce délit dans un autre cas.**

Pour toutes ces raisons, **le CDCA Europe fait appel à toutes les forces démocratiques européennes afin d'amender le rapport Lamassoure en confirmant ses décisions précédentes, demandant à la Turquie de reconnaître le génocide et de normaliser ses relations avec l'Arménie**, en vue de son adoption lors de la session du Parlement européen du 22 au 25 octobre 2001.

C.D.C.A. EUROPE

Bruxelles,

le 11 octobre 2001

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ»

(ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ – ԱԶԳԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)

Հեղինակ՝ Արամ Սարգսեան
Երեւան – 1999

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

Հեղինակը կը հաւաստիացնէ, թէ Հայ Եկեղեցին միշտ ալ դրական ու շինիչ մասնակցութիւն բերած է միջ – եկեղեցական յարաբերութեանց կամ շարժումներու: Ան անդամ է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին՝ 1962-էն *ի վեր: Դժբախտաբար սակայն,* «էքիւմենիկ շարժումը առայժմ շօշափելի արդիւնքներ չի տուել, որովհետեւ եկեղեցիները համաձայնութեան են եկել միայն ապակրօնացման դէմ միասնական պայքարի անհրաժեշտութեան եւ փոխադարձ հանդիպումների կարեւորութեան հարցում»: *Յետոյ խօսելով էքիւմենիք շարժման մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի ծաւալած աշխոյժ գործունէութեան մասին, անօրինակ (եւ անհամոզիչ) զիջումներ կը վերագրէ անոր ու կը գրէ.* - «Որպէս էքիւմենիկ շարժման նախանձախնդիր, Գարեգին Ա. Կաթողիկոսն այնպիսի համարձակ քայլեր է կատարում, այնպիսի զիջումների գնում, որ չի կատարել իր նախորդներից եւ ոչ մէկը: Զիջումներ են կատարւում մասնաւորապէս քրիստոսաբանական հարցերում, որոնք դարեր շարունակ Հայ եւ կաթոլիկ եկեղեցիների փոխադարձ թշնամանքի պատճառ են եղել» (էջ 34):

Բացատրելու առթիւ մեր եկեղեցւոյ կազմակերպական կառոյցը, Ա. Սարգսեան նախ կը ճշդէ անոր տեղը՝ քրիստոնեայ եկեղեցիներու ընտանիքին մէջ, յետոյ բացատրութիւններ կու տայ Նուիրապետական Աթոռներու մասին, հուսկ յանդելու համար 1956–*ի եկեղեցական ծանօթ տագնապին, որուն պատճառ ցոյց կը տրուին քաղաքական ախորժակներ.* «Հայ եկեղեցու պառակտումը երկու համակարգերի (սոցիալիզմ եւ կապիտալիզմ) հակամարտութեան, քաղաքական կողմնորոշումների արդիւնք էր, որին, ցաւօք սրտի, կուլ գնացին մեր ազգային կուսակցութիւնները, կաթողիկոսական երկու Աթոռները, առանձին բարձրաստիճան եկեղեցական գործիչներ: Մնացածը այս ամէնի հետեւանքն է:

Սփիւռքի որոշ շրջանակներ հովանաւորելով Անթիլիասին, փորձեցին իրականացնել «Սփիւռքն առանց էջմիածնի» քաղաքականութիւնը, որի հետեւանքով սփիւռքի հայ հասարակութիւնը պառակտուեց "էջմիածնականներ"ի եւ «անթիլիասականներ»ի: Տասնամեակներ տեւող փոխադարձ քննադատութիւններն ու թշնամանքը հարուածեցին հայապահպանութեան գործին, վարկաբեկեցին եկեղեցուն» (էջ 42 – 43):

Շնորհալիէն, Տաթեւացիէն եւ եկեղեցւոյ Հայրերէն կատարուած դիպուկ մէջբերումներով՝ ընդհանուր գաղափար մը տրուած է նաեւ Հայ Եկեղեցւոյ դաւանական հիմնական տեսութիւններուն մասին (օրինակ՝ Ս. Երրորդութեան բանական ըմբռնումը, որ բաւական բարդ է...): Ա. Սարգսեան կրօնագիտական այս հարցերուն նկատմամբ ունի խրապաշտ մերձեցում մը, այնքան որ՝ առանձին բացատրելէ ետք «միաբնակ» ու «երկաբնակ» գաղափարախօսութիւնները, իրաւամբ կը յանգի այն համոզումին որ «դժուար է ասել, թէ ինչո՞վ է մեր միաբնակութիւնը տարբերւում կաթոլիկ եւ ուղղափառ երկաբնակութիւնից» (էջ 51): *Այս եզրայանգումէն մեկնելով ալ, մտածումի կ'առաջնորդէ հեղինակին այն տեսակէտը, թէ* «կրօնական տեսանկիւնից Հայ եկեղեցին ոչինչ չէր կորցնի, եթէ ընդունէր երկաբնակութիւնը»:

Ի դէպ, այս առընչութեամբ պէտք է յիշել, որ Քաղկեդոնը ընդունիլ տալու յունաց փորձերը Հայոց վրայ՝ հիմնականին մէջ հետապնդած են քաղաքական յետին նպատակներ: Օրմանեան Պատրիարք իր «Հայոց Եկեղեցին» *հատորին մէջ դիտել կու տայ որ* «յունական եկեղեցին ջանաց միշտ հայ եկեղեցւոյ վրայ տիրող դիրք մը ունենալ եւ զօրաւոր ազդեցութիւն գործածել: Աշխատեցաւ զայն հպատակեցնել, մինչեւ իսկ զայն իրեն մէջ ձուլել, եթէ գործը իր կամքէն կախում ունենար եւ իր կարողութեանց ներքեւ ըլլար» (*տե՛ս Նշեալ հատորը, Ե. տպագրութիւն*, 1952, *Անթիլիաս, էջ* 50):

Միւս կողմէ սակայն, Ա. Սարգսեան, իբրեւ պատմական հակադիր օրինակ, կը յիշէ վրացական եկեղեցւոյ պարագան, որ 608–*ին խզուելով Հայ եկեղեցիէն՝ կ'ընդունէր քաղկեդոնեան երկաբնակութիւնը, քաղաքական ամպհովանի մը ապահովելով իր տկար երկրին, յանձին Բիւզանդիոնի: Այս առթիւ ալ Օրմանեան կը գրէր, որ* «այս բաժանումը վերջնովերջ ձախող հետեւանք պիտի ունենար վրաց եկեղեցւոյն համար. որովհետեւ երբոր իննետասաներորդ դարուն սկիզբը ռուսական տիրապետութիւնը տարածուեցաւ Կովկասի վրայ, վրաց ազգային եկեղեցին այլեւս առանձին գոյութեան նշանակութիւնը կորսնցուց, եւ միեւնոյն դաւանութեան եւ սկզբունքներուն պատճառով Վրաց եկեղեցին ընկճեցաւ եւ ձուլուեցաւ Ռուսաց եկեղեցւոյն հետ» (*տե՛ս նոյնը, էջ* 37): *Մինչդեռ Ա. Սարգսեան նկատել կու տայ որ երկաբնակութեան ընդունումով* «վրաց ազգի ձուլման վտանգն աւելի մեծ չի եղել նոյնիսկ 1801-1943 թթ., երբ եկեղեցին կորցրել էր ինքնուրոյնութիւնը: Աւելին, ի տարբերութիւն մեզ, վրացիները քաղաքական կիսանկախ վիճակ, թագաւորութիւն կարողացան պահպանել մինչեւ ռուսական տիրապետութեան հաստատումը» (էջ 52): *Պատմական լուրջ հարցեր են ասոնք, որոնց վրայ կ'արժէր կարկինը լայն բանալ ու քննարկել զանոնք բազմակողմանիօրէն:*

Հետաքրքրական տեսութիւններ ամփոփուած են «Հայ Եկեղեցին եւ արդիականութիւնը» *գլուխին տակ ալ* (էջ 66 – 99): *Այս նիւթին շուրջ կը յիշենք կարդացած ըլլալ յագեցնող էջեր՝ Բաբգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանի գրչով (տե՛ս վերջնոյս* «Հայ Եկեղեցին», *Երուսաղէմ,* 1930): *Այստեղ, առանձին սեւեռումի ենթարկուած են կրօն - գիտութիւն առընչութեան այլազան երեսները: Ու բացատրելու համար՝ թէ ի՞նչպէս կը դիտէ ժամանակակից Հայ եկեղեցին գիտութեան յառաջընթացը ու երբեք չի հակադրեր զայն կրօնին, Արամ Սարգսեան երկու բացուցական մէջբերումներ կը կատարէ Վազգէն Ա. Կաթողիկոսին ելոյթներէն.*

- «Գիտութեան նուաճումներու ընթացքը կարելի չէ կասեցնել: Մարդկային իմացական հանճարը օրինաչափ կերպով դէպի յառաջ պիտի ընթանայ, գիտութեան բացած նոր ճանապարհներով: Կը մնայ որ մարդիկ եւ ժողովուրդներ, իրենց բարոյական հանճարով ետ չմնան գիտութեան յառաջընթացքէն, չդառնան գերիները մեքենայից եւ նիւթի սանձազերծուած ուժերուն: Արմսթրոնգի քայլը պէտք է կատարուի նաեւ մարդկային հոգեբարոյական տիեզերքին մէջ»:

- «Գիտութիւնը ինքը ուրիշ բան չէ, եթէ ոչ մարդկային մտքի թռիչքը, կարողութիւնը՝ յայտնաբերելու բնութեան օրէնքները եւ կիրառելու դրանք մարդկային կեանքի բարօրութեան համար: Իսկ նիւթական բնութիւնը իր բոլոր օրինաչափութիւններով անբաժան մասն է կազմում աստուածային արարչագործութեան, եւ հետեւաբար մեր օրերի գիտութեան յայտնաբերումներով՝ առաւել պայծառանում է փառքը Աստուծոյ»:

Սեւեռումի ենթարկուած այլ հարց մըն է նաեւ կրօն - բարոյական արժէքներ *աղերսը: Հեղինակը չի բաժներ այն տարածուն համոզումը, թէ* «անկրօնականութիւնը նոյնանում է անբարոյականութեան հետ»: *Իր վերլուծումներուն եզրայանգումն այն է որ՝* «բարոյականութեան հիմքը կրօնը չէ, եւ ոչ էլ Աստուած է պայմանաւորում բարոյականութիւնը: Հետեւաբար, սերունդների դաստիարակութեան գործում կրօնին բացառիկ դեր վերագրելը, նրա դերի անհարկի բարձրացում է, եւ փոխարէնը, փիլիսոփայական, բարոյահոգեբանական, մշակութային - արժէքային համակարգերի, եւ վերջին հաշւով, աշխարհիկ հումանիզմի դերի նսեմացում: Ճիշդ չէ ծայրայեղութեան մէջ ընկնելով ընդհանրապէս մերժել կրօնի բարոյական բարերար ազդեցութիւնը, բայց ճիշդ չէ նաեւ այդ ազդեցութեան բացարձակացումը» (էջ 87/88): *Ու ճշդելու առթիւ կրօնքին դերը՝ մարդանհատին բարոյական կերտումին մէջ, Ա. Սարգսեան կը գրէ.*

«Ոչ թէ կրօնական զգացմունքներն են մարդուն լաւը դարձնում, այլ՝ ազգի, հայրենիքի, մարդկանց նկատմամբ սեփական պարտքի ու պատասխանատուութեան զգացումը: Դա է պատճառը, որ ինչպէս հաւատացեալների, այնպէս էլ անհաւատացեալների միջավայրում եղել են ու կան հոգեկան բարձր յատկանիշներ ունեցող եւ հոգեզուրկ անձնաւորութիւններ: Եւ դա բնական է, որովհետեւ բարոյականութեան եւ անբարոյականութեան սահմանները չեն համընկնում կրօնական ու ապակրօն գիտակցութեան սահմաններին: Կրօնը մարդու հոգեւոր կեանքի միակ հնարաւոր ձեւը չէ: Աստուծոյ հաւատի վրայ յենուած բարոյականութեան կողքին, գոյութիւն ունի նաեւ աշխարհիկ հումանիզմի վրայ յենուած ապակրօն բարոյականութիւն: Երկուսի խնդիրն էլ անբարոյականութեան, բարոյական անկման դէմ պայքարելն է» (էջ (89):

Ի դէպ, այս տեսութեան զուգահեռ գաղափար մը կ'արտայայտէր նաեւ, վերջերս, պոլսահայ գրագէտ ու արձակագիր Ռ. Հատտէճեան, որ Հայաստանի քրիստոնէացման 1700-*ամեակին առթիւ իր ստորագրած երկարաշունչ ուսանելի մէկ յօդուածաշարքին մէջ կը վերլուծէր* ՀԱՅ ԸԼԼԱԼՈՒ *եւ* ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ *ըլլալու գոյգ գիտակցութիւնները, համոզում յայտնելով որ հայ քրիստոնեայ ըլլալու գիտակցութիւնը անպայման կապ չունի եկեղեցի յաճախելու հետ, ինչպէս որ եկեղեցի յաճախելն ալ անպայման կապ չունի հայ քրիստոնեայ ըլլալու լրիւ գիտակցութեան հետ...: Ու կը գրէր.*

«Պէտք է ըսենք որ հայկական պատկանելիութիւնը ամբողջական կ'ըլլայ այն ատեն միայն, երբ հայ մարդը ինքզինք միաժամանակ կը զգայ թէ՛ որպէս Հայ, թէ՛ որպէս Հայ Քրիստոնեայ: Երկուքը զիրար պէտք է ամբողջացնեն հայ մարդուն ինքնութեան մէջ: Ասոր համար ալ բնաւ պայման չէ որ ան կանոնաւոր կերպով եկեղեցի յաճախէ, եկեղեցական արարողութիւններու ներկայ գտնուի, սուրբ հաղորդութիւն ստանայ, աղօթէ: Պէտք համարձակինք ըսել որ՝ մարդ առանց եկեղեցիի կանոնաւոր յաճախորդ մը ըլլալու ալ կրնայ ունենալ Հայ Քրիստոնեայ ըլլալու գիտակցութիւնը: Ան եկեղեցի չերթար, բայց գիտէ որ ինք հայ քրիստոնեայ է, գիտէ նաեւ թէ ինչ կը նշանակէ Հայ Քրիստոնեայ ըլլալ: Գիտէ որ Հայ Քրիստոնեայ ըլլալու գիտակցութիւնը կարեւոր համեմ մըն է իր հայկական ինքնութեան մէջ» (*տես* «Մարմարա» *օրաթերթ*, 2001, *Յունիս* 5):

Հատորին վերջին գլուխին մէջ՝ ամփոփուած կը գտնենք Հայ Եկեղեցւոյ ազգային դերակատարութեան մասին թեր ու դէմ տեսակէտներ, որոնք կը պատասխանեն հետեւեալ հիմնական հարցումին. «ինչո՞վ եւ ի՞նչքանով է եկեղեցին նպաստել կամ խոչընդոտել հայ ժողովրդի գոյատեւմանն ու առաջադիմութեանը»: *Այդ տեսակէտները տրուած են գրեթէ առանց հեղինակային միջամտութեան: Եւ այս դիտաւորեալ կրաւորականութիւնը խթան մըն է թերեւս՝ որ իւրաքանչիւր ընթերցող ի՛նք պատասխանէ վերոյիշեալ հարցումին ու սեփական դատումով ճշդէ տեղը Հայ Եկեղեցիին՝ վերջին* 17 *դարերու պատմութեան խարիսխին վրայ:*

Հալէպ

ԱՐՈՒԵՍՏ

«ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆՆԵՐԸ»

ԽՏԱՑԵԱԼ ՍԱԼԻԿԸ

Բժիշկ՝
ԼԵՒՈՆ ՄՈՄՃԵԱՆ

Քաջ գիտնալով այսօրուան հայ մեներգիչներու երաժշտական կասկածելի ճաշակ ու արժէք ներկայացնող երգերը, որոնք՝ ողողելով հրապարակը, կ'արժեզրկեն հայ երգը, անկասկած որ բացառիկ կարեւորութիւն ու տարողութիւն կը ստանայ Մկրտիչ Պօղոսեանի մեզի ընծայած այս ամփոփ սալիկը:

Անվերապահօրէն իր տեսակին մէջ միակն է՝ ոչ միայն գեղարուեստական հարուստ ծրագրով եւ բարձրաճաշակ երգերով, այլ նաեւ իր գաղափարի յղացումով, իր հրապուրիչ զանազանութիւններով:

Արդարեւ Սիփան - Կոմիտաս երգչախումբը գեղեցիկ միտքը ունեցած է լոյս ընծայել՝ ի մի հաւաքելով երգիչին արձանագրած եւ հրատարակուած ու նաեւ քանի մը ոչ հրատարակուած երգերը:

Ունկնդիրը ոչ մէկ ակնթարթ պիտի փափաքի ընդհատել լսելու հաճոյքը, մեներգիչին տարիներու ընթացքին ժողովուրդին շռայլօրէն նուիրած մեծ վայելք ունեցող արձանագրութիւնները, մանաւանդ անոր մասնակից եղող, դաշնակի, համանուագախումբի, երգչախումբի հետ մեկնաբանութիւններով փունջ մը սիրուած հայ գոհար երգերէն:

Մանուկ հասակէն՝ Մկրտիչ Պօղոսեան սիրած է երգել: Առաջին անգամ երգած է Թէաթրը տը լա Կէթէ ներկայացման մը ընթացքին, տակաւին զինուորական ծառայութեան շրջանին, երաժիշտ Աւետիս Մեսումենցի ղեկավարութեան տակ: 1955-*ին մաս կազմած է Սիփան - Կոմիտաս երգչախումբին եւ* 1956-*ին վերոյիշեալ խումբին հետ մասնակցած է* 3ème Congrès international de la musique sacrée *Փալէ տը Շայոյի մէջ, ստանձնելով մեներգիչի բաժին մը:*

Պէտք է խոստովանիմ թէ ընդհանրապէս մօտէն ճանչցողը չի տեսներ ամենաէականը, ամենայատկանշականը եւ հակում կ'ունենայ կորսուելու մանրամասնութիւններուն մէջ: Սակայն առանց տարակուսանքի՝ այս սալիկին դրական ընկալումը՝ պտուղն է հրաշալի համագործակցութեան մը, տաղանդաւոր երաժիշտ Կարպիս Աֆրիկեանի եւ շնորհալի մեներգիչին միջեւ:

Մկրտիչ Պօղոսեանի երաժշտական դաստիարակութեան ուսուցիչը եղած է Կարպիս Աֆրիկեան, որ ջանք ու եռանդ չէ խնայած: Իր խորհուրդներով՝ Մկրտիչ Պօղոսեան մնաց զուտ հայկական հոգեւոր ու դասական դասակարգին մէջ: Շնորհիւ անոր, ոչ արհեստավարժ Պօղոսեան, երգեց մաքուր, գերազանց նրբազգացութեամբ, մեկնաբանեց ստեղծագործութիւններ ճշմարիտ ու անկեղծ եղանակով: Աֆրիկեան՝ օժտուած արտակարգ երաժշտական բնազդով եւ գիտելիքներով, հմուտ ու հոգատար զգացումներով, յղկեց, հղկեց երգիչին, անոր աստուածատուր բնածին տաղանդին մէջ պահուած կարողութիւնները արտահանեց, լոյսի բերաւ, առանց մոռնալու որ կար թէպէտեւ Մկրտիչ Պօղոսեանի մէջ, գերզգայուն սեփական ներքին յատկութիւնը:

Մկրտիչ Պօղոսեան, ամբողջ էութեամբ բարութիւն է, հետեւաբար անոր երգը բարի է, ազնիւ է: Ան կ'երգէ ինչպէս իր կեցուածքը պարզ, ոչ բռնազբօսիկ, միշտ բնական, հեռու երգչային որոշ «խորամանկութիւններ»ու: Ունի գեղեցիկ հնչերանգ, ճկուն ձայն, որուն կը տիրապետէ սրտաբաց:

Խաչատուր Տարոնացիի «Խորհուրդ խորին» *Ս. Պատարագի հանդերձի շարականը՝ Մկրտիչ Պօղոսեան կը մեկնաբանէ ընկերակցութեամբ արական խումբին, Կոմիտասի գեղեցիկ մշակումով: Այս շարականին մէջ կայ քնքշութիւն, թախիծ, խանդավառութիւն եւ աղերս: Հոս երգիչի ձայնը հետզհետէ վեհանալով եւ որուն արական երգչախումբը կու գայ ալ աւելի արժեւորելու անոր իւրայատուկ ձայնը, ներդաշնակ զարգացումով*

եւ զմայլելիօրէն կը յառաջանայ դէպի «անհաս անըսկիզբն» գագաթնակէտը, ապա հանդարտօրէն աւարտելու համար:

Կոմիտասի «Ով է որպէս» սրբասացութիւնը - յինանց եւ խաչի - որուն գողտրիկ երգչախմբային նուագակցութիւնը պատրաստած է Կարպիս Ափրիկեան, պարզապէս ձայն պահելու նման, կը սկսի մեղմօրէն, զգացումի յաջող արտայայտչականութեամբ: «Աստուած մեր»ը փշաքաղող, սրտաբաց եւ ուժեղ դէպի երկինք բարձրացող, ապա կրկին աղաչական «խաչեցաւ վասն մեր»ով: «Եւ Յարեաւ»ը յանկարծ կը ժայթքի, հզօր եւ վեհագոյն, արական ձայներու նմանակումներով, որ միանալով մեներգողին, յաջող կամուրջ մը կը նետէ յաջորդող «հաւատարիմ եղեւ»ի՝ մեղմ ընկերակցութեամբ քառաձայն երգչախումբին, հասնելու համար շատ ուժգին (փորթիսիմօ) «Ընդ հրեշտակս երգեսցուք», սքանչելի երգչախմբային մեկնաբանութեամբ, կը ցնցէ ու մեծապէս կը տպաւորէ: Հակառակ անոր որ, բոլոր երաժշտական գիծերը զատ-զատ կ'իմանանք, անոնց ներդաշնակութիւնը պահուած է: «Սուրբ, Սուրբ»ով՝ խաղաղութեամբ կը մարին:

Այստեղ կ'ուզեմ մատնանշել գնահատելի մակարդակը ունեցող Կարպիս Ափրիկեանի «Հայ կրօնական երաժշտութեան կոմիտասի սալիկ»ը: Յիշողութեանս մէջ այսպիսի այլ արձանագրութիւն չեմ լսած եւ հետաքրքիր անհամբերութեամբ կը սպասեմ Հայաստանի երիտասարդ տաղանդաւոր ղեկավարներուն մեզի խոստացած Կոմիտաս վարդապետի պատարագի երկսեռ երգչախմբի արձանագրութիւններ՝ բ՞նչ եւ որո՞ւ փոխագրութիւններով (թրասքրիփսիոն):

Որքա՜ն փափաքելի է որ արական ձայնով՝ եկեղեցական երաժշտութեան երգեցողութիւնը՝ ունենար շօյող, թաւշային, նուրբ հնչողութիւն ունեցող Մկրտիչ Պօղոսեանի ոճը: Ան օժտուած է քնարական թէնոր ձայնով եւ հոգեզմայլ զարգացումով կը յարմարի մեր սրբազան եկեղեցական երգեցողութեան:

Ըստ Ռ. Աթայեանի, Կոմիտասի առաջին չորքէն առնուած «Հարսանեկան երգեր»ու փունջէն՝ «Այ հեւա սիրտս» ամուրիութեան «վերջը» արտայայտող երգը՝ Մկրտիչ Պօղոսեան կ'երգէ առանց զարդարանքի, կարճ, սակայն որքա՜ն խորապէս յուզիչ: Ինչպէս միշտ արական խումբը տպաւորիչ կերպով աւելի կ'արժեւորէ իր նրբօրէն հիւսող հնչողութիւն ունեցող իւրայատուկ ձայնը:

«Սան թուրի երգը» ուղիղ արձանագրութիւն դաշնակի ընկերակցութեամբ: Հոս Մկրտիչ Պօղոսեանի ձայնը կը ստանայ նոր գունաւորում եւ նոր փայլ:

Կանաչեանի «Պեինկօ»ն եւ Կոմիտասի «Առաւօտուն բարի լուս»ը միշտ հաճելի, հարուստ՝ շնորհիւ բազմաձայն երգչախումբի ներկայութեան:

«Անտունի» Մկրտիչ Պօղոսեան կը մեկնաբանէ անմահ Կոմիտասի ստեղծագործութեան մարգարիտը, Կարպիս Ափրիկեանի դաշնակի փգայուն եւ երանգներու ճշգրիտ ընկերակցութեամբ: Անտունին մաս կազմելով հայկական տխուր երգերուն, հիւսուած է անոնց վշտի հառաչանքներէն եւ արտացոլումն է անոնց ճակատագիրին:

Հոս երգիչին մաքուր ու լուսաւոր ձայնը՝ բարձր եւ հեզասահ է, մերթ լայն ու աղաչական, վեհ ու ազատ, կարծես կուգայ սիրտին եւ հոգիին խորքերէն, որոնք յատկանիշներն են կոմիտասեան երգերուն:

«Ալվարդի երազը» հոյակապ եւ ճարտար Կարպիս Ափրիկեանի ինքնատիպ նուագախմբագրութեամբ՝ ճոխացուցած է Կանաչեանի այս աղերսերգը: Մկրտիչ Պօղոսեան կ'երգէ ի յայտ բերելով ստեղծագործութեան խորութիւնը ու ժողովրդական մորմոքով թաթխուած նրբերանգները:

«Ցոլակ ջան» պարերգէն վերջ՝ կրկին Կոմիտաս իր «Լուսնակն անոյշ»ով նուագակցութեամբ համանուագախումբի եւ երգչախումբի: Նուրբ մեկնաբանութեամբ որ կը թարգմանէ երկին զգացական վերարտադրումը:

Այս առթիւ կը ցանկամ յայտնել որ Կարպիս Ափրիկեանի «Լուսնակն անոյշ»ի վերջին նուագախմբագրութիւնը շատ աւելի ծաւալուն գործ մըն է եւ աւելի յաջող, սակայն մեներգիչը ... Մկրտիչ Պօղոսեանը չէ՛:

«Պետոյի յիշատակին» ժողովրդական երգ:

Եթէ Քրիստափոր Կարա Մուրզա եղած է հայ բազմաձայնային երաժշտութեան դպրոցի հիմնադիրը, եւրոպականացնելով հայ երգը, Կարպիս Ափրիկեան կրնամ ըսել, իր կարգին դասականացուց հայ երգը, ժողովրդայինէն անցնելով նուագախմբային աւելի ճոխ ու ծաւալուն երկերու:

Այս ժողովրդական երգ-երաժշտութիւնը ապացոյցն է այն շատերէն՝ ուր խորունկ հասկացողութիւն ունեցող երաժիշտը, իր ստեղծագործ երեւակայութեամբ, վերածած է երկարաշունչ-պոէմա-ի՝ համանուագային դիւցազներգական վիպերգութեան փոքր գլուխ-գործոց մը, որուն ճաշակումը մեզ կը զարմացնէ եւ որ արժանի է յարմար առիթով մանրակրկիտ քննական վերլուծման:

Այս գործին մէջ կայ, տխրութիւն, յուզում, խոր ցասում, պայքարի զգացում եւ ապստամբողական ոգի: Մեղեդիին ոչ մէկ տունը կը պարունակէ նոյն մեկնաբանութիւնը, ստեղծելով սքանչելի գանազանութիւն: Երգչախումբի թաւ ձայները կ'արտայայտեն մշտական երկխօսութիւն մը մայր եղանակին հետ: Պոէման հետզհետէ կը ստանայ ծաւալ, հետեւելով երաժշտականօրէն՝ բանաստեղծութեան բնագրի իմաստին ու մեներգիչ Պօղոսեան, ողբերգական շեշտով, ուժով ու թախիծով «նա էլ ընկաւ վիրաւոր» կ'ալեկոծէ ու կը փոթորկէ հայու հոգին:

Կանաչեանի «Նանօր»էն, զոր գործին նոր մաս մը յօրինած եւ աւելցուցած է Ափրիկեան ու վերածած է մեծ գանթաթի, «Մշոյ սուլթան»ի բաժինը կը մեներգէ Մկրտիչ Պօղոսեան բացառիկ յաջողութեամբ, հանդարտ, յստակ, անբիծ, աղաչական, խնկաբոյր աղօթքի նման:

Եւ վերջապէս «Ջիւտրի երգով»ի հրդեհումներով կը ջերմացնէ մեր սրտերը ու կը փոխէ տրամադրութիւնները:

Կը խորհիմ որ նման խտացեալ սալիկ մը անհրաժեշտ էր թէ իր երգացանկին եւ թէ իր բարձրորակ կատարման համար: Ան արժանի է հետաքրքրելու, հարստացնելու ռեւէ երաժշտասէրի ձայնադարանը:

Շնորհաւորելի է Սիփան-Կոմիտաս երգչախումբի այս նախաձեռնութիւնը (*), անոր տաղանդաշատ ղեկավար Կարպիս Ափրիկեան եւ վերջապէս մեր լսողի սիրտը խոցող Մկրտիչ Պօղոսեանի ձայնը:

Բժ. Լ. Մ.

(*) «Առ ի սիրոյ, յարգանքի եւ մանաւանդ գնահատանքի արտայայտութիւն մը հանդէպ մեներգիչին»:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ՏԻՐԱԿԱԼՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Սեպտեմբեր 11-ի Նիւ-Եորքի եւ Ուաշինկթընի արարքները միջազգային լայն համախոհութեան մը ենթախորքին վրայ զետեղուած նոր պատերազմի մը մղեցին ԱՄՆ-ը: Այսուհանդերձ, Մեծն-Բրիտանիայէն զատ գրեթէ բոլոր համախոհները իրենց զօրակցութեան «եւ սակայն»ներ ալ կը կցեն: Կայ անշուշտ այդ ճակատին հակադիր կեցուածք ունեցողներու խումբը որ միայն թալիպաններու զօրակից երկիրներէ չի բաղկանար: Նոյնիսկ արեւմտեան ոստաններու մէջ, եթէ ոչ այդ զօրակցութեան, առնուազն պատերազմին ընդդիմացողներու բազմութիւններ հրապարակ կ'իջնեն, պահանջելով որ այլ լուծում գտնուի յանցաւորները պատժելու համար եւ կրակ չտեղայ անմեղ ու անճար ժողովուրդի մը գլխուն: Ժողովուրդ որուն կեանքի պայմանները յաճախ կը համեմատուին քարէ դարու մարդոց ունեցածին հետ:

Սեպտ. 11-ի ահաբեկչութեամբ ծայր առած ներկայի զարգացումներուն մասին մեկնաբանական, վերլուծական, քննադատական, եւլն. էջեր լոյս կը տեսնեն միջազգային մամուլին մէջ: Արձագանգներու առաջիններէն ուշագրաւ յօդուած մը հրատարակած է Ռուսաստանի Գրական Թերթը, «Լիտերատուրնայա Գազետա»ն: Ալ. Պանարինի ստորագրած ադարձակ վերլուծումէն հատուածներ առած է միջազգային մամուլէն քաղուածքի «Գուրիէ Էնթէրնասիոնալ» շաբաթաթերթը:

Յօդուածագիրը ահաբեկչական երբեւէ արարքներուն մէջ նախ կը մատնանշէ ջրամարտին յաղթանակած մեծ պետութեան մը համաշխարհային գերիշխանութեան տիրացումին դէմ արտայայտուած մերժումը: Այդ տիրութիւնը առանց հակակշռող ուժի մնացած է, աշխարհի նախկին հաւասարակշռութեան խախտումէն ի վեր: Եւ առանձնութիւնը պատճառ եղած է որ ան համաձայնութիւններ չյարգէ, միջազգային կազմակերպութիւններ արհամարհէ, մինչեւ իսկ միջամուխ ըլլայ իր գօտիի երկիրներուն ներքին գործերուն:

Ռուս գրողը հարց կու տայ թէ ի՛նչպէս կարելի է երեւակայել որ երբեք պիտի չհնչէ հաշուետուութեան ժամը, ի՛նչպէս պետութիւն մը կէթթոյական կեանք պարտադրելով մարդկութեան մեծագոյն մասին, յաւիտենապէս պիտի յաջողի անվտանգ ապրիլ բարգաւաճումի իր արուեստական ովասիսին մէջ, Ան կ'ըսէ. «Ժամանակէ մը ի վեր ԱՄՆ հակադրուած են աշխարհին, կոնակ դարձնելով Լիւմբէցներու մարդասիրական աւանդութիւններուն: Մարդկութեան այս բաժանումը՝ քաղաքակիրթ փոքրամասնութեան մը եւ այդ յատկանիշէն զուրկ մեծամասնութեան մը, «իրական» հաւատքի եւ մշակոյթի տէրերուն եւ չարերու, անբարեգրելի աւանդապաշտներու, արմատականներու միջեւ, ընտրեալ ցեղի մը վարդապետութիւնը կը յիշեցնէ»:

Համաշխարհայնացած տեղական ընտրանիներ համոզուած ըլլալով որ բարգաւաճումի բարիքները ամէնուն բաւարար չեն, հետաքրքրական կեցուածք մը որդեգրած են. անոնք որոշած են իրենց ճակատագիրը անջատել իրենց թշուառ ժողովուրդներուն ճակատագրէն ու միանալ յաղթականին, դառնալով անոր հովանաւորեալը եւ տեղական առաքելութիւններու կիրարկողը: Այս ձեւով, համաշխարհայնացումը ստեղծեց ընտրանիներու դասեր որոնք խուսափելով ազգային հակակշռի եւ համաձայնութեան համակարգերէն, համաշխարհային յաղթականին կառքին լծուած էին: Աշխարհի հարուստ կորիզը որուն ղեկավարն էին ԱՄՆ-ը, համոզուեցաւ որ կարելի էր պարտադրել միակողմանի այն բոլոր որոշումները որոնց մէջ ինք շահ ունէր: Այդ կորիզը այլեւս պէտք է սորվի որ մարդկութեան ճակատագիրը մէկ է եւ անոնք որոնք անընդունելի պայմաններ կը պարտադրեն ծայրամասիններուն, պէտք է սպասեն որ օր մը այս վերջիններուն ցաւն ու անյուսութիւնը ապտակի պէս իջնէ իրենց երեսին:

Թէքնոլոժիին ստեղծած քաղաքակրթութիւնը շատ փխրուն է զայրացած բազմութիւններու ովկէանոսով մը շրջապատուելու համար: Ան օրէնքը եւ պատշաճութիւնները յարգող յափրացած մարդոց փակ շրջանակին մէջ կը զարգանայ, բայց որպէս իսկական գրգռիչ ազդակ կը ներկայանայ այն բոլորին համար որոնք կորսնցնելիք ոչինչ ունին: Սխալ է ամերիկեան աշխարհաքաղաքական այն մօտեցումն ալ որ չափէն աւելի կը վստահի ամէնէն կատարելագործուած զէնքերուն, անտեսելով ընկերային պոռթկումի իրականութիւնը որ կրնայ համաշխարհային տարողութիւն ունենալ եւ ի յայտ գալ նաեւ անյոյս ահաբեկիչներու արարքներով: Կարծել որ դժգոհութեան ընկերային ուժը համաշխարհային վրէժի արարքներու պիտի չառաջնորդէ, կը նշանակէ ոչինչ հասկնալ մարդկային բնաւորութենէն եւ ներկայի աշխարհէն, կը գրէ ռուս յօդուածագիրը: Եթէ ծայրամասերու մարդիկը իրենց ընտրանիներէն խաբուած չըլլային, իրենց արդար զայրոյթը օրինաւոր ձեւով արտայայտուած կ'ըլլար: Սակայն, անոնք լքուած ըլլալով փակ կէթթոներու մէջ եւ ապրելով օրէնքի լուսանցքին մէջ, մղուած էին նոյն ձեւի միջոցներով, գլխաւորաբար ահաբեկչութեամբ արտայայտուելու:

Վերջին պատահարներով ամերիկացի ժողովուրդը իր բարօրութեան ու հանգստութեան կորուստով վճարեց արտաքին աշխարհին հանդէպ իր ղեկավարներուն անարժան կեցուածքը: Եւ այսուհետեւ միշտ այսպէս պիտի ըլլայ: Այդ պատճառով ալ համաշխարհայնացումի ներկային մէջ անհրաժեշտ է ժողովրդավար հակակշռի նոր համակարգեր ստեղծել: Ժամանակը կը պահանջէ որ ընտրանիները դառնան դէպի իրենց ժողովուրդները, նոյնիսկ աշխարհի մեծերուն հակադրուելու գնով: Այն ատեն միայն զիրենք ու զանգուածները, ինչպէս աշխարհի բարգաւաճ կեդրոններն ու անյուսութեան մատնուած ծայրամասերը բաժնող անդունդը կը դադրի օրէ օր լայննալէ: Արդէն այդ անդունդին մէջ կը գտնուին արմատները համաշխարհային քաոսին որ իր դէմքը ցոյց տուաւ Սեպտեմբեր 11-ի օրը:

ՔԱՂՀԱՆ

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

– Ինչ որ ալ ըլլայ, ինծի վերաբերեալ խնդիր մը չէ, - պատասխանեց Աբրահամ էֆէնտի, որ իր պաղարիւնութիւնը գտած էր, – ատ եղածը կ'երեւայ, որ յեղափոխականներու համար է:

– Ահաւասիկ հոդ է ձեր սխալը: Եղածը միմիայն յեղափոխականներուն համար չէ, այլ բոլոր Հայերուն, այս մարդոց միտքը շատ պէջ է, Աբրահա՛մ էֆէնտի, առիթէն օգտուելով կ'ուզեն կոր Հայերը ջախջախել, ցանկին մէջ միայն յեղափոխականներ չկան, իրա՛ւ է, որ անոնք ամէնէն առաջ գրուած են, բայց անոնցմէ ետքը ուրիշներ ալ կան, անանկ մարդիկ, որոնք ո՛չ թէ այս կամ այն կուսակցութեան չեն պատկանիր, այլ նոյնիսկ հակառակ են անոնց:

– Իրաւցնէ՞ դուն ցանկը տեսա՞ր:

– Զարմանալի բան, սո՞ւտ պիտի ըսեմ ձեզի, Աբրահա՛մ էֆէնտի, – գոչեց Ասատիկ վիրաւորուած շեշտով մը:

– Շա՞տ մարդ նշանակուած է ցանկին մէջ:

- 5-6 հազարը կ'անցնի, - պատասխանեց Ասատիկ հաստատ շեշտով մը:

– Վա՛յ սարսափելի, - գոչեց վաճառականը՝ այս անգամ իրապէս դող ելած:

– Եւ ի՛նչ տեսակ մարդիկ, խելքէ, միտքէ չանցած, - շարունակեց Ասատիկ, - մէջը կուսակցականը կայ, խմբագիրը կայ, վարժապետը կայ, կառավարական պաշտօնեան կայ, կիները անգամ կան, վաճառականներ կան:

- Վաճառականնե՞ր, - ընդմիջեց Աբրահամ էֆէնտի:

– Այո՛, վաճառականներ:

– Անոնք ի՞նչ յանցանք ունին:

– Ճիշդ ես ալ նոյն բանը հարցուցի Պէտրի պէյին, եւ պատասխանեց, որ անոնք ամէնէն վտանգաւորներն էին, որովհետեւ իրենց դրամովը ուժ կու տային յեղափոխականներուն: Ասկէ զատ, բուն խնդիրը ի՞նչ է, գիտե՞ս, Աբրահա՛մ էֆէնտի:

– Ի՞նչ է, – հարցուց:

- Կառավարութիւնը շատ պէջ աչքով կը նայի կոր Բարեգործական ընդհանուր միութեան վրայ, Պօղոս փաշան իրենց մեծագոյն թշնամին է այս միջոցիս, իսկ անոր հիմնած Բարեգործական միութիւնն ալ ամէնէն վտանգաւոր յեղափոխական կազմակերպութիւնը կը նկատեն: Այսպէս, այս Միութեան բոլոր անդամներուն անունը անցած է ցանկին մէջ:

- Ի՞նչ կ'ըսես:

- Եւ ճշմարիտը ըսեմ, Աբրահա՛մ էֆէնտի, ճիշդ ատոր համար եկայ ձեզի տեսնալու, որովհետեւ ձեր անունն ալ գրուած էր:

- Բայց ուրտեղէ՞ն իմացեր են իմ բարեգործականի անդամ ըլլալս:

- Ինչո՞ւ ասանկ միամիտ խօսքեր կ'ընէք, Աբրահամ էֆէնտի, անդամներու անունները իրենց ամսավճարներովը չէ՞ տպուած արդէն տետրակներու մէջ:

- Իրաւունք ունիս, - խոստովանեցաւ վաճառականը, - ի՛նչ անխոհեմութիւն, ես արդէն անդամ գրուիլ չէի ուզեր կոր ա՛, զոռով վրաս ինկան. Գաբրիէլ էֆէնտին մէկ կողմէ, տոքթոր Տաղաւարեանը միւս կողմէ, Հիւրմիւզ էֆէնտին, Ներսէս Օհանեան էֆէնտին, ես ի՛նչ գիտնամ, ամէնքն ալ վրաս ինկան, ես ալ մտածեցի, որ աղէկ բարեգործական բան մըն է, նոյնիսկ ըսին ինծի, որ յեղափոխութեան հետ բնաւ կապ չունի եւ նոյնիսկ Միութիւնը հակառակ է անոնց:

- Ատոնք բոլորն ալ ճիշդ են, բայց կառավարութիւնը առիթ կը փնտռէ կոր հայ վաճառականները ջախջախելու, եւ ասիկա պատրուակ մը համարած է:

- Դուն իմ անունս աչքովդ տեսա՞ր:

- Տեսայ, Աբրահա՛մ էֆէնտի, տեսայ, - ըսաւ Ասատիկ հառաչանք մը արձակելով:

- Աս ի՛նչ փորձանքի մէջ ինկանք, - գոչեց վաճառականը յուսահատ դէմքով մը:

(Շար. 81)

(Շար. Ա. էջէն)

նայ պատճառ ըլլալ ոճրափորձերու վերլուծման եթէ հաստատուի որ ան սպաննուած է խորայէլեան բանակին կողմէ։

***

Սուր քանավէճ մը ծագած է հեռատեսիլի կայաններու (Թէ - էՖ 1, Ֆրանս 2, Ֆրանս 3, Առթէ, էՄ 6 եւ էլ.Սէ.Ի) սփռուած մէկ նկարագրութեան մասին, որ կը ներկայացնէր Հիւսիսի զինակցութեան յառաջխաղացումը։ Գանալ Փլիւսի ըրագրողը խրար անցած է, որովհետեւ արդէն տեսած էր այդ նկարները... 1997-ին։

***

Փարիզի եւ այլ քաղաքներու մէջ, ցոյցեր եղան Հոկտեմբեր 11-ին, «անհարեկչութեան եւ պատերազմի տրամաբանութեան դէմ»։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԻ Նախագահը Շեւարնածէ ըսպառնաց արտաքսել Աբխազիոյ խաղաղութեան ռուսական ուժերը եւ նոր գործեր ղրկեց կուռի շրջանը, Գոտոր։ Այս որոշումը «դէպի պատերազմ քայլ մը» նկատուեցաւ աբխազ անջատողականներուն կողմէ։

ՓԵՐՓԻՆԵԱՆԻ ՄԷՋ, Հոկտեմբեր 11-ին տեղի ունեցաւ ֆրանքեւսպանական տարեկան վեհաժողովը։ Համակեցութեան փոքրիկ անհամութիւն մըն ալ ծագեցաւ այս առթիւ, երբ Շիրաք եւ Ժոսփէն ժամանեցին եւ առաջինը ողջունուեցաւ ջերմութեամբ եւ համակրական բացագանչութիւններով։ Ջախին համար էՌ - Փէ - էՌ-ի մէկ կարգադրութիւնն էր, ինչ որ, անշուշտ, էՌ - Փէ - էՌ-ը կը մերժէ ընդունիլ։ Ելոյթ ունենալով, Շիրաք անդրադարձաւ ահաբեկչութեան եւ չեշտեց. - «Ահաբեկիչները ոճրագործներ են։ Անպատկառութեամբ կ՚ողջունեն Սեպտեմբեր 11-ի ողբերգութիւնը։ Կը պաշտպանեն ոճիրի եւ արեան օրէնքը, կոյր սարսափը»։

ԹՈՒՐՔԻՈՅ դրամահոսքը 70%-ի հասած է Սեպտեմբերին, մինչ դրամը 55% արժեզրկուած է տոլարի նկատմամբ։ Միջազգային դրամական հիմնարկին 15,3 միլիառ տոլարի յատկացումը չէ բաւած կասեցնելու անկումը։

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՊԷԼ մրցանակին արժանացաւ Վ. Նէփօլ, ծագումով հընդիկ բրիտանացի գրագէտը, ծնած Թրինիթէ 1932-ին։ Հեղինակ է շուրջ 30 հատորներու։ Իր ուրախութիւնը յայտնած է ըսելով. - «Շատ ուրախ եմ։ Անսպասելի դրուատիք մըն է։ Մեծարանք մըն է Անգլիոյ համար, երկիրս եւ Հնդկաստանի, նախնեաց երկիրս»։

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

UN EVENEMENT EN FRANCE :

Les mots clés des affaires en arménien

L'association «Actions pour promouvoir le français des affaires (APFA)», placée sous le patronage de la Délégation générale à la langue fançaise, et présidée par Monsieur Jean-Marcel LAUGINIE a décidé d'inclure l'arménien dans la prochaine édition de son dépliant «Les MOTS-CLES DES AFFAIRES». Notre langue sera la 27ème langue retenue dans cette publication particulièrement utile dans les relations d'affaires.

En tant que membre de l'APFA, j'ai asisté à la volonté de son Président de diffuser notre langue. Nous lui devons un grand hommage.

Cette brochure, vendue au prix de ... constitue par ailleurs un excellent cadeau d'entreprise. Pour l'obtenir, vous pouvez vous adresser directement à l'APFA, 278, rue Sandillon — 45590 SAINT-CYR-EN-VAL.

Nadia ANTONIN
Présidente du groupe Francisation EDIFACT d'EDIFRANCE
Présidente du groupe «Terminologie» du Comité français d'organisation et de normalisation bancaires.

ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակին առիթով, Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ կազմակերպուած դասախօսութեանց երկրորդը տեղի կ'ունենայ Երեքշաբթի, Հոկտեմբեր 16, ժամը 20.30-ին, Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ Կրթարանի սրահին մէջ։

Կը դասախօսէ՝
ՆԵՐՍԷՀ Ծ. ՎՐԴ. ԲԱՊՈՒՃԵԱՆ

«Ե. դարու թարգմանիչ վարդապետներու հոգեւոր եւ մշակութային ժառանգութիւնը» նիւթին շուրջ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայ Աղքատախնամ Ընկերակցութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները Ցուցուարէն Ցուլիս ամիսներուն. –

Տիկին Տիք Կիւլպէնկեան, Տիկին Մարի - Լուիզ Պօյաճեան, Տիկին Նուարդ Պօյաճեան, Տիկին Ժորժէթ Պօյաճեան, Տէր եւ Տիկին Կարապետեան, Տիկին Նուարդ Պօյաճեան, Տիկին Մարի Պօյաճեան 500-ական Ֆր., Տիկին Լիւսի Շերոյեան 400 ֆրանք, Պր. Ֆիլիփ Սեմերճեան 300 Ֆր., Պր. Շարլ Մուշեղեան 228,58, Տէր եւ Տիկին Սալմասլեան 200 Ֆր., Տիկին Նատիա Ֆէր 155 Ֆր., Պր. Կարպիս Կէօվճեան, Ա. Մելտոնեան, Տիկին Սոնժա Մելտոնեան 100-ական Ֆր.։

Centre Culturel
SAINT MESROB
A PARIS

Conférence - Débat

avec projection de diapositives
sur le thème :
AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par
JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle

et

VINCENT TARAKDJIAN
Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris V^e^
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre - Cocktail —

CENTRE CULTUREL
SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN

**Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN**

***

Rouben ELBAKIAN

**Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN**

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91 77 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Անիէռի Ակնունի մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը Երկուշաբթի, Հոկտեմբեր 15, ժամը 20.45-ին

Centre Administratif d'Asnières

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

La Section «HELEN PUZANT» d'Alfortville
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec l'Orchestre GAIDZAG'S
et attraction surprise...

Rensignements et réservations :
☎ 01 43 76 55 89

— • —

"NAVASART" à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30

— Billets : 100 F. et 120 F.
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— • —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Diner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— **01. 42. 36. 33. 73** (la journée)
— **01. 46. 58. 03. 17** (le soir)

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR
du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le dîner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre MASSIS»

l'UGAB invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : «Le Val des Neiges»
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :

au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 16
MARDI
16 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·275
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
77e ANNEE — N° 20·275

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Պաշտպանութեան նախարարը Ս· Սարգսեան լրատուներու ներկայացուցիչներուն հետ ունեցած հանդիպումին (Հոկտ· 11) պատասխանելով հարցումներու, լայնօրէն արտայայտուած է Ղարաբաղի մասին: Ըսած է թէ Հայաստանի ամէն քաղաքացի եթէ փափաքի կրնայ ծառայել ղարաբաղեան բանակին մէջ, քանի որ երկրին Սահմանադրութիւնը արգելք չի դներ այլ երկիրներու բանակին մէջ ծառայելու: Ղարաբաղի հսկողութիւնը կատարողը Ղարաբաղի իշխանութիւններն են: Հայաստան Ղարաբաղի ապահովութեան երաշխաւորն է եւ «երեսպաշտութիւն» կ'ըլլայ պնդել թէ կապ չունի Ղարաբաղի հետ:

Ս· Սարգսեան տկար հաւանականութիւն նկատած է ռազմական գործողութիւններու նոր սկիզբ մը· համոզում յայտնած է որ հայկական կողմը նախաձեռնարկ չըլլար նման բանի· սակայն ե. թէ անոնք սկսին, կրնայ կարճ ատենէն աւարտել զանոնք:

Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման մասին խօսելով, նախարարը ըսած է թէ ընդհանուր պետութեան մասին խօսք չէ եղած Փարիզի, կամ Քի Ուէսթի հանդիպումներուն: Կրկնած է թէ Ազրբէյճան պէտք է ընդունի Ղարաբաղի անկախութիւնը, Ղարաբաղի ինքնավար մարզի սահմաններուն հետ Հայաստանի հետ ցամաքի կապով:

***

ՄԻՋԻՆԱՍԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Պաշտպանութեան նախարար Ս· Սարգսեան որ նոյն ատեն Ազգ· Ապահովութեան Խորհուրդին քարտուղարն է, Հոկտեմբեր 8-9 Տաճիկստանի մայրաքաղաքին մէջ մասնակցած է ՀԱՊ-ի Ապահովութեան Խորհուրդի քարտուղարներու արտակարգ նիստին: Վերադարձին պատասխանելով լրագրողներու, ան ըսած է թէ այսօր դժուար է ենթադրել թէ Հայաստան ինչ մասնակցութիւն կ'ունենայ միջինասիական պատերազմ մը բռնկելու պարագային: Նախարարը չի կարծեր որ զօրքով մասնակցութեան հարց ծագի, «բայց ռազմատեխնիկական համագործակցութեան հարցեր անպայման կ'առաջանան»:

Պատասխանելով Վրաստանի անցքերուն առնչուած հարցումի մը, Ս· Սարգսեան ըսած է թէ ամէն պարագայի մէջ Վրաստանի ապակայունացումը վնաս է Հայաստանին նոյնիսկ եթէ ան չտարածուի ամբողջ շրջանին· Վրաստանի ապակայունացումը անմիջապէս կ'ազդէ Հայաստանի տնտեսութեան եւ այլ ոլորտներուն:

ՀԱՊ-ի յիշեալ ժողովին նիւթ եղած է միջպետական հակահաբեկչական մարմին մը ստեղծելու հարցը: Այդ մարմինը ուր ամէն պետութիւն մէկ անդամ պիտի ունենայ, պիտի համադրէ հակահաբեկչական գործողութիւնները:

***

ՃԱՏՐԱԿ
ԱՌԱՋԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Հոկտ· 12-ին, Օփերայի շէնքին մէջ հանդիսաւոր բացումէն ետք տեղի ունեցած են ճատրակի աշխարհի խմբային 5-րդ ախոյենութեան առաջին հանդիպումները: Հայաստանի հաւաքականը 4-0 յաղթած է Իրանի խաղացողներուն: Հանդէս եկած են Վլ· Յակոբեան, Ս· Լպուտեան, Ա· Անաստասեան եւ Ա· Մինասեան: Օրուան միւս մրցումները տըւած են հետեւեալ արդիւնքները· Գուպա - Ուզբեկստան 1,5 - 2,5, Ռուսաստան - Հունգարիա 3 - 1, Գերմանիա - Ուկրանիա 2 - 2:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՊՈՒՇ ԶՈՒԶԵՐ ԲԱՆԱԿՑԻԼ

ԱՇԽԱՐՏԻ 12 ՊԱՐԱԳԱՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ամերիկեան ռումբերը կը շարունակեն տեղալ Աֆղանիստանի վրայ, Պուշ դադար մը տուաւ Ուրբաթ օր (Հոկտ· 12) որ մահմետականներուն աղօթքի օրն է եւ ուզեց յարգել, ապա ռմբակոծումները վերսկսան եւ Հոկտ· 13-ին, ԱՄՆ-ու Պաշտպանութեան նախարարութիւնը խոստովանեցաւ որ 900 քիլօ կշռող ռումբ մը «ճամբան սխալած է» եւ ինկած է Քապուլի օդակայանին մօտ, բնակութեան թաղամասի մը վրայ: Թալիպաններն ալ յայտարարած են որ Ճալալապատի մօտ գիւղի մը մէջ 200 գիւղացիներ զոհ գացած են ռումբերու եւ կան բազմաթիւ վիրաւորներ: Այսուհանդերձ Նախագահ Պուշ գոհ է, ապահովութիւն տուաւ որ «ամերիկեան ուժերը հասած են առաջին շրջանի նպատակներուն: Աֆղանիստանի ներսը վնասեցինք ահաբեկչական ցանցին: Տկարացուցինք Թալիպաններու զինեալ կարողութիւնները եւ քանդեցինք իրենց հակօդային պաշտպանութիւնները»:

Կիրակի օր, Թալիպաններու գերագոյն առաջնորդ՝ Մոլլա Օմարի աջ բազուկը՝ Ապտիւլ Քապիր յայտարարած է որ կարելի է նախատեսել Պէն Լատէնի յանձնումը երրորդ երկրի մը «որ ոչ Միացեալ - Նահանգներու ազդեցութեան տակ ըլլայ ոչ ալ Թալիպաններու մօտ», պահանջելով ուղղակի բանակցութիւններ Ամերիկայի հետ: Պուշ շատ կտրուկ կերպով պատասխանած է· «բանակցելիք բան չկայ: Գիտենք որ յանցաւոր է, յանձնեցէք»:

Ինչ կը վերաբերի Ալ Քաիտա շարժումին, զոր կը ղեկավարէ Պէն Լատէն, սպառնացած է ԱՄՆ-ու եւ Մեծն - Բրիտանիոյ, յայտնելով որ նոր անձնասպանական ոճրափորձեր պիտի գործուին: «Օդանաւերու փոթորիկը պիտի չհանդարտի, եթէ Աստուած ուզէ», կը շեշտէ Ալ Քաիտա թելադրելով նաեւ մահմետականներուն որ, այս միջոցին օդանաւային ճամբորդութիւնները չկատարեն, շատ բարձր շէնքերու մէջ ալ չգտնուին:

***

Հակամերիկեան ցոյցերը կը տարածուին ամէն կողմ եւ յաճախ բուռն բնոյթ ունին: Փաքիստանի մէջ, ցուցարարները անընդունելի կը գտնեն որ օդակայան եւ հողամաս տրամադրուի Ամերիկացիներուն: Բայց, իսլամական երկիրներէն զատ, արեւմտեան պետութեանց մէջ ալ հակամերիկեան հոսանք մը կայ: 1999-ի Նոպէլեան գրական մրցանակի տէր՝ Կիւնթէր Կրաս խիստ կերպով կը քննադատէ Ամերիկան, դիտել տալով որ «ՄԻԱ-ն ալ, իր գործելակերպով, ահաբեկչական կազմակերպութիւն մը եղած է» ու կ'աւելցնէ «միայն Իսլամի ծայրայեղութիւնը չկայ, ամերիկացի Նախագահին բարիի ու չարի դասակարգերն ալ կրօնական ծայրայեղ հիմ մը ունին»: Ցոյցեր եղած են Պէրլին, ուր ոմանք չէին վարաներ թելադրելու որ ԱՄՆ արժանի էին պատահածին· «Հիրոշիմա, Նակազաքի, Վիէթնամ, Պաղտատ, Պելկրատ, Նիւ-Եորք, Ուաշինկթըն, սարսափը իր մեկնակէտին վերադառնայ», արձանագրուած է Համպուրկի բժիշկի մը ցուցադրած պաստառին վրայ: Ցոյցեր եղած են նաեւ Իտալիա ի նպաստ խաղաղութեան, 100 հազար հոգիի մասնակցութեամբ, որոնց կարգին Տիկին Տանիէլ Միթերան, նախկին վարչապետ Մասիմօ տ'Ալէմա եւ ուրիշներ:

Ընդհանուր ձեւով ամերիկեան այս ձեւի հակադարձութեան մը կողմնակիցները շատ չեն: Ժան - Ֆրանսուա Տընիօ դիտել կու տար Կիրակի օր (Եւրոպա 1, ձայնասփիւռի կայանէն) որ ռումբերը ոչ մէկ հարց լուծած են, Ժան - Ֆրանսուա Քահն, նոյն օրը, Ռիփոսթ յայտագրէն (հեռատեսիլի 5-րդ կայան) արդար գտնելով հանդերձ ամերիկեան հակազդեցութիւնը, ձեւը կը դատապարտէր եւ իր շաբաթաթերթին (Մառիան) կողքի խորագիրն ալ յստակ էր՝ «Սխալը», բարեփոխելով Թալլրանի մէկ խօսքը Նափոլէոնի Անկէնի դուքսի գնդակահարութեան առթիւ՝ «Ոճիրէն աւելի է, վեհափառ, սխալ մըն է»:

***

Միացեալ - Նահանգներու ամբողջ տարածքին ու նաեւ այլուր ածխախտի փսիքոզը կը տարածուի օրէ օր, նոյնիսկ ժամէ ժամ: Ամերիկայի մէջ, արդէն 12 պարագաներ երեւան ելած են, Նիւ - Եորք, Ֆլորիտա եւ Նեվատա, ցարդ մէկ հոգի մեռած է, ընդհանրապէս մանրէն (սպիտակ փոշի մը) կը ղրկուի նամակներու միջոցաւ եւ նախընտրաբար լրագրողներու: Ամերիկայէն դուրս ալ փսիքոզը ընդգրկած է տարածուիլ: Կիրակի օր, Հոկտեմբեր 14-ին Քանթըրպըրիի Եկեղեցին պարպուած է, գետինը սպիտակ փոշիի մը ներկայութեան պատճառաւ, Վիէննայի օդակայանը փակուած է, նման խուճապներ ստեղծուած են Աւստրալիոյ զանազան քաղաքներու մէջ, Իտալիոյ մէջ, մէկը կատակ մը ըրած է իր մէկ պաշտօնակիցին սպիտակ փոշիով նամակ մը յանձնելով)· կասկածելի նամակներ գտնուած են նաեւ Պուէնոս - Այրէս, Մեքսիքօ եւ այլն: ԱՄՆ-ու մէջ կենսաբանական ահաբեկչութիւն մը չանտեսուիր: Հոկտեմբեր 13-ին, Շաբաթ առտու, փարիզեան արուարձաններէն Սարսէլի թղթատարը փակ մնացած է, որովհետեւ նախորդ իրիկունը, կասկածելի նամակ մը գտնուած է ուղղըւած· - «Ուսամա Պէն Լատէնի, ԺԻԱ աֆղան, 95200 Սարսէլ»: Քննութիւնները ոչինչ տուած են անշուշտ, անհամ կատակ մը եւս:

***

Պէն Լատէնի մէկ զաւակը հարցազրոյց մը տուած է «Սընտէյ Միրըր» թերթին, ուր կ'ըսէ թէ հայրը Աֆղանիստանի լեռներուն մէջ է, Ամերիկա եւ Անգլիա չեն կրնար ծտնել, Աֆղանիստան երբեք հայրը չի յանձներ:

ԱՆԹՈՆԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԸ

ԽԱՉՔԱՐԻ ԶԵՏԵՂՈՒՄ ՓԱՌՔ ՊՈՒՐՏՈՅԻ ՄԷՋ

Հոկտեմբեր 5-էն 14, փարիզեան արուարձաններէն՝ Անթոնի, որուն քաղաքապետ երեսփոխանն է Փաթրիք Տէվէճեան հայկական շաբաթ մը ապրեցաւ, որ իր եզրափակումը գտաւ Կիրակի, Հոկտեմբեր 14-ին, Խաչքարի մը զետեղումով փառք Պուրտոյի մէջ:

Առանձին թղթակցութեան մը ձգելով շաբթուան երկայնքին տեղի ունեցած զանազան ձեռնարկները՝ ցուցահանդէս, գեղարուեստական երեկոյթ, վիճարկում, նուագահանդէս, այսօր պիտի գոհանանք վերջին ձեռնարկին հակիրճ նկարագրականով, որ խաչքարի մը զետեղումն էր:

Ժամը 15-էն առաջ իսկ, հոծ բազմութիւն մը հաւաքուած էր Փառքը եւ ժամը ճիշդ 15-ին, Հայաստանի դեսպան է· Նալպանտեան եւ քաղաքապետ - երեսփոխան Փաթրիք Տէվէճեան քօղազերծեցին գեղեցիկ խաչքարը, որ պատրաստուած էր Հայաստան արուեստագէտ Օննիկ Թադեւոսեանի կողմէ: Ապա, Գիւտ Արք· զոր կը շրջապատէին Սէն - Սաթիւրնէն Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Հ· Տիրէ Պերթէ, յանուն Գրիգոր Եպիսկ· Կապրոյեանի, Յովսէփ Վրդ· Քելէքեան, վերապատուելի Ժիլպէր Լեւոնեան, Միւռոն Վրդ· Գըվրքեան, Տիրայր Վրդ· Գըլըճեան, Աւետիս Քհնյ· Պալըգճեան, հոգւոց մը արտասանեցին, որուն յաջորդեցին Ուրախ լերը, Պահպանիչը եւ խաչքարին օրհնութիւնը· անոր վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը·

«L'Arménie n'a jamais douté de la France, comme la France n'a jamais douté de l'Arménie»
RAYMOND POINCARE (1860-1934)

Կրօնական այս կարճ արարողութենէն ետք, առաջին խօսք առնողը եղաւ Անթոնիի Ֆրանքօ-հայկական գլէօպի նախագահը՝ Անրի Մանկասարեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Թաղապետութեան եւ յայտնեց որ այս խաչքարին Հայաստանէն փոխադրութիւնը եւ յարակից կարգադրութիւնները կարելի եղած էին շնորհիւ Կարպիս Աւետիսեանի, որ օր մը առաջ յանկարծամահ եղած էր եւ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան լռութեամբ յարգելու անոր թարմ յիշատակը:

Ա· Մանկասարեան շեշտեց թէ այս խաչքարի զետեղումը կ'ըլլար Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակին առթիւ, բայց, կ'ոգեկոչէր նաեւ 1915-ի մեր 1·5 միլիոն նահատակներու յիշատակը: Բացատրեց խաչքարերու նշանակութիւնը եւ անդրադարձաւ խաչքարին խորհրդանիշներուն: Կրկին շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց որոնք իրենց մասնակցութիւնը բերած էին այս ձեռնարկին:

Փաթրիք Տէվէճեան շնորհակալութիւն յայտնեց յանուն Անթոնի քաղաքին, նկատել տալով որ խաչքարը կ'արտայայտէ այն խորհրդանիշերը զորս կը ներկայացնէ ու ծանրացաւ Ռեմոն Փուէնքարէի խօսքին վրայ, յիշելով Ֆրանքօ-հայկական հին յարաբերութիւնները: Խաչը, ըսաւ, կ'ոգեկոչէ Հայոց ինքնութիւնը, բայց նաեւ խորհրդանիշն է դիմադրութեան: Փոքրիկ ժողովուրդ մը որ դիմադրած է բազմաթիւ դժբախտութիւններ առանց երբեք ինքզինք ուրանալու, դիմադրութեան նշանաբանն է ցեղասպանութեան ատեն, նշանաբանն է նաեւ արժէքներու, մեր քաղաքակրթութեան արժէքներուն, նշանաբան մը որ կը կրէ նաեւ բարոյական մը:

Հայաստանի դեսպանը է· Նալպանտեան խորին շնորհակալութիւններ յայտնեց Անթոնիի Թաղապետութեան որ հովանաւորած է Անթոնիի Հայկ· օրերը, յիշեց Ֆրանքօ-հայկական բարեկամութիւնները, փոխադարձ այցելութիւնները եւ մանաւանդ շեշտեց 2001-ի կարեւոր թուականը, քանի եղած էր Նախագահ Քոչարեանի պետական այցելութիւնը Ֆրանսա, ցեղասպանութեան ճանաչումը Ֆրանսայի կողմէ, Հայաստանի քրիստոնէացման 1700-ամեակը, Հայաստանի անկախութեան տասնամեակը: Յատկանշական գտաւ որ այս ձեռնարկը կը կատարուի քաղաքի մը մէջ որուն քաղաքապետը ծագումով հայ է:

Այս ելոյթներու աւարտին, խաչքարին հեղինակը՝ Օննիկ Թադէոսեան նուէր մը յանձնեց Փաթրիք Տէվէճեանի, ապա մինչ անձրեւը կը սկսէր տեղալ, Անթոնիի հայերէնի դասընթացքներու փոքրիկներու երգչախումբը կ'երգէր քանի մը երգեր, որմէ ետք տեղի կ'ունենար հիւրասիրութիւն մը:

ՇՐՋ· ԹՂԹԱԿԻՑ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆՈՒԷԼ ՄԱՄԷՌ, որ «Մոնտ»ի Հոկտեմբեր 14/15-ի թիւին մէջ կը գրէր թէ «անդառնալի կերպով» վճռած է կանաչներու նախագահական թեկնածուն չըլլալ, Հոկտ· 15-ին Կիրակի միտքը փոխեց եւ ընդունեցաւ թեկնածու ըլլալ, վերջ դնելու համար 4 ամիսներու տագնապի մը: Տագնապը ծնած էր Մայիսէն, երբ Ալէն Լիփիէցի թեկնածութիւնը կը քուէարկուէր,

(Շար·ը Դ· էջ)

ԼՈՒՍԱՆՑՔԻ ՎՐԱՅ

ԱՐՏԱԳԱՂԹԻ ԴԷՄ

Արտագաղթի մասին լայնօրէն գրուած է ու կը գրուի: Եւ դեռ պիտի գրուի, քանի որ երեւոյթը դադար չի թուիր ունենալ եւ իր անդրադարձները (քաղաքական, ընկերային, տնտեսական, մշակութային, լեզուական...) հայաշխարհի բոլոր կողմերը կը տարածուին: Եւ դեռ պիտի գրուի, քանի որ մինչեւ հիմա Հայաստանի քաղաքական ատեանին, իշխանութիւններէն սկսեալ, պարագայական ինչ-ինչ խօսքերէ դատ, անշարժութեան մէջ կը թուին ըլլալ՝ արմատներն ու հետեւանքները դարմանելու համար: Իսկ եթէ կը շարժի, պարզապէս իւրաքանչիւր ցնցումով մարդոց յուսահատութեան բաժակը նորովի լեցնելու եւ մեկնումի նոր ալիք մը ստեղծելու համար:

Սփիւռքի մէջ, սկիզբի ամբողջական չփոթէն ետք, որոշ գաղութներ առաւել կամ նուազ չափով նորեկներուն օգնութիւն մը ցուցաբերած են: Սակայն պարզապէս կատարուած խրողութեան նուիրագործումն է, հակառակ անոր, որ երկրէն ելլողներէն շատեր, արտասահմանի պայմաններէն ու վիճակէն դժգոհ կամ իրենց մտադրութեան մէջ ձախողած, վերադարձի մտադրութենէն չեն հրաժարիր:

Այս վերջին մտահոգութեամբ, անցեալ Օգոստոսին Պուէնոս-Այրէսի մէջ կազմուած ու գործի անցած է յանձնախումբ մը, խումբ մը Արժանթինահայերու նախաձեռնութեամբ, Հայաստանի դեսպանատան գիտութեամբ ու հովանաւորութեամբ: Ինչպէս կ'ըսէ մամուլին ղրկուած հաղորդագրութիւնը, «նորակազմ այս մարմնի միակ նպատակն է նիւթական եւ բարոյական օգնութիւն կատարել բոլոր այն հայրենակիցներուն, որոնք վերջին տարիներուն արտագաղթած են Հայաստանէն եւ այժմ կ'ուզեն վերջնական կերպով վերադառնալ հայրենիք, բայց զուրկ են նիւթական հնարաւորութենէ»:

Մարմինը որդեգրած է «Հայրենադարձի Աջակից Յանձնախումբ» անունը (ՀԱՅ), գործունէութեան իր դաշտը յստակօրէն գատորոշելու համար: Որքան որ գիտենք, ներգաղթի շարժումի մը աջակցելու առաջին կազմակերպ նախաձեռնութիւնն է Սփիւռքի մէջ:

Վերջին տասնամեակին, 5.000-ի շուրջ կը գնահատուի Արժանթին ժամանած հայաստանցի արտագաղթողներու թիւը: Հազուադէպ պարագաներու, օրինաւոր կերպով մտած են երկիր. մեծաւ մասամբ կ'երթան որպէս զբօսաշրջիկներ եւ եռամսեայ կեցութեան իրենց արտօնագիրը աւարտած, ապօրինի կը մնան: Յաճախ կ'աշխատին իրենց իրաւական վիճակը կանոնաւորել, քանի որ այլապէս օրինաւորապէս աշխատելու եւ բնակութիւն հաստատելու կարելիութենէն զուրկ են: Այս ալ կապուած է մեծ դժուարութիւններու հետ:

Գաղութային մարմինները որոշ նիւթական օժանդակութիւն մը ցուցաբերած են, հակառակ երկրին մէջ տիրող տնտեսական վիճակին, իսկ դպրոցները առհասարակ ձրի կերպով կ'ընդունին նորեկներու զաւակները:

Ինչպէս կը պատահի ամէն տեղ, ոմանք կը յաջողին չարքաշ աշխատանքով յառաջ երթալ, ուրիշներ անել կացութեան կը մատնուին՝ անգործութեան պատճառով: Առհասարակ, համալսարանաւարտ ու արհեստավարժ մարդիկ են եկողներէն շատերը, որոնք ստիպուած են յաճախ իրենց կոչումին բոլորովին անյարիր գործերով զբաղելու: Զեն պակսիր անոնք, դժբախտաբար, որոնք հայու անունը կ'արատաւորեն, թէեւ ո՛չ՝ անդառնալի կերպով:

Հաղորդագրութիւնը կը կատարէ որոշ հետաքրքրական ախտաճանաչումներ. -

«Արժանթին հաստատուած մեր ազգակիցները, բացի ձուլման հանրածանօթ վտանգէն, կը դիմագրաւեն շարք մը ոչ-բնականոն վիճակներ, որոնք անլուծելի կացութեանց առջեւ կը դնեն զիրենք եւ որոնցմէ կը թուենք գլխաւորները. -

Ա) փոխադրութիւնը կը կատարուի հապճեպային եղանակով, առանց նախնական եւ հիմնական նախածրագրումի, յաճախ տպաւորուելով այս երկրին շուրջ հիւսուած անհիմն դրուատիքներով եւ մանաւանդ զբօսաշրջիկային հաստատութիւններու շահագիտական ջանքերով:

Բ) ժամանակաւոր անցագիրով (վիզա) մուտք գործելով երկիր՝ հայաստանցի մեր ազգակիցները, հոս հաստատուելու պարագային, կը մատնուին քաղաքացիական ապօրինութեան, ինչ որ ո՛չ միայն զիրենք կը զրկէ աշխատանքի ազատ իրաւունքէ, այլեւ իրենց զաւակները՝ ուսանելու Իրաւունքէ (պետական վկայագիրով):

Գ) Հասկնալի ըլլայ կամ ոչ, տեղւոյս հայ գաղութը բացորոշ անտարբերութեամբ կը դիմաւորէ նորեկները: Մնաց որ արժանթինահայ գաղութը չունի նորեկներու օժանդակող եւ անոնց հարցերով զբաղող կազմակերպութիւն մը»:

Շահեկան է նշել, որ մինչ Արժանթինի մէջ անգործութեան համեմատութիւնը ներկայիս հասած է 17 առ հարիւրի, իսկ բնակչութեան արտագաղթելու ցանկութիւնը՝ 30 առ հարիւրի, Հայաստանէն մարդիկ հանդերձ ընտանեօք կը շարունակեն ժամանել՝ անգործներու բանակը մեծցնելու համար, յաճախ «իրենց նաւերը այրած», ինչպէս կ'ըսեն, այսինքն՝ տուն եւ ունեցուածք վաճառելէ եւ իրենց խնայողութիւնները ճանապարհածախսի վրայ մսխելէ ետք:

ՀԱՅը յայտնած է իր տրամադրութիւնը «ձեռք երկարելու անոնց, տրամադրելով հարկ եղած ճանապարհածախսը, բնականաբար առաջին առթիւ ընթացք եւ նախապատուութիւն տալով անչափահաս զաւակներու տէր ընտանիքներուն»:

Ինը հոգիէ բաղկացած այս յանձնախումբը, որ անցեալ Սեպտեմբեր 25-ին կազմակերպած է իր դիւանը (ատենապետ՝ Պետրոս Հաճեան, ատենադպիր՝ Տ. Եղիշէ Քհնյ. Նազարեան, գանձապահ՝ Տանիէլ Յովհաննէսեան), ամբողջովին ապաքաղաքական հողի վրայ աշխատելու կոչուած է՝ դեսպանատան հովանիին տակ: Իր նպատակը չէ հասութաբեր ձեռնարկներ կազմակերպել, այլ ապահովել նուազագոյնը 100 օժանդակ ազգայիններ, որոնք յանձն առնեն մէկ տարի շարունակ ամսական 10 - 20 տոլարի վճարումներ կատարել: Այս գումարներով եւ այլ հնարաւոր եկամուտներով, ան կ'առաջադրէ լրիւ կամ մասնակի օդանաւային ճանապարհածախսը վճարել (երթի տոմս միայն) «բոլոր այն հայրենակիցներուն, որոնք, Հայաստանի քաղաքացի կամ ոչ, կ'ուզեն Հայաստան վերադառնալ եւ վերջնական կայք հաստատել հոն»: Նպաստընկալները պէտք է դիմում կատարեն դեսպանատան եւ յատուկ յանձնարարագիր մը ձեռք բերեն: Գումարը կը տրուի փոխառութեան ձեւով, եւ նպաստընկալները պարտին ստորագրել փոխառութեան պարտաթուղթ մը, որ դեսպանատան մօտ պահ կը դրուի:

Ըստ երեւոյթին, այս եւ ուրիշ կէտերով բոլոր միջոցները առնուած են՝ անհամութիւններ կանխելու համար: Ականատես եղած ենք տարբեր դէպքերու, երբ լման ընտանիքներ գացած են Արժանթին, կարծելով, որ գաղութային կազմակերպութիւնները կամ Առաջնորդարանը բնակարան ու գործ պատրաստ ունին իրենց համար եւ ապա, կեղծիքի բացայայտումէն ետք (երեւանցի «գործարար» մարդոց անբարոյ ճարպիկութեան եւ դժբախտ ճամբորդներուն միամտութեան հետեւանք), աշխատած են բոլոր միջոցներով ազգային մարմիններուն վրայ ճնշում բանեցնել, որպէսզի զիրենք ապրեցնեն կամ, ծայրագոյն պարագային, վերադարձի տոմս մը վճարեն: Պէտք է ըսել, որ ստեղծուած են նուաստացուցիչ ու ըստ ամենայնի անպատուաբեր վիճակներ նաեւ, որոնց շուրջ նախընտրելի է չծաւալիլ: Յանձնախումբը նկատի առած է նաեւ - որքան որ ներկայ պայմաններու տակ անիրական թուի կամ, Արժանթինի պարագային, անկարելի երեւոյթ մը, - որ «կրնայ նաեւ ճանապարհածախսը հոգալ բոլոր այն ոչ-հայաստանցի Հայերուն, որոնք կ'որոշեն վերջնական կայք հաստատել Հայաստանի մէջ եւ որոնք կը կարօտին օժանդակութեան»:

Մնայուն տեղաշարժներու այս ժամանակաշրջանին մէջ, ուր մեր պարագան եզակի չէ, Արժանթինէն եկող այս նախաձեռնութիւնը կրնայ հոսանքն ի վեր թիավարում մը նկատուիլ, բայց ճիշդ է նաեւ, ինչպէս կ'ըսէ հաղորդագրութիւնը, որ «Այս ձեւով, հաւաքաբար կատարած կ'ըլլանք մարդասիրական եւ հայրենասիրական գործ մը, մէկ կողմէն փրկելով անբարեյոյս վիճակի մատնուած մեր ազգակիցները, եւ միւս կողմէն Հայաստանի ժողովրդական զանգուածներուն մօտ տարածելով այն գաղափարը, որ արտագաղթը ապահով միջոց մըն չէ ընտանեկան կամ ընկերային վիճակներ բարելաւելու»:

Կը մնայ միայն մաղթել, որ նման նախաձեռնութիւններ չբազմապատկուին: Այսինքն, որ այս կացութիւնը դարմանելու լուրջ միջոցներ փնտռուին ու գտնուին երկրէն ներս եւ ոչ թէ շարունակուի, կամայ թէ ակամայ, երկրի պարպումը քաջալերելու գործողութիւնը, Սփիւռքի վրայ նետելով մտահոգուելու եւ մարդկային ողբալի վիճակներ ամոքելու պարտականութիւնը:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Նիւ Ճըրզի

«ԱՐԱՐԱՏ».

ԺԱՊԱՒԷՆ ՄԸ՝ ԺԱՊԱՒԷՆԻ ՄԷՋ

«ՖԻԼՄՖՈՐՍ»Ի ԿԱՅՔԻՆ ՄԷՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾ ՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԱԹՈՄ ԵՂՈՅԵԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺԱՊԱՒԷՆԻՆ ԲՆԱԳԻՐԸ

Արարատ. է թրու սթորի աֆ լիվինկ փրուֆ» ժապաւէնը նուիրուած է Հայկական Ցեղասպանութեան, սակայն դիպաշարը չի կեդրոնանար անոր քաղաքական դրդապատճառներուն վրայ: Ասիկա չի նշանակեր, թէ Եղոյեան կ'անտեսէ պատմութիւնը: Ի տարբերութիւն «Շինտլըր'զ Լիսթ»ի, անիկա ժամանակաշրջանի մը դէպքերը վերակենդանացնելու փոխարէն՝ կը պեղէ ցեղասպանութեան անդրադարձները ժամանակակից մարդոց կեանքին վրայ:

Օսքարի թեկնածութեան արժանացած դրագէտ եւ բեմադիր Աթոմ Եղոյեանի ժապաւէնին մէջ դերեր ստանձնած են Բրուս Կրինվուտ («Թըրթին տէյզ»), Էրիք Պօղոսեան («Թոք ռէտիօ»), Քրիսթաֆըր Փլամըր («Տրաֆուլա 2000»), Էլիաս Քոթէաս («Տը թին ռէտ լայն»), Շարլ Ազնաւուր, Պրէնթ Քարվըր, Ռաուլ Պանէխա, Մարի Ժոզէ Քրոզ, Արսինէ Խանճեան եւ Տէյվիտ Ալփէյ (նորեկ մը շարժապատկերի աշխարհին մէջ): Այս դերասաններէն շատերը նախապէս աշխատած են Եղոյեանի հետ, եւ ոմանք հայկական ծագում ունին անոր պէս: «Արարատ» ժապաւէնին արտադրիչներն են «Սերենտիփիթի Փոյնթ Ֆիլմզ» եւ «Ըլայընս Աթլանթիս» ընկերութիւնները: «Միրամաքս» զայն պիտի ցրուէ 2002-ին:

«Արարատ»ի դիպաշարին կորիզը կը կազմէ պատրաստութիւնը Ցեղասպանութեան նուիրուած դիւցազներգական այլ ժապաւէնի մը, որուն բեմադրութեան ընթացքին արծարծուած պատմական հարցերը որոշ ազդեցութիւն կը գործեն տիպարներուն վրայ: Եղոյեան ճարպիկօրէն կ'օգտագործէ կառոյցի, ժամանակագրութեան եւ տարբեր տեսարաններու անցումային պահերը՝ պատմողական ոչ հորիզոնական գիծի մը վրայ զարգացնելով դիպաշարը: Ան պատմական դէմքերու առընչուած տեսարանները կը կցէ ժամանակակից իրադարձութիւններու, որոնց մէջ դերասանները իրենց մարմնաւորած տիպարներուն կողքին կը ներկայանան նաեւ իրենց բուն էութեամբ: Օրինակ, Բրուս Կրինվուտ կը կատարէ Մարթին անունով շարժապատկերի աստղի մը դերը եւ միաժամանակ կը մարմնաւորէ ամերիկացի միսիոնար տոքթոր Քլարընս Աշըրի պատմական տիպարը: Դիպաշարը լեցուն է նման զոյգ դերերով: Բնագիրը կը բովանդակէ ժապաւէն մը՝ ժապաւէնի մէջ. ակնդիրը պաստառին վրայ պիտի տեսնէ ֆրանսացի-ամերիկացի բեմադիր մը՝ Էտուըրտ Սարոյեան (Շարլ Ազնաւուր), որ կ'ուզէ բեմադրել կրքոտ գրագէտի մը՝ Ռուբէնի (հաւանաբար Էրիք Պօղոսեան) պատրաստած բնագիրը: Անիկա կը պատմէ Վանի մէջ տոքթոր Աշըրի հերոսական կեցուածքին մասին, երբ Թուրքերը կը սկսին տեղահան ընել եւ սպաննել տեղւոյն հայ բնակիչները: Ժապաւէնին վերաբերեալ յաւելեալ ուսումնասիրութիւններու կարիքը զգալով՝ Էտուըրտ եւ Ռուբէն ներկայ կ'ըլլան գանատահայ արուեստաբանի մը՝ Անիի մէկ դասախօսութեան:

Իր դասախօսութեան ընթացքին եւ իր հրապարակած նոր գիրքին մէջ Անի կը վերլուծէ ամերիկահայ գեղանկարիչ Արշիլ Կորքիի տիպարը եւ անոր «Արուեստագէտը եւ իր մայրը» գեղանկարը: Կորքի իր հռչակաւոր գեղանկարը գծած է հետեւողութեամբ լուսանկարի մը, որուն մէջ ան մանուկ է եւ կանգնած է իր մօր կողքին: Լուսանկարը առնուած է Հայերու դէմ թրքական հալածանքներէն բաւական առաջ: Դասախօսուհին Կորքիի մասին իր գաղափարներով մեծ ազդեցութիւն կը գործէ Էտուըրտի եւ Ռուբէնի վրայ: Անոնք կը խնդրեն, որ ան իբրեւ խորհրդատու մասնակցի ժապաւէնին բեմադրութեան: Նաեւ կ'որոշեն անոր վերլուծումները օգտագործել իրենց ժապաւէնին մէջ, որուն պատմութիւնը արդէն կ'ընդգրկէ մանչուկի մը տիպարը: Հետեւաբար զայն կը վերածեն Կորքիի՝ օգտագործելով «բանաստեղծի ազատութեան իրաւունքը», ինչ որ դայրոյթ կը պատճառէ Անիի:

Սակայն, հակառակ իր տարակարծութիւններուն, Անի կը շարունակէ գործակցիլ ժապաւէնին բեմադիրին եւ հեղինակին հետ: Ան նոյնիսկ ժապաւէնին մէջ իր պատանի զաւկին՝ Րաֆֆիի համար կ'ապահովէ դեր մը՝ իբրեւ շարժավար եւ նկարողի օգնական: Րաֆֆի որ կերպարանափոխում մը կ'ապրի այս փորձառութեան ընթացքին: Ան կը վերադառնէ իր հայկական արմատները եւ կը դիմագրաւէ իր հօր անբացատրելի մահուան առթած ցաւը: Անիի եւ Րաֆֆիի միջեւ զգացական կապը փորձաքարի կը դառնայ, երբ կը յայտնուի Անիի առաջին ամուսնութենէն խորթ զաւակ մը՝ Սելիա: Անիին երկու ամուսնութիւններն ալ վերջ գտած են ողբերգական ձեւով եւ խորհրդաւոր պայմաններու մէջ: Սելիա իր հօր մահուան պատճառով ոխ մը ունի Անիի նկատմամբ, որ իր հերթին մտահոգ է Սելիայի եւ իր զաւկին միջեւ զարգացող բարեկամութեամբ:

Ինչ կը վերաբերի ժապաւէնը պատրաստողներուն «բանաստեղծի ազատութեան իրաւունքին», Էտուըրտ եւ Ռուբէն կը վիճին, թէ կատարուած փոփոխութիւնները թէեւ պատմականօրէն անճիշդ են, սակայն «հարազատ են իրականութեան մէջ պատահած դէպքերուն ոգիին»: Այնպէս ինչպէս Կորքի իր մանկութեան մէկ լուսանկարը պատկերաւոր ձեւով վերարտադրելէ աւելի՝ գեղարուեստական մեկնաբանութեամբ մը ցոյց կու տայ, թէ անցեալի յիշողութիւններն ու դէպքերը ի՛նչ նշանակութիւն ունին իրեն համար: Նոյնիսկ Կորքի գեղարուեստական ազատութեան իր իրաւունքը կ'օգտագործէ, երբ լուսանկարէն առնուած գեղանկարին մէջ չի պատկերեր իր մօր ձեռքերը: Այս զանցառութեան խորհրդանշական իմաստը կը ճնշէ Անիի վրայ, որովհետեւ, ինչպէս Սելիա կը մատնանշէ, անիկա կ'արտացոլացնէ անցեալը մեկնաբանելու իր սեփական անկարողութիւնը, ինչպէս նաեւ՝ իր առաջին ամուսինին քայքայումը դիմագրաւելու դժկամութիւնը:

Եթէ կը կարծէք, որ այս բոլորը պատմելով շատ բան բացայայտած կ'ըլլամ Ա. Եղոյեանի ժապաւէնին մասին, ձեզի կը վստահեցնեմ, որ այդպէս չէ: «Արարատ»ը կը պարունակէ այս բոլորէն շատ աւելին:

Ժապաւէնին մէջ կը զարգանայ նաեւ այլ դիպաշար մը. անիկա կը վերաբերի օդակայանի մը մաքսատան մէջ աշխատող պաշտօնեայի մը՝ Տէյվիտ (հաւանաբար Փլամըր), անոր միասեռական զաւկին՝ Ֆիլիփի (հաւանաբար՝ Քարվըր) եւ անոր թոռնիկին՝ Թոնիի: Տէյվիտ չի կրնար ընդունիլ Ֆիլիփի միասեռականութիւնը եւ Ալիի հետ (հաւանաբար Քոթէաս) անոր կենակցութիւնը: Այս պատմութիւնը ժապաւէնին բուն նիւթին կը միանայ, երբ Ալի, որ կէս թուրք է եւ կ'ուզէ դերասան դառնալ, չար թուրքի տիպարը կը մարմնաւորէ Էտուըրտի ժապաւէնին մէջ: Ալիի ազգային ժառանգութիւնը եւ Հայկական Ցեղասպանութեան նկատմամբ անոր կեցուածքը լարուածութիւն կը ստեղծէ դերասանին եւ բեմադիրին միջեւ:

Աթոմ Եղոյեան լաւ կը միահիւսէ այս

ենթախորագրերը: Տարօրինակ է, բայց «Արարատ»ի բնագիրը ձեւով մը կը յիշեցնէ գրագէտ - բեմադիր Վուտի Ալընի եւ Ժան Սայլէսի ժապաւէնները: Սայլէս հռչակաւոր է պատմութեան բազմաթիւ գիծեր միահիւսելով տարբեր խաւերու վրայ միաժամանակ արծարծելով պատմական, քաղաքական եւ ազգային հարցեր: Վուտի Ալըն եւս հիանալի հաւասարակշռութիւն մը կը ստեղծէ բազմաթիւ տիպարներու եւ ենթախորագրերու միջեւ՝ իմացական եւ յաճախ փիլիսոփայական պատմութիւններ կառուցելով: Նոյնը կարելի է ըսել Եղոյեանի տիպարներուն մասին: Ան խորապատկերի մը վրայ զարգացող դէպքերը եւ վիճելի ու բարդ հարցերը կը դասաւորէ ինքնավստահ վարպետութեամբ: Սկիզբը բնագիրին բազմաթիւ տիպարներն ու ենթախորագրերը չփոթի մատնեցին զիս: Սակայն շուրջ 15 էջ կարդալէ ետք չփոթս փարատեցաւ: Անիկա չափանիշն է Եղոյեանի պատմողական խիստ ոճին: Ան կրնայ միայն 90 էջ ծաւալով բնագիրի մը մէջ հիւսել հնչեղ եւ բարդ պատմութիւն մը: Ամերիկացի եւ բրիտանացի բեմադիրներ պիտի ընդլայնէին նման նիւթ մը՝ գայն 2.5 ժամ տեւողութեամբ ժապաւէնի մը վերածելու եւ ինքնանպատակ դիւցազներգութիւն մը պատկերելու համար:

«Արարատ»ի գլխաւոր բնաբաններէն մէկը պատմութիւնը դիտելու հայեցակէտի մը որոնումն է (պատմութիւնը ժողովուրդի մը, տեղի մը, ինչպէս նաեւ՝ անձնական պատմութիւն մը): Եղոյեանի տիպարները կը փափաքին դիմագրաւել իրենց ազգային եւ սեփական անցեալը, սակայն անոնցմէ ոմանք կ'ուզեն միայն որոշ բաներ տեսնել: Օրինակ, Անի չի կրնար դիմագրաւել իր երկու ամուսիններուն մահուան ետին գտնուող ճշմարտութիւնը: Ան կը փորփրէ Կորքիի գեղանկարը (ժապաւէնին ամէնէն ցայտուն փոխաբերական պատկերը) անոր բազմաթիւ «ճշմարտութիւնները» տեսնելու համար, սակայն, ան չի կրնար նոյնիսկ խօսիլ գեղանկարիչ գլխաւոր բնաբաններուն մասին, որովհետեւ անոնք կը յիշեցնեն իր ապրած անձնական փորձառութիւնները: Կը թուի, թէ Եղոյեան ըսել կ'ուզէ՝ բաւարար չէ միայն գիտնալ պատմութիւնը, հարկ է նաեւ զգալ զայն: Պատմութիւնը կարեւոր տեղ պէտք է ունենայ անձնական կեանքի մէջ: Սակայն պատմութեան (եւ անոր առթած ցաւին) կառչած մնալը երբ ինքնանպատակ եւ ինքնակործան կը սկսի դառնալ: Եղոյեանի տիպարներէն քիչերը կը դիմագրաւեն այս հարցը: «Արարատ» նաեւ կը փորձէ ցոյց տալ, թէ արուեստագէտներ իրենց ստեղծագործութիւններուն մէջ ի՛նչպէս կը վերլուծեն իրենց սեփական եւ ազգային պատմութիւնը (Կորքի՝ իր գեղանկարներով, Էտուըրտ՝ իր ժապաւէններով):

«Արարատ»ի բնագիրին մէջ կարգ մը թերութիւններ եւս նկատելի են: Տիպարները երբեմն քարոզելու կամ յաւելեալ բացատրութիւններ տալու վիճակին մէջ կը գտնուին: Երկխօսութեան կարգ մը բաժիններ աւելի կը յիշեցնեն գրագէտի մը կողմէ կատարուած պերճախօս նկատողութիւններ, քան թէ՝ այն բաները, զորս սովորական մարդիկ պիտի ըսէին զրոյցի մը ընթացքին: Նաեւ կը կարծեմ, որ Հայկական Ողջակիզումի պատմութիւնը յստակ կերպով չի փոխանցուիր: Այդ մասին շատ բան չէի գիտեր բնագիրը կարդալէ առաջ: Ճիշդ է, որ Եղոյեանի ժապաւէնը կը պարունակէ պատմական որոշ տեղեկութիւններ, սակայն վստահ չեմ, թէ արդեօք պատմական իրողութիւններուն բոլորովին անտեղեակ հանդիսատես մը պիտի կարենա՞յ հասկնալ իւրաքանչիւր մանրամասնութիւն, որ կը ներկայացուի պաստառին վրայ: Այսուհանդերձ ընդհանուր պատկերը յստակ է. հիմնականին մէջ պետութիւն մը ղեկավարող մարդիկ խոչընդոտ կը նկատեն փոքրամասնութիւն մը կազմող հաւաքականութիւն մը եւ կ'որոշեն բնաջնջել զայն: Բարեբախտաբար անտեղեակ անկողիներներ (եւ ինքզինքս տակաւին անոնց շարքին կը դասեմ) այնքան տպաւորիչ պիտի գտնեն Եղոյեանի պատմութիւնը, որ պիտի ուզեն օր մը աւելին գիտնալ Հայկական Ցեղասպանութեան մասին: Գիտեմ, որ գէթ ես այդպէս զգացի:

«Արարատ» կը պատկերէ փոքրիկ եւ անձնական պատմութիւն մը, որ կ'առընչուի պատմական հսկայական իրադարձութեան մը եւ անոր անդրադարձներուն՝ ժամանակակից հաւաքականութեան մը վրայ: Անիկա դիւցազներգական նիւթ մը կը ներկայացնէ մտերմիկ հայեցակէտով մը: «Արարատ» յաջող ժապաւէն մըն է, որովհետեւ Եղոյեան կը կեդրոնանայ «իրական» մարդոց եւ անոնց զգացումներուն վրայ: Հարկ է տեսնել այս ժապաւէնը, գէթ որովհետեւ անոր նիւթը դժբախտաբար կ'առընչուի այսօրուան հետ: Ինչպէս Ռուանտայի եւ Պալքանեան երկիրներու մէջ վերջերս տեղի ունեցած ցեղասպանութիւնները ապացուցանեցին, ցեղասպանութիւնը միայն անցեալին վերաբերող ոճիր մը չէ:

(Յապաւուած)

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ - ՍՐԱՊԵԱՆ
«Ազդակ»

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՐՔԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ Մշակոյթի նախարարութեան կողմէ հրատարակուած է «Հայ գրականութեան հատընտիր» խորագրուած հատոր մը: Խմբագիրն է Անգարայի համալսարանին Հայ լեզուի եւ գրականութեան դասախօս Պիրսէն Գարաճա: Նախաբանը ստորագրած է Մշակոյթի նախարարը Ի. Թալայ: Ան կ'ըսէ թէ ձեռնարկը մաս կը կազմէ թարգմանական գրականութեան զարկ տալու եւ Թուրք ընթերցողը համաշխարհային գրականութեան ծանօթացնելու աշխատանքին:

Հատորին մէջ տեղ գտած է հայ գրականութեան մասին վերլուծական գրութիւն մը եւ արեւմտահայ եւ արեւելահայ գրողներէ թարգմանութիւններ. Յ. Թումանեանէ, Ս. Կապուտիկեանէ, Ե. Օտեանէ, Գ. Սրուանձտեանցէ եւ Պ. Դուրեանէ կտորներու թարգմանութիւնը ըրած են Հ. Տինք, Ե. Կոպէլեան, Պ. Գարաճա, Գ. Գարագաշլը եւ Ս. Սերոբեան:

ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔԸ ԲՈԼՈՐԵՑ ԻՐ 16ՐԴ ԴԱՍԱՇՐՋԱՆԸ

ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Վենետիկի Քա Ֆոսքարի Պետական Համալսարանի Հայ Լեզուի եւ Մշակոյթի Ամառնային Խտացեալ Դասընթացքը, Պօ-Արաքս Մշակութային Ընկերակցութեան կազմակերպութեամբ, այս ամառ յաջողութեամբ բոլորեց իր 16-րդ դասաշրջանը եւ հայութեամբ հարուստ ամառ մը եւս ապրեցաւ Հայ - Վենետը:

Վենետիկ, որ համաշխարհային արուեստի եւ մշակոյթի քաղաքամայրերէն մէկն է եւ յատկապէս հարուստ՝ Հայ Մշակոյթի եւ պատմութեան հետ սերտ կապերով, 2001-ի Յուլիս 31-էն մինչեւ Օգոստոս 24 հաւաքուեցան 35 ուսանողներ 11 տարբեր երկիրներէ, զարգացնելու համար իրենց հայերէնի պաշարը կամ նոր ծանօթանալու լեզուին՝ որ շատերուն համար եղած էր իրենց նախնիներու լեզուն: Դասընթացքի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կը մասնակցէր Թուրք երիտասարդ մտաւորական մը, հայերէնի արդէն բաւական ծանօթ, դոկտորականի թեկնածու Հարվարտ Համալսարանին մէջ:

Դասաւանդութիւնները տեղի ունեցան Վենետիկի Քա Ֆոսքարի Համալսարանի Միջֆակուլտետային Լեզուական Կեդրոնին մէջ. հանրակացարանն ալ՝ տրամադրուած Վենետիկի Համալսարանին կողմէ՝ կը գտնուէր պատմական Քանարեջօ թաղին մէջ:

Դասընթացքը ունեցաւ չորս մակարդակ: Առաւօտեան 9-էն մինչեւ 13 տեւող դասապահերուն՝ աւանդուեցան աշխարհաբար, գրաբար, հայ գրականութիւն, պատմութիւն եւ հայկական երաժշտութիւն:

Ուսուցչական կազմը հետեւեալն էր. Րաֆֆի Սէթեան՝ Փասատինայէն, Սալբի Գասպարեան՝ Հալէպէն, Վիրժինի Քերովբեան՝ Փարիզէն՝ Պարէտ Մանոք՝ Փարիզէն, Մարօ Քիւրքճեան՝ Աթէնքէն, Հենրիկ Բախչինեան՝ Երեւանէն, Անահիտ Քէշիշեան՝ Լոս - Անճըլըսէն, Արամ Քերովբեան՝ Փարիզէն, իբրեւ վարիչ ունենալով Հ. Լեւոն Զէքիեանը՝ Վենետիկէն: Հիւր դասախօս էր նկարիչ Հրազդան Թոքմաջեան՝ Հալէպէն:

Օգոստոս 3-ին խումբը այցելեց Սուրբ Ղազարու Մխիթարեան Մայրավանքը, իսկ Օգոստոս 12-ին մասնակցեցաւ Վերափոխման աւանդական պատարագին վանքի եկեղեցիին մէջ: Միւս Կիրակիները Հ. Լեւոն Վրդ. պատարագեց Վենետիկի Հայոց պատմական Սուրբ Խաչ Եկեղեցին, ափիւռքի ամենահին եկեղեցիներէն մէկը, որու լուսարարապետի պաշտօնը կը վարէ ներկայիս Հ. Յարութիւն Վրդ. Պզտիկեան:

Օգոստոս 10-ին, Մուրատ - Ռափայէլեանի համալիրին մաս կազմող Լոճա Տեմանցա դահլիճին մէջ, որ կը հիւրընկալէ ներկայիս Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի Կեդրոնը, տեղի ունեցաւ Հ. Լեւոն Զէքիեանի հեղինակած «Ինքնութեան Խճանկար» եւ «Հոգիի եւ Ինքնութեան Հետքերով» գիրքերուն վենետկեան շնորհահանդէսը: Այս գիրքերէն առաջինը լոյս տեսած է Օր. Սալբի Գասպարեանի խմբագրութեամբ եւ պէյրութաբնակ Տէր եւ Տիկին Արմէն եւ Միմի Յարութիւններու մեկենասութեամբ:

Օգոստոս 6, 13 եւ 21-ին Հանրակացարանի պարտէզին հաճելի մթնոլորտին մէջ կազմակերպուեցան ուրախ երեկոյթներ: Մասնաւոր յիշատակութեան արժանի են այս երեկոյթներու յաջող ելքին իրենց բերած մասնակցութեամբ՝ Կոչնակ եւ Ակն երգչախումբերու վարիչներէն Արամ եւ Վիրժինի Քերովբեան ամոլը եւ Անահիտ Քէշիշեանը:

Յառաջիկայ տարեշրջանի արձանագրութիւնները կը բացուին 2002-ի Փետրուարին: Պայմանները պիտի հաղորդուին յաջորդաբար:

ԴԻՒԱՆ ՊՕ - ԱՐԱՔՍ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Associazione Padus-Araxes
S. Polo, 2035 I
30125 Venezia / ITALIA
http://www.padus-araxes.com

ԹԻՒ 17 ԽԱՓԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

- Իրար մի անցնիր, Աբրահա՛մ էֆէնտի, Աստուած ողորմած է, թերեւս միջոց մը կը գտնուի, ես ուզեցի ձեզի ծառայութիւն մը մատուցանել սպառնացող վտանգը ձեզի ցոյց տալով, հիմա ժամանակ ունիք ճար մը մտածելու, չարիքը հեռացնելու համար:

- Շատ շնորհակալ եմ, Ասատի՛կ էֆէնտի, բայց ի՞նչ պէտք է ընել:

- Ատոր մասին դուք կը մտածէք, միայն ձենէ կը խնդրեմ, որ մէկու մը չիմացնէք, թէ ձեզի իմաց տուեր եմ այս լուրը, ետքը իմ վիճակս շատ գէշ կ'ըլլայ:

- Հոգ մի՛ ըներ, Ասատի՛կ էֆէնտի, մարդու բան չեմ ըսեր, - պատասխանեց վաճառականը: - Միայն թէ ինչպէ՞ս այս փորձանքէն պիտի ազատինք:

- Ճար մը կը գտնուի, Աբրահա՛մ էֆէնտի, միայն թէ ժամանակ կորսնցնելու չէ:

- Կը կարծե՞ս, որ կարելի է ճար մը գտնել:

- Անշուշտ, չե՞ս գիտեր, որ այս երկրի մէջ ամէն բան դրամով կ'ըլլայ:

- Եթէ խնդիրը դրամին մնայ, այն ատեն դիւրին է:

- Քանի որ դրամ տալու տրամադիր ես, ուրեմն բանէ մը՛ մի վախնար, միայն թէ նայէ՛, որ չխաբուիս, շնորհքով մէկը գըտիր, գործդ անոր ձեռքովը տես, որովհետեւ հիմա շատ մը խաբեբաներ մէջտեղ ելած են, հէմ պօլ - պօլ փարա կ'առնեն, հէմ ալ գործ մը չեն տեսնար:

- Դրամը ուրո՞ւ պիտի կերցնենք:

- Ամէնքն ալ կ'ուտեն, Աբրահա՛մ էֆէնտի, Պետրոսն է եղեր, Բէչատն է եղեր:

- Քանի՞ով կը կարծես, որ ըլլայ:

- Գործը գիտէ. քեզի համար կարծեմ 100 ոսկիով կրնաս գլուխդ ազատել:

- Եթէ գիտնամ ատանկ ըլլալը, հիմա կը վճարեմ հարիւր ոսկին, - պատասխանեց վաճառականը: - Ո՞վ կրնանք իբրեւ միջնորդ գործածել:

- Իրաւ որ չեմ գիտեր, - ըսաւ Ասատիկ վարանումով մը, - միայն թէ այնպիսի մէկը գտնելու է, որ թէ՛ ազդեցիկ ըլլայ եւ թէ՛ մօտէն ծանօթ ըլլայ Պէտրիին կամ Բէչատին, որովհետեւ երկուքն ալ շատ կասկածոտ են և որեւէ մարդու չեն ուզեր բացուիլ:

- Դուք ըսիք, որ շատ մտերիմ էք իրենց հետ:

- Այո՛, իմ յարաբերութիւններս բոլորովին մտերմական են, ինէ որեւէ բան չեն ծածկեր, արդէն ցանկը ինծի ցոյց տալերնին ատոր ապացոյցն է:

- Բայց այն ատեն ամէնէն յարմար անձը դուք էք այս գործին համար:

- Շիտակը՝ ես ասանկ գործերու չեմ ուզեր խառնուիլ, - պատասխանեց Ասատիկ:

- Ինչո՞ւ համար:

- Ես ի՛նչ գիտնամ, թերեւս մտքերնէդ կ'անցընեք, որ մէջը ես ալ շահ մը ունիմ:

- Տէր ողորմեա՛, ատ ի՞նչ խօսք է, նոյնիսկ եթէ շահ մըն ալ ունենաս, ամօթ չէ, ծառայութիւն մը պիտի մատուցանես՝ բնականաբար իրաւունք ունիս փոխարինութեան մը:

- Չէ՛, Աբրահա՛մ էֆէնտի, ես այդ տեսակ շահեր չեմ ուզեր, փա՛ռք Աստուծոյ, իմ աշխատութեամբս դրամ կը շահիմ:

- Քանի որ բարեկամութիւն մը ըրեր գալով ցանկին լուրը տալով, գոնէ այդ բարեկամութիւնդ կատարեալ ըրէ՛ եւ սա գործն ալ կարգադրէ՛:

- Ուրիշ մէկը եթէ գտնայիք՝ աւելի աղէկ կ'ըլլար:

- Դուք ամէնէն յարմարն էք:

- Այո՛, բայց:

- Կ'աղաչեմ, մի՛ մերժէք, գիս մեծ մըտմըտուքէ մը պիտի ազատէք, միայն թէ վստա՞հ էք, որ պիտի յաջողիք:

- Այդ մասին բնաւ տարակոյս չունիմ, իմ խօսքս չեն կոտրեր, մանաւանդ երբ ծայրը դրամ ալ կայ:

- Ուրեմն հարիւր ոսկիով գործը կը լըմննա՞յ:

- Քանի որ իմ ձեռքովս պիտի ըլլայ՝ կը լմննայ:

- Դրամը հիմակուընէ՞ պէտք է վճարեմ:

- Բնականաբար:

- Լաւ, - ըսաւ վաճառականը ոտքի ելլելով ու դրամարկղին մօտենալով:

Յաղթական ժպիտ մը փայլեցաւ Ասատիկի դէմքին վրայ:

Վայրկեան մը ետքը հարիւր կարմիր ոսկիներ համրեց Աբրահամ էֆէնտի սեղանին վրայ:

Ասատիկ զանոնք գրպանեց անփոյթ դէմքով մը:

- Ե՞րբ կը տեսնաք այդ մարդիկը, - հարցուց վաճառականը:

- Այսօր իսկ, - պատասխանեց Ասատիկ:

- Կը խնդրեմ, որ անմիջապէս լուր մը բերէք ինծի, որպէսզի սիրտս հանգստանայ:

- Վաղը առտու լուրը կը բերեմ, - պատասխանեց Ասատիկ, - բայց դուք հիմակուընէ ապահով եղէք, որ ձեր անունը պիտի ջնջուի ցանկին մէջէն:

- Շատ երախտապարտ կը թողուք զիս:

- Բան մը չէ, Աբրահամ էֆէնտի, ես ձեռքէս եկած օգնութիւնը երբեք չեմ զըլանար բարեկամներու:

- Ողջ ըլլաք, Ասատի՛կ էֆէնտի:

Եւ բախտախնդիրը քանի մը թէմէննահներ ընելով՝ հեռացաւ վաճառականին քովէն:

Հա՞րկ է ըսել, որ ամբողջ ցանկին պատմութիւնը երեւակայական էր: Ինքն ալ, ուրիշներու պէս, դուրսէն լսած էր խորհրդաւոր ցանկի մը պատրաստութիւնը եւ իսկոյն խորհած էր, թէ ատիկա լաւ առիթ մըն էր միամիտները շահագործելու:

Անմիջապէս Բարեգործական միութիւններու ցուցակը ձեռք անցուցած էր ու գործի սկսած:

Աբրահամ էֆէնտիէն բաժնուելէ ետքը գնաց գտաւ ուրիշ վաճառական մը, որուն նոյն պատմութիւնը գրեթէ բառ առ բառ կրկնեց:

(Շար. 82)

Տիկին Էլիզ Աւետիսեան,
Տէր եւ Տիկին Օննիկ Աւետիսեան,
Տէր եւ Տիկին Վարուժան Աւետիսեան,
Տիկին Նորա Ռիկայլ-Նէմ եւ ամուսինը,

Վազգէն եւ Գայեանէ,
Սամիրա եւ Վիգէն,
Էսթէլ եւ Ինէս,

Տէր եւ Տիկին Սերոբ Աւետիսեան

եւ ընտանեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ-հօր, եղբօր եւ ազգականին՝

ԿԱՐԱՊԵՏ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հոկտ. 13-ին, 78 տարեկանին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Չորեքշաբթի, Հոկտ. 17, ժամը 15-ին Արնուվիլի Վարագայ Ս. Խաչ եկեղեցին 31-33, rue Saint-Just, 95400 Arnouville ուրկէ մարմինը կը փոխադրուի Սարսէլի գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Տիկին Է. Աւետիսեանի եւ զաւակներուն:

301 - 2001

L'Association Cultuelle de l'Eglise Apostolique Arménienne de Paris et de la Région Parisienne
organise
deux cycles de conférences
du Vendredi 23
au Dimanche 25 novembre
et
du Vendredi 30 novembre
au dimanche 2 décembre
à l'occasion du 1700ème anniversaire
de l'Adoption officielle
du Christianisme par l'Arménie

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայկական Աղքատախնամ ընկերակցութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները Յուլիսէն Հոկտեմբեր.–

Տէր եւ Տիկին Թիրեաքեան 5000 Ֆր., Ոմն 3000 Ֆր., Ոմն 2200 Ֆր., Իւկէթ Ռուս 2000 Ֆր., Դաւիթեան ընտանիք 1500 Ֆրանք, Տէր եւ Տիկին Ժան Տաւուտեան, Տէր եւ Տիկին Տ. Սարհատեան, Տէր եւ Տիկին Հարրութեան, Պր. Գոմպաճեան, Պ. Ռաֆայէլ Անքաուա հազարական Ֆրանք, Տիկին Ալպէրթին Սէմփօլ 700 Ֆր.:
(Շար.)

(Շար. Ա. էջէն)

ապա, այդ թեկնածութիւնը խնդրոյ առարկայ կ'ըլլար եւ հանրաքուէէ մը ետք 8810 անդամներու մօտ, կը մերժուէր Հոկտեմբեր 14-ի իրիկունը: Շարքայինները պէտք է վաւերացնեն այս նոր թեկնածութիւնը:

ԱԲԽԱԶԻՈՅ ՄԷՋ, բուռն կռիւներ կը շարունակուին եւ Աբխազները կ'ըսեն թէ պարտին կռուիլ ոչ միայն չէչէն կեռիլլային դէմ, այլեւ վրացական կանոնաւոր բանակին: Շարաթավերջին 15 վրացի եւ չէչէն մարտիկներ մեռած են:

ՊՈՒԼԷՆԹ ԷՃԷՎԻԹ յայտարարեց Հոկ. 14-ին որ իր երկիրը նիւթական կարեւոր օգնութեան մը պէտք ունի, դէմ դնելու համար ԱՄՆ-ու ռմբափորձերու հետեւանքով ծագած տնտեսական տագնապին: «Տնտեսական ընդհանուր ցնցումը սկսաւ զգալի դառնալ Թրքակայ տնտեսութեան վրայ և չեմ գիտեր թէ ինչքանի պէտք պիտի ունենանք» ըսած է նախարարապետը հարցազրոյցի մը ընթացքին: Թրքական ոսկին իր արժէքին 50%-ը կորսնցուցած է տոլարի բաղդատմամբ եւ կառավարութիւնը կը պարտաւորուի խստակեցութեան նոր ծրագիր մը կիրարկել:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ Նոպէլ մրցանակը շնորհուեցաւ ՄԱԿ-ի եւ անոր ընդհ. քարտուղարին՝ Քոֆի Անանի իրենց տարած աշխատանքին համար: Պոսնիա եւ Ռուանտա բաւական անընդունելի դատն նման ընտրութիւն մը, յիշելով որ 1995-ին ինք կը վարէր ՄԱԿ-ի ուժերը, երբ 7000 հոգի ջարդուեցան Սրեպրենիքա եւ 1994-ին ալ ՄԱԿ-ի ուժերը փախան Ռուանտայէն ապատ ձգելով ցեղասպանները:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Ելմոնէ Պօղոսեան իր տարաբախտ եղբօր՝ Սարգիս Պօղոսեանի մահուան Գ. տարելիցին ի յիշատակ 1000 Ֆրանք կը նուիրէ «Յառաջ»ին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS
ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ
Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆԸ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»

Գինեձօն երեկոյթի աւարտին:

CDCA

LANCEMENT DU PRIX DU CDCA

Communiqué

Le CDCA lance un prix qui récompensera l'auteur d'un travail universitaire ayant abouti à l'obtention d'un diplôme durant l'année 2001.

Ce concours, ouvert à toutes les disciplines, récompensera les meilleurs travaux dont le sujet porte, directement ou indirectement, sur l'Arménie ou les Arméniens.

Toutes les disciplines sont concernées: histoire, géographie, sociologie, économie, science de la vie ou de la terre, arts, sciences politiques, sciences physiques, droit, littérature, psychanalyse, architecture, cinéma etc...

Prix?

Trois prix ainsi qu'une possibilité de publication, récompenseront les meilleurs travaux :

— **1er prix:2300 euros (envrion 15090F)**
— **2ème Prix:1500 euros (environ 9800F)**
— **3ème Prix:765 euros (environ 5020F)**

Pour qui?

Tout étudiant titulaire d'un diplôme Bac+3 (niveau Licence ou équivalent) jusqu'à Bac+5 (DEA-DESS ou équivalent).

Type de document?

Tout document rédigé en français ou en anglais ayant donné lieu à la délivrance d'un diplôme par des organismes d'enseignement français : rapport de stage, mémoire, document de fin d'études, film etc...

Jury

Un jury pluridisciplinaire composé de chercheurs, professeurs et universitaires déterminera les trois œuvres jujées les meilleures tant sur le plan de l'originalité du thème que de la forme.

Inscription, remise de documents et des pièces justificatives :
avant le 31 janvier 2002.
Remise des prix: **1er mai 2002.**

Règlement et formulaire d'inscription à retirer auprès du Comité de Défense de la Cause Arménienne (C D C A), 17, rue Bleue, 75009 Paris,
Tél. : 01 44 83 07 02

Règlement du concours disponible sur
http://www.cdca.asso.fr

Paris, le 24 septembre

ՄԱՐՍԷՅԼ
ՍԱՀԱԿ – ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ Օծման եւ Անուանակոչութեան 70-րդ տարեդարձ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԱԹ

Բանախօսութիւն
Հայ Առաքելական Եկեղեցւոյ մասին

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակ
Կեդրոնական
Եւրոպայի եւ Շուէտի
«Հայ Գրի եւ Գրականութեան Ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի Սուրբ Ձեռամբ»

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՊԵՔՃԵԱՆ
Առաջնորդ Գերմանիոյ Հայոց
«Հայ Ծէսի Ծագումն ու Զարգացումը»

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Լիոն եւ Շրջակայքի
«Կրօնական Անտարբերութիւնը Ներկայիս»

Շաբաթ, Հոկտեմբեր 20, ժամը 20.30-ին
Մայր Եկեղեցւոյ մէջ
339, avenue du Prado, 13008 Marseille

Մուտքը ազատ է:

CENTRE CULTUREL
SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN
Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

***

Rouben ELBAKIAN
Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04. 91. 77. 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

Centre Culturel
SAINT MESROB
A PARIS

Conférence - Débat

avec projection de diapositives
sur le thème :
AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par
JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle
et
VINCENT TARAKDJIAN
Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris V[e]
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre - Cocktail —

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

La Section **«HELEN PUZANT» d'Alfortville**
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec **l'Orchestre GAIDZAG'S et attraction surprise...**
Renseignements et réservations :
☎ 01 43 76 55 89

— ● —

"NAVASART" à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30
— Billets : **100 F.** et **120 F.**
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.
Mise à disposition d'un autocar au départ de Paris.
Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— ● —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY
Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

— ● —

SOIREE DANSANTE

organisée par
La Section «TER-DAVTIAN» de la Croix Bleue des Arméniens de Chaville
le Samedi 27 octobre
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

— ● —

Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Dîner et soirée dansante pour le réveillon.
Date limite d'inscription : 30 Novembre
Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— **01. 42. 36. 33. 73** (la journée)
— **01. 46. 58. 03. 17** (le soir)

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 17
MERCREDI
17 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 20·276 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.276

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱԾԽԱԽՏԻ ՄՂՁԱՒԱՆՋԸ ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄՈԶԻՉ ՉԵՆ

Ածխախտի փիէօզը, ինչպէս գրեցինք մեր նախորդ թիւով, ցամաքէ ցամաք կը տարածուի եւ յաճախ անհամ կատակներու արդիւնք է : Ի դէպ, շփոթութիւն մը ստեղծուած է Ֆրանսայի մէջ, Ամերիկա գործածուած անթրաքս բառին պատճառով : Արդարեւ, Ամերիկերէնի մէջ անթրաքսը ածխախտին անունն է, մինչ Ֆրանսայի մէջ ան փոփոխուած վէրքի մը կը համապատասխանէ (փիւրոնքլը), իսկ ածխախտին համար Ֆրանսացիք կ'ըսեն մալատի տիւ շարպոն, որ ներկայի մղձաւանջն է : Հոկտ· 15-ին ԱՄՆ-ու Ծերակոյտի դեմոկրատ ընդդիմութեան ղեկավարին ստացած մէկ նամակը ածխախտի մանրէ կը կրէր եւ ստուգումները դրական արդիւնք տուած էին : Ենթական՝ Թոմաս Տէշըլ բժշկական խնամքի տակ էր : Պարագաներու բազմացումը որոշ խուճապի դուռ բացած է, թէեւ մեծ մասը իրականութեան չեն համապատասխաներ : Այսպէս, Փարիզի մէջ, Հոկտ· 15-ին, շուրջ 30 հոգի հիւանդանոց փոխադրուեցան Գոլէժ տը Ֆրանս, Պէօ տէ Տէփօ եւ Թրէզոր Փիւպլիքի գրասենեակ մը կասկածելի պահարաններու յայտնաբերումէն ետք, բայց քննութիւնները մտահոգիչ ոչինչ տուին : Այսուհանդերձ, կասկածելի պահարաններու համաճարակ մը կայ Աւստրալիա, Եւրոպա եւ այլուր :

*
**

ԱՄՆ-ու Արտաքին նախարարին՝ Գոլին Փաուըլի Փաքիստան այցելութիւնը մեծ աղմուկ հանած է ժողովուրդին մօտ, որ չի ծածկեր հակամերիկեան իր բուռն զգացումները զանգուածային ցոյցերով : Ամերիկացին Իսլամապատ գացած էր շնորհակալութիւն յայտնելու համար նախագահ Մուշարաֆի, իր բերած «համար. ձակ եւ քաջարի» նեցուկին համար : Այցելութիւնը, գրեթէ դաղտագողի տեղի ունեցաւ (Հոկտ· 15) աւելի չգրգռելու համար ժողովուրդը : Նախարարը կ'ուզէր նաեւ խորհրդակցիլ Աֆղանիստանի յետագայ իշխանութեան մը կազմութեան մասին, այսինքն՝ Թալիպաններէն յետոյ, թէեւ ներկայիս «յետոյ»ի հարց չկայ : Ռմբակոծութիւնները ոչինչ լուծած են, բացի հրահրելէ հակամերիկեան տրամադրութիւններ, նաեւ Աֆղանիստանէն դուրս, քանի ռումբերու զոհ գացած բնակիչներու, երախաներու թիւը երթալով կը մեծնայ, թէեւ Ամերիկացիք կը պնդեն որ «խելացի» օրակուած ռումբեր կը նետեն, այսինքն իրենց թիրախը խոցող : Կը թուի որ բոլոր ռումբերը «խելացի» չեն : Ցաւալի է տակաւին, որ ոչ ոք կը համոզուի այս ռմբակոծութիւններու օգտակարութեան : Ահաբեկչութեան հարցը չի լուծուիր անմեղ մարդիկ մեռցնելով եւ երկիր մը քարուքանդ ընելով :

*
**

Ֆրանսայի Արտաքին նախարարը՝ Հ· Վետրին հռոմ գացած է եւ տեղւոյն իր պաշտօնակիցին հետ, տեսնուած են Աֆղանիստանի նախկին թագաւորին հետ, 87 տարեկան, որ վերստին միապետութիւն հաստատելու միտք չունի, բայց, խորհուրդներ կու տայ : Շեշտած է·- «Վարչակարգը որ պիտի յաջորդէ Թալիպաններուն պէտք է համախմբէ երկրին ցեղախումբերու ամբողջութիւնը» : Ինչպէս կը տեսնուի ամէն մարդ սկսած է ապագայ կերտելու մասին խօսիլ···:

*
**

Տեղւոյն վրայ, Հիւսիսի Զինակցութիւնը, որ տեսակ-տեսակ ցեղախումբերու (առժամեայ) համախմբում մըն է, յարձակման անցած է դէպի Մազար-է-Շարիֆ որ Թալիպաններու բերդը կը նկատուի :

*
**

Լոնտոնի մէջ, ընդունելով Արաֆաթը, Թոնի Պլէր ալ արտայայտուեցաւ ի նպաստ պաղեստինեան Պետութեան մը ստեղծման :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՕԼԻՎԻԷ ՇՐԱՄԷՔԻ գիրքը, հրապարակ ելլելէն առաջ իսկ, սուր բանավէճի նիւթ դարձաւ : Արդարեւ, Շրամէք որ Ժոսփէնի գրասենեակին պետն է, գիրք մը ստորագրած է՝ «Մաթինեոն, Բիվ Կօշ», ուր ծանրօրէն կը քննադատէ, աւելին՝ կ'ամբաստանէ համակեցութիւնը : Ան «վտանգ մըն է Հանրապետութեան համար» ըստ իրեն, որ գործադիրին պառակտումին կը տանի : Աւելի աղէտալի կացութիւն մը չկայ մեր երկրին համար, կը գրէ : Ընդդիմութիւնը հրաժարումը կը պահանջէ, քանի ինչ որ կը պատահի նախընթաց չունի : Պաշտօնի գլուխ, եւ այն ալ նախարարապետի գրասենեակի պետ մը, գիրք մը հրատարակէ նման բովանդակութեամբ : Այս առթիւ, Շրամէքի հետ հարցազրոյց մը հրատարակած է Լը Մոնտ (Հոկտ· 16), ուր ենթական կ'ըսէ թէ Ժոսփէն տեղեակ էր, չէ ընդդիմացած, այլապէս հրաժարած կ'ըլլար հրատարակելէ : Կ'ըսէ նաեւ թէ ազդարարութիւն մըն է քաղաքացիներուն, որ չկրկնեն համակեցութեան սխալը յառաջիկայ ընտրութիւններուն : Միաժամանակ Ժոսփէնի թեկնածութիւնը կը դնէ նախագահական ընտրութեան :

ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՀՈԿՏ· 16-ին, հանրային մարզի սպասարկութիւնները գործադուլի դիմած էին, զգալի կերպով խանգարելով երկրին բնականոն կեանքը : Շարժումը գլխաւորաբար կը վերաբերէր փոխադրամիջոցներուն, մանաւանդ երկաթուղիին, մեթրօ եւ հանրակառք բանուկ ժամերուն չմասնակցեցան շարժումին : Պահանջները չեն փոխուիր, կը վերաբերին աշխատավարձքի վերարժեւորման, աշխատանքի պայմաններու բարելաւման, հանգստեան թոշակի : Գործադուլը 24 ժամուան համար էր միայն :

ՇԱՐՈՆ, ծայրայեղ աջի երկու նախարար կորսնցուց· ասոնք, հրաժարելով, ուզեցին արտայայտել իրենց դժգոհութիւնը իսրայէլեան բանակի Հեպրոնէն քաշուելուն նոյն օրը, այսինքն Հոկտ· 15-ին : Իսրայէլի վարչապետը ստիպուած եղած էր տեղի տալ միջազգային ճնշումին եւ իր կառավարութեան ձախ հոսանքին, որոնք կը պահանջէին որ թեթեւնան Պաղեստինցիներու պարտադրուած սահմանափակումները : Այս հրաժարումներէն ետք, Շարոն, դեռ 76 աթոռ կ'ունենայ 120-ի վրայ : Բայց, այս երկու հրաժարումները կրնան նաեւ խախտել իր մեծամասնութիւնը եւ ծնունդ տալ քաղաքական տագնապի մը : Կը թուի որ Համասի մէկ նոր պատասխանատուին սպանութիւնը կը միտի հանդարտեցնել Իսրայէլի ծայրայեղականները :

ԱՐԺԱՆԹԻՆԻ մէջ, երեսփոխանական ընտրութիւնները լայնօրէն ապահովեցին փերոնականներուն յաղթանակը : Անոնք, անգամ մը եւս երկրին քաղաքական գըլխաւոր ուժը կը դառնան եւ երկրին նախագահը՝ Տէ Լա Ռուա այլեւս անոնցմէ կախում ունի, կորսնցուցած ըլլալով իր մեծամասնութիւնը :

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԲԽԱԶԻՈՅ միջեւ վերստեղծուած հակամարտութեան պատասխանատուութիւնը մէկը միւսին վրայ կը ձգէ : Ամէն ինչ վերսկսաւ, երբ Հոկտ· 8-ին ՄԱԿ-ի դէտեր փոխադրող թռչող մը վար առնուեցաւ եւ անկէ ի վեր կռիւները կը շարունակուին Աբխազներուն եւ շուրջ 200 մարտիկներու միջեւ, որոնց մէջ Չէչէններ եւ Աբխազիայէն վտարուած Վրացիներ կան :

ՉԷՉԷՆԻՈՅ մէջ, ապստամբ 20 մարտիկներ եւ ինը քաղաքացիներ սպաննուած են, ըստ մամուլի ռուսական գործակալութիւններուն, մինչ անկախապաշտ Չէչէնները կ'ըսեն թէ 32 ռուս զինուոր սպաննած են :

ԱԼԺԵՐԻՈՅ մէջ, 11 քաղաքացորդեր սպաննուած են, Հոկտ· 15-ին, խալամասնայներու մէկ թակարդի իյնալով : Երկու հովիւներ ալ մորթուած են Թիարէթի շրջանը :

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՄԱՀ ԳՐՈՂ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ

Հոկտ· 13-ին, Երեւանի մէջ իր մահկանացուն կնքած է գրող, պատմագէտ, հրապարակագիր Հայկ Խաչատրեան : Ծընած էր 1926-ին, Ստեփանակերտ : Աւարտած է Երեւանի համալսարանի բանասիրութեան ճիւղը 1950-ին, եղած է Արմէնփրէսի գլխաւոր խմբագիր (1964-65), «Հայրենիքի Ձայն» թերթի խմբագրի տեղակալ, 1971-էն աշխատած է Հայկական Հանրագիտարանի խմբագրութեան մէջ : Հեղինակ է բազմաթիւ հատորներու, գըլխաւորաբար պատմական բնոյթ ունեցող, ինչպէս՝ Տիգրան Մեծ, Էրէբունի, 1967-ին եւ 1968-ին, ապա Տիգրան Մեծ (1972), Արտաւազդ (1975), Վանատուր (1978) եւլն·, եւլն· :

*
**

ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Եւրոպայի Խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի պատուիրակութիւն մը Հոկտ·15-ին գացած է Երեւան : Նոյն օրը այցելած է Նուպարաշէնի բանտը, հանդիպում ունեցած կարգ մը բանտարկեալներու հետ : Պատուիրակութիւնը մինչեւ Հոկտ· 18 կը մնայ Հայաստան : Ծրագրուած են հանդիպումներ Արտաքին գործերու նախարարին, գլխաւոր դատախազին, Արդարադատութեան, Ներքին գործերու նախարարներուն, փնռաբեկ ատեանի նախագահին, նաեւ վարչապետին ու Հանրապետութեան նախագահին հետ :

ԱՄՆ

ԺՈԶԷՖ ՊՕՂՈՍԵԱՆ ԱՌԵՒՏՈՒՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿՑՈՐԴ

Միացեալ-Նահանգներու նախագահը Առեւտուրի նախարարութեան կցորդ նշանակած է Ժոզէֆ Պօղոսեանը, պատրաստութեամբ դատախազ, որ իր նոր պաշտօնին գլուխը պիտի զբաղի առեւտուրի զարգացման հարցերով :

ԱԲԽԱԶԻՈՅ ՀԱՐՑԸ ԵՒ ԹՈՒՐՔԵՒՎՐԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Աբխազիոյ խնդրին առնչութեամբ ըստեղծուած Ռուսաստան-Վրաստան լարուած վիճակը սկսած է լրջօրէն մտահոգել Անգարան : Ասոր գլխաւոր պատճառը այն է որ Ռուսաստան զօրք կուտակած է Վրաստանի սահմանին վրայ, այն տպաւորութիւնը ստեղծելով որ ի հարկին կրնայ չէչէն ահաբեկչութեան պատճառաբանութեամբ, ԱՄՆ-ու Աֆղանիստանի միջամտութեան նման քայլի մը դիմել : Այդ կարգի զարգացումի մը կըլկասեան հետեւանքներէն մտահոգուած, Անգարա հրաւիրած է Վրաստանի Արտաքին գործերու նախարարը Մենաղարիշվիլի : Իրեն հետ տեսակցելէ ետք, Թուրք նախարարը Ի· Ճէմ վարչապետ Էճէվիթի հետ քննարկած է նիւթը եւ ինչպէս կը տեղեկացնէր Հոկտ· 15-ի Թուրք մամուլը, Ճէմ - Մենաղարիշվիլի եւ Ճէմ - Էճէվիթ տեսակցութիւններէն եւ ԱՄՆ-ու հետ շփումներէ ետք, Վրաստանին զօրավիգ կանգնելու եւ ապահովութեան տեսակէտէն պաշտպան կանգնելու երկու որոշում տրուած է· առաջինը երրեակ սերտ գործակցութիւն մըն է, ապահովութեան մարզն ալ ներգրաւող, Թուրքիոյ, ԱՄՆ-ու եւ Վրաստանի միջեւ· երկրորդը՝ նոյն բնոյթի գործակցութիւն մը՝ Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ Վրաստանի միջեւ :

Թուրք մամուլը կը տեղեկացնէ թէ վրացի նախարարը գոհունակութեամբ բաժնուած է Անգարայէն, ուրկէ թէեւ իրեն յանձնարարուած է նաեւ ահաբեկիչներու ապաստան տալու տպաւորութիւնը ստեղծելու կարող ընթացքէ խուսափիլ, թիրախ չըլլալու համար Ռուսաստանի հակազդեցութեան :

*
**

Վրաստանի աբխազական հարցը ըսկիզբ առած է 1991-ին երբ խորհրդային Հանրապետութիւնները յաջորդաբար անկախութիւն կը հռչակէին ու Միութիւնը կը քայքայուէր : Աբխազիա ալ որ երկրին ինքնավար մէկ մարզն էր, անկախութիւն հռչակեց նոյն թուականին : Յաջորդ տարի Օգոստոս 16-ին վրացական զօրքեր հրասայլերով մտան մարզին մայրաքաղաքը Սուխումի : Չէչէնները զօրավիգ եղան Աբխազներուն ու 1993-ին վրացական զօրքերը պարտութիւն կրեցին : Այդ կռիւներուն մասնակցած էր Թուրքիայէն 2500 հոգինոց խումբ մըն ալ :

Վրաստան ջանաց կացութեան դարման գտնել, 1993-97 տարիներուն սիրաշահելով Ռուսաստանը որ Օ-ԷՍ-Սէ-Ը-ի շրջանակին մէջ զօրք փոխադրեց հոն : Շիվարնաձէ կը ծրագրէր խաղաղութեան այդ ուժէն օգտուիլ, Աբխազիան կրկին վրացական տարածքի վերածելու համար ու ատոր փոխարէն յօժարեցաւ իր գինուորական չորս խարիսխները Ռուսերուն գործածութեան տրամադրել :

Վերջին զարգացումներուն պատճառ եղան Գոտորի կիրճին բախումները, Վրացիներու եւ Աբխազներու միջեւ : Այդ կիրճը կողմերուն միջեւ վիճայարոյց գօտի մըն է : Թիֆլիս Ռուսաստանը ամբաստանեց որ վրացական գիւղերու ռմբակոծումին համար օգնած է Աբխազներուն եւ հրահանգեց որ երեք ամիսէն ետ քաշէ խաղաղարար իր ուժերը : Մինչ Մոսկուա իր կարգին Վրաստանը ամբաստանեց չէչէն անջատողականներու պատսպարան տալով :

Ռուսաստանի նախկին վարչապետ Պրիմակով ալ նիւթին մասին արտայայտըւելով ըսած է թէ սխալ է Ռուսաստանի դէմ Վրաստանի հետեւած ուղին եւ թէ իր երկիրը թոյլ պիտի չտայ որ Թիֆլիսի նեցուկով Չէչէնները գործունէութիւն ծաւալեն նաեւ Ջերքէզներու եւ այլ շըրջաններու մէջ :

ԱՆՄԵՂ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼՆԵՐՈՒ «ՏԱՆԻՔ»Ը

Դատարանական, արդարութեան կամայականութիւններ բացառուած չեն նոյնիսկ ամէնէն ժողովրդավար, մարդու յարգանքի տէր համարուած երկիրներու մէջ: Թերեւս անոնց ու ամբողջատիրական, մենատիրական ղեկավարութիւն ունեցող միւսներուն միակ տարբերութիւնը այն է որ առաջինները ունին ազատ լրասփիւռներ որոնք կ'արձագանգեն պարագաներու, հանրային կարծիք կը ստեղծեն ու կրնան մինչեւ իսկ ազդեցութիւն բանեցնել գոնէ որոշ գործարքներու վրայ: Ամէն պարագայի, աղաղակող իրականութիւն է որ արդարութեան անկախութիւնը շատ դիւրին հանդուրժելի բան չէ, նոյնիսկ ամէնէն զարգացած, լայնախոհ ղեկավարութիւններու համար: Ըստ հարկի եւ տեղի միջամտութիւններ կ'ըլլան, քողարկելու համար սա կամ նա պարագան: Այս կարգի արձագանգներ կը հասնին աշխարհի բոլոր անկիւններէն:

Հայաստանի մէջ արդարութեան նման «սեփականաշնորհում»ի քիչ մը շատ ակներեւ դրուագ մը առնչուեցաւ երկրին կրթական մարզին յաջողագոյն գործիչ ու նաեւ քաղաքական դէմք Աշոտ Բլէեանի. անոր անձին մէջ կամուոր կերպով չփոթուեցան կրթական ու քաղաքական յատկանիշները ու երկրորդը պատժելու համար առաջինը ամբաստանուեցաւ դրամական զեղծարարութեամբ. ատիկա ալ լայնօրէն բաւեց որ ենթական աւելի քան երկու տարի արգելափակուած մնայ, անդին իր գլխաւորած դպրոցական համալիրն ալ հասնի քայքայման եզրին: Դժուար է այսօր որոշել թէ ո՛րն է այս պատմութեան ամէնէն ծանրակշիռ մասը. մարդկային իրաւունքներո՞ւ առնչուածը, թէ Մխիթար Սեբաստացի համալիրին նման հաստատութեան մը քանդումով արձանագրուելիք հանրային վնասը: Կայ տակաւին գոնէ արդարութեան համակարգին վարկաբեկումի գլուխն ալ, քանի որ դատարանը երկար ու յամառ ճիգերով հանդերձ, ամբաստանութեան համոզիչ հիմ չկրցաւ ձեռք ձգել. նոյն հացէին հաշիւին է Ա. Բլէեանի գրեթէ անակնկալ ազատ արձակումն ալ որ տեղի ունեցաւ դատ-դատարան - դատաւոր - դատավճիռ տրամաբանական չղթայէն բաւական անկապ ձեւով:

Այսօր ան ազատ է, վերադարձած Մ. Սեբաստացիի վարչութեան գլուխը. համալիրը կարելի եղած է, բարեբախտաբար, ետ բերել անդունդին բերնէն ու նորէն բոյն է բախտաւոր պատանիներու բազմութեան մը որ հոն աշակերտելու երջանկութիւնը ունի: Սակայն, Ա. Բլէեան չէ մոռցած իր գլխուն պայթածը ու նախաձեռնած է կազմակերպութեան մը, իր նմանները խմբելու եւ ապօրինի կերպով դատապարտուածներու իրաւունքներուն պաշտպանութեան պայքարը մղելու համար: Կազմակերպութիւնը կը կոչուի «Տանիք»:

Սեպտ. 28-ին «Տանիք»ը կլոր սեղանի մը հրաւիրուած է շարք մը ապօրինի դատապարտուած նախկին բանտարկեալներ: «Հայկական Ժամանակ»ը (Սեպ. 29) ձեռնարկին նուիրած իր էջին մէջ երեւոյթը «աննախադէպ» կը կոչէ, քանի որ իրաւունք պաշտպանել վճռածները մասնագիտութեամբ իրաւաբան չեն, այլ արդարութեան զոհեր: Բացման իր խօսքին մէջ Ա. Բլէեան «քաղաքական բանտարկեալ»ի հանգամանքով ներկայացուցած է անարդարօրէն բանտարկուած բոլոր քաղաքացիները, որոնց պարագային անտեսուած է իրաւունքի գերակայութեան սկզբունքը. այլ խօսքով՝ բոլոր անոնց, որոնց դատին ընթացքին «դատարանը գիտակցուած հանդէս է եկել իշխանութեան կողմում, ենթարկուել է դատախազի թելադրանքին»: Այս խումբին մէջ ալ Ա. Բլէեան զանազանած է իրեն նման քաղաքական դէմքերը եւ շարքային քաղաքացին, քանի որ առաջինները որոշ պաշտպանութիւն մը կը վայելեն առհասարակ, շնորհիւ հանրային կարծիքին. իսկ միւսներուն ենթարկուած ապօրինութիւնները որքան ալ աղաղակող ըլլան, ոչ ոք անոնց կ'անդրադառնայ: Ան ուզած է որ հանրային գիտակցութեան մէջ արմատանայ համոզումը թէ անարդարօրէն դատապարտուածները զոհեր չեն. այս վերջիններն ալ այդ գիտակցութիւնը ըստեղծելու համար պէտք է պայքարին իրենց իրաւունքներուն համար:

Վահագն Թեւոսեան կը տեղեկացնէ թէ խնդրոյ առարկայ խումբէն չորս հոգի մասնակցած են նոյն կլոր սեղանին: Բոլորին պատմութիւնը առանձին գրքոյկով լոյս պիտի տեսնէ. սակայն, արդէն յըստակ դարձած է որ արդարութեան մարմիններուն ապօրինութեան թիրախ այդ անձերը կը կորսնցնեն վարժէք կեանքին վերադառնալու կարելիութիւնը: Ատոր պատճառը ոչ թէ հանրային կարծիքին խակական, կամ ենթադրեալ ճնշումն է, այլ՝ իրաւապահներու հետապնդումը: Փաստուեցաւ որ, կ'ըսէ յօդուածագիրը, անոնք ի հարկին կրնան որեւէ մէկուն գրպանը թմրեցուցիչ դնել, մէկում կինն ու զաւակը պատանդ առնել, մէկը քանի մը օր մեկուսարանին մէջ խոշտանգել, կամ իր ընտանիքին հետ գրօսնող հայր մը մեղադրել երկու պոռնիկի բռնաբարութեամբ, եւլն.: Այդ բաները կ'ըլլան առանց որեւէ բացատրութեան:

Կլոր սեղանին հնչած զարմանալիներէն եղած է այն դրուագը ուր դատարանը մէկը մէկուկէս տարի բանտարկութեան դատապարտած է... դատարանին մէջ ծամօն ծամելուն համար: Ներկայ երկու նախկին դատապարտեալ ալ ըսած են թէ առնուազն վեց տարուան պատիժի արժանի ամբաստանութիւններու թիրախ եղած են, սակայն իրենց ջանքերով ատեանը չէ յաջողած փաստել ամբաստանութիւնները. այն ատեն իրաւապահները իրենց խոստովանած են. «Արդարացման դատավճիռը անհնար է, բայց ձեզ կը տանք ճիշդ այնքան, որքան նստել էք»: Արդիւնքը այն եղած է որ ծանր յանցանքներով ամբաստանուած այդ մարդիկը ազատ արձակուած են, մօտ տարուան մը բանտարկութենէ ետք:

Կարելի է հարց տալ թէ նման պարագաներ կազմակերպութիւն մը ստեղծելու եւ պահելու չափ թիւ կը ներկայացնե՞ն. «Այսպիսի քաղաքացիների առատութիւնն է ստիպել "Տանիք"ի հիմնադիրներին նոր իրաւապաշտպան կազմակերպութիւն ստեղծել» կ'ըսէ Վ. Թեւոսեան, պատասխանելով նման հետաքրքրութեան:

«Տանիք»ի կազմութեան ու անոր կլոր սեղանին մասին գրուածները կարդալով, դժուար է չանդրադառնալ արդարութեան հակադիր անընդունելիին որ կը պարզուի Հոկտ. 27-ի ոճրագործներուն դատավարութեամբ: Այլեւս, հաւանօրէն, ոչ ոք կը յուսայ այդ դատավարութեան ընթացքը նշմարել դէպի օրէնքին հունը:

Ու երկու պարագաներուն համատեղումը անգամ մը եւս մտածելու կը մղէ թէ Հայաստանի երբեմն որքա՛ն կը նմանի առածին գիւղին ուր շուները անարգել կը յարձակին եկուորին վրայ, մինչ քարերը կապուած են...:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Գ. ՆԺԴԵՀԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Դիւանիներու վարչութեան մէջ Հոկտեմբեր 9-ին տեղի ունեցած է «Գ. Նժդեհ եւ հայ ազատագրական պայքարը» թեմայով գիտաժողով, Գ. Նժդեհի 115-ամեակին առթիւ: Ելոյթ ունեցողները ծանրացած են անոր գաղափարներուն այժմէական բնոյթին ու համամարդկային նշանակութեան վրայ: Անոնք նաեւ շեշտած են Նժդեհի վերաբերող նիւթերը մէկտեղելու անհրաժեշտութիւնը, քանի որ այդ նիւթերը մասամբ կը գտնուին Ռուսաստան, Պուլկարիա, Ռումանիա:

ՄԱՐՄԱՐԱ

ՑՈՒՑԱՏԵՏՐ

ՄԵՐ ՏԱՐԵՑՆԵՐԸ

Խօսակցութեան նիւթ մը կայ, որ Խըմբագրատան մէջ օրակարգի կու գայ ամէն անգամ որ կ'ունենանք հայ մամուլի հարցերով հետաքրքրուող կամ տառապող այցելու մը: Այս նիւթը իր տեղը բնաւ չէ կորսնցուցած մեր օրակարգին վրայ: Երեսուն տարի առաջ ալ կը խօսէինք այդ մասին: Երեսուն տարի առաջ ալ այդ հարցը կը յուզէր մեզ: Միայն թէ երեսուն տարի առաջ այդ մասին խօսելու ընթացքին այնքան յոռետես չէինք, որքան յոռետես ենք այսօր:

Հարցը ընթերցողներու տարիքին մասին է: Այն օրէն ի վեր երբ ստանձնեցի թերթին պատասխանատուութիւնը, առիթներ երբեք չպակսեցան որպէսզի ամէն օր զգամ թէ մեր ընթերցողները մասնաւորաբար մեր երէցներն ու մեր տարեցներն էին: Երիտասարդ սերունդը ընդհանրապէս չէր հաղորդուեր մեզի հետ: Չէր կարդար մեզ: Որովհետեւ երիտասարդ սերունդը, մեր տարեցներուն նման չէր տիրապետեր մեր լեզուին, կը դժուարանար հայերէն կարդալու, այդ դժուարութեան պատճառաւ ալ հաճոյք չէր զգար հայերէն կարդալէ: Ոմանք երբեմն մեզ կը յանդիմանէին, կը պնդէին որ երիտասարդները մեզ չէին կարդար անոր համար որ մենք գիրենք շահագրգռող նիւթեր չէինք հրատարակեր: Բայց այդ ախտաճանաչումը սխալ էր: Երիտասարդները մեզ պիտի չկարդային, նոյնիսկ եթէ ամբողջ թերթը լեցնէինք իրենց համար սիրելի նիւթերով: Որովհետեւ նիւթը չէր որ զանոնք հեռու կը պահէր հայ մամուլէն, այլ լեզուն, մեր Մեծասքանչը:

Այո՛, երեսուն տարի առաջ, այսպէս, յաճախ կը գանգատէինք որ մեր ընթերցողները միայն տարեցներն են, բայց ատկէ անհանգիստ չէինք ըլլար, որովհետեւ մեզ կարդացող այդ տարեցներուն թիւը բարձր էր: Բաւարար թիւով ընթերցող ունէինք եւ այդ թիւը կը բաւէր մեզի, կ'երջանկացնէր մեզ: Բայց տարիները ոռոնք անցան, իրենց հետ տարին այդ տարեցներուն մեծ մասը: Տակաւ սկսանք նշմարել որ մեզմէ հրաժեշտ առնող իւրաքանչիւր հայ տարեց ընթերցողին տեղ նոր մը չէր ժամաներ: Հայերէն կարդալու ատակ տարեցներուն թիւը կը պակսէր օրէ օր, երիտասարդները կը շարունակէին մնալ մեզմէ հեռու, եւ այս պատկերը սկսած էր այլեւս լրջօրէն անհանգստացնել մեզ:

***

Քանի մը օր առաջ Խմբագրատան մէջ մեզի այցելութեան եկան Ֆրանսահայ այր ու կին մը, նախկին Պոլսահայ: Մօտաւորապէս քսան տարիէ ի վեր Ֆրանսայի մէջ կը բնակէին եւ եկած էին կարճատեւ արձակուրդ մը անցընելու: Շատ խանդավառ էին, իրենց նախկին բնակավայրին հանդէպ կարօտ ունէին, բայց դժգոհ ալ չէին արտասահմանի իրենց այսօրուան կեանքէն:

- Ի՞նչ գործով կը զբաղիք, հարցուցի այր մարդուն:

- Արեւելեան սննդեղէններու մարքէթի մը մէջ պաշտօնեայ եմ, պատասխանեց ան: Բոլորովին Արեւելեան սննդեղէններ կը վաճառենք: Բաւական ընդարձակ խանութ մըն է մերը: Սեփականատէրն ալ Հայ մըն է:

Քանի քանի անգամներ Փարիզի մէջ այցելած եմ փոքրիկ նպարավաճառներ կամ մարքէթներ, որոնք միայն Արեւելեան, կամ հայկական, կամ թրքական արտադրութիւններ կը վաճառեն: Այդ խանութները միշտ յաճախորդ ունէին: Լաւ գործ կ'ընէին:

- Հետաքրքրական գործ է, ըսի:

- Այո՛, բայց գործերը հիմա առաջուան չափ փայլուն չեն, պատասխանեց մեր հիւրը: -

- Ինչո՞ւ, հարցուցի, մարդիկ առաջուան չափ չե՞ն ուտեր այլեւս:

Մեր հիւրը գլուխը շարժեց տխուր ժըպիտով մը:

- Այդ չէ, ըսաւ, մեր յաճախորդները առաջ տարեցներն էին: Արեւելքէն Ֆրանսա գաղթած երէցներ, որոնք տակաւին ամէն օր կը փնտռէին այն սննդեղէնները, որոնց վարժուած էին ամբողջ կեանքի մը ընթացքին: Անոնք տեղական խոհանոցին հետ չէին կրցած հաշտուիլ: Մնաց որ հաճոյք ալ կը զգային մեր խանութը այցելելէ, ուրիշ յաճախորդներու հետ զրուցելէ: Այդ տարեցները մեկնեցան այս աշխարհէն: Անոնց զաւակները ֆրանսական կեանքին ու խոհանոցին յարմարած են, տեղւոյն բարքերը իւրացուցած են, անոնք երբեք պահանջքը չեն զգար մերինին նման խանութներ այցելելու: Ա՛յս է պատճառը որ մեր յաճախորդներուն թիւը հետզհետէ պակսեցաւ:

Ապշահար մնացի այս բացատրութեան դիմաց: Ահաւասիկ ասիկա նիւթ մըն էր որուն մասին բնաւ չէի մտածած: Ինչ որ պատմած էր մեր հիւրը, բոլորովին նորութիւն մըն էր ինծի համար: Զարմացայ որ ի՞նչպէս աւելի առաջ չէի մտածած այդ մասին:

- Ուրեմն դուք ալ մեզի կը նմանիք, ըսի դառն ժպիտով մը:

Հիւրս չհասկցաւ:

- Ի՞նչպէս թէ ձեզի կը նմանինք:

- Տեսէք, ըսի, տարիներէ ի վեր կը գանգատինք որ մեր տարեց ընթերցողները հետզհետէ կը մեկնին, իսկ անոնց զաւակները մեզ չեն կարդար, հայերէն կարդալ չեն ուզեր, որովհետեւ անոնք իրենք զիրենք աւելի հանգիստ կը զգան տեղական լեզուին մէջ: Հիմա կը տեսնեմ որ մենք առանձին չենք եղեր: Դուք ալ մօտաւորապէս նոյն ճակատագիրը ունիք:

Մեր այցելուն հասկցաւ եւ գլուխը հաստատեց:

***

Յետոյ, նիւթը փոխեցինք: Ուրիշ հարցերու մասին խօսեցանք: Զանացինք աւելի զուարթ մթնոլորտ մը ստեղծել: Բայց վստահ էի որ երկուքս ալ մեր միտքէն կ'աղօթէինք, որ Աստուած երկար ու առողջ կեանք տար մեր տարեցներուն:

Ռ. Հ.

ՎԻԼԷՐ ՍԻԻՐ ՄԷՐԻ ՓԱՌԱՏՕՆԻՆ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐԸ՝

Ի. Թորոսեան եւ Վ. Մարտիրոսեան

Նորմանտիի Վիլէր Սիւր Մէր քաղաքին մէջ ամէն Օգոստոսին դասական երաժըշտութեան փառատօն մը տեղի կ'ունենայ: Այս տարուանը, 11-րդը, նուիրուած էր «Միջերկրականեան» թեմային: Եօթը օրուան համերգներու յայտագիրը կը պարունակէր երկու հայ արուեստագէտներու անունները. ջութակահար Իրիս Թորոսեանի եւ դաշնակահար Վահան Մարտիրոսեանի:

Ի. Թորոսեան որպէս ջութակահար ծանօթ ու գնահատուած անուն մըն է դասական երաժշտութեան ֆրանսական, նաեւ եւրոպական շրջանակներուն մէջ: Օգոստոս 20-ին ան նախ Սառա Լուվիոնի ընկերակցութեամբ նուագեց Ֆոռէի Ֆանթազի օփիւս 79-ը, ապա Ճ. Պիւլէ կտոր մը: Մեծապէս տպաւորիչ էր Ֆալլայի «Տանս տը լա վի պրէւ»ը, ինչպէս Տրպիւսիի սրինգի, ջութակի եւ ջութի երրեակը. այս կտորին մէջ Ի. Թորոսեանի եւ Ս. Լուվիոնի միացաւ ջութահար Ֆրանսուա Մէրօ:

Վահան Մարտիրոսեան ծնած է Հայաստան. Երեւանի մէջ երաժշտական ուսում մը աւարտելէ ետք իր արուեստը կատարելագործած է Փարիզ, դաշնակի ու սենեակի երաժշտութեան մարզերուն մէջ: Տէր է բազմաթիւ մրցանակներու: Վիլէրի փառատօնին նուագեց ընկերակցութեամբ նրբասրինգահար Նիքոլա Պալտէյրուի, Տըպիւսի, Փուլէնք, Ռոսինի: Վ. Մարտիրոսեան իր նուագին զուգահեռ, մեծապէս գնահատուեցաւ նաեւ իր յօրինած Սոնաթինով:

«ՈՂՆԻ» ական կատակներ

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Ջերմուկ քաղաքում ձեռքս ջարդուեց: Երբ կինս սարսափահար ներս մտաւ եւ ինձ այդ վիճակում գտաւ, փորձեցի վիճակը մեղմացնել, կատակեցի.

- Ողջոյն աշխարհի ամենագեղեցիկ կընոջը: Սրանից յետոյ մի ձեռքով եմ գըրկելու քեզ...:

- Հալովդ մնա՛, հալովդ..., - հեգնեց նա, - երկու ձեռքով չա՞տ էիր գրկում, որ հիմա մէկով գրկես...:

***

Երեւանի Թիւ 189 դպրոցի տնօրէն Համլէթ Քարամեանն ինձ ասաց.

- Լուսանկարուեցի Սեւակի հետ՝ մահացաւ:

Լուսանկարուեցի Էմինի հետ՝ մահացաւ: Այժմ ուզում եմ ձեզ հետ լուսանըկարուել:

- Աւելի լաւ է իշխանութիւններու հետ լուսանկարուէք..., - սարսափած խորհուրդ տուեցի ես:

***

- Ամօ՛թ ձեզի, - ասացի Հայաստանի նախկին իշխանութեան մի քանի ներկայացուցիչների, ... երկիրը քանդեցիք:

- Ինչո՞ւ էք ամօթանք տալիս - զարմացաւ նրանք – վա՞տ ենք քանդել...

***

Երբեւիցէ լեզուական սխալներ արե՞լ էք – հարցրին ինձ:

- Այո: Մէկ անգամ հանդիսաւոր մի պահի, փոխան ասելու «ծայրագոյն վարդապետ», ասացի «վարդագոյն ծայրապետ», իսկ մէկ անգամ էլ հարսանիքի ժամանակ նորապսակներին փոխանակ ասելու «Մի բարձի ծերանաք» ասացի՝ «Մի ծերի բարձրանաք...», որը նոյնպէս համարուեց կատակ...:

***

Մի ընկեր հպարտացաւ, որ զբաղւում է անշարժ գոյքի առեւտրով:

Ծիծաղելով յիշեցրի մի պատմութիւն:

- Ընկերուհին ընկերուհուն ասում է. «Մէկ ամիս է՝ ամուսնացել եմ, պարզուեց՝ ամուսինս խմփոթենթ է...»:

«Մի՞թէ ամուսնանալուց առաջ այդ մասին չի խօսել», հարցնում է ընկերուհին: Երբեմն խօսում էր ինչ – որ անշարժ գոյքի մասին, բայց ես չէի հասկանում...», – վերյիշում է ընկերուհին:

***

- Գիտութեան ո՞ր ճիւղն է առաւել զարգանում Հայաստանում, – հարցրին արտասահմանում:

- Հնագիտական պեղումները... պատասխանեցի:

Իրո՞ք:

- Այո՛ նայէ՛ք փողոցներում սնունդ փնտռող մուրացկաններին:

***

- Արե՞լ էք որեւէ բան, որի համար զղջում էք, – հարցրին:

- Այո: Մի անգամ, այլազգի հիւրեր էին եկել մեր տուն, զոքանչս նստած էր կողքիս, ասացի. «Ուրախ եմ, որ այստեղ են իմ բարեկամ Ռուսը, Ֆրանսացին, Իտալացին, Յոյնը եւ... իմ զոքանչ՝ Թոյնը»: Այնուհետեւ ասացի, որ երբ զոքանչին իտալերէն ասում են՝ «Սինիոր Անտանելլի...»:

Մի ամիս խռով մնաց:

***

Գրող Խաժակ Գիւլազարեանին հարցրի «Ի՞նչ է անում քո 85–ամեայ հարեւանը»:

– Ուզում ենք նորից պսակել, - ասաց գրողը, - բայց չի ուզում: Ասում ենք՝ մենակ ես, ամուսնացիր՝ գոնէ կը զրուցես:

Հառաչում եւ ասում է «էՙ, ինչո՞վ զըրուցեմ...»:

***

1992 Թուականի սովի տարիներին ինձ եւ տիկնոջս հրաւիրեցին Լոս – Անճըլըս: Ուսուցչուհի Հայկուհի Սերոբեան ասաց.

– Ահա խաղողի 7 տեսակներ, դուք ո՞ր տեսակը կը նախընտրէք, կուտո՞վ, թէ առանց կուտի:

– Հայաստանցին ամէն ինչ էլ կ'ուտի... պատասխանեցինք մենք:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԸԼԸՍԻ ՄԷՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 10–ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ

Կլէնտէյլի մէջ, Սեպտեմբեր 23-ին տեղի ունեցած է Հայաստանի անկախութեան 10–ամեակի տօնախմբութիւնը, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ «Կայծ» Երիտասարդական Միութեան, ներկայ եղած են շուրջ հինգ հազար Հայեր: Ձեռնարկը եղած է նաեւ զօրակցութեան արտայայտութիւն մը Սեպտեմբեր 11-ի աղէտեալներուն: Առայդ, տօնախմբութեան մասնակցած են նաեւ Թաղապետութեան խորհուրդի անդամներ, ոստիկանութեան եւ հրշէջներու ներկայացուցիչներ: Հանդիսութիւնը վարած է Ստեփան Յովակիմեան: Հոգեհանգըստեան պաշտօն կատարուած է Հայաստանի ու Արցախի անկախութեան պայքարին նահատակուած Հայերու, ինչպէս նաեւ Սեպտեմբեր 11-ի աղէտին զոհուածներու յիշատակին: Խօսք առած են Անէթ Պատալի (հայերէն) եւ Յարութ Տէր - Դաւիթեան (անգլերէն), ինչպէս նաեւ ոստիկանութեան եւ հրշէջներու ներկայացուցիչները: Ամբողջ օրը գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը:

***

«ՆԱՅԻՐԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Նորթրիճ համալսարանի սրահին մէջ, Սեպտեմբեր 23-ի իրիկունը, տեղի ունեցած է Համազգայինի «Նայիրի» պարախումբին երեկոյթը, որուն ներկայ եղած են 500 հոգի: Յայտագիրը վարած է Ճորճ Պաղտոյեան: Խօսք առած է յանուն վարչութեան Արաքսի Գազանճեան: 30 հոգինոց պարախումբը ներկայացուցած է հայկական, ժողովրդական եւ ազգագրական 26 պարեր, ղեկավարութեամբ պարուսոյց Քաթրին Հայրապետեանի:

ԳՈՂՈՒԹԷ ԳՈՂՈՒԹ

ՍԱՄԱԹԻԱ (Պոլիս) Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ, Սեպտ. 3-ին, կատարուած է մատաղօրհնութիւն Վարագայ Ս. Խաչի տօնին առթիւ: Եկեղեցական արարողութենէն ետք, տեղի ունեցած է Սիրոյ սեղան մը, զոր բացած է մատաղի յանձնախումբի ատենապետ՝ Արէտ Երկանեան: Ապա, Թաղային Խորհուրդի ատենապետ՝ Գէորգ Եանէր բացատրութիւններ տուած է Սահակեան - Նունեան դպրոցին մասին, որու աշակերտութիւնը, այս տարի, 500 է: Կը նախատեսուէր 180 միլիառ Թրքական ոսկիի բաց մը: Հաւաքոյթը շարունակուած է լաւատես մթնոլորտի մը մէջ եւ Պ. Նալպանտ հրաւիրած է ներկաները կատարելու իրենց պարտականութիւնը: Նախ կարդացուած են ծանօթ բարերարներու կողմէ կատարուած մեծաքանակ նուէրները, որոնց գլուխը կը գտնուէր ատենապետ Արէտ Երկանեան: Մօտաւորապէս, մէկ ժամուան ընթացքին ապահովուած է գոհացուցիչ գումար մը: Վերջաւորութեան, Մեսրոպ պատրիարք արտասանած է Հուսկ Բանքը:

***

1700–ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ

Հոլիվուտի Ս. Կարապետ Եկեղեցւոյ մէջ, Սեպտեմբեր 12-ին, տեղի ունեցած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700–ամեակի տօնախմբութիւնը, հոծ բազմութեան ներկայութեան: Բացումը կատարած է Վիգէն Քահանայ Վասիլեան: Բանախօսած է ժագ Ս. Յակոբեան շեշտելով քրիստոնէական հաւատքի վերանորոգման անհրաժեշտութիւնը: Գեղարուեստական յայտագրին մասնակցած են «Գուսան» երգչախումբը, Կիրակնօրեայ վարժարանի աշակերտական երգչախումբը եւ երգչուհի Անահիտ Շահնազարեան: Փակման խօսքը արտասանած է առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոս Մարտիրոսեան:

ԼՐԱՏՈՒ

ԹԻՒ 17 ԽԱՉԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

Այս վերջինն ալ կարծեցեալ վտանգէն ինքզինքն փրկելու համար յիսուն ոսկի վճարեց:

«Քանի մը ժամուան մէջ հարիւր յիսուն ոսկի բաւական է այսօրուան համար», - մտածեց Աստիկ:

Եւ Տիտոսի պէս ինքնիրեն ըսաւ.

«Օրս չկորսնցուցի»:

Հարիւր յիսուն ոսկի գրպանին մէջ՝ Աստիկ իրաւցնէ ինքզինքը հռոմէացի կայսեր մը չափ զօրաւոր զգաց:

Անմիջապէս կառք մը նետուեցաւ եւ Բերա, իր հոմանուհիին տունը գնաց:

Այս վերջինը, ինչպէս միշտ, թեւաթաց ընդունեց զինքը:

Աստիկ սովորականէն աւելի զուարթ էր, ինչ որ անհերքելի ապացոյց մըն էր գրպանը լեցուն ըլլալուն:

- Այսօր շատ ուրախ կ'երեւաս կոր, - ըսաւ գեղանի հոմանուհին:

- Այո՛, - ըսաւ Աստիկ, - այսօր շատ յաջող օր մըն էր ինծի համար:

- Մեծկակ շահ մը ըրիր անպատճառ:

- Ուրիշ ի՞նչ յաջողութիւն կ'ուզես:

- Քանի՞ ոսկի շահեցար:

- Գուշակէ՛, տեսնենք:

- Քսան, – գոչեց հոմանուհին:

- Քսան ոսկիին խօ՞սքը կ'ըլլայ:

- Ուրեմն աւելի՞ է:

- Շա՛տ աւելի:

- Յիսո՞ւն ոսկի:

- Այդ ի՛նչ ոչինչ գումար է:

- Հարիւր ոսկի ուրեմն:

- Դեռ չհասար:

- Իրա՞ւ կ'ըսես, - գոչեց գեղուհին շլացած դէմքով մը:

- Հարիւր յիսուն ոսկի ... եւ առանց բան մը ընելու:

- Եւ այդ դրամը ի՞նչ պիտի ընես:

- Դրամը ինչ կ'ընեն... պիտի ուտենք միասին:

- Գոնէ ինծի շրջազգեստ մը կարել տուր:

- Ո՛չ թէ միայն շրջազգեստ մը, այլ նաեւ կօշիկ մը, գլխարկ մը, հովանոց մը ... վերջապէս ինչ որ կ'ուզես:

Գեղուհին այս խոստումներէն յափըշտակուած՝ նետուեցաւ իր սիրահարին թեւերուն մէջ:

- Ի՞նչ պէտք է այս ամէնուն համար, - հարցուց Աստիկ ձեռքը գրպանը տանելով:

Հոմանուհին մտովի կարճ հաշիւ մը ըրաւ եւ պատասխանեց.

- Վաթսուն ոսկին կը բաւէ:

- Այդչափ քի՞չ:

- Գիտես, որ ես ամէն գործ խնայողութեամբ կը տեսնեմ:

- Այո՛, աղուորս, գիտեմ, որ այնպէս է, - պատասխանեց Աստիկ վաթսուն ոսկին համրելով:

Քանի մը ժամ, այսպէս, իր սիրուհիին հետ անցընելէ ետքը Աստիկ կարեւոր գործ մը պատրուակելով՝ դուրս ելաւ եւ ուղղուեցաւ դէպի Շիշլի ճամբան եւ մըտաւ նպարավաճառի մը խանութը, որուն ներսի մասը գարեջրատուն մըն էր:

- Քոնեաք Մարթէլ, - հրամայեց սպասաւորին:

Հազիւ թէ առաջին գաւաթը պարպած էր, երբ Արշակ ներս մտաւ:

Լրտեսը քանի մը օրերէ ի վեր շատ մեծ իրարանցումի մէջ էր:

Տրդատին հետքը կորսնցուցած էր բոլորովին, եւ ասիկա շատ կը զբաղեցնէր զինքը: Օրն ի բուն ամէն կողմ ժուռ կուգար գտնելու համար զայն:

Անոր անհետացումը մեծ հարուած մը տուած էր իր համբաւին, ու իր մեծաւորները կը դատապարտէին զինքը այդչափ կարեւոր որս մը ձեռքէ փախցնելուն համար:

Նոյնիսկ կասկածներ կային, թէ ինք մատ ունեցած էր այդ անհետացումին մէջ:

Արշաւիր այդ կասկածը յայտնած էր բացէ ի բաց:

Գարեջրատուն մտնելուն պէս նշմարեց Աստիկը, «բարեւ» մը տուաւ եւ պատրաստուեցաւ դուրս ելլելու, բայց այս վերջինը կեցուց զինքը՝

- Արշակ էֆէնտի, ինչո՞ւ կը փախչիք, - գոչելով:

– Մէկը նայեցայ, հոս չէ եղեր, - պատասխանեց լրտեսը:

- Կարելի է՝ կու գայ:

- Չեմ կարծեր... երթամ ուրիշ տեղ նայիմ:

- Նախ եկուր քօնեաք մը խմէ:

Լրտեսը վարանեցաւ, բայց Աստիկ այնչափ պնդեց, որ ստիպուեցաւ համակերպիլ:

- Եկէք քօնեաք չխմենք եւ օղի խմենք, - առաջարկեց Աստիկ:

- Ինչպէս որ կ'ուզէք:

Աստիկ սպասաւորը կանչեց եւ օղի ապսպրեց:

- Մեզի համար փորսիօն մը սեւ խաւեար, փորսիօն մը ժանպօն եւ փորսիօն մըն ալ լաքէրտա բէ՛ր, - հրամայեց, - տուփ մըն ալ ստաքօզ եւ սարտէլա բա՛ց:

- Ի՞նչ կ'ընէք Աստիկ էֆէնտի, ես օղի մը պիտի խմեմ, երթամ, - դիտել տուաւ Արշակ:

- Անանկ բան չկայ, պիտի նստիս, եւ պիտի խմենք, - պատասխանեց Աստիկ էֆէնտի:

- Կ'երեւայ, որ դուք գործ չունիք:

- Ա՛լ իրիկուն եղաւ, այս ատեն ի՞նչ գործ կ'ըլլայ:

- Մեր գործը որոշ ժամ չունի, - դիտել տուաւ Արշակ:

- Այնպէս է, - պատասխանեց Աստիկ, - մանաւանդ այս միջոցիս կարծեմ չափազանց զբաղած էք:

- Այո՛, չափազանց:

- Մանաւանդ Հայերս, այնպէս չէ՞, - հարցուց Աստիկ:

- Կառավարութիւնը այս միջոցիս մեծ ուշադրութիւն դարձուցած է Հայերուն վրայ եւ իրաւունք ալ ունի:

- Իմացայ, որ ցանկեր կը պատրաստեն եղեր, շատ մը ծանօթ Հայեր պիտի քըշուին, ուրիշներ պիտի բանտարկուին:

- Լուր չունիմ, - պատասխանեց Արշակ չոր չեշտով մը:

- Ես աղէկ տեղէն իմացայ:

- Կրնայ ըլլալ:

- Պէտրի պէյը, Րէշատ պէյը իմ մտերիմ բարեկամներս են:

- Անոնցմէ՞ իմացար:

- Աղէկ տեղէ իմացայ, դուն ալ հարկաւ գիտես, բայց չգիտնալ կը ձեւացնես, իրաւունք ունիս, քու դիրքդ շատ փափուկ է, միայն թէ ես քու վիտցած մարդերէդ չեմ, ինծ որեւէ վնաս չի կրնար գալ:

- Այնպէս է, - պատասխանեց լրտեսը:

- Նոյնիսկ լսեցի, որ այդ ցանկերը պատրաստելու համար մէկ քանի Հայերու դիմում եղեր է:

- Հիմակ արդէն ոստիկանութեան մէջ Հայերը շատցած են, խելքէ - մտքէ չանցած մարդիկ լրտեսութիւն կ'ընեն կոր:

Աստիկ կրկին օղի ապսպրեց: Արշակ փորձ մը ըրաւ մեկնելու, բայց չյաջողեցաւ եւ ստիպուեցաւ մէկ քանի գաւաթ եւս խմել:

- Ո՞վ է քու փնտռած մարդդ, - հարցուց Աստիկ:

- Ի՞նչ մարդ, - ըսաւ Արշակ:

- Ներս մտած ատենդ մէկը կը փնտռէիր կոր:

- Հա՛, - պատասխանեց լրտեսը, - բարեկամ մը, որուն հետքը ժամանակէ մը ի վեր կորսնցուցի, երիտասարդ մըն է՝ Տրդատ անուն...

- Հասկցայ, - գոչեց Աստիկ, - օր մը միասին նստեր էինք յոյն գինետանի մը խանութը:

(Շար. 83)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՆ ՀԵՏ*

Կիրակի, Հոկտեմբեր 21, ժամը 14-էն 18, ցուցահանդէսներ. Անթուան Ակուճեան (լուսանկարներ), Աշոտ Պաղտասարեան (արձանագործութիւն):

ԳՐԱԿԱՆ ԱՅԺՄԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ. – ժամը 15-ին

ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

կը ներկայացնէ իր գիրքը՝

50 ANS DE LITTERATURE ARMENIENNE EN FRANCE (1922-1972)

ժամը 16-ին

Հրապարակային Ընթերցում

(Հայ գրականութեան գործերէն)

(*) Maison des Etudiants Arméniens, 57, Bd Jourdan, 75014 Paris

CDCA

Communiqué de Presse

Le Comité de Défense de la Cause Arménienne appelle à manifester le mercredi 24 octobre devant le Parlement européen

Le mercredi 10 octobre, la Commission des Affaires Etrangères du Parlement Européen a adopté le rapport Lamassoure sur les «progrès réalisés par la Turquie sur la voie de l'adhésion», sans y mentionner l'obligation pour cette dernière de reconnaître le Génocide arménien et de lever le blocus exercé à l'encontre de l'Arménie.

Ce vote est inacceptable pour tous les défenseurs des droits de l'homme. **Il constitue un affront à la mémoire des 1 500 000 victimes du premier génocide du vingtième siècle.**

Le Comité de Défense de la Cause Arménienne (CDCA) en appelle à la responsabilité de tous les députés européens qui peuvent encore modifier le rapport Lamassoure en adoptant des amendements à l'occasion de la séance plénière du 24 octobre. **Il a d'ores et déjà interpellé l'ensemble des partis politiques français afin que des consignes strictes soit données à leurs délégations européennes respectives.**

Huit mois après l'adoption de la loi reconnaissant le Génocide arménien, les élus européens doivent relayer la volonté des parlementaires français.

A l'occasion de la discussion en séance plénière, **le CDCA appelle à manifester le mercredi 24 octobre devant le Parlement européen,** afin d'exiger que l'Union européenne oblige la Turquie à reconnaître le Génocide arménien et à lever le blocus sur l'Arménie.

CDCA FRANCE

Paris, le 12 octobre

301 - 2001

L'Association Cultuelle de l'Eglise Apostolique Arménienne de Paris et de la Région Parisienne
organise
deux cycles de conférences
du Vendredi 23
au Dimanche 25 novembre
et
du Vendredi 30 novembre
au dimanche 2 décembre
à l'occasion du 1700ème anniversaire de l'Adoption officielle du Christianisme par l'Arménie

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայկական Աղքատախնամ ընկերակցութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները Յուլիսէն Հոկտեմբեր.–

Կարմիրեան ընտանիք, Տէր եւ Տիկին Մելտոնեան, Տիկին Ֆրանսուազ Լօրանս, Տիկին Նուարդ Պօյաճեան, Տիկին Կարապետեան, Տիկին Սոնա Պետրոսեան, Տիկին Նուարդ Պօյաճեան, Պ. Ռաուլ Գազանճեան, Պ. Ալեքսանեան, Պ. Խտուար Վարդանեան, Պ. Շառլ Մովսէսեան 500ական ֆրանք, Պ. Գեղամ Թորոսեան 400 ֆրանք:

(Շար.)

ԿԱՐԱՊԵՏ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Փոխան ծաղկեպսակի նուէրները ընել Բիւրականի դպրոցին նորոգութեան:

Չէքերը՝

CPFA-ի

եւ ղրկել ողբացեալին ընտանիքին հասցէին՝

Mme AVEDISSIAN
31, allée Bayard,
93190 Livry-Gargan

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տէր եւ Տիկին Պերճար Տէտէճեան իրենց մօրեղբօր՝ Յակոբ Ինճէեանի թարմ յիշատակին 1500 Ֆր. կը նուիրեն «Յառաջ»ին:

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — Marseille 1er

EXPOSITION

EXPOSITION D'OEUVRES DE PEINTRES D'ARMENIE

GAGUIK BADALIAN
GAGUIK KHAZANDJIAN
KHATCHIK ABRAHAMIAN

Exposition du 11 au 20 octobre
tous les jours
sauf le mardi et le dimanche

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ HAMASKAÏNE ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS

ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ

Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆԸ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»

Գինեձօն երեկոյթի աւարտին:

Centre Culturel SAINT MESROB A PARIS

Conférence - Débat

avec projection de diapositives sur le thème :
AGRICULTURE, FORETS ET ENVIRONNEMENT EN ARMENIE

présentée par
JACQUES PERIGAUD
Ingénieur de recherche au Muséum National d'Histoire Naturelle

et

VINCENT TARAKDJIAN
Technicien forestier à l'Office National des Forêts

le mercredi 17 octobre à 20 h 45

au 10 bis, rue Thouin, Paris V[e]
M° Cardinal Lemoine, Monge

— Entrée libre - Cocktail —

ՄԱՐՍԷՅԼ
ՍԱՀԱԿ – ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ Օծման եւ Անուանակոչութեան 70-րդ տարեդարձ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԱԹ

Բանախօսութիւն
Հայ Առաքելական Եկեղեցւոյ մասին
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակ
Կեդրոնական
Եւրոպայի եւ Շուէտի
«Հայ Գրի եւ Գրականութեան Ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի Սուրբ Ձեռամբ»
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՊԵՔՃԵԱՆ
Առաջնորդ Գերմանիոյ Հայոց
«Հայ Ծէսի Ծագումն ու Զարգացումը»
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ
Լիոն եւ Շրջակայքի
«Կրօնական Անտարբերութիւնը Ներկայիս»
Շաբաթ, Հոկտեմբեր 20, ժամը 20.30-ին
Մայր Եկեղեցւոյ մէջ
339, avenue du Prado, 13008 Marseille

Մուտքը ազատ է:

CENTRE CULTUREL SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN

Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

***

Rouben ELBAKIAN

Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91 77 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini — Verdi — Tchaikovsky...

— Participation aux frais : 100 F —

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

La Section **«HELEN PUZANT» d'Alfortville**
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre GAIDZAG'S**
et attraction surprise...
Renseignements et réservations :
☎ 01 43 76 55 89

— ● —

"NAVASART" à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30

— Billets : 100 F. et 120 F. en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— ● —

SOIREE DANSANTE

organisée par
La Section "TER-DAVTIAN" de la Croix Bleue des Arméniens de Chaville
le Samedi 27 octobre
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

Imprimé sur les Presses du Journal "HARATCH"
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ARMENIAN JAZZ FESTIVAL

le Vendredi 19 et Samedi 20 octobre à 20 heures
le Dimanche 21 octobre à 16 heures

PARIS NEW MORNING
7-9, rue des Petites-Ecuries, 75010 PARIS

- **Vendredi 19**
  Arto Tunçboyaciyan Trio **Alla Levonyan / Arthur Grigorian**
- **Samedi 20**
  Sophia Domancich Trio avec Claude Tchamitchian et Simon Goubert
  Armenian Navy Band
- **Dimanche 21**
  Edmond Hosdikian / Gaguik Mouradian
  Didier Malherbe Trio avec Patrick Meyer et Philippe Foch
  invité **Loy Ehrich**

Réservations :
Fnac, Carrefour, France Billet
Tél.: 0 892 683 622 (2,21 FF/mn), 3615 Fnac (2,21 FF/mn), www.fnac.com
Virgin Megastore, Auchan, Galeries Lafayette, Cultura, BHV
Tél. : 0 825 346 346 (0,99 FF/mn), www.ticketnet.fr
Coopération-Arménie. Tél. : 01 42 36 06 79

Site Web : http://armenianjazzfestival.free.fr
Armenian Jazz Festival: 50, rue E. Marcel, 75002 Paris.

Organisé par l'association Coopération-Arménie au profit de ses actions.

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 18
JEUDI
18 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884 - 1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 20·277 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 77e ANNEE — N° 20.277

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 16 / 17)

Վ· ՕՍԿԱՆԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԻՒՆԷՍՔՕ-Ի 37-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Հոկտեմբեր 16-ին Արտաքին գործերու նախարար Վ· Օսկանեան ելոյթ մը ունեցած է ԻՒՆԷՍՔՕ-ի 31-րդ ընդհանուր ժողովին, Փարիզ : Ելոյթին մէջ անդրադառնալով մշակութային յուշարձաններու պահպանման հարցին, ան կոչ ըրած է Թուրքիոյ որ համագործակցութիւն մը ըլլայ հայկական յուշարձաններուն, յատկապէս Անիի եւ Ախթամարի եկեղեցիներուն նորոգութեան, պահպանումին համար : Նոյն օրը Վ· Օսկանեան հանդիպում ունեցած է կազմակերպութեան գլխաւոր տնօրէնին հետ որ Նոյեմբերին կ'այցելէ Հայաստան :

***

ՓՈԽ-ՆԱԽԱՐԱՐԻՆ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ու Իրանի Արտաքին գործերու նախարարութիւններուն միջեւ խորհրդակցութիւններու նպատակով Հոկտեմբեր 11 - 16 աշխատանքի այցով Իրան գտնուած է Արտաքին գործերու փոխ - նախարար Ռ· Շուգարեանի գլխաւորած պատուիրակութիւնը : Հանդիպումներու գլխաւոր նիւթը քննարկումը եղած է Նախագահ Ռ· Քոչարեանի Նոյեմբեր 10 - 12 Թեհրան կատարելիք այցին : Պատուիրակութիւնը հանդիպում ունեցած է Թեհրանի թեմին առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Սարգսեանի ու հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ :

***

ՔՐԷԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐՈՒ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ

Ներքին գործերու նախարարութեան քրէական պատիժներու վարչութեան նախկին պետը Մուշեղ Սաղաթէլեան պետական գաղտնիք հրապարակելու, փաստաթուղթ կեղծելու, խուլիգանութեան կասկածով ձերբակալուած ու Հոկտեմբեր 15-ին բանտարկուած է : Իրեն դէմ եղած գլխաւոր ամբաստանութիւնը այն է որ ժամանակին կարեւոր գումար մը խոստացած է Ներքին գործերու նախարարութեան պաշտօնատարի մը որպէսզի ըսէ թէ «Հոկտեմբեր 27»ի յանցաւորներէն լըսած է որ այդ ոճիրը կազմակերպողները եղած են Նախագահ Ռ· Քոչարեանը եւ Պաշտպանութեան նախարար Ս· Սարգսեանը :

***

ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԷՆ

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի պատուիրակութիւնը որ դիտարկումներու նպատակով Հայաստան կ'այցելէ, Հոկտ· 16-ին հանդիպում ունեցած է լրագրողներուն հետ : Պատուիրակութեան անդամները յայտնելէ ետք թէ իրենց այցելութեան նպատակն է ստուգել թէ արդեօք Հայաստան կը գործադրէ՞ Եւրոպայի Խորհուրդին իր անդամակցութենէն բխող պարտաւորութիւնները, ըսած են թէ արդէն բազմաթիւ հանդիպումներ ունեցած են հանրային, միջազգային կազմակերպութիւններու եւ կրօնական համայնքներու ղեկավարներու հետ : Լրագրողներու հետ այս հանդիպումին նպատակն ալ պարզելով անոնք ըսած են թէ զանգուածային լրատու միջոցներու ազատութեան, անկախութեան մասին անոնց ներկայացուցիչներուն կարծիքները լսել էր :

Լրագրողները ուզած են նաեւ ծանօթանալ Կոչի ուղղիչ աշխատանքի գաղութ այցելութեան հիւրերու տպաւորութիւններուն : Անոնցմէ Ի· Պելոհորսկայա ըսած է թէ նախքան քննարկումը, նախօրօք չեն կրնար հրապարակել իրենց տեղեկատուութիւնը, միայն թէ շեշտած է որ պէտք է մշակել զինուորական ծառայութեան այլընտրանքի մասին օրէնք մը· աւելցուցած է նաեւ որ կան նաեւ խընդիրներ ոչ-աւանդական կրօնքներուն առընչուող :

***

ՂԱՐԱԲԱՂ ՆԵՐԴՐՈՒՄ Կ'ԱԿՆԿԱԼԷ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ

Ռուսաստանի Հայերու միութեան նախագահ Արա Աբրահամեան, փոխ - նախագահ Սէյրան Պաղտասարեան եւ ծանօթ քաղաքական դէմք Անդրանիկ Միհրանեան Երեւանի մէջ հանդիպումներէ ետք անցած են Ստեփանակերտ : Նախագահ Ա· Ղուկասեան անոնց ծանօթացուցած է Ղարաբաղի ընկերա - տնտեսական զարգացման հեռանկարները, ըսելով որ անոնց իրականացման համար մեծ յոյսեր կապուած են Ռուսաստանի հայ համայնքին որ կրնայ կարեւոր ներդրումներ ընել : Հանդիպումին մասնակցած են վարչապետ Ա· Դանիէլեան, Արտաքին եւ Ներքին գործերու նախարարները :

***

ՇԻՐԱԿԻ ԱՆՕԹԵՒԱՆՆԵՐԸ ՏՈՒՆ Կ'ՈՒՆԵՆԱՆ

Շիրակի մէջ սկսած է կիրարկութեան դրուիլ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալութեան ծրագիրը որ նպատակ ունի բնակարան ունենալու միջոցներ տրամադրելու մարզին տակաւին անօթեւան մնացած ընտանիքներուն : Ծրագրին փորձնական առաջին փուլով Գիւմրիի Երեւանեան փողոցին վրայի շրջաններուն տնակներու 312 ընտանիքները արդէն բարեկարգ բնակարաններ գնած են, 89 տոկոսով Գիւմրիի մէջ : Ծրագիրով ընդամէնը 4 հազար ընտանիք բնակարան գնելու վկայագրեր կը ստանան : Կը ծրագրուի նաեւ 650 քաղաքացիի եւ 350 գիւղաբնակի դրամական յատկացում ընել, որպէսզի իրենց կիսաւարտ առանձնատուներու շինութիւնը աւարտին : Ներկայի կացութեամբ, երկրաշարժէն 13 տարի ետք, տակաւին 10 հազար ընտանիք կ'ապրի ժամանակաւոր կացարաններու մէջ :

Լինսի հիմնադրամն ալ ծրագրած է չորս հազար բնակարանով 16 բազմայարկ շէնք վերականգնել· այդ գործով կը զբաղի հիմնադրամին Գիւմրի բացուած գրասենեակը :

***

ՃԱՏՐԱԿ

ԱՇԽԱՐՀԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵՆՈՒԹԻՒՆ

Հայաստան Մակեդոնիոյ 4 - 0 եւ Ռուսաստանի 3 - 1 յաղթելէ ետք Հոկտ· 16-ին կրած է իր առաջին պարտութիւնը Գերմանիայէն որ 3 - 1 յաղթական դուրս եկած է հանդիպումէն : Մինչ Վլադիմիր Յակոբեան եւ Արտաշէս Մինասեան հաւասար արդիւնքներ ձեռք ձգած են, Աշոտ Անաստասեան եւ Սմբատ Լպուտեան չեն կրցած նախորդ օրերու իրենց փայլուն խաղարկութիւնը ցուցադրել : Այսպէսով, Գերմանիա 13,5 միաւորով անցած է դասաւորման գլուխը, Հայաստան ունի 12 միաւոր :

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ՄԻՆՉ ՌՈՒՄԲԵՐ ԵՒ ՈՉ ՄԷԿ ԱՐԴԻՒՆՔ

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՐԿՈՒ ՊԱՀԵՍՏԱՆՈՑ ՔԱՆԴՈՒԱԾ

Ամերիկացիք կը շարունակեն ռմբակոծումները եւ Հոկտեմբեր 17-ին ալ աւելի սաստկացուցած էին, առաջին անգամ ըլլալով կը ռմբակոծէին նաեւ Հիւսիսային Զինակցութեան եւ Թալիպաններու միջեւ գտնուող պատերազմական ճակատը, Քապուլի հիւսիսը :

Առաջին անգամ ըլլալով նաեւ Ամերիկացիք օգտագործած են Ա - Սէ 130 օդանաւներ, որոնք քանդիչ մեծ կարողութիւններ ունին : Արդէն օգտագործած էին Վիէթնամ եւ Փանամա : ԱՄՆ այս տեսակի 13 օդանաւեր ունին :

Նախորդ օրը, Հոկտեմբեր 16-ին, ամերիկեան Պաշտպանութեան նախարարութիւնը խոստովանած է որ, սխալմամբ ռմբակոծած է Կարմիր Խաչի երկու պահեստանոցներ, որոնք քարուքանդ եղած են եւ մէկ պաշտօնեայ ալ վիրաւորուած է :

Հոկ· 16-էն 17 լուսնալիք գիշերն ալ, Քանտահարի վրայ ինկած ռումբերէն 20 բնակիչներ մեռած են :

***

Օրէ օր, այս ռմբակոծութիւններուն դէմ բարձրացող ձայները կը բազմանան, մանաւանդ որ ոչ մէկ արդիւնք կու տան քաղաքական գետնի վրայ, լուծում չի տեսնուիր, բացի երկիր մը քարուքանդ ընելէ եւ անմեղ կոհեր պատճառելէ : Արեւմտեան պետութիւններն ալ սկսած են մտահոգուիլ, քանի այն վախը կայ որ Ուաշինկթըն տրամադիր է իր ռմբակոծութիւնները տարածելու Իրաքի եւ Սուրիոյ վրայ··· :

***

Իսլամապատի մէջ, ԱՄՆ-ու Արտաքին նախարարը նախագահին հետ պատրաստած է Աֆղանիստանի յետ - Թալիպան շրջանը : Երկուքին ալ հասարակաց հետանկարն է կառավարութիւն մը որ ներկայացնէ երկրին բոլոր բնակչութիւնները :

***

Ածխախտի մղձաւանջը կը շարունակէ սարսափ տարածել, հակառակ անոր որ ԱՄՆ-էն դուրս, ոչ մէկ ստոյգ յայտնաբերում եղած է : Կը յիշուին, սակայն, իսլամապաշտ Եգիպտացի Ահմետ Սալամա Մապրուքի արտասանած խօսքերը 1999 Ապրիլին՝ «Ալ Քաիտա կենսաբանական եւ քիմիական զէնքեր ունի : Ծրագիր մը կը նախատեսէ զանոնք գործածելու ամերիկեան եւ իսրայէլեան թիրախներու դէմ : Հարիւրի մօտ յարձակումներ ծրագրուած են աշխարհի զանազան կողմերը» : Մապրուք, որու շարժումը միացած էր Ալ Քաիտայի Պէն Լատէնի աջ բազուկներէն կը նկատուէր : Ձերբակալուած էր ՍԻԱ-ի կողմէ Ազրպէյճան 1998 Սեպտեմբերին, Քենիայի եւ Թանզանիոյ ամերիկեան դեսպանատուներու ոճրափորձերէն ետք, վերջնական սպառնալիքները ըրած էր Գահիրէի զինուորական դատարանին առջեւ : 1999 Ապրիլ 18-ին ցկեանս բանտարկութեան դատապարտուած էր, բայց, իր այդ յայտարարութիւնները, ատենին մեկնաբանութեան առիթ չէին տուած եւ միայն հիմա կը յիշուին : Ալ Քաիտա այդ քիմիական զէնքերը ճարած կ'ըլլայ համայնավար նախկին երկիրներու մաֆիային մօտ : Ըստ համբաւ վայելող մասնագէտի մը՝ Ալեքսէյ Իարլոկովի, ահաբեկիչները կրցած են օգտագործել ածխախտի մանրէները (կեդրոնական Ասիոյ խորհրդային զինուորական տարրալուծարաններէն հայթայթուած) յարձակումներ գործելու համար Միացեալ - Նահանգներու դէմ :

Աշխարհի զանազան կողմերը խուճապ մը կայ, բայց, բոլորն ալ անհիմն կը թուին : Անգլիա, Գերմանիա, Աւստրիա, Հոլանտա, Փորթուկալ, Իտալիա, Դանիա, Նորվեկիա, Շուէտ, Ֆինլանտա, Էսթոնիա, Չեխիա, Իսրայէլ, Պրազիլ, Գանատա, Ճափոն, Հոնք - Քոնկ պարագաներ յայտնաբերուած են եւ տեղ տեղ, ենթակաները հիւանդանոց փոխադրուած են քննութեան համար : Ֆրանսայի մէջ, Առողջապահութեան ենթանախարարը՝ Պ· Քուշնէր ջանք կը թափէ հանդարտեցնելու համար ժողովուրդը, միաժամանակ յայտարարելով, որ զարկ պիտի տրուի ծաղկախտի դէմ պատուաստին երախաներու համար (դադրած էր աւելի քան 10 տարիէ ի վեր), բայց, պարզուած է որ զանգուածային ձեւով կարելի չէ, որովհետեւ պատուաստին նիւթերը ժամանակավրէպ են եւ աւելի վնասակար կըրնան ըլլալ : Կասկածելի սպիտակ փոշիներով նամակներ կը գտնուին հոս ու հոն, առջի առտու ալ Լա Պոէսիի թղթատարի գրասենեակը, աւելի ուշ Մարսէյլի Գրէտի Լիոնէի մէկ մասնաճիւղին մէջ և փարիզեան շրջանի դրամատուները :

***

Քանտահարի մէջ, բախումներ ծագած են Ալ Քաիտա ցանցին պատկանող Արաբներու եւ Թալիպաններու միջեւ : Անոնք սկիզբ առած են անցեալ շաբթու, երբ Արաբները փորձած են թալանել տալ մարդասիրական կազմակերպութեան մը գրասենեակը՝ Իսլամական Օգնութիւնը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼԻ Զբօսաշրջութեան նախարարը՝ Ռեհավան Զէէվի, որ իր հրաժարականը տուած էր Հոկտեմբեր 15-ին, բողոքելու համար իսրայէլեան ուժերու Հեպրոնէն քաշուելուն դէմ, մահափորձի մը ենթարկուեցաւ Հոկտ· 17-ի առաւօտուն, արեւելեան Երուսաղէմ : Ծայրայեղ աջի այս նախարարը ծանրօրէն վիրաւորուած է գլուխէն : Արարքին տէր եղաւ Պաղեստինի Ազատագրութեան Ժողովրդական Ճակատը : Դէմ էր որեւէ համաձայնութեան Պաղեստինցիներու հետ եւ կ'ուզէր որ բոլորն ալ արաբական երկիրները երթան : Պաղեստինեան Ժողովրդական Ճակատը կ'ըսէ թէ ուզած է վրէժը լուծել Համասի մէկ ղեկավարին սպանութեան, երկու օր առաջ : Միւս կողմէ, Սարի Նիւսէյպէհ որ Արեւելքի Տան (ՊԱԿ-ի կիսապաշտօնական կեդրոնատեղին, Երուսաղէմ) հարցազրոյց մը տուած է «Լիպէրասիոն»ի (Հոկտեմբեր 17), ուր կ'ըսէ թէ Երուսաղէմի իսրայէլականացումը աւելի շեշտուած է : Ինք կը յաջորդէ Ֆայսալ Հիւսէյնիի, որ այդ պաշտօնը կը վարէր մինչեւ իր մահը, Մայիսի վերջ : 52 տարեկան, համալսարանական մըն է, դէմ է զինեալ Ինթիֆատային, «իմաստուն» մը կը նկատուի Պաղեստինցիներու կողմէ, բայց եւ այնպէս կը խորհի թէ հարկ է վերջ դնել արեւելեան Երուսաղէմի իսրայէլականացման :

ՕԼԻՎԻԷ ՇՐԱՄԷՔԻ գիրքը (Մաթինեոն - Ռիվ Կօշ) կը շարունակէ բուռն բանա-

(Շար·ը Դ· էջ)

ԵՐԲ ԿԸ ՄՈՌՑՈՒԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ

ԱՄՆ-ու նախագահին ու Աֆղանիստանի դէմ պատերազմելու տրամադիր անոր հետեւորդներուն ուղղուած թելադրական մըն է բրիտանացի յայտնի լրագրող Ռ. Ֆիսքի յօդուածը որ կը մատնանշէ պատմութեան դասերը չանտեսելու անհրաժեշտութիւնը. ան լոյս տեսած է Ինտիփէնտընթի մէջ: Հարցին ու շրջանին քաջ ծանօթ լրագրողը յետադարձ ակնարկով մը կը յիշեցնէ նախ Բրիտանացիներու, ապա խորհրդային մարդոց մեծաթիւ զոհերը, ի գին՝ Աֆղանիստանը ծունկի բերելու նպատակներու:

Քապուլէն Ճալալապատ տանող ճամբուն բարձրադիր կիրճերը տակաւին ժանգոտած, կոտրատած բեկորներ պահած են բրիտանական զօրքերու զէնքերէն, համազգեստներէն:

Նոյն գօտիին մէջ լեռներու հողին խառնուած են 16 հազար Բրիտանացիներու աճիւնները: Անոնք զոհերը եղած են զոր. Էլֆինսթընի արշաւին որ սկսած է գեղեցիկ խօսքերով, մեծ սկզբունքներով, աւարտելու համար արիւնահեղութեան մէջ, անգլեւաֆղան Բ. պատերազմէն (1878-80) եւ խորհրդային ներխուժումէն (1979-89) առաջ: Նախագահ Պուշ եւ ՕԹԱՆ լաւ կ՚ընէին նկատի առնելով այս պարագան:

Այդ արշաւը տեղի ունեցած է 1839-ին երբ Բրիտանացիները վերջ տալու համար աֆղան ցեղախումբերէն Պաշտուններու հզօր էմիր Տոսթ Մոհամէտի եւ Ռուսաստանի ցարին մերձեցումի քաղաքականութեան, զոր. Էլֆինսթընի ղեկավարութեամբ Աֆղանիստան ղրկած են Հնդկաստանի իրենց զօրքերէն 16.500 զինուոր եւ 38 հազար բեռնակիր, ծառայ: Զօրավարը գրաւած է Քանտահարը եւ մտած՝ Քապուլ: Տոսթ Մոհամէտ աքսորուած է Հնդկաստան, սակայն ատիկա վերջ չէ տուած բրիտանական խնամատարութեան տակ ապրելու Աֆղաններու մերժումին: Զօրավարը ատոր անդրադարձած է այն օրը (1841) երբ բրիտանացի պաշտօնատար մը տեղւոյն շուկային մէջ բզիկ-բզիկ եղած է բազմութեան կողմէ եւ անոր գլուխը անցուած է ցիցի մը վրայ: Բրիտանական 300 հոգինոց միաւոր մը ղրկուած է դէպքին վայրը, սակայն, շուտով պարտաւորուած է ետդարձ ընելու: Իսկ երբ աքսորուած էմիրին զաւակը 30 հազարնոց աֆղանական զօրքով մը հասած է Քապուլի դուռներուն առջեւ, զոր. Էլֆինսթըն հասկըցած է որ ելքի ճար չունի:

Յաջողած է սակարկել իր ազատութեան համար, ընդունելով նահանջել դէպի հնդկական սահմանագլուխը: Ձմրան դաժան ցուրտին, ապահովութեան կեղծ խոստումներով առաջնորդած է յուսահատ զօրքը: Ոչ զինուորականներու թափօրը լքուած է ճամբուն վրայ: Ժամանակին նկարագրականները կը պատմեն գաղթատիրական բանակին հետ հոն գտնուող Հնդկուհիներու ենթարկուած տաժանքը: Անոնք Աֆղաններու կողմէ բռնաբարուած, ապա մորթուած են: Դիակները տեղւոյն վրայ ձգուած են, ձիւնին վրայ: Նահանջող զօրքէն ու անոր ընկերացող ոչ զինուորականներու բազմութենէն միայն զօրավարը տեղ հասած է, քանի մը սպայի ու խումբ մը անգլիացի կիներու ընկերակցութեամբ:

Այսուհանդերձ, Բրիտանացիները չեն հրաժարիր Աֆղանիստանէն: Շուրջ 40 տարի ետք, Կանտամաքի դաշինքով որ 1879 Մայիսէն բրիտանական խնամատարութիւն կը պարտադրէր Աֆղանիստանի, որպէսզի միջանկեալ գօտի մը ստեղծուի ցարական Ռուսաստանի սպառնալիքին դէմ, Եագուպ խան կը յանձնուի Քապուլի վարչութիւնը. ան կ՚արտօնէ նաեւ որ բրիտանական դեսպանատուն մը բացուի քաղաքին մէջ: 1879 Սեպտեմբերին այդ դեսպանատունը կը պաշարուի, կրակի կը տրուի ու Բրիտանացիները բոցերու մէջ պայքար կը մղեն: Աֆղանները կտոր-կտոր կ՚ընեն զանոնք, դիակները այրելով: Հիւպատոսը անգամ չի կրնար փրկուիլ:

Ճակատագրի հեգնանքով, 1880-ին զօրավար Էլֆինսթընի յաջորդներէն մէկը կ՚երթայ 1842-ի կոտորածներուն վայրը այցելելու ու նոյն միջոցին լուր կը բերեն որ իր զօրքը յարձակումի ենթարկուած է. ատիկա անգլեւաֆղան Բ. պատերազմին ամէնէն թէժ շրջանն է: Աֆղանները անհաւասարելի վայրագութեամբ կը նետուին Բրիտանացիներուն վրայ, ծածանելով իսլամական կանանչ դրօշներ:

Զինուորական տեղեկագիրներ արձանագրած են այդ պատերազմին սարսափելի դրուագները: Բրիտանացիները, ի վերջոյ, անգամ մը եւս կը պարտաւորուին նահանջելու, 1320 զոհ տալէ ետք:

Հնդկաստանի բրիտանական կայսրութեան եւ ցարական Ռուսաստանի միջեւ ռազմավարական դիրքի տէր Աֆղանիստանին հակակշիռը ունենալու բրիտանական փորձերը միշտ հակառակ արդիւնքներու յանգած են: Իրենց զինակից կարծուածները յայտնուած են հակառակորդի դիրքէն: Այդպէս է որ 1878-ին Բրիտանացիները համոզուած են թէ Քապուլի էմիրը Շիր Ալի իրենց բարեկամն է ու պատրաստ է կռուելու Բրիտանական կայսրութեան համար. ճիշդ ինչպէս Ուսամա Պէն Լատէն խորհրդային ուժերուն դէմ կռուած էր որպէս Արեւմուտքին զինակիցը. սակայն, Շիր Ալի արգիլած է բրիտանական ջոկատներուն Աֆղանիստան մուտքը եւ քաջալերած է անոնց առեւտրականներուն թալանը:

1878 Նոյեմբեր 21-ի պատերազմական յայտարարութեան մէջ Բրիտանացիները շեշտած են թէ էմիրը բացայայտօրէն եւ մեծ աշխուժութեամբ իրենց դէմ հրահրած է կրօնամոլներու ոխը. ատիկա դաւաճանութիւն եւ ոճիր որակուած է: Երբ բրիտանական զօրքերը կրկին Քապուլ մտած են, սըր Ֆ. Ռոպըրթս յայտարարած է թէ էմիրին կողմնակիցները պիտի չյաջողին պատիժէ փրկուիլ եւ թէ պատիժը այնպէս պիտի ըլլայ որ ամբողջ աշխարհ պիտի չմոռնայ զայն: Թէ սպանութիւններու մէջ դեր կատարածները բոլորն ալ իրենց արժանի պատիժը պիտի ունենան, եւլն.: Վիկտորիական օրերու այս սպառնալիքները, յօդուածագիրը կը կարծէ տեսնել Նախագահ Պուշի ու Թ. Պլէրի ճառերուն մէջ, Սեպտ. 11-ի ահաբեկչութենէն ետք:

Յօդուածին վերջաւորութեան Ռ. Ֆիսք կ՚անդրադառնայ խորհրդային շրջանի պատերազմին ալ: Խորհրդային զօրքերը տասը տարուան դժոխք մը ապրեցան հոն, եթէ նոյնիսկ իսկական ցեղասպանութեան մը ենթարկուողները Աֆղանները եղան: Պէն Լատէն որ խորհրդային գործակալներու պատրաստած բազմաթիւ մահափորձերէն փրկուած էր, կը վերապրի: Լաւ կ՚ըլլայ որ Նախագահ Պուտին մութ ուժերու դէմ «ժողովրդավարութեան ու ազատութեան» Արեւմուտքի խաչակրութեան մասնակցելու պատրաստակամութեան հետ, յիշեցնէ Նախագահ Պուշի թէ խորհրդային զօրքերը ի՛նչ խայտառակ պարտութիւն կրած են Աֆղանիստանի մէջ:

Ամփոփեց՝
Ա. Թ.

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԴԷՊԻ ԶՄԻՒՌՆԻԱ

Զմիւռնիոյ եւ շրջակայ գիւղերու հայկական գաղթօճախները շարունակեցին զարգանալ ու ստուարանալ Թուրք - պարսկական 1720 -- 1730-ական տարիներու պատերազմներուն ու Սիւնիքի ազատագրական պայքարի ճնշման պատճառով Հայութեան դէպի Փոքր Ասիոյ արեւմտեան շրջաններ գաղթականական նոր հոսանքներուն ժամանակ: Զմիւռնիոյ գաղութին կարեւորութիւնը աւելի շեշտուեցաւ, երբ հոն տպարան, դպրոց, նոր եկեղեցի ու ազգային հիւանդանոց բացուեցաւ:

ԹՈՒՐՔ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ՍԻՒՆԻՔԻ ՄԷՋ

Իրանի իշխող Սեֆեւիներու արքայատոհմի տկարացման պատճառով երկրի տարբեր շրջաններուն մէջ խռովութիւններ ծայր առին, իսկ Աֆղաններ, Ղիլզայ ցեղախումբին գլխաւորութեամբ, 1722-ին ներխուժեցին Իրանի խորերը եւ գրաւեցին մայրաքաղաք Սպահանը:

Պատերազմական եւ անիշխանական վիճակէն օգտուելով՝ Թրքական, քրտական եւ այլ ցեղախումբեր ու աւատապետներ սկսան ասպատակել հայկական գիւղերը. նոյն օրերուն Սիւնիքի հայ աւագները դիմեցին Վրաց Վախթանգ Զ. թագաւորին և անոր զաւկին՝ Շահնավազի օժանդակութեան խնդրանքով: Վախթանգ Զ.ի հրահանգով 1722-ի վերջաւորութեան խումբ մը հայ զինուորականներ Դաւիթ բէկի գլխաւորութեամբ Թիֆլիսէն ղրկուեցան Սիւնիք. անոնք կազմակերպեցին հայկական ուժերը, յարձակեցան Գարաչորլի, Ճիւանշիր եւ այլ թափառաշրջիկ ցեղախումբերու վրայ ու ցիրուցան ըրին թշնամի ուժերը:

Իրանի խառնակ վիճակը նպաստաւոր առիթ նկատելով՝ օսմանեան սուլթան Ահմէտ Գ. (1703 - 1730) 1723-ին մտաւ Արեւելեան Հայաստան, Վրաստան եւ Աղուանք:

1724-ի գարնան եւ ամրան ամիսներուն, մինչ Դաւիթ բէկի զօրքերը կատաղի մարտեր կը մղէին Օրտուպատի, Բարգուշատի եւ Նախիջեւանի խաներուն ու Ղափանի ցեղապետներուն դէմ՝ իրարու ետեւէ գրաւելով Սիւնիքի ամուր բնակավայրերը, օսմանեան բանակը նոյն օրերուն քալեց Մարաղայի ուղղութեամբ եւ յառաջացաւ աւելի հարաւ ու արեւելք, եւ մինչեւ 1725-ի գարունը գրաւեց Խոյը, Նախիջեւանը, Օրտուպատը, Թաւրիզը եւ Տաղստանի ցեղախումբերուն միանալով՝ աքցանի մէջ առաւ Արցախն ու Սիւնիքը: Ստեղծուած ծանրակշիռ կացութեան դիմաց Հայոց տանուտէրերուն ու մելիքներուն մեծ մասը լքեց Դաւիթ բէկը եւ հպատակութիւն յայտնեց Թուրքերուն, իսկ ապստամբները, փոքրաթիւ զօրքերով, շարունակեցին պայքարը:

Օսմանեան բանակը, որ արդէն մտած էր Իրանի սահմաններէն ներս, շարժեցաւ երկրին խորերը, բայց 1726 Հոկտեմբերին անոր յառաջխաղացքը կասեցուց Իրանի աֆղան կառավարիչը՝ Աշրաֆ: 1727 Հոկտեմբեր 4-ի հաշտութեամբ Աշրաֆ ճանչցաւ Թուրքիոյ իրաւունքները նուաճուած հողերուն վրայ, իսկ սուլթանը Աշրաֆը՝ իբրեւ Իրանի տեղակալ:

1728-ի գարնան Թրքական զօրքերը արշաւեցին Սիւնիքի ու Արցախի ուղղութեամբ: Արդէն մահացած էր Դաւիթ բէկ եւ զայն փոխարինած էր Մխիթար սպարապետ, որ սակայն դաւադրաբար սպանուեցաւ Խնձորեսկի մէջ: Իրմէ ետք Հայոց դիմադրութիւնը տեւեց մինչեւ 1730:

ՍԻՒՆԻՔԷՆ ԳԱՂԹ ԴԷՊԻ ԶՄԻՒՌՆԻԱ

Ազատագրական պայքարի ճնշումէն ետք ծանր վիճակ ստեղծուեցաւ լեռնաշխարհի հայութեան համար. ժողովուրդը, զօրքերն ու զօրապետներն մնացին անգլուխ, իսկ թշնամիները սանձարձակ հաշուեյարդարի, բռնութեան ու հարստահարութեան անցան:

Այս պայմաններուն տակ ժողովուրդէն շատեր բռնեցին դէպի Իրան գաղթի ճամբան, ոմանք Գուգարաց մեծ իշխանին դիմելով անոր յարեցան, իսկ ուրիշներ ալ ճամբայ ելան դէպի օսմանեան քաղաքներ եւ անոնցմէ շատեր Զմիւռնիոյ մէջ բնակութիւն հաստատեցին:

Զմիւռնիա հասնողներուն մէջ կային երեւելի դէմքեր ու զօրապետներ (որոնք գործօն մասնակցութիւն բերած էին կռիւներուն) ու անոնց ընտանիքները: Այս գաղթականները նոր դիմագիծ տուին զմիւռնահայ գաղութին եւ բաւական ստուարացուցին զայն (որ 1688-ի երկրաշարժէն ետք կոտորակուած էր):

1731-ի տուեալներով, Զմիւռնիա ունէր 76 հազար բնակիչ, որուն եօթը հազարը Հայեր էին:

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԴԷՊԻ ԶՄԻՒՌՆԻԱ

1730-ին վերսկսաւ Թուրք - պարսկական պատերազմը, երբ Իրանի իրողական կառավարիչ Նատիր շահ յարձակեցաւ Համատանի, Քերմանշահի եւ հիւսիսային Իրանի Թրքական զօրքերուն վրայ եւ ցիրուցան ըրաւ զանոնք: Շահ Թահմազ Բ., իր կարգին, պատերազմի ձեռնարկեց, բայց 1731-ին պարտուեցաւ: 1734-ին Նատիրի զօրքերը ներխուժեցին արեւելեան Հայաստան, Վրաստան ու Աղուանք: 1735 Յունիս 14-ի Եղուարդի ճակատամարտին Նատիրի եւ անոր դաշնակից հայկական զօրքեր ջախջախեցին Թրքական բանակը:

Պատերազմը մէկ կողմէ եւ այնուհետեւ 1736-ին ինքզինք շահ հռչակած Նատիրի հաստատած ծանր տուրքերը միւս կողմէ նոր թափ տուին Հայերու գաղթականական հոսանքներուն. այդ գաղթականներէն շատեր Զմիւռնիա հասան եւ հոն բնակութիւն հաստատեցին:

Նատիր շահ գնահատելով Հայերուն դերը Թուրքերու դէմ պայքարին մէջ՝ աշխատեցաւ սիրաշահիլ զանոնք եւ կալուածներ ու արտօնութիւններ շնորհեց հայ հոգեւորականութեան:

Նատիր շահ միաժամանակ ունիթոռ (կաթողիկէ) Հայերուն դէմ հալածանք շղթայազերծեց, որուն պատճառով անոնք բռնեցին գաղթի ճամբան եւ անոնցմէ շատեր Զմիւռնիա հասնելով հոն բնակութիւն հաստատեցին: Անոնք առանձին եկեղեցի չունենալով՝ տան մը մէկ սրահը վերածեցին աղօթատեղիի, ուր Հայրենի երկրէն իրենց հետ բերած Աստուածածնի արծաթեայ արձանը սեղանի մը վրայ կանգնեցին: Ժամանակ մը ետք անոնք առանձին հրամանագիրով քափուչիններու Ս. Պօղիկարպոս եկեղեցիին կից կառուցեցին փոքրիկ մատուռ մը, ուր զետեղեցին Աստուածածնի արձանը. անիկա կոչուեցաւ Մատուռն Սուրբ Վարդարանին:

Ունիթոռ Հայերը Ֆրանսայի եւ տոմինիկեան միաբանութեան պաշտպանութեան տակ արագօրէն կազմակերպուեցան եւ դիւրութեամբ յաջողեցան կարգադրել իրենց խնդիրները՝ առանց դժուարութեան հանդիպելու եւ քիչ ժամանակուան ընթացքին գործի տէր ու նշանաւոր վաճառականներ դարձան:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

«Ազդակ»

(Մնացեալը յաջորդով)

ՍՏԱՑԱՆՔ

ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂՈՐԱՊՏՈՅՏԻՆ ՄԷՋ
(Կուսակցական կեանքիս յուշերը)
Մաս Ա.
(1927 - 1964)

ՅՈՎՀ. ԱՂՊԱՇԵԱՆ

Հրատարակութեան խմբագիր՝
Գ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պէյրութ, 2001

ՌԱԿ-Ի 80-ԱՄԵԱԿԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Ծերակոյտի շէնքին Մէտիչիս սրահին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը Հոկտեմբեր 13-ին Ռամկավար Ազատական կուսակցութիւնը նշեց իր ութսունամեակը: Ֆրանսական, հայկական, Եռագոյններով ու ՌԱԿ-ի դրօշով զարդարուն բեմէն հարիւրի չափ ներկաները ողջունեց կուսակցութեան Ֆրանսայի ընդհանուր քարտուղար Ժ. Վ. Կիւրեղեան. ան կուսակցութիւնը գնահատելով Սրմէնականներու յաջորդութեան վրայ, ըսաւ թէ 80-ամեակը սաոցակոյտին երեւցած մասն է միայն: Ապա հրաւիրեց ՌԱԿ-ի ու ՀԲԸՄ-ի համաշխարհային խորհուրդի անդամ Լ. Քէպապճեանը որպէսզի ընթերցումը ընէ Ծերակոյտի նախագահ Ք. Փոնսըլէի ուղերձին, քանի որ այս վերջինը հովանաւորելով հանդերձ հանդիսութիւնը, ներկայ չէր գտնուած: Որպէս Ֆրանսացի քաղաքական դէմք, ներկայ էր միայն Իէնսիի քաղաքապետը Է. Ռաուլթ: Ք. Փոնսըլէ կը նշէր ՌԱԿ-ի գործունէութենէն դրուագներ ու դէպի ապագայ քայլ մը կը նկատէր 80-ամեակը: Շնորհաւորական գիր մըն ալ ղրկուած էր ՍԴՀԿ-ի Արեւելեան Ամերիկայի կազմէն: ՌԱԿ-ի պատմութիւնը ամփոփելու նպատակով պատրաստուած շուրջ 20 վայրկեանի տեսերիզի մը ցուցադրութենէն ետք կուսակցութեան Ֆրանսայի նախագահը Ժ. Վ. Սրապեան ծանրացաւ ՌԱԿ-ի փիլիսոփայութեան, Հայ Դատի հետապնդումին նուիրուած ջանքերու վրայ: Անդրադարձաւ Արցախի Ծառ գիւղին մէջ իրենց կատարած վերականգնումի աշխատանքին:

Արտասահմանէն ներկաներու, որոնք կարեւոր տեղ մը ունէին սրահին մէջ, կարդին էր կուսակցութեան Բիւրոյին նախագահը, Լիբանանի երեսփոխան Յակոբ Գասարճեան: Ան ալ ֆրանսերէն ելոյթ մը ունեցաւ, Հայաստանի իրականութեան նկատմամբ ՌԱԿ-ի դիրքին, ժողովրդավարութեան ճամբուն վրայ անոր քայլերուն նեցուկ ըլլալու տրամադրութեան մասին խօսելով: Շնորհակալութիւն յայտնեց Ք. Փոնսըլէի, Ծերակոյտին կողմէ ցեղասպանութեան ճանաչումին համար, ապա փափաք յայտնեց որպէս Լիբանանի քաղաքական դէմք որ Ֆրանսա առաւել ներկայ ըլլայ Միջին Արեւելեան հարցերու կարգաւորումին մէջ:

Յաջորդեց հետաքրքրական տեսերիզ մը, պատրաստուած Արցախի հեռատեսիլէն կողմէ. հոն ներկայացուած էր վերոյիշեալ գիւղին մէջ վերաբնակեցման աշխատանքը: Զորս եկեղեցիի, անթիւ խաչքարերու տէր գիւղ մըն էր ան, ուրկէ հայ բնակչութիւնը տեղի տալով ազրպէջանցի շրջապատին ճնշումին, հեռացեր էր: Ներկայիս Շահումեանէն, Վարդենիսէն ընտանիքներ հոն հաստատուած էին ու լծուած գիւղը կրկին շէնցնելու գործին:

Օրուան վերջին խօսք առնողը եղաւ Հայաստանի Ֆրանսայի դեսպան Է. Նալպանտեան: Ան շնորհաւորելով ՌԱԿ-ը, ծանրացաւ Հայաստանի անկախութեան տասնամեակին, անոր ներկայացուցած նեցուկին վրայ, միշտ ժողովուրդին բարիքին նուիրուած ազդակ մը նկատելով զայն:

Ա. ԹՈԹՈՑԵԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԼՈՍ-ԱՆՃԸԼԸՍԻ ՄԷՋ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱԴԱԼԵԱՆԻ ՅՈՒՇԻ ԵՐԵԿՈՅԹԸ

Կլէնտէյլի Իրանահայ Միութեան սրահին մէջ, Սեպտեմբեր 18-ին, տեղի ունեցած է յուշի երեկոյթ մը, նուիրուած Յովհաննէս Բադալեանին: Ներկայ եղած է հոծ բազմութիւն մը: Յայտագիրը վարած է Նունէ Աւետիսեան: Բացման խօսք արտասանած է Հայաստանի հիւպատոսութեան կողմէ Գրիգոր Աւետիսեան, Հիւպի Խաչատրեան ներկայացուցած է Բադալեանի կեանքին ու վաստակին կարգ մը երեսները: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Փակման խօսքը արտասանած է Հրանդ Ա. Քհնյ. Երէցեան:

***

ԱՐԱՄՈՒՆԻԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

«Մերտինեան» Հայ Աւետարանական վարժարանի սրահին մէջ, Սեպտեմբեր 14-16, տեղի ունեցած է Արամունիի (Էջմիածին քաղաքէն) նկարչական ցուցահանդէսը, որուն ընթացքին ցուցադրուած են Հայ եկեղեցւոյ արարողութիւններուն եւ ծէսերուն նուիրուած իւղաներկ գործեր:

***

ՅԱԿՈԲ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՅՈՒՇԻ ԵՐԵԿՈՅԹԸ

Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Սեպտեմբեր 30-ի առաւօտեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուած է «Նոր Օր»ի նախկին խմբագիր, հրապարակագիր Յակոբ Պօղոսեանի մահուան քառասունքին առթիւ: Յաւարտ արարողութեան, Ալեք Մանուկեան Կեդրոնի «Պօյաճեան» սրահին մէջ տեղի ունեցած է յուշի ձեռնարկ մը, նուիրուած ողբացեալին, կազմակերպութեամբ Հ. Բ. Ը. Մ.-ի Գալիֆորնիոյ Շրջանակային վարչութեան: Բացումը կատարած է վարչութեան ատենապետ տոքթոր Սիմոն Սիմոնեան: Սրտի խօսքերով հանդէս եկած են Ռ.Ա.Կ.-ի կողմէ Ալպէր Ուզունեան, Սամուէլ Իլանճեան, Պերճ Զոլաքեան, Արա Պապայեան եւ Գրիգոր Սաթամեան: Ստեփան Ալաճաճեանի յարգանքի խօսքը կարդացած է Նունէ Աւետիսեան: Ցուցադրուած է Յակոբ Պօղոսեանի կեանքը ներկայացնող տեսերիզ մը, պատրաստուած Ռուբէն Քոչարի եւ Նունէ Աւետիսեանի կողմէ:

ԼՐԱՏՈՒ

Ո՞Վ ՔԵՐ ԵՆ ԹԱԼԻՊԱՆՆԵՐԸ

Թալիպանները որոնք միջազգային այժմէականութեան գլխաւոր դերակատարներէն վերածուած են, հետեւորդներն են շարժումի մը որ ծագում առած է Աֆղանիստան - Փաքիստան սահմանին մօտակայ իսլամական վարժարաններէ: Անոնք սերտօրէն կապուած են Իսլամ իմաստուններու միութեան որ Հնդկաստանի ու Փաքիստանի մէջ արմատացած կուսակցութիւն մըն է: Ասկէ դիւրին է հետեւցնել թէ Թալիպանները Փաքիստանի հետ կապեր ունին, թէեւ անոնց յարաբերութիւնները Փաքիստանի ղեկավար ամբողջ դասուն համաձայնութիւնը չի վայելեր: Օրինակ Պէնազիր Պութթոյի կառավարութեան օրով (1993 - 1996) Ներքին նախարարը զօրավիգ էր այդ ուսանողներուն, մինչ Արտաքին գործերու նախարարը՝ դէմ: Թալիպանները Փաքիստանի նեցուկը վայելելով հանդերձ, սխալ կ'ըլլայ ըսել թէ անոնք Իսլամապատի հակակշռին տակ են եւ կը հնազանդին անոր հրահանգներուն:

Թալիպաններուն մասին թերեւս չափազանցութիւն է ըսել թէ զինուորական մեծ քաջագործութիւններու հեղինակներ են. թէեւ ճիշդ է որ երկու տարուան ընթացքին աֆղանական տարածքին երկու երրորդը ձեռք անցուցած են, եւ մղելով Շահ Մասուտի լաւ մարզուած ուժերը: Այս վերջինը զինուորական այն ղեկավարն էր որ սպաննուեցաւ Սեպտեմբեր 9-ին, ԱՄՆ-ու արարքներու նախօրեակին, հաւանօրէն Պէն Լատէնի մարդոց կողմէ: Սակայն, ամէն բան գրեթէ առանց կռիւի տեղի ունեցած է եւ դժուար է կարեւոր պատերազմի մը անունը տալ որուն Թալիպանները մասնակցած ու շահած են: Ճալալապատի ու Քապուլի գրաւումներուն անոնք ոչ մէկ ընդդիմութիւն գտած են:

Թալիպանները վերջին ծայր կարգապահ խումբերու տէր են: Իրենց ներշնչած վախը եւ մոլեռանդ ու մաքրակրօն իրենց գաղափարականին վայրագութիւնը, նաեւ տարիներով պատերազմ ապրած ժողովուրդի մը համակերպումը կրնան աւելի մեծ դեր խաղցած ըլլալ անոնց յաղթանակին մէջ, քան՝ պատերազմիկի յատկանիշները:

Մարդիկ Թալիպաններէն կը վախնան նաեւ երկու այլ պատճառով. առաջինը անոնց ցեղային բաղադրութիւնն է, պաշտոնն արմատներուն հանդէպ յարգանքը: Ատիկա իրենց թէ' մեծ ուժն է, թէ' տկարկէտը: Կրնայ օրինակ, դժուարացնել իրենց յաջողութիւնը շրջաններու մէջ որոնց բնակչութիւնը ո՛չ սիւննի է, ոչ պաշտուն: Երկրորդն ալ պատերազմէն սպառած բնակչութեան վերաբերումն է անոնց հանդէպ: Այդ բնակչութիւնը ընդունած է զիրենք, քանի որ իրենց հակակշռած շրջաններուն մէջ յարաբերաբար պատուաւոր, կաշառակերութենէ զերծ իշխանութիւններ ձեւաւորած են: Անոնք աւելի թեթեւ տուրքեր կը գանձեն, քան՝ մուճահետին հրամանատարներու մեծ մասը:

ՔԱՂՀԱՆ

ԹԻԻ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

- Ճիշդ յիշեցիր, ահա այդ երիտասարդը կը փնտռեմ:

- Կարծեմ, որ այդ Տրդատը յեղափոխական է, հնչակեան կուսակցութենէն:

- Թերեւս այնպէս ըլլայ, տեղեկութիւն չունիմ, ես զինքը կը փնտռեմ կոր անձնական գործի մը համար, արդեօք զինքը տեսա՞ր երէկ, այսօր...

Աստիկ պահ մը մտածեց, յետոյ յանկարծ ձեռքը ճակտին տանելով՝ ըսաւ.

- Այո՛, կը յիշեմ, որ զինքը տեսայ երէկ առտու...

- Վստա՞հ ես, - գոչեց լրտեսը:

- Բացարձակապէս ապահով եմ, նոյնիսկ զինքը բարեւեցի, ուրիշ երիտասարդի մը հետ աճապարանքով կ'երթար կոր ուղղուած երեւոյթով մը, նոյնիսկ բարեւս չառաւ կամ աւելի ճիշդը՝ գլխ չճանչնալ ձեւացուց, իրաւ ալ, անգամ մը միայն գլխ տեսած էր:

- Բայց ո՞ւր տեսար զինքը:

- Շիշլիի կողմը:

- Աւելի չես կրնա՞ր ճշդել տեղը:

- Ճիշդ սթասիոնին մօտերը տեսայ, արագ քայլերով իր ընկերոջը հետ քովէս անցաւ ու փողոց մը մտաւ, իսկ ես թըռամվայ նստեցայ:

- Ընկերը ինչպէ՞ս մարդ էր:

- Նիհար երիտասարդ մըն էր, թուխ դէմքով, ճիշդ այն երիտասարդը, որուն հետ նստած էր գինեպանին խանութը:

- Հասկցայ, - գոչեց Արշակ, - այդ երիտասարդն ալ կ'ուզէի տեսնել, ուրեմն կ'երեւայ, որ հիմա Շիշլիի կողմերը կը բնակին:

- Այնպէս կ'երեւայ... հիմա կը յիշեմ, որ միւս երիտասարդին թեւին տակ հայց մը կար, իսկ Տրդատ ծրար մը բռնած էր:

- Շատ շնորհակալ եմ ձեր տուած տեղեկութիւններէն: Հիմա թոյլ տուէք, որ երթամ:

- Ո՞ւր պիտի երթաք, նստեցէք...

- Ո՛չ, անմիջապէս Շիշլի պիտի երթամ Տրդատը փնտռելու:

- Այդչափ կարեւո՞ր է:

- Այո՛, չափազանց կարեւոր:

Աստիկ ջանաց վար դնել լրտեսը, բայց այս վերջինը այլեւս տեղի չտուաւ:

Ոտքի ելաւ ու շնորհակալութիւն յայտնելով՝ մեկնեցաւ:

Կ'ուզէր ժամանակ չկորսնցնելով խուզարկութեան սկսիլ գտնելու համար Տրդատը եւ իր ընկերը:

Աստիկի տուած տեղեկութիւնը չափազանց գոհ ըրած էր զինքը:

Ինչպէս ըսինք, օրերէ ի վեր Արշակ ի զուր կը հետապնդէր հնչակեան երիտասարդը: Կամաց - կամաց սկսած էր յուսահատիլ եւ այն համոզումը գոյացնել, թէ Տրդատ խոյս տուած էր Պոլսէն: Ոստիկանատան մէջ իր պետերն ալ նոյն համոզումը ունէին:

- Ամէնէն կարեւոր որսը փախցուցիր, - կ'ըսէին իրեն ծաղրական շեշտով մը:

Հիմա եթէ ինք յաջողէր փախստականին հետքը գտնել ու ձերբակալել, ասիկա իրեն համար մեծ յաջողութիւն մը եւ փառքի տիտղոս մը պիտի ըլլար:

Մութը կոխած էր արդէն, երբոր Արշակ թռամվայ մը նետուեցաւ Շիշլի երթալու համար: «Արդեօք հետքը պիտի կրնա՞մ գտնել», - կը մտածէր:

Իր ճարպիկութեան վրայ մեծ համարում ունէր, բայց իր յոյսը ալ աւելի դրած էր դիպուածին վրայ:

«Տրդատի ներկայութիւնը Շիշլիի մէջ, - կը խորհէր, - պարզապէս դիպուածի շնորհիւ իմացայ: Եթէ դիպուածով այս գաբեջրատունը չմտնէի, եթէ հոն Աստիկ էֆէնտիին չհանդիպէի, եթէ անոր սուպումներուն վրայ եւ գրեթէ կամքիս հակառակ քովը չնստէի ու խօսքի չբռնուէի, այս միջոցիս բան մը իմացած պիտի չըլլայի, ի զո՛ւր Բերայի մէջ, անդին - ասդին ,պիտի փնտռէի զինքը. դիպուածն է, որ շատ անգամ հրաշքներ կը գործէ, մանաւանդ մեր ասպարէզին մէջ»:

Այս մտածումներով զօրացած՝ Արշակ հասաւ Շիշլիի կայարանը եւ վար իջաւ կառքէն:

«Խուզարկութիւնս գէշ առեն սկսայ, - խորհեցաւ ինքնին, - հիմա այլեւս գրեթէ գիշեր է, եւ Տրդատ ու իր ընկերը տուներնին քաշուած ըլլալու են...»:

Կայարանին մօտերը գտնուած սրճարան մը մտաւ եւ սուրճ մը ապսպրեց:

«Իմ ենթադրութիւնս սխալ է, - կը մըտածէր, - այժմ աւելի հաւանական է, որ Տրդատ գիշերը դուրս ելլէ տունէն... Իրենք զիրենք ծածկելու ստիպուած մարդիկ ընդհանրապէս գիշերը դուրս կ'ելլեն, քան թէ ցերեկը»:

Աճապարանքով սուրճը խմեց եւ դուրս ելաւ եւ սկսաւ ժուռ գալ, առանց որոշ նըպատակի մը, Տրդատին հանդիպելու ակնկալութեամբ:

Պահ մը խորհեցաւ երթալ պահականոց եւ ոստիկանութեան աջակցութիւնը խնդրել, բայց շուտով հրաժարեցաւ այդ մըտածումէն:

Ոստիկանութիւնը կրնար օգտակար ըլլալ իրեն, եթէ Տրդատի բնակավայրը գիտնար:

Հիմա ի՞նչ ծառայութիւն կրնային մատուցանել իրեն. ոչինչ:

Յետոյ լրտեսը կը նախընտրէր ամէն բան, իր ձեռքովը ընել, որպէսզի ինք կարենար իրեն վերապահել, յաջողութեան պարագային, գործին ամբողջ փառքը:

Այսպէս, մութին մէջ, քայլամոլոր, ուղղուեցաւ դէպի Պուլկար Չարշըսի:

Երբ մութ փողոցէ մը կ'անցնէր յանկարծ ցնցում մը ունեցաւ:

Երկու մարդիկ կ'երթային իրմէ 20 - 30 քայլ հեռաւորութեամբ:

Լրտեսը այդ երկու անցորդները նմանցուց Տրդատին եւ իր ընկերոջ, բայց բոլորովին վստահ չէր:

Միջոց մը լուսաւորուած պատուհանի մը առջեւէն անցան:

«Անոնք են, - ըսաւ լրտեսը մտովի, - այս անգամ որոշապէս ճանչցայ»:

Եւ յաղթական ուրախութիւն մը շողաց դէմքին վրայ:

Տրդատ եւ իր ընկերը ապահովաբար իրենց տունը կ'երթային:

«Անգամ մը որ տուն մտնեն, գործը կը դիւրանայ, - ըսաւ ինքնիրեն, - անմիջապէս պահականոց կ'երթամ, մէկ - երկու ոստիկան հետս կ'առնեմ եւ անմիջապէս երկուքն ալ կը ձերբակալեմ... Գիտէի, որ պիտի յաջողէի, բայց չէի հաւատար, որ այսչափ դիւրին պիտի ըլլար... Եւ երկուքը միասին...»:

Այս մտածումներով կը հետեւէր երկու երիտասարդներուն, երբ այս վերջինները յանկարծ կանգ առին փողոցին ծայրը: Հոն ճամբան երկուքի կը բաժնուէր:

«Տեսնենք ո՞ր կողմ պիտի դառնան», - ըսաւ լրտեսը ինքնին:

Բայց երկու երիտասարդները փոխանակ ճամբանին շարունակելու՝ պահ մը կեցած խօսակցեցան, մինչ Արշակ տան մը դրան կռթնած՝ ինքզինք կը ծածկէր:

Բայց անակնկալ բան մը պատահեցաւ, որ շատ շփոթեցուց լրտեսը:

Երկու երիտասարդները փոխանակ միասին իրենց ճամբան շարունակելու, իրարմէ բաժնուեցան: Մին դէպի աջ դարձաւ, միւսը դէպի ձախ:

«Կ'երեւայ, որ տարբեր բնակարաններ կը նստին», - խորհեցաւ Արշակ:

(Շար. 84)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Նուրհան Գաբրիէլեան եւ աղջիկը Նաւէն, Տէր եւ Տիկին Գեղամ Թորոսեան եւ զաւակները, եւ ընտանեկան բոլոր պարագաները, կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի, Հոկտեմբեր 21-ին, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Եկեղեցին, իրենց զաւկին, եղբօր եւ եղբօրորդիին՝

ՀԱՐՈՒՏ-ՌԱՖՖԻ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

եղերական մահուան տարելիցին առթիւ:

Ի գիտութիւն՝ զղրացեալին յիշատակը յարգողներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայկական Աղքատախնամ ընկերակցութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները Յուլիսէն Հոկտեմբեր.–

Տիկին Ժոզեֆին Գասպարեան, Պ. Մարք Ջերմէեան, Պ. Ալպէր Հարոյեան, Պ. Խաչատուր Տէր-Յակոբեան 300-ական Ֆր., Տիկին Այտա Պետրոսեան, Տիկին Գասպարեան, Պ. Ժերար Տէտէեան, Պ. Ռաուլ Գազանճեան 200-ական Ֆր., Տիկին Լոլա Կուզ, Տիկին Մարի Հայթայեան, Պ. Ժագ Տէյիրմէնճեան, Պ. Ռիշար Ճեզվեճի, Պ. Մանուէլ Տէյիրմէնճեան, Պ. Ժագ-Գլօտ Մաղարեան, Պ. Գասպարեան 100-ական ֆրանք, Պ. Էրիք Զինինօ 30 եւրօ 49:

(Շար. Ա. էջէն)

վճռի մը նիւթ ըլլալ: Աջին համար «գայթակղեցուցիչ պարսաւագիր մըն է, լի անճնական ատելութեամբ մը հանդէպ Հանրապետութեան Նախագահին»: Նոյն հակազդեցութիւնն ունին Ժան–Փիէր Շըվէնըմանի բարեկամները, որոնք «ծանր յանցանք մը» կը նկատեն նման հատոր մը, Շըվէնըման իսկ «շշմած է»: Ինք ալ կը քննադատուի Գորսիքայի հարցին առթիւ իր դիրքորոշման համար, երբ Ներքին Նախարար էր: Ազգային Ժողովի նիստին, Երեքշաբթի օր, Հոկտեմբեր 16-ին, բերանացի հարցումներու ընթացքին, Լ. Ժոսփէն պաշտպանեց իր գրասենեակին պետը, հատորը նկատելով «իրաւունք մը ժողովրդավարութեան մը նկատմամբ»: Նոյն օրը, աջը յետ քայլ ըրած էր եւ այլեւս չէր պահանջեր Շրամէքի հրաժարումը: Բայց եւ այնպէս, էլիզէ հաղորդագրութիւն մը կը հրապարակէր, ուր կը յիշեցնէր Ժոսփէնի գրասենեակին պետին այն իրաւունքներն ու պարտականութիւնները զորս պարտի յարգել գործադիր իշխանութեան բարձրաստիճան պաշտօնատար մը: Չի կրնար հրապարակաւ քննադատել Պետութեան բարձրագոյն իշխանութիւնները: Գիրքը հրապարակ կը հանուէր Հոկտեմբեր 18-ին եւ ի յառաջագունէ վաճառքը ապահովուած էր այս ձրի ծանուցումներով եւ Շրամէքի անունն ալ այլեւս ծանօթ էր, մինչ չաբաթ մը առաջ շատ մարդ չէր գիտեր:

ԿԱԼԸՐԻ ԼԱՖԱՅԷԹ որոշեց գնել Մարքս էնտ Սփէնսըրի Ֆրանսայի 18 վաճառատուները եւ այս ձեւով տէր դարձաւ նաեւ հոն աշխատող 1500 անձերուն, որոնք գործազուրկ մնալու վախն ունէին տարւոյն վերջ, քանի Մարքս էնտ Սփէնսըր վճռած էր փակել Ֆրանսայի իր խանութները եւ վերջ տալ իր գործունէութեան:

ՆԻԺԵՐԻԱՅԻ մէջ, աւելի քան 100 հոգի մեռած է Շաբաթ եւ Կիրակի, Հոկտ. 13, 14ին, բախումներու ընթացքին, որոնք յաջորդած են ցոյցի մը ամերիկեան ռմբակոծութիւններուն դէմ, ըստ Կարմիր Խաչին:

ՓԼԷՍԻ–ԹՐԷՎԻԶԻ (Վալ – տը – Մարնի նահանգ) մէջ, Հոկտ. 16-ի առաւօտուն երկու ոստիկաններ սպաննուած են, երրորդ մըն ալ ծանրօրէն վիրաւորուած է, երբ կը հասնէին վիլա մը, ուր գողեր մտած էին եւ տանտիրուհին հեռաձայնով ոստիկան կանչած էր: Գողերէն մէկը միայն ձերբակալուած է, միւս երեքը յաջողած են խոյս տալ: Բոլորն ալ ծանօթ են ոստիկանութեան, իրենց անցեալով (զինեալ կողոպուտ եւլն.): Ներքին նախարարը յայտարարած է թէ ջանք պիտի չխնայուի փախստականները գտնելու եւ պատժելու համար:

ՓԱՐԻԶԻ մեթրոյին մէջ, պատանեկան յանցագործութիւնը 27,6% յաւելում կրած է տարւոյն ինը ամիսներու երկայնքին, գլխաւորաբար գողութեան համար: Այդ մարզին մէջ, փիք–փոքէթներու յաւելումը 41%ի հասած է:

ARMENIAN JAZZ FESTIVAL

le Vendredi 19 et Samedi 20 octobre à 20 heures
le Dimanche 21 octobre à 16 heures

PARIS NEW MORNING
7-9, rue des Petites-Ecuries, 75010 PARIS

- **Vendredi 19**
  Arto Tunçboyaciyan Trio — Alla Levonyan / Arthur Grigorian
- **Samedi 20**
  Sophia Domancich Trio avec Claude Tchamitchian et Simon Goubert
  Armenian Navy Band
- **Dimanche 21**
  Edmond Hosdikian / Gaguik Mouradian
  Didier Malherbe Trio avec Patrick Meyer et Philippe Foch
  invité Loy Ehrich

Réservations :
Fnac, Carrefour, France Billet
Tél.: 0 892 683 622 (2,21 FF/mn), 3615 Fnac (2,21 FF/mn), www.fnac.com
Virgin Megastore, Auchan, Galeries Lafayette, Cultura, BHV
Tél. : 0 825 346 346 (0,99 FF/mn), www.ticketnet.fr
Coopération-Arménie. Tél. : 01 42 36 06 79

Site Web : http://armenianjazzfestival.free.fr
Armenian Jazz Festival: 50, rue E. Marcel, 75002 Paris.

Organisé par l'association Coopération-Arménie au profit de ses actions.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

La Section **«HELEN PUZANT»**
d'Alfortville
organise
UN

DINER-DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec l'**Orchestre GAIDZAG'S**
et attraction surprise...

Rensignements et réservations :
☎ **01 43 76 55 89**

— • —

"NAVASART"
à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30

— Billets : 100 F. et 120 F.
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.

Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— • —

SOIREE DANSANTE

organisée par
La Section «TER-DAVTIAN»
de la Croix Bleue des Arméniens
de Chaville

le Samedi 27 octobre

A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

ՄԱՐՍԷՅԼ
ՍԱՀԱԿ – ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ Օծման եւ Անուանակոչութեան 70-րդ տարեդարձ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԱԹ

Բանախօսութիւն
Հայ Առաքելական Եկեղեցւոյ մասին
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակ
Կեդրոնական
Եւրոպայի եւ Շուէտի
«Հայ Գրի եւ Գրականութեան Ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի Սուրբ Ձեռամբ»
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՊԵՔՃԵԱՆ
Առաջնորդ Գերմանիոյ Հայոց
«Հայ Ծէսի Ծագումն ու Զարգացումը»
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայապետական Պատուիրակի Փոխանորդ
Լիոն եւ Շրջակայքի
«Կրօնական Անտարբերութիւնը Ներկայիս»
Շաբաթ, Հոկտեմբեր 20, ժամը 20.30-ին
Մայր Եկեղեցւոյ մէջ
339, avenue du Prado, 13008 Marseille

Մուտքը ազատ է:

CENTRE CULTUREL
SAHAK MESROP
Semaine Culturelle Arménienne

CONCERT

Armenouhie SEYRANIAN

Soprano
Soliste
de l'Opéra d'Etat d'Erevan — Arménie
Au piano JULIETTE YILMAZIAN

*
**

Rouben ELBAKIAN

Ténor
Soliste
de l'Opéra National d'Arménie
Au piano GRIGORI ABRAMIAN

Vendredi 19 octobre à 20 heures 45

En la Cathédrale Arménienne
339, avenue du Prado — 13008 Marseille
Tél. : 04 91. 77. 84 70

Au programme :

Komitas — Gounod — Puccini —
Verdi — Tchaïkovsky...

— Participation aux frais : 100 F —

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS
ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊՋՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ

Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆԸ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»

Գինեձօն երեկոյթի աւարտին:

Communiqué de l'école de l'UGAB-Paris

Le Comité de l'Ecole de l'U G A B–Paris adresse ses sincères félicitations aux nouveaux bacheliers de l'école, qui ont obtenu du brillants résultats aux épreuves de langue arménienne. Ils ont pour noms **Achren Allahverdian, Zareh Achdjian, Diane Anselme, Tania Etjemesian, Grégoire Kumrian, Angelina Najarian, Diana Yapoudjian.**

Le Comité rappelle aux futurs bacheliers que des cours sont dispensés chaque samedi après-midi, de 16h30 à 18h. Une **formation minimum de 2 ans** est exigée pour la présentation des épreuves écrites et orales.

Par ailleurs, des cours sont organisés les lundis ou jeudi soirs à l'intention des adultes, pour tous niveaux.

Pour tout renseignement concernant ces différents cours, contecter le Centre culturel Alex Manoogian de l'UGAB: 118, rue de Courcelles, 75017 Paris (M° Courcelles).
☎ 01 42 27 12 26

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

La M.C.A. a le plaisir de vous inviter

à la

RENCONTRE

avec

Մ Ո Վ Ս Է Ս Պ Չ Ա Ք Ճ Ե Ա Ն
MOVSES BETCHAKDJIAN

à l'occasion de la parution
de son dernier ouvrage

«Մինչեւ վերջինը արեւներուն»

«JUSQU'AU DERNIER DES SOLEILS»

le Vendredi 26 octobre à 20h45

Salle S. Minassian, M.C.A.

Présentation et analyse
de l'ouvrage :
NORA BAROUTDJIAN

Avec l'aimable participation de :
ARA KRIKORIAN
et du Père HAROUTIOUN BEZDIKIAN

Accompagnement musical
à la guitare de lectures
par Ohannès **DEMIRDJIAN**

9, rue de Madrid — 94140 Alfortville
☎01.43.76.55.89 — Fax 01.43.78.66.64
e-mail : MCA.ALFO@wanadoo.fr

Imprimé sur les Presses du Journal "HARATCH"
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՈՒՐԲԱԹ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 19
VENDREDI
19 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար · 1·400 Ֆ · — Վեցամսեայ : 725 Ֆ ·
Արտասահման : Տար · 1·650 Ֆ · (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ · (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 20·278 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 77e ANNEE — N° 20.278

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 17 / 18)

ԱԶՐԲԷՋԱՆ ՉԻ ԲԱՆԱԿՑԻՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԵՏ

Արդէն յայտարարած է Ազրպէյճանի Արտաքին գործոց նախարար Գուլիեւ, ակնարկելով իրենց հետ ուղղակի երկխօսութիւն ունենալու ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասեանի պատրաստակամութեան: «Ղուկասեանը հակամարտութեան կողմ չէ, այդ բանակցութիւնները կ'ընթանան Հայաստանի հետ որուն հողային նկրտումներուն հետեւանքով ալ ծագած է հակամարտութիւնը: 100 հազարնոց ժողովուրդը չէր կրնար գրաւել Ազրբէջանի տարածքին 20%-ը» ըսած է ան:

Այսուհանդերձ, Վ. Գուլիեւ կարելի համարած է Ղարաբաղի «հայկական եւ ազրպէյճանական համայնքներուն» ներգրաւումը բանակցութիւններուն եթէ անոնք յաջող ընթացք ունենան Հայաստանի հետ:

Ազրպէյճանցի նախարարը անընդունելի գտած է Վ. Օսկանեանի առաջարկը թէ ազրպէյճանցի գաղթականներու վերադարձէն ետք կարելի է նոր հանրաքուէ ընել: Ան գանգատած է որ հայկական կողմը հակասական յայտարարութիւններ կ'ընէ քանի որ «մինչ Օսկանեան գաղթականներու վերադարձի մասին կը խօսի, Ն. Մելքումեան զայն կը կապէ հայ գաղթականներու Բաքու վերադարձի հետ»:

***

ԼՂՀ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՒՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ԼՂՀ Արտաքին գործերու նախարար Ն. Մելքումեան Հոկտ. 17-ին, Երեւանի մէջ հանդիպում մը ունեցած է Եւրոպայի Խորհուրդի դէտերու պատուիրակութեան անդամներուն հետ: Նախարարութենէն անոնց ներկայացուցած է ԼՂՀ հակամարտութեան կարգաւորման գործընթացը, իսկ հիւրերը յայտնած են որ Եւրոպայի Խորհուրդը Հայաստանի պարտաւորութիւններուն առընչուող դիտարկումներէն անջատաբար կը հետեւի կնճռին կարգաւորման զարգացումներուն եւ յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ խաղաղ միջոցներու սկզբունքին: Ապա, Ն. Մելքումեան ներկայացուցած է նաեւ ԼՂՀ մէջ ժողովրդավարական բարեփոխումները, նշելով որ անոնք աշխուժացած են մանաւանդ վերջին երկու տարիներու ընթացքին:

***

Ճ Ա Տ Ր Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿՐԿԻՆ Ա. ԴԻՐՔԻ ՏԷՐ

Հոկտեմբեր 17-ի արդիւնքներով Հայաստանի հաւաքականը 3 – 1 յաղթած է Կուպայի խումբին: Այդպէսով, 15 կէտով վերատիրացած է առաջին դիրքին: Երկրորդ են Ռուսաստան եւ Ուկրանիա որոնք ունին 14,5-ական կէտ: Չորրորդ է Գերմանիոյ խումբը, 14 կէտով:

***

ԾՆՈՒՆԴՆԵՐԸ ԿԸ ՆՈՒԱԶԻՆ

Պաշտօնական վիճակագրութեան տուեալներով, 2000-ին Հայաստանի մէջ ծնունդներու թիւը աւելի ցած եղած է այն մակարդակէն որ անհրաժեշտ է բնակչութեան բնական վերարտադրութիւնը ապահովելու համար: Հետազօտութիւնը պարզած է որ ծնունդներու համեմատութիւնը բարձր է 20–24 տարեկան կիներու մօտ: Ծնունդներու թիւը աւելի բարձր է գիւղերու մէջ, քան քաղաքներու: Մարզերէն ամենացած մակարդակը ունի Կոտայքը, ամէնէն բարձրը՝ Գեղարքունիքը: Նաեւ, տարրական եւ միջնակարգ ուսման տէր կիները աւելի զաւակ կ'ունենան, քան մասնագիտական, կամ բարձրագոյն ուսում ունեցողները:

ՀԱՅԵՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԼՈՍ-ԱՆՃԸԼԸՍԻ ՄԷՋ

Դրամաշորթութեան եւ կազմակերպուած ոճիրի մասնակցութեան մեղադրանքով Լոս Ֆելիզէն, Վան Նայզէն եւ Կլենտէյլէն հինգ Հայեր ձերբակալուած են: «Այս ցանցին կատարած ոճիրները կրնան սովորական ըլլալ Հայաստանի մէջ, բայց հոս ընդունելի չեն» ըսած է էՖ-Պի-Այ-ի Լոս – Անճըլըսի պատասխանատուն:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՄԵՐՁԱՒՈՐ – ԱՐԵՒԵԼՔ

ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

ԽԻՍՏ ԼԱՐՈՒԱԾ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Դէպքը աննախընթաց էր եւ բնական է, որ խիստ լարուած մթնոլորտ մը տիրէ եւ պաղեստինցիք վախով սպասեն իսրայէլեան հակադարձութեանց: Արդարեւ, ինչպէս գրած էինք մեր նախորդ թիւով, Հոկտեմբեր 17-ի առաւօտուն արեւելեան Երուսաղէմի մէջ մահափորձ մը կը գործուէր զբօսաշրջութեան հրաժարեալ, ծայրայեղ աջ, նախարար Ռեհավամ Զէեվի դէմ: Նախարարը ծանրօրէն վիրաւորուած էր գլուխէն եւ ծոծրակէն եւ հազիւ հիւանդանոց փոխադրուած հոգին կ'աւանդէր: Շարոն անմիջապէս հիւանդանոց կը փութար, Իսրայէլի բոլոր նախարարներուն կը հրահանգէր տունը մնալ ու բոլոր կապերը կը խզէր պաղեստինեան իշխանութեան հետ:

Չորեքշաբթի, Հոկտեմբեր 17, ժամը 7-ի շուրջ է, որ ամէնէն ծայրայեղ հակարաբ նախարարը՝ Ռէհավամ Զէեվի կը սպաննուէր արեւելեան – Երուսաղէմի Հայաթ պանդոկը, ուր սովորութիւն ունէր իջեւանելու, երբ Երուսաղէմ կ'երթար: Քիչ ետք, արարքին տէր եղած էր Պաղեստինեան Ազատագրութեան Ժողովրդական Ճակատը, որ այս ձեւով ուզած էր լուծել վրէժը, կազմակերպութեան պարագլուխ՝ Ապու Ալի Մուսթաֆայի սպանութեան Օգոստոս 27-ին Ռամալահի մէջ, իսրայէլեան բանակին կողմէ: Նախարարը միշտ մերժած էր թիկնապահ ունենալ, գիտնալով հանդերձ թէ սպառնալիքի տակ էր:

Շարոնի համար, միակ պատասխանատուն Եասէր Արաֆաթն է, որու մէկ շաբաթ պայմանաժամ տուած է յանձնելու համար յանցագործը: Իսրայէլի նախարարապետը կարգ մը այլ միջոցներ ալ ձեռք կ'առնէր: Առաջին առթիւ, կ'արգիլէր Արաֆաթի օգտագործել Ռաֆահի օդակայանը, Գազայի գօտիին հարաւը: Նոյն օրը, մինչ Պաղեստինցիք վախով կը սպասէին իսրայէլեան հակադարձութեանց, պաղեստինցի քամիքազ մըն է, որ ինքնասպան կ'ըլլար ռումբ մը պայթեցնելով զինուորական ճիփի մը քով, երկու զինուորներ թեթեւօրէն վիրաւորուած էին:

Շիմոն Փերէս ալ դիմած է Արաֆաթի որ բան մը ընէ, անպայման, որպէսզի «կրակը ամէն ինչ չաւերէ»: Արաֆաթ, անմիջապէս դատապարտեց արարքը եւ հրահանգեց «անմիջական ձերբակալութիւնը» ոճիրին հեղինակներուն: Դամասկոսէն, Ժողովրդական Ճակատը, որու կեդրոնատեղին սուրիական մայրաքաղաքին մէջ է, դատապարտեց Արաֆաթի այս որոշումը: Պուշ ալ «վճռականօրէն» դատապարտած է արարքը: Սպիտակ Տան բանբերն ալ աւելցուցած է որ Նախագահը անբաւարար կը գտնէ Պաղեստինեան Իշխանութեան զեկոյցը եւ կը գտնէ որ ան «պէտք է կրօղի միջոցներ ձեռք առնէ ահաբեկիչներուն դէմ: Իսրայէլ եւ Պաղեստինցիք վերջերս դրական նախաձեռնութիւններ առած էին բարելաւելու համար կացութիւնը: Պէտք է շարունակեն»: Ճիշդ է որ ինչ որ կը պատահի ապտակ մըն է Պուշի համար, որու ջանքերը ապարդիւն են: Պուշ կը գտնէ որ մահափորձը շատ դէշ ատեն պատահած է, արդէն Աֆղանիստանը եւ ածխախտը բաւական հարցեր ստեղծած են իրեն համար, այս մէկն ալ շատ – շատ է:

Ռեհավամ Զէեվի, 75 տարեկան, հրաժարականը տուած էր Հոկտեմբեր 15-ին, բողոքելու համար իսրայէլեան ուժերու Հեպրոնէն քաշուելու որոշումին դէմ: Ռապինի հետ Հականայի (իսրայէլեան գաղտնի բանակ, 1948-էն առաջ) դէմքերէն էր եւ կողմնակից էր Պաղեստինցիներու տեղահանութեան Գազայէն եւ Այսըրյորդանանէն:

***

Հինգշաբթի, Հոկտեմբեր 18-ին, առաւօտուն իսրայէլեան բանակը Ճենին մտած է եւ կրակ բացած է դպրոցի մը վրայ, ուսանողուհի մը սպաննուած է եւ երեք վիրաւոր կայ: Ռամալահի մէջ ալ պաղեստինցի ոստիկան մը սպաննուած է:

Իսրայէլի Ապահովութեան նախարարը յայտարարած է որ ծանօթ են Զէեվիի մարդասպաններու ինքնութեան:

ԱԾԽԱԽՏ

ԱՄԵՐԻԿԱՑԻ 31 ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒԱԾ

ՑԱՄԱՔԱՀԱՆՈ՞ՒՄ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

Ուաշինկթընի մէջ է որ ամէնէն աւելի տարածուած է ածխախտի սարսափը: Ծերակոյտին դեմոկրատ պարագլուխէն ետք, վարակուած են իր գործակիցներէն 31-ը եւ Ներկայացուցչական Ժողովն ալ (Երեսփոխանական Ժողով) շաբթուան մը համար առկախեց նիստերը:

Ընդհանուր ձեւով, ամբողջ Ամերիկայի մէջ, 46 պարագաներ յայտնաբերուած են 13 օրուան մէջ, մէկ հոգի մեռած է: Կըրկնենք, որ ինչ որ Ամերիկացիք անթրաքս կը կոչեն կը համապատասխանէ ածխախտի (մալատի տիւ շարպոն) որու ախտանշանն է շնչարգելութիւնը:

Նախագահ Պուշ, նախքան Զինաստան մեկնիլը յայտարարած է Ամերիկացիներուն, որ պէտք չէ իրար անցնին, շեշտելով. – «Զեն կրնար ահաբեկել աշխարհի մեծագոյն ազգը»:

Ֆրանսայի մէջ ալ, ինչպէս գրեցինք, մինչեւ Հոկտ. 18 քննութիւնները բոլորն ալ բացասական էին եւ հետեւանք անհամ կատակներու: Արդարութեան նախարարութիւնը կը խորհի պատժական միջոցներու ձեռնարկել: Հաղորդագրութեամբ մը, նախարարութիւնը այս ուղղութեամբ հրահանգներ ղրկած է ընդհանուր դատախազներուն:

Միացեալ-Նահանգներէն դուրս, ցարդ, ոչ մէկ վարակում յայտնաբերուած է, բազմաթիւ պարագաներ որոնց վախեր պատճառած են իսրայէլեան Խորհրդարանը, Գահիրէ (Ամերիքըն Էքսփրէսի գրասենեակը), Լոնտոն, Սպանիա, Գերմանիա եւ այլն, եւ այլն:

***

Աֆղանիստանի մէջ, կացութիւնը շատ փայլուն չէ: Մարդասիրական ոչ – կառավարական կազմակերպութիւնները դիմում ըրած են Ամերիկացիներուն, որպէսզի դադար մը ընեն, թոյլ տալու համար օգնութեան փութալ սովահար ժողովուրդի մը: Մնաց որ Թալիպանները կըրցած են ձեռք դնել 7000 թոն սննդեղէնի վրայ, Քապուլ եւ Քանտահար: Այդ սընունդը սահմանուած էր 1,7 միլիոն բնակիչներու:

Ցարդ, հակառակ իրենց սաստկացումին, ռմբակոծութիւնները որոշ արդիւնք մը չեն տուած եւ Հոկտեմբեր 18-ին, այն տպաւորութիւնը կար, որ ամերիկեան ցամաքահանում մը անմիջական է Աֆղանիստան: Նախորդ օրը, պարսկական ձայնասփիւռին համաձայն, ամերիկեան զօրքեր ժամանած էին Քանտահար, ինչ որ ամերիկեան Պաշտպանութեան Նախարարը չէր հաստատած: Թոնի Պլէր ալ, Համայնքներու Ժողովին (Երեսփոխանական Ժողով) առջեւ յայտարարած էր որ «զինուորական նոր գործողութիւններ» հաւանական են:

***

Զահետանի մէջ (Իրան – Աֆղանիստան սահմանագլուխ) Թալիպանամէտ տրա-

(Շար.ը Դ. էջ)

ԱՄՆ Կ'ՈՒԶԷՆ ՕԳՆԵԼ ԱԶՐԲԵՋԱՆԻ

ԱՄՆ-ու կառավարութիւնը դիմած է Գոնկրէսին որպէսզի Ազրպէյճանի կիրարկուած որոշ սահմանափակումներ վերցուին ու կարելի ըլլայ ռազմական օգնութիւն ցոյց տալ այդ երկրին որ «օրինակելի» գործակցութիւն ունեցաւ Ուաշինկթընի հետ, Սեպտ. 11-ի ահաբեկչութենէն ետք: Արտաքին գործերու նախարար Գ. Փաուըլ նամակ մը ղրկած է Ծերակոյտի արտաքին գործերու յանձնախումբին, շեշտելով որ Բաքու ԱՄՆ-ու արտօնած էր իր օդային տարածքը եւ խարիսխները գործածել: Ամերիկայի նախարարը կ'ուզէ որ ԱՄՆ զինուորական հարկաւոր օժանդակութիւնը տան Ազրպէյճանի, որպէսզի ան կարենայ դէմ դնել ահաբեկչական ներքին կազմակերպութիւններու եւ տարրերու:

Այդ նպատակով Գ. Փաուըլ կ'ուզէ որ այդ երկրին դէմ Ղարաբաղի հակամարտութեան պատճառով 1992-ին հաստատուած օգնութեան արգելքը ջնջուի: Կ'ուզէ նաեւ որ այլ մարզերու մէջ ալ օժանդակութիւն տրուի Բաքուի, ինչպէս՝ նիւթական, կամ տեղեկատուական:

ՄԵԾ-ՀԱՅՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ Դ. ԴԱՐՈՒՆ

Դ. դարուն քրիստոնեայ Հայաստանին եպիսկոպոսապետին ընտրութիւնը բոլորովին եզական բնոյթ մը ունի: Մինչ քրիստոնեայ այլ կեդրոններուն մէջ եպիսկոպոսներուն, արքեպիսկոպոսներուն ընտրութիւնները կը ձգտին կանոնական հաստատուն ձեւի ու կը ջանան ձերբազատուիլ աշխարհիկ ազդեցութիւններէ, քրիստոնեայ Հայաստանը իր Հայրապետին ընտրութիւնը կը յանձնէ քաղաքական իշխանութեան, որուն ազդեցութիւնը այնքան աւերիչ եղաւ յետագային:

Երբ առաջին անգամ հարկ եղաւ հոգեւոր հովիւ մը տալ Նորադարձ Հայաստանի, Տրդատ Վաղարշապատի մէջ ժողովի կը հրաւիրէ երկրին մեծամեծները ու կ'առաջարկէ անոնց «զԳրիգոր հովիւ կացուցանել» «իսկ Թագաւորն Տրդատիոս համադերձ միաբանութեամբ կնաւ իւրով Աշխէն Տիկնաւ, եւ քեռբ Խոսրովիդխտով, հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իւրոց: Եւ վաղվաղակի հասանէին ի ժամադիրն ի կողմանց ըստ հրամանին՝ յԱյրարատ գաւառ ի Վաղարշապատ քաղաքն: Թանգի եւ Թագաւորն չու արարեալ անդր հասանէր: Եւ կուտեցաւ զօրքն ամենայն եւ մեծամեծ եւ կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք եւ իշխանք, նախարարք եւ ազատք, դատաւորք եւ զօրագլուխք, համեալ կային առաջի Թագաւորին: Խորհուրդ ի մէջ առնոյր Թագաւորն ընդ ամենեսին, փութալ հասանել՝ բարեաց գործոցն ժառանգաւոր լինել: Եկայք, ասէ, ճեպեսցուք՝ զայս առաջնորդ կենաց մերոց տուեալ մեզ յԱստուծոյ զԳրիգոր՝ հովիւ կացուցանել...» (Ագաթ. 594 - 595):

Նկատի առնելով Ագաթանգեղոսի աւանդածը միայն, Ս. Գրիգորի ընտրութիւնը կը ներկայանայ իբրեւ համազգային ձեռնարկ մը՝ որով, կը գրէ Հացունի, «հիմը կը դրուի ազնուապետական ընտրութեան մը որ կանոն կը դառնայ յաջորդ ընտրութիւններուն» (Հացունի, կաթողիկոսական ընտրութիւն եւ ձեռնադրութիւն, էջ 15): Քիչ մը վարը պիտի տեսնենք թէ որքան պատմական է Տրդատի ձեռնարկը:

Երբ Գրիգոր կը քաշուի անապատ, դարձեալ Թագաւորն է որ կ'առաջարկէ անոր աթոռակից առնել Արիստակէսը. «Ապա աղաչեաց երանելի Թագաւորն Տրդատ զսուրբն Գրիգորիս, զի ձեռնադրեսցէ տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր զոր ետ ածել ինքն՝ զԱրիստակէս: Զոր ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր...» (Ագաթ. 642): Եւ յետ Նորա կալան զտեղի հայրենեացն, անդէն նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց» (Նոյն. 643): Փաւստոս անորոշաբար կը գրէ «կրտսեր որդին Արիստակէս հօրն էր գործակից երպիսկոպոսակից», յաջորդութեան իրաւունքով անշուշտ, «Գելցեր. Փ. Բ. էջ 134):

Արիստակէսի եղբօրը եւ յաջորդին մասին յստակ է Փաւստոսի գրածը. «Յաւուրս սորա (Խոսրովու) եկաց եւ եղեւ քահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ եւ եղբօրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս». (Փ. Բ. Դպր. Գ. գ.): Պատմագիրը աշխարհական բազուկի միջամտութիւն չի յիշեր:

Վրթանէսի կը յաջորդէ իր որդին Յուսիկ. «Սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց զտեղի հայրապետացն Հայոց» (Գ. ԺԲ.):

Արիստակէսի եւ Վրթանէսի համար Փաւստոս չի յիշատակեր ի Կեսարիա ճամբորդութիւնն՝ ձեռնադրութեան համար, բայց կը պատմէ Յուսիկի չուն մինչեւ Գամիրներու մայրաքաղաքը՝ «ըստ սովորութեան օրինակին» որը կրնայ միայն Գրիգորինը ըլլալ, քանի որ ոչ Արիստակէս եւ ոչ Վրթանէս չկատարեցին այդ ուղեւորութիւնը. Արիստակէս՝ զի արդէն իսկ եպիսկոպոս էր եւ ունէր յաջորդութեան իրաւունքը, Վրթանէսն ալ հաւանաբար նոյն պատճառով:

Ի՞նչ եղած էր Տիրանի բաժինը Յուսիկի ընտրութեան մէջ, պատմագիրը ժլատ է այդ մասին: Յուսիկի թոպամահ սպանումէն ետքը յաջորդութիւնը կ'երթար իր երկու որդիներուն՝ Պապի և Աթանագինէսի. հանրային կարծիքը սակայն, զանոնք անարժան կը գտնէ: Յուսիկին յաջորդ մը գտնելու համար «միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն, եւ ի մի վայր եկեալք, խուրհուրդս խորհեցան. հաւանեցուցին զԹագաւորն, ածել զծերունին Դանիէլ յիւրեանց բանակն, զի ածցեն կացուսցեն զնա իւրեանց գլուխ առաջնորդ, զի նստցի նա յաթոռն հայրապետական (անդ. Գ. ԺԴ.): Դանիէլ յանդիմանական խիստ խօսքեր կ'ընէ Թագաւորին ու նախարարներուն: Տիրան զայրացած տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա» (անդ):

Դանիէլի ընտրութեան համար կատարուած ժողովէն բացակայ է եպիսկոպոսական դասը:

Փառէնի եւ Շահակի ընտրութիւնը կը կատարուի Թագաւորին ու նախարարներուն կամքով միայն: Արշակի գահակալութեան սկիզբը, դարձեալ նախարարներն ու իշխաններն են որ կը խնդրեն անկէ կաթողիկոսացնել Ներսէսը «զԹոռն քահանայապետին Յուսկանն, զորդի Աթանագինի» (Փ. Բ. Գ. գ.):

Գնէլի սպանումով Ներսէս եւ Արշակ կը գժտուին. հայրապետը կը հեռանայ արքունի բանակէն, իսկ Արշակ իր արաբածներէն մէկը Չունակ՝ կաթողիկոս կ'ընէ:

Արշակի յաջորդը Պապ՝ կ'ամբողջացնէ իր հօրը գործը, կը թունաւորէ Մեծն Ներսէսը եւ կաթողիկոսական աթոռ կը բարձրացնէ Յուսիկ Աղբիանոսեանը:

Ասպուրակէսի մահէն ետքը, «ի տեղի նորա յաջորդ է Խոսրով զՍահակ՝ որդի Մեծն Ներսէսի» (Խոր. Գ. ԽԹ):

Հացունի տարակուսելով այս անուանումին վրայ կը գրէ. «վկայն հեռաւոր է ընտրութեան կերպն ալ անստոյգ»: Խորենացիին գրածը սակայն բոլորովին համաձայն է Դ. Դարուն սովորութիւններուն՝ կաթողիկոսական ընտրութեան հարցին մէջ: Նոյն դարուն վերջին տարիներուն Ս. Սահակի ընտրութիւնը չէր կրնար բացառութիւն մը կազմել:

Աչքի առջեւ ունենալով հայ կաթողիկոսներուն յաջորդութիւնը Դ. դարուն, կարելի է զայն բաժնել երկու մեծ շրջաններու. ա) Գրիգորէն մինչեւ Յուսիկ Ա. բ) Փառէնէն մինչեւ Մեծն Սահակ Պարթեւ:

Ա) ԳՐԻԳՈՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՅՈՒՍԻԿ

Դառնանք վայրկեան մը Ս. Գրիգորի ընտրութեան հարցին: Որքա՞ն պատմական է Տրդատի գումարած ժողովը Վաղարշապատի մէջ: Տրդատ ի՞նչ գաղափար ունէր եկեղեցւոյ նուիրապետական կազմակերպութեան մասին որ նախաձեռնութիւնն առնէր նորադարձ Հայաստանի հովիւ մը գտնել:

Թագաւորին հետ ժողովի նստած մեծամեծներէն, նախարարներէն, իշխաններէն, կուսակալներէն արդեօք քանի՞ն ընդունած էին քրիստոնէութիւնը, եւ որքա՞ն ժամանակէ ի վեր, որպէս զի խորհուրդի նստէին Տրդատի հետ հայ եկեղեցւոյ նուիրապետական կազմը ոտքի դնելու համար: Եւ ինչո՞ւ նախընտրանքը կու տան Կեսարիոյ:

Նոյնիսկ եթէ ընդունինք Ս. Գրիգորի ընտրութիւնը այնպէս ինչպէս որ հասած է մեզի Ագաթանգեղոսի քով, բաւականաչափ ապացոյց չունինք այս ձեւը յատկացնելու նաեւ իրեն անմիջական երեք յաջորդներուն:

Հայ կաթողիկոսին ընտրութեան ձեւը ազնուապետականը չէ, ինչպէս կը կարծէ Հացունի, այլ ժառանգականը:

Նկատի առնելով Դանիէլի (Փ. Բիւզ. Գ. ԺԴ.) Փառէնի (Գ. ԺԶ.) Շահակի (Գ. ԺԷ.) Ներսէսի (Դ. գ.) Չունակի (Դ. ԺԵ.) Յուսիկ Բ.ի (Ե. ԻԹ.) Ս. Սահակի (Խոր. Գ. ԽԹ.) ընտրութիւնը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն Արիստակէսինը, Վրթանէսինը եւ Յուսիկինը՝ իսկոյն ի յայտ կու գայ սա տարբերութիւնը որ վերջիններուն համար Փաւստոս ոչ մէկ ակնարկութիւն ունի քաղաքական իշխանութեան միջամտութեան մասին: Այս լռութիւնը բաւական զարմանալի կը թուի քանի որ նոյն պատմագիրը, նոյն գիրքին մէջ, նոյն պարագաներու համար՝ Դանիէլի, Փառէնի, Շահակի, Ներսէսի, Չունակի, Յուսիկ Բ.ի ընտրութեան մէջ կը յիշէ Թագաւորին եւ նախարարներուն միջամտութիւնը: Մինչ Արիստակէսի, Վրթանէսի եւ Յուսիկի համար նման միջամտութիւն մը անգոյ կ'երեւի: Կրնանք ուրեմն ենթադրել որ ասոնց ընտրութիւնը կատարուած է տարբեր կերպով:

Առաջին շրջանին մէջ ուրեմն հայ կաթողիկոսին ընտրութիւնը ազնուապետական չէրեւիր: Կը թուի աւելի ժառանգական ըլլալ: Կարելի է նոյնիսկ ենթադրել որ Վրթանէս ալ եղա՛ծ ըլլայ աթոռակից Արիստակէսի՝ - անշուշտ Կեսարիոյ մետրոպոլիտին հաւանութեամբ - յաջորդութեան իրաւունքով, քանի որ Փաւստոս չի յիշատակեր ասոր երթը մինչեւ Կապադովկիա:

Բ. ՇՐՋԱՆ, ՓԱՌԷՆԷՆ ՄԻՆՉԵՒ ՍԱՀԱԿ

«Հայոց եպիսկոպոսապետները կ'ընտրըւէին հայ ժողովուրդէն եւ կը հաստատւէին Հայոց Թագաւորէն...» կը գրէ Ակինեան (Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 7):

Փաւստոսի մէկ տեղիքը (Դ. գ.) կ'արդարացնէ այս տեսակէտը, սակայն Բիւզանդի այս տեղիքն ալ բացառութիւն մը կ'երեւի Դ. դարուն հայ եկեղեցական պատմութեան մէջ:

Կրուսսէ կը կարծէ թէ, կղերն էր հայրապետին ընտրութիւնը վճռողը (Կր. Պատ. 133): Ընդհակառակն, Յուսիկ Ա.ի մահէն ետքը, կը բացուի նոր շրջան մը հայ կաթողիկոսներու ընտրութեան. ընտրութիւնը կը դառնայ ազնուապետական Տիրանի օրով եւ Փառէնի ընտրութեամբ՝ որով Թագաւորը ոտնակոխ կ'ընէ Լուսաւորչի տան իրաւունքները: Ճիշդ է որ տիեզերական եկեղեցւոյ մէջ ալ հաւատացեալները եւ կամ իշխանները ստէպ կը մասնակցէին եպիսկոպոսներու ընտրութեան: Յաճախակի զեղծումներուն ի տես, եկեղեցին ձեռք առաւ կարգ մը միջոցներ արգելք դնելու համար աշխարհիկ իշխանութեան միջամտութեան:

Այսպէս են Նիկիոյ Դ. կանոնը (Հեֆելէ, Պատմ. Ժողովոց, Հ. Ա. էջ 539-540), Անտիոքի ԺԹ. կանոնը (անդ Ա. 720), Սարդիկէի Զ. կանոնը (777-778), Լաւոդիկիոյ ԺԲ. կանոնը (Ա. էջ 1005). տես նաեւ Հ. Հ. Ոսկեան, Սարդ. Ժող. Հ. կանոնները էջ 50 _ 53):

Հայ Եկեղեցին սակայն, իրեն եպիսկոպոսապետին ընտրութիւնը կը թողու ամբողջովին Թագաւորին ձեռքերուն մէջ: Թագաւորը առանձին եւ կամ պալատական նախարարներուն հետ կը լուծէ հարցը կաթողիկոսին յաջորդութեան: Եկեղեցական դասը բացակայ է:

Վերը յիշուած ժողովներուն վճիռները եթէ ոչ տառացիօրէն գոնէ պարունակութեամբ պէտք է ծանօթ ըլլային Հայերուն՝ Կեսարիոյ ճամբով: Զարմանալի կէտ մըն ալ այն է որ Կեսարիոյ մետրոպոլիտները կը գոհանան լոկ վերին հսկողութեամբ, տալով ձեռնադրութիւն ներկայացուած թեկնածուին:

Հայ կաթողիկոսներն ու եպիսկոպոսները ոչ մէկ ճիգ, ոչ մէկ քայլ կ'առնեն, հայրապետին ընտրութիւնը պահելու եկեղեցական դասին իրաւասութեան տակ: Աշտիշատի ժողովն ալ լուռ է այս մասին:

Ի դիմաց այնքան զեղծումներու, ինչո՞ւ հայ եպիսկոպոսները մնացին միշտ կրաւորական դիրքի մէջ: Արդեօք կարելի չէ՞ հետեւցնել որ Թագաւորներն ալ իրենց միջամտութիւնը կը հիմնէին իրաւունքի մը վրայ. օրինակի համար լռելեայն համաձայնութիւն մը Կեսարիոյ հետ, կամ ազգային սովորութիւն մը, մնացած հեթանոս Հայաստանէն: Թագաւորը կը սեփականացնէ ինքնիրեն իրաւունքը անուանելու կամ հաստատելու քրիստոնեայ կրօնապետը ինչպէս որ ատենօք կ'անուանէր Քրմապետը:

Երկու ենթադրութիւններն ալ կը մնան լոկ հաւանականութիւններ որոնց կը պակսի պատմական կռուան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսին ընտրութեան իրաւունքէն զրկուած մնալը թէ Դ. դարուն, թէ յաջորդ դարերուն, հայ եկեղեցւոյ նուիրապետական կազմին տկար կողմը կը ներկայացնէ: Ի դիմաց աշխարհիկ իշխանութեան, որ պարտէր պայքարիլ թէ ներքին (նախարարները) թէ արտաքին (Յոյները եւ Պարսիկները) հակառակորդներու դէմ, եկեղեցական իշխանութիւնը, ընտրութեան ազնուապետական ձեւին հետեւանքով չկրցաւ ամրացնել իր դիրքը եւ խաղալ իր դերը անկախաբար արքունիքին հաշիւներէն:

Սերտ յարաբերութիւն մը արքունիքի եւ Հայրապետանոցի միջեւ, շատ լաւ էր Տրդատի եւ իր որդւոյն Խոսրովի օրով. սակայն, երբ գահ բարձրացան հեթանոսամիտ եւ քմահաճ Թագաւորներ, այդ մերձաւորութիւնը դարձաւ ի վնաս Եկեղեցւոյ: Ոչ հայ եպիսկոպոսները, ոչ ալ Կեսարիոյ Մետրոպոլիտը հեռատեսութիւնը չունեցան ապահովելու Հայրապետին ընտրութեան եւ գործի ազատութիւն: Յուսիկ Ա.ի, Մեծն Ներսէսի, Ս. Սահակի նման կաթողիկոսներ որոնց գործունէութիւնը եւ առաքելական եռանդը նոր փայլ մը կու տային քրիստոնեայ Հայաստանի, Թագաւորին կամ նախարարներուն քմայքով կը զրկուէին իշխանութենէ: Մերձաւոր ապագայի մէջ, հայրենի հողի վրայ տեղի ունենալիք կրօնական հարցերու կամ վէճերու վերին հսկողութիւնը շատով պիտի խուսափի հայ եկեղեցականութեան իշխանութենէն՝ անցնելու համար հայ կամ օտար աշխարհիկ իշխանութիւններուն: Կաթողիկոսական Աթոռն ալ կորսնցուց իր վարկը:

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՃՈՒՐԵԱՆ

«Աւետիք»
1 - 4, 2001

ԴՈՂԱԻԹԷ ԴՈՂԱԻԹ

ԱՅՆՃԱՐԻ (Պէյրութ) մէջ, Սեպտեմբեր 6-էն 9, Հ. Մ. Ը. Միութեան չեփորախումբը իր տարեկան բանակումը ըրած է, որու ընթացքին սկաուտները կը գործնականացնեն իրենց գիտելիքները: Տեղի ունեցած են դասախօսութիւններ, սկաուտական խաղեր, երգեր ու պարեր: Սեպտեմբեր 8-ին չեփորախումբի անդամները արշաւած են դէպի Այնճարի բերդը: Նոյն օրը, տեղի ունեցած է տողանցք բանակավայրին մէջ, որմէ ետք չեփորախումբը մասնակցած է Հ. Մ. Ը. Միութեան Պէյրութի մասնաճիւղի բանակումի փակման հանդիսութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԴԷՊԻ ԶՄԻՒՌՆԻԱ

(Բ. եւ վերջին մաս)

ԶՄԻՒՌՆԻԱ՝ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԵԴՐՈՆ

Զմիւռնիա հայ տպագրութեան կարեւոր կեդրոնի վերածուեցաւ, երբ Մահտեսի Մարկոս, Յակոբ Արք. Նալեանի պատրիարքութեան օրով, 1759–ին տպարան բացաւ հոն՝ ձեռնարկելով ձեռագիրներու հրատարակութեան:

Սիմէոն Ա. Երեւանցի Կաթողիկոս (1763 – 1780), որ նախապէս իբրեւ Էջմիածնի նուիրակ ծառայած էր Պոլսոյ մէջ, եւ կրօնական գործիչ Մեսրոպ Գանձակեցի մեծապէս նպաստեցին տպարանի գործունէութեան: Սիմէոն Կաթողիկոս արդէն կ'աշխատէր Էջմիածնի մէջ առանձին տպարան բանալ, զոր իրականացուց 1771–ին:

Մահտեսի Մարկոսի տպարանէն առաջին անգամ լոյս տեսաւ «Մեկնութիւն ժամանակագրութեան»ը, այնուհետեւ՝ «Խորհրդատետր»ը եւ հայ մամուլի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով՝ Եզնիկ Կողբացիի «Եղծ Աղանդոց»ը:

Մեսրոպ Գանձակեցի, իր կարգին, Զմիւռնիոյ մէջ հաստատուելով, մեծ եռանդով ու անխոնջ աշխատանքով լըծուեցաւ ձեռագիրներու ընդօրինակութեան եւ կրօնական բնոյթի ձեռագիր ժողովածուներ կազմելու. այսպէսով ան կազմեց «Համառօտ Մեկնութիւն»ը (1758ին), «Լուծմունք Սուրբ Գրոց Գրիգորի Աստուածաբանի եւ Մեկնութիւն Դանիէլ Մարգարէի» եւ այլ ձեռագիրներ: Անոր գըլխաւոր աջակիցը դարձաւ Զմիւռնիոյ Հայոց առաջնորդ Աբրահամ Եպիսկ. Աստապատցին:

Զմիւռնիոյ ժամանակի մտաւորական ականաւոր գործիչներէն էր նաեւ մեծ առեւտրական Պետրոս Ապրոյեան (որ իր եղբայրներուն հետ միասին Ռուսիոյ Մեծն Պետրոս ցարէն առեւտրական բացառիկ առանձնաշնորհումներ ստացած էր). ան 1745 – 1746 տարիներուն զբաղեցաւ թարգմանական աշխատանքներով: Յիշատակութեան արժանի է անոր «Ի Փիլէմէնկի բարբառոյ ի հայ բարբառ» (Ֆլամաներէնէ հայերէն թարգմանուած) «Պատմութիւն Բիւզանդիոյ կամ Բիւզանդարան»ը, ուր Եգէականի շրջանին վերաբերեալ պատմական եւ աշխարհագըրական հետաքրքրական տեղեկութիւններ կան, յատկապէս՝ «Վասն Լիկիացւոց խամիռայէն», «Յաղագս Մանիսայու», «Յաղագս Եփեսոսի» եւ «Յաղագս Ֆիլատելֆիոյ» հատուածներուն մէջ:

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԴԵՀ

Զմիւռնիոյ հայութիւնը, 1688–ի մեծ երկրաշարժէն ու հրդեհէն դար մը ետք, երկրորդ անգամ ըլլալով ականատես եղաւ ահաւոր երկրաշարժի ու հրդեհի:

Արդարեւ, 1778 Յուլիս 3–ի կէս գիշերէն ետք, սոսկալի ցնցում մը քարուքանդ ըրաւ քաղաքին մեծ մասը:

Յերեկին, Յոյնի մը տունէն պատահմամբ կրակ ելաւ եւ հիւսիսային հովէն վայրկեանի մը ընթացքին տարածուեցաւ ամէն ուղղութեամբ: Սաստիկ ցնցումները անընդհատ կը շարունակուէին եւ կրակը աւելի ու աւելի կը տարածուէր: Բնութեան հարուածներուն դէմ պայքարելու անկարող՝ մարդիկ խուճապահար կը փախչէին՝ ձգելով, որ կրակը շարունակէ իր աւերը: Այդ օր, քանի՜ աւելի խաներ, գրեթէ բոլորն ալ քարաշէն, հըրոյ ճարակ եղան: Ֆրանսական, անգլիական, Վենետիկի, Նափոլիի եւ այլ երկիրներու հիւպատոսարանները այրեցան: Գողեր ու աւազակներ առիթէն օգտուելով հրապարակ իջան եւ գողցան ու կողոպտեցին, ինչ որ մնացած էր:

Զմիւռնիոյ հայութիւնը իր կարգին բաւական կորուստներու ենթարկուեցաւ, սակայն Հայոց թաղը, այլ թաղամասերու բաղդատմամբ, նուազագոյն վնասով ազատեցաւ: Հայերը, ինչպէս նաեւ բոլոր զմիւռնիացիք այդ օրերուն մեծ մասամբ շրջակայ գիւղերը ապաստանեցան, մինչեւ որ ցնցումները դադրեցան եւ վերադառնալով քաղաք՝ ձեռնարկեցին վերակառուցման աշխատանքի:

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԲԱՑՈՒՄ ԵՒ Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Զմիւռնիոյ հայութիւնը մինչեւ ԺԸ. դարու վերջաւորութիւնը դպրոց չունէր, սակայն «տնական վարժոց»ներ շատ հաւանաբար եղած են: Զմիւռնահայերը, որոնք առեւտրական կապեր ունէին եւրոպական քաղաքներու հետ եւ սերտ շըփում՝ զմիւռնաբնակ եւրոպացիներու հետ, ժամանակի լուսաւորութեան ոգիով, նոր սերունդի հայեցի կրթութեան ու ազգապահպանման գաղափարներով տոգորուած՝ որոշեցին վարժարան հիմնել եւ այդ նպատակով ալ աշխատանքի ձեռնարկեցին:

Ապրոյեանները իրենց սեփական փայտաշէն մէկ տունը նուիրեցին համայնքին, եղան նուիրատուութիւններ, եւ 1799ին Ապրոյեաններուն տունը վերածուեցաւ դպրոցի՝ Մեսրոպեան անունով: Անոր փոքրիկ սրահներուն մէջ հաւաքուեցան մանուկներ՝ գրել կարդալ սորվելու:

Դպրոցի կառուցումէն ետք զմիւռնահայերը 1801–ին ձեռնարկեցին Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ կառուցման, իսկ յաջորդ տարին՝ 1802ին, Սպարթալեաններուն նուիրատուութեամբ եկեղեցւոյ մօտ ազգային հիւանդանոց կառուցուեցաւ:

Աղջիկներ մինչ այդ դպրոց չէին յաճախեր. միայն կարգ մը ընտանիքներ իրենց աղջիկներուն իրենց տան քահանային մօտ կամ առանձին տուներու մէջ գրել կարդալ կը սորվեցնէին: Այս վիճակին վերջ տալու համար 1820–ին ազգային հիւանդանոցի մէկ սրահը յատկացուեցաւ իբրեւ աղջկանց վարժարան, ուր հաւաքուեցան ուսումնասէր աղջիկներ ու տեղւոյն քահանային հսկողութեան տակ, սկսան գրել կարդալ սորվիլ:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ԽԱՉԵՐԻ ԿՈՄԻՏԱՍԵԱՆ
ՎԵՐԾԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

«Հայաստան», Երեւան 2001

LIVRES REÇUS

JE ME SOUVIENS... DU 9e ARRONDISSEMENT

SONIA KRONLUND

De ce quartier, ses habitants se souviennent qu'il se définissait surtout par ses frontières; de Pigalle, entre 9e et 18e, descendaient les voyous; les grands journaux s'étaient établis à la frontière du 2e— sur les grands boulevards de la fête et des grands magasins; le quartier bourgeois jouxtait le 17e, tandis que le commerce des fourrures et des diamants se répartissait entre le 9e et le 10e.

Le 9e, c'était l'excès et l'extravagance dans la diversité sociale et culturelle. Des myriades de petits mondes y cohabitaient sans forcément se connaître, sans se dédaigner non plus; Arméniens de la rue Bleue, fourreurs et diamantaires, auteurs dramatiques de la rue Ballu, filles de Pigalle et des cabarets de nuit, commissaires-priseurs de Drouot, bourgeois des beaux immeubles, voyants et mages...

Une drôle de vie pour un arrondissement métissé et toujours surprenant; c'est cela dont témoignent ses habitants, «neuviémistes» fervents, qui se souviennent aujourd'hui de leur quartier.

Collection: Je me souviens...
Nombre de pages: 120 pages
Format: 22,5×24,5cm, relié
Illustrations: photos en noir et blanc
Prix: 148 F

Ed. Parigramme

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԺԹ.

1914 ՅՈՒԼԻՍ 14

Այժմ ո՞ւր պէտք էր հետեւիլ:

Լրտեսը ասոր համար բնաւ չվարանեցաւ:

«Տրդատին ետեւէն երթանք», - վճռեց: Եւ այդ ուղղութեամբ քալել սկսաւ:

Երիտասարդը սկսած էր քայլերը արագել: Լրտեսն ալ նոյնը ըրաւ:

Տրդատ կ'երեւայ, որ իմացաւ Արշակի ոտնաձայնը եւ յանկարծ ետին դարձաւ եւ փոխանակ ճամբան շարունակելու՝ ըսպասեց:

Լրտեսը վայրկեան մը շփոթեցաւ. ի՞նչ դիրք պէտք էր բռնել հիմա: Կենա՞լ, թէ՞ ճամբան շարունակել:

«Եթէ կենամ, բոլորովին պիտի կասկածի, լաւագոյն է, որ ճամբաս շարունակեմ, թերեւս զիս չճանչցաւ, - մտածեց, - ասկէ զատ, ճանչցաւ կամ չճանչցաւ, ճար չկայ, մինչեւ ծայրը երթալու է»:

Եւ ճամբան շարունակեց մինչեւ որ մօտեցաւ Տրդատին:

Այս վերջինը ապահովաբար ճանչցած էր լրտեսը, որովհետեւ ձեռքը տարաւ գրպանը եւ ըէվոլվէրը բռնեց:

- Վա՜յ, Արշա՛կ էֆէնտի, դո՞ւն ես եղեր, - ըսաւ լրտեսին, երբ այս վերջինը բոլորովին մօտեցաւ իրեն: - Հեռուէն չճանչցայ քեզի:

- Ես ալ քեզ չճանչցայ, - պատասխանեց Արշակ:

- Եթէ զիս չճանչցար ինչո՞ւ ետեւէս կուգայիր:

- Ետեւէ՞դ կուգայի, այդ ի՞նչ խօսք է:

- Ես այնպէս ենթադրեցի:

- Շատ սխալ, պարզապէս դիպուածով հանդիպեցայ քեզի:

- Շիշլիի կողմե՞րը կը նստիս:

- Ոչ՛, բարեկամի մը եկած էի ու հիմա տեղս կը դառնայի, իսկ դուն ի՞նչ գործ ունիս այս կողմերը:

- Ես Շիշլի կը նստիմ:

- Կը կարծէի, որ Բերա էիր:

- Այո՛, առաջ Բերա սենեակ մը բռնած էի, բայց հիմա հոս փոխադրուած եմ:

- Շատո՞նց է...

- Քանի մը շաբաթ կայ...

Անոր համար է, որ քեզ տեսած չունիմ... կ'երեւայ, որ Բերայի կողմերը եկած չունիս:

- Հիւանդ էի, սենեակէս դուրս չէի ելլեր կոր, - պատասխանեց երիտասարդը, որ իր ամբողջ պաղարիւնութիւնը պահած էր, ինչ որ զարմանք կը պատճառէր լըրտեսին:

- Նոյնիսկ ժամադրութեան ալ չեկար, - ըսաւ Արշակ:

- Ի՞նչ ժամադրութիւն, - հարցուց Տըրդատ:

- Զարմանալի բան, մոռցա՞ր, Արշաւիրի մասին:

- Ա՛, այդ խնդիրը ալ ինծի համար նըշանակութիւն չունի, այդ միջոցին զինքը տեսնելու պէտք ունէի, բայց յետոյ ալ պէտք չմնաց:

Տրդատին եւ լրտեսին միջեւ այս խօսակցութիւնը տեղի կ'ունենար կեցած:

- Եթէ ձեր ճամբան այս կողմէն է, միասին ճամբանիս շարունակենք, - ըսաւ լրտեսը:

- Շատ աղէկ, - հաւանեցաւ Տրդատ:

Յիսուն քայլի չափ առաջ երթալէ ետքը Տրդատ ըսաւ՝ կանգ առնելով:

- Ես հիմա դէպի ձախ պիտի դառնամ տունս երթալու համար, իսկ դուն եթէ Բերա պիտի երթաս ու Թոմամվայ նստիս, ուղղակի կը շարունակես:

- Անհոգ եղիր, ես ճամբաները գիտեմ, - պատասխանեց լրտեսը ժպտելով, - ուրեմն այս փողոցին մէ՞ջն է տունդ:

- Այո՛, բաւական ծայրը, եթէ ժամանակ ունիս, եկուր մինչեւ տուն երթանք, քիչ մը կը տեսակցինք, հետաքրքրական բաներ ունիս, անշուշտ, պատմելիք:

- Ի՞նչ կ'ուզես, որ պատմեմ:

- Տեղեկութիւն կ'ուզէի առնել սա վերջին օրերու ձերբակալութիւններու մասին:

- Իրաւցնէ քեզ կը հետաքրքրէ՞ ատիկա:

- Բնականաբար, գոնէ իբրեւ Նախկին հնչակեան, - պատասխանեց Տրդատ ժըպտելով:

- Եթէ այդպէս է, ուրեմն իրաւցնէ կրնամ քեզի հետաքրքրական բաներ պատմել:

- Ուրեմն եկէք, տեսնենք, սուրճ չունիմ, բայց քօնեաք կրնամ հրամցնել:

- Շնորհակալ եմ:

Փողոցը ամայի էր բոլորովին, տուները ցանցառ եւ ընդհանրապէս պարտէզով շրջապատուած:

- Կարծես թէ գիւղ է այստեղ, - դիտել տուաւ լրտեսը:

- Այո, բոլորովին գիւղի կը նմանի:

- Քու տունդ ալ պարտէզի մէ՞ջ է:

- Այո՛, բաւական մեծկակ պարտէզ մը:

- Առանձի՞ն կը բնակիս:

- Այս միջոցիս առանձին եմ, տնեցիները քանի մը օրուան համար ագարակի մը տուն գացին, կարծեմ հարսնիք ունին եղեր:

- Տանտէրը հա՞յ է:

- Ո՛չ, յոյն է, - պատասխանեց Տրդատ:

ԳԼՈՒԽ Ի.

ՀՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Այսպէս խօսակցելով՝ մութին մէջ հասան պարտէզի մը դրան առջեւ:

Տրդատ ոտքի հարուածով մը դուռը բացաւ:

- Ետեւէս եկուր, - ըսաւ լրտեսին, - ուշադրութիւն ըրէ՛, աջ կողմդ հոր մը կայ, որ կափարիչ չունի:

- Աղէկ որ ըսիր, որչա՛փ ալ մութ է, բան մը չեմ տեսնար կոր:

- Այո՛, ծառերը բոլորովին մութ կ'ընեն:

Հասան տան դրան առջեւ: Տրդատ բանալիով մը բացաւ զայն, առաջ ինք ներս մտաւ, սեղանին վրայ դրուած լամպան վառեց եւ յետոյ ներս հրամցուց հիւրը:

- Տանը մէջ բոլորովին առանձի՞ն ես, - հարցուց լրտեսը վարանոտ քայլով մը ներս մտնելով:

- Արդէն ըսի, որ տնեցիները քանի մը օրուան համար տունէն բացակայ են, - պատասխանեց Տրդատ:

- Տնեցիներէն դուրս թերեւս ուրիշ վարձակալներ ալ կրնան ըլլալ:

- Ո՛չ, մարդ չկայ, միայն ես, կամ, աւելի աղէկ չէ՞, առանձին գլուխ գլխի կը տեսնուինք:

Լրտեսը բնականաբար չափազանց գոհ էր Տրդատը ձեռք անցընելուն համար. բայց միւս կողմէ մտատանջութիւն մը ունէր:

Ինք նախապէս ծրագիր մը պատրաստած էր, որուն համեմատ նախ հեռուէն պիտի հետեւէր յեղափոխականին, անոր տունը պիտի սորվէր եւ յետոյ մէկ - երկու ոստիկաններու օժանդակութեամբ զայն պիտի ձերբակալէր:

Արդ, հիմա դէպքերը ուրիշ ընթացք մը առած էին եւ իր ծրագիրը վիժեցուցած:

(Շար. 85)

Տէր եւ Տիկին Տոքթոր Ժագ Պալեան եւ զաւակները,
Տէր եւ Տիկին Փաթրիս Պալեան եւ զաւակները
ինչպէս նաեւ Պալեան, Նիկողոսեան, Թէնեքճեան եւ Պահատըրեան ընտանիքները
ցաւով կը ծանուցանեն իրենց մօր, մեծմօր, ազգականին եւ խնամիին՝

ՏԻԿԻՆ ՍԻՄԱ ՊԱԼԵԱՆԻ

(Ծնեալ՝ Քէօթահեալեան)

մահը, որ պատահեցաւ Հոկտեմբեր 17-ին, 87 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Ուրբաթ, Հոկտեմբեր 19, ժամը 15.45-ին Արնուվիլի Վարագայ Ս. Խաչ Եկեղեցին
31-33, rue Saint-Just,
95400 Arnouville-les-Gonesse
ուրկէ մարմինը կը փոխադրուի տեղւոյն գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը։

Որեւէ մահազդ գրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Ժագ Պալեանի եւ Տէր եւ Տիկին Փաթրիս Պալեանի։

(Շար. Ա. էջէն)

մաղրութիւնները բուռն են եւ ըստ «Ֆիկառօ»յի յատուկ Թղթակիցին (Հոկտ. 18) երիտասարդները պատրաստ են մեռնելու։ Միւնդ համայնքին պետը՝ Մոլավի Ապտուլհամիտ կ'ըսէ թէ մզկիթները լեցուն են կռուելու պատրաստ մարտիկներով։ Եթէ Ամերիկացիք ոտք դնեն աֆղան հողամասին վրայ, ահաւոր հակամարտութիւն մը ծայր կու տայ, աւելի արիւնալի քան երկու Համաշխարհային պատերազմները։

Մաքքիի գուրանական դպրոցին մէջ, ուսանող մը կ'ըսէ՝ «միշտ սիրած ենք Թալիպանները, բայց, այլեւս, ամբողջովին իրենց հետ ենք։ Պէն Լատէն մեծ մարդ է» ու իր մէկ դասընկերը կ'աւելցընէ.– «Աւելի գութ կը զգանք Նիւ-Եորքի զոհերուն համար քան Աֆղաններուն որոնք այս օրերուն կը ջարդուին, որովհետեւ այս վերջինները դրախտ կ'երթան, մինչ Ամերիկացիք դժոխք կ'երթան»։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼԸՎԱԼՈՒԱ – ՓԵՌԷԻ քաղաքապետին՝ Փաթրիք Պալքանիի ընտրութիւնը ջնջուեցաւ։ Վարչական դատարանը կը գտնէ որ, 1997-ին Պալքանի դատապարտուած էր, որովհետեւ քաղաքապետարանի 3 պաշտօնեաներ օգտագործած էր իր անձնական բնակարաններուն համար եւ թէ «հաշուետու է քաղաքապետարանի դրամին» ու չի կրնար ընտրուիլ։

ՍԻԼՎԱՆԻ ՄԷՋ (հարաւ – արեւելեան Թուրքիա) ՓՔՔ-ի երեք անդամներ սպաննուած են, երկու զինուորներ ալ վիրաւորուած են բախումներու ընթացքին։

ՃՇԴՈՒՄ

Մեղմէ կը խնդրուի ճշդել որ Կիրակի, Հոկտեմբեր 14-ին, Անթոնիի խաչքարի զետեղման արարողութեան աւարտին (տե՛ս «Յառաջ», Հոկտեմբեր 16, Ա. էջ) հայկական երգերը երգած է Պ. Օննիկ Ատուրեանի Լ'Այ լէ Ռոզի Թրուպատուր խառն երգչախումբը (առաւելաբար օտարներէ բաղկացած)։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԼԸ ՓԼԷՍԻ-ՌՈՊԷՆՍՈՆ.– Տիկին Արմենուհի Գաւաֆեան 1000 Ֆր. Թերթին 76-րդ տարեդարձին առթիւ։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Արմենուհի Գաւաֆեան իր ծնողքին Սարգիս *եւ* Մարիամ Սելթեֆեանի *եւ ամուսնոյն՝* Պերճ Գավաֆեանի *յիշատակին* 1100 *Ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին։*

CHENE

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

10e Grande Braderie de Noël

Շաբաթ, Կիրակի, Դեկտեմբեր 1 եւ 2

ՇԷՆ ՖՐԱՆՍԱ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Ալֆորվիլի Էլէն Բիւզանդ մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները. – Ոմն 100 Ֆր., Տիկին Վերժին Ուզունեանէ 500 Ֆր. իր թոռնիկին Մելինէի, բժշկութեան քննութեան յաջողութեան ուրախ առիթով։

Տիկին Մարի - Ժան Խաչատուրեանէ 300 Ֆր. եւ Տիկին Լուիզ Ոսկանեանէ 200 ֆրանք Արթօ Գույումճեանի *մահուան քառասունքին առիթով։*

Տէր եւ Տիկին Յովհաննէս Պառաւեանէ 300 Ֆր. իրենց թոռնիկին Յոլինէի ծննդեան ուրախ առիթով։

***

Կապոյտ Խաչի Շրջ. Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Մարսէյլի Համազգային դպրոցէն 500 Ֆր. Կապոյտ Խաչի Պոմոնի մասնաճիւղի անդամուհի՝ Տիկին Արթինեանի *մահուան առթիւ։*

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI
et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR

du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le diner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre MASSIS»

l'UGAB invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : «Le Val des Neiges»
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :

au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

La Section **«HELEN PUZANT»** d'Alfortville
organise
UN

DINER - DANSANT

au profit de ses œuvres
tant en Arménie qu'en France
le Samedi 20 octobre à 20h30
Salle des Fêtes, rue Voltaire, Alfortville
avec **l'Orchestre GAIDZAG'S**
et attraction surprise...

Renseignements et réservations :
☎ 01 43 76 55 89

— • —

"NAVASART"
à Asnières

Pour son action liée à l'enfance,
La section d'Asnières de la CBAF
vous invite à un
SPECTACLE EXCEPTIONNEL
avec l'Ensemble folklorique
"NAVASART"
de retour d'Arménie.
au Grand Théâtre d'Asnières
le Samedi 20 octobre à 20h30
— Billets : 100 F. et 120 F.
en vente auprès des membres de la section, dans les MCA de la région parisienne et sur place.
Mise à disposition d'un autocar au départ de Paris.

Pour plus d'information contacter :
— Mme Kaïchian au 01 56 04 19 89
— Mme Himinian au 01 40 11 19 33

— • —

SOIREE DANSANTE
organisée par
La Section «TER-DAVTIAN» de la Croix Bleue des Arméniens de Chaville

le Samedi 27 octobre à 20 heures 30

A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

— • —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY
Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour
du 28 décembre 2001
au 2 janvier 2002
Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Diner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— 01. 42. 36. 33. 73 (la journée)
— 01. 46. 58. 03. 17 (le soir)

— • —

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

ՄԱՐՍԷՅԼ
ՍԱՀԱԿ – ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆ

Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ Օծման եւ Անուանակոչութեան 70-րդ տարեդարձ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԱԹ

Բանախօսութիւն
Հայ Առաքելական Եկեղեցւոյ մասին
ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
Հայրապետական Պատուիրակ
Կեդրոնական
Եւրոպայի եւ Շուէտի
«Հայ Գրի եւ Գրականութեան Ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի Սուրբ Ձեռամբ»
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՊԵՔՃԵԱՆ
Առաջնորդ Գերմանիոյ Հայոց
«Հայ Ծէսի Ծագումն ու Զարգացումը»
ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ԶԱՔԱՐԵԱՆ
Հայաստանեայց Պատուիրակի Փոխանորդ
Լիոն եւ Շրջակայքի
«Կրօնական Անտարբերութիւնը Ներկայիս»
Շաբաթ, Հոկտեմբեր 20, ժամը 20.30-ին
Մայր Եկեղեցւոյ մէջ
339, avenue du Prado, 13008 Marseille

Մուտքը ազատ է։

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

La M.C.A. a le plaisir de vous inviter
à la
RENCONTRE
avec
ՄՈՎՍԷՍ ՊՉԱՔՃԵԱՆ
MOVSES BETCHAKDJIAN
à l'occasion de la parution
de son dernier ouvrage
«Մինչեւ վերջին արեւները»
«JUSQU'AU DERNIER DES SOLEILS»
le Vendredi 26 octobre à 20h45
Salle S. Minassian, M.C.A.
Présentation et analyse de l'ouvrage :
NORA BAROUTDJIAN
Avec l'aimable participation de :
ARA KRIKORIAN
et du Père HAROUTIOUN BEZDIKIAN
Accompagnement musical
à la guitare de lectures
par **Ohannès DEMIRDJIAN**

9, rue de Madrid — 94140 Alfortville
☎01.43.76.55.89 — Fax 01.43.78.66.64
e-mail : MCA.ALFO@wanadoo.fr

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30-ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS
ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ
Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը
«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»
Գինեձօն երեկոյթի աւարտին։

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 20-21
SAMEDI - DIMANCHE
20-21 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 20.279 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.279

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱԾԽԱԽՏԻ ՊԱՐԱԳԱՅ ՄԸ ՔԵՆԻԱ

ՌՈՒՄԲԵՐՈՒՆ ՀԵՏ, ՆԱԵՒ ՅԱՄԱՔԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Առաջին անգամ ըլլալով, ածխախտի պարագայ մը յայտնաբերուեցաւ Միացեալ – Նահանգներէն դուրս: Արդարեւ Աթլանթայէն Սեպտեմբեր 8-ին ղրկուած նամակ մը, Նայրոպի հասած Հոկտեմբեր 9-ին, փոշի մը կը պարունակէր, որուն քննութենէն հաստատուած է որ ածխախտի մանրէներ էին: Քենիացի բժիշկը եւ իր ընտանիքին չորս անդամները որոնք շփման մէջ եղած էին պահարանին հետ քննութիւններու ենթարկուեցան, բայց, իրենց կեանքը վտանգուած չէ:

Միացեալ – Նահանգներու մէջ, նոր պարագայ մը յայտնաբերուած է Նիւ – Ճըրզի: Վարակուած անձերու թիւը 37-ի հասած է, Տերակոյտի 31 պաշտօնեաներ կան անոնց մէջ, որոնք կ'աշխատէին դեմոկրատ պարագլուխին Թոմ Տէշըլի շրջապատին մէջ եւ շփման մէջ եղած են անոր ուղղուած նամակին հետ:

Ամերիկայէն նամակ մըն ալ ստացուած է Արժանթին: ԱՄՆ մէկ միլիոն տոլար կը խոստանան, անոնց որոնք կը յայտնեն ղրկողներու ինքնութիւնը:

Հաստատուեցաւ որ Ֆրանսայի մէջ, ածխախտի «ահազանգները» բոլորն ալ անհամ կատակներ էին: Ղրկուած փոշիները ալիւր կամ շաքար էին: Երկու հոգի արդէն մէկական ամիս բանտարկութեան դատապարտուեցան: Բանուոր մը ուզած էր վրէժ լուծել ձեռնարկութենէ մը որ իր նամակատուփը կը լեցնէր աղբերով, ուրիշ մը, Շառանթ – Մարիթիմի բնակիչներէն, քաղաքապետարանի իր պաշտօնակիցներուն փոշի շաքար ղրկած է...: Բայց եւ այնպէս, Հոկտեմբեր 18-ին, կասկածելի պահարան մը հասած է Ազգային Ժողով, առանց անունի եւ հասցէի: Պահարանի մը մէջ կար թերթի ծալուած թուղթ եւ մէջը ուրիշ պահարան մը որու մէջ սպիտակ փոշի մը կար: Անմիջապէս միջոցներ ձեռք առնուած էին, նամակներու դրասենեակը փակուած էր եւ այն 3 անձերն ալ, որոնք դպած էին պահարաններուն, հիւանդանոց ղրկուած քննութեան համար:

Ածխախտէն անդին, ծագած է հիւլէական սարսափը: Թէեւ հաստատուած չէ, բայց, կասկածներ կան որ Պէն Լատէն եւ իր ցանցերը կրնան հիւլէական զէնք ունենալ, աւելի ճիշդ շողագործօն նիւթեր, որոնք թոյլ կու տան հիւլէական ռումբ շինելու: Զանազան մտահոգիչ դէպքեր պատճառ կ'ըլլան որ հարցը լուրջի առնուի: Այսպէս, կը յիշուի որ 2000 Ապրիլ 19-ին Պաթումի մէջ (Հարաւային Վրաստան) մաքսային պաշտօնեաները քննելով Թուրքիա ղրկուելիք ծրարներու դէզ մը, պատահաբար գտած են պատահական գտած են եւ քննութենէ ետք պարզուած է որ 920 կրամ իւրանիոմ յայտնաբերած են, բայց, որո՞ւ համար, չէ ճշդուած: Վերջին երեք տարիներու ընթացքին նման 6 պարագաներ յայտնաբերուած են:

***

Տեղւոյն վրայ, այսինքն Աֆղանիստան կացութիւնը նոյնն է: Ռումբերը կը տեղան եւ ըստ Թալիպաններու 900 մեռեալ եւ հազարաւոր վիրաւորներ կան, ինչ որ Ամերիկացիք կ'ուրանան: Միեւնոյնատեն շատ կը խօսուի ցամաքային գործողութիւններու մասին եւ ըստ ոմանց ամերիկեան զօրքեր կան արդէն:

Ռմբակոծութիւնը տեղի կ'ունենայ գիշեր ցերեկ եւ այս շաբթու, դադար ալ տեղի չունեցաւ Ուրբաթ (Հոկտեմբեր 19) որ մահմետականներու աղօթքի օրն է եւ Ամերիկացիք անցեալ Ուրբաթ դադրեցուցած էին ռմբակոծութիւնները:

***

Սաուտի Արաբիա վճռական ազդարարութիւն մը ըրած է Պէն Լատէնի համակիրներուն զորս «հիւանդներ» կ'որակէ, որոնցմէ պէտք է ազատիլ:

***

Ճ. Պուշ Շանկայ հասած է Հոկտեմբեր 18-ին, ուր կը մասնակցի Ասիա – Խաղաղական Համագործակցութեան Ֆորումին Ռուսաստանի եւ Չինաստանի նախագահներուն հետ: Հակահաբեկչական իր պայքարին մէջ, Պուշ կ'ուզէ ապահովել Պուտինի եւ Եանկի նեցուկը: Խօսակցութիւնները պէտք է ծառայեն պատրաստելու Աֆղանիստանի ապագան, երեքն ալ վճռած են կեդրոնական Ասիան ազատել ահաբեկիչներէն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼԱՑԻ սպաննուած նախարարին ազգային յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 18-ին եւ Զէէվիի որդին Շարոնին ուղղելով իր խօսքը ըսաւ՝ «Արի՛ք (այդպէս կը կոչեն Շարոնը), հօրս հին բարեկամն էիր, վրէժը լուծէ»: Շարոն մէկ շաբթուան պայմանաժամով պահանջած է Զէէվիի մարդասպաններու յանձնումը, ինչ որ Պաղեստինեան Իշխանութիւնը բացարձակապէս մերժած է: Արդէն, ուզէր ալ, Արաֆաթ չէր կրնար ընդառաջել Շարոնի, Պաղեստինցիք լարուած են, մանաւանդ Հոկտեմբեր 18-ի սպանութիւններէն ետք (դպրոցականներ ձեռնինի մէջ): Միւս կողմէ, Արաֆաթ յայտարարած է որ Իսրայէլ մահափորձ մը կը պատրաստէ իրեն դէմ, ինչ որ Իսրայէլեայի պաշտօնատար մը հերքած է:

ՌՈՏԷՋԻ (Ալէքրոնի նահանգ) ձախ ընտրեալները «պարապ աթոռի» քաղաքականութիւն մը կիրարկեցին, Հինգշաբթի Հոկտեմբեր 18-ին, ներկայ չըլլալով Նահանգներու Ժողովին 71-րդ համագումարին եպրափակիչ նիստին, ուր եղոյթ կ'ունենար Շիրաք: Իրենց համար, Հանրապետութեան նախագահը ընտրապայքարի ձեռնարկած է:

ԹՈՒՐՔԻԱ ստիպողական նոր օգնութիւն մը կը պահանջէ Միջազգային Հիմնադրամէն (ԷՖ – ԷՄ – Ի): Վարչապետ Պ. Էճէվիթ ըսած է թէ Սեպտեմբեր 11-ի ոճրափորձերու հակազդեցութիւնը ծանր է տնտեսութեան վրայ, զբօսաշրջութեան եւ արտածումներու մարզերը տագնապի մէջ են: Հոկտեմբեր 17-ին, ԷՖ-ԷՄ-Ի-ն շատ խոհեմ էր եւ տրամադիր չէր թուեր նոր օժանդակութիւն բերելու Արժանթինի եւ Թուրքիոյ:

ԱԼԺԷՐ արեւմուտքը՝ Մասքարայի ճամբուն վրայ չորս հոգի սպաննուած են իսլամապաշտ զինեալ խումբի մը կողմէ:

ԸԼՍԹԷՐԻ (Հիւսիսային Իրլանտա) բողոքական նախարարները, իւնիոնիսթ կուսակցութեան անդամ հրաժարած են երկու յարաւանութիւններէ կազմուած կառավարութենէն, ստիպելու համար ԻՐԱ-ն (Իրլանտայի Հանրապետական Բանակ) որ սկսի ապազինուիլ:

ԼՈՆՏՈՆԻ բարձրագոյն Ատեանը մերժած է անդամալոյծ կնոջ մը, որ անդարմանելի հիւանդութենէ մը կը տառապի, անձնասպան ըլլալու արտօնութիւնը, ամուսնոյն օգնութեամբ: Տիան Փրէթի, 42 տարեկան, կ'ուզէ վստահ ըլլալ որ ամուսինը չի դատապարտուիր, եթէ օգնէր իրեն որ մեռնի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

Ազրպէյճանի անկախութեան տասնամեակին առթիւ հեռատեսիլի ելոյթ մը ունենալով Նախագահ Հ. Ալիեւ ըսած է թէ իր երկիրը երբեք պիտի չհրաժարի Ղարաբաղէն եւ թէ պատրաստ է ի հարկին ուժ գործադրելով անոր վերատիրանալու: Ատով Ազրպէյճանի Նախագահը գ. անգամն է որ նման սպառնալիք կը բանաձեւէ, Հայաստանի հետ բանակցութիւնները անելի մատնուելէն ի վեր: Ան նաեւ հազիւ քօղարկուած ձեւով ահաբեկչութեամբ ամբաստանած է Հայերը, ըսելով. «Այսօր աշխարհ դէմ յանդիման է ահաւոր ահաբեկչութեան մը. գիտենք թէ ինչ է ահաբեկչութիւնը: Ան պէտք է ջնջուի աշխարհի երեսէն»:

Հայաստանի Պաշտպանութեան փոխ – նախարար զօրավար Մ. Յարութիւնեան ազրպէյճանական այս տրամադրութիւններուն առնչութեամբ ըսած է Հոկտեմբեր 18-ին թէ ինք համոզուած է թէ Ազրպէյճանի ղեկավարութիւնը նման քայլ չառներ: Այդ ելոյթները պատճառ կ'ըլլան Հայաստանի մարտական պատրաստութիւնը աւելի զարգացնելու: «Այդուհանդերձ, եթէ Ադրբեջանը գնայ նման քայլի, ապա թող նեղանայ իր իսկ որոշման վրայ» ըսած է զօրավարը:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 18 / 19)

ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԱՒԱՍՏԻՔԸ

Նախագահ Ռ. Քոչարեան Հոկտեմբեր 18-ին ընդունած է Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական յանձնաժողովի պատուիրակութիւնը, որ Երեւան գացած էր ծանօթանալու Խորհուրդին առջեւ Հայաստանի պարտաւորութիւնները կատարելու ընթացքին: Ռ. Քոչարեան հաւաստած է որ Հայաստան ամենայն լրջութեամբ կը վերաբերի Խորհուրդին առջեւ ստանձնած պարտաւորութիւններուն:

***

ՃԱՏՐԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆ ՉԻՋԱԾ ԱՌԱՋԱՏԱՐԻ ԴԻՐՔԸ

Ճատրակի խմբային ախոյենութեան մրցաշարքի 7-րդ փուլին, Հայաստան 2 – 2 արդիւնք մը արձանագրած է Ուզպէկիստանի դէմ, հասնելով 17 միաւորի: Սակայն այդ բաւարար չէ եղած առաջատարի իր դիրքը պահպանելու, քանի որ Ռուսաստան 3 – 1 յաղթելով Կուպայի կրցած է կէս միաւորի առաւելութեամբ դասաւորման գլուխը անցնիլ: Միւս մրցումներուն, Ուկրանիա Մակեդոնիա 2–2 արդիւնք մը արձանագրած են: Ուկրանիա ունի 16,5 միաւոր: Չորրորդ դիրքի վրայ է Գերմանիա 14 միաւորով, սակայն այլեւս հաւանական կը նկատուի որ մետալներու պայքարը ընթանայ ներկայի առաջին երեքին միջեւ: Այլեւս գըրաւարկէ դուրս Հունգարիա – Իրան մըրցումէն ալ յաղթական դուրս եկողները եղած են Հունգարացիները 3,5 – 0,5 արդիւնքով:

***

ՆՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Արդարադատութեան նախարարութիւնը պաշտօնապէս արձանագրած է նոր կուսակցութեան մը անունը՝ Ժողովրդադեմոկրատական կուսակցութիւն: Այս տեղեկութիւնը տուած է ԺԴԿ-ի վարչութեան նախագահ Գագիկ Ասլանեան, կուսակցութեան Հոկտ. 18ին կայացած հերթական նիստին ընթացքին: Յայտարարուած է նաեւ որ մօտ օրէն տեղի կ'ունենայ մամուլի ասուլիս մը, ուր մանրամասնօրէն տեղեկութիւններ կը տրուին անոր կառոյցին, սկզբունքներուն եւ դիրքորոշումներուն մասին:

***

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԻՏԱԼԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Հոկտեմբեր 18-ին Վ. Բրիւսով օտար լեզուներու համալսարանին մէջ բացուած է Տանթէ Ալկիէրիի կեդրոնը որ մասնաճիւղն է Իտալիոյ համանուն կեդրոնին: Համալսարանին մէջ իտալերէն կը դասաւանդէ իտալական դեսպանատան պաշտօնատարներէն մէկը: Նոր բացուած կեդրոնին դեսպանատունը նուիրած է մասնագիտական դասագիրքեր, գրականութիւն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՅԱՒԵԼՈՒԱԾ ՄԸ ԼԱՄԱՍՈՒՐԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ

Ծանօթ է որ Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան մասին նոր տեղեկագիր մը պատրաստուած է. ան պիտի քուէարկուի Հոկտեմբեր 24-ին: Նոր տեղեկագիրը որուն տեղեկաբերն է Ալէն Լամասուր, հայկական շրջանակներուն բուռն հակազդեցութեան տեղի տուած է, քանի որ շրջանցած է խնդրոյ առարկայ անդամակցութեան համար Թուրքիոյ կողմէ ցեղասպանութիւնը ճանչնալու պայմանը: Ինչպէս գրուեցաւ քանիցս, այդ շրջանցումին որպէս բացատրութիւն ըսուածը այն եղաւ որ կազմուած է «Հայեւթուրք հաշտութեան յանձնախումբ» մը որ լծուած է արդէն երկխօսութեան: Այսինքն, երբ Հայերն ու Թուրքերը նստած կը խօսին, կը բանակցին, ի՞նչ հարկ կայ ցեղասպանութեան ճանաչումի պայմանին նոր նշումով պղտորելու մթնոլորտը...: Մոռցուած որ եթէ նոյնիսկ ուրիշ դեր չկատարէ, կը ծառայէ ցոյց տալու թէ ի՛նչ նպատակով կազմուած է այդ յանձնախումբը եւ ո՛րո՛ւն շահուն կը ծառայեն անոր չորս հայ անդամները:

Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբը զանազան դիմումներով, հանդիպումներով ջանաց հակազդեցութիւնը տեղ հասցնել ու կասեցնել վտանգաւոր մարտավարութիւնը: Ապրիլ 24-ի կոմիտէն ալ դատապարտելով ցեղասպանութեան շրջանցումը, հաղորդագրութեամբ մը պահանջեց ջնջել նշուած կէտը վերահաստատել: Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբին նախագահուհի Հիլտա Չօպոյեան անդրադառնալով այս գործունէութեան, Հոկտ. 5-ի մամուլի ասուլիսին ըսած էր թէ իրենց հանդիպումին Ա. Լամասուր տրամադիր երեւցած էր խնդրոյ առարկայ պարբերութեան մէջ փոփոխութեան մը:

Հոկտեմբեր 16-ին այդ տեղեկագրին 24-րդ յօդուածին հետեւեալ յաւելուածը առաջարկուած է.

Point 24 bis (nouveau)
Considère que l'approfondissement du dialogue sur la question de la reconnaissance du génocide dont a été victime la communauté arménienne au début du XX siècle constitue une étape importante de cette normalisation.

Առաջարկը ստորագրուած է չուրջ յի–

(Շար.ը Դ. էջ)

ԱՐԵՒՄՏԱՀԱՅՑՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանդիսաւոր կրկնակի նշումներու ամիս էր Սեպտեմբերը Հայաստանի համար: Աշխարհի ամէն կողմէն բազմաթիւ Հայեր այցի գացին հոն այդ առիթներով որոնց գերակշիռը մեծամասնութեան համար եղաւ կրօնական բնոյթ ունեցողը. 1700-ամեակ, Նոր տաճարի բացում, համաօրէն նաեւ Յովհ. Պօղոս Բ.ի այցելութիւն: Նոյն շրջանին հոն գտնուեցաւ Պոլիսէն խումբ մըն ալ:

Խումբին վերադարձին, «Մարմարա»յի խմբագիր Մաքրուհի Պ. Յակոբեան որ Երեւանէն հանդիսութիւններու թղթակցութիւնը կատարած էր, արձանագրած է Պոլսահայերու խումբէն անդամներու տպաւորութիւնները: Ա. Թիւով մը շուրջ տասնեակ մըն են անոնք որ յայտնի յուզումով, անկեղծութեամբ խօսած են Հայաստանեան իրենց ապրումներուն մասին: Մեծ մասը առաջին անգամ ըլլալով գացած է Հայաստան: Ու այդ պարագան հասկնալի է որ տպաւորութիւններու յուզումի մասը շեշտող ազդակ կ'ըլլայ: Այսուհանդերձ, շատ ուշագրաւ մատնանշումներ կան անդրադարձներու այդ քաղուածքներուն մէջ:

Անցնելէ առաջ խնդրոյ առարկայ անդրադարձներուն, հարկ է շեշտել պարագայ մը. Պոլիսէն գացողներու խումբէն Մաքրուհի Պ. Յակոբեանի խօսակիցներուն կէսէն աւելին Անատոլուի տարբեր շրջաններէն Պոլիս փոխադրուածներ են. Ամասիայէն, Սեբաստիայէն, Մալաթիայէն, Շըրնաքէն: Այդ պատկանելիութիւնը ամէն մէկը նշած է, անցնելէ առաջ իր տպաւորութիւններուն: Հետաքրքրական է այդ նշումը որուն տէրերը Պոլիս ապրելով հանդերձ, իրենք զիրենք չեն տեղաւորեր «պոլսեցի»ի պիտակին տակ. կատարեալ հակասութիւն այն միւս կեցուածքին որ մերձաւոր արեւելեան քաղաքի մը փոշին ոտքէն չթօթափած, անշրջանցելի հարցումը կը գետեղէ եկուոր Հայուն շրթունքին վրայ. «Ինչպէ՞ս, սիրեցի՞ք մեր Ամերիկան»...:

Լրագրողուհիին ուղեկից ամասիացին, շրնաքցին, միւսները, յաճախ հարկը կը զգան խօսելու նաեւ Հայաստան մեկնումի նախօրեակի իրենց հոգեվիճակին մասին. համարձակութեան պակասի, խըրտչելու զգացումը երկար ատեն անոնց մէկ մասը ետ կեցուցած է Երեւան այցի երթալու գաղափարէն, հակառակ իրենց ջերմ փափաքին: Բայց, ի վերջոյ որոշած են: Ինչ կը վերաբերի անոնց տպաւորութիւններուն, հոն ուշագրաւ է զգացական խըռովութեան քով իրականութենէն չհեռանալու պաղարիւնութիւնը. բան մը որ յաճախադէպ չէ, նոյնիսկ պոլսականէն տարբեր միջավայրէ մեկնողներու ջախջախիչ մեծամասնութեան համար որոնք Հայաստանը կ'ամփոփեն Արարատի, Սեւանի, Գառնի - Գեղարդի յուզաթաթաւ գեղեցկութեան ու պանդոկային կեցութեան մը բարօրութեան սահմանագիծերուն մէջ:

Գեղեցկութիւնները, կարօտի հասցէները բնական է որ անտարբեր չեն ձգած Պոլիսի խումբին այս անդամներն ալ. «Գեղեցիկ է Հայաստանը» կ'ըսեն, կը կրկնեն անոնք, յիշելով Սեւանը, Նորակառոյց տաճարը, Խոր Վիրապը, եւ այլն: Այդ ընդհանուրին վրայ հարկ է աւելցընել որպէս խանդավառութեան ազդակ նշուած Հայաստանի ազգային փառերգին ունկնդրութիւնը, «հարազատ հողին վըրայ իր ժողովուրդին սեփական դրօշակը տեսնել»ու, տակաւին՝ այդ հողերուն վըրայ գտնուելու տուած ապահովութեան զգացումը:

Այս ապրումներուն հետ, Մաքրուհի Պ. Յակոբեանի պատասխանողները գրեթէ բոլորն ալ կը շեշտեն թէ շատ դիւրահաղորդ, եղբայրասէր, հիւրասէր գտած են Հայաստանցիները. շատեր կ'ըսեն թէ որոշած են յաճախ կրկնել իրենց այցը:

Այս քիչ - շատ սպասելի արտայայտութիւններուն քով կան ուրիշ բաներ ալ. խումբէն կին մը կ'ըսէ թէ այն տպաւորութիւնը ունեցած է որ «կարգ մը Հայաստանցիներ ոխ ունին մեզի նկատմամբ». ան այդ ոխը կը բացատրէ Հայաստանցիներու այն ենթադրութեամբ որ մինչ իրենք դժուար կեանք կ'ապրին, Պոլսոյ Հայը բարեկեցիկ պայմաններ ունի: Նոյն հայուհին ցաւով կը խօսի տըխուր, տգեղ երեւոյթի մը մասին ալ. անչափահասներու մուրացկանութեան տեսարանն է ան որ շատ դէշ ազդեցութիւն գործած է իր եւ աղջկանը վրայ: Մանաւանդ որ այս վերջինը երբ զինքը շրջապատող քանի մը մանուկի դրամ տալու համար պայուսակը կը բանայ, յանկարծ դէմ յանդիման կը մնայ անոնց տարեկիցներու մեծ խումբի մը որոնք գրեթէ յարձակելով իրեն վրայ, կը ջանան բաժին ունենալ: Ծեծի սպառնալիքով միայն կարելի կ'ըլլայ խումբը ետ դրկել, մինչ մայր ու աղջիկ Պոլսեցիներու բարեմտութիւնը կը բախի տեղացիներու յանդիմանութեան. «մի՛ քաջալերէք մեր մանուկները, մեր ազգին մանուկները մուրացկան չեն» կը սաստեն անոնք:

Նոյն երիտասարդուհին կ'ըսէ թէ հայաստանեան հանդիպումներուն շատեր հարցուցած են իրեն թէ ինչո՛ւ Հայաստան չեն հաստատուիր ու կ'ապրին հեռաւոր հողերու վրայ. իր պատասխա՞նը, մէկը անոնցմէ զոր յաճախ չեն յաջողիր բանաձեւել նման հարցականի թիրախ շատ սփիւռքահայեր, եթէ նոյնիսկ նոյն մըտածումը ունենան. «իրենց բացատրել ջանացի որ մենք թէեւ կը բնակինք մեր ծննդավայր երկրին մէջ եւ կը սիրենք այդ հողերը, քանի որ մեր պապերը երկար դարեր ապրեր են այդ հողերուն վըրայ, սակայն մեր սիրտը միշտ կը բաբախէ մեր ա՛յս հողերուն համար: Համարձակօրէն ըսի որ անոնք պէտք է ընդունին եւ գիտնան որ մենք իրենցմէ աւելի "հայ" ենք»:

Տպաւորութիւններու նոյն էջին մէջ ամէնէն լայն տեղը գրաւած է Մալաթիացի հայուհի մը՝ Սիրարփի Փայլանի խօսքը. ան Հայաստանեան ճամբորդութեան մասին արտայայտուելէ առաջ, ցաւ մը կը պոռթկայ ըսելիքները հայերէնով ըսելու անկարողութեան համար: Հակառակ փափաքին, ճիգերուն, չէ կրցած հայերէն սորվիլ ու շատ կ'ափսոսայ այդ թերութեան համար: Ատիկա Հայաստանի մէջ ամօթի զգացումի կը վերածուի ու կը տանջէ զինքը: Քսան տարեկանին Մալաթիայէն Պոլիս փոխադրուած է, արդէն դպրոցական շրջանը աւարտած: Այսօր երեք զաւկի մայր է ու կ'աղաչէ որ իրեն ներկայացնեն - եթէ կայ - հայերէն սորվեցնելու տրամադիր մէկը, ըսելով որ ամբողջ կեանքին ընթացքին երախտապարտ կ'ըլլայ անոր. «խօսակիցս այս արտայայտութիւնը կ'ունենայ աղիողորմ արցունքներ հոսեցնելով իր աչքերէն» կ'աւելցնէ խմբագրուհին, փակագիծի մէջ:

Հայերէն չգիտնալու ամօթէն զատ, այս հայուհին ալ բաժնած է խումբի ընկերակիցներուն յուզումի եւ ուրախութեան ապրումները: «Ծիծեռնակաբերդ գացի: Հոն, իմ նախնիներուս տառապանքները պատկերացան աչքերուս առջեւ եւ ես լացի սրտիս խորագոյն խորշերէն: Միւս կողմէ, մեծապէս ուրախացայ, երբ այցելեցի էջմիածին, ներկայ եղայ միւռոնօրհնութեան, երբ այցելեցի նորակառոյց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ կամ երբ ներկայ եղայ 1700-ամեակի համերգին» կ'ըսէ ան:

Որպէսզի իրեն ուղղուած հարցումին տէրը պատկերացնէ զգացածը, կը նկարագրէ հետեւեալը. «Մանուկ մը աշխարհ կու գայ եւ երբ չափահաս տարիքի կը հասնի, կ'ըսուի անոր որ ինք որդեգրուած է: Անոնք որոնք զինքը մեծցուցած են, իր հարազատ ծնողները չեն եղած: Երբ կը լսէ այս իրականութիւնը, ցաւը ձեռք կ'առնէ եւ ճամբայ կ'ելլէ հարազատ ծընողքին հետքը գտնելու համար: Եւ... մղոններով ճամբայ հարթելէ ետք, ան վերջապէս կը յաջողի գտնել բուն ծնողքը: Կրնա՞ք երեւակայել թէ ի՛նչ կը զգայ տարիներ շարունակ այդպիսի հոգեվիճակի մէջ տուայտող անձը, երբ կը գտնէ իր բուն, հարազատ ծնողքը: Ահաւասիկ, ես հիմա կ'ապրիմ այդպիսի զգացումներ, հոգեկան այդպիսի պոռթկումներ, որոնք աննկարագրելի են»:

1700-ամեակի շրջագիծին մէջ տեղաւորուած Արեւմտեան Հայաստանի քարոզչա - գրօսաշրջական շրջապտոյտի մը արձագանգները ընդվզում ու ամօթ պատճառած էին երբ Թրքական թերթերու Ա. էջին վրայ տեղ գտած էր Անիի աւերակներէն շունչ մը անդին, թեւերը վեր առած պարող ամերիկահայ քահանայի մը լուսանկարը: Նաեւ Ամերիկահայերու նոյն խումբին նախկին անատոլաբնակ անդամներէն ոմանց տգէտ հիացումը, իրենց ծնողքին կամ պապին յիշատակումին դիմաց: Պոլիսէն ամասիացի, շըրնաքցի, մալաթիացի եւ այլն այցելուներու յիշեալ խումբը այդ ընդվզումն ու ամօթը դարմանող առաքելութիւն մըն ալ ունեցած է, գոնէ մեր ներքին ճակատին համար, անուղղակի եւ բոլորովին ինքնաբուխ կերպով:

ԱՐՓԻ ԹՈԹՈՑԵԱՆ

ԴԷՊՔԸՆ ՈՒ ՇՐՋԱՆԱԿԸ

ՓԱՌԱՊՍԱԿՈՒՄ ԺԱՆՍԷՄԻ

Գրեց՝ ՆԱԶԱՐԷԹ ԹՕՓԱԼԵԱՆ

Իր աննախադէպ բնոյթին համար դէպքը կրնար արդարացնել անտեսումը շըրջանակին, այլ բացառութեան կարգով դէպքին տեղադրումը շրջանակին մէջ հարազատ համեմատութիւն մը կու տար անոր: Եւ ուրեմն, հարկ էր նախ գծել շրջանակը: Շան գ'Էլիզէ, պողոտայ ու մթնոլորտ, միշտ եղած է լուսառատ ու տօնական: Պիտի ըլլայ ալ այդպէս. Մաթինեոն, Կապրիէլ պողոտաներու, Սէն Օնորէ արուարձանի, Ժան Մերմոզ, Փանթիեւրի եւ Միրոմենիլի փողոցներու ցանցը կը կազմէ արուեստներու սրբավայր մը՝ գեղանկարչութեան, գեղատիպ ու սահմանափակ, հազուագիւտ հրատարակութեանց, արձանագործութեան, գորգագործութեան, արուեստի առարկաներու ցուցասրահ - վաճառատուներու տեւական ցուցահանդէսներով:

Աւանդութեան համաձայն, այս կալըրիները ամբողջ տարուան ընթացքին կը կազմակերպեն երկու «Ցայգայիններ» (nocturnes) երկու իրիկուն միայն, առաջինը՝ Մայիսին, ողջունելու համար գարունը, իսկ երկրորդը՝ Հոկտեմբերին՝ աշնանային բերքահաւաքի նշանին տակ: Այս Ցայգայիններու ընթացքին է որ կը կազմակերպուին յաճախ ցուցահանդէսներու բացումները (vernissage):

Լոյսերու մէջ է Շան գ'Էլիզէն, բայց Արուեստներու Ցայգայինի ընթացքին աւելի տօնական կը դառնայ միջավայրը, երբ բոլոր կալըրիները կը բանան իրենց դռները հիւրընկալելու համար իրենց տօնազգեստ այցելուները: Մէկ կալըրիէն միւսը՝ զուարթ չփոթութիւնը կ'ընկերանայ այցելուներու քայլերուն: Ամէն տեղ տօն է, մայթերը խճողուած են զիրար խաչաձեւող անցորդներով: Պաշտօնապէս միայն չորս ժամ կը տեւէ արուեստներու այս տօնահանդէսը, ժամը 18-էն 22: Զորս ժամ ետք, զուարթ աղմուկները մակաւ կը նուազին, անցորդները ցանցառ կը դառնան, եւ միջավայրը կը վերագտնէ իր բնական երեւոյթը, որ սակայն ու անպայման տօնական է: Շան գ'Էլիզէն միշտ լոյսերու մէջ պիտի մնայ. այդպէս որոշուեր է...

Ահա, ա՛յս է շրջանակը, զոր կարելի չէ զանց առնել, խօսելու համար Ժանսէմի մասին, որովհետեւ դէպքը՝ ինքը՝ Ժանսէմն է: Կ'երեւակայէք: Որովհետեւ այս հաւաքական ցուցահանդէսին մէջ, բացառութիւնն է ինք: Ընթացիկ տօնահանդէսի մթնոլորտին ներդաշնակ գեղեցկութիւններ ու գոյներ չէ որ Ժանսէմ կը ցուցադրէ երեք երկար ամիսներու (1) երկայնքին, այլ «Ջարդերը», տառացիօրէն արձանագրուած՝ ոչ միայն հրաւիրատոմսերու վրայ, այլ նաեւ գեղատիպ քաթալոկներու մէջ:

Նոյն պողոտային վրայ՝ իր հարեւանը իրմէ առաջ՝ Պերնար Պիւֆէն - «Ցիշատակներ՝ Իտալիայէն», եւ քիչ անդին՝ Լիւսիէն Ֆոնթանարոզան: Իսկ երկուքին միջեւ ու ի միջի այլոց՝ ինքը Ժանսէմը՝ ահաւոր Ջարդերու իր տեսարաններով, ուր մահն է... անմահ, կեանքեր կը հնձէ:

Այս ի՛նչ քաղաքացիական, ազգային արիութիւն է գեղանկարիչի մը համար, որ կը խիզախի իր արուեստին բոլոր հանդիսական գոյներէն հրաժարիլ, եւ կառչելով գործի բոլոր երանգներուն՝ հռչակելու համար ի՛ր ցաւը, մե՛ր ցաւը փարիզեան ցայգային փառատօնին մէջ ու անկէ անդին, նախագահական պալատի դրացնութեան մէջ, ո՛չ թէ երեկոյթի մը համար, կամ քանի մը շաբաթներու, այլ ամբողջ երեք ամիսներէ աւելի երկար ժամանակաշրջանի մը համար, 100 օրերը Ժանսէմի: Իր նիւթը, տեւողութիւնը եւ միջավայրը՝ երեք հիմնական տուեալները կը կազմեն դէպքին, երաշխաւորուած՝ գեղագիտութեան նախադրեալ պայմանով:

Ան՝ որ ակնկալելի պիտի ըլլար հայ գեղանկարիչներու խմբական ցուցահանդէսէ, Ժանսէմ առանձինն ու ամբողջական պատկերացումով կ'իրագործէ: Իրաւ է, այլ համանուագ պիտի ըլլար, եթէ հայ գեղանկարիչները համախմբուէին, անգամի մը համար գոնէ, հռչակելու, պոռթկալու համար ազգին ցաւը:

Իր պաստառներէն շատերը կը յուշեն վաւերագրական ծանօթ նկարներ, որոնք արձանագրուած կը մնան մեր յիշողութեանց մէջ եւ վկայութեանց գիրքերու էջերուն վրայ, ինչպէս Տէր Զօրի անապատին մէջ գանկերու բրգաձեւ կոյտը, որ Ժանսէմի վրձինով լոյսեր կը գտնէ - «Հնձուած ծաղիկներու նման»...

– Մահը՝ իր երիվարին վրայ, ձեռքին եաթաղան մը, կ'արշաւէ խորշակի նման, անմեղներ ջարդելով:

– Կարմիր արեւը դժոխքին սիրտն է հրաբորբ:

– «Գիշերէն անդին», մե՛ր մայրերն ու մե՛ր քոյրերը՝ տեղահանութեան ու աքսորի ճամբաներուն վրայ:

– Եւ «Հոգեհանգի՜ստ», կողք կողքի երկարած սպիտակացած, սրբացած դիակներ: Պաստառը կու տայ այն տպաւորութիւնը թէ անոնք կը ննջեն այցելուին առջեւ: Եւ այցելուն անդիմադրելի մղումով ի՛նք կ'ուզէ հոգեհանգիստ կարդալ անոնց վրայ. հոգեհանգիստ՝ ոչ թէ արարողութիւն, այլ պարզ քանի մը խօսք յուզումի: Եւ ժամանակի խորերէն, «ամենայն Հայոց բանաստեղծը» արդէն եկեր է, ներկայ է օրհնութիւն կարդալու.

Ու վեր կացայ ես, որ մեր հայրենի
օրէնքովը հին՝
վերջին հանգիստը կարդամ իմ ազգի
անբախտ զոհերին (2):

Հարցումը աւելորդ չէ. Ժանսէմ ինչի՞ կը վստահի այս կրկնապէս աննախընթաց, խիզախ նախաձեռնութիւնը իրագործելու համար: Հարցումին պատասխանը կը գտնուի այն գեղատիպ քաթալոկին մէջ, որ ներկայ ցուցահանդէսին առիթով հրատարակուած է: Քաթալոկին սկիզբը գրուած յառաջաբանը, ստորագրուած՝ Փիէր Մանիար, Ժանսէմի ամբողջական արուեստին վերլուծումը ընելով կը խորանայ ցուցահանդէսի արժէքին վրայ: Քանի մը պարագաներուն՝ պաստառի մը մէկ մանրամասնութեան մը մեծցումը կու տայ փաստը թէ պաստառին ամբողջութեան մէջ յստակօրէն զանազանելի կը մնան բաղկացուցիչ մանրամասնութիւններ, որոնք առանձին առանձին առած կրնան անջատ պաստառներ կազմել:

Ասկէ անդին, այս քաթալոկը յստակ, բծախնդիր պատկերացումը կու տայ նըկարիչի բազմերանգ մեծ վաստակին՝ գու-

մարմը իր կազմակերպած ցուցահանդէսներուն եւ իր այլ իրագործումներուն, որոնց ամէնէն յատկանշականներն են անշուշտ Ֆրանսացի եւ օտար մեծ գրողներու գործերուն նկարազարդումները, ոչ թէ հարազատին վերարտադրումներով, այլ առանձնատիպ հարազատ վիմագրութիւններով, սահմանափակ թիւերով լոյս տեսած գիրքերէն իւրաքանչիւրը դարձնելով գրական – գեղարուեստական բարձրարժէք հազուագիւտ գործ: – Ժեհան Ռիքթիւս, Շարլ Պոտլէր, Սերվանթէս, Ֆրանսուա Վիլոն, Ժիլպէր Սեսպրոն, Հերվէ Պազէն, Ժան Ժիօնօ, Ժիւլ Լաֆորկ, Ֆետերիքօ Կարսիա Լորքա, Ալպէր Գամիւ: Իր ընդհանուր վաստակին միայն այս հատուածը արդէն բաւարար է՝ իրեն տեւական հռչակ մը ապահովելու համար միջազգային ստեղծագործութեանց ընդարձակ կալուածին մէջ:

Եւ վերջին էջէն կը վերադառնանք քաթալոկին սկիզբը: Ժանսէմ իր գործերուն իբր բնաբան՝ վկայութեան կը կանչէ աւստրիացի բանաստեղծ Ռայնըր Մարիա Ռիլքէն իր գեղեցիկ երկար քերթուածով, քաղուած՝ «Ուխտագնացութեան գիրք»էն (3): Դպրութեանց մըշտական ուսանողին համար անխարդախ հաճոյք էր անշուշտ, ա՛յս ցուցահանդէսին կապակցութեամբ անակնկալ, բոլորովին անսպասելի ներկայութիւնը «Նամակներ՝ բանաստեղծի մը» եւ «Տուինոյի եղերերգները» գործերու հեղինակին, Ժանսէմի ներշնչումին անապականութեան ու մակարդակին մասին վաւերականօրէն վկայող: Ահա թէ ի՛նչ աղբիւրներէ կը բխի մեծ նկարիչին ներշնչումը:

Ու տակաւին...

Սրահին կեդրոնական պատին վրայ, ուր ներս քաշուած է քիչ մը, խորութիւն մը պահելով, կախուած է խաչելութեան պաստառը. խաչուած Յիսուս ձեռքերը երկարած է, ու խաչին թեւերէն կը մեկնին երկու շարքերը պաստառներուն: Պաստառները ամբողջութիւն մը կազմելով, եթէ անոնք ցուցադրուէին համապատկերային սրահի մը մէջ, պիտի կազմէին Հայոց Գողգոթային իրարու անմիջականօրէն կցուած դրուագներու ամբողջութիւն մը:

Երկու շարքերը երկու կողմերէ պիտի յանգէին խաչին հանդիպակաց միւս բեւեռին, ուր գտնուելու է դիմանկարը ծանօթ հոգեւորականի մը (4): Դիմանկարը՝ խորհրդանիշի հանգամանքով հոն ներկայ է իբր մէկ տարրը ամբողջութեան: Անոր սառած նայուածքին մէջ խտացուած է՝ ապրուած սարսափը ջարդերուն: Շրթները կուպ են, կնքուած՝ չյաջողելով արտայայտել ցաւը: Թեփանիքի ծայրերուն տեսնուող ծիրանի աստառը իր աջ թեւի կողմէ անհամեմատօրէն կ'երկարի պաստառի շրջանակէն դուրս գալու պէս: Ա՛յդ՝ անմեղներու թափուած արեան հոսքն է որ կը ստեղծէ կապը եղերերգութեան հետ: Սեւ վեղարին ու սքեմին տակ՝ դէպի երկինք սլացող այդ կերպարը իր ամբողջութեան մէջ հիմա կը խորհրդանշէ վեհանիստ կաթողիկէն ճակատամասէն դիտուած: Սեւի վրայ, այնքա՛ն նրբութեամբ տրուած, հազիւ նշմարելի սեւ գիծեր կը ստուերագծեն թելադրականօրէն անպաճոյճ խաչ մը: Իր առանձին ներկայութեամբ ի՜նչ կենդանութիւն կու տայ այդ դիմանկարը եղելութեան, որ կը պատմուի գործին երեւակայելի բոլոր երանգներով, սպիտակով կամ նուրբ կապոյտով, քանզի ան կը խորհրդանշէ Հայաստանեայց Եկեղեցին իբր ապրող գերագոյն վկան՝ Հայոց Գողգոթայի խաչին դիմաց:

Փիէր Մանիար իր յառաջաբանը վերնագրեր է, – «Ժանսէմ՝ իր ճշմարտութեանը մէջ»: Իր ասպարէզին մաս կազմող ցուցահանդէսներուն ցանկը աչքի առաջ ունենալով, յստակ կը դառնայ իրողութիւնը թէ ի՜նչ ճամբաներէ անցեր է մեծ արուեստագէտը՝ հասնելու, մօտենալու համար ի՛ր ճշմարտութեան, գերագոյն ճշմարտութեան, – Ջարդե՛րը...

Հայոց Գողգոթայի այս բարձունքէն դիտած, հիմա Ժանսէմ յստակօրէն կը յայտնաբերէ իր կերպարը, ինքնութեան որոնումի երկար ուղիներու վրայ, նոր տարածքներու նուաճումներու ի խնդիր, քով քովի բերելով աշխարհի մեծ ոստաններ՝ Հռոմ, Թոքիօ, Պրիւսէլ, Լօզան, Նիւ-Եորք, Պէյրութ, մինչեւ իսկ Հաւանա, ուր քուպայական յեղափոխութեան տաք վաղորդայնի օրերուն, երիտասարդ նկարիչը կ'երթար գծելու Lider Maximo-ի դիմանկարը մեծ պաստառի մը վրայ նկարելէ ետք շքերթը կերիյերօներու (5):

Ահա ի՛ր ճշմարտութիւնը, մե՛ր գողգոթան: Վստահ՝ թէ այս վիթխարի իրագործումէն ետք, գերագոյն պարտքի հատուցումով, արուեստագէտին խիղճը որքա՛ն թեթեւցած է ու կը խայտայ հիմա, երբ կը տարածէ 100 օրերու երկայնքին իր գողգոթան՝ այս անկրկնելի շրջանակին մէջ, Պերնար Պիւֆէէն մինչեւ Ֆոնթանարոզա: Այդ գողգոթան կը պատկանի այդ շրջանակին, – դէպքն ու շրջանակը, – համայն մարդկութեան յիշողութեան իբր անջնջելի մէկ էջը:

Ն. Թ.

(1) **JANSEM «Massacres»**
11 octobre 2001 — 31 janvier 2002
Galerie Matignon 18, avenue Matignon 75008 Paris

(2) Յովհաննէս Թումանեան. «Հոգեհանգիստ»

(3) Ռայնըր Մարիա Ռիլքէ-ի «*Ուխտագնացութեան գիրքը*» երկրորդն է երեք «*գիրքեր*» հաշուող «*ԺԱՄԵՐՈՒ ԳԻՐՔԸ*» գործին, որուն առաջինն է «*Վանական կեանքի գիրքը*», իսկ երրորդը՝ «*Աղքատութեան եւ մահուան գիրքը*»: Ռայնըր Մարիա Ռիլքէ, «*ԵՐԿԵՐ*» 3 հատորներով, Editions du Seuil, Paris, 1972.

(4) Նորվան Եպիսկոպոս Զաքարեան, Կաթողիկոսական Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայքի

(5) Lider Maximo, Մեծագոյն Ղեկավար, տիտղոսը՝ Ֆիտէլ Քասթրոյի: *Կերիյերօ*՝ արձակազէն, յեղափոխական: Ֆիտէլ Քասթրոյի դիմանկարը գծելու պահուն Ժանսէմը ներկայացնող լուսանկարը տեղ գտած է Paris-Match Hachette-ի կողմէ լոյս ընծայուած գեղատիպ հատորին մէջ, որուն խորագիրն է «Histoire d'aujourd'hui 1958-1959»:

ՍԵՒ ԼԻՃԸ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ

Սեւ լիճը որ կը գտնուի Սիւնիքի մէջ, Մեծ Իշխանասարի հարաւային մասը, շրջապատուած է 3500 – 3900 մեթր բարձրութեամբ գագաթներով: Լիճին մակերեսը 240 հեկտարէն աւելի է, ջուրին խորութիւնը երեք մեթրի շուրջ: Լիճը ձիւնհալներէ ու լեռնային աղբիւրներէ գոյացած մաքուր, անուշ ջուր ունի: Լիճին աւազանը տարբեր տեսակի աւելի քան հարիւր տեսակ բոյսով հարուստ է. կենդանական աշխարհին մէջ ամէնէն կարեւորներն են Սեւանի իշխանն ու բեղլուն որոնք հոն տարուած են 1967-էն:

Ծրագիր պատրաստուած է ձկնատեսակները եւ թռչունները բազմացնելու: Կը նախատեսուի նաեւ շրջանը բնապահպան գօտի հռչակել եւ հանգիստի գօտիի վերածել:

ԹԱՅԼԱՆՏԻ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Թայլանտի մայրաքաղաքին՝ Պանքոկի մէջ 1998-ին հայկական հիւպատոսարան մը բացուած է. հոն պատուակալ հիւպատոս նշանակուած է Ն. Գէորգեան: Անոր նախաձեռնութեամբ, տեղական «Naew Na» թերթը Սեպտեմբեր 12-ին լման էջ մը նուիրած է Հայաստանի անկախութեան տասնամեակին ու 1700-ամեակին: Անգլերէն էջին մէջ տեղ գտած են յօդուածներ, լուսանկարներ, Հայաստանի քարտէս: Ընթերցողը կը տեղեկանայ Հայաստանի մասին ընդհանուր տուեալներու, քաղաքական կառոյցներուն, տնտեսութեան հարցերուն, այժմէականութեան: Համառօտակի տրուած է պատմական անցեալը, իսկ «Հայաստան եւ Սփիւռք» յօդուածին մէջ խօսուած է սփիւռքահայերու աւանդին մասին, Հայաստանի զարգացման հոլովոյթին մէջ: Պատմական փաստերով ներկայացուած է ցեղասպանութիւնը, նշուած են ընդունած երկիրները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԺՊԻՏ

•

Հարեւան կանայք զրուցում են.
– Վարդոյշ, դու հօ չե՞ս հիւանդացել: Ձեր տնից գիշերուայ ժամը երկուսին բժիշկ դուրս եկաւ:
– Դէ վե՛րջ տուր, որ քո տնից ամէն առաւօտ փնդապետ է դուրս գալիս, ես հօ ամբողջ թաղով չեմ գոռում, թէ պատերազմ է սկսուել:

○ ● ○

Մայր ու որդի զբօսնում են գերեզմանոցում: Մայրը կարդում է տապանագիրներից մէկը.
«Աստ հանգչի լաւ փաստաբանը եւ հիանալի մարդը»:
Որդին ասում է.
– Մայրիկ, էդ ո՞նց են յաջողացրել մի գերեզմանում երկու մարդ խցկել:

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ի.

ՀՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Տրդատին տունը սորված էր թէեւ, բայց միեւնոյն ատեն ինքզինքը ցոյց տըւած:

Անշուշտ կրնար ժամ մը մնալ հոն եւ յետոյ երթալ ու ոստիկանները առնելով վերադառնալ:

Բայց խնդիրը այն էր, թէ Տրդատ պիտի սպասէ՞ր իր վերադարձին, թէ՞ անմիջապէս կծիկը պիտի դնէր:

Այս երկրորդ պարագային, որսը հազիւ ձեռք անցուցած, պիտի փախցնէր:

«Ինչ կը կասկածի՞, թէ՞ ոչ, ամբողջ գործը ասոր վրայ է, - կը մտածէր, եթէ ինչ կասկած չունի ապահովաբար տեղէն պիտի չշարժի, եւ այն ատեն խնդիրը կը դիւրանայ: Առաջին անգամ երբ որ զիս տեսաւ որեւէ յուզում կամ շփոթութիւն չունեցաւ, ասկէ կրնամ հետեւցնել, թէ իմ մասիս կասկած չունի. բայց թերեւս ասիկա իր պաղարիւնութեան եւ վարպետութեան արդիւնքն էր»:

Ու Արշակ բաւական շփոթած էր իր բռնելիք ընթացքին մասին:

Պահ մը խորհեցաւ ձերբակալութիւնը կատարել առանձին, բայց շուտով հրաժարեցաւ այդ խորհուրդէն: Երիտասարդը հաւանօրէն զինեալ ըլլալու էր, եւ անշուշտ ինքզինքը պիտի պաշտպանէր: Գիտէր, թէ Տրդատ յանդուգն, քաջասիրտ ու ֆիզիքապէս ալ իրմէ զօրաւոր էր:

«Վարպետութեամբ գործ տեսնենք, - մտածեց, - եւ ջանանք իր վստահութիւնը բոլորովին գրաւել»:

Մինչ լրտեսը այս մտածումներուն մէջ խորասուզուած էր, երիտասարդը զբաղած էր իր հիւրը պատուասիրելու: Զինքը գետնայարկի փոքրիկ սենեակի մը մէջ տեղաւորելէ ետքը գնաց սեղան մը բերաւ դուրսէն, որու վրայ երկու փոքրիկ գաւաթներ դրաւ, յետոյ գնաց քօնեաքի շիշը եւ քանի մը կտոր շաքար բերելու:

Ի վերջոյ, գաւաթները լեցնելով, ըսաւ.

- Կը ցաւիմ, որ ուրիշ բան մը պիտի չկրնամ հրամցնել քեզի, եթէ տանտիկինը հոս ըլլար, մեզի սուրճ կ'եփէր:

- Սուրճը ի՞նչ պիտի ընենք, - պատասխանեց Արշակ, - քօնեաքը աւելի լաւ է:

- Ուրեմն ձեր կենացը:

- Ձեր կենացը:

Երբ գաւաթները պարպուեցան, լրտեսը ըսաւ.

- Գիտե՞ս, Տրդա՛տ, շատ ուրախ եմ քեզի հանդիպելուս, օրերէ ի վեր քեզ կը փնտռէի ամէն կողմ, հիմա որ քեզ տեսայ, նախ եւ առաջ պէտք է, որ ըսելիքս ըսեմ:

- Խօսէ՛, տեսնենք, - պատասխանեց Տրդատ:

- Պէտք է ժամանակ մը մէջտեղ չելլաս եւ մեծ զգուշութեամբ վարուիս, - շարունակեց լրտեսը, - գիտցած եղիր, որ ոստիկանութիւնը քեզի կը փնտռէ կոր...

- Իրա՞ւ կ'ըսես, - հարցուց երիտասարդը անտարբեր ձեւով մը:

- Սուտ ըսելու ի՞նչ պէտք ունիմ:

- Բայց ես վախնալիք բան մը չունիմ:

- Պարապ խօսքեր մի՛ ըներ, իբրեւ բարեկամ խօսինք եւ ո՛չ թէ իրարու վրայ կասկածելով, գիտցած եղիր, որ Արշաւիր բացէ ի բաց քեզի կ'ամբաստանէ իբրեւ իրեն դէմ եղած մահափորձին հեղինակներէն մէկը:

– Ատ ի՛նչ արտառոց զրպարտութիւն, - գոչեց երիտասարդը:

– Ես ալ անկեղծօրէն համոզուած եմ, որ այդ գործին մէջ դուն որեւէ բաժին չունիս, ինչպէս նաեւ միւսները, որոնք հիմա բանտը կը գտնուին. այդ մահափորձին մասին իմ կարծիքս ի՞նչ է, գիտե՞ս, պարզապէս Արշաւիրին կողմէ սարքուած խաղ մըն է, եւ այս բանը ես առջի օրէն ըսի Րէշատ պէյին, ինչպէս նաեւ ուրիշներու, եւ ասոր համար գէշ մարդ եղայ Արշաւիրին հետ: Բայց ասոնք պարապ խօսքեր են, գանք բո՛ւն խնդրին, ոստիկանութիւնը քեզի կը փնտռէ կոր եւ ինծի ալ մասնաւորապէս պաշտօն յանձնուած է հետքդ գտնելու:

– Ուրեմն այս իրիկուն մեծ յաջողութիւն մը ունեցար, – պատասխանեց երիտասարդը խնդալով:

– Այնպէս է, - ըսաւ լրտեսը՝ ինքն ալ խնդալով, - շատ աղէկ ըրած ես ինքզինքդ այս կողմերը ծածկելով. ասիկա ցոյց կու տայ, թէ դուն ալ գիտես, որ այս միջոցիս դրութիւնը շատ գէշ է: Միայն թէ ձեռք առած զգուշութիւնդ բաւական չէ, մանաւանդ կը տեսնեմ, որ անխոհեմութիւն կ'ընես եւ դուրս կ'ելլես կոր:

– Բայց ի՞նչ ընեմ, քանի որ ստիպուած եմ դուրս ելլելու, մանաւանդ այս օրերս, քանի որ տան մէջ բոլորովին առանձին եմ:

– Ես եթէ քու տեղդ ըլլամ՝ հոս ալ չեմ մնար:

– Ո՞ւր երթամ:

– Նայէ, որ Պոլսէն դուրս ելլաս, որչափ ատեն որ հոս գտնուիս միշտ վտանգի մէջ ես... իբրեւ քու հին բարեկամդ քեզի այս խորհուրդը կու տամ:

– Շատ շնորհակալ եմ:

– Նոյն խրատը տուր նաեւ քու միւս ընկերներուդ:

– Ո՞ր ընկերուս, հարցուց Տրդատ:

– Կ'աղաչեմ այդ կերպով մի՛ խօսիր հետս, – ըսաւ լրտեսը վիրաւորուած շեշտով մը, – տես, ես ինչպէս անկեղծօրէն կը խօսիմ հետդ:

– Կատակ կ'ընեմ, - պատասխանեց երիտասարդը ժպտելով, – գիտեմ, թէ ո՛րու կ'ակնարկես. հնչակեան ընկերներու, բայց անոնք տեսնելու առիթը չունիմ:

– Մէկու մը միջոցով լուր ղրկէ իրենց, թող չկարծեն, որ բանտէն արձակուած ըլլալով ա՛լ վտանգը անցուցած են, ամէնքն ալ մէկ օրէն միւսը կրնան կրկին ձերբակալուիլ, եւ այս անգամ ալ ազատում չիկայ, ինքզինքնին, ով գիտէ, ուր կը գտնեն: Կացութիւնը շատ ծանր է, գիտցած ըլլաս:

– Բայց ինչո՞ւ համար:

– Որովհետեւ կառավարութիւնը ամբողջ հայ ազգը իրեն թշնամի կը նկատէ կոր:

Լրտեսը շարունակեց բացատրել օրուան կացութեան վտանգները եւ կրկին յորդորեց երիտասարդը, որ աւելի ապահով տեղ մը երթայ ծածկուելու:

Կարելի եղածին չափ շուտ տեղդ փոխէ, – խրատ տուաւ, – եւ նոյնիսկ եթէ կրնաս այս իրիկուն ուրիշ տեղ մը գնա:

– Բայց այս տեղը ո՛չ ոք գիտէ, եւ փողոցէն բնաւ ոստիկան չանցնիր:

– Ոստիկաններէն այնչափ մի՛ վախնար, ծպտուած լրտեսներէն վախցիր:

– Ուրեմն իրաւցընէ՞ ոստիկանութիւնը այսչափ կատաղութեամբ ետեւէս ինկած է:

– Պատուոյս վրայ կ'երդնում, – գոչեց լրտեսը:

Նոյն միջոցին դուռը զարնուեցաւ:

– Մարդ եկաւ, – ըսաւ Արշակ վրդոված դէմքով մը:

– Հոգ մի՛ ըներ, դրացի մը ըլլալու է: Երբեմն բանի մը պէտք կ'ունենան ու կուգան ուզելու, – պատասխանեց Տրդատ դուրս ելլելով, որպէսզի դուռը բանայ:

(Շար. 86)

(Շար. Ա. էջէն)

սուն խորհրդարանականի կողմէ որոնց մաս կը կազմեն Ֆ. Պայրու, Հարլէմ Տէ-զիր, Օ. Տիւհամէլ, Մ. Ռոքար, Ժ. Սա-վարի:

⁂

COMITE DU 24 AVRIL

REGROUPEMENT DES ORGANISATIONS ARMENIENNES DE FRANCE

TOUS A STRASBOURG LE 24 OCTOBRE

La Commission des Affaires Etrangères du Parlement Européen a adopté, le 10 octobre 2001, le rapport du député UDF Alain Lamassoure sur les «Progrès réalisés par la Turquie sur la voie de l'adhésion» qui ne mentionne pas la reconnaissance par la Turquie du génocide arménien.

Le Comité du 24 Avril, transformé en Conseil de Coordination des Organisations Arméniennes de France (CCAF) considère que ce vote est inacceptable et constitue un affront à la mémoire des 1 500 000 victimes arméniennes du premier génocide du vingtième siècle. Cette position est d'autant plus intolérable qu'elle émane d'une personnalité politique française. En effet, le 18 janvier 2001 l'Assemblée Nationale Française confirmait à l'unanimité le vote d'une loi par le Sénat qui rendait officielle la reconnaissance par la France du génocide arménien de 1915.

Aussi, les organisations arméniennes de France sont totalement solidaires avec le Comité de Défense de la Cause Arménienne, membre du Comité du 24 Avril CCAF, et qui appelle à une manifestation le mercredi 24 octobre 2001 à partir de 9h sur le Parvis du Parlement Européen à Strasbourg. La présence des Français d'origine arménienne, leur vigilance et leur détermination seront une nouvelle fois nécessaires afin que la vérité ne soit pas occultée au nom d'intérêts économiques ou militaires.

Soyons très nombreux, le 24 octobre 2001, à Strasbourg !

Renseignements: 01 42 46 47 70

Paris, le 18 octobre

⁂

Manifestation

LE MERCREDI 24 OCTOBRE AU PARLEMENT EUROPEEN

Le mercredi 10 octobre, la Commission des affaires étrangères du Parlement européen a adopté le rapport Lamassoure sur les «Progrès réalisés par la Turquie sur la voie de l'adhésion», sans y mentionner la reconnaissance du génocide arménien. Ce vote est inacceptable pour tous les défenseurs des droits de l'homme et constitue un affront à la mémoire des 1 500 000 victimes arméniennes.

C'est pourquoi Le Comité de Défense de la Cause Arménienne appelle à une manifestation le mercredi 24 octobre à partir de 9h sur le Parvis du Parlement européen à Strasbourg

Pour plus de renseignements, appelez le 01 42 46 47 70.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌԱՒ

ԶՈՒԻՑԵՐԱՑԻ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՄԸ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ

Արման Գասպար կը հաղորդէ Ժընեւէն.–

«Ֆետերալիզմ է Լիպէրթէ» կուսակցութեան անդամ՝ Սթեֆանօ Մալփանկոթթի, երեսփոխան երկրին միակ իտալախօս գաւառին Թեսէնի խորհրդարանին, Հոկտեմբերի սկիզբը իր հրաժարականը տուած է, որովհետեւ ամիսներու երկայնքին բանաձեւով մը Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ուզած էր եւ տեւականօրէն յետաձգուած էր:

33 տարեկան, քաղաքական ճոխ ասպարէզի մը տէր, Մալփանկոթթի հրաժարական իր նամակին մէջ կը դատապարտէ երեսփոխաններու անտարբերութիւնը 20-րդ դարու մարդկութեան դէմ վաւերագոյն ոճիրներէն մէկուն նկատմամբ:

Յարգ միայն Ժընեւի խորհրդարանն է որ 1998 Յուլիս 25-ին բանաձեւ մը քուէարկած է ուր կը ճանչնար Հայոց ցեղասպանութիւնը:

ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻՆ

Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւնը հրատարակութեան է պատրաստում հայ մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանին նուիրուած «Թումանեանական հանրագիտարան» առանձին մէկ գրքով (ծաւալը՝ մօտ 90 հեղ. մամուլ, աւելի քան 1200 յօդուած):

Ծրագրուած է համակողմանիօրէն ներկայացնել Յովհ. Թումանեանի կեանքն ու գործը, ստեղծագործութիւնները, գրական – մարդկային կերպարը, շրջապատը, ապրած միջավայրը, հայ եւ համաշխարհային գրականութեան մէջ նրա նախորդներին եւ հետեւորդներին, ազդեցութիւնը ժամանակի գրականութեան եւ իրականութեան վրայ, արուեստի տարբեր ոլորտներում նրա սիւժէների եւ կերպարների արտացոլումը, հերոսների նախատիպարը եւ այլն: Ի մի կը բերուեն Թումանեանագիտութեան նուաճումները, կը համակարգուեն, կ'արժեւորուեն գրողի եւ նրա ժառանգութեան ողջ իմացութիւնը, կուտակուած փորձն ու ձեռքբերումները:

Նիւթի ընտրութիւնն ամբողջովին պէտք է նպատակաուղղուած լինի Թումանեանի կեանքի եւ ժառանգութեան լուսաբանմանը. որոշիչը կը լինի ոչ միայն փաստերի եւ իրողութիւնների կարեւորութիւնը, այլեւ կապը Թումանեանի գործունէութեան եւ ստեղծագործութիւնների հետ:

Հայկական Հանրագիտարանի գլխաւոր խմբագրութիւնը ձեռնարկելով «Թումանեանական հանրագիտարան»ի աշխատանքը՝ ապաւինում է մտաւորականութեանը, թումանեանագէտներին, մեծ գրողի կեանքի եւ գործունէութեան ուսումնասիրութեան ջատագովներին, գիտակցելով, որ նման ծաւալուն, բազմաբնոյթ, բարդութիւնների եւ դժուարութիւնների հետ կապուած աշխատանքը հնարաւոր կը լինի յաղթահարել միայն միասնական, ընկերային ուժերով, համագործակցուած աշխատանքով:

Հրապարակելով այս յայտարարութիւնը, մենք ակնկալում ենք բոլոր նրանց առաջարկութիւնները, աջակցութիւնն ու օժանդակութիւնը (վաւերագրեր, լուսանկարներ, յիշողութիւններ, գրքեր, տեղեկութիւններ եւ այլն), ովքեր առնչուել կամ զբաղուել են վերոյիշեալ խնդիրներով: Խնդրում ենք նիւթեր ուղարկել հետեւեալ հասցէով.–

Հայկական Հանրագիտարանի
գլխաւոր խմբագրութիւն
Երեւան–1, Թումանեան փ., 17,
Հեռ.– 52-43-41
Ֆաքս.– 3741 52-06-67
e-mail: encyclop@sci.am
http://www.encyclopedia.am

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կապոյտ Խաչի Մարսէյլի շրջանի Պուլվար Օտտոյի Լէօնա Սասունի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ, Կիրակի, Հոկտեմբեր 28, Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ մէջ, 7 ռիւ Արթիւր Միշօ, 15-րդ Թաղամաս իր ողբացեալ ընկերուհիներու յիշատակին:

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

La M.C.A. a le plaisir de vous inviter à la

RENCONTRE

avec

ՄՈՎՍԷՍ ՊՃԱՔՃԵԱՆ
MOVSES BETCHAKDJIAN

à l'occasion de la parution de son dernier ouvrage

«Մինչեւ վերջին արեւներուն»

«JUSQU'AU DERNIER DES SOLEILS»

le Vendredi 26 octobre à 20h45

Salle S. Minassian, M.C.A.

Présentation et analyse de l'ouvrage : NORA BAROUTDJIAN

Avec l'aimable participation de : ARA KRIKORIAN et du Père HAROUTIOUN BEZDIKIAN

Accompagnement musical à la guitare de lectures par **Ohannès DEMIRDJIAN**

9, rue de Madrid — 94140 Alfortville
☎01.43.76.55.89 — Fax 01.43.78.66.64
e-mail : MCA.ALFO@wanadoo.fr

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20·30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS

ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ

Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»

Գինեձօն երեկոյթի աւարտին:

CONCERT

à l'occasion du 1700e anniversaire de la conversion de l'Arménie au christianisme
le samedi 27 octobre à 20h30
dans la Cathédrale Sainte-Croix de Paris des Arméniens Catholiques,
Au profit de l'école Sainte-Croix du samedi
MOURAD AMIRKHANIAN
(Basse)
chante : **Haendel, Verdi, Bellini, Fauré, Beethoven, Schubert, Komitas, Babadjanian, Tchaïkovsky, Rachmaninov, Dikranyan, Hagopian, Spentiaryan**
accompagné au piano par **Johan Struyve.**
Entrée: 13, rue du Perche (angle rue Charlot) Paris 3e.
Participation aux frais: 60 F
Réservations: Tél.: 01 44 59 23 50
Fax: 01 44 59 23 54.
Métro: République, Filles du Calvaire.

les Coupons d'Alsace

21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 23
MARDI
23 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.280 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.280

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՑ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 20 / 22)

ՈՒԺԱՆԻՒԹԻ ՄԱՐԶԻՆ ՉԵՂԾՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Ազգ. Ժողովի որոշումով, գլխաւոր դատախազութեան կողմէ 2000 Յունիս 26-ին դատական հետապնդումի ձեռնարկուած էր 1992 – 1999-ի միջեւ ուժանիւթի մարզին մէջ կատարուած զեղծումներուն մասին: Հոկտեմբեր 19-ին, քննիչ Հ. Զարգարեան ներկայացուցած է նախաքննութեան ընթացքին կատարուած աշխատանքները որոնք լուրջ դժուարութիւններու բախած են ապացոյցներու անբաւարարութեան, կամ ուղղակի չգոյութեան պատճառով: Շատ մը նախարարութիւններու, հիմնարկներու, ձեռնարկութիւններու մէջ ոչնչացուած են կարեւոր փաստաթուղթեր, բազմաթիւ կազմակերպութիւններու հետքն անգամ գտնելը դժուար է, քանի որ անոնք ստեղծուած են յատուկ գործարքներու համար, յետոյ լուծուած: Կան կազմակերպութիւններ ալ որոնք «կարգի բերած են» հաշուապահական փաստաթուղթերը եւ այդ պատճառով տարբեր նախարարութիւններէ, գերատեսչութիւններէ ստացուած տուեալները փաստացի լուրջ հակասութիւններ ունին:

Կատարուած հետաքննութիւնը ներգրաւած է 53 հոգի: Ստուգուած է թէ ուժանիւթի մարզին մէջ կատարուած զեղծումներով պետական պիւտճէ չէ մտած շուրջ 5 միլիոն տոլարի գումար մը: Նախաքննութեան ընթացքին ատոր շուրջ 2,4 միլիոնը կարելի եղած է ձեռք ձգել, մնացածը կապուած է այդ դատերուն յանդելիք վճիռներուն: Քննիչը բացած է նաեւ որ 3000 վկաներ հարցաքննուած են, 100-է աւելի հաշուակալական փաստաթուղթի տոպում նշանակուած է, եւ այլն:

*
**

ՄԵՌԱԾՆԵՐԸ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ Կ'ՈՒՆԵՆԱՆ

Ներքին գործերու փոխ – նախարարը Արարատ Մահտեսեան Հոկտեմբեր 19-ի մամուլի ասուլիսին արտայայտուած է վերջին շրջանի ուշագրաւ երկու սպանութիւններուն մասին որոնց զոհը եղան երկու Պօղոսեաններ: Մէկը վարչապետին կից հսկողութեան ծառայութեան նախկին պետ Գագիկ Պօղոսեանն էր, միւսը՝ «Առագաստ» սրճարանին մէջ սպաննուած վիրահայը՝ Պօղոս Պօղոսեան: Փոխ – նախարարին բաւծը նոյնը եղած է երկու պարագաներուն մասին ալ. թէ հարցաքննըւած են բազմաթիւ մարդիկ, քննութիւններ կատարուած, բայց առ այժմ ձերբակալուած, կամ բանտարկուած ոչ ոք կայ:

*
**

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէջանի խորհրդարաններուն նախագահները Ֆրանսայի Ազգային Ժողովի նախագահ Ռ. Փոնսըլէի հովանաւորութեամբ հանդիպում կ'ունենան Թիֆլիսի մէջ, Հոկտեմբեր 22 – 23-ին: Ա. Խաչատրեան նոյն առիթով տեսակցութիւններ կ'ունենայ Է. Շեվարնածէի, այլ պաշտօնատարներու հետ:

*
**

ԿԱԶԱՏԱՐԸ ԿՈՐՍՈՒԵՐ Է...

Ղազախ – Երեւան մայր կազատարին Սեւանի շրջանի Վարսեր գիւղի 1.3 քմ.նոց հատուածը կորսուած է: 720 մմ. տրամագիծով կազատարը թէքնիք պատճառներով միջոցէ մը ի վեր գործածութենէ հանուած էր. վերջերս ստուգուած է որ գետնին 1 մեթր խորութեան մէջ զետեղուած կազատարին այդ կտորը չկայ: Կազատարը ռազմավարական արժէքի տէր կազի փոխադրութեան անհրաժեշտ հատուածներէն էր: Կ'արժէր մօտ 40 հազար տոլար, սակայն, տեղը նոր հատուած զետեղել կ'արժէ ատոր քանի մը անգամը: Քրէական հետապնդումի ձեռնարկուած է:

*
**

ԱՂԱՍԻ ԽԱՆՋԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄԸ

Հայաստանի Համայնավար կուսակցութեան 1930 – 1936 տարիներու Ա. քարտուղար Աղասի Խանջեանի ծննդեան 100-ամեակը նշուած է Հոկտեմբեր 19-ին, Գիտութեան ակադեմիայի սրահին մէջ, կազմակերպութեամբ Վասպուրականի Հայրենակցական Միութեան եւ նոյն կուսակցութեան Կեդր. Կոմիտէին: Ներկայ գտնուած են քաղաքական դէմքեր, արուեստագէտներ, Վասպուրականցիներ, հանրութեան ներկայացուցիչներ:

Կուսակցութեան Ա. քարտուղար Վլ. Դարբինեան Ա. Խանջեանը նկատած է հայրենիքին նահատակութեան սրբազան օրէնքներով ծառայած հերոս որ հարազատ ժողովուրդին ապահով ու բարգաւաճ ապագան կերտած է ոչ թէ ճառերով, այլ՝ շինարարութեամբ եւ անգրագիտութիւնը վերցնելով: Ելոյթ ունեցած են Արխիւներու վարչութեան պետ Ա. Վիրաբեան, երեսփոխան Ն. Պետրոսեան, Վասպուրականի Հայրենակցական Միութեան պատուակալ նախագահ Վ. Յարութիւնեան, Ս. Կապուտիկեան, Խանջեանի քեռորդին գրող Նաթալիա Գոնչար:

*
**

ՃԱՏՐԱԿ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՒԱՐՏԱԾ

Երեւան տեղի ունեցած ճատրակի համաշխարհային խմբային ախոյենութեան վերջին՝ 8-րդ փուլին Հայաստան 1,5 – 2,5 արդիւնքով պարտութիւն կրած է Հունգարիայէն եւ 20 միաւորով երրորդ դիրքի վրայ աւարտած է մրցաշարքը, չահելով պրոնզէ մետալ: Ախոյենութիւնը ձեռք ձգած են Ուկրանացիները 21,5 միաւորով, որոնք վերջին փուլին 2,5 – 1,5 յաղթած են Ռուսաստանի որ արծաթէ մետալի արժանացած է գրաւելով Բ. տեղը:

ՀՈԿՏ. 27-Ի Բ. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՒ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐՈՒ ԿՈՉԸ

Հոկտ. 27-ի ահաբեկչութեան Բ. տարելիցին առթիւ ընդդիմադիր երեք կուսակցութիւններ՝ Հանրապետութիւն, Ժողովուրդ եւ Ազգ. Միաբանութիւն, Հոկտեմբեր 20-ին միացեալ յայտարարութիւն մը հրապարակած են: Հոն ի մէջ այլոց ըսուած է. «...Լրանում է Հոկտ. 27-ի ոճրագործութեան երկու տարին: Այսօր արդէն ակնյայտ է, որ իշխանութիւնները բացայայտօրէն հովանաւորում են ահաբեկիչներին: Երկրում ձեւաւորուել է ամենաթողութեան, վախի եւ անպատժելիութեան մթնոլորտ: Մեր հայրենիքն այս վիճակից դուրս բերելու միակ ելքը Ռ. Քոչարեանին իշխանութիւնից հեռացնելը եւ օրինական իշխանութիւն ձեւաւորելն է»: Վերջաւորութեան ժողովուրդին հրաւէր յղուած է մասնակցելու այն հանրահաւաքին որ տեղի կ'ունենայ Հոկտ. 26-ին, Մատենադարանին առջեւ:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ՕԴԱՅԻՆ ԵՒ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ, ՍՈՎ, ՁՈՀԵՐ

Ամերիկացիք կը շարունակեն ռմբակոծումները և թռաններով ալ զօրք ղըրկած են աւելի սաստկացնելու համար յարձակումները:

Առջի օր, երկու զինուորներ մեռած են եւ թռան մըն ալ վար առնուած է ու վիրաւորներ կան, թէեւ Ամերիկացիք արկածի մասին կը խօսին: Պաշտպանութեան նախարարը կ'ուզէ պատերազմը վերջացնել նախքան ձմեռը, բայց, միւս կողմէ այն համոզումն ունի որ կրնայ մինչեւ ամառ ալ տեւել, եթէ ոչ աւելի:

Ռումբերը միայն զինուորական թիրախներու վրայ չէին իյնար, ընդհակառակն, անգամ մը եւս շատ զոհ կայ բնակչութեան մէջ: Կիրակի օր (Հոկտեմբեր 21) Քապուլի մէջ առնուազն 18 բնակիչներ սպաննուած են մէկ գիշերուան մէջ, կան բազմաթիւ վիրաւորներ որոնց մէջ գլխաւորաբար մանուկներ:

Այս ռմբակոծութիւններուն դէմ, ցոյցերը կը բազմանան: 10 հազար հոգի Մատրիտի մէջ, 4000 Սթոքհոլմ, 15 հազար մահմետականներ Թայլանտ եւ այլն, եւ այլն:

Անդին, մարդկային ահաւոր ողբերգութիւն մը կայ, տասնեակ հազարաւոր գաղթականներ, անօթի – ծարաւ կը դիմեն դէպի Փաքիստան, բայց, սահմանապահ զօրքերն ալ ետ կը մղեն: Աւելի քան մէկ միլիոն է անոնց թիւը Փաքիստան, 300 հազար Իրան եւ հազարաւորներ կեդրոնական Ասիոյ զանազան հանրապետութիւնները: Կարմիր Խաչը չի վարանիր «մարդկային աղէտ մը» նախատեսելու, որ կրնայ Աֆղանիստանի մէջ իսկ պատահիլ:

*
**

Ածխախտը միշտ կը մտահոգէ, մանաւանդ Հոկտեմբեր 21-էն ի վեր, երբ Ուաշինկթընի թղթատարի պաշտօնեայի մը վարակումը հաստատուեցաւ: Ենթական թօքերէն վարակուած է, ինչ որ ածխախտի ամէնէն ծանրակշիռ տեսակն է եւ պաշտօնեան շատ մտահոգիչ վիճակի մէջ է: Միացեալ – Նահանգներու մէջ, ցարդ միայն մէկ հոգի մեռած էր, ուրիշ վարակումներ մորթային բնոյթ ունէին, ինչ որ մահացու չէ:

Ֆրանսայի մէջ, ոչ մէկ պարագայ կայ, բայց եւ այնպէս խուճապ մը ստեղծըւած է եւ ժողովուրդը դեղարան կը խուժէ հակակենսաբանական դեղահատներու պահեստ ընելու կամ ի յառաջագունէ դեղի դիմելու համար, ինչ որ շատ անխոհեմ բան մըն է, որու «երկրորդական հակազդեցութիւնները» կրնան լուրջ բարդութիւններ ստեղծել:

Առողջապահութեան նախարարը Պեռնար Քուշնէր «դարմանական հայրենասիրութիւն» (patriotisme thérapeutique) թելադրեց Ֆրանսայի ժողովուրդին, շեշտելով թէ որեւէ պատճառ չկայ իրար անցնելու:

ԹՈՒՐՔԻԱ ՊԱՏՐԱՍՏ Է ԶՕՐՔ ՂՐԿԵԼՈՒ ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

«Ֆիկառօ»յի Պոլսոյ թղթակիցը՝ Էրիք Պիէկալա երկարօրէն կ'անդրադառնար (Հոկտեմբեր 20) Անգարայի տրամադրութիւններուն օգնելու Ամերիկացիներուն Աֆղանիստանի մէջ: ՕԹԱՆ-ի անդամ, Թուրքիա մահմետական այն երկիրն է որ ամէնէն աւելի զօրավիգ է Ուաշինկթընի

(Շար.ը Դ. էջ)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՖՐԱՆՍԱ ԿՈՒ ԳԱՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն եւ ի մխիթարութիւն մեր ժողովուրդին, ներկայիս՝ գոհունակ ուրախութեամբ կը յայտնենք, թէ Սուրբ Էջմիածնէն՝

Նորին Սուրբ Օծութիւն
Տէր Տէր ԳԱՐԵԳԻՆ Բ.
Ծայրագոյն Պատրիարք-
Կաթողիկոս Ամենայն Հայոց

հետեւանք տալով՝ Ֆրանսայի եւ մեր Եկեղեցւոյ հոգեւոր զաւակներուն մատուցած կրկնակի հրաւէրներուն,

շնորհ կ'ընէ Պաշտօնական եւ Հովուապետական այցի գալ Ֆրանսա՝ ընթացիկ տարւոյս Դեկտեմբեր ամսուան 6-էն 18-ի օրերուն, ըստ հետեւեալ ժամանակացոյցի. –

Փարիզ եւ Փարիզեան Շրջան՝ 6-էն 11 Դեկտեմբեր,

Հարաւային Ֆրանսայի Շրջան՝ 11-էն 15 Դեկտեմբեր,

Ռոն Ալփի Շրջան՝ 15-էն 18 Դեկտեմբեր:

ԴԻՒԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ

Անթիլիասի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարը ամբողջութեամբ վերանորոգուած է եւ Հոկտեմբեր 20-էն սկսեալ կրկին պատարագ կը մատուցուի:

Անցնող շուրջ մէկ ամսուան ընթացքին տաճարը ներկուած է, սալայատակը փոխուած, բարձրախօսներու նոր սարքաւորում ու հայկական ոճով նոր դուռներ զետեղուած եւ կատարուած են այլ կարեւոր նորոգութիւններ:

ԹԷՆԻՍ

Մ.-Գ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ, ԲԱՅՑ...

Ցիւրիխի մրցաշարքին, զուիցերահայ Մարի-Գայեանէ Միքայէլեան յաջորդաբար յաղթանակներ տանելէ ետք Էլէնա Տէմէնթիեւայի (6-1, 6-4) եւ Թաթիանա Փանովայի (6-1, 6-3) դէմ, Հոկտ. 19-ին, քառորդ աւարտականներուն պարտուած է համաշխարհային թիւ 1 Ճենիֆըր Գափրիաթիէն ու դուրս մնացած մրցաշարքէն:

Ֆրանսական մարզական օրաթերթը Էքիփ լրատուութեան հետ կ'ըսէ նաեւ թէ այս մրցումը անհաւասարակշիռ ուժերու պայքարն էր՝ առաջինը 105-րդին դէմ, սակայն, կ'աւելցնէ, Զուիցերացիները յանձին՝ Մարի-Գայեանէ Միքայէլեանի, նոր խաղացող մը յայտնաբերեցին մօտէն հետեւելու, երբ երկրին երկու ծանօթ անունները՝ Հինկիս եւ Շնայտէր տեղատուութեան ընթացքի մէջ են:

«ԱՌԱԳԱՍՏ»ԷՆ ՄԻՆՉԵՒ ՁՈՒԿ ՈՒ ՄԱԾՈՒՆ

Սեպտ. 24-ի գիշերը մարդ մը սպաննուեցաւ Երեւանի «Առագաստ» սրճարանին մէջ որ վերջին տարիներուն մայրաքաղաքին տեսարժան վայրերէն եղած է. արուեստական լճակի մը ափին, նորոգուած, բարեզարդուած հանգստաւէտ անկիւն մըն է ուր կ'ըսուի թէ կարելի է որակաւոր ճաշ ունկնդրել: Այս յատկանիշներուն հետ սրճարանին համբաւին մէջ դեր ունի այն տուեալը թէ նախագահ Ռ. Քոչարեանի նախընտրած գրօսավայրերէն է. զինքը յաճախ կարելի է հոն տեսնել, ընկերներու, գործակիցներու, հիւրերու հետ: Սեպտ. 24ին ալ նախագահը հոն էր, ընկերակցութեամբ Սփիւռքէն հիւրերու, որոնց գլխաւորն էր Ազնաւուր: Եւ ըսպանութեան լրատուութիւնը գրեթէ միշտ կը սկսէր այն նախաբանով որ ան գործուած էր նախագահին ու իր հիւրերուն մէկնումէն հազիւ քանի մը վայրկեան ետքը:

Այդ սրճարանը այսօրուանէն շատ համեստ վիճակով մը, խորհրդային տարիներուն ալ Երեւանի յատկանշական վայրերէն էր. ո՛չ անշուշտ նախագահական հետաքրքրութեան արժանիքով: Հոն կը հաւաքուէին յաճախ գրողներ, դերասաններ, արուեստագէտներ: Եւ տարօրինակ է որ այդ շրջանին ալ մահը տեղ գտած էր անոր տարեգրութեան մէջ: 1975-ին հոն ընկերներու հետ գտնուած պահուն, երկրորդ յարկէն առաջին յարկի պէթոնին վրայ ինկած ու մահացած էր վերջին տասնամեակներու ամէնէն ինքնատիպ բանաստեղծներէն Սլավիկ Չիլոյեանը: Անոր գրող, արուեստագէտ ընկերները անպայման կը յիշէին այդ դէպքը, երբ Սփիւռքէն այցելուի մը ընկերակցութեամբ երթային այդ սրճարանը, սուրճ մը, կամ շիշ մը Ջերմուկ խմելու: Իրենց հիւրին ցոյց կու տային Սլավիկին ու ընկերներուն նստած սեղանը, բացատրելով ալ թէ ինչպէս ան ետ – առաջ ճօճած էր իր աթոռին ետեւի ոտքերուն վրայ ու յանկարծ ետին գտնուած բացուածքէն թռած, ինկած առաջին յարկի գետնին վրայ:

Այդ նոյն սրճարանը տխուր համբաւն ալ ունեցաւ երկու – երեք տարի առաջ, Հ.Յ.Դ. խմբակցութեան ներկայի ղեկավար Աղուան Վարդանեանի խոշտանգումին վայրը ըլլալու:

Չիլոյեանի պարագան Հայաստանի ներկային մէջ շատ հեռուն մնացած, մոռցուած, փակուած դրուագ է. թէեւ «Առագաստ»ի վերջին սպանութեան առնչութեամբ զայն կը յիշէ գրող Դ. Յովհաննէս, «Առաւօտ»ի մէջ (Հոկտեմբեր 2): Ա. Վարդանեանի խոշտանգումը այսօր հաւանօրէն իրմէ զատ ոչ ոք կը յիշէ, հայաստանեան իրականութեան մէջ այդ կարգի պատահարներ աւելի քան սովորական մանրուքի կարգը անցած ըլլալով: Այսուհանդերձ, «Առագաստ»ը սկսած է խորհրդանիշը ըլլալ երկրին մէջ տիրող վախի մթնոլորտին որուն գլխաւոր ապացոյցը կը նկատուի անհաւատալի այն պնդումը թէ վերջին սպանութեան ականատեսներէն ոչ ոք համարձակած է վկայութիւն տալ. ոչ իսկ զոհին ընկերացող բարեկամները: Ըսե՛նք որ ամէն տեղ ալ կրնայ որոշ վերապահութիւն մը թելադրել երկրի մը նախագահին թիկնապահները ամբաստանելու վիճակը. բայց, հոս, այն ձեւով որ նկարագրուեցաւ պատահարը հայաստանեան մամուլին մէջ, անորոշութեան կամ անվստահութեան ապաստանելու տեղ ալ չկար:

Հոն գտնուողները տեսած էին որ ըսպաննուած երիտասարդին՝ Պօղոս Պօղոսեանին ամբողջ մեղքը եղած էր նախագահը ու նաեւ անոր սեղանակից Ազնաւուրը ողջունելու փորձ մը. անյաջող փորձ մը. քանի որ ողջոյնը տեղ չհասած, նոյն թիկնապահները միջամտած ու հեռացուցած էին զինքը: Աւդին – անդին թափառող տեղեկութիւններու համաձայն, որո՛նք փաստահարար դատական ո՛չ մէկ ատեանի, կամ դատաւորի կողմէ նկատի պիտի առնուին, անբախտ երիտասարդը «Բարե՛ւ Ռոպ», կամ ««Պռիվէտ, Քոչարեանօղլի» քիչ մը շատ մտերմական կոչականներով ձեւակերպած էր նախագահին ուղղուած իր բարեւը: Կարելի՞ է որպէս բնական տրամաբանութեան տէր մէկը, հաւատալ, կարծել որ այդ համարձակութիւնը տեղւոյն վրայ ամէնէն վայրագ ձեւով սպաննուելու պատճառ կրնայ ըլլալ: Բայց, ժխտական պատասխանի պարագային կը մնայ դաւեշտականին ընտրանքը. ուրեմն, ինչպէս գրած էր պատահարէն ետք լրագրող մը, Պ. Պօղոսեան իրաւ էր որ պաշտօնական տեղեկագրին համաձայն, սրտի կաթուածէ մեռած էր, Հանրապետութեան նախագահն ու Շառլ Ազնաւուրի նման աշխարհահռչակ դէմք մը միասին տեսնելու երջանկութենէն...:

Այսօր, երբ շաբաթներ անցած են դէպքին վրայէն ու քրէական, դատական հետապնդումի ոչ մէկ լուր կը հասնի պատահածին առնչութեամբ, հակառակ նախագահին տուած հաւաստիքին թէ արդարութիւնը անպայման կը կիրարկուի ու մեղաւորները խստագոյն ձեւով կը պատժուին, եւ այլն, բաւական միամիտ արտայայտութիւն կը թուի «Առաւօտ»ի վերոնշեալ թիւին մէջ Դ. Յովհաննէսի ըսածը թէ նման դէպքեր անհետեւանք մնալով կը ստեղծեն մթնոլորտ մը որ անյարիր է 1700 տարեկան քրիստոնեայ երկրին որ նոյն ատեն Եւրոպական Խորհուրդի անդամ է: Պ. Պօղոսեանի սպանութիւնը առաջին դէպքը չէ որ պիտի յուշէ թէ 1700-ամեակ, կամ Եւրոպական Խորհուրդի անդամակցութեան պէս բաներ ցուցափեղկի զարդեր են Հայաստանի նման երկրի մը համար ուր իրականութիւնը լայն տոկոսով հակառակ ուղղութեամբ կ'ընթանայ:

Ինչ կը վերաբերի Սեպտեմբեր 24-ի խժդժութեան ականատեսներուն լռութեան, պէտք է նշել բացառութիւն մը. նոյն օրուան (Հոկտեմբեր 2) «Հայկական ժամանակ» օրաթերթը հրատարակած է Կ. Յակոբեան ստորագրութեամբ խմբագրութեան ուղղուած նամակ մը: Նամակագիրը ըսելով որ այլեւս չի կրնար, չի փափաքիր լռել, քանի որ ատիկա յանցանք կը նկատէ, կ'ըսէ թէ Սեպտեմբեր 24-ին գտնուելով «Առագաստ» սրճարանը, ականատես եղած է կատարուածին. համոզուած է որ ինչպէս կը գրէ. «ծեծել եւ սպանել եմ ես, դուք, ողջ հայ ժողովուրդը...»: Այսուհանդերձ, նամակը գրուած չէ շատերու խուսափած վկայութիւնը տալու նպատակով. հոն չի պատմուիր թէ ինչ էր պատահածը: Ի՞նչպէս թիկնապահները ծեծի տակ սպաննեցին երիտասարդը ու մեկնեցան: Կ. Յակոբեան կը գրէ թէ այդ հարցին կապակցութեամբ չի փափաքիր պետական կառոյցներու հետ առնչութիւն ունենալ, քանի որ ստեղծուած կացութեան մէջ կը նշմարէ նաեւ նախագահին պատասխանատուութիւնը: Սակայն, կը դատապարտէ վախի զգացումին տեղի տուողները, լուռ մնացողները: Գրութիւնը կ'աւարտի չլռելու, արձագանգելու, ելքեր փնտռելու կոչով մը որ ուղղուած է «հայ մարդոց»:

Դժուար է այդ նամակին մէջ խնկապէս չվախնալու տրամադրութիւն տեսնել երբ փոխանակ ականատեսի վկայութեան, հոն ներկայի ղեկավարութեան ուղղուած քննադատութիւն տեղ գտած է, այդ հարցով պետական կառոյցներու հետ յարաբերութեան ի յառաջագունէ մերժումով. այսինքն Կ. Յակոբեան որ եղածին ականատեսներէն է եւ կ'ուզէ որ մարդիկ չվախնան, չլռեն, ինք նպատակ չունի պաշտօնական շրջանակի մէջ այդ յատկանիշները ցոյց տալու:

Թերթին յաջորդ թիւին մէջ «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Ա. Բաղդեանի հետ զրոյց մը ունի Նայիրա Զօհրապեան. վախի ու սարսափի մթնոլորտը հոն ալ նիւթ եղած է: Ան կը բացատրուի «անմեղութեան» ու «անպատժելիութեան» միջավայրով որ կը վերագրուի իշխանութիւններուն, յատկապէս՝ նախագահին: «Նրանց պէտք է հլու – հըլնազանդ ժողովուրդ, կամակատար քաղաքական ուժեր, որոնց մի մասին ստրկամիտ են դարձնում պաշտօններ ու կոչումներ բաժանելով, մի մասի դէմ կոմպրոմատներ են հանում, մէկ այլ մասին շանթաժի ենթարկում, որպէսզի շարունակեն անել այն, ինչ անում են: Այդ անպատժելիութեան մթնոլորտի պատճառն էր, որ սպաննուեց Գ. Պօղոսեանը, կամ եղաւ «Առագաստ»ի դէպքը» կ'ըսէ ան:

Աւելորդ է նշել թէ զրոյցին մեծագոյն մասը գրաւած է որպէս կացութեան դարման՝ Ռ. Քոչարեանը պաշտօնանկ ընելու իրենց վարած քաղաքականութիւնը որուն յաջողութեան համար ժողովուրդին նեցուկը կ'ակնկալուի: Եթէ ան տէր չկանգնի իր իշխանութեան, զայն փոխելու գործը կը դժուարանայ «Հանրապետութեան» ու անոր գաղափարակիցներուն համար:

Ա. Բաղդեան նախագահին ուղղուած իր մեղադրանքները կ'ամփոփէ «ձուկը գըլխից է հոտում» առածով: Արդեօք, վախի, յուսահատութեան, անպատժելիութեան ներկային վերջ տալու առաքելութեան քով որուն մէջ կարեւոր դեր կը վերագրէ ժողովուրդին, միտքը կու գա՞յ «կաթէն բերանը այրածին մածունը փըչելով ուտել»ու առածն ալ...:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ՄԱՐՄԱՐԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԸ ՑԱՒԻ՞Մ ՈՐ ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍԻՄ

Անգամ մը հրաւիրուած էի բանախօսելու եւրոպական քաղաքի մը մէջ, ուր գիտէի արդէն թէ հայախօսութիւնը բաւական նահանջած էր: Այդ փոքրաթիւ գաղութին մէջ տիրող լեզուն տեղւոյն լեզուն էր: Բայց զիս բանախօսելու հրաւիրած էին որովհետեւ փոքրիկ սրահ մը լեցնելու չափ հայախօսներ կամ հայերէն լեզուն հասկցողներ կային:

Բանախօսութեան օրը փոքրիկ վարանում մը ունէի: Արդեօք սրահը ակնկալուած չափով լեցուն պիտի ըլլա՞ր: Դիմացս պիտի կարենայի՞ տեսնել կոկիկ թիւով ունկնդիրներ որո՛նք պիտի հասկնային զիս իմ հարազատ լեզուիս մէջ:

Դեռ բաւական կանուխ էր երբ զիս սըրահ առաջնորդեցին: Հազիւ երկու երեք կարգ լեցուն էր: Ուրեմն պէտք չէ որ շատ աւելին սպասէի: Եթէ երկու կարգ եւս լեցուէր, լաւ էր: «Հոգ չէ, կ'ըսէի, կը բաւէ որ մենք իրարու աչքերուն մէջ նայելով հայերէն խօսինք»:

Բայց սրահը շատ շուտով լեցուեցաւ ամբողջովին: Կազմակերպիչները զարմացած էին: Գիտէին որ սրահը պարապ պիտի չըլլար, բայց այսքանին չէին սպասեր: Միջոց մը գլխաւոր կազմակերպիչը մօտեցաւ ու ականջէս վար ըսաւ.

– Ասիկա մեծ յաջողութիւն է: Նոյնիսկ եկած են անձեր որոնք հայերէն չեն գիտեր: Գիտնալով հանդերձ թէ բանախօսը հայերէն պիտի խօսի, եկած են: Եկած են որովհետեւ ուզած են լսել լաւ հայերէն մը որուն կարօտն ունին:

Այս նախադասութիւնը ուրախացուց զիս: Ուրախացուց ո՛չ թէ անոր համար որ սպասուածէն աւելի մեծ թիւով ունկընդիրներ եկած էին, այլ անոր համար որ կային նոյնիսկ անձեր որոնք հայերէն չէին գիտեր: Ուրիշ պայմաններու մէջ, այդպիսի ունկնդիրներու ներկայութիւնը պիտի անհանգստացնէր զիս, պիտի մտածէի թէ ես ինչո՞ւ դիմացս տեսնեմ մարդիկ որոնք զիս պիտի չհասկնան: Բայց այդ իրիկուն ուրախութիւն մը զգացի: Անոնց ներկայութեան մէջ տեսայ յարգանքի արտայայտութիւն մը հանդէպ ո՛չ թէ անձիս, այլ մեր Մեծասքանչին նկատմամբ:

Երբ հրաւիրուեցայ ամպիոն բարձրանալու եւ խօսելու, եւ սանկ անգամ մը նայեցայ սրահը լեցնող անծանօթ ունկընդիրներուս, պահ մը միտքէս անցուցի բանախօսութեան սկսիլ սա նախադասութեամբ.

– Յարգելի բարեկամներ, շատ կը ցաւիմ որ ես այսօր ի վիճակի չեմ ձեզի խօսելու անգլերէնով կամ ֆրանսերէնով: Ուստի դուք զիս պիտի լսէք մեր պապերուն լեզուով, մեր ոսկեղէնիկով:

Բայց միտքիս մէջ կայծակնային արագութեամբ չարայարուած այս նախադասութիւնը ցնցեց զիս եւ ես դարձեալ նոյն կայծակնային արագութեամբ միտքիս մէջ չարայարեցի ուրիշ նախադասութիւն մը.

– Յարգելի բարեկամներ, ես չափազանց ուրախ եմ որ այսօր ի վիճակի չեմ ձեզի հետ խօսելու անգլերէնով կամ ֆրանսերէնով: Ուստի ես ձեզի հետ պիտի խօսիմ ձեր պապերուն լեզուով եւ վստահ եմ որ դուք ձեր ակնկալածէն ալ աւելի շատ բան պիտի հասկնաք իմ խօսքերէս:

Անգամ մը եւս նայեցայ ունկնդիրներուս, բայց քաջութիւնը չունեցայ արտասանելու այս երկրորդ նախադասութիւնն ալ: Վախցայ որ զիս սխալ կը հասկնային ու կը վիրաւորուէին: Ուստի սկսայ ուրիշ նախադասութեամբ մը, որ այնուհետեւ զիս առաւ ու տարաւ հեռուները: Ամբողջ բանախօսութեան ընթացքին մէկ կողմէ կը խօսէի, մէկ կողմէ ալ ակնարկս կը պտըտցնէի ունկնդիրներուս վրայ, որպէսզի հասկնայի թէ ո՞վ կը հասկնար զիս, ո՞վ չէր հասկնար: Կը մտածէի որ հայերէն չգիտցողները անպայման ձեւով մը պիտի մատնէին իրենք զիրենք, յայտնի պիտի դարձնէին որ խօսուածէն բան մը չէին հասկնար: Բայց կրնամ երդնուլ որ բնաւ չկրցայ զանազանել մէկը միւսէն: Բոլորն ալ իրենց աչքերը անշարժ կերպով իմ վրայ սեւեռած էին և այնպիսի լարուած ուշադրութեամբ կը հետեւէին ինծի որ կարծես թէ կ'ընկալէին բերնէս ելած իւրաքանչիւր բառը:

Երբ վերջացուցի, երջանիկ էի: Կազմակերպիչներն ալ գոհ էին: Կ'ըսէին որ երկար ժամանակէ ի վեր հայերէնը այսպէս հնչած չէր այս սրահին մէջ: Այն ատեն է որ հայերէն չգիտցող մէկ քանի ունկնդիրներ մօտեցան ու անգլերէնով իրենց գոհունակութիւնը յայտնեցին: Ըսին որ գիտէին թէ մեր լեզուն շատ գեղեցիկ է եւ զիս ծայրէն մինչեւ վերջ ունկնդրած էին առանձ ձանձրոյթի, երբեմն ալ բաներ մը հասկնալով: Ես ալ պահ մը ես ինծի հարցուցի թէ արդեօք իրենցմէ ներողութիւն խնդրէի՞ որ քանի մը բառ ալ անգլերէն չէի խօսած: Ի վերջոյ եթէ ուզէի, կրնայի անգլերէնով իրենց քանի մը խօսք ուղղել նախապէս գրելով ինչ որ պիտի ըսէի: Բայց չըսի: Դարձեալ չըսի այդ բանը:

Մինչդեռ կ'ուզէի աւելցնել որ ես անպայման հայերէն պիտի խօսէի նոյնիսկ եթէ հայերէնիս չափ սահուն կարենայի խօսիլ անգլերէնը կամ ֆրանսերէնը: Կ'ուզէի աւելցնել թէ ես կը հաւատայի որ իմ Աստուածս զիս երկիր ղրկած էր որպէսզի հայերէն խօսէի մինչեւ կեանքիս վերջը: Ես կ'ուզէի աւելցնել տակաւին որ կը ցանկայի բոլորին յիշեցնել թէ օրքա՛ն գեղեցիկ էր մեր լեզուն եւ թէ օտարախօս մեր հայ եղբայրներն ու քոյրերը որքան դժբախտ էին որ հայերէն չէին հասկնար:

Բայց չխօսեցայ այդ մասին: Պէտք չունէի: Որովհետեւ գիտէի որ արդէն անուղղակի կերպով ա՛յդ էր որ ըսած էի ամբողջ բանախօսութեանս ընթացքին, խօսելով հանդերձ այլեւայլ նիւթերու մասին:

Ռ.Հ.

Ի ՊԱՏԻՒ ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍԵԱՆԻ

Սիփան – Կոմիտաս երգչախումբը գնահատելի գաղափարն ունեցած էր հրապարակ հանելու իր վաղեմի տաղանդաւոր մեներգիչին՝ Մկրտիչ Պօղոսեանի մէկ խտացեալ սալը, ուր, Պէսթ օֆ (լաւագոյնները) խորագրին տակ ներկայացուած էին շարք մը իր երգերէն: Այդ սալին մասին, այս էջերուն մէջ, ժեռնհասօրէն արտայայտուեցան արդէն Խաչիկ Երլմազեան եւ տոքթոր Լեւոն Մոմճեան: Այս հրապարակումին առթիւ, երգչախումբը կազմակերպած էր նաեւ մտերիմ երեկոյթ մը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի, Հոկտեմբեր 16-ին, Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ: Հոն էին Սիփան-Կոմիտասի անդամները, խմբավարը Կարպիս Ափրիկեան, Գիտ Արք. եւ բարեկամներ:

Առաջին առթիւ, խօսք առաւ Սիփան-Կոմիտաս երգչախումբի վարչութեան ատենապետը՝ Արմէն Գիզիլեան, որ յայտնեց թէ այս հաւաքոյթը տեղի կ'ունենար բարեկամութեան նշանաբանով մը, ապա անդրադարձաւ սալին, ուր Մկրտիչ Պօղոսեանի մեկնաբանութիւնը կ'արտայայտէր երաժշտական իր զգայնութիւնը,

անձնական դրոշմը, յարգելով հանդերձ աւանդադրութիւնը: Ան, գիտէր, ըսաւ, ունկնդիրին փոխանցել իր զգացումները: Երգերու ընտրութիւնը եղած էր համապատասխան անոնց թեքնիք արժէքներուն. շնորհակալութիւն յայտնեց Մկրտիչ Պօղոսեանի բոլորին կողմէ:

Կարպիս Աֆրիկեան ըսաւ թէ Պէսթ օֆը այնքան ալ ճիշդ չէր, որովհետեւ Մ. Պօղոսեանի երգերէն շատեր եւ լաւագոյն շատեր դուրս մնացած էին, որովհետեւ հարկ եղած էր արձանագրուած երգերէն ընտրել անոնք, որոնք թեքնիք գետնի վրայ կարելի էր վերարտադրել, քանի արձանագրութիւնները եղած էին գաղտագողի. (նիւթական պատճառներով) եւ... այդ պատճառով չկային օրինակ Անուշի առիան, Օտար ամայի ճամբէքի վրայ եւ ուրիշներ, զորս Մ. Պօղոսեան այնքան յաջող կերպով մեկնաբանած էր: Հիմա, սակայն, աւելցուց Կ. Աֆրիկեան, երբ լոյս կը տեսնեն սալերը մեներգիչներու որոնք յաւակնութիւններ ալ ունին, կը խորհիմ որ անոր գէշն ալ աւելի լաւ էր: Բացատրեց նաեւ իր մօտեցումը հեղինակի մը գործին հանդէպ, շեշտելով թէ ինք նախընտրած է միշտ հեղինակին ուզածը արտայայտել տալ:

Խօսք առաւ Կաթողիկոսական Պատուիրակ՝ Գիւտ Արք. որ շնորհակալութիւն յայտնեց ստեղծուած այս պատեհութեան համար եւ առիթ տրուեցաւ իրեն արտայայտելու իր հիացումը Մ. Պօղոսեանի մեկնաբանութիւններուն հանդէպ. ան կրցած էր փոխանցել իր ապրումները: Մշակը, ըսաւ, արժանի է իր վարձքին, երբ ան կու գայ վերադարձնելու իրեն: Վերջաւորութեան յայտնեց որ նուէր մը բերած է Մայր Աթոռէն Մ. Պօղոսեանի, մետալ որու մէկ կողմը քանդակուած էր Ս. Միւռոնի կաթսան, միւս կողմն ալ՝ Էջմիածինն ու Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Վերջին խօսքը առաւ Մկրտիչ Պօղոսեան, խորապէս յուզուած: Ան ըսաւ թէ, չէր սպասեր այնքան պատիւի եւ պիտի ուզէր իր շնորհակալութիւնը յայտնել երգելով, բայց, այլեւս ձայն չունէր: Շնորհակալութիւն յայտնեց այդ սալին պատրաստութեան համար երգչախումբին, Սթիւտիօ Վիգէնի, Կ. Աֆրիկեանի, որու կը պարտէր ամէն ինչ, որմէ սորված էր որ երգը միայն քանի մը նոթեր չէն տետրակի մը վրայ: 35 տարի սքբէս մը ապրած էր, բայց նաեւ անհուն երջանկութիւն մը ու եզրակացուց, ըսելով թէ ստացած մետալը կը ձօնէ ամբողջ երգչախումբին:

Ճոխ հիւրասիրութիւնով մը կը շարունակուէր այս հաւաքոյթը, ջերմ մթնոլորտի մը մէջ:

Ա. Մ.

ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ

ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԸ ՀԱՆԴԻՍՏ ՉԵՆ. ԱՆՈՆՔ ԿԸ ՎԱԽՆԱՆ «ԿԱՍԿԱԾԵԼԻ» ՃԱՄԲՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՏ ԹՌՉԻԼ, ՍԻԽԵՐԸ ԿԸ ՇՓՈԹԵՆ ԹԱԼԻՊԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ, ԻՍԼԱՄՆԵՐԸ՝ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒ

«Ուորլտ Թրէյտ Սենթըր»ի եւ Փէնթակոնի դէմ ահաբեկչական արարքներէն ի վեր անվստահութեան, ատելութեան, հալածանքի, եւ այս բոլորին իբրեւ արդիւնք՝ ազգային պատկանելիութեան վերանայումի մթնոլորտ մը կը տիրէ Միացեալ–Նահանգներու եւ Գանատայի մէջ: Նախագահ Ճորճ Պուշ եւ վարչապետ Ժան Քրեթիէն իսլամներու ու քրիստոնեաներու միջեւ փոխադարձ հանդուրժողութեան կոչեր կ'ուղղեն եւ կը փորձեն պահպանել իրենց երկիրներուն միութիւնն ու քաղաքացիներուն միջեւ համերաշխութիւնը: Սակայն, յստակ է, որ ցեղային ծագումի հարցը յանկարծ հրատապ նիւթ դարձած է այս երկիրներուն մէջ. փոխադարձ ճանաչողութեան կարիքը կը զգացուի, իսկ անգիտութիւնը կը սրէ լարուածութիւնը: Կը թուի, թէ ժողովրդավարութեան, յառաջդիմութեան, ազատութեան եւ մարդկայնութեան անունով ի գործ դրուած ձուլումի քաղաքականութիւնը որոշ տեղ մը ձախողած է: Փոխարէնը՝ յաջողած է ժամանցի ճարտարարուեստին մէջ կիրարկուած ազգային և կրօնական նախատիպարներու խեղաթիւրումը, կամ յաղթանակած է անտեսուած ճշմարտութիւնը, թէ՝ ազգային եւ ցեղային տարբեր յատկանիշներու ժառանգութիւնը անխուսափելի է, իսկ համասեռ մշակոյթ մը ստեղծելը՝ պատրանք:

Օրինակներ՝ ստորեւ. –

ՀԱԼԱԾԱԽՏ՝ ՕԴԱՅԻՆ ՃԱՄԲՈՐԴՆԵՐՈՒ ՄՕՏ

Միացեալ–Նահանգներու տարածքին օդաչուներ կը մերժեն որոշ ազգութիւններու պատկանող ճամբորդներ փոխադրել: 32 տարեկան Փաքիստանցի մը Թեքսասի մէջ «Տէլթա Էյրլայնզ»ի մէկ օդանաւէն դուրս դրուած է, որովհետեւ «անձնակազմը ապահով չէր զգար անոր ներկայութեան»: Ֆլորիտայի մէջ փաքիստանցի երկու գործատէրեր դուրս դրուած են դէպի Պալթիմոր ուղղուող «Եու. Էս. Էյրուէյզ»ի մէկ օդանաւէն, որովհետեւ օդաչուն կը մերժէր ճամբայ ելլել անոնց հետ: Մինիափոլիսի մէջ ծագումով արաբ երեք տղամարդիկ արտօնութիւն չէն ստացած բարձրանալու «Նորթուէսթ Էյրլայնզ»ի մէկ օդանաւը Սոլթ Լէյք Սիթիի իրենց բնակավայրը վերադառնալու համար: Պատճա՞ռը. ոստիկանութեան կողմէ հրապարակուած տեղեկագիրի մը համաձայն, անոնք յաճախ լուացարան գացած են, անընդհատ իրենց ժամացոյցին նայած են եւ ջղագրգիռ երեւոյթ ունեցած են: Օդանաւին անձնակազմն ու ճամբորդները մերժած են թռիլ անոնց հետ:

Օդանաւային ընկերութիւններ կը ջանան վերջ դնել նման դէպքերու: «Ամերիքըն Էյրլայնզ»ի ընդհանուր տնօրէնը հետեւեալը ըսած է իր պաշտօնեաներուն. «Զգացում մը կայ, որմէ հարկ է խուսափիլ ամէն գնով. ատելութի՛ւնը»:

Իսկ «Եու. ԷՍ. Էյրուէյզ»ի յայտարարութիւնը կ'ըսէ. «Հարկ է յիշել, որ պէտք է խոր յարգանք եւ օգնութիւն ցուցաբերել իսլամ, արաբ եւ միջին արեւելքցի մեր պաշտօնակիցներուն եւ յաճախորդներուն նկատմամբ»:

ԱՏԵԼԱՎԱՌ ՈՃԻՐՆԵՐ

Աւելի քան 45 փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ անցեալները բողոքի ցոյց մը կատարած են Ուաշինկթընի մէջ, պահանջելով ատելավառ ոճիրներու դադրեցումը ազգային հաւաքականութիւններու դէմ, շեշտելով, որ ոչ մէկ կրօնք կամ մշակոյթ պատասխանատու է Սեպտեմբեր 11ին պատահած ողբերգութեան:

Ահաբեկչական արարքներուն յաջորդող ութ օրերուն ընթացքին Էֆ. Պի. Այ. տարբեր նահանգներու մէջ քննութիւն բացած է ատելավառ 55 ոճիրներու առընչութեամբ: Ծագումով եգիպտացի մարդ մը սպաննուած է Լոս–Անճըլըսի մօտ, ծագումով սիխ Հնդիկ մը՝ Արիզոնայի մէջ, Փաքիստանցի մը՝ Թեքսասի մէջ...:

Բազմաթիւ Ամերիկացիներ կը կարծեն, թէ Սիխերը իրենց երկար մօրուքով եւ փաթթուած գլխանոցներով Պէն Լատէնի հետեւորդներ են: Միայն Նիւ–Եորքի մէջ վերջին երկու շաբաթներուն ընթացքին ցեղապաշտ 11 յարձակումներ գործուած են անոնց դէմ: Այլ նահանգներու տարածքին արձանագրուած է աւելի քան 250 դէպք:

Սիխերու կրօնքը ծագում առած է հիւսիսային Հնդկաստանի Փունճապ շրջանին մէջ: Շուրջ 500 հազար Սիխեր կ'ապրին Միացեալ – Նահանգներու տարածքին: Նոյնքան թիւով սիխ գաղթականներ հաստատուած են Գանատա:

«Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը կը տեղեկացնէ, թէ վերջերս նախագահ Պուշ ցնցուած է, երբ Լուիզիանայէն հանրապետական ներկայացուցիչ մը՝ Ճան Քուքսէյ ըսած է. «Եթէ տեսնեմ մէկը որ ներս կը մտնէ գլխուն չորիկ մը փաթթած եւ անոր շուրջ գօտի մը կապած, պէտք է ձերբակալել զայն»: Քուքսէյ աւելի ուշ ներողութիւն խնդրած է իր խօսքերուն համար:

«Սիխերը հայրենասէր, օրինապահ եւ խաղաղասէր Ամերիկացիներ են», կ'ըսէ յարձակումի ենթարկուած Սիխերու կողմէ կատարուած միացեալ յայտարարութիւն մը:

Ամերիկայի տարածքին իսլամ համայնքապետներու համաձայն, «Ուորլտ Թրէյտ Սենթըր»ի եւ Փէնթակոնի ահաբեկչական արարքները հետաքննող Էֆ. Պի. Այ.ի պաշտօնատարներ օրերէ ի վեր իրենց հետապնդումներով եւ հարցաքննութիւններով սարսափի կ'ենթարկեն երկրին իսլամներն ու Արաբները: Ղեկավարները կոչ կ'ուղղեն առանց իրաւաբաններու խորհուրդին դիմելու չպատասխանել որեւէ հարցումի:

Միւս կողմէ Էֆ. Պի. Այ. կը ջանայ ներգրաւել սահուն անգլերէն եւ լաւ արաբերէն խօսող Ամերիկացիներ, «ահաբեկչութեան դէմ պայքարելու համար բոլոր ճակատներու վրայ»: Կարգ մը Արաբներ շփոթի մատնուած են գործի նման առաջարկներ ստանալով...: Էֆ. Պի. Այ.ի նախկին պատասխանատուի մը համաձայն, արաբերէն գիտցող գործիչներու պակասը կրնայ իր բացասական դերը ունեցած ըլլալ Նիւ–Եորքի եւ Ուաշինկթընի ահաբեկչական արարքներուն կանխարգիլման մէջ:

Սեպտ. 26–ին հրապարակուած հարցախոյզի մը արդիւնքը ցոյց տուած է, թէ Ամերիկացիներուն մեծամասնութիւնը որոշ մտահոգութիւն յայտնած է իսլամ եւ Արաբ Ամերիկացիներու նկատմամբ:

Մինչ նախագահ Պուշ կը ջանայ համոզել Ամերիկացիները, թէ իսլամութիւնը խաղաղասէր կրօնք մըն է, Էֆ. Պի. Այ. կը տեղեկացնէ, թէ հարիւրաւոր վրէժխնդրական արարքներ կատարուած են Արաբ եւ իսլամ Ամերիկացիներու դէմ. անոնք ենթարկուած են ֆիզիքական յարձակումի, սպառնալիքներ ստացած են, անոնց տուները կամ խանութները հրդեհուած են եւ երկու իսլամներ սպաննուած են:

ՄԻԱՑԵԱԼ–ՆԱՀԱՆԳՆԵՐ ՄՈՒՏՔԸ ԿՐՆԱՅ ԴԺՈՒԱՐԱՆԱԼ

Մինչ Միացեալ–Նահանգներ խստութիւն կը բանեցնեն երկրին սահմաններուն վրայ, ստուգելով, թէ ո՛վ երկիր կը մտնէ եւ ինչո՛ւ, հաւանական է, որ պետութիւնը մօտ օրէն փոխէ գաղթականներ ընդունելու եւ մուտքի արտօնագիր (վիզա) շնորհելու իր քաղաքականութիւնը:

Վերջին քանի մը տարիներուն Միացեալ–Նահանգներ տնտեսական պատճառներով «բաց դռներու» քաղաքականութիւն մը կը վարէին օտար այցելուներու եւ աշխատողներու նկատմամբ:

Սակայն Սեպտ. 11–ի ահաբեկչական արարքէն ետք անվստահութիւն կը տիրէ երկրին տարածքին: «Նիւ–Եորք Թայմզ» թերթին մէջ լոյս տեսած յօդուածի մը համաձայն, կրնան սահմանափակուիլ ոչ միայն գաղթականներու, այլ նաեւ՝ զբօսաշրջիկներու, առեւտրականներու եւ ուսանողներու շնորհուած մուտքի արտօնագիրները: «Ամերիկեան համակարգը չարաշահելու առիթները նուազագոյնի պիտի իջեցնենք» կ'ըսէ Միացեալ–Նահանգներու մէջ գաղթականներ ընդունելու քաղաքականութիւնը ուսումնասիրող հիմնարկի մը պատասխանատուն:

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ի.

ՀՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

«Արդեօք հի՞ւր մըն է, – մտածեց Լրտեսը, – իր մէկ ընկե՞րը, եթէ այդպիսի մէկն է, ապահովաբար ներս չառած՝ դըռնէն պիտի ճամբէ. ջանամ գոնէ երեսը տեսնելու»:

Արշակ մօտեցաւ սենեակին դրան եւ բացուածքէն գաղտագողի ակնարկ մը նետեց դուրս:

Նոյն րոպէին Տրդատ տան դուռը կը բանար:

Երիտասարդ մը ներս մտաւ:

Լրտեսը անմիջապէս ճանչցաւ զայն: Տրդատի ընկերն էր, այն, որ քիչ մը առաջ, փողոցին մէջ, զատուած էր իրմէ:

«Անշուշտ զէնքը ճամբուն պիտի դնէ», – մտածեց Արշակ՝ իր տեղը վերադառնալով:

Բայց ենթադրութեան մէջ կը սխալէր: Տրդատ իր ընկերոջ հետ սենեակ մտաւ:

– Կարծեմ իրար կը ճանչնաք, – ըսաւ Լրտեսին դառնալով:

– Կը յիշեմ, որ անգամ մը քեզի հետ տեսայ Էֆէնտիին Ցոյնին գինետունը, – պատասխանեց Արշակ, – եթէ չեմ սխալիր, ըսիր, որ կէյվէցի վաճառական մըն է:

– Շատ աղէկ յիշողութիւն ունիս եղեր, – դիտել տուաւ Տրդատ:

– Էֆէնտի՞ն ալ այս կողմերը կը բնակի, – հարցուց Լրտեսը:

– Այո՛, հոս մօտերը:

Երկու երիտասարդները նստեցան Արշակին քով, եւ Տրդատ նոր գաւաթ մը բերելով՝ քոնեաք լեցուց ամէնուն:

Լրտեսը կը խորհէր, թէ Տրդատ բոլորովին ապահով էր իր անկեղծութեան վրայ, քանի որ ընկերը փոխանակ ճամբելու՝ ներս բերած էր: Եւ իր ներշնչած այս վստահութիւնը շատ կ'ուրախացնէր զինքը:

Երեք անձերուն մէջ խօսակցութիւն մը սկսաւ՝ ատեն – ատեն գաւաթ մը քոնեաքով ու սիկառէթով մը համեմուած:

Ի վերջոյ Արշակ ոտքի ելաւ:

– Ալ ատենը անցաւ, կամաց – կամաց երթամ, – դիտել տուաւ:

Ցետոյ աւելցուց.

– Միսի՛ւ Տրդատ, ըսածներս մի՛ մոռնար, զգուշութիւնը ձեռքէ մի՛ թողուր: Մնաք բարով....

– Նստի՛ր, – գոչեց Տրդատ դաժան ձայնով մը:

Լրտեսը այդ խօսքէն ու երիտասարդին կերպարանքէն այլայլած՝ երկու ընկերներուն երեսը նայեցաւ՝ ջանալով պահել իր պաղարիւնութիւնը:

– Ատենը ուշ է, – կմկմաց:

– Նստի՛ր, կ'ըսեմ քեզի, – պոռաց Տրդատ ալ աւելի խիստ ձեւով մը, – մինչեւ հիմա դիմակով խօսեցանք, քիչ մըն ալ դիմակները վար խօսինք...

Արշակ այս խօսքերը լսելուն պէս հասկցաւ կացութիւնը եւ արագ շարժումով մը գրպանէն ըէվոլվէր մը հանեց, բայց երիտասարդը արդէն պատրաստ էր այդ շարժումին եւ իսկոյն բռնեց զինեալ ձեռքը ու խլեց ըէվոլվէրը, մինչ միւս ընկերը լրտեսին կը փաթթուէր՝ անոր բազուկները անշարժութեան մատնելով:

Տրդատ ըէվոլվէրը գրպանը դնելէ ետքը փութաց խուզարկել Արշակին վրայ – գըլուխը՝ տեսնելու համար, թէ ուրիշ զէնք ունէ՞ր:

– Կրնաս թողուլ թեւերը, – ըսաւ իր խուզարկութիւնը աւարտելէ ետքը իր ընկերոջ:

– Հիմա նստէ՛, ու տեսնուինք:

Արշակ հասկցաւ, որ ծուղակը ինկած էր եւ համակերպեցաւ իր ճակատագրին:

Բազմոցին վրայ նստաւ:

– Հիմա որ ըէվոլվէրդ առինք ձեռքէդ, – ըսաւ Տրդատ, – կը յուսամ, որ խելօք կը նստիս:

– Արդէն խելօք նստած էի, – պատասխանեց Արշակ:

– Ըէվոլվէրը առինք, բայց տակաւին ուրիշ զէնք մը կը մնայ քովդ, – շարունակեց երիտասարդը, – խրատ կուտամ, որ այդ զէնքդ գործածելու փորձ չընես:

– Ի՞նչ զէնք, – հարցուց Լրտեսը զարմացած, – դուն հիմա վրաս խուզարկեցիր եւ տեսար, որ ուրիշ զէնք չկար վրաս:

– Այո՛, զէնք մը ունիս, որ վրայէդ չեմ կրնար առնել. այդ զէնքը քու ձայնդ է, հասկցա՞ր, հիմա թերեւս փորձուիս պոռալ, կանչել ու այսպէս դրացիներուն ուշադրութիւնը հրաւիրել, գիտցած ըլլաս, որ եթէ քիչ մը ձայնդ բարձրացնես՝ գըլուխդ կը պայթեցնեմ ատրճանակի հարուածով մը:

– Հասկցայ, բայց չեմ կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ այս կերպով կը վարուիք հետս, արդեօ՞ք այն ծառայութեան համար, զոր քիչ մը առաջ ուզեցի քեզի մատուցանել:

– Քու ծառայութեանդ պէտք չունինք, – գոչեց Տրդատ, – եւ գիտենք անոնց արժէքը:

– Ուրեմն կը կասկածի՞ս իմ անկեղծութեանս վրայ:

– Այո՛, կը կասկածիմ եւ իրաւունք ունիմ կասկածելու:

– Ի՞նչ ապացոյց ունիս, – հարցուց Լրտեսը, որ ամբողջ խորամանկութիւնը ժողված էր օձիքը ազատելու համար այն անտանելի կացութենէն, ուր ինկած էր:

(Շար. 87)

(Շար. Ա. էջէն)

եւ արդէն իսկ Թուրք սպաներու պատուիրակութիւն մը Ցլորիտա կը գտնուի յատուկ առաքելութեամբ: Մահմետական միակ սպաներն են, որոնք խորհրդակցութեան հրաւիրուած են, կը շեշտէ վարչապետ Էճէվիթ:

Թղթակիցը կը յիշեցնէ որ Թուրքիա հինէն ներկայ եղած է կեդրոնական Ասիա: 1919-էն իսկ, Ամանուլլա արքան կոչ ըրած է Թուրք սպաներու արդիականացնելու համար աֆղան բանակը: Անգարայի ազդեցութիւնը աւելի շեշտուած է բարենորոգիչ Թագաւորին անկումէն ետք 1980ին, աֆղան գաղթականները ծագումով Թիւրքմէն կամ ուզբեկ գրկաբաց ընդունուած են Անգարայի կողմէ: 90-ական Թուականներուն, Խորհրդային Միութեան քայքայումէն եւ կեդրոնական Ասիոյ Հանրապետութիւններուն ծնունդէն ետք փանթուրանիզմը նոր զարկ ստացած է: Դիւանագիտական, առեւտրական յարաբերութիւնները սերտացած են, Անգարա զինամթերք կը հայթայթէ Տաշքենտի:

Թուրքիոյ մէջ, շատեր կը խորհին որ ամերիկաբրիտանական գործողութիւնները առիթ են որ Թուրքիա ոտք դնէ շրջանին մէջ: «Ռոքի' Թուրքիան» կը յորդորէր ծայրայեղ աջի մօտ «Օրթատողու» օրաթերթը Հոկտեմբեր 18-ին եւ կը բացատրէր որ Աֆղանիստանի պատերազմին հետ, արեւմուտք արշաւանքի ձեռնարկեց շրջանին մէջ, մինչ Թուրքիա կը մոռնայ Թուրք Հանրապետութիւնները: Միւս կողմէ, սակայն, եթէ նոյնիսկ, Խորհրդարանը հրովարտակով մը արտօնեց որ Թրքական զօրք ղրկուի արտասահման, Պաշտպանութեան նախարարը ճշդեց որ որեւէ ձեւով չէր նշանակեր որ մասնակից է հակամարտութեան: Էճէվիթ ալ յայտարարած է որ «օտար զօրքերու ցամաքային գործողութիւնները դժուար կ'ըլլան, բայց, աֆղան ընդդիմութիւնը կրնայ յաջողութիւն արձանագրել»: Ուրեմն, Անգարա կը պաշտպանէ Հիւսիսի Զինակցութեան դատը եւ իր միջնորդութիւնն ալ կ'առաջարկէ: Թուրք մամուլը կը Թելադրէ որ 50-էն 800 զինուորականներ ղրկուին մարզելու համար Զինակցութեան մարտիկները:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐԸ ոչ մէկ կարեւորութիւն կուտան Միացեալ - Նահանգներու եւ Եւրոպական Միութեան հանդարտութեան կոչերուն եւ բանակը գրաւած է արդէն Այսրյորդանանի բազմաթիւ քաղաքներ: Իսրայէլի բանակին գործողութիւններու հետեւանքով, շաբաթավերջին (Հոկտեմբեր 20 - 22) 24 Պաղեստինցիներ սպաննուած են: Հոկտեմբեր 21-ին, Պաղեստինեան Իշխանութիւնը «օրէնքէ դուրս» հռչակեց Պաղեստինի Ազատագրութեան ժողովրդական ճակատը, որ տէր եղած էր Զբօսաշրջութեան նախարարին սպանութեան: Առաջին անգամն է, 1995ի Օսլոյի համաձայնագրէն ի վեր, որ իսրայէլեան բանակը միաժամանակ կը ներխուժէ Ռամալլահ, Նապլուս, Բեթղեհէմ, Ճենին, Թիւլքարէմ եւ Քալքիլիա եւ շրջափակումի կ'ենթարկէ այս բոլոր քաղաքները, որոնք, սկզբունքով, պաղեստինեան հակակշռի տակ են: Բեթղեհէմի մէջ, հրասայլերը յառաջացած են մինչեւ քաղաքին կեդրոնը եւ կրակոցներէն վնասուած է նաեւ Ս. Ծննդեան Մայր Եկեղեցին: Պապը դատապարտած է «բիրտ ուժը, մահուան ճամբայ, որ կ'անպատուէ Աստուծոյ անունը»: Խոր տխրութեամբ, տեղեկացայ, կ'աւելցնէ Յովհ.-Պօղոս Բ., ցաւալի եւ մտահոգիչ լուրերուն որոնք կուգան Բեթղեհէմէն: Իսրայէլի բանակին բանբերը կրկնած է որ իր ուժերը պիտի մնան այնքան ատեն որ պէտք է, այսինքն ցորչափ պաղեստինեան Իշխանութիւնը պէտք եղածը չընէ արգելք հանդիսանալու համար որ այդ քաղաքներէն ահաբեկիչներ ճամբայ ելլեն:

ՎՐԱՍՏԱՆ, Հոկտ. 18-ին, ամբաստանած է Ռուսաստանը, որ կը բռնաբարէ իր օդային սահմանները, յայտարարելով որ ռուսական օդանաւեր քննութիւններ կատարած են լեռնային շրջան մը, Աբխազիոյ անջատողական եւ Վրաստանի սահմանին վրայ: Վրաստանի Պաշտպանութեան նախարարը յայտարարած է որ ռուսական չորս օդանաւեր Թռիչք կատարած են Նեստխայի եւ Կոդորի կիրճերու շրջանը նախքան Ռուսաստան վերադառնալը. վեց ուրիշներ ալ նոյն ուղին առած են: Ռուսաստանի օդային բանակը հերքած է:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կապոյտ Խաչի Մարսէյլի շրջանի Պուլվար Օտտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ, Կիրակի, Հոկտեմբեր 28, Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ մէջ, 7 ռիւ Արթիւր Միշօ, 15-րդ Թաղամաս իր ողբացեալ ընկերուհիներու յիշատակին:

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

La M.C.A. a le plaisir de vous inviter
à la
RENCONTRE
avec
ՄՈՎՍԷՍ ՊՉԱՔՃԵԱՆ
MOVSES BETCHAKDJIAN
à l'occasion de la parution
de son dernier ouvrage
«Մինչեւ վերջին արեւներու»
«JUSQU'AU DERNIER DES SOLEILS»
le Vendredi 26 octobre à 20h45
Salle S. Minassian, M.C.A.
Présentation et analyse de l'ouvrage :
NORA BAROUTDJIAN
Avec l'aimable participation de :
ARA KRIKORIAN
et du Père HAROUTIOUN BEZDIKIAN
Accompagnement musical
à la guitare de lectures
par **Ohannès DEMIRDJIAN**

9, rue de Madrid — 94140 Alfortville
☎01.43.76.55.89 — Fax 01.43.78.66.64
e-mail : MCA.ALFO@wanadoo.fr

CONCERT

à l'occasion du 1700e anniversaire
de la conversion de l'Arménie
au christianisme
le samedi 27 octobre à 20h30
dans la Cathédrale Sainte-Croix
de Paris des Arméniens Catholiques,
Au profit de l'école
Sainte-Croix du samedi
MOURAD AMIRKHANIAN
(Basse)
chante : **Haendel, Verdi, Bellini, Fauré, Beethoven, Schubert, Komitas, Babadjanian, Tchaïkovsky, Rachmaninov, Dikranyan, Hagopian, Spentiaryan**
accompagné au piano
par **Johan Struyve.**
Entrée: 13, rue du Perche
(angle rue Charlot) Paris 3e.
Participation aux frais: 60 F
Réservations: Tél.: 01 44 59 23 50
Fax: 01 44 59 23 54.
Métro: République, Filles du Calvaire.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS
ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)
կը ներկայացնէ
Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը
«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆԸ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»
Գինեձօն երեկոյթի աւարտին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SOIREE DANSANTE
organisée par
La Section «TER-DAVTIAN» de la Croix Bleue des Arméniens de Chaville
le Samedi 27 octobre à 20 heures 30
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

— ● —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés. Dîner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— 01. 42. 36. 33. 73 (la journée)
— 01. 46. 58. 03. 17 (le soir)

— ● —

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Շրջ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տէր եւ Տիկին Ժիլպէր Խաչատուրեանէ 600 ֆրանք Յովհաննէս Տօնապետեանի մահուան առթիւ:

***

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կրօնական Ընկերակցութեան Վարչական Խորհուրդը Եկեղեցւոյ պայծառութեան համար շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները. -

Տէր եւ Տիկին Միքայէլ Յակոբեան 10.000 Ֆր., Պր. Ռոպէր Գափամաճեան 600 Ֆր., Բժիշկ եւ Տիկին Արամ Տանտիկեան 1000 Ֆր., Պր. Բենիամին Գարակէօզեան 500 Ֆր., Օր. Անի - Ռոզ Գանճեան 1000 Ֆր., Տէր եւ Տիկին Արամ Ֆրէնքեան 600 Ֆր., Տիկին Նուարդ Պօյաճեան, Տէր եւ Տիկին Ալպէռ Մոսկոֆեան 500-ական Ֆր., Իրաւաբան Տիկին Էվլին Աւագեան 1000 Ֆր., Տէր եւ Տիկին Ստեփան Տամլամեան 500 Ֆր., Տիկին Ռէյմոնտ Պրոնէք 3000 Ֆր.:

Տէր եւ Տիկին Լոռան Մուքէ՝ իրենց աղջկան՝ Ընծայի մկրտութեան առթիւ 500 Ֆր.:

Հայկ Ռէճէպեան - Սթեֆանի Գահվէճեան պսակադրութեան առթիւ՝ Պր. Ժագ Գահվէճեան 1000 Ֆր.:

Տիկին Հէլէն Քէպաճեան ամուսնոյն՝ Մարտիրոս Քէպաճեանի մահուան քառասունքին առթիւ՝ 2000 Ֆր.:

Մարտիրոս Քէպաճեանի յիշատակին՝ Պ. Սարգիս Մխիթարեան 400 Ֆր.:

Էվլին Շահմուրատեանի յիշատակին՝ Ժինէթ Լըգլէր - Լէվի 1000 Ֆր.:



STK®

Fabriqué & Distribué par Cepovett S.A
150, ancienne route de Beaujeu
GLEIZÉ BP 421
69653 VILLEFRANCHE/SAÔNE CEDEX
Tél : 04 74 62 47 00 - Fax : 04 74 68 20 09

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 24
MERCREDI
24 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1·400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1·650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·281 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20·281

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 22 / 23)

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ

Նախագահ Շեվարնածէի Երեւան այցէն նախօրեակին վրացական լրատու գործակալութիւնը հարցազրոյց մը ունեցած է Ռ. Քոչարեանի հետ: Այդ առթիւ պատասխանելով Աբխազիոյ վերջին պատահարներուն ու շրջանի Հայերուն կացութեան մասին հարցումին, ան ըսած է թէ Վրաստանի նախագահին հետ այդ երկրին հայութեան խնդիրները քննարկելու աւանդութիւն ձեւաւորուած է եւ կը գտնուին բարդ հարցերու լուծումներ: Ռ. Քոչարեան պատրաստակամութիւն յայտնած է հայաբնակ շրջաններու ընկերատնտեսական խնդիրներու լուծումին իր աւանդը ներդնելու: Ան վրացեւաբխազական հակամարտութեան կարգաւորման մէջ Հայաստանի կառուցողական մասնակցութիւնը չէ բացառած, բայց շատ հաւանական չէ նկատած շրջանին մէջ խաղաղապահ ուժերու հայկական մասնակցութիւն մը:

Ինչ կը վերաբերի Վրաստանէն ռուսական զօրքը հանելու հարցին, նախագահ Ռ. Քոչարեան ըսած է թէ ատիկա վրացեւռուսական յարաբերութիւններու ոլորտին պատկանող նիւթ է, այսուհանդերձ, Հայաստան շատ լաւ կը հասկնայ այդ զօրքին ներկայութեան Ջաւախքի հայութեան համար ունեցած կարեւորութիւնը. ռուսական այդ զօրքը ոչ միայն տեղացի հայութեան աշխատանքի ապահովութիւն է, այլ նաեւ կեանքի, քանի որ «Մարդկանց վրայ ազդում է ուղղակի Թուրքիայի հետ սահմանագծին ապրելու գործօնը, հաշուի առնելով այդ երկրի հետ մեր պատմական անցեալը»:

Որպէս Վրաստանի հետ գործակցութեան յաջող օրինակ, Ռ. Քոչարեան յիշած է Հայաստանէն ելեկտրականութիւն տալու Աչոցք – Նինոծմինդա գիծին շինութիւնը:

Ռ. Քոչարեանի ուղղուած հարցումներու ընթացքին նիւթ եղած է Վրաստան – Թուրքիա եւ Հայաստան – Ռուսաստան ռազմական գործակցութիւնը: Ինչ կը վերաբերի առաջինին, Հայաստանի նախագահը ըսած է թէ ամէն երկիր իր գործակիցները ընտրելու իրաւունք ունի եւ կը կարծէ որ Հայաստան – Վրաստան խոր յարաբերութիւնները, երկու ժողովուրդներու պատմական կապերը ենթադրել կու տան որ երկուքն ալ երրորդ երկիրներու հետ իրենց յարաբերութիւնները չեն հիմներ ի վնաս իրարու շահերուն: Վրաստան – Թուրքիա ռազմական ներկայի գործունէութիւնը Հայաստանի լուրջ մտահոգութիւն չի պատճառեր, թէեւ «հասկնալի պատճառներով» մասնաւոր ուրախութեան աղբիւր ալ չէ: Իսկ Հայաստանի մէջ ռուսական ռազմական ուժերու ներկայութիւնը Ռ. Քոչարեան կ'ուզէ որ շրջանը կայունացնող ազդակ նկատուի:

Շրջանին մէջ ծրագրուած Բաքու – Թիֆլիս – Ճէյհան եւ Բաքու – Թիֆլիս – Էրզրում խողովակաշարերուն իրականացման համար Ղարաբաղի խնդրին կարգաւորման անհրաժեշտութեան մասին հարցումին պատասխանելով Ռ. Քոչարեան կ'ըսէ թէ նման մեծ տարողութեամբ ծրագրերու համար էական է շրջանին կայունութիւնը. իսկ Ղարաբաղի հարցը եւ չկարգաւորուած այլ հակամարտութիւններ լուրջ խոչընդոտ կ'ըլլան թէ՛ այդ խողովակաշարերուն, թէ այլ ծրագիրներու համար:

Զրոյցին վերջին մասին մէջ նիւթ կ'ըլլայ նախագահ Ալիեւի հետ ուղղակի երկխօսութիւնը. այդ մասին Ռ. Քոչարեան կ'ըսէ թէ ներկայիս այդ հանդիպումները շատ արդիւնաւոր չեն, խաղաղ գործընթացին ծանրութեան կեդրոնը հակած է Մինսկի խումբին նախագահներուն կողմը: Ուղղակի երկխօսութիւնը կրնայ վերսկսիլ երբ կրկին անհրաժեշտութիւն ծագի:

***

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՐԵՒԱՆ Կ'ԱՅՑԵԼԷ

Նախագահ Ռ. Քոչարեանի հրաւէրով, Հոկտեմբեր 23-ին Երեւան կ'երթայ Վրաստանի նախագահը: Իրեն կ'ընկերանան Արտաքին գործերու, Ուժանիւթի, Փոխադրութեան եւ Առեւտուրի, Արդարութեան, Գիւղատնտեսութեան, Պետական եկամուտներու նախարարները, Խորհրդարանի անդամներ, Ջաւախքի, Ախալքալաքի, Նինոծմինդայի շրջաններու ղեկավարներ, պաշտօնական այլ դէմքեր: Նոյն շրջանին Հայաստան կ'երթան վրացի գործի մարդիկ, լրագրողներ: Այցը կը տեւէ երկու օր:

Իր այցին նախօրեակին, նախագահ Է. Շեւարնածէ ձայնասփիւռէն արտայայտուած է, ըսելով որ Հայաստան գտնուած օրերուն յատուկ ուշադրութեան նիւթ կ'ըլլան շրջանային գործակցութեան հարցերը, երկկողմ յարաբերութիւնները: Ան ըսած է. «Բարեկամ Հայաստանը շրջանային գործակցութեան եւ հակամարտութիւններու խաղաղ կարգաւորման ընթացքին մէջ առաւել գործօն դեր կատարելու հսկայական ներուժ ունի»:

***

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՓԱՐԻԶ ԿԸ ԲՈՒԺՈՒԻ

Վարչապետ Ա. Մարգարեան Հոկտեմբեր 22-ին հասած է Փարիզ, սրտի վիրաբուժութեան յաջորդած շրջանի մտահոգութիւններով եւ նոր ախտաճանաչումի անհրաժեշտութեամբ: Վարչապետի պարտականութիւնները առժամապէս յանձնուած են արտադրական ենթակառուցածքներու գործակցութիւնը համակարգող նախագահ Դ. Զադոյեանի:

***

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 21-ին Արագածոտնի եւ Կոտայքի մէջ երեսփոխանական պարապ աթոռներու համար ընտրութիւն կատարուած է: Արագածոտնի մէջ քուէներու մեծամասնութիւնը ստացած է Դաւիթ Երիցեան (Հ.Յ.Դ.), Կոտայքի մէջ Գարեգին Կարապետեան (Հանրապետութիւն):

ԱՐԱՄ Ա.Ի ԿԻՊՐՈՍ ԱՅՑԸ

Կիպրոսի թեմին տուած հովուապետական իր այցին առիթով Հոկտեմբեր 22-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը այցելութիւն մը տուած է նախագահ Կ. Քլերիտիսին: Կաթողիկոսը Լիբանանի նախագահին ողջոյնը հաղորդած է անոր, ապա ժամու մը չափ տեւած է հանդիպումը: Արծարծուած են Կիպրոսի հարցին, կիպրահայ համայնքին, Հայաստանի ու Լիբանանի ներկայ կացութեան նիւթերը: Նոյն օրը Արամ Ա. հանդիպում ունեցած է Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Տ. Խրիստոֆիասի հետ:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

Ա Ֆ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

ՌՈՒՄԲԵՐԸ ԿԸ ՏԵՂԱՆ ՀՈՍ ՈՒ ՀՈՆ

ԱԾԽԱԽՏԷ ԵՐԿՈՒ ՄԱՀ ԵՒՍ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

Ամերիկացիք կը շարունակեն ռմբակոծել, բայց, միշտ թիրախներու սխալներ կան եւ անմեղ զոհեր: Հոկտեմբեր 22-ին, Թալիպանները յայտարարեցին որ ռումբեր ինկած են Հերաթի (երկրին արեւմուտքը) հիւանդանոցին վրայ եւ առնուազն 100 մեռեալ կայ: Ամերիկեան Պաշտպանութեան Նախարարութիւնը ոչ հաստատած է լուրը, ոչ ալ կրցած է հերքել: Թալիպաններու համաձայն, ցարդ աւելի քան հազար հոգի մեռած է ամերիկեան ռմբակոծութիւններէն: Փաքիստանի աֆղան դեսպանը վերոնշեալ հաշուեկշիռը տալով, շեշտած է որ Ամերիկայի բիրտ եւ անմարդկային դիմագիծը բացայայտ է: Կասկած չկայ, ամէն պարագայի մէջ, որ սխալները կը բազմանան: Հոկտ. 22-ին, ռմբաձիգ օդանաւ մը որու թիրախն էր Թալիպանական հակակշռի տակ գտնուող ճակատը, սխալմամբ ռումբերը արձակած է աֆղան ընդդիմութեան, այսինքն Հիւսիսի Զինակցութեան ուժերուն վրայ: Զոհ չկայ: Ընդհանուր ձեւով այս ռմբակոծութիւնները կը դատապարտուին, ընդդիմադիր Աֆղան մը չի վարանիր ըսելու թէ ամերիկեան գործողութիւնները կը վնասեն աֆղան ժողովուրդին: Ուրիշ մը կ'աւելցնէ. – «Կացութիւնը գէշ է: Երկու շաբաթ ետք, շատ աւելի զոհ կը տեսնենք բնակիչներուն մէջ քան Թալիպաններու»:

***

Ուաշինկթընի մէջ, Թղթատարի երկու պաշտօնեաներ մեռած են ածխախտէ, ինչ որ քիչ մը աւելի կը մթագնէ մթնոլորտը: Անկարելի է խուճապին առաջքը առնել: Երկուքն ալ նոյն ախտանշանները ներկայացուցած են, շնչարգելութեան գետնի վրայ: Այս մահերէն ետք, Թղթատարի պաշտօնէութիւնը աւելի մտահոգ է, քանի ենթակաները պարզապէս պահարանի հետ շփում ունեցած են եւ ոչ փոշիին:

***

Եւրոպական Միութիւնը իր զօրակցութիւնը արտայայտելու համար, դիմած էր Ուաշինկթընի, հարցնելով թէ ի՞նչպէս կրնան օգնել: Ուաշինկթըն չէ վարանած 47 պահանջներ ներկայացնելու, առանց նոյնիսկ քաշուելու միջամուխ ըլլալէ ուրիշ երկիրներու ներքին գործերուն եւ նկատի չառնելով իսկ որ իրմէ առաջ, եւրոպական երկիրները պայքարած են ահաբեկչութեան դէմ:

***

– Միացեալ – Նահանգներու փոխ – նախագահը՝ Ռիչըրտ Չէնէ յայտարարած է Ուաշինկթըն Փոսթ օրաթերթին «Պատերազմ մըն է որ վախճան պիտի չունենայ, գոնէ մեր ողջութեան»: Զօր. Մայըրս ալ աւելցուցած է «Աֆղանիստանը պզտիկ պատառ մըն է միայն», ակնարկելով Իրաքի դէմ գործողութիւններու:

***

– Քանտահարի վրայ ինկած ռումբերու զոհ գացած է մոլլա Օմարի 10 տարու մանչուկը: Ծանրօրէն վիրաւորուած, կարելի չէ եղած կեանքը փրկել:

***

– Ճ. Պուշ յաւելեալ մէկ միլիառ տոլար շնորհած է ՍԻԱ.-ի միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին համար: Այս նոր վարկը թոյլ պէտք է տայ ապահովելու գաղտնի գործողութիւններ ալ – Քաի–

(Շար.ը Դ. էջ)

Ե Ւ Ր Ո Պ Ա Կ Ա Ն
Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ր Ա Ն

ՆՈՐ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԱՌԱՋԱՐԿ Ա. ԼԱՄԱՍՈՒՐԻ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ

Եւրոպայի միութեան Թուրքիոյ անդամակցութեան մասին Ա. Լամասուրի տեղեկագրին որ կը սպասուի որ քուէարկութեան դրուի Հոկտեմբեր 24-ին, Հոկտեմբեր 18-ին եղած են նոր յաւելուածներու առաջարկներ: Անոնցմէ երկուքը առաջարկուած են Շառլ Փասքուայի կողմէ, երրորդը խմբակցութեան մը: Առաջին երկուքը կը վերաբերին տեղեկագրին 16-րդ յօդուածին ուր Թուրքիոյ փոքրամասնութիւններու ինքնութեան ազատ արտայայտութեան իրաւունքը նիւթ կ'ըլլայ. երրորդը առընչուած է 31-րդ յօդուածին որ կ'ողջունէ հայեւթուրք հաշտութեան խումբին կազմութիւնը:

Տեղեկագրին 16-րդ յօդուածին որպէս Բ. եւ Գ. յաւելուած կ'ըսուի.

«appelle la Turquie à reconnaître le génocide des Arméniens et soutient toutes les initiatives civiles et politiques qui œuvrent dans ce sens, en Turquie, comme ailleurs»;

«dans cet ordre d'idées, prie instamment la Turquie de prendre toutes mesures nécessaires pour instaurer un climat favorable de stabilité dans l'ensemble de la région du Caucase; lui demande à cet égard d'établir des relations diplomatiques et politiques avec l'Arménie afin de jouer un rôle impartial dans la restauration du dialogue entre l'Azerbaïdjan et l'Arménie, et considère que la levée du blocus de l'Arménie constitue une première mesure concrète sur cette voie».

Իսկ 31-րդ յօդուածին համար առաջարկուած յաւելուածը հետեւեալն է.

«réitère la demande adressée dans sa résolution du 15 novembre 2000 au gouvernement turc et à la Grande Assemblée nationale turque d'accroître leur soutien à la minorité arménienne —qui représente une part importante de la société turque— notamment par la reconnaissance publique du génocide que cette minorité a subi avant l'établissement d'un Etat moderne en Turquie; soutient par ailleurs l'initiative civile prise par un groupe d'anciens diplomates et académiciens turcs et arméniens afin de parvenir à une appréciation commune du passé; est convaincu qu'avec d'autres, cette initiative devrait déboucher sur une normalisation des relations entre les communautés et les Etats concernés».

ՄԵՐ ՀԱՐԱԶԱՏ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Հանճարեղ Պետրոս Դուրեան...

Ժողովրդային իմաստութիւնը հոն գանձարան մըն է գաղափարներու կամ մտածումներու, որոնք մեզ կը լուսաբանեն մեր սեփական տրամաբանութեան մէջ, կ'օգնեն մեզի առարկայականօրէն գնահատելու կեանքի մէջ ճշմարտութիւնը, մեզ առաջնորդելով ուղիղ երթուղիի վըրայ, եւ այսպէս, վերջացնելու մտածելու անձնական ճշմարտութեան։

Ամէն անգամ, երբ անհատի մը կամ անհատներու հաւաքականութեան մը մօտ կը հաստատուի մտածումի մը ճշմարտացիութիւնը, յաճախ յանգաւոր կամ կըշռութաւոր ձեւով տարածուած ասոյթներով ալ, ժողովրդային այս իմաստութիւնը կը վերանորոգուի՝ լաւ պահպանուած, ինքնատիպ եւ գործածուած ժառանգութեան մը նման, մէկ սերունդէն միւսը փոխանցուած։ Այսպէսով է որ ան կը յաւերժանայ։

Ժողովրդային իմաստութիւնը կ'արտայայտուի երկիրներու եւ ժողովուրդներու բարքերուն եւ լեզուներուն ու դաւանական չափանիշներուն նրբերանգներով, որոնք յարաբերական կը մնան, յատկացնելով ձեւական տարբերութիւն մը միայն։ Արդարեւ, տարբերութիւնը կը կայանայ ձեւին մէջ միայն, խորքը կը մնայ նոյնանման։

Այս գաղափարակցութիւնը կ'իրագործուի ժամանակին մէջ, այսինքն՝ միեւնոյն ժամանակ, բայց նաեւ ժամանակի երկայնքին, կամ ժամանակէն անդին, այսինքն՝ տարբեր ժամանակներու մէջ։ Առաջին հանգրուանի վրայ անհրաժեշտ է որ նոյնութիւն մը գոյութիւն ունենայ երկու ձեւով տարազուած մտածումներուն միջեւ։ Բայց այս զուգորդութիւնը կատարելութեան մակարդակի կը հասնի, եթէ այդ մտածումը կ'արտայայտուի միեւնոյն բառերով, երկու կամ աւելի անձերու կողմէ, որոնք կ'ապրին կամ ապրած են տարբեր երկիրներու եւ տարբեր ժամանակներու մէջ, ու կը պատկանին տարբեր ազգութեանց, ապա եթէ անոնց միջեւ ընթերցանութեան ճամբով ոչ մէկ կապ կրնայ կասկածի դուռ բանալ։ Պարզ՝ երկու բացարձակ անծանօթներ, տարբեր երկիրներու եւ տարբեր ժամանակներու մէջ ապրած, կ'ըսեն նոյն բանը, նոյն բառերով։ Կ'ըսենք՝ ասիկա հանճարին փայլատակումն է։ Միայն հանճարներն են որ կը հասնին այդ մակարդակին, կը հանդիպին իրարու։

Այդ պարագային իրաւացիօրէն կարող ենք վկայակոչել Ֆրանսական սա չատ ծանօթ խօսքը, – «Գեղեցիկ մտածումները իրարու կը հանդիպին» (1)։ Եւ իրողութիւնը պայծառօրէն կը հաստատուի համախմբումովը երեք հռչակաւոր անուններու, – Ժան Ժիոնօ, Պետրոս Դուրեան եւ Ֆրանսուա – Ռընէ տը Շաթօպրիան։ Առաջինը կ'ըսէ, – «Անժելօ յանկարծ հարց տուաւ ինքնիրեն, թէ, տեղ մը՝ տիեզերքին խառնուած, չկա՞ր արդեօք ահագին ծաղր մը» (2)։

Մենք յիշելու ենք որ այսպիսի մտածում մը ունեցեր է Պետրոս Դուրեան «Տրտունջք» վերնագրեալ իր նշանաւոր քերթուածին մէջ, – «Աստուծոյ ծաղրն է Աշխարհ ալ արդէն···» (3)։ Ծաղրի կամ հեղնանքի նոյն գաղափարը կը գտնենք Շաթօպրիանի մօտ եւս, – «Ենթադրեցէք որ գոյութիւնը Երկնքի ծաղրը նկատելով···» (4)։

Պարագան գրեթէ բացառիկ է – թէ երկու կամ երեք գրողներ, ժամանակ – տարածքին մէջ իրարմէ հեռու, կ'արտայայտուին նոյն բառերով մարդկային միտքը ի սկզբանէ չարչրկող բնազանցական հարցի մը շուրջ, մարդու գոյութիւնը տիեզերքի մէջ։ Կրնանք վստահ ըլլալ որ հայ բանաստեղծը երբեք աչքերու առաջ չէր ունեցած Շաթօպրիանի գիրքը, որ կենսագրութիւնն է ԺԷ. դարուն ապրած Ֆրանսացի հոգեւորականի մը։

Այսպէս կը ստուգուի անհերքելի բնոյթը ժողովրդային իմաստութեան, թէ գեղեցիկ մտածումները անպայման իրարու կը հանդիպին, եւ հանճարներն են միայն որ կը հասնին այդ մակարդակին։ Թող ներուի հոս աւելցնել առանց ազգային մեծամոլութեան դոյզն զգացումի թէ լաւագոյն տարազումը կը պատկանի անառարկելիօրէն Պետրոս Դուրեանին։

– Հանճարե՛ղ Պետրոս Դուրեան...

Ն. ԹՕՓԱԼԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) **«Dictionnaire des citations françaises»,** par Pierre Oster, p. 584, n° 11666, idée citée par Gustave Flaubert, Le Robert, 1993, **Paris.**

(2) **«Le Hussard sur le toit»,** par Jean Giono, ch. III, p. 296, Oeuvres romanesques complètes, Vol. IV, Bibliothèque de la Pléiade, NRF Gallimard, Paris.

(3) *Երկեր»*, Պետրոս Դուրեան, էջ 69 – 70, Տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1987, Անթիլիաս (Լիբանան)։

(4) **«Vie de Rancé»,** par François-René de Chateaubriand, p. 183, **Les Trésors de la Littérature,** Edition Le Grand Livre du Mois, juin 1998, Paris.

ԿԱՐԵՒՈՐ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ ՆՈՅՆ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

1700-ամեակի երկար առենէ ի վեր պատրաստուած տօնակատարութիւնները գրեթէ աւարտեցան փառաւոր հանդիսութիւններով։ Ամէն ինչ ընթացաւ ըստ ծըրագրի եւ հասաւ համեմատութիւններու, ուր կրօնական ապրումները իրենց հետ քշեցին աշխարհիկն ու քաղաքականն ալ։ Համահայկական խրախճանքը ոչ միայն աշխարհի ուշադրութիւնը հրաւիրեց փոքրիկ Հայաստանին ու անոր հեռաւոր ու մօտիկ անցեալի պատմութեան վրայ, այլ նաեւ բոլոր քրիստոնեայ երկիրները մասնակից դարձուց այս ուրախ եւ խորհրդանշական իրադարձութիւններուն։

Մե՛ղք որ միջազգային տօնակատարութիւններու ընթացքին պատուոյ տեղերը գրաւեցին եւ փառաւորուեցան պետական անձնակազմն ու բարձրաստիճան վեղարաւորները... յաճախ անարժանաբար։

Այո՛, մե՛ղք որ անարժանաբար, որովհետեւ՝

Պետութեան անբաւարար եւ անյաջող կառավարման հետեւանքով Հայրենիքի զաւակներուն կէսը արտասահմանէն՝ հետաեսիլի պաստառէն, կամ թերթերու էջերէն հետեւեցաւ արարողութիւններուն։

Կրօնական վերին իշխանութիւններու անտարբերութեան մեղքով աղանդաւոր դարձած ոչ արհամարհելի հայաստանաբնակ հատուած մը անտարբեր, նոյնիսկ արհամարհական կեցուածքով դիմաւորեց 1700ամեակի հանդիսութիւնները։

1700-ամեակը մասնաւորապէս յատկանշական կը դառնայ երբ նայինք մօտիկ անցեալին, ուր աւելի քան եօթը տասնեակ տարիներու ընթացքին խորհրդային իշխանութեան ենթակայ Հայաստանի բնակչութիւնը, օրէնքի եւ բռնութեան տակ, հեռու մնալով հանդերձ կրօնական դաստիարակութենէ եւ աւանդական սովորոյթներէ, իր մէջ պահած էր Աստուծոյ եւ Քրիստոսի հաւատքը ու առաջին առթիւ երբ վրայէն վերցաւ երկրի վարչակարգին բեռցուցած ճնշումը, դարձաւ դէպի իր դարաւոր եկեղեցին։ Այսպէս է որ յատուկ իմաստ մը առին 2001-ի տօնակատարութիւնները եւ ատով կ'արդարանայ այս դարադարձին տրուած արտակարգ կարեւորութիւնը։ Ուրիշ քրիստոնեայ երկիրներ ալ թերեւս սկսին տօնել իրե՛նց 1700-ամեակը, նոյնիսկ կարելի է աւելի փարթամ ու շռնդալից ըլլան հանդիսութիւնները, սակայն պիտի չըլլան նոյնքան արժանաւոր եւ խորիմաստ։

Անվարան կրնանք ըսել թէ մեր թոռներն ու ծոռները պիտի տօնեն քրիստոնէութեան պետական կրօնք ընդունման 1750 եւ 1800-ամեակներն ալ։

Բոլորովին տարբեր բնոյթի տարեդարձ մըն էր Հայաստանի անկախութեան 10-րդ տարեդարձը, որ բաղդատաբար անշուք անցաւ։ Մենք վարժուած էինք մեր պատանեկան տարիներուն արտասանուած հայրենաշունչ արտասանութիւններէ եւ ոտքերնիս գետին զարնելով «Կեցցէ՛ Հայաստան» պոռալու, «Սովետական ազատ աշխարհ Հայաստան» երգած առեն յուզումէն մեր ձայնին հետ մեր սիրտն ալ կը թողար։ Չէինք գիտեր որ «սովետական»ը հոմանիշ էր «ապազգային» ածականին։ Միամտօրէն հայրենիքը կ'արժեւորէինք պետական նուագախումբի, պետական երգչախումբի եւ պետական պալէի չափանիշով. Վիկտոր Համբարձումեանի, Արամ Խաչատրեանի, Տիգրան Պետրոսեանի նման անուններու համաշխարհային համբաւէն գինովցած՝ ներողամիտ հասկացողութեամբ կ'ընկալէինք կոլխոզներու, տրակտորներու եւ Լենիններու մուտքը հայաստանեան մեր բանաստեղծներու նորագոյն հատորներէն ներս։ Անգիտակ էինք թէ հոն, ազգային բնոյթ ունեցող ամէն արարք եւ ելոյթ հալածանքի ենթակայ էր եւ կը պարծենայինք մեր փոքրատարած Հայաստանի մեծ իրագործումներով։ Շատ ուշ պիտի սորվէինք որ հայ լեզուն, հայ մշակոյթը եւ հայ ինքնութիւնը ռուսամէտ հոսանքին դէմ թիավարելու անկարող, սկսած էին այլասերիլ եւ ձուլուիլ։

Վարդագոյն հորիզոններու շլացուցիչ լոյսին մէջ խռովք պատճառող մութ եւ սեւ կէտեր ալ նշմարելի դարձան համապատկերին վրայ, երբ բոլորովին անակընկալ կերպով ազատութիւնը եւ անկախութիւնը եկան որպէս երկնային պարգեւ։ Եկան առանց հերոսի եւ առանց հերոսամարտի։ Այնպէս ինչպէս ՄԱԿ-ի կամ ԱՄՆ-ու կողմէ սննդեղէնի եւ դեղօրայքի ծրարներ կը տեղային աղքատ, անօթի եւ յետամնաց ժողովուրդներու հողատարածքին վրայ։ Ոչ մէկ Հայու կամ օտար մեծ պետութեան անկ է պարծենալ վեց դարէ ի վեր կարօտով երազուած (երազուած բայց չսպասուած) այս անկախութիւնը ապահովելու պատիւը։ Այս Հանրապետութիւնը իր պատմութեան մէջ պիտի չունենայ Սարդարապատի դիւցազնամարտի մը, կամ անփառունակ նահանջներու էջեր։

Երկինքէն ինկած այս ազատութիւնը հանրաքուէով մը անկախ Հանրապետութեան վերածող, անոր առաջին քայլերը առաջնորդող ղեկավար իշխանութիւնը միջազգային գետնի վրայ ոչ արհամարհելի իրագործումներ ունեցաւ։ Բայց Լեռնային Ղարաբաղի ազատագրման ի խնդիր դժուար պատերազմ մը շահելով հանդերձ չկրցաւ գոհացնել իր ժողովուրդը։ Անոր ցաւերուն անկարեկիր կառավարական գործիչներու շահադիտութիւններուն պատճառով, իշխանութիւնը կորսնցուց այն վստահութիւնը զոր կը վայելէր սփիւռքեան կարեւոր շրջանակներու մօտ։ Հինը չէզոքացնելով եւ դիւրին խոստումներով գործի գլուխ անցած նոր իշխանութիւնն ալ դժբախտաբար շատ բան չունի պարծենալու։

Այս պայմաններուն տակ տօնուած Գ. Հանրապետութեան հանդիսութիւնները ի՞նչ կրնային ունենալ բացառիկ։ Դասական խօսքերով արտասանուած ճառեր, զօրանդէս, տնտեսութեան աճի նշոյլներու հաւաստիք եւ ապագայի լուսաւոր հեռանկար. այս բոլորը պատսպարուած՝ հայրապետական աղօթքի եւ մաղթանքի քաջալերական եւ հոգեպնդող խօսքերու ետին։

Հարկա՛ւ թէ 10-րդ տարեդարձը պատուաբեր հանգրուան մը համարելու համար ճարտար բացատրութիւններ կարելի է գտնել եւ Ա. Հանրապետութեան երկու տարիի նման կարճատեւ գոյութեան հետ բաղդատելով ներկան, որոշ գոհունակութիւն մը զգալ։ Սակայն վաղուան պատմաբաններուն համար թերեւս աւելի դիւրին ըլլայ արդարացնել Ա. Հանրապետութեան ղեկավարներուն անճար վիճակը, քան՝ այսօրուան իշխանութիւններուն ընթացքը, որոնք որպէս պատերազմի յաղթական կողմ մասնակցած են հաշտութեան բանակցութիւններու, սակայն նստած ըլլալ կը թուին պարտուածի աթոռի վրայ եւ որոնք կը ջանան որոշ չափով դիմադրել իրենց պարտադրուած հաշտութեան նուաստացուցիչ պայմաններուն եւ նուազագոյն զիջումով պրծիլ։

***

2001-ի այս ամսուան մէջ ուրիշ տարեդարձ մըն ալ պիտի նշէ Հայաստան։ Այդ օրը սակայն տօնակատարութիւն չէ որ տեղի պիտի ունենայ, այլ՝ յիշատակի ոգեկոչում։ Հոկտեմբեր 27-ի երկրորդ տարելիցին ճառախօսները պիտի ըլլան լրագրողները եւ հաւանաբար հոգեհանգիստ մըն ալ ըլլայ եւ այդ առթիւ Գարեգին Բ. Հայրապետ իր մխիթարական խօսքով ամոքել ջանայ սգակիրներու կրկին արիւնած սիրտերը եւ համբերութիւն պատուիրէ։

Անշուշտ՝ անխմանալի այս ոճիրներէն ու զոհերու ոգեկոչումէն, նշանակալի կէտ մը կայ, որ պէտք չէ մոռացումի մատնուի։ Այս մէկը յաջողութիւնն է այս դատը վարող կազմին, որ կրցաւ երկու տարի երկարել, ձգձգել մեծ դատ մը որ ունի հարիւրաւոր վկաներ, որուն ոճրագործները չեն ծածկեր իրենց կանխամտածուած արարքը, ամենայն անամօթութեամբ եւ անպատկառութեամբ կը պարզեն յետին միտքն ալ, որ էր իշխանութիւնը փոխել։

Պիտի մաղթէի որ այդ տարեդարձին օր Հանրապետութեան Նախագահն ալ ներկայ ըլլար եւ այլեւս հանրութիւնը լուսաբանէր այդ դէպքին յաջորդող գիշերուան խօսակցութիւններուն կամ սակարկութիւններուն մասին։ Գիտենք թէ ինքն էր որ յաջողած էր համոզել այդ դաւաճանները, որպէսզի յանձնեն իրենց զէնքերը եւ նոր զոհեր չբարդուին ութ խորհրդարանականներու թիւին վրայ։ Այդ օրը ամէնքս գնահատած էինք նախագահին համոզելու ուղղամտութիւնը. որուն տուեալները մինչեւ օրս անծանօթ մնացած են։ Կարծես թէ այլեւս առենը եկած է որ Հայերը տեղեակ ըլլան թէ ի՛նչ խոստումներու գնով Ռ. Քոչարեան կըրցաւ զինաթափ ընել Յունանեանն ու ընկերները։ Գուցէ այս ճամբով բացատրութիւն գտնէ Հոկտեմբեր 27-ի դատին այսքան երկար ժամանակ բեմի վրայ մնալու գաղտնիքը։

ԱՐԱՑ ԿԱՐՄԻՐԵԱՆ

Մոնրէալ, Հոկտ. 14

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ԹՈՐՈՆԹՈՅԻ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Սեպտեմբեր 30-ին, տեղի ունեցած է հրապարակային դասախօսութիւն մը կազմակերպութեամբ տեղւոյն միջ – յարանուանական մարմնի երիտասարդական յանձնախումբին։ Բացման խօսքով հանդէս եկած է յանձնախումբին անդամներէն՝ Յակոբ Մխիթարթինեան եւ յանուն 1700-ամեակի միջ – յարանուանական մարմնի երիտասարդական յանձնախումբին բարի գալուստ մաղթած է ներկաներուն ու բացատրած այս դասախօսութիւններու նպատակը։ Ապա, Ռիթա Թագուշեան ներկայացուցած է օրուան դասախօսը տոքթոր Գնէլ Թուրեան, տալով անոր կենսագրական հակիրճ գիծերը։ Դասախօսը «հայերէնախառն անգլերէնով» խօսած է Հայաստանի մէջ, 301-ին, Տրդատ Գ. Թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորչի կողմէ Հայաստանի քրիստոնէացման մասին, ընդգծելով այն իրողութիւնը որ Հայերը իրենց դաւանած քրիստոնէութիւնը կ'ընդունին որպէս ժառանգութիւն։ Դասախօսը ծանրացած է գլխաւորաբար երեք կէտերու վրայ. – Ո՞վ է Յիսուս Քրիստոս, Ան ի՞նչ ազդեցութիւն գործած է պատմութեան վրայ, Հայոց պատմութիւնը ի՞նչպէս ազդուած է քրիստոնէութենէն։

***

ՄՈՆՐԷԱԼԻ Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ, Հոկտեմբեր 3-ին տեղի ունեցած է 1700-ամեակի 6-րդ դասախօսութիւնը, որու նիւթը եղած է «Հայաստանի քրիստոնէութիւնը պարսիկ, յոյն եւ արաբ տիրապետութեան ներքեւ», դասախօսն ալ՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան։

ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Հայաստանի Հանրապետութիւնը բոլորեց իր անկախութեան տասներորդ տարին: Այս տասը տարիները յատկանշուած էին կարեւոր նուաճումներով եւ նաեւ տագնապալի ու տակաւին չյաղթահարուած դժուարութիւններով, որոնք մեր բոլորին համար կը շարունակեն մնալ մտահոգիչ:

Անկասկած կարեւոր նուաճումներ էին Արցախի ազատագրումը, պետական նոր կառոյցներու ստեղծումը եւ զարգացումը. իսկ ճկուն արտաքին քաղաքականութեան մը վարումը կրցաւ Հայաստանին ապահովել միջազգային քաղաքականութեան ծիրէն ներս յարգալիր ներկայութիւն մը:

Անմոռանալի պիտի մնան երկրաշարժով աւերուած հայրենիքին ուժանիւթային տագնապը, շրջափակումները, քաղաքական տագնապները, եւ վերջապէս հազիւ անկախացած Հայաստանի խորհրդարանին եւ անոր ներկայացուցիչներուն ուղղուած յարձակումները:

Հայաստանի տնտեսական ծանր իրավիճակին հետեւանքով ստեղծուած անդունդը տարբեր խաւերու միջեւ, կաշառակերութիւնը, եւ մանաւանդ արտագաղթը, կը շարունակեն մնալ մեզի համար մտահոգիչ եւ չյուսադրող հեռանկար մը:

Նոյնքան կը մտահոգէ մեզ Արցախի ապահովութեան, ինքնորոշման իրաւունքին դէմ Ազրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ տարուած պայքարը:

Թուրքիոյ հետ ստեղծուելիք փոխ-յարաբերութիւնները ոչ միայն կը պահանջեն Արցախի հարցին կարգաւորման բնպանեցող քաղաքականութեան մը հրաժարում, այլ նաեւ կատարուածին հանդէպ անկեղծ մօտեցում, զղջում, ճանաչում ցեղասպանութեան իրողութեան: Գիտակցիլ անոնց հետեւանքներուն, զարգացնել աւելի պատասխանատու ընթացք մը Հայաստանի եւ Հայ ժողովուրդին հանդէպ:

Միայն այս անկեղծ հիմքերուն վրայ հիմնուած հաշտութեան նախաձեռնութիւնները կրնան երկու ժողովուրդներուն մերձեցման յոյսեր ներշնչել:

Պատմական ճշմարտութիւնները անտեսող կամ յարաբերականացնող փորձերու վրայ հիմնուած «Հաշտութեան յանձնախումբերու» նախաձեռնութիւնները դատապարտուած են ձախողութեան, քանի որ այս փորձերը պատրուակներ են յաղթահարելու կատարուածը. այս առումով մենք չենք կրնար նման նախաձեռնութիւններու ընթացք տալ, որոնք արգելք կրնան ըլլալ ցեղասպանութեան ճանաչման գործընթացին:

Սփիւռք – Հայաստան յարաբերութիւնները մեզի համար չընթացան այնպէս, ինչպէս առաջին օրերու խանդավառութիւնը կը թելադրէր:

Բայց յուսադրիչ են վերջին շրջանին Սփիւռք – Հայաստան յարաբերութիւնները նոր հիմերու վրայ դնելու փորձերը:

Մեր կարծիքով, այս փորձերը կրնան արդիւնաւէտ ընթացք մը ստանալ երբ երկու հատուածները ոչ միայն իրենց կառուցուածքային տարբերութեամբ, այլեւ պատմական փորձառութիւններու գիտակցութեամբ, փորձեն մտաւորական նոր ճիգերով, հայկական յղացք մը մշակել, որուն միջոցով թերեւս կարելի դառնայ յաջողիլ պետական եւ սփիւռքեան տարբեր կառոյցներու օրկանիզ կապի մը ստեղծումին:

Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդը գոհունակութեամբ կը նշէ մեր կազմակերպութեան գործունեայ անդամներու Տիկին Վերա Մովսէսեանի, Տոքթ. Շահէն Զէյթունցեանի, տոքթ. Հրայր Խոսրովեանի, Դր. Արմէն Մինասի եւ Դր. Վահագն Յակոբեանի, Դր. Ճորճ Աբոշեանի, տնտեսական ներդրումները Հայաստան: Անոնք իրենց նախաձեռնութիւններով գործնական գետնի վրայ դրին Սփիւռք – Հայաստան յարաբերութիւնները:

Ցաւ կը յայտնենք թէ Հայ Գործարարներու միութեան հետ մշակուած Ներդրումներու ընկերութեան մը հիմնումը մինչեւ այսօր չէ յանգած յաջողութեան:

Մասնաւորապէս ուրախանալի է տեսնել Գերմանահայ որոշ միութիւններու անդուլ աշխատանքը ի նպաստ հայրենիքի վերականգնման: Այստեղ առաջին հերթին կ՚ուզենք յիշել տոքթոր Ռաֆայէլ Բարսեղեանի գլխաւորութեամբ Գերմանահայ Բժիշկներու Միութեան հսկայական աշխատանքը՝ Արարատի մարզի եւ յետագային Մարտակերտի հիւանդանոցին օգնութիւնը, Պերլինի հայ համայնքի մասնակցութեամբ Կումայրիի հիւանդանոցին կառուցումը, նոր հիմնուած միութիւններու Ուրարտուի եւ Հայտըլպերկէն փրոֆ. Էնտըրլէսի գլխաւորած Հայաստանի զարգացման միութիւնը, Օր. Նինա Յարութիւնեանի Կարմիր Խաչի միջոցով, տոքթոր Ժիրայր Քոչարեանի օժանդակութիւնը Պարոնուշի Գոքսի ծրագիրներուն: Բժիշկներ՝ Հայկազ եւ Համազ Ղազարեան եղբայրներու գործունէութիւնը, Տուխպուրկի Հայ համայնքի կողմէ Արցախի մէջ Նոր Կարմիր Աւանի տուներու կառուցումը, Գրաունշուայկի Ռայն-Արաքսի կողմէ Թալիշի դպրոցի նորոգութիւնը, Հայ գործարարներու միութեան, Պոնի, Մանհայմի, Հեսսընի, Քէօլնի, Հայ Մշակութային միութիւններու օժանդակութիւնները:

Կեդրոնական Խորհուրդը առաջին օրէն իսկ քաջալերեց Հայաստան համահայկական Հիմնադրամի Գերմանիոյ մասնաճիւղին ստեղծումը, եւ միշտ թիկունք կանգնեցաւ անոր աշխատանքներուն:

Գերմանահայութեան նուիրատուութիւններով Արցախի մէջ աւարտեցան ջրամատակարարման երեք ծրագիրներ – Ստեփանակերտի Վարարակն աղբիւրը, Ակնաբերդ գիւղի ջրատարը եւ Սղնախ գիւղի ջրատարը:

Այս տարի եւրոպահայութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով պիտի կազմակերպուի համաեւրոպական Թելեթոն մը: Մենք որպէս Գերմանահայոց Կեդրոնական Խորհուրդ, կոչ կ՚ընենք մեր բոլոր անդամներուն եւ համակիրներուն իրենց սրտաբուխ նուիրատուութիւններով սատարելու անոր յաջողութեան:

Գերմանահայութեան համար կարեւոր քայլ մը եղաւ երբ գերմանահայ ութ կազմակերպութիւններ, գլխաւորութեամբ՝ Գերմանահայոց Առաջնորդարանի եւ Հայ Գործարարներու Միութեան, որոշեցին դնել Հայաստանի դեսպանատան նոր շէնքը, Պերլին: Կեդրոնական Խորհուրդը իր անդամ եւ բարեկամ միութիւններուն հետ միասնաբար կազմակերպեց երկու մշակութային ձեռնարկներ եւ հասոյթը յատկացուեցաւ դեսպանատան շէնքին:

Մասնաւորաբար գերմանահայ երիտասարդներու մօտ մեծ խանդավառութիւն ստեղծեցին համահայկական մարզական խաղերը, սատարելով ազգային գիտակցութեան զարգացման: Մեր կազմակերպութիւնը որպէս ներկայացուցիչ ունենալով Դր. Ռուբէն Խորանեանը, առաջին օրէն իսկ նախաձեռնարկ եղաւ գերմանահայ երիտասարդութեան մասնակցութիւնը ապահովելու եւ Հայ Գործարարներու Միութենէն Դր. Արման Տէրտէրեանի հետ միասնաբար ստեղծուեցաւ մարզական յանձնախումբ մը:

Այստեղ կ՚ուզենք նաեւ մեր ուրախութիւնը յայտնել իբրեւ Գերմանահայեր, Գերմանիոյ կառավարութեան, անոր տնտեսական համագործակցութեան ծիրէն ներս կատարած օգնութեան, մեծ թիւով գերմանական բարեսիրական կազմակերպութիւններուն եւ անհատներու որոնք սատարեցին Հայաստանի:

Իսկ մենք պիտի փորձենք աւելի լաւ կազմակերպուած կառոյցով մը, ոչ միայն մեր համայնքէն ներս աւելի բեղմնաւոր աշխատանք տանիլ, այլ նաեւ մեր համեստ ներդրումը բերել Հայաստանի զարգացման ընթացքին, մանաւանդ իր այս նեղ օրերուն:

Լորցվայլըր

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ ՍԻՍԻ ՄԱՅՐ ՄԱՇՏՈՑ-Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Արամ Ա.ի հրաւէրով, երկու շաբաթէ ի վեր, «Կիլիկիա» Թանգարանէն ներս, Երեւանի Մաշտոց Մատենադարանի գիտաշխատող Տիկին Սուզաննա Բարսեղեան լծուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամէնէն արժէքաւոր ձեռագիրներէն՝ Սիսի Մայր Մաշտոց-ի (14-րդ դար) վերանորոգութեան եւ վերակազմութեան աշխատանքին, որ պիտի տեւէ եօթը շաբաթ: Մայր Մաշտոցը Կաթողիկոսութեան դարաւոր կայքէն՝ Սիսի Մայրավանքէն հրաշքով փրկուած ձեռագիրներէն մին է, որուն բովանդակութեան մաս կը կազմէ Կիլիկիոյ Հայոց Թագաւորին Օծման Կանոնը:

Յայտնենք, թէ այս տարուան Յունուար – Փետրուար ամիսներուն Տիկին Բարսեղեան մասնագիտականօրէն վերանորոգեց Բարձրբերդի Աւետարան-ը, որ ցուցադրութեան դրուած է Թանգարանի ձեռագիրներու բաժնին մէջ:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ի.

ՀՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

– Ապացոյցներ պիտի տամ, – պատասխանեց երիտասարդը, – նախ կրնա՞ս ուրանալ, թէ ոստիկանութեանը լրտես մըն ես:

– Այդ բանը երբեք չեմ ուրացած եւ կարծեմ քիչ մը առաջ իմ ըսած խօսքերովս ատիկա հաստատեցի:

– Կրնա՞ս ուրանալ, որ ինծի հետ բարեկամութիւն հաստատեցիր, Արշաւիրի հասցէն տալ խոստացար, բարեկամութիւն կեղծեցիր պարզապէս:

– «Կեղծեցիր»ը չեմ ընդուներ, ես մինչեւ հոս անկեղծ վարուեցայ քեզի հետ:

– Ուրեմն քու դիտաւորութիւնդ մեր ընկերները հասկնալ եւ մեզ ձերբակալել չէ՞ր:

– Երբեք ատանկ բան մը մտքէս չէր անցուած:

– Մեզի հետ ունեցած տեսակցութիւններդ չէի՞ր պատմած ոստիկանութեան:

– Երբեք:

– Կ՚ուրանա՞ս ուրեմն այս բանը:

– Բացարձակապէս:

– Եւ եթէ ես հակառակը ապացուցանե՞մ, – գոչեց Տրդատ:

– Անկարելի է այդ բանը, – պնդեց լրտեսը:

– Լաւ, ուրեմն հիմա պիտի ապացուցանեմ:

– Ես ալատոր կը սպասեմ, – պատասխանեց լրտեսը հանդարտութեամբ:

– Կը յիշես, որ օր մը ժամադիր եղած էինք յոյն գինեպանին, ուր մինչեւ ուշ ատեն սպասեցի, բայց դուն չեկար:

– Այո՛, կը յիշեմ, այդ օրը անակնկալ գործ մը ունեցայ, շատ ուշ մնացի, երբոր եկայ, գինետան տէրը ըսաւ, որ ինծի սպասեր ու ի վերջոյ գացեր ես, այդ օրէն ետքը ա՛լ չկրցայ քեզ գտնել:

–Ատոր պատճառը պիտի բացատրեմ հիմա: Երբ գինետունէն դուրս ելայ, գացի գիմացի տունը, Մարիքային:

– Մարիքա՛, – ըսաւ Արշակ՝ թեթեւ մը շփոթուած:

– Այո՛, Մարիքային, որ ծանօթ էր ինծի: Հազիւ թէ նստած էի, յանկարծ դուռը զարնուեցաւ: Մարիքա ըսաւ, որ եկողները երկու Թուրքեր են, մէկը ոստիկանութեան պաշտօնեայ եւ միւսն ալ գաղտնի լրտես եւ թէ ստիպուած էր անպատճառ ընդունիլ զիրենք: Մարիքա խնդրեց, որ տեղ մը պահուըտիմ, մինչեւ որ զանոնք ճամբու դնէ եւ աճապարանքով զիս մտցուց անկողնին քով գտնուած դարակը: Քիչ ետքը ներս մտան երկու Թուրքերը, նստեցան եւ օղի բերել տալով սկսան խօսակցիլ: Բնականաբար իրենց խօսքերը բառ առ բառ կը լսէի: Յանկարծ անուն մը ուշադրութիւնս գրաւեց: Գիտե՞ս ի՛նչ անուն էր այդ:

– Ինչպէ՞ս կրնամ գիտնալ, – դիտել տուաւ Արշակ:

– Այդ ոստիկանութեան պաշտօնեաները քու անունդ արտասանեցին:

– Կրնայ ըլլալ, - պատասխանեց լրտեսը, որ կամաց – կամաց իր պաղարիւնութիւնը կը սկսէր կորսնցնել:

– Իրենց խօսքերը կէտ առ կէտ կը յիշեմ, – շարունակեց Տրդատ: - Թուրքերէն մին ըսաւ, որ դուն դիմացի գինետունը ժամադիր եղած ես հնչակեանի մը, որուն հետ տեսակցելէ ետքը պիտի գաս զիրենք գտնաս. տարակոյս չի կար, որ այդ հնչակեանը ես էի, այդպէս չէ՞:

– Չեմ գիտեր, – պատասխանեց լրտեսը դողդղահար ձայնով մը:

– «Հնչակեաններուն խնդիրը շատ աղէկ ճամբու մէջ է» կ՚ըսէր Թուրքը, – շարունակեց Տրդատ, – «Արշակ շատ վարպետութեամբ ծուղակ մը լարած է իրենց, որուն մէջը պիտի իյնան ապահովաբար». այս բառերը ես դարակին մէջէն իմ ականջներովս լսեցի:

– Այդ մարդիկը սուտ խօսած են կամ դուն սխալ լսած ես, – ըսաւ, լրտեսը այլայլած, - ես ատանկ խօսք չեմ ըրած մէկու մը:

– Մի՛ այլայլիր եւ սպասէ, – գոչեց Տրդատ:

– Այլայլած չունիմ, – պատասխանեց Արշակ, որ գերմարդկային ջանքեր կ՚ընէր պաղարիւնութիւնը պահելու համար:

– Քիչ մը ետքը սենեակին դուռը բացուեցաւ, եւ դուն ներս մտար. կը յիշե՞ս կոր:

– Ատանկ բան մը միտքս կուգայ կոր, – կմկմաց Արշակ:

– Երկու Թուրքերը ուրախութեամբ ընդունեցին քեզի, ուշ մնալուդ պատճառը հարցուցին, դուն ալ պատասխանեցիր, որ անակնկալ գործի մը համար ստիպուեր ես մինչեւ Սամաթիա երթալ եւ ատոր համար չես կրցած Տրդատին հետ ժամադրութեանդ գտնուիլ... բայց վնաս չունի, աւելցուցիր, վաղը առտու կրկին պիտի գայ եղեր: Ու յետոյ իրարու հետ խօսեցաք, թէ ինչ պէտք է ընել, Թուրքերը կ՚ըսէին, որ հարկ էր զիս անմիջապէս ձերբակալել, իսկ դուն կը պնդէիր, որ լաւագոյն էր սպասել, իմ վստահութիւնս շահիլ բոլորովին, միւս ընկերներուս մասին ալ տեղեկութիւն քաղել ինէ եւ յետոյ ամէնքս միասին ձերբակալել, ի վերջոյ, աւելցուցիր ինծի ակնարկելով՝ «խեղճը գլխուն գալիքը չի գիտեր»: Բոլոր այս խօսքերը կը լսէի թաքստոցէս եւ ա՛յնչա՛փ կատաղութիւն կը զգայի լսելով քու դաւաճանութիւնդ, որ խորհեցայ յանկարծ դուրս ցատքել դարակէն ու ըէվոլվէրը քաշելով՝ արժանի պատիժդ տալ: Բայց ուրիշ զերագոյն մտածումներ զիս կ՚արգիլէին այդ տեսակ յախուռն արարք մը գործելու: «Եթէ այդպիսի յիմարական գործ մը տեսնեմ, ի՞նչ պիտի ըլլայ արդիւնքը, – կը մտածէի, – պարզապէս պիտի վտանգեմ ամբողջ գործը, մինչդեռ հիմա, որ ամէն բան իմացայ, հիմա որ գիտեմ, թէ դիմացինս ինչ տեսակ մարդ է, կրնամ օգտակարապէս գործածել ինչ որ լսեցի այս գիշեր»: Յետոյ Մարիքա ներս մտաւ, եւ ձեր խօսակցութիւնը ընդհատուեցաւ: Այս անգամ բոլի նստեցուցիք աղջիկը եւ պահանջեցիք, որ ձեզի հետ երգ մը երգէ: Օղիի բաժակները իրարու կը յաջորդէին, եւ երգերը կը շարունակուէին: Վերջապէս ալ բոլորովին գինով վիճակի մէջ ելաք, գացիք:

Լրտեսը լուռ ու ուժգոյն մտիկ կ՚ընէր այս խօսքերը առանց պատասխան մը տալու: Կատարելապէս կը յիշէր Մարիքայի տան մէջ փոխանակուած խօսակցութիւնը եւ որեւէ հնարք չէր կրնար գտնել զանոնք հերքելու համար:

– Ահա՛ թէ ինչու, – շարունակեց Տրդատ, - հետեւեալ առտու չեկայ գինեպանին, և անմիջապէս ընկերոջս հետ տեղափոխուեցանք հոս, – Շիշլի, մինչդեռ մեր ընկերները հետզհետէ կը ձերբակալուէին...

– Ես անոնց ձերբակալութեան մէջ դեր չունիմ, – ըսաւ լրտեսը:

– Կրնայ ըլլալ, - պատասխանեց Տրդատ: – Բայց դոնէ զիս ձերբակալելու աշխատեցար:

– Բայց մինչեւ հիմա ազատ ես:

– Այո՛, սակայն, ո՛չ քու շնորհիւդ, ու եթէ մինչեւ այսօր չի կրցար զիս ձերբակալել, պատճառը այն է, որ հետքս կորսնցուցած էիր: Եւ ահա այս իրիկուն յանկարծ գտար, չեմ գիտեր՝ ինչպէս:

(Շար. 88)

Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Շաբաթ օր ,Հոկտեմբեր 27
ժամը 10·45–էն 12

ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ
ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Փարիզի Ս· Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ

«Առաւօտեան յատուկ ժամերգութիւն» տեղի պիտի ունենայ մասնակցութեամբ՝

Փարիզի 8–րդ, 16–րդ եւ 17–րդ թաղամասերու «էթուալ – Շան զ'էլիզէ»ի Քրիստոնեայ (Անկլիքան, Կաթողիկէ, Ուղղափառ եւ Բողոքական) Եկեղեցիներու:

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը մասնակցելու սոյն էքիւմէնիք աղօթքներուն:

(Շար· Ա· էջէն)

տայի եւ Թալիպաններու դէմ «անխախտ ազատութիւն» մկրտուած արշաւանքին մէջ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼ աւելի եւս կ'ամրապնդէ իր հրջափակումը պաղեստինեան վեց քաղաքներու շուրջ, քաղաքներ զորս գինուորական գետնի վրայ ալ գրաւած է: Միացեալ–Նահանգները «անմիջական» հեռացումը կը պահանջեն Այսրյորդանանէն, բայց, Շարոն տեղի չի տար: Կը շարունակէ պնդել որ ոչինչ կը փոխէ իր քաղաքականութենէն, յորչափ Արաֆաթ վերջ չէ տուած ահաբեկիչներու գործողութիւններուն եւ Իսրայէլի չէ յանձնած նախարար Զէէվիի մարդասպանները: Արաֆաթ ըսած էր արդէն թէ չի կրնար ընթացք տալ նման պահանջի մը: Հոկտ· 22–ին, Նապլուսի մէջ, իր կառքին պայթումէն մեռած էր Համասի զինեալ թեւին մէկ պատասխանատուն՝ Այման Հալավի: Համասի համար Իսրայէլի գործակալներուն գործն է: Արեւմտեան Երուսաղէմի մէջ ալ, Պաղեստինցի մը չորս անցորդներ վիրաւորած է, նախքան ըսպաննուիլը: Ամէն պարագայի մէջ, կացութիւնը ծանր է եւ վախ կայ որ Լիբանանի պատերազմ մը կրկնուի: Իսրայէլի բանակը 200 հազար զինուորականէ կը բաղկանայ (այր թէ կին), 445 հազար ալ պահեստի զինուոր կայ, 4 միլիոն բընակչութիւն ունեցող երկրին մէջ: Այս բանակը կ'ուզէ ճնշումներով կառավարութեան վրայ իր նպատակին հասնիլ եւ դէմ է որեւէ զիջումի: Սպայակոյտի պետը հրապարակաւ դէմ արտայայտուած է Հեպրոնէն իսրայէլեան ուժերու քաշուելուն եւ Շարոն հրահանգած էր իրեն որ այլեւս հարցազրոյց չտայ:

ԺՈՍՓԷՆ, երկօրեայ այցելութեամբ Մոսկուա գացած է, Հոկտ· 22–ին: Ժամանումէն իսկ, յայտարարած է.– «Ահաբեկչութեան դէմ պէտք է պայքարիլ, ուր որ կը յայտնուի, ներառեալ Չէչէնիա»:

ԱՏՐՊԵՋԱՆԻ Ազգ· Ապահովութեան բանբերը յայտարարած է Հոկտ· 22–ին, թէ Պուտինը սպաննելու դաւին համար մեղադրուած անձը Իրաքցի մըն է, որ կապ ունի Ուսամա Պէն Լատէնի Ալ–Քաիտա ցանցին հետ: Ենթական՝ Քիանան Ռոստամ, որ ձերբակալուած էր 2000 Նոյեմբերին, մարզուեր է Աֆղանիստանի իսլամական կայաններուն մէջ, նախքան Չէչէններու միանալը 1997–ին:

ԹԵՀՐԱՆԻ մէջ, Հոկտ· 21–ին, հազարաւոր Պարսիկներ փողոց իջած են ցոյցի մը համար, որ շուտով ծանր բախումներու բնոյթ առած է, երբ լուրեր տարածուած են որ ֆութպոլի Իրանի խումբը ճնշումներու տակ է որ կորսնցուցած է մրցումը Պահրէյնի դէմ (1–3): Բազմաթիւ լոզունգներ լսուած են՝ «Մա'հ մոլլաներուն», «Իրանը Պաղեստին եղաւ» եւլն· եւլն·: Ոստիկանութիւնը 800 հոգի ձերբակալած է, յետագային 200–ը ազատ արձակած է, իսկ 600–ը առժամեայ արգելափակման ենթարկուած են:

ԺԱՎԱՅԻ կղզիին բացը, առնուազն 370 հոգի ջրամոյն եղած են եւ 44 հոգի ալ փրկուած է զիրենք փոխադրող նաւուն ընկղմելէն ետք: Բոլորն ալ գաղթաւոր ճամբորդող գաղթականներ էին:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱԿԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՓՈՓՈԽ ԵՆ 1999 ՆՈՅԵՄԲԵՐ 1–ԷՆ Ի ՎԵՐ ՀԱԿԱՌԱԿ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԾԱՆՐ ԲԵՌԱՆ, ՅԱՒԵԼՈՒՄ ՊԻՏԻ ԿՐԵՆ ՆՈՅԵՄԲԵՐ 1–ԷՆ ՍԿՍԵԱԼ ԻԲՐԵՒ ՀԵՏԵՒԱՆՔ ԳԼԽԱՒՈՐԱԲԱՐ ԹՂԹԱՏԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՍԱԿԵՐՈՒ 50% ԲԱՐՁՐԱՑՄԱՆ 4 ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ, ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ԹՈՒՂԹԻ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐՈՒ ՅԱՒԵԼՄԱՆ ԵՒ ԴԺԲԱԽՏԱԲԱՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՆՈՒԱԶՄԱՆ:

76 տարիէ ի վեր «Յառաջ»ի միակ եկամուտը կ'ապահովեն բաժանորդագրութիւնները եւ ծանուցումները որոնց մեծ մասը առեւտրական բնոյթ ալ չունի: Նաեւ բարգաւաճման փոնտին եղած նուիրատուութիւնները: Այս պայմաններուն տակ օրէ օր կը ծանրանայ վարչութեան բեռը եւ կ'ակնկալենք մեր բաժանորդներէն որ ա'լ աւելի չդժուարացնեն մեր գործը:

Խորին շնորհակալութիւն մեր այն –մեծամասնութիւն կազմող, բարեբախտաբար– բաժանորդներուն, որոնց կանխիկ եւ կանոնաւոր վճարումներուն շնորհիւ կարելի կը դառնայ թերթին կանոնաւոր հրատարակութիւնը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ»Ի

CDCA

LANCEMENT DU PRIX DU CDCA

Communiqué

Le CDCA lance un prix qui récompensera l'auteur d'un travail universitaire ayant abouti à l'obtention d'un diplôme durant l'année 2001.

Ce concours, ouvert à toutes les disciplines, récompensera les meilleurs travaux dont le sujet porte, directement ou indirectement, sur l'Arménie ou les Arméniens.

Toutes les disciplines sont concernées: histoire, géographie, sociologie, économie, science de la vie ou de la terre, arts, sciences politiques, sciences physiques, droit, littérature, psychanalyse, architecture, cinéma etc...

Prix?

Trois prix ainsi qu'une possibilité de publication, récompenseront les meilleurs travaux :

— 1er prix:2300 euros (envrion 15090F)
— 2ème Prix:1500 euros (environ 9800F)
— 3ème Prix:765 euros (environ 5020F)

Pour qui?

Tout étudiant titulaire d'un diplôme Bac+3 (niveau Licence ou équivalent) juisqu'à Bac+5 (DEA-DESS ou équivalent).

Type de document?

Tout document rédigé en français ou en anglais ayant donné lieu à la délivrance d'un diplôme par des organismes d'enseignement français : rapport de stage, mémoire, document de fin d'études, film etc...

Jury

Un jury pluridisciplinaire composé de chercheurs, professeurs et universitaires déterminera les trois œuvres jugées les meilleures tant sur le plan de l'originalité du thème que de la forme.

Inscription, remise de documents et des pièces justificatives :
avant le 31 janvier 2002.
Remise des prix: **1er mai 2002.**

Règlement et formulaire d'inscription à retirer auprès du Comité de Défense de la Cause Arménienne (C D C A), 17, rue Bleue, 75009 Paris,
Tél. : 01 44 83 07 02
Règlement du concours disponible sur
http://www.cdca.asso.fr
Paris, le 24 septembre

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կապոյտ Խաչի Մարսէյլի շրջանի Պուլվար Օտտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ, Կիրակի, Հոկտեմբեր 28, Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ մէջ, 7 ռիւ Արթիւր Միչօ, 15–րդ թաղամաս իր ողբացեալ ընկերուհիներու յիշատակին:

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

La M.C.A. a le plaisir de vous inviter à la

R E N C O N T R E

avec

Մ Ո Վ Ս Է Ս Պ Չ Ա Ք Ճ Ե Ա Ն
MOVSES BETCHAKDJIAN

à l'occasion de la parution de son dernier ouvrage

«Մինչեւ վերջին արեւներուն»
«JUSQU'AU DERNIER DES SOLEILS»

le Vendredi 26 octobre à 20h45

Salle S. Minassian, M.C.A.

Présentation et analyse de l'ouvrage :
NORA BAROUTDJIAN

Avec l'aimable participation de :
ARA KRIKORIAN
et du Père HAROUTIOUN BEZDIKIAN

Accompagnement musical à la guitare de lectures par **Ohannès DEMIRDJIAN**

9, rue de Madrid — 94140 Alfortville
☎01.43.76.55.89 — Fax 01.43.78.66.64
e-mail : MCA.ALFO@wanadoo.fr

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փարիզի Ս· Յովհաննէս–Մկրտիչ Մայր Տաճարի հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է Իւզագինի հետեւեալ նուէրները. – Տիկին Սիլվա Գարաքաշ 300 Ֆր·, Տէր եւ Տիկին Տատեան 1000 ֆրանք, Տիկին Լիտի Էքսէրճեան 150 Ֆր·, Տէր եւ Տիկին Միքայէլ Գարանֆիլեան 200 Ֆր·, Տէր եւ Տիկին Ժ· Առաքելեան 150 Ֆր·, Պ· Սուրէն Տողրամաճեան 100 ֆրանք, Տէր եւ Տիկին Անտրէ Պուրժէ 300 Ֆր·, Տիկին Նոյեմի Յարութիւնեան 200 Ֆր·, Տէր եւ Տիկին Գլօտ Ռիվէ 1000 ֆրանք, Տիկին Արփինէ Սէրվէրեան, Պր· Ռոպէր Տէր – Մարտիրոսեան 200–ական ֆրանք, Տէր եւ Տիկին Հիւկ Քէաթիպեան 500 Ֆր·, Պր· Միհրան Տէրտէրեան 200 ֆրանք, Տէր եւ Տիկին Խտուար Տեփանեան 500 Ֆր·, Տէր եւ Տիկին Ղազարեան 200 Ֆր·, Տիկին Սրբուհի Աբգարեան 1000 ֆրանք, Տիկին Սոֆի Քիլէճեան 300 Ֆր·, Տէր եւ Տիկին Բիւզանդ Ֆընտըգեան 500 ֆրանք, Տիկին Լիլի Սեղրակեան 1000 Տիկին Ս· Բլուր 150 Տէր եւ Տիկին Արսէն Գալայճեան 250 Ֆր·, Տէր եւ Տիկին Գեղամ Թորոսեան 1050 ֆրանք, Տիկին Մարգրիտ Ղազէրեան, Տիկին Սիլվա Գարաքաշ 500–ական ֆրանք:

Տէր եւ Տիկին Տարօն Սարհատեան 300 եւրօ:

Մայր Տաճարի Օծման 97–րդ տարեդարձին եւ մատաղօրհնութեան առթիւ՝ Առնուվիլի Վարագայ Ս· Խաչ Եկեղեցւոյ հոգաբարձութիւն 1000 Ֆր·, Իսի – լէ – Մուլինոյի Ս· Մարիամ Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութիւն 1000 Ֆր·, Տիկին Աշխէն Սողոմոնեանց, Պր· Միշէլ Աղապէկեան, Բժիշկ եւ Տիկին Գէորգ Արզարեան 500–ական Ֆր·, Պր· Ալեքսանտր Գույումճեան 1350 Ֆր·, Տիկին Ալիս Իսրայէլեան 1000 Ֆր·, Պր· Վարդգէս Տակոեան 2000 Ֆր·, Տիկին Սիլվա Սերոբեան, Տիկին Արսինէ Շահվէզիլեան 1000–ական Ֆր·, Տէր եւ Տիկին Ժագ Ռընոտէն 400 ֆրանք:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

CONCERT

à l'occasion du 1700e anniversaire de la conversion de l'Arménie au christianisme
le samedi 27 octobre à 20h30
dans la Cathédrale Sainte-Croix de Paris des Arméniens Catholiques,
Au profit de l'école Sainte-Croix du samedi
MOURAD AMIRKHANIAN
(Basse)
chante : **Haendel, Verdi, Bellini, Fauré, Beethoven, Schubert, Komitas, Babadjanian, Tchaïkovsky, Rachmaninov, Dikranyan, Hagopian, Spentiaryan**
accompagné au piano par **Johan Struyve.**
Entrée: 13, rue du Perche (angle rue Charlot) Paris 3e.
Participation aux frais: 60 F
Réservations: Tél.: 01 44 59 23 50
Fax: 01 44 59 23 54.
Métro: République, Filles du Calvaire.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
Փ Ա Ր Ի Զ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20·30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS
ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս· Ղազար, Վենետիկ)
կը ներկայացնէ
Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը
«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»
Գինեձօն երեկոյթի աւարտին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SOIREE DANSANTE
organisée par
La Section «TER-DAVTIAN» de la Croix Bleue des Arméniens de Chaville
le Samedi 27 octobre à 20 heures 30
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation de l'Orchestre GAIDZAG'S

— ● —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY
Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.
Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002
Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés. Dîner et soirée dansante pour le réveillon.
Date limite d'inscription : 30 Novembre
Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— 01. 42. 36. 33. 73 (la journée)
— 01. 46. 58. 03. 17 (le soir)

— ● —

Date à retenir
SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 25
JEUDI
25 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.282 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 77e ANNEE — N° 20.282

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՇՎԱՐՆԱՁԷ – ՔՈՉԱՐԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Հոկտ. 23-ին տեղի ունեցած է. Շվարնաձէի եւ Ռ. Քոչարեանի միացեալ մամուլի ասուլիսին՝ «Շնորհակալ եմ Է. Շվարնաձէին ճնարկումների անկեղծութեան համար եւ վստահ եմ, որ երկու նախագահներ ի զօրու են քննարկել հարցերի լայն շրջանակ, այդ թւում միջպետական, միջժողովրդական յարաբերութիւնների վերաբերող ամենանուրբ թեմաներ եւ գտնել հաւասարակշռուած որոշումներ այնպէս, որպէսզի երկկողմ յարաբերութիւններում եղած աւանդոյթները զարգանան» ըսած է Հայաստանի նախագահը: Նախքան ասուլիսը, տեղի ունեցած է անոնց գլուխ-գլխի հանդիպումը եւ ապա ընդլայնուած նիստին յաջորդած է պայմանագիրներու ստորագրման արարողութիւն: Ստորագրուած են հինգ փաստաթուղթեր, որոնցմէ ամէնէն կարեւորը կը նկատուէր «Հայաստանի եւ Վրաստանի միջեւ բարեկամութեան, համագործակցութեան եւ փոխադարձ ապահովութեան մասին» պայմանագիրը:

Մամուլի ասուլիսին նախագահ Քոչարեան յայտնած է թէ անկեղծ մթնոլորտի մէջ ինք հիւրին ներկայացուցած է Ղարաբաղեան հակամարտութեան, իսկ Շըվարնաձէ ալ վրաց-աբխազական հակամարտութեան ներկայի իրավիճակը, ինչպէս նաեւ տնտեսական համագործակցութեան հարցեր: Կովկասեան երեք Պետութիւններուն համագործակցութեան մասին վրացի լրագրողի մը հարցումին պատասխանելով Ռ. Քոչարեան ըսած է ինչ կը վերաբերի հայ-վրացական համագործակցութեան, այդ մասին որեւէ կասկած չկայ, սակայն կարելի չէ նոյնը ըսել ամբողջ տարածքաշրջանին համար, չեշտելով որ Հայաստան եւ Ատրպէյճան տարբեր դիրքորոշումներ ունին:

Է. Շվարնաձէ ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ լուծման համար իր վստահութիւնը յայտնելէ ետք հակամարտ երկիրներու նախագահներուն, անդրադարձած է աբխազական հարցին, չեշտելով թէ առկա Վրաստանի ամենամեծ ցաւն է. աւելցուցած է թէ մեծ յոյսեր կը կապեն Ռուսաստանի առանց որուն գործօն մասնակցութեան դժուար կ'ըլլայ վերջնական լուծումի մը յանգիլ, ըստ Վրաստանի նախագահին: Ռ. Քոչարեան ալ այդ հակամարտութեան մէջ վեր առած է հայ համայնքին մտահոգիչ իրավիճակը ու ըսած՝ «Սա շատ ողբերգական իրավիճակ է Հայերի համար ընդհանրապէս: Եւ մենք ոչ պակաս, քան Վրաստանը, շահագրգռուած ենք այս հակամարտութեան արագ կարգաւորմամբ»: Երկու նախագահները սոյն խնդրին կարգաւորման կարեւորութիւնը նշած են նաեւ տնտեսական առումով ալ, քանի որ կը վերաբացուի խիստ ռազմավարական երկաթուղիի այն գիծը որ Ռուսաստանը եւ Ուկրանիան կը կապէ Հարաւային Կովկասի:

Ասուլիսին վերջաւորութեան է. Շվարնաձէ ըսած է թէ բանակցութիւնները այնքան յաջող էին եւ անմիջական, որ կարելի է գիրք գրել տպաւորութիւններուն մասին:

Վրաստանի նախագահը, Հոկտ. 25-ին, Պետական Համալսարան, Ծիծեռնակաբերդ այցելութիւններէն եւ պաշտօնական շարք մը հանդիպումներէ ետք կը մեկնէր Հայաստանէն:

***

ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՄՆ ՄԵԿՆԱԾ

Արտաքին գործերու նախարար Վարդան Օսկանեան Հոկտ. 22-ին աշխատանքի այցելութեամբ մեկնած է Միացեալ-Նահանգներ: Նախատեսուած էին հանդիպումներ ԱՄՆու Արտաքին նախարարութեան շրջանակներուն հետ:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ

Քաղաքական դէտերու կարծիքով, Թուրքիա կը ջանայ աւելի ազդեցիկ արտաքին քաղաքականութիւն մը վարել Սեպտեմբեր 11-էն ի վեր, այն համոզումով որ կրնայ կարեւոր դեր ստանձնել ահաբեկչութեան դէմ Եւրոպայի միութեան եւ ԱՄՆ-ու մղած պայքարին մէջ: Այդ ջանքին մէջ կայ աշխարհագրականօրէն ո՛չ թէ Միջին – Արեւելքին, այլ Եւրոպային մաս կազմելու գաղափարը:

Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարը Ի. Ճէմ, Ուզբեկստան եւ Տաճիկիստան այցելեց վերջերս. կ'ըսուի թէ այդ այցին նպատակը տեղ ապահովել է թրքական խաղաղապահ ուժերու, երբ Թալիպանները հեռացուած ըլլան իշխանութենէն: Սակայն, ՄԱԿ-ի պատասխանատուները շատ համամիտ չեն նման կարգադրութեան մը. արդէն ՄԱԿ-ի դէտերը կ'ըսեն թէ օտար ուժեր, ինչ որ ըլլան իրենց կրօնական, կամ ցեղային ծագումը, երբեք չեն յաջողած Աֆղաններու վստահութիւնը շահիլ:

Աֆղանիստան թրքական զօրք ղրկելու կառավարութեան փափաքը հանրային կարծիքէն ալ միաձայնութիւն չի վայելեր. նման հեռանկարի հակառակ են նախ հակամերիկեան ցուցումներու տէրերը որոնք մահմետականներու պարտադրուած զաղթարարութեան մասնակցութիւն կը նկատեն առիկա: Դէմ են նաեւ անոնք որոնք կը հաւատան որ Թուրքիա տկար կը ներկայանայ նոր Աֆղանիստանի համար:

Թուրքիա որպէս ՕԹԱՆ-ի գլխաւոր մէկ անդամը, չէր արտօնած որ Եւրոպայի միութեան արագ միջամտութեան 60 հազարնոց ուժերը գործածուին այդ կազմակերպութեան համար: Այդ մերժումը ներկայիս կը սպառնայ խոչընդոտել յետագայ զինուորական ծրագրեր: Եւրոպացի դիւանագէտներ կը հաւատան որ Ուաշինկթըն առով հանդերձ ճնշում պիտի չբանեցնէ Անգարայի վրայ. նոյնիսկ պնդողներ կան որ ճնշումը պիտի ըլլայ Եւրոպական միութեան վրայ, որպէսզի աւելի ճկուն դառնայ Թուրքիոյ անդամակցութեան հարցին մէջ:

Նայութիւնը վերլուծելով եւրոպացի դիւանագէտ մը կ'ըսէ թէ ստեղծուած է կատարեալ հակասական վիճակ մը. Ուաշինկթըն մէկ կողմէն կ'ուզէ որ Եւրոպացիները աւելի չեչտուած մասնակցութիւն ունենան, մինչ Անգարա անոնց առջեւ կը փակէ ՕԹԱՆ-ի միջոցներէն օգտուելու կարելիութիւնը:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 23/24)

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ԱՒԱՐՏԱԾ

Հոկտեմբեր 20-ին աւարտած է տասնօրեայ մարդահամարը. մինչեւ Հոկտ. 23 բնակչութենէն 25 դիմում ստացուած է թէ մարդահամարէն դուրս մնացած են: Մարդահամարը առիթ եղած է դրամաշորթութեան պարագաներու ալ, Երեւանի մէջ: Արդիւնքներուն 10%-ը պիտի ստուգուի, պարզելու համար թէ մասնակցութեան տոկոսը 100% եղա՞ծ է: Հարցաթերթիկներու ամփոփումը կը սկըսի ամէնէն ուշ Նոյեմբեր 30-ին. կը յաջորդէ տուեալներու համակարգումը: Ընդհանուր նախնական արդիւնքներ կը հրապարակուին 2002-ի առաջին ամիսներուն, իսկ վերջնական արդիւնքները՝ 2003-ին: Մարդահամարի ընթացքին հետեւած են միջազգային դէտեր:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

«ՀԻՒԱՆԴ ՉԵՄ» Կ'ԸՍԷ ՊՈՒՇ

ԱԾԽԱԽՏԻ ՎԱԽ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՋ

Նախագահ Պուշ անհրաժեշտ տեսաւ ապահովութիւն տալու իր ժողովուրդին որ հիւանդ չէ: Արդարեւ, Երեքշաբթի, Հոկ. 23-ին, ածխախտի մանրէներ յայտնաբերուած էին Սպիտակ Տան կից թղթատարական բաժնի զտման ճիւղը եւ նոյն իրիկունը Պուշ յայտարարեց որ վարակուած չէ: Ամերիկեան ներքին ապահովութեան գրասենեակին տնօրէնը՝ Թոմ Ռիճ յայտարարած է՝ «մէկ պատերազմ կայ, բայց, երկու ճակատ»: Ամէն պարագայի մէջ, մթնոլորտը շատ ծանր է Միացեալ – Նահանգներու մէջ եւ մտահոգութիւնը ծաւալած է Ուաշինկթընի մէջ, երբ թղթատարի երկու պաշտօնեաներու մահէն ետք, երկու ուրիշներ ալ վարակուած են: Այս կացութեան մէջ, Գոնկրէսի երկու ժողովները (Ծերակոյտ եւ Ներկայացուցիչներու Տուն) որոշեցին վերսկսիլ իրենց նիստերը:

***

Աֆղանիստանի մէջ, միշտ ռումբեր կը տեղան եւ ԱՄՆ-ու Պաշտպանութեան նախարարութիւնը, անգամ մը եւս, ստիպուած եղաւ խոստովանիլ որ չարաթավերջին (Հոկտեմբեր 20-21) «սխալներ» գործուած են ռմբակոծութիւններուն մէջ եւ ռումբեր ինկած են հոն ուր պէտք չէ իյնային: Այսպէս, ռումբեր ինկած են Քանտահարի մօտ, քարիւղատար բեռնակառքերու չարասիւնի մը վրայ եւ 5 հոգի մեռած է: Միւս կողմէ, Ամերիկացիներու կողմէ ահաբեկչութեամբ ամբաստանուած 35 Փաքիստանցիներու խումբ մը բընաջնջուած է Քապուլի վրայ արձակուած ռումբերէն:

Թալիպանները յայտարարած են որ 52 բնակիչներ (93 ըստ Քաթարի Ալ Ճազիրա հեռատեսիլին) մեռած են Քանտահարի մօտ գիւղի մը վրայ ինկած ռումբերէն: Ամբաստանուած են նաեւ Ամերիկացիները որ մզկիթ մը ռմբակոծած են Հերաթ: ՄԱԿ-ի համաձայն Քապուլի վրայ ամերիկեան ռմբակոծութիւնները բնակելի թաղամասերու վրայ կը կատարուին: Նոյն աղբիւրին համաձայն, Հերաթի մէջ զինուորական հիւանդանոց մըն ալ ռումբերու զոհ գացած է:

***

Պաղտատի մամուլը կ'ամբաստանէ Միացեալ – Նահանգները որոնք փսիխոզ մը կը ստեղծեն արդարացնելու համար յետագայ յարձակում մը: Ամէն կողմ վախ կը տիրէ, քանի ալիւրով, փոշի շաքարով կամ թալքով լեցուած ծրարներ կը հասնին: Գահիրէի ամերիկեան դեսպանատունը պարպուած է առջի օր երբ մաքրող կին մը սպիտակ փոշի մը գտած է արտաքնոցը: Հոնկ – Քոնկի օդակայանը 747 Պօյինկ մը պարպուած է, անձնակազմը տարօրինակ նիւթ մը գտած էր եւ պարզուած է որ... փոշի կաթ էր: Նման բազմաթիւ դէպքեր կան աշխարհի բոլոր երկիրներուն մէջ:

Իրաքի Արտաքին նախարարը՝ Նաճի Սապրի շատ չոր կերպով հերքած էր, անցեալ շաբթու որեւէ կապ Իրաքի եւ ԱՄՆ յայտնաբերուած ածխախտին հետ: Ամէն պարագայի մէջ, բացի Միացեալ – Նահանգներէն, ոչ մէկ մահ պատահած է, ոչ մէկ տեղ:

ԹՐՔԱԿԱՆ ՔԻՒՐՏԻՍՏԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՉԱՐՉԱՐԱՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆԵՐ

«Մոնտ»ի թղթակիցը Նիքոլ Փոփ բաւական սեւ պատկեր մը կը գծէ Տիյարպէքիրի Քիւրտերու կացութեան (Հոկտեմբեր 24): Մարդկային իրաւանց տեղւոյն միութիւնը ղեկավարող փաստաբանը՝ Օսման Պայտէմիր կ'ըսէ թէ թրքական իշխանութեանց վերաբերումը Քիւրտերու հանդէպ մտահոգիչ կը մնայ: Կը վախնայ որ Սեպտեմբեր 11-ի դէպքերէն ետք, կառավարութիւնը գործէ պատրուակ բռնելով ընդհանուր ապահովութիւնը:

Սեպտեմբեր 11-ի յարձակումները քննելով ՓՔՔ-ի դէմ իր տարած պայքարին լոյսին տակ, Անգարա դժգոհած է որ Եւրոպացիք զօրավիգ չեն եղած ՓՔՔ-ի եւ իսլամական արմատական խմբակներու դէմ իր վարած ճիգերուն: Պ. Էճէվիթ կ'ըսէ. – «Թուրքիոյ դէմ մղուած ահաբեկչական յարձակումներու մեծ մասը ծրագրուած են այդ (իմա՝ եւրոպական) երկիրներէն: Կը յուսամ որ վերջ մը պիտի դնեն այդ ամօթին»: Համեմատական հանդարտութենէ մը ետք, ձերբակալութիւններն ու չարչարանքի պարագաները բազմացած են: Պայտէմիր կը հաստատէ որ տարւոյն սկիզբէն ի վեր, զինուորական գործողութիւնները աւելցած են եւ իշխանութիւնները խստացուցած են իրենց դիրքը: Օրինակ, վերջերս պատահած երկու մահեր՝ Հալիթ եւ Ասլան 62 եւ 42 տարեկան, սպաննուած Շըրնաք: Իշխանութիւնները մերժած են նոյնիսկ մարմինները ընտանիքներուն յանձնել: Ս. Թանրըքուլու, որ մարդկային իրաւանց հիմնարկը կը ներկայացնէ կը գտնէ որ «մըթնոլորտը ծանրակշիռ դառնալու վտանգը կ'ապրի Տիյարպէքիր»: Սեպտեմբերի ընկիզբը, կը ճշդէ, իշխանութիւնները խուժեցին չարչարանքի զոհերու վերակենդանացման չէնքերուն մէջ, առանց խուզարկութեան արտօնութեան եւ գրաւեցին 360 հիւանդներու բժշկական թղթածրարները: Դատական հետապնդում մը սկսաւ եւ հիմնարկը կրնայ փակուիլ: Այդ միջադէպէն ետք, չարչարանքի ոչ մէկ զոհ եկաւ արձանագրուելու: Բողոք ներկայացուցինք դատախազին:

Բազմաթիւ միջադէպեր պատահած են Շըրնաք: Քրտամէտ Հատէփ կուսակցութեան երկու պատասխանատուներ անհետացած են տեղւոյն ոստիկանութիւնը կանչուելէ ետք: Խորհրդարանը վերջերս, սահմանադրական կարգ մը բարեփոխումներ վաւերացուցած է, մասնաւորաբար յօդուած մը որ, սկզբունքով կը ջնջէ քրտերէն հրատարակութիւններու արգելքը: Պայտէմիր կ'ըսէ սակայն.– «այդ փոփոխութիւնները դրական են, բայց, անբաւարար: Կ'ուզենք որ Քիւրտերու գոյութիւնը ճանչցուի եւ ընդունուի»:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ զանազան քաղաքներուն մէջ, ոստիկանները ցոյցեր ըրին Հոկտ. 23-ին, բողոքելու համար իրենց սահմանափակ միջոցներուն եւ մանաւանդ դատաւորներու չնորհած ազատ արձակումներուն դէմ՝ կրկնակի յանցագործներու համար: Բուռն բանավէճ մը ծա-

(Շար.ը Դ. էջ)

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ ԵՒ ԱԲԽԱԶԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հոկտ. 12-ի մեր թիւով տեղեկացուցած էինք թէ Վրաստանի աբխազական հարցին առընչութեամբ Գոտորի կիրճին շրջակայքի գիւղերուն ռմբակոծումը, Հոկտեմբեր 8-ին, պատճառ եղած էր աւելի քան տասնեակ մը Հայերու մահուան: Այդ պատահարը պատճառ եղած էր որ ակնարկները կրկին դառնան դէպի Վրաստանի հայ գաղութը որուն դժգոհութիւնները, ակնկալութիւնները վերջերս աւելի յաճախ սկսած են տեղ գտնել հայկական լրափիւռներու մէջ:

Այդ գաղութէն տրուած արձագանգները գլխաւորաբար կը վերաբերէին Ջաւախքի շրջանին, ուր ինչպէս ծանօթ է, կարեւոր թիւ մը ունի հայութիւնը: Ու Հայաստանին սահմանակից այդ գօտին տէր է տնտեսական, ընկերային, ապահովութեան ու այլ բնոյթի հարցերու: Հայկական բնակչութեամբ գիւղերը, աւանները կը տրտնջան Թիֆլիսի անտարբերութենէն, վրացի իշխանաւորներու կամայական կարգադրութիւններէն, իրենց ձայնին անլսելի մնալէն, եւ այլն: Կ'ըսուի, կը գրուի թէ արտագաղթը հոն ալ կարեւոր չափերու հասած է, թէ՛ անհատական, թէ՛ հաւաքական մակարդակի ենթադրելի ու ոչ ենթադրելի հետեւանքներով:

Հարցը հոն է ամէն բանէ առաջ, որ Ջաւախքը հայաբնակ, հայախօս, մէկ խօսքով՝ հայկական շրջան ըլլալով հանդերձ Հայաստան չէ: Անոր տեղացիներուն համար թերեւս բնական է Երեւանէն հետաքրքրութիւն ու երկարած ձեռք մը ակնկալել, բայց Երեւանի համար այնքան ալ պարզ չէ ակնկալութիւններուն գոհացուցիչ արձագանգ տալ: Մնաց որ Երեւանի միջոցները, տրամադրութիւններն ալ իրենց ծանօթ նեղ սահմաններով, արդէն չեն կրնար իր ժողովուրդին անհրաժեշտը ապահովել:

Այս պայմաններուն մէջ դժուար չէ հասկնալ լքումի այն վիճակը որուն մէջ կը գտան իրենք զիրենք Վրաստանի Հայերը: Կան անոնց համար զօրակցութեան, օժանդակութեան ծրագիր մշակողներ, սակայն, վստահաբար, սխալ չէ եղածը համեմատել ովկէանոսի կաթիլի մը հետ:

Այս կացութեան վրայ, ներկայիս Վրատանը կայ որ բարդուի աբխազական խնդիրին մէջ չահագործուելու պարագան: Այդ չահագործումին համար յարմար գետին է Վրաստանի քաղաքական ներկայ վիճակը: Ռուսաստանէն կարելի չափով անկախանալու, արեւմտեան քաղաքական, նաեւ զինուորական կազմակերպութիւններու մաս կազմելու Թիֆլիսի հակումները ամէն առիթով Մոսկուայի հետ կնճիռներ կը ստեղծեն: Անոնց ծանրակշիռներէն էր Ջէչէններու օժանդակելու ամբաստանութիւնը զոր Մոսկուա ուղղեց ամէն յարմար պահու, բացայայտ, կամ քողարկուած ձեւով: Իսկ այսօր, մետալին միւս երեսը դարձած ըլլալ կը թուի երբ Աբխազներու հարցին մէջ Թիֆլիս կ'ամբաստանէ ռուսական զօրակցութիւնը: Այս փուլին ուշագրաւ է Թուրքիոյ մերձենալու, անոր հետ ամուր գործակցութիւն հաստատելու անոր ջանքը:

Ներկայի իրավիճակին մէջ, Վրաստանի հայ գաղութին առընչուած մտահոգութիւններու մէկ պատճառը այն է որ, ինչպէս կը գրէ Գոռ Աբրահամեան («Ազգ», Հոկտեմբեր 13), աւելի քան տասնեակ մը Հայերու մահուան պատճառ դարձած յարձակումներուն համար հակասական տեղեկութիւններ կը տրուին. աբխազական աղբիւրներ կը պնդեն թէ ան չէչէնեւվրացական ահաբեկչական խումբերու գործը եղած է, վրացական աղբիւրներու համաձայն կատարուածը աբխազեւռուս կողմին սադրիչ գործողութիւններուն հետեւանք է, որոնց նպատակն է լարում ստեղծել հայեւվրացական յարաբերութիւններուն մէջ:

Գ. Աբրահամեան մէջբերած է նաեւ նիւթին մասին Հայաստանի Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեանի ըսածը թէ իրենք շփումի մէջ են շահագրգիռ բոլոր կողմերուն հետ, նախ ամբողջական տեղեկատուութիւն ունենալու, յետոյ հայ բնակչութեան համար կացութիւնը մեղմել փորձելու համար: Անոր «Իրավիճակին Երեւանից ինչքան հնարաւոր է, տիրապետում ենք» արտայայտութիւնը կը բաւէ անդրադառնալու որ սահմանափակ է Երեւանի մարտավարութեան շրջանակը: Ատոր քով մտահոգիչը այն է որ Վրաստանի գաղութը քաղաքական այս նոր կնճիռին մէջ ներքաշելու մտադրութեան մը եւին, Հայաստանն ալ առընչելու հեռանկար կը նշմարուի:

Այդ հեռանկարին առջեւ, Հայաստանի պաշտօնական կեցուածքին քով կան երկու այլ բնոյթի հակադրեցութիւններ. առաջինը Հ.Յ.Դ.-ի համոզումն է. ան կ'ուզէ որ Հայաստան կարելի բոլոր միջոցներով փորձէ ներկայութիւն ապահովել հակամարտութեան գօտին մէջ, պաշտպանելու համար իր հայրենակիցներուն իրաւունքները: Նախ դիւանագիտական բանակցութիւն վարէ, ապա նաեւ պատուիրակութիւններով օգնէ տեղւոյն հայութեան: Այս տեսակէտին անդրադառնալէ ետք Գ. Աբրահամեան կը մէջբերէ ՀԱԳ-ի խորհրդարանական մենաժողովի քաղաքական յանձնաժողովի փոխ – նախագահ Հ. Յովհաննիսեանի արտայայտութիւնը թէ «Դա կազմակերպուած ոտնձգութիւն է Հայերի դէմ»:

Այս կեցուածքներուն զուգահեռ պէտք է նկատի ունենալ երկրորդ հակազդեցութիւն մըն ալ եկած է Վրաստանի խորհրդարանի հայ երեսփոխան Վան Պայպուրթեանէն. «Արմէնփրէս»ի Հոկտեմբեր 12-ի հաղորդաշարին մէջ Թիֆլիսի աղբիւրով տրուած լուրը քանի մը տող միայն յատկացուցած էր անոր: Վ. Պայպուրթեան ըսած է թէ Հայաստանի բարձրագոյն օրէնսդիր մարմնի ներկայացուցիչները Աբխազիոյ Հայերուն մասին պէտք է տեղեկութիւն ստանան չէզոք դիրք պահպանող հայրենակիցներէն: Այս չեշտումը հայ երեսփոխանը ըրած է հարցազրոյցի մը ընթացքին, ակնարկելով Հայաստանի Ազգային Ժողովին Հ. Յ. Դ. խմբակցութեան ղեկավար Ա. Վարդանեանի այն յայտարարութեան թէ վրացի զինեալներու հիւսիսային կովկասի յարձակողներու Աբխազիա ներխուժումին հետեւանքով 16 Հայ զոհուած է:

Երեսփոխանին խօսքերէն բացայայտ է որ ան տեղեկութեան, լուր առնել–տալու հարց մը կը նշմարէ հայաստանեան կողմին մօտ: Այսուհանդերձ, «Արմէնփրէս»ին արձագանգած չափով, ուղղակի ժխտում, կամ սրբագրութիւն չկայ Հայաստանէն տրուած տեղեկութիւններու վերաբերեալ: Վ. Պայպուրթեան կ'ըսէ միայն թէ Վրաստանի հայ քաղաքական գործիչները եւ «Վրաստանի Հայերու միութիւն»ը լծուած են ճշդելու Աբխազիոյ Հայերուն մասին եղած տեղեկատուութիւնը:

Նոյն լուրին մէջ ըսուած է նաեւ թէ Վրաստանի 1989-ի մարդահամարին տուեալներով Աբխազիոյ մէջ 85 հազար Հայ կ'ապրէր. ըստ Վ. Պայպուրթեանի տեղեկատուութեան այդ թիւը այսօր միայն 30 – 40 հազար է, քանի որ 1992 – 1993 թուականներու բախումներու պատճառով մեծ թիւով Հայեր շրջանէն մեկնած են:

Ներկայի կացութեան մէջ ուր Կովկասի շատ փափուկ հանդարտութեան պատճառած գրեթէ մնայուն վախերուն վրայ աւելցած է միջինասիական ալեկոծումը, աւելի քան անհրաժեշտ է սթափ ու պաղարիւն կեցուածքով արժեւորել ամէն մէկ տուեալ: Մանաւանդ երբ հոն կայ հայկական ազդակը: Պատմութիւնը պէտք եղածէն շատ ու շատ աւելի անգամներ ցոյց տուած է մեզի որ գիտակցօրէն կամ ոչ, տաքարիւն փութկոտութիւնը, ճիշդ արժեւորումներու արհամարհանքը, որքա՜ն սուղ վճարած ենք ամէն անգամուն:

Ատոր օրինակներով կը վխտայ մեր պատմութիւնը. պիտի բաւէ այդ մէկն ալ արհամարհելիներու կարգը չդասելու իմաստութիւնը ունենալ: Դժուար է հաւանօրէն, բայց վստահաբար՝ ո՛չ անկարելի:

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱՆՆԵՐ՝ ՅԱՐԱԲԵՐԱԲԱՐ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ

ՊՈԹՈՇԱՆԻ ԵՒ ԵԱՇԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Նախապէս առանձին յօդուածներով անդրադարձած ենք Ռումանիոյ եւ առանձնաբար Պուքրէշի ու Սուչաւայի յարաբերաբար նոր ժամանակներու հայ գաղթօճախներուն մասին: Այժմ կ'անդրադառնանք նոյն ժամանակաշրջանի Պոթոշանի եւ Եաշի հայ գաղութներուն:

ՊՈԹՈՇԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Պոթոշան քաղաք մըն է Ռումանիոյ հիւսիս – արեւելքը, բարեբեր դաշտերու մէջ, Մոլտաւիոյ սահմանին վրայ: Անիկա հին բնակավայր է, բայց յետագային Թաթարներ դէպի Եւրոպա իրենց արշաւանքներուն ժամանակ այրեցին զայն, որմէ ետք, 1439-ին անիկա վերակառուցուեցաւ: Նշանաւոր է քաղաքին Փոփաութի եկեղեցին, որ կառուցուած է 1496-ին:

Պոթոշան գաւառը հիւսիսէն Ուկրանիոյ եւ արեւելքէն ալ Մոլտաւիոյ սահմանակից է, իսկ Փրութ եւ Սիրէթ գետերը գաւառին արեւելեան եւ արեւմտեան սահմաններն են, որոնք կ'երկարին դէպի հարաւ – արեւելք: Պոթոշան գաւառը հարթավայրին է եւ մոլտաւական անծայրածիր դաշտերուն շարունակութիւնը կը նկատուի: Հարթավայրերը կը հասնին մինչեւ Քարփաթեան լեռներ. կան միայն փոքր բլուրներ: Գաւառին բարեբեր արտերը ցորենի եւ այլ հացահատիկներու կարեւոր շտեմարան են նաեւ շրջանին ագարակները: Պոթոշան ճանչցուած է իբրեւ երկրագործական արտադրութիւններու կեդրոն. նշանաւոր է մանաւանդ Պոթոշանի գինին:

ԺԹ. դարու վերջաւորութեան տուեալներով Պոթոշան մօտաւորապէս 40 հազար բնակչութեամբ քաղաք մըն էր (ներկայիս անիկա 120 հազար բնակիչ ունի) եւ այդ ժամանակներէն իսկ ճանչցուած էր իբրեւ Ռումանիոյ գեղեցկագոյն քաղաքներէն մէկը: Հոն կար կրթական բարձրագոյն հաստատութիւն, երկրորդական կրթութեան յատուկ գիշերօթիկ վարժարան եւ նախակրթարաններ՝ աղջկանց ու տղոց համար:

Պոթոշան հայկական գաղթականութեան ամէնէն հին կեդրոններէն եղած է. կը կարծուի, որ Անիի 1064-ի գաղթականներէն ոմանք հոն հաստատուած են, եւ Պոթոշանցիներ իրենք զիրենք Անեցիներու հարազատ սերունդները կը նկատեն:

Քաղաքին Հայոց Սուրբ Աստուածածին Եկեղեցին կառուցուած է 1350-ին եւ վերակառուցուած է յետագայ ժամանակներուն: Անոր կողքին կը գտնուի Ս. Երրորդութիւն եկեղեցին, որ աւելի ուշ ժամանակներու կառուցուած է (թուականը յայտնի չէ), եւ տեղացիներէն «Նոր Ժամ» կոչուած է. անիկա եւս վերանորոգումներու ենթարկուած է: Ս. Օգսենտի նուիրուած երրորդ եկեղեցի մըն ալ պէտք է եղած ըլլայ Պոթոշանի մէջ: Գրիգոր Կոյլաւեան անոր յիշատակութեան հանդիպած է 1710 թուականը կրող վաւերաթուղթի մը մէջ: Հաւանաբար անոր վայրին վրայ յետագային կառուցուած է Ս. Երրորդութիւն եկեղեցին:

ԺԹ. դարու կէսերէն սկսեալ Պոթոշանի Հայոց հոգեւոր հովիւները եղած են Ստեփան Քհնյ. Միլհաչեան եւ Պօղոս Քհնյ. Յակոբեան, որոնք մօտաւորապէս կէս դար ծառայած են իրենց հօտին բարօրութեան:

Պոթոշանի Հայերը հինէն ի վեր առեւտրականներ, արհեստաւորներ եւ երկրագործներ եղած են: Անցեալին անոնք ունէին նաեւ իրենց առանձին դատարանը: Քաղաքին մէջ գործած է «Կորինճորաց Եղբայրութիւն»ը, որ կարեւոր դեր ունեցած է հայապահպանման մէջ:

ԺԹ. դարու կէսերուն եւ վերջաւորութեան Պոթոշան քաղաքին մէջ կը բնակէին մօտաւորապէս 150 հայ ընտանիքներ, նաեւ հարիւր ընտանիքներ ալ՝ շրջակայ գիւղերուն մէջ: Յիշենք, որ նախապէս, 1830-ական տարիներու տուեալներով, Պոթոշանի շրջանի հայութեան թիւը 300-էն 350 ընտանիք կը գնահատուէր: Քաղաքաբնակ Հայերը ընդհանրապէս առեւտրականներ էին, իսկ գիւղերու բնակիչները՝ երկրագործներ: Այս ժամանակ Պոթոշան վաճառականական կարեւոր քաղաք էր, իսկ շոգեշարժ աղօրիներու արտադրած ալիւրը մեծ սպառում ունէր:

Պոթոշցիք 1839-ին ձեռնարկեցին ազգային վարժարանի կառուցման. անոր նախաձեռնութիւնը ստանձնեցին Լուսիկ եւ Ստեփան Կոյլաւեան եղբայրներ, Խաչիկ Ազոնց, Գրիգոր Մեղաքսեան, Յակոբ Շահինեան եւ Աստուածատուր Ապրոյեան. վարժարանին կառուցումը աւարտեցաւ 1841-ին: Անոր առաջին տեսուչը եղաւ Գասպար Կոյլաւեան, որուն օրով աշակերտութեան թիւը 140-էն 160-ի հասաւ: Անոր յաջորդեց Քիթապճի Մարգարէ: Հոն պաշտօնավարած են Գաբրիէլ վարժապետ Գէորգեան, Երուսաղէմի միաբան եւ բնիկ պոթոշանցի Մարկոս վարդապետ (ապա եպիսկոպոս), Պօղոս Քհնյ. Յակոբեան (ան 1851-էն սկսեալ եւ աւելի քան կէս դար ուսուցչութեան պաշտօններ վարեց Պոթոշանի եւ այլ քաղաքներու մէջ) եւ Նիկողոս Ջէննէեան (որ 40 տարի պաշտօնավարեց):

Պոթոշանի աղջկանց վարժարանը մինչեւ 1865 խղճալի վիճակ մը ունէր, բայց այնուհետեւ Պօղոս Քհնյ. Յակոբեան եւ Սիմոն Բոռովիչ բարեկարգեցին դպրոցը եւ որոշ մակարդակով մը օժտեցին զայն: Անոնց ջանքերուն ի տես՝ այլ ազգայիններ բոլորուեցան դպրոցին շուրջ եւ կազմեցին «Բարեգործական» անունով ընկերութիւն մը, որ իր խնամակալութեան տակ առաւ դպրոցը: Այս ժամանակ ալ Աղա Խաչերես Կոյլաւեան վարժարանին շէնքը գնեց եւ ազգին նուիրեց:

Պոթոշանի մանչերու վարժարանը փակուեցաւ 1890-ին, որմէ կարճ ատեն մը ետք աղջկանց վարժարանն ալ փակուեցաւ: Այնուհետեւ նոր սերունդը մայրենի լեզուն սորվելու հնարաւորութենէն զրկուեցաւ:

Պոթոշանի Հայերը միշտ իրենց կապը պահած են հայրենիքին հետ եւ իրենց օժանդակութիւնը չեն զլացած: Այսպէս, 1869-ին անոնք օժանդակութիւններ հասուցած են զէյթունցիներուն, իսկ 1880-ին հանգանակութիւն կատարած են եւ հաւաքուած դրամը Արեւմտահայերուն ղրկած են:

ԵԱՇԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Եաշ քաղաք մըն է Ռումանիոյ հիւսիս-արեւելքը, մոլտաւական լայնատարած եւ կանաչազարդ դաշտերուն մէջ, Քոփոուլ եւ Շորոկար բլուրներուն հիւսիսը, Պահլուի եւ Փրութ գետերու միացման ափին եւ ճանչցուած է իր գեղեցիկ բնութեամբ ու առողջարար կլիմայով: Անկէ 13 քմ. արեւելք Մոլտաւիոյ Հանրապետութեան սահմանն է:

Եաշ Է. դարուն բնակավայր եղած է, բայց ԺԴ. դարու վերջաւորութենէն Գերմաներէն Եաշչի հնչումով ճանչցուած է. այդ ժամանակ անիկա պարսպապատուեցաւ եւ Փրութի հովիտէն անցնող առեւտրական ուղիին վրայ կայանի վերածուեցաւ: ԺԵ. դարու կէսէն ետք անիկա Մոլտաւիոյ իշխաններուն մայրաքաղաքը դարձաւ:

ԺԹ. դարու վերջաւորութեան Եաշ 90 հազար (ներկայիս՝ 330 հազար) բնակչութեամբ քաղաք մըն էր՝ կանոնաւոր լայն փողոցներով, գեղակերտ շէնքերով, հիւանդանոցներով ու պալատներով. համալսարանը ունէր չորս բաժանմունք (իրաւագիտութիւն, բժշկութիւն, գրականութիւն եւ գիտութիւն), կար բարձրագոյն վարժարան, ուսուցչանոց, դպրեվանք, գեղարուեստի, երաժշտութեան ու առեւտրական վարժարաններ, նախակրթ-

թարան, աղջկանց դպրոց եւ այլ երկսեռ դպրոցներ:

Այս ժամանակաշրջանին Եաշի մէջ եօթնասուն հայ ընտանիքներ կը բնակէին. անոնք ԺԴ. դարուն հոն հաստատուած անեցիներու սերունդ կը նկատուէին, թէեւ յետագային Մոլտաւիոյ տարբեր շրջաններէ, Ղրիմէն եւ Հայաստանէն գաղթականներ հաստատուած են հոն: Հայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ կառուցման արձանագրութիւնը՝ 1395, ոչ միայն հայ գաղութի, այլեւ Եաշ քաղաքի գոյութեան ամէնէն հին վկայութիւնն է:

Իրենց առանձին թաղամասին՝ Մահալուա Արմենիլորի մէջ կեդրոնացած՝ Եաշի Հայերը հինէն ի վեր ինքնամփոփ կեանք մը ապրած են իրենց առանձին դատարանով եւ քաղաքապետ (վոյթ) ունենալու իրաւունքով: Հոն կը գտնուէր Մոլտաւիոյ Հայոց առաջնորդական աթոռը: Զիմբրրէ փողոցին վրայ 1616-ին կառուցուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին 1828-ին հրոյ ճարակ դարձաւ եւ այլեւս չվերակառուցուեցաւ:

Եաշի հայ համայնքը հրդեհին զոհ գացած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վայրին վրայ 1862-ին ձեռնարկեց շէնքի մը կառուցման՝ աղջկանց վարժարան բանալու նպատակով, բայց նիւթական դժուարութիւններու եւ բաւականաչափ աշակերտի չգոյութեան պատճառով ծրագիրը չիրականացաւ:

Եաշի հայ սերունդի դաստիարակութեան մէջ կարեւոր դեր ունէր Հայկազեան վարժարանը, որ սակայն 1887-ին փակուեցաւ. Օրիորդաց դպրոցը, հիմնուած՝ 1847-ին, քանի մը տարի ետք փակուեցաւ, իսկ Գարագաշեան գիշերօթիկ վարժարանը, հիմնուած՝ 1866-ին, 1892-ին փակուեցաւ. ԺԹ. դարու վերջաւորութեան արդէն հայկական ոչ մէկ դպրոց կը գործէր Եաշի մէջ:

Եաշի Հայերը առաջնակարգ դիրքի վրայ կը գտնուէին առեւտրական շուկային մէջ. կային սերունդէ սերունդ ժառանգական առեւտրականներու գերդաստաններ, որոնք միաժամանակ ազգային կեանքի առաջնորդող ուժերն էին եւ հեղինակութիւն էին նաեւ պետական շրջանակներու մէջ:

Հայեր կը բնակէին նաեւ Եաշի շրջակայ գիւղերու մէջ. անոնք անասնապահութեամբ եւ երկրագործութեամբ կը զբաղէին:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

«Ազդակ»

Անթոնիի Հայկական Շաբթուան ձեռնարկներէն

«ԵՐԿԻՐ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ»

Երկիր եւ Մշակոյթ կազմակերպութեան Մեծ Եղեռնի ցուցադրութիւնը «Պատկերներ անցեալ դարէն. Հայոց ցեղասպանութիւնը՝ 1915 – 1916» առաջին անգամ ներկայացուած է Փարիզ, «Արշ տը լա Տէֆանս», Հոկտեմբեր 1995ին, «Պատկերներ մեր դարէն» իր առաջին խորագրով: Կազմակերպութիւնս ունեցած է երկու նպատակ. պատկերազարդ վաւերագրութեան գործածութեամբ նկարագրել երկիրն ու դէպքերը, ապա նպաստել Մեծ Եղեռնի ճանաչման՝ որպէս ցեղասպանութիւն: Այդ թուականէն ի վեր, ցուցադրութիւնը շրջած է Ֆրանսայի տարբեր քաղաքներու մէջ եւ զանազան երկիրներ. ընդարձակուած է նաեւ բազմաթիւ նոր պատկերներով: Կը բաղկանայ երեք մասերէ. Ա. – Երկիրը նախապատերազմեան շրջանին, կենցաղ եւ առօրեայ, ընդգրկելով 1894 – 96-ի եւ 1909-ի կոտորածները. Բ. – 1915 – 1916-ի ջարդերն ու տեղահանութիւնը, հերոսամարտերը. Գ. – Հետեւանքներն ու յետ պատերազմեան կացութիւնը, վերապրողներու արտաքսում, գաղթականութիւն, որբախնամ գործունէութիւն: Անթոնիի ցուցադրութիւնը առաջինը չէ Փարիզի շրջակայքի քաղաքներուն մէջ, ցուցադրութիւնը ներկայացուած է արդէն Առնուվիլ, Ալֆորվիլ, եւ Վիլժուիֆ: Իսկ Փարիզի շրջանէն դուրս, եղած է Թուլուզ, Կռընոպլը, Լիոն, Վիլֆրանշ, Մարսէյլ, Նիս, Սթրազպուրկ եւ այլ տեղեր. յաճախ ընդունուելով քաղաքապետարաններէն ներս: Ներկայացուած է նաեւ Պէրլինի մէջ եւ Կիպրոս: Երկրորդ օրինակ մը կը շրջի Հարաւային Ամերիկա, ուր արդէն ներկայացուած է Մոնթէվիտէօ, Պուէնոս – Այրէս եւ Գորտոպա: Յաջորդ հանգրուանները պիտի ըլլան Դամասկոս, Հալէպ եւ Երեւան:

«ՆԱՒԱՍԱՐԴ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ ԵԼՈՅԹԸ

Կիրակի, Հոկտեմբեր 7-ին տեղի կունենային Նաւասարդ պարախումբին զոյգ ելոյթները Անթոնիի Ֆիրմէն Ժէմիէ սրահին մէջ, կազմակերպութեամբ տեղւոյն Ֆրանքեւհայկական ակումբին եւ քաղաքապետարանին:

Նաւասարդը անփոխարինելի տեղ կը գրաւէ Փարիզի եւ շրջանի հայկական մշակութային կեանքին մէջ: Անգամ մը եւս ան ցոյց տուաւ տարիներու իր փորձառութիւնն ու հասած մակարդակը. մանաւանդ որ զօրացած ու քաջալերուած էր Օգոստոսին Հայաստան, Ղարաբաղ կատարած ճամբորդութենէն ու հոն գտած յաջողութենէն: Այդ ճամբորդութիւնը նոր եռանդ ու թարմութիւն բերած էր խումբին:

Հոկտեմբեր 7-ի յետմիջօրէին բացման խօսքը արտասանեց Հանրի Մանկասարեան, Ֆրանքեւհայկական ակումբին ատենապետը: Կարելի չէ խօսիլ Նաւասարդի մէկ ելոյթին մասին, առանց անդրադառնալու անոր երկար տարիներու պարուսոյց եւ ղեկավար Էտի Ճօլօլեանի կատարած լուրջ ու նուիրեալ աշխատանքին:

Լեցուն սրահը առաջին պահէն խանդավառութեամբ ու ծափերով ողջունեց պարուհիներն ու պարողները, մեծապէս գնահատելով նուագախումբն ալ: Ներկաները գեղեցիկ անակնկալը ունեցան յայտագրին մէջ նոր պարեր գտնելու որոնք առաջին անգամ կը ներկայացուէին. անոնցմէ էր «Կարօտ»ը, արդիական մեկնաբանութեամբ, շատ ճաշակաւոր տարազներով որոնք ներշնչումը կը մատնէին Փարաճանովի Սայաթ Նովային տեսարաններուն: Յատուկ խանդավառութիւն ստեղծեցին երկու մեներգիչները՝ Ռոզին Թաշճեան եւ Յակոբ Պատըլեան իրենց հարազատ մեկնաբանութեամբ:

Նոյն յայտագիրը նոյն խանդավառութեամբ կրկնուեցաւ նոյն երեկոյեան:

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ, ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

Շաբաթ, Հոկտեմբեր 13-ին, Անթոնիի Տարիուս Միլօ երաժշտանոցին հանդիսասրահը ամբողջովին լեցուն էր հայ եւ ոչ հայ բազմութեամբ մը: Երեկոյթին յայտագիրը կը բաղկանար քանի մը բաժիններէ: Ֆրանքեւհայկական բարեկամութեան ակումբին նախագահ Հ. Մանկասարեանի բացման խօսքէն ետք բեմ բարձրացաւ Դպրոցասէր Վարժարանի մանկական երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Հայկ Սարգիսեանի: Պատանիները երգեցին Կոմիտասի, Ալան Յովհաննէսի կտորներէն ու ժողովրդական երգեր:

Մեծապէս գնահատուած այս բաժինէն ետք բեմը յանձնուեցաւ Ֆրէն քաղաքի սենեկային նուագախումբին որուն ղեկավարն էր ծանօթ երաժիշտ Ժան – Ժագ Վէրնէր: Անոնց յայտագիրը բաղկացած էր առաւելապէս հայ երգահաններու գործերէն. Պօղոս Ճէլալեան, Տիրան Ալեքսանեան, Ալան Յովհաննէս: Այս բաժինով ալ շարունակուեցաւ երաժշտական վայելքը ու կարճ դադարէ մը ետք նուագեց Յասմիկ Սիւրմէլեան, Անի Ժոտրի, Էլիան լը Պլան երրեակը:

Վերջին բաժինը յատկացուած էր երգչուհի Հերմինէ Երիցեանի որուն կ'ընկերանար Ֆրէնի երաժշտանոցին սենեկային նուագախումբը, ղեկավարութեամբ Ժ. – Ժ. Վէրնէրի: Ծանօթ երգչուհին մեծ յաջողութեամբ երգեց Ն. Շնորհալիի շարականներէն, ապա Դանիէլեան, Կոտոյեան: Ան արժանացաւ յոտնկայս երկարատեւ ծափերու որոնցմով ներկայ բազմութիւնը կ'արտայայտէր թէ՛ գնահատութիւն, թէ՛ խանդավառ գոհունակութիւն:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ի.

ՀՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

– Պարզապէս դիպուածով հանդիպեցայ քեզի, եւ եթէ ճամբան չկենայիր, ու քովէդ չանցնէի, բնաւ պիտի չտեսնայի քեզի:

– Սուտ կը խօսիս կոր, – գոչեց Տրդատ:

– Կ'երդնում, որ սուտ չէ:

– Այս իրիկուն յատկապէս Շիշլի չեկա՞ր մեզի փնտռելու:

– Չէ՛, – պատասխանեց լրտեսը:

– Մեզի չհետապնդեցի՞ր:

– Քեզի առանձին տեսայ:

– Դարձեալ սո՛ւտ կը խօսիս, – պոռաց երիտասարդը:

– Պատւոյս վրայ կ'երդնում:

– Պիտի ապացուցանեմ, որ սուտ կը խօսիս:

– Ինչպէ՞ս...

– Դուն մեզ տեսար ճամբան, երբ այս ընկերոջս հետ տուն կուգայինք, եւ կամաց – կամաց սկսար մեզի հետեւիլ... Մենք քեզի առաջին վայրկեանէն նշմարեցինք եւ որովհետեւ հասկցանք, որ մեզ կը հետապնդես, անմիջապէս գղուշական միջոցներ ձեռք առինք: Օրինակի համար, որոշեցինք իրարմէ բաժնուիլ, յետոյ քեզ վարպետութեամբ այս տունը բերել ու յետոյ կրկին միանալ այստեղ... ինչպէս կը տեսնաս, մեր ծրագիրը յաջողութեամբ գլուխ հանեցինք:

Լրտեսը գլխիկոր եւ լուռ կը մնար:

– Կ'ընդունի՞ս, որ ճիշդ են բոլոր ըսածներս, – հարցուց երիտասարդը:

– Ես դիպուածով ձեզի տեսայ, – պնդեց Արշակ:

– Եւ սակայն մեզի հետապնդեցիր:

– Ատիկա ճիշդ է:

– Եւ ծածկաբար:

– Այսինքն բոլորովին վստահ չէի, որ դուն էիր, անոր համար չուզեցի անմիջապէս քովդ մօտենալ:

– Երբոր մենք կեցանք ու պահ մը խօսակցելէ ետքը իրարմէ բաժնուեցանք, դուն դրան մը տակը պահուըտեցար, փոխանակ ճամբադ շարունակելու. ասիկա ցոյց կու տայ, թէ մեզի կը հետապնդէիր, առանց ուզելու, որ քեզ տեսնենք:

– Բայց վերջապէս ի՞նչ ըսել կ'ուզես, – ըսաւ Արշակ, որ ինքնարդարացման որեւէ միջոց չէր կրնար գտնել:

– Ապացոյցներ ուզեցիր ինէ, եւ ես զանոնք տուի, ահա խնդիրը: Հիմա ուրիշ բան մը պիտի պահանջեմ քենէ:

– Ի՞նչ բան:

– Ինչպէ՞ս իմացար, որ մենք Շիշլիի կողմը կը գտնուէինք:

– Ըսի արդէն, որ դիպուածով հանդիպեցայ ձեզի:

– Սո՛ւտ կը խօսիս, ճշմարտութիւնը խոստովանէ՛, հակառակ պարագային պիտի ստիպուինք տարբեր կերպով վարուիլ հետդ:

Այս սպառնալիքը իր ազդեցութիւնը ըրաւ:

Արշակ տեսաւ, որ ուրացումը այլեւս անօգուտ էր, երիտասարդները ամէն բան գիտէին:

– Այս իրիկուն իմացայ, որ հոս ես եղեր, ինչպէս նաեւ քու ընկերդ:

– Ինչպէ՞ս իմացար:

– Մէկը ձեզի տեսած էր երէկ առտու, ան ըսաւ:

– Ո՞վ է այդ մէկը:

Լրտեսը պահ մը վարանեցաւ, յետոյ պատասխանեց:

– Աստիկ Մարկոսեան էֆէնտին:

Տրդատ այս անունը լսելով՝ զարմացաւ: Այդ անունով մէկը չէր յիշեր:

– Ո՞վ է այդ Աստիկ էֆէնտին, – հարցուց:

– Փաստաբան եւ Թուրք թերթերու խմբագիր է, – պատասխանեց Արշակ:

– Բայց ես այդպիսի մարդ չեմ ճանչնար:

– Կ'երեւայ, որ մոռցեր ես, օր մը իրեն հետ միասին գտնուեցանք յոյն գինեպանին խանութը:

– Հիմա յիշեցի, – գոչեց երիտասարդը, – ուրեմն այդ մարդն ալ քեզի պէս լրտես է...

– Չեմ գիտեր, – պատասխանեց Արշակ:

– Ինչ որ է... այս կէտը մեծ կարեւորութիւն չունի: Հիմա հասկցանք, որ յատկապէս մեզի հետապնդելու համար եկած ես հոս:

– Եթէ այդպէս ըլլար, ձեզի խորհուրդ չէի տար զգուշական միջոցներ ձեռք առնելու, – պատասխանեց Արշակ:

– Այդ խորհուրդներդ պարզապէս խաղ է...

– Ի՞Ն խաղ կ'ուզես որ ըլլայ...

– Մեզի վստահութիւն ներշնչելու եւ քնացնելու համար... ինչ որ դուն չես ուզեր խոստովանիլ, մենք կը գուշակենք: Քու դիտաւորութիւնդ էր մեր ետեւէն գալ, տուներնիս սորվիլ եւ յետոյ ոստիկանութեան ձեռքով ձերբակալել...

– Իրողութիւնը հակառակը ցոյց կու տայ...

– Ո՛չ, այլ ատիկա կը հաստատէ, բարեբախտաբար մենք շուտով նշմարեցինք քեզ եւ իսկոյն զգուշական միջոցներ ձեռք առինք, այսպէս՝ փոխանակ ճամբանիս շարունակելու միասին՝ իրարմէ բաժնուեցանք, այս կերպով շփոթութեան մատնեցինք քեզ: Ես գիտէի, սակայն, որ դուն իմ ետեւէս պիտի գայիր եւ դիտմամբ կեցայ ու հետդ խօսակցութեան բռնուեցայ, որպէսզի միասին տուն բերեմ քեզի: Անգամ մը որ հոս եկար, գործդ դժուարացաւ: Տունս թէեւ սորվեցար, բայց ինչպէ՞ս պիտի օգտուէիր ատկէ: Առանձին չէին համարձակեր զիս ձերբակալելու: Եթէ դուրս ելլէիր ոստիկան բերելու համար, կրնայի ես փախչիլ, և ճիշդ ասոր համար փորձեցիր իմ վստահութիւնս շահիլ եւ զգուշութեան յորդորներ տալ, ճիշդ չե՞մ գուշակած:

– Կը տեսնեմ, որ ինչ որ ըսեմ, անօգուտ է, – պատասխանեց լրտեսը ընկճուած դէմքով մը:

– Շատ ճիշդ կը խօսիս, այս ինքնարդարացումի որեւէ խօսք օգուտ չունի, մեզի հանդէպ քու դաւաճանութիւնդ, ինչպէս տեսար, փաստերով ու ապացոյցներով ցոյց տուի, հիմա պատրաստուէ՛ քու արժանի պատիժդ կրելու:

– Ի՞նչ պատիժ, – հարցուց լրտեսը դողահար ձայնով:

– Այն միակ պատիժը, որ կրնանք տալ դաւաճաններուն:

– Բայց ի՞նչ իրաւունքով մէկը կը դատէք ու կը դատապարտէք:

– Ատիկա մեր խղճին գիտնալիք բանն է, – գոչեց երիտասարդը:

Լրտեսը երկու երիտասարդներուն նայուածքին մէջ կարդաց իր մահուան վճիռը եւ բոլոր մարմինովը սարսռաց: Մինչեւ հիմա գերագոյն ճիգերով կրցած էր իր պաղարիւնութիւնը պահել, բայց յանկարծ տկարացաւ:

«Այս մարդիկը զիս պիտի սպաննեն», – խորհեցաւ, եւ այս մտածումը զինքը սարսափեցուց:

– Ներեցէք ինծի, – գոչեց պաղատագին:

– Դաւաճանին համար ներում չի կայ:

– Յիշէ մեր ունեցած բարեկամութիւնը:

– Դուն ինչո՞ւ չյիշեցիր:

Լրտեսը շարունակեց իր աղաչանքները, որոնց երկու երիտասարդները սառն կերպով պատասխանեցին: Ի վերջոյ Արշակ տեսաւ, որ փրկութեան որեւէ յոյս չի կայ եւ անկարելին ուզեց փորձել:

(Շար. 89)

(Շար. Ա. էջէն)

գած է վերջին օրերուն, երբ «Ջինայրին» մկրտուած յանցագործը ազատ արձակուած էր եւ Հոկտ. 16-ին զինեալ կողոպուտի մը ձեռնարկած էր Փ.էսի-Թրէվիզ, որու ընթացքին երկու ոստիկան սպաննուած էին: Ենթական՝ Ժան-Գլօտ Պոնալ, Սայկոն ծնած, 48 տարեկան, աւելի առաջ ալ, Հոկտ. 6-ին, Աթիս-Մոնսի արձարանին չորս սպանութիւններուն հեղինակն է: Բանտն էր 1998-ի արիւնալի կողոպուտի մը համար Փրէնթան վաճառատունը եւ հակառակ իր «ծոխ» թղթածրարին (երեք դատապարտուած) ազատ արձակուած էր համաձայն Կիկու օրէնքին: Ոստիկանութիւնը այլեւս զըզուած է, քանի ինչ ձերբակալութիւն ալ կատարէ, քանի մը օր կամ քանի մը ժամ ետք, յանցագործը ազատ-ազատ կը պըտըտի: Ամէնէն բազմամարդ ցոյցը տեղի ունեցաւ Գրէթէյլ, 10.000 ոստիկանի մասնակցութեամբ: Լուռ եւ արժանավայել ցոյց մը ի յիշատակ զոհուած ոստիկաններուն: Պրիւնօ Մեկրէ, որ ուզած է մասնակցիլ որպէս պարզ քաղաքացի, սուլոցներով վռնտուած է: Նմանօրինակ ցոյցեր տեղի ունեցած են Մարսէյլ, Լիոն, Թուլուզ, Պորտօ, Փերփինեան, Օչ: Արդարութեան նոր նախարարուհին՝ Մարիզ Լըպրանշիւ օրերէ ի վեր կը ջանայ հանդարտեցնել կիրքերը, շեշտելով թէ օրէնքը (անմեղութեան ենթադրութիւն) չի կրնար փոխուիլ, դատաւորներուն կը մնայ լաւ կատարել կիրարկումը: Նոյն օրը (Հոկտ. 23) փոթորկալից նիստ մը տեղի ունեցած է Ազգ. Ժողովին մէջ: Աջի կարգ մը երեսփոխաններ պահանջած են որ օրէնքը վերանայուի, մոռնալով որ ան միաձայնութեամբ ընդունուած է Ծերակոյտին կողմէ...:

ՁՈՀԵՐՈՒ համար (գողութիւն, յարձակում, սեռային բռնաբարում) հեռաձայնի ձրի թիւ մը հաստատուած է Ֆըրանսայի մէջ: Այդ թիւն է 08 10 09 86 09:

ԻՍԱՅԷԼԻ Արտաքին նախարարը՝ Շ. Փերէս ընդունուած է Պուշի կողմէ եւ ապահովութիւն տուած որ «միտք ունին քաշուելու» պաղեստինեան ինքնավար շրջաններէն: Իսրայէլի նախարարը աւելցուցած է սակայն. «Անմիջապէս երբ Պաղեստինցիք ձեռք առնեն օրէնքին յարգանքը եւ բանտարկեն խռովարարները»: Ֆիկառոյի տուած հարցազրոյցի մը մէջ, Երուսաղէմի լատին պատրիարքը՝ գերապայծառ Սապպահ (որ Վատիկան կը մասնակցի եպիսկոպոսներու սինոդոսին) շատ դէշ կը ներկայացնէ Բեթղեհէմի վիճակը: Պաղեստինցի ժողովուրդը, կ'ըսէ, կ'ուզէ ազատ ապրիլ այն փոքրիկ հողամասին վրայ որ իրեն շնորհուած է: Իրեն համար, նոյնիսկ եթէ Պէն Լատէն մը անհետանայ հարիւրաւոր ուրիշներ մէջտեղ կ'ելլեն, այդ պատճառով պէտք է խորհրդածել մեր ընկերութիւններուն եւ ներկայ աշխարհին անհաւասարակշռութիւններուն վրայ:

ԻՐԼԱՆՏԱՅԻ Հանրապետական Բանակը (ԻՐԱ) պատմական որոշում մը տըւաւ Հոկտ. 23-ին, յայտարարելով թէ համաձայն է ապազինուելու: Այս ձեւով, նոր էջ մը կը բացուի հիւսիսային Իռլանտայի համար: Թ. Պլէր ողջունեց «հիմնական կարեւորութիւն» ունեցող այս արարքը:

ԺՈՍՓԷՆ մեծ խանդավառութեամբ անդրադարձած է ֆրանքեւռուսական «դըրական խոյանք»ին: Գլուխ գլխի տեսնուելէ ետք Պուտինի հետ, յայտարարած է թէ «լուրջ երկխօսութիւն մը» տեղի ունեցած է բարեկամներու միջեւ: Երբեք այսքան ջերմ յարաբերութիւններ չեն եղած երկու երկիրներուն միջեւ:

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ, անգրագիտութիւնը 10%-ի հասած է 17 տարկան պատանիներու մօտ, որոնք կարդալու կարողութիւն իսկ չունին: «Երիտասարդ չափահասները ի վիճակի չեն պարզ եւ կարճ բնագիր մը կարդալու», այս է եզրակացութիւնը երկու համալսարանականներու պատրաստած տեղեկագրին:

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Միշլին Օսքէրմէյէր - Ղազարեանի մահուան առթիւ, Նատին եւ Վիգէն Դարբինեան 300 ֆրանք կը նուիրեն «Յառաջ»ին:

Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Շաբաթ օր ,Հոկտեմբեր 27
ժամը 10.45-էն 12

ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ

ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ
Մայր Տաճարին մէջ

«Առաւօտեան յատուկ ժամերգութիւն» տեղի պիտի ունենայ մասնակցութեամբ՝ Փարիզի 8-րդ, 16-րդ եւ 17-րդ թաղամասերու «էթուալ - Շան զ'էլիզէ»ի Քրիստոնեայ (Անկլիքան, Կաթողիկէ, Ուղղափառ եւ Բողոքական) Եկեղեցիներու:

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը մասնակցելու սոյն էքիւմէնիք աղօթքներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԻԱԳԻԾԵՐ
ARMENIAN AIRLINES

COMMUNIQUE

La compagnie aérienne nationale Armenian Airlines informe que les horaires de ses vols reliant Paris à Erevan durant la saison d'hiver seront modifiés à partir du 29 octobre.

Les nouveaux horaires sont :

- Lundi et Jeudi
- Arrivée à Paris, aéroport Charles de Gaulle 1, à 10h20;
- Départ de Paris, aéroport Charles de Gaulle 1, à 16h30.

Pour de plus amples informations, veuillez appeler le : **01 42 96 10 10.**

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Երախայ կամ տարեց անձ մը խնամելու համար, հայաստանցի կին մը աշխատանք կը փնտռէ. -

Հեռաձայնել. - Տիկին Արփինէ
01 39 33 40 48

GALERIE YVART*

կը ներկայացնէ Յովհաննէս Յարութիւնեանի ցուցահանդէսը՝ «Կիներ», Հոկտեմբեր 30-էն Նոյեմբեր 17:

* 92, rue Blomet, 75015 Paris

CONCERT

à l'occasion du 1700e anniversaire
de la conversion de l'Arménie
au christianisme
le samedi 27 octobre à 20h30
dans la Cathédrale Sainte-Croix
de Paris des Arméniens Catholiques,
Au profit de l'école
Sainte-Croix du samedi
MOURAD AMIRKHANIAN
(Basse)
chante : **Haendel, Verdi, Bellini, Fauré, Beethoven, Schubert, Komitas, Babadjanian, Tchaikovsky, Rachmaninov, Dikranyan, Hagopian, Spentiaryan**
accompagné au piano
par **Johan Struyve.**
Entrée: 13, rue du Perche
(angle rue Charlot) Paris 3e.
Participation aux frais: 60 F
Réservations: Tél.: 01 44 59 23 50
Fax: 01 44 59 23 54.
Métro: République, Filles du Calvaire.

MAISON DE LA CULTURE ARMENIENNE D'ALFORTVILLE
ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

La M.C.A. a le plaisir de vous inviter
à la
RENCONTRE
avec
Մ Ո Վ Ս Է Ս Պ Ձ Ա Ք Ճ Ե Ա Ն
MOVSES BETCHAKDJIAN
à l'occasion de la parution
de son dernier ouvrage
«Մինչեւ վերջին արեւներուն»
«JUSQU'AU DERNIER DES SOLEILS»
le Vendredi 26 octobre à 20h45
Salle S. Minassian, M.C.A.
Présentation et analyse
de l'ouvrage :
NORA BAROUTDJIAN
Avec l'aimable participation de :
ARA KRIKORIAN
et du Père HAROUTIOUN BEZDIKIAN
Accompagnement musical
à la guitare de lectures
par **Ohannès DEMIRDJIAN**

9, rue de Madrid — 94140 Alfortville
☎ 01.43.76.55.89 — Fax 01.43.78.66.64
e-mail : MCA.ALFO@wanadoo.fr

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
HAMASKAÏNE
ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Հինգշաբթի, Հոկտեմբեր 25, ժամը 20.30ին Փարիզի Հայ Մշակոյթի Տան մէջ 17, rue Bleue — 75009 PARIS
ՀԱՅՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԶՏԻԿԵԱՆ
(Ս. Ղազար, Վենետիկ)

կը ներկայացնէ
Մովսէս Պչաքճեանի վերջին հատորը

«ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋԻՆԸ ԱՐԵՒՆԵՐՈՒՆ»

Գինեձօն երեկոյթի աւարտին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կապոյտ Խաչի Մարսէյլի հրջանի Պուվոյ Օտոյի Լէոյա Սասունի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ, Կիրակի, Հոկտեմբեր 28, Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ մէջ, 7 ռիւ Արթիւր Միշօ, 15-րդ թաղամաս իր ողբացեալ ընկերուհիներու յիշատակին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SOIREE DANSANTE

organisée par
La Section «TER-DAVTIAN» de la Croix Bleue des Arméniens de Chaville
le Samedi 27 octobre à 20 heures 30
A l'Atrium de Chaville
3, Parvis Robert Schumann
avec la participation
de l'Orchestre GAIDZAG'S

— • —

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour
du 28 décembre 2001
au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Dîner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— 01. 42. 36. 33. 73 (la journée)
— 01. 46. 58. 03. 17 (le soir)

— • —

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

---

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI
et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR
du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le dîner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre M A S S I S»

l'**UGAB** invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : **«Le Val des Neiges»**
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :

au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՈՒՐԲԱԹ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 26
VENDREDI
26 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1.400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1.650 Ֆ. (Ամէնօրեայ առաքում)
1.500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20.283

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

77e ANNEE — N° 20.283

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 24 / 25)

ՇԷՎԱՐՆԱՁԷ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Հայաստան պաշտօնական իր այցին ընթացքին մէջ, Վրաստանի նախագահը Հոկտեմբեր 24-ին Խորհրդարանին մէջ հանդիպում ունեցած է նախագահ Ա. Խաչատրեանի, փոխ – նախագահ Տ. Թորոսեանի, յանձնաժողովներու նախագահներուն եւ խմբակցութիւններու ղեկավարներուն հետ: Ա. Խաչատրեան իր ելոյթին մէջ ծանրացած է Հայաստանի համար որպէս հաղորդակցութեան ճամբայ Վրաստանի առանձնայատուկ նշանակութեան, ապա նաեւ շրջանային ծրագիրներու համար գործակցութեան կարեւորութեան վրայ: Ան անդրադարձած է նաեւ Աբխազիոյ հակամարտութեան պատճառով հայ գիւղերու գոյութեան, ըսելով. «մենք չափազանց շահագրգիռ ենք հակամարտութեան արագ կարգաւորմամբ, Վրաստանում խաղաղ կեանքի հաստատմամբ»:

Իր պատասխան ելոյթին մէջ Է. Շեվարնաձէ եւս ընդգծած է բազմակողմանի գործակցութեան անհրաժեշտութիւնը, ցաւակցութիւն յայտնած Աբխազիոյ հայ գիւղերուն բնակիչներուն, հաւաստելով որ իր երկրին կառավարութիւնը ամէն բան կ'ընէ որպէսզի նման դէպքեր չկրկնուին: Ըսած է թէ Աբխազիոյ, Օսէթիներու եւ Ղարաբաղի հակամարտութիւնները ռազմական լուծում պէտք չէ ունենան: Նոյն օրը Վրաստանի նախագահը այցելած է Ծիծեռնակաբերդ ուր ծաղկեպսակ զետեղած է զոհերու յիշատակին, ապա նաեւ Երեւանի Պետական Համալսարանին մէջ դասախօսութիւն մը տուած է, ուր յատկապէս ընդգծած է Կովկասեան Ուխտի մը ստեղծման կարեւորութիւնը, մասնակցութեամբ՝ Հայաստանի, Վրաստանի, Ատրպէյճանի ու նաեւ Ռուսաստանի:

***

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

Հոկտեմբեր 23-ին, Թիֆլիսի մէջ, Ֆրանսայի Ծերակոյտի նախագահ Ք. Փոնսըլէի նախաձեռնութեամբ, հանդիպում մը ունեցած են Հայաստանի, Վրաստանի ու Ատրպէյճանի խորհրդարաններուն նախագահները: Նոյն առիթով անոնց ստորագրած հռչակագիրը կը շեշտէ այն հիմնական գաղափարը թէ երեք խորհրդարանները պէտք է իրենց ջանքերը միացնեն միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի ընդհանուր կեցուածք մշակելու համար: Հռչակագրին մէջ կ'ըսուի նաեւ թէ երեք խորհրդարանները պատրաստ են նպաստելու շրջանի հակամարտութիւններու խաղաղ լուծումին, մեկնելով «միջազգային իրաւունքի հանրաճանաչ նորմերից»:

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԻ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՆՈՐ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՐԵՒԱՆ ԱՅՑԸ

Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ք. Քեւինոյի յաջորդը՝ Ռուտոլֆ Փերինա, որ նոր պաշտօնին գլուխը կ'անցնի Նոյ. 1-ին, Հոկտ. 24-ին միօրեայ այցելութեամբ Երեւան գացած է: «Ես նոր առաջարկներ չեմ բերած, չեմ բերած նոր գաղափարներ, ոչ ալ եկած եմ Ղարաբաղեան հարցին շուրջ բանակցելու: Եկած եմ ծանօթանալու իրավիճակին», անմիջապէս չեշտած է ան, լրագրողներուն հետ հանդիպումին: Յայտնած է թէ Նոյ. 3 – 8 Մինսկի խումբի համանախագահները կրկին կ'այցելեն տարածքաշրջան՝ Երեւան, Ստեփանակերտ եւ Բաքու: Մինչ այդ այս շաբաթավերջին անոնք հանդիպում մը կ'ունենան Լիզպոն: «Մենք կ'ընդունենք որ, Լեռնային Ղարաբաղը որոշ պահէ մը մասնակցի բանակցութիւններուն: Կարելի չէ ընդունել լուծում մը, եթէ անոր ղեկավարութիւնը եւ ժողովուրդը դէմ ըլլան: Մենք լաւ ծանօթ ենք Ստեփանակերտի կարծիքներուն» ըսած է Ռ. Փերինա:

Ամերիկացի դիւանագէտը, նախքան Բաքու մեկնիլը հանդիպումներ ունեցած է նախագահ Քոչարեանի, երեսփոխաններու, Արտաքին նախարարութենէն պատասխանատուներու, Ռուսաստանի եւ Ֆրանսայի դեսպանատուներու ներկայացուցիչներուն հետ:

***

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՄԱԿ-Ի ԾՐԱԳԻՐԸ ՅԵՏ ԹԱԼԻՊԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

ԱՆԳԱՐԱ Կ'ՈՒԶԷ ՄԻՋՆՈՐԴԻ ԴԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Ըստ երեւոյթին, արջը չսպաննած, սկըսած են մորթը ծախել: Արդարեւ, կարելի չէ այլ տպաւորութիւն ունենալ, երբ Միացեալ – Նահանգներն, Եւրոպացիք եւ ՄԱԿ-ը կը պատրաստեն Թալիպաններու յաջորդող շրջանի իշխանութեան կազմութիւնը, մինչ երեք շաբաթներու ռմբակոծութիւններէ ետք, ոչինչ լուծուած է: Այսուհանդերձ, ծրագիրը պատրաստ է եւ «Ֆիկառօ» Հոկտեմբեր 25-ի իր թիւին մէջ կուտայ կարգ մը մանրամասնութիւններ: Յետ – Թալիպանեան այդ շրջանին, կարեւոր դեր մը պիտի ունենայ Իրան: Ծրագիրը, որ հաւանութիւնն ունի ԱՄՆ-ու, Եւրոպացիներուն եւ ՄԱԿ-ի, կը նախատեսէ ՄԱԿ-ի իշխանութիւն մը («Ֆիկառօ» չակերտով կուվերնորա կ'անուանէ), որու պիտի երկրորդէ աֆղան առժամեայ կառավարութիւն մը, միջազգային ուժի մը նեցուկով: Ըստ այս ծրագրին, Հիւսիսի Զինակցութիւնը որ կը համախմբէ հակաթալիպան ուժերը, կրնայ Քապուլի տէր դառնալ նախքան ձմեռը, շնորհիւ ԱՄՆ-ու օգնութեան: Այս համախմբումին նախագահը՝ Ռապպանի, իր իշխանութիւնը կը փոխանցէ առժամեայ դահլիճի մը, ծնած աֆղան կուսակցութիւններէն եւ ցեղախումբերէն: Այս ամբողջը պիտի մնայ ՄԱԿ-ի հակակշռին տակ եւ կը թուի որ միջազգային հաւաքականութիւնը ներկայացնող անձը, այսինքն Քոֆի Անանի «պարոն Աֆղանիստան»ը պիտի ըլլայ Ալժերիոյ Արտաքին նախկին նախարար՝ Լաքտար Պրահիմի: ՄԱԿ-ի լիազօրութեան շրջանը մէկ տարի պիտի ըլլայ, ապա, պիտի կազմուի աւանդական եւ ազգային ժողով մը, ցեղախումբերու պետերով, կրօնական անձերով, ինտելիկէնցիայով: Կը թուի որ այս ծրագիրը Իրանի ալ հաւանութիւնը ստացած է: Պակիստանի Արտաքին նախարարութեան մէկ պատասխանատուն յայտարարած է որ նոյն տեսակէտը կը բաժնեն: Թեհրանի գլխաւոր դերը պիտի ըլլայ համոզել Հիւսիսի Զինակցութիւնը որ ընդունի ՄԱԿ-ի ծրագիրը եւ այս, շնորհիւ իր առանձնաշնորհեալ կապերուն զինակցութեան հետ: Իրանի Արտաքին նախարարին՝ Ք. Խարազիի համաձայն, Իրան այլեւս չընդդիմանար որ նախկին արքան՝ Զահէր դեր մը խաղայ իր երկրին մէջ՝ «պայմանաւ որ գուրկէն չպարտադրուի», բայց, Իրան միշտ դէմ է որ «չափաւոր» Թալիպաններ մասնակցին առժամեայ կառավարութեան:

***

Թուրքիոյ Արտաքին նախարարը՝ Իսմայիլ Ճէմ որ բազմաթիւ տեսակցութիւններ կ'ունենայ Եւրոպա եւ Ասիա, Հոկտ. 23-ին, Անգարայի մէջ ընդունած է խտալացի իր պաշտօնակիցը՝ Ռենաթօ Ռուճիէրօ:

Մէկ շաբթուան մէջ, Թուրքիա ամրապնդած է իր դիրքը Ուաշինկթընի մօտ, Աֆղանիստանի հարցին կապակցութեամբ: Որքան ալ հանրային կարծիքը աւելի քան վերապահ կը մնայ ռմբակոծութեանց նկատմամբ, Թուրքիա զօրավիգ է Միացեալ – Նահանգներուն: Թրքական ներկանութիւնը Աֆղանիստան նոր չէ, մինչեւ 60-ական թուականներու վերջերը Թուրք սպաներն են որ մարզած են աֆղան սպաները եւ քաշուած են Փաքիստանի դիմումին ընդառաջելով, որ կասկածներ ունէր Աֆղաններու ազգայնական հեռանկարներու մասին: Այսօր, Անգարա զօրավիգ է ուզբեկ եւ թըրքախօս ուժերուն զօրավար Ռաշիտ Տոսթումի, որ պատերազմական գլխաւոր ղեկավարներէն է Հիւսիսի Զինակցութեան: Անգարա կ'ուզէ որ զինուորական օժանդակութիւնը ամրապնդուի եւ չի բացառեր յատուկ ուժերու առաքումը մարզելու համար աֆղան զինուորները:

Դիւանագիտական գետնի վրայ ալ, Թուրքիա թեւերը ծալած չէ նստած, Պրիւքսէլէն անցած ատեն, անցեալ շաբթու, Ճէմ առաջարկած է վեհաժողով մը

(Շար.ը Դ. էջ)

ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասեան աշխատանքի այցելութեամբ Մոսկուա գացած է: Նախատեսուած են Մոսկուայի և երկրին այլ շրջաններու հայ համայնքներու ներկայացուցիչներուն, Դումայի անդամներուն, Խորհրդարանի երեսփոխանական խումբերու եւ անջատ խմբակցութիւններու, ինչպէս նաեւ քաղաքական գործիչներու ու հանրային քաղաքական շարժումներու ներկայացուցիչներուն հետ հանդիպումներ: Նախագահին կ'ընկերանար Արտաքին նախարար Ն. Մելքումեան:

***

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ՀԱՅ ՍՐՃԱՐԱՆԱՏԷՐ ՄԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

Մոսկուայի մէջ Հոկտ. 23-էն 24-ի գիշերը սպաննուած է Լենինգրադեան կայարանի սրճարանատէր Եուրի Գրիգորեան: Քառասունամեայ Ե. Գրիգորեան Նովոլեսնայա փողոցին մէջ թիրախ դարձած է վարձկան մարդասպանի մը փամփուշտներուն, որոնցմէ երեքը ստացած է գլխուն: Հետաքննութիւն կը կատարուի:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԼԱՄԱՍՈՒՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԿԸ ՇՐՋԱՆՑԷ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբեր 24-ին, Եւրոպայի Խորհըրդարանը օրուան ուշ ժամուն, 21-ի շուրջ, քննարկումի առած է Թուրքիոյ անդամակցութեան մասին Ա. Լամասուրի ներկայացուցած տեղեկագիրը, իսկ անոր քըւէարկութիւնը մնացած է յաջորդ առտըւան: Ֆրանսայի զանազան շրջաններէն ու Եւրոպայի այլ երկիրներէն ցուցարարներու բազմութեան որ Հոկտեմբեր 24-ին հասած է Սթրազպուրկ, չէ արտօնուած մտնել Խորհրդարանի շրջափակը, միայն հինգ հոգինոց խումբի մը իրաւունք տըրուած է հետեւելու վիճարկումին: Պատուիրակութիւն մը ընդունուած է Խորհրդարանի նախագահուհիին մէկ խորհրդականին կողմէ:

Երեկոյեան երբ խնդրոյ առարկայ տեղեկագիրը քննարկումի դրուած է, խօսք առած են զանազան երեսփոխաններ, արտայայտուելով Եւրոպայի անդամակցելու ճամբուն վրայ Թուրքիոյ առած քայլերուն, ցեղասպանութեան նիւթին մասին: Այդ անդամակցութեան ճամբուն վրայ ցեղասպանութեան ու նաեւ Կիպրոսի պայմանները յարգելու թեր արտայայտուած են յոյն երեսփոխան Զաքարաքիս, իտալացի Վոյչիչ, շուէտացի Սակըլէռէուս եւ Շ. Փասքուա. այս վերջինը շեշտած է թէ Թուրքիա Եւրոպայի մաս չի կազմեր աշխարհագրականօրէն եւ ան, ներկայի Թուրքիան պատասխանատու է Հայերու ցեղասպանութենէն: «Այո... բայց»ի ուշագրաւ արտայայտութիւն մը ունեցած է Եւրոպական միութիւն - Թուրքիա պատուիրակութեան նախագահ Տ. Գոն Պէնտիթ, ըսելով որ ցեղասպանութիւնը իրողութիւն ըլլալով հանդերձ, այսօր այդ հարցին վրայ ծանրանալ Թուրքիան առաջ չի տանիր ժողովրդավարութեան ճամբուն վրայ:

Խորհրդարանի խմբակցութիւնները որոշած են իրենց անդամները ազատ ձգել քուէարկութեան համար, այսինքն՝ այս, կամ այն ուղղութեամբ քուէարկելու պատուէր չտալ: Որոշուած է նաեւ որ տեղեկագիրը քուէարկուի անուանական ձեւով, ինչ որ առիթ կ'ըլլայ յստակօրէն գիտնալու թէ ով թեր կը քուէարկէ եւ ով՝ դէմ:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Ինչպէս տեղեկացուց Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբին նախագահուհի Հիլտա Չօպոյեան, Լամասուրի տեղեկագիրը քուէարկուեցաւ Հոկտ. 25-ի առաւօտեան նիստին ու ցեղասպանութեան ճանաչումի պայմանը պահանջող յաւելուածները մերժուեցան: Անոնց դէմ քըւէարկեց 271 երեսփոխան, թեր՝ 149: 36 երեսփոխան ձեռնպահ մնացած են: Այլ խօսքով՝ Թուրքիոյ անդամակցութեան մասին 2001-ի տեղեկագիրը տեղ չի տար Հայերու ցեղասպանութեան նիւթին: Նիստին ընթացքին զգալի կերպով նկատուած է զանազան կառավարութիւններու Թուրքիոյ նպաստաւոր ճնշումը որ ակնյայտ դեր ունեցած է քուէարկութեան արդիւնքին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ

«ԴՈՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՑ ՑԵՂԻՍ ՕՐՐԱՆ, ԴՈՒ ԵՒ ԲՆԻԿ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ»

Քանի քանի պանդուխտ սերունդներու հոգիները փոթորկած են այս երգին բառերը, երեւակայութեամբ տարած զանոնք «Աւետեաց երկիր» Արարատի, Արագածի ու Սիփանի ստորոտները: Ու յուսադրած որ երջանիկ օր մը դարձեալ հայկական դրօշ մը կը ծածանի հոն եւ իր որդիքը տուն կը կանչէ: Երազ որ իրականացաւ վեց երկար դարերու սպասումէն ետք, եւ ի գին ի՜նչ զուլումներու:

Աստփազարցի հաւատացեալ մեծ մօրս համար – որու ընթերցանութեան միակ առարկաներէն էին «Աստուա՛աշունչ» Ս. Գիրքը եւ Խորենացիի Հայոց պատմութիւնը, անառարկելի, անվիճելի ճշմարտութիւն էր որ Ջրհեղեղէն յետոյ Արարատի «Թեփէն» կանգ առած էր Նոյեան տապանը, որ հայկական հողի վրայ վերընձիւղած էր նոր մարդկութիւնը, որ Հայաստանն էր Աստուծոյ օրհնած՝ «եղ եւ մեղր» բղխած երկիրը: Երբ կէսօրէ վերջ՝ լրացուցած իր տնային գործերը մեծ մայրս կը հանգչէր «սէտիր»ին վրայ, իր դողդոջ ձայնով, բացի շարականներէ՝ երկու աշխարհիկ երգ միայն կ'երգէր ան. «Հայաստան երկիր դրախտավայրը» եւ Վարդանանց նուիրուած՝ «Թէ հայրենեաց պսակադիրը»: Մինչեւ Տէր Զօր գացած եւ հոն չորս փաւակ կորսնցուցած բարի մեծ մայրս, երկու իղձեր, մուրազներ ունէր. մին Երուսաղէմ երթալ եւ «Լուս գերեզմանը» տեսնել, միւսը նոյնքան նուիրական՝ Էջմիածին երթալ, «Գիրգոր» Լուսաւորիչին Աջը համբուրել եւ Հայաստան թաղուիլ: Աւա՛ղ տատիկիս երկու մուրազներն ալ անկատար մնացին:

Իմ եւ շատ մը սերնդակիցներուս երեւակայութիւնն ալ փոթորկեց այդ «Հայաստան երկիր դրախտավայր»ը: Ցետ պատերազմեան տարիներն էին, մարդկութիւնն ու հայութիւնը բաժնուած երկուքի, երկաթէ վարագոյրով, ոչ միայն ֆիզիքապէս, այլ նաեւ դժբախտաբար հոգեպէս...: Ու եղաւ որ հանճարափայլ պեխաւորին մահէն քիչ յետոյ (որուն արձանը ամբողջ 10 տարի ճնշեր էր Երեւանցիին ամէնօրեայ տեսողութեան), Վազգէն Ա. Կաթողիկոսին ընտրութեան առթիւ, պզտիկ ճեղք մը բացուեցաւ այդ երկաթեայ վարագոյրին մէջ: Մարսէյլէն երեք բախտաւորներ, – որոնցմէ Պ. Վարդան Սարգսեան իբր ընտրութեան պատգամաւոր – գացեր էին այն ատեն խորհրդային Հայաստան: Իրենց վերադարձին, անոնցմէ ամէն մէկը իւրովի պատմեց իր տեսածն ու զգացածը, հարիւրաւոր հայրենաբաղձ Մարսէյլահայեր քաշելով այդ հաւաքոյթներուն: Ցետագայ տարիներուն կազմակերպուած զբօսա-շրջութիւնը հետզհետէ աւելի ծաւալ ընտացաւ, Հայաստան դադրեցաւ միթոս, առասպել ըլլալէ: Մինչ այդ զայն կը տեսնէինք գիրքերու, լուսանկարներու կամ ֆիլմերու ընդմէջէն: Որեւէ երկրի մասին, ոչ մէկ բան կը փոխարինէ սեփական աչքերով տեսնուածը, թէկուզ մէկ – երկու կարճ շաբաթներու ընթացքին: Եւս առաւել այս ճշմարտութիւնը ի զօրու էր եւ այսօր ալ է Հայաստանի մասին, հայուն համար մա՛նաւանդ:

ՈՒԽՏԻ Կ'ԵՐԹԱՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Տարիներ վերջ, իմ ալ կարգը եկաւ Մայր Հայրենիք այցելելու եւ 1969-ի Օգոստոս 1-ի երջանիկ օրը ոտք դրի պատմական Մեծ Հայաստանէն մեզի մնացած այդ բուռ մը նուիրական հողին վրայ: Արդէն օրերէ, շաբաթներէ ի վեր բընաւ հանգիստ չեմ քնանար, այնքան երիտասարդական արիւնս կ'եռայ մէջս: Ի՞նչպէս պիտի գտնեմ Հայաստանը, ոսկեզօ՞ծ գոյներով ինչպէս ոմանք, կամ գո՞րշ գոյներով, ինչպէս ուրիշներ: Ես գիս կը համոզեմ որ երկիր մոլորակին վըրայ դրախտ գոյութիւն չունի, թէ ամէն մեռալ ունի անպայման իր հակակողմը: Տարբեր չի կրնար ըլլալ երկիր մը որ դեռ կէս դար առաջ «ցարական կայսրութեան յետամնաց մէկ անկիւնն էր» ըստ այն ատեն շատ գործածական առոյթի մը. երկիր որ տեսաւ պատերազմ, գաղթականութիւն, սով, յեղափոխութիւն եւ մասամբ նոյնին...: Բազմանդամ է մեր «տուրիստական» խումբը. բայց ես ուխտի կ'երթամ Մայր Հայրենիք, ո՛չ որպէս զբօսաշըրջիկ. խորապէս համոզուած եմ որ ամէն սփիւռքահայ որ առաջին անգամ ըլլալով Հայաստան կ'երթայ, անպայման տեսակ մը ուխտաւոր է, ուրիշ բան չի կրնար ըլլալ: Թող յարգելի ընթերցողը բարի ըլլայ ինծի ներելու որ աւելի քան երեք տասնամեակ վաղեմութիւն ունեցող այս «պայաթցած» յուշերէն երկու-երեք հատին ընթերցումը իրեն պարտադրեմ, աւելի յստակացնելու համար յաջորդող տողերս ու խոհերս: Փոքրիկ Հայաստան մըն է արդէն մեզ Մոսկուայէն Երեւան փոխադրող օդանաւը: Քովս նստած են հին ծանօթս Սարգիս Պօղոսեան եւ Միլանոյէն տոքթ. Պարսամեան: Հարց կը ծագի թէ հասնելնուս պէս ի՞նչ պիտի ընենք: Միասիրտ ու միաբան ենք երեքս: Իջնելուս պէս հողը պիտի համբուրենք: Բայց հող չկայ առջեւնիս. Երեւանի օդակայանի պէթոնն է. հող չէ. ան նոյնքան նուիրական է մեզի: Երեքս չենք միայն որ ծունկի կու գանք ու կը համբուրենք գետինը. ուրիշ շատեր ալ նոյնը կ'ընեն: Երեւան ամբողջութեամբ լուացուած է քիչ առաջ տեղացած յորդառատ անձրեւէն ու մեր դիմաց կ'երեւի զոյգ Մասիսներու հիասքանչ տեսարանը: Անմոռանալի: Քիչ յետոյ, հազիւ պայուսակներս տեղաւորած Արմենիա հիւրանոցին սենեակս, կը նետուիմ դուրս, Հրապարակը. մեքենայաբար քայլերս կ'ուղղեմ այն ատեն Հրապարակին իշխող Լենինի արձանին. անգուշօրէն, շատ եմ մօտեցեր: Հոն պահակ կեցած ոստիկանը գիս կը յանդիմանէ խստօրէն: Որքան որ կարելի է, անոյշութեամբ կը պատասխանեմ նոյնքան քաղցր արեւելահայերէնով.– «Աղբեր ջան, հիմի եկել եմ արտասահմանից, առաջին Հայն ես որի հետ խօսում եմ եւ դու ինձ կը յանդիմանե՞ս: – Վա՛յ, կը պատասխանէ, – առաջին Հայը լինեմ քեզ հետ խօսող, եւ քեզ յանդիմանե՞մ, այս րոպէից ես եւ դու ընկ որ ախպեր»: Ու համլէթ կը մօտենայ կը փաթթուի ինծի եւ կը համբուրէ: Կ'առնէ հիւրանոցի համրս (սենեակիս թիւը), կը խոստանայ գալ Երկուշաբթի կէսօրէ վերջ «մեքենայով վերցնել» (կառքով տանիլ) եւ խոստումը կը կատարէ: Այն տարիներուն, «արտասահմանից» եկող Հայը հազուագիւտ եւ թանկ ապրանք էր Հայաստանցիին համար:

Յաջորդ առաւօտուն շատ կանուխ, Հրապարակն եմ կրկին. պանդոկին առջեւ մարդիկ եկած են, ծանօթ կամ անծանօթ, մարդ փնտռելու: Քայլերս կ'ուղղեմ դէպի Շահումեան Հրապարակը անկէ ալ այն ատեն՝ Կարմիր Բանակի, այժմ Գրիգոր Լուսաւորչի փողոց ուր կայ Երեւանի քաղաքապետարանը (քաղսովետը), տուֆակերտ գեղեցիկ շէնք մը: Զեմ գիտեր ինչո՞ւ եւ ի՞նչպէս, կ'անցնիմ շէնքին ետեւի կողմը: Աստուած ի՛մ ի՞նչ տեսարան: Հայաստանի մայրաքաղաքին կեդրոնական մա՞սն ենք հոս, թէ ոչ յետամնաց գիւղ մը: Հողածածկ փողոցի պէս բան մը, հաւերով ու կատուներով, մէջտեղը աղբիւր մը որուն առջեւ մէկ – մէկ դոյլ ձեռքերնին հերթի կեցած են կիներ, երիտասարդ թէ պառաւ: Շուրջը ցածլիկ. անհրապոյր տնակներ, ալ ո՞վ գիտէ որ ժամանակէն մնացած: Նկարչական գործիքս կ'իջեցնեմ ուսէս, բայց աներեւոյթ ձեռք մը բազուկս կը բռնէ: Նոյնպէս աներեւոյթ ձայն մը «ոչ, այս տեսարանը մի նկարեր», կ'ըսէ ինծի: Ծոցատետրս կը հանեմ մի քանի նօթեր առնելու համար: Սպիտակահեր եւ կորաքամակ մայրիկ մը դոյլը ձեռքին կը մօտենայ: –«Բալա ջան, դու Քաղսովետի՞ց ես» – կը հարցնէ: Դրական պատասխանիս վրայ «Բա՛, մեր նոր բնակարանի հերթը ե՞րբ է գալու» կ'ըսէ, աւելցնելով թէ միշտ փափախ (կաշառք) են ուզում»: Կը հարցնեմ թէ երբուընէ՞ ի վեր հոս կը բնակին: – «Ղարսի գաղթից ի վեր» կ'ըլլայ պատասխանը: Այսինքն մօտ 50 տարի: Երկինքը գլխուս կը փլի: Կարելի՞ բան է կէս դար, գրեթէ ամբողջ կեանք մը այդ պայմաններուն տակ ապրիլ. այն ատեն այդ մայրիկը ջահէլ աղջիկ կամ նոր հարս էր...: Շուտով կ'առնեմ անուն – ազգանունը եւ կծիկը կը դնեմ որ ուրիշներ ալ չգան գիս պաշարելու: Մարսէյլի արուարձաններուն մէջ գաղթական մեր հայրերը ապաստանելու համար շինեցին շատ մը մէկ-երկու սենեակնոց անհրապոյր տուներ, բայց ունէին գոնէ հոսուն ջուր եւ լոյս...: Այդ օրը խորտակուեցաւ հաւատքս խորհրդային սոցիալիզմի հաւասարութեան մասին...:

Մէկ-երկու օր յետոյ, 1946-ին Ցունաստանէն ներգաղթած ազգականի մը կոկիկ յարկաբաժինն եմ: Կը քաշէ բազմոցը, կը միացնէ ելեկտրական փրիզ մը եւ ելեկտրական հաշուիչը ետ կը դառնայ: Ապշած, աւելի ճիշդ՝ շշմած կը մընամ: Ազգականս կ'ըսէ ինծի. «Պետութիւնը մեզմէ կը գողնայ, մենք ալ Պետութենէն»: Ի՞նչ հետեւցնեմ. թէ դարեր ամբողջ իբր պետական ուժ օտարին լուծը տեսած Հայը դեռ պատակ չէ՞, հասուն չէ՞ պետական մտածողութեան, սեփական եւ ինքնուրոյն պետութեան մը պատասխանատու եւ կարգապահ քաղաքացին ըլլալու:

Արագ անցան այդ 15 անմոռանալի օրերը որոնց ընթացքին յաճախ լացի թէ՛ ուրախութենէս, թէ տխրութենէս: Ուրախութենէս՝ որովհետեւ այդքան տառապանք տեսած հայ ժողովուրդը հայրենի հողին վրայ յիսուն տարիէ ի վեր սկսեր էր մէջքը շտկել եւ յառաջդիմել: Օրէ օր, տարուէ տարի «որբի եւ ողբի հայրենիքը դառնալու էր նոր հայրենիք, հզօր հայրենիք», Ցովհաննէս Թումանեանի իսկ բառերով: Տխրութենէս ալ, որովհետեւ մենք մեր եւրոպացիի կրթութեամբ ու մտայնութեամբ, երբեք պիտի չկարենայինք համարկուիլ ո՛չ վարչաձեւին, ոչ ալ անոր տնտեսական պայմաններուն: Դատապարտուած էինք մընալու Սփիւռքահայեր:

Քանիցս փափաքեցայ կրկին Հայաստան այցելել, բայց ամէն անգամ անակընկալ արգելք մը խանգարեց ծրագիրս: Եւ անցան երեք տասնեակ տարիներ: Շատ ջուր անցաւ այդ ժամանակամիջոցին Հըրազդանի կամուրջներուն տակէն. գորբաչովեան խարուսիկ գլասնոստը եւ պերեստրոյկան, ղարաբաղեան համազգային պահանջատիրութիւն ու Սումգայիթի եւ Բաքուի ջարդեր, պատերազմ, շրջափակում, գաղթականութիւն դարձեալ: Վերջապէս կրկին անկախութիւն եւ գինուորական յաղթանակ բայց ցուրտ եւ անլոյս ձմեռներ, արտագաղթ, զո՞րն ասենք: Տասը տարիէ ի վեր Հայաստան երթալ-գալը շատերուն համար ջուրի ճամբայ դարձած է: Թէկուզ իբրեւ «օտարերկրացի» շատ դիւրին է հայկական դեսպանատունէն վիզան ստանալ եւ օդանաւը նստիլ երթալ, սեփական աչքով տեսնել հոն տեղի ունեցած փոփոխութիւնները, զորս հայ մամուլը եւ գացող-եկողները կը պատմեն օրն ի բուն:

ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

(Շար. 1)

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐՔ. ՄԱԼՈՅԵԱՆԻ (1869–1915) ԵՐԱՆԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ցովհաննէս – Պօղոս Բ. սրբազան պապին բարեհաճ հաւանութեամբ կաթողիկէ եկեղեցին երանելի հռչակեց 1915-ի ցեղասպանութեան զոհերէն, Մարտինի առաջնորդ Իգնատիոս Արք. Մալոյեանը 2001, Հոկտեմբեր 7-ին: Ըստ Կաթողիկէ Եկեղեցւոյ սահմանադրական կանոններուն, 1965 թուականէն ի վեր սկսուած (Իգնատիոս Պաթանեան պատրիարքին նախաձեռնութեամբ) երանացման առաջարկը կը դառնար ի զօրու, եւ 2001 թուականի Հոկտեմբերի 7-ին պաշտօնական հանդիսութիւններով եւ արարողութիւններով երանելիներու դասին կը պատկանի Մարտինի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Իգնատիոս Մալոյեան:

Ուէլ հաւատացեալ անկասկած հարցադրումներ կատարեց ինքզինքին, թէ ի՞նչ էին տուեալները այս հոգեւորականին, որ այսքան պատուական դիրք մը դրաւեց՝ դառնալով միջազգային անուն մը:

Հետեւելով իր ինքնակենսագրութեան, որ շատ հակիրճ, հազիւ էջ մը գրութիւն է, գրուած Զմմառու վանքին մէջ, 1870-ական թուականներու վերջերը, խնդրանքովը օրուան վանքի մեծաւորին, հոն ամէն բանէ առաջ, կը յայտնաբերուի թէ Իգնատիոս Մալոյեան եղած է խոնարհ եւ նուիրեալ ուխտապահ եկեղեցական մը: Երիտասարդ տարիքէն իսկ ցուցաբերած է ազգասիրական ոգի, հաւատաւոր եկեղեցական մը ըլլալու կողքին: Այս ոգին կը յայտնաբերուի Մարտինի ոչ – հայախօս (թրքախօս եւ արաբախօս) հաւատացեալներուն հայերէն լեզուն սորվեցնելու աշխատանքին մէջ: Այս նախաձեռնութիւնը օգտակար արդիւնք մը կ'ունենայ, շնորհիւ Մխիթարեան միաբանութենէն առաքուած վարդապետի մը ջանքերուն:

Երկրորդ օրինակելի յատկանիշը՝ հոգեկան իր զօրութիւնն է, որ կ'արտացոլայ իր հետապնդած աշխատանքներէն. հակառակ փխրուն առողջութեան, զանազան հիւանդութիւններէ տառապած ըլլալուն շարունակած է իր հեւքոտ առաքելութիւնը Եգիպտոսէն Զմմառ, Կիլիկիա ու Մարտին: Ֆիզիքական ցաւերը անտեսելով ու արհամարհելով՝ յաջողած է տիրապետել կամքին եւ հաւատալով իր առաքելութեան յաջողած է արժանի տեղ մը գրաւել եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ:

Այլ կարեւոր նշմար մը. երբ Թուրքը կ'առաջարկէ հաւատքի ուրացում, Մալոյեան եւ իր ուխտակիցները (17 վարդապետներ) կը մերժեն հաւատափոխութիւնը, եւ կամովին կ'առաջնորդուին նահատակուելու:

Մեկնելով այս իրողութիւններէն, կարելի է անգամ մը եւս հաստատել, թէ Թուրքը, օսմանցին խտրութիւն չէ դրած ոչ մէկ Հայու, ոչ մէկ համայնքի, այլ անոր թիրախը եղած է ընաջնջումը ԱԶԳին: ՀԱՅը նկատուած է անտանելի ներկայութիւն, աշխարհական թէ հոգեւորական, իր բոլոր համայնքներով ու խաւերով:

Իգնատիոս Մալոյեան եւ իր միաբանակիցները միացած են ժողովուրդին, ու յայտարարած թշնամիին. «Մեր ժողովուրդը ուր ո՛ր տանիք, մենք անոր հետ պիտի քալենք»... Սա իր նշանակէ հաւատաւոր կեցուածք ճգնաժամու ընթացքին:

Այժմ երանելի դասուեցաւ 46 տարեկանին սպաննուած այս հոգեւորականը: Հանդիսաւոր այս արարողութիւնները (երկու շաբաթներու վրայ երկարած) իր մասին լոյս տեսած գիրքն ու այլ հրատարակութիւնները, լուսանկարները առիթներ ստեղծեցին դրաւոր թէ լսատեսողական հաղորդումներուն, անգամ մը եւս արտայայտուելու, գրելու եւ խօսելու Հայոց ցեղասպանութեան մասին, Վատիկանէն մինչեւ Լիբանան եւ այլուր:

Երանացման արարողութիւնները եղան վկայութիւններ՝ հանդէպ գլխադիր մարդուն, կոչումի տէր եկեղեցականին, Հայոց լեզուին պաշտպան Հայուն, ու իր ճակատագրին ընդմէջէն՝ վկայութիւն մը հայ ժողովուրդին տառապանքին, տեւելու կամքին:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

«Ազդակ»

LIVRES REÇUS

THE ARMENIAN CHURCH BEYOND THE 1700th ANNIVERSARY

ARAM I

Armenian Catholicosate of Cilicia
Antélias - Liban 2001

ԶԱՆԱԶԱՆ ԳԱՒԱՌԷՆ

ՍԷՆ ԺԵՐՈՄ Ս. ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՐՍԷՅԼ («Յառաջ») .–

Սրբոց Թարգմանչաց՝ Ս. Մեսրոպ, Եղիշէ, Մովսէս Քերթողահայր, Դաւիթ Անյաղթ, Կորիւն, Սահակ Պարթեւ, Եզնիկ Կողբացի, տօնին յաջորդող Կիրակին, Հոկտեմբեր 14–ին, Սէն Ժերոմի Ս. Սահակ Մեսրոպ եկեղեցին, հանդիսաւոր կերպով տօնախմբեց իր հիմնադրութեան 71–րդ եւ նուիրագործութեան 68–րդ զոյգ տարեդարձները: Բարեպաշտ եւ ջերմեռանդ հոծ բազմութիւն մը լեցուցած էր եկեղեցին եւ բակը:

Արարողութեանց նախագահեց եւ պատարագեց Հարաւային Ֆրանսայի Կաթողիկոսական Պատուիրակի Փոխանորդ՝ Տարօն Եպիսկ. Ճէրէճեան, ընթերակայութեամբ՝ Սարգիս Քհնյ. Թաշճեանի եւ ներկայութեամբ Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեանի:

Տարօն Եպիսկ. օրուան պատշաճ բնաբան առաւ՝ «Պահեա Տէր, զեկեղեցի քո»: Եկեղեցին միայն շէնք եւ կառոյց չէ, ըսաւ, այլ ժողովուրդ եւ հաւատացեալներ: Յորդորեց ներկաները միշտ եկեղեցին լեցնելու եւ հաւատարիմ մնալու հօրենական բարքերուն: Ապրիլ եւ ապրեցնել հոգեւոր եւ մշակութային արժէքները կը նշանակէ կանգուն պահել եկեղեցին, աւելցուց Եպիսկոպոսը: Ապա, հիւսեց փառքը Թարգմանչաց սերունդին որ ճանապարհը գծեց հայ մշակոյթին, ճակատագիրը կնքեց Հայոց պատմութեան: Տարօն Եպիսկ. Ճէրէճեան գնահատական խօսքերով արտայայտուեցաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Սարգիս Քահանայ Թաշճեանի հովուութեան եւ Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեանի տարիներու վաստակին եւ ծառայութեան մասին, որոնց զոյգ ներկայութիւնը ժիր ու աշխոյժ կը պահէ այս եկեղեցին:

Պատարագի աւարտին, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ ի յիշատակ Գրիգորիս Եպիսկ. Պալաքեանին եւ բոլոր անոնց որոնք իրենց հոգեւոր եւ նիւթական ծառայութեամբ սատարեցին եկեղեցւոյ առաքելութեան գործին եւ պայծառութեան: Նոյնպէս ըստ աւանդութեան օրհնուեցաւ մատաղը նուիրուած եկեղեցւոյ անուանակոչութեան:

Այս տօնախմբութեան ներկայ եղան Պուշ–տիւ–Ռոն նահանգի Ընդհ. Խորհուրդի նախագահը՝ Ժան–Նոէլ Կէռինի, 13–րդ եւ 14–րդ թաղամասերու քաղաքապետը՝ Կարօ Յովսէփեան, երեսփոխան Սիլվի Անտրիէօ–Պաքէ եւ այլ բազմաթիւ քաղաքապետական եւ թաղապետական խորհուրդներու անդամներ:

Համաձայն սովորութեան, ժողովուրդին մէկ մասը, –սրահը փոքր կու գայ այս առթիւ–, հաւաքուեցաւ թաղական խորհուրդի վարչութեան նախագահին՝ Պերճ Կարապետեանի շուրջ: Ան շնորհակալական խօսքերով դիմաւորեց ներկայ անձնաւորութիւնները: Ոգեկոչեց յիշատակը եւ վաստակը հիմնադիրներուն եւ յոյս յայտնեց որ երիտասարդ սերունդները պիտի գան եւ գիտակցօրէն վերցնեն շարունակականութեան ջահը: Ապա, Պերճ Կարապետեան յաջորդաբար խօսք տուաւ շրջանի քաղաքապետին եւ Պուշ–տիւ–Ռոն նահանգի Ընդհանուր Խորհուրդի նախագահին: Առաջինը բնորոշեց հայ եկեղեցին որպէս ինքնութեան բերդ, աւանդ պահող վայր՝ հաւատքի բայց նաեւ մշակոյթի, աւանդութեանց նոյնիսկ հայրենասիրութեան: Իսկ, Ժան–Նոէլ Կէռինի յայտնեց իր համակրութիւնը եւ պատրաստակամութիւնը դիմաւորելու, հոգալու գաղութին միութենական կարիքները որպէսզի ան հարազատօրէն, ըսաւ, պահէ իր արմատները:

Տօնախմբութիւնը շարունակուեցաւ եւ վերջ գտաւ ջերմ ընդունելութեամբ մը:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԻՆ ԽՆԴԻՐԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ԱՏԵԱՆԻՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը Արամ Ա. Կիպրոս այցին տեսակցութիւն ունեցած է ընդհանուր դատախազ Մարքիտեսի հետ ու այդ ընթացքին նիւթ ըրած Մակարայ վանքին խնդիրը: Յիշած է կղզիին գրաւեալ շրջանին վրայ մնացած վանքը որպէս հնութիւն անձեռնմխելի պահելու անհրաժեշտութիւնը եւ այդ նպատակով ՄԱԿ–ին, միջազգային այլ կազմակերպութիւններու իր ըրած դիմումները: Ընդառաջելով Արամ Ա.ի առաջարկին, ընդհանուր դատախազը ապահովութիւն տուած է որ ինք վանքին պարագան կը ներկայացնէ Եւրոպական Խորհուրդին Մարդկային իրաւունքներու ատեանին:

Նոյն վանքը, ինչպէս գրուած էր, գրաւեալ շրջանի թրքական իշխանութիւններուն որոշումով պանդոկի պիտի վերածուէր, բայց ծրագիրը ձգձգուած էր:

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

ՆԱԽԱՃԱՇԸ

Շատ մը բժիշկներու եւ սննդագէտներու կարծիքով, օրը լաւ սկսելու նախապայմաններէն մէկը հաւասարակշռուած նախաճաշ մը ընելն է:

Սակայն թէ՛ փոքրերը, թէ՛ մեծերը առաւօտուն ո՛չ ախորժակ եւ ոչ ալ բաւարար ժամանակ կ'ունենան սեղանի մը շուրջ նստելու եւ այլազան նախաճաշ մը ունելու:

Մասնագէտի կարծիքով, կան 10 հնարներ առաւօտեան ախորժակ ունենալու եւ նախաճաշելու համար.

1) Նախօրեակին ընթրիքը թող ըլլայ թեթեւ եւ ժամը 9–էն առաջ:

2) Սովորականէն 15 վայրկեան կանուխ արթննալ՝ նախաճաշելու տրամադրութեան մէջ մտնելու համար:

3) Պատուհանները լայն բանալ եւ խորունկ շնչել:

4) Թերթը կարդալ եւ մարզանքի քանի մը շարժում կատարել:

5) Լոգանք մը առնել՝ թարմանալու համար:

6) Բաժակ մը ջուր կամ թարմ պտուղի հիւթ խմել:

7) Առաւօտ կանուխ հաց կարմրցնել (առանց այրելու) տան մէջ տաք հացի անոյշ բոյրը տարածելու համար:

8) Ախորժաբեր եւ զուարթ սեղան մը պատրաստել:

9) Այլազան ուտելիքներ (անոյշ, թանձր մածուն, պանիր, հացահատիկ, պըտուղ, խոզապուխտ...) ներկայացնել սեղանին վրայ:

10) Սեղանին շուրջ բոլորուիլ ընտանեօք, առանց հեռատեսիլի, հիւրընկալ մթնոլորտ մը ստեղծելու համար:

ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ ՆԱԽԱՃԱՇԻՆ ՄԱՍԻՆ

– 1 –

Նախաճաշը օրուան ամէնէն կարեւոր ժամն է:

ՍԽԱԼ: Չկան կարեւոր եւ անկարեւոր ժամեր: Եթէ սննդագէտները կը շեշտեն նախաճաշին կարեւորութիւնը, պարզապէս անոր համար, որ անիկա կ'օգնէ օրը լաւ սկսելու:

– 2 –

Անգլիական նախաճաշը (հաւկիթ, պէյքըն, հացահատիկ, թոսթ եւ պտուղ) լաւագոյն նախաճաշն է:

ՍԽԱԼ: Բացի եթէ առիթը չունիք կէսօրին ճաշելու եւ կամ կ'ապրիք Անգլիա, ուր կէսօրին շատ քիչ կ'ուտեն, իսկ երեկոյեան ժամը 6–ին կ'ընթրեն:

– 3 –

Նախաճաշելը անհրաժեշտ է նիհարնալու համար:

ՍԽԱԼ: Նիհարնալը նախաճաշին հետ ոչ մէկ կապ ունի. անիկա կախեալ է օրուան ընթացքին որդեգրուած թեթեւ, հաւասարակշռուած եւ այլազան սննդականոնէն:

– 4 –

Խորունկ աման մը հացահատիկը նախընտրելի է կարագով հացէն:

ՍԽԱԼ: Կերէք այն, ինչ որ կը փափաքիք, բայց խուսափեցէք ֆրուասանի ընտանիքին պատկանող ուտելիքներէն: Ամբողջովին մի՛ ջնջէք կարագը, ոչ ալ՝ շաքարը ,բայց չափաւոր սպառեցէք զանոնք:

ԹԻՒ 17 ԽԱՖԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ Ի.

ՀՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Յանկարծ սոտումով մը ոտքի ելաւ եւ ուզեց դէպի սենեակին դուռը խոյանալ, բայց երկու երիտասարդները յարձակեցան վրան եւ արգիլեցին զինքը:

Այն ատեն լրտեսը կատաղի յուսահատութեամբ մը սկսաւ պայքարիլ երկու երիտասարդներուն հետ, բայց կռիւը երկար չտեւեց, որովհետեւ ուժերը անհաւասար էին: Արշակ ուժասպառ գետին տապալեցաւ, մինչ երկու երիտասարդները նախապէս պատրաստուած չուան մը իր վիզը կ'անցընէին:

Լրտեսը պոռալու փորձ մը ըրաւ, բայց ձայնը խեղդուեցաւ կոկորդին մէջ:

Այսուհանդերձ, ինքնապահպանութեան բնազդէն մղուած, անիկա շարունակեց պայքարիլ երկու երիտասարդներուն դէմ:

Բայց չուանը արդէն իր վիզը կը սեղմէր, եւ կամաց – կամաց ուժասպառ գալարումներով անշարժ փռուեցաւ գետին:

– Սատկեցաւ, – ըսաւ Տրդատ:

– Ոչ տակաւին, – պատասխանեց ընկերը, – դեռ կը շնչէ:

– Չուանը քիչ մըն ալ սեղմենք:

Քանի մը վայրկեան եւս, ու ահա լրտեսը յետին ցնցումի մը մէջ շունչը փչեց:

Երկու երիտասարդները պահ մը սարսափահար իրարու նայեցան:

Իրենց ըրածը որքան ալ արդար գործ մը կը նկատէին, այսուհանդերձ քստմնելի բան մը կը թուէր:

Պայքարի միջոցին, ամէն բան մոռցած, խելայեղօրէն կռուած էին, բայց հիմա, գետին փռուած այդ անշարժ մարմինը, իրենց խղճմտանքին վրայ կը ճնշէր:

Ճնշող լռութիւնը առաջին անգամ Տրդատ խզեց:

– Եթէ ողջ ձգէինք զինքը, թերեւս այս վայրկեանիս ձերբակալուած ու բանտ նետուած պիտի ըլլայինք, – ըսաւ:

– Եւ, ով գիտէ, դեռ քանինե՛ր իրեն պատճառով զնտաններու մէջ պիտի փըճանային, – պատասխանեց ընկերը:

– Ու, յետոյ, մենք զինքը չհալածեցինք ու ծուղակը չձգեցինք, մենք պարզապէս խոյս տուինք իրմէ ու եկանք ծածկուիլ այստեղ: Ինքն էր, որ մեր ետեւէն ինկաւ եւ ուզեց մեր թաքստոցը իմանալ, մեր ըրածը պարզապէս ինքնապաշտպանութեան գործ մըն էր:

– Եւ արդարութեան գործ մը միանգամայն:

– Հիմա ժամ առաջ այս դիակը անհետացնենք:

– Ինչպէ՞ս պիտի ընենք:

– Հոգ մի՛ ըներ, ատիկա դիւրին է, ես ամէն բան խորհած եմ, տանը ետեւ, պարտէզին մէջ, փոքրիկ չորցած հոր մը կայ, զինքը հոն կը նետենք ու հորը կը լեցնենք:

– Ուրեմն շուտով լմնցունենք ամէն բան:

Երկու երիտասարդները լրտեսին դիակը վերցուցին եւ դուրս հանեցին սենեակէն:

Կէս ժամ ետքը փոքրիկ հորը գոցուած էր դաւաճանին մարմնոյն վրայ:

– Հորերը շատախօս չեն ըլլար եւ իրենց վստահուած գաղտնիքը կը պահեն, – ըսաւ Տրդատ, երբ ամէն բան աւարտեցաւ:

Երիտասարդները լրտեսը թաղելէ առաջ անոր գրպանները խուզարկած էին եւ թուղթերու ծրար մը գտած:

Երբ սենեակ վերադարձան ու ամէն բան կարգի դրին, անցան լամպարին քով եւ սկսան քննել այդ թուղթերը:

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Այդ ծրարին մեծ մասը անձնական թուղթեր էին, որոնք որեւէ չահեկանութիւն չունէին երիտասարդներուն համար:

Տրդատ զանոնք աչքէ կ'անցընէր ու պատռելով՝ մէկ կողմ կը նետէր:

Յանկարծ թուղթ մը իր ուշադրութիւնը գրաւեց:

Հայերէն գրուած էր եւ նօթագրութիւն մըն էր, որմէ կարելի չէր շատ բան հասկնալ: Երիտասարդը երկու անգամ ուշադրութեամբ կարդաց զայն, յետոյ իր ընկերոջ դառնալով՝ ըսաւ.

– Վահէ՛, տես ի՞նչ կը հասկնաս այս գրուածքէն:

Ու բարձրաձայն սկսաւ կարդալ.

«Թիւ 17–էն (բերանացի): Ուշադրութիւն դարձնել երեք Ա. Մ.–ներուն, Ա. Մ. (Խ.), Ա. Մ. (Պ. Պ.), Ա. Մ. (Տ.) – Վահան Թօշիկեան («Վերջին լուր»), տեսնել անպատճառ Վահէ Քափլանեանը: Պատրիարքարանի մէջ քննութիւն. Թուղթերը կարելի է ձեռք անցընել. դրամը չխնայելով, Թէոդիկին հասցէն: Յակոբ Տէր – Յակոբեան («Վերջին լուր»): Բաղդատել ցանկը: Հայ Բարեգործական Միութեան անդամակիցները (տեսնել տարեկան տեղեկագիրը): Միացեալ Ընկերութեան (նոյնպէս) Օ. Զ. Տ. 1662. Ծ. 300. Փնտռել թիւ 17–ի վերջին ժուռնալին մէջ:

«Արթին էֆէնտիին ցանկը: Պէշիկթաշ Միհրդատ Հայկազն:

«Հնչակեաններու կեդրոնատեղին:

«Լուր տալ թիւ 17–ին՝ երեսփոխաններուն մասին:

«Սբիկ Մուպահեաճեան (Օրթաքէօյ):

«Ցանկին մէջ անցընել մոռցուած անունները: Արթին էֆէնտիին դիմում:

«Պ. Պ–էն եւ Ն. Շ–էն առնել Կ. Կ. Մ. եւ տալ թիւ 17–ին:

«Ասատիկ Մարկոսեանի մասին խօսիլ Բէշատ պէյին: Պէտրի պէյ (տասը օրէն)»:

– Ի՞նչ կ'ըսես այս նօթագրութեան, – հարցուց Տրդատ, երբ ընթերցումը աւարտեց:

– Յայտնի է, թէ կարեւոր թուղթ մըն է այդ, դժբախտաբար բան մը չենք կըրնար հասկնալ...

– Մէջը ծանօթ մարդիկներու անուններ կան, եւ հաւանական է, որ այդ դաւաճանը աղէկ նպատակով չէ, որ այդ մարդոց անունը նշանակեր է:

– Ամէնէն չահեկանը թիւ 17–ն է, – դիտել տուաւ Վահէ:

– Ի՞նչ է որ այդ թիւ 17, – հարցուց Տրդատ, – ես բան մը չհասկցայ:

– Լաւ կը յիշեմ, որ ասկէ տարի մը առաջ թիւ 17 խաֆիէի խնդիր մը ծագեցաւ, որու մասին թերթերը երկար – բարակ գրեցին:

– Ես չեմ յիշեր կոր:

– Այո՛, որովհետեւ այն ատեն Պոլիս չէիր: Շատ հաւանական է, որ այդ 17 թիւը անոր կ'ակնարկէ կոր:

– Բայց ո՞վ է այդ խաֆիէն:

– Չեմ գիտեր, միայն սաչափը կը յիշեմ, որ զինքը կ'ամբաստանէին իբրեւ Պատրիարքարանի գաղտնիքները կառավարութեան հաղորդող լրտես մը :Այն ատեն քանի մը մարդոց վրայ կասկածներ եղան, քննութիւն բացուեցաւ, բայց ի վերջոյ խնդիրը մարեցաւ եւ յայտնի չեղաւ, թէ ո՞վ էր այդ թիւ 17 խաֆիէն:

– Ուրեմն այդ մարդը դեռ մինչեւ այսօր կը գործէ՞ կոր:

– Այո՛, թուղթէն այնպէս կ'երեւայ:

– Մենք մեծ սխալ մը գործեցինք, - գոչեց Տրդատ:

– Ի՞նչ սխալ...

– Նախապէս այս թուղթերը քննելու էինք, երբ տակաւին Արշակ կրնար անոնց մասին մեզի բացատրութիւններ տալ:

(Շար. 90)

(Շար. Ա. էջէն)

Եւրոպական Միութեան եւ Իսլամական Համագումարի Կազմակերպութեան (որու անդամ է Թուրքիա) միջեւ եւ կը թուի որ Եւրոպա դրական հակազդեցութիւն ունեցած է: Ճէմ, սակայն, անցած է Ասիա, ուր յաջորդաբար տեսակցած է Ազրպէյճանի, Թիւքմէնիստանի եւ Ուզպեկիստանի ղեկավարներուն հետ: Թուրքիոյ մէջ, աֆղան ընդդիմութեան ընդհանուր ժողովի մը գումարումը առիթ պիտի ըլլայ, որ Թուրքիա ստանձնէ միջնորդի այն դերը որու կը յաւակնի: Այդ ժողովը, որ տեղի կրնայ ունենալ այս չաբաթավերջին կամ գալ չաբթուան սկիզբը, պիտի համախմբէ աֆղան 120 պատուիրակներ նախկին թագաւորին նախագահութեան ներքեւ:

***

Տեղւոյն վրայ, ռմբակոծութիւնները կը շարունակուին, նաեւ Ամերիկացիներուն ցաւի արտայայտութիւնները սխալներուն համար: Կ՚ըսեն թէ այդ սխալները կը պատահին նաեւ որովհետեւ թալիպանները բնակչութեան կը խառնուին: Հոկտեմբեր 25-ի լուրերուն համաձայն, Ամերիկացիք սկսած էին նաեւ բազմանեկոր ռումբեր նետել:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՅԷԼ Հոկտ. 25-ին քաշեց իր ուժերը Պէյթ Ռիմայէն (4000 բնակիչ, Ռամալլահի մօտ, Այսրյորդանան), բայց, նախապէս ամէնէն արիւնալի դէպքերը տեղի ունեցած էին: Վեց Պաղեստինցիներ սպաննուած էին եւ Իսրայէլ կը պնդէր որ նախարար Զէէվիի երկու մարդասպանները ձերբակալած էր, ինչ որ Պաղեստինցիք հերքեցին: Հերքեցին նաեւ որ սպաննուած վեց Պաղեստինցիները ահաբեկիչներ ըլլան, հինգը ոստիկաններ են: Իսրայէլեան ներխուժումը Պէյթ Ռիմա տեղի ունեցած է հակառակ Պուշի անձնական միջամտութեան՝ արգելք հանդիսանալու համար:

ՍԷՆ – ԿՈԹԱՐԻ (Զուիցերիա) փապուղիին մէջ, Հոկտեմբեր 24-ի առաւօտեան ահաւոր արկած մը պատահեցաւ, որու առաջին, բայց ոչ վերջնական հաշուեկշռին համաձայն 14 մեռեալ կար եւ բազմաթիւ վիրաւորներ: Կոթարի փապուղին, 17 քիլոմեթր, իր երկարութեամբ երկրորդն է աշխարհի: Արկածը պատահած է ժամը 9.45-ին, երբ մուտքէն 1,5 քիլոմեթր անցած, երկու բեռնակառքեր բախում ունեցած են: Անոնցմէ մէկը որ անիւ կը փոխադրէր, անմիջապէս կրակ առած է եւ յաջորդ առաւօտուն իսկ, կարելի չէր եղած հրդեհը մարել: Արկածին սկիզբը վարորդներէն մէկը կրցած է լուր տալ հասնող կառքերուն որ ետ երթան, առաջքն առնելով աւելի ծանր հաշուեկշռի մը: Արկածին պարագաները կը յիշեցնեն Մոն – Պլանի փապուղիին արկածը, որ երկու տարի առաջ 39 հոգիի մահուան պատճառ եղած էր եւ որու բացումը, այժմ, բանավէճի նիւթ է:

ՈՒԿՐԱՆԻՈՅ Պաշտպանութեան նախարարը՝ Օ. Կուզմուկ հրաժարած է, իբրեւ հետեւանք ռուսական օդանաւին արկածին, որ պատահած էր Հոկտեմբեր 4-ին, երբ ուկրանական հրթիռ մը արձակուած է, Թիւրիմացութեամբ: Օդանաւը Թել – Ավիվէն Նովոսիբիրսկ գիծը կ՚ապահովէր եւ 78 ճամբորդները, մեծ մասամբ իսրայէլացի մեռած էին:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ, 14 հոգի, որոնց մէջ 12 աշակերտուհիներ ջրամոյն եղած են, երբ զիրենք փոխադրող հանրակառքը Նեղոսի ջրանցքը ինկած է: Իշխանութիւնները վախ ունէին որ հաշուեկշիռը աւելի ծանր ըլլայ:

FRANCOPHONIE
ARMENIE 2000

Noël arménien 2002

à bord du **«Napoléon Bonaparte»**
Du 2 au 4 janvier 2002

2 janvier : — Appareillage à 20h de Marseille;
— Dîner avec l'orchestre **«Massis»**;
— Nuitée dansante avec 2 orchestres;
— Nuit en mer.

3 janvier : — Arrivée à Bastia. Petit-déjeuner à bord;
— Excursion en Balagne. Déjeuner typique;
— Visite de cave à vin à Patrimonio;
— Dîner à bord;
— Nuitée avec 2 orchestres;
— Nuit en mer.

4 janvier : — Petit-déjeuner à bord;
— Arrivée à Marseille à 7h30

Tarif: tout compris, 1600 F par personne

Renseignements/réservations :

Maurice Harounian: 04 91 44 47 77;
Jacques Avdoyan: 04 91 76 45 75.

——— Places limitées ———

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԻԱՈՒՂԻՆԵՐ
ARMENIAN AIRLINES

COMMUNIQUE

La compagnie aérienne nationale Armenian Airlines informe que les horaires de ses vols reliant Paris à Erevan durant la saison d'hiver seront modifiés à partir du 29 octobre.

Les nouveaux horaires sont :

- Lundi et Jeudi
- Arrivée à Paris, aéroport Charles de Gaulle 1, à 10h20;
- Départ de Paris, aéroport Charles de Gaulle 1, à 16h30.

Pour de plus amples informations, veuillez appeler le : **01 42 96 10 10.**

CONCERT

à l'occasion du 1700[e] anniversaire de la conversion de l'Arménie au christianisme
le samedi 27 octobre à 20h30
dans la Cathédrale Sainte-Croix de Paris des Arméniens Catholiques,
Au profit de l'école Sainte-Croix du samedi
MOURAD AMIRKHANIAN
(Basse)
chante : **Haendel, Verdi, Bellini, Fauré, Beethoven, Schubert, Komitas, Babadjanian, Tchaïkovsky, Rachmaninov, Dikranyan, Hagopian, Spentiaryan**
accompagné au piano
par **Johan Struyve.**
Entrée: 13, rue du Perche
(angle rue Charlot) Paris 3e.
Participation aux frais: 60 F
Réservations: Tél.: 01 44 59 23 50
Fax: 01 44 59 23 54.
Métro: République, Filles du Calvaire.

CDCA

LANCEMENT DU PRIX DU CDCA

Communiqué

Le CDCA lance un prix qui récompensera l'auteur d'un travail universitaire ayant abouti à l'obtention d'un diplôme durant l'année 2001.

Ce concours, ouvert à toutes les disciplines, récompensera les meilleurs travaux dont le sujet porte, directement ou indirectement, sur l'Arménie ou les Arméniens.

Toutes les disciplines sont concernées: histoire, géographie, sociologie, économie, science de la vie ou de la terre, arts, sciences politiques, sciences physiques, droit, littérature, psychanalyse, architecture, cinéma etc...

Prix?
Trois prix ainsi qu'une possibilité de publication, récompenseront les meilleurs travaux :
— **1er prix:2300 euros (envrion 15090F)**
— **2ème Prix:1500 euros (environ 9800F)**
— **3ème Prix:765 euros (environ 5020F)**

Pour qui?
Tout étudiant titulaire d'un diplôme Bac+3 (niveau Licence ou équivalent) jusqu'à Bac+5 (DEA-DESS ou équivalent).

Type de document?
Tout document rédigé en français ou en anglais ayant donné lieu à la délivrance d'un diplôme par des organismes d'enseignement français : rapport de stage, mémoire, document de fin d'études, film etc...

Jury
Un jury pluridisciplinaire composé de chercheurs, professeurs et universitaires déterminera les trois œuvres jujées les meilleures tant sur le plan de l'originalité du thème que de la forme.

Inscription, remise de documents et des pièces justificatives :
avant le 31 janvier 2002.
Remise des prix: **1er mai 2002.**

Règlement et formulaire d'inscription à retirer auprès du Comité de Défense de la Cause Arménienne (C D C A), 17, rue Bleue, 75009 Paris,
Tél. : 01 44 83 07 02
Règlement du concours disponible sur
http://www.cdca.asso.fr
Paris, le 24 septembre

Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ
ՓԱՐԻԶ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Շաբաթ օր, Հոկտեմբեր 27
ժամը 10.45-էն 12

ԵՐԿՈՏԱՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ

ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ
Մայր Տաճարին մէջ

«Առաւօտեան յատուկ ժամերգութիւն» տեղի պիտի ունենայ մասնակցութեամբ՝

Փարիզի 8-րդ, 16-րդ եւ 17-րդ թաղամասերու «Էթուալ – Շան զ՚Էլիզէ»ի Քրիստոնեայ (Անկլիքան, Կաթողիկէ, Ուղղափառ եւ Բողոքական) Եկեղեցիներու:

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը մասնակցելու սոյն էքիւմէնիք աղօթքներուն:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SECTION D. MISSAKIAN de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés.
Dîner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— **01. 42. 36. 33. 73** (la journée)
— **01. 46. 58. 03. 17** (le soir)

Date à retenir

SOIREE EXCEPTIONNELLE
organisée par la
CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
AU PROFIT DE L'ARMENIE
Vendredi 7 décembre

L'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR
du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le dîner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre MASSIS»

l'UGAB invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : «Le Val des Neiges»
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :

au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

TISSUS DES URSULES
Tout le décor de la maison
Siège Social 9, rue J. Duclos
42400 St-Chamond
SAINT-ETIENNE
SAINT-CHAMOND
CANNES LA BOCCA
VILLENEUVE-LOUBET

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-28
SAMEDI - DIMANCHE
27-28 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԳԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·284 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 77e ANNEE — N° 20·284

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՒ ՄԵՐ ԿԱՑԻՆԻՆ ԿՈԹԸ

Եւրոպայի անդամակցութեան ճամբուն վրայ Թուրքիոյ ընթացքին մասին Եւրոպայի Խորհրդարանին 2001-ի տեղեկագիրը մինչ տասնեակ յօդուածներուն ոչ մէկով յարուցած էր ցեղասպանութեան մասին իր իսկ քուէարկած որոշումը. թէ Թուրքիա պարտէր այդ իրականութիւնը ճանչնալ, կարենալ Եւրոպայի ընտանիքին մաս կազմելու համար:

Փաստաթուղթը սրբագրելիներու երկար շարքի մը — մարդկային իրաւունքներ, փոքրամասնութեան ինքնութեան, մշակոյթի ազատ արտայայտութիւն, չարչարանքի արգելք, օրէնքներու բարեփոխում, եւ այլն — վերջին մասին մէջ տեղ տուած էր «Հայկական»ին առնչուած երկու յօդուածի. կը զօրակցէր անցեալը միասնաբար արժեւորելու Հայեւթուրք խումբին ջանքին ու Կովկասի կայունութեան գործօն մասնակցութիւն կը խնդրէր Թուրքիայէն, Հայաստանի շրջափակումին ջնջումով:

Տեղեկագրին այս կամ այն յօդուածներուն համար առաջարկուած յաւելուածները միայն նիւթ կ'ընէին ցեղասպանութիւնը, պահանջելով իր ճանաչումի պայմանը յարգուի: Հոկտեմբեր 25-ի քուէարկութեամբ այս յաւելուածներուն մերժումով կը վաւերացուէր փաստաթուղթէն ցեղասպանութեան զեղչը:

Եւրոպա տրամադի՞ր է Թուրքիան իր միութեան անդամ տեսնելու օր մը. տարիներու ձգձգումը բաւական յստակ պատասխան է հարցումին: Սակայն, առկայ արգելք չէ որ ըստ պահու եւ շահերու, քաղաքական ճապկումներու ձեռնարկուի, հակառակին տպաւորութիւնը տալով: Այսօր, Աֆղանիստանի հարցը պահն ու շահերը կը խաչաձեւէ ի նպաստ Թուրքիոյ, զայն վերածելով աշխարհագրական, ռազմավարական անշրջանցելի դաշնակիցի. իսկ այդ դաշնակիցը սիրաշահելու համար ցեղասպանութեան պայմանը մէկդի դնել, մեծ ճիգ չի պահանջեր եւրոպացի երեսփոխաններէն:

Հայեւթուրք հաշտութեան խումբի մը կազմութենէն ի վեր աւելի դիւրացած է այդ գործը. արդէն քանիցս այդ խումբին գործունէութիւնը չխանգարելու նպատակով բացատրուեցան ցեղասպանութիւնը անտեսելու արարքներ: Ատով ամէն անգամուն փաստն ալ տրուեցաւ ու կը տրուի թէ ամերիկեանեւթուրք այդ նախաձեռնութեան թիրախը ի՛նչ էր:

Եթէ աշխարհը փոթորկած ներկայի աֆղանական գործօնը մեր հասողութենէն դուրս կը մնայ, նոյնը չէ պարագան չորս հայ անդամներու տէր հաշտութեան խումբին: Ի՞նչ բան կ'արգիլէ որ Հայաստան եւ Սփիւռք զոյգ թեւերու պաշտօնական, կիսապաշտօնական ու միւս բոլոր հիմնարկ — հաստատութիւն — կազմակերպութիւններով ձեռնարկուի անոր ներկայացուցչական բնոյթը ջնջելու գործին:

Առաջին անգամը չէ ի վերջոյ մեր պատմութեան մէջ որ կը գտնուինք անտառի դարաւոր կաղնիին կացութեան մէջ. այն մէկուն որ իր բունը հարուածող կացինին պատճառած ցաւէն աւելի խոր կը զգայ այդ կացինին կոթին իր մէկ ճիւղէն շինուած տեսնելուն դառնութիւնը:

Ա. Թ.

Հարուած մըն ալ ԱՄՆ-էն՝

ԿԱՍԵՑՈՒՄ ԹԻՒ 907 ԲԱՆԱՁԵՒԻՆ

ԱՄՆ-ու Ծերակոյտը Հոկտ. 25-ին ընդառաջելով նախագահ Պուշի փափաքին, կասեցուցած է Թիւ 907 բանաձեւին գործադրութիւնը. այդ բանաձեւը 1992-էն ի վեր ամերիկեան օժանդակութիւնը կ'արգիլէր Ազրպէյճանի, այնքան ատեն որ այս վերջինը կը շարունակէր շրջափակած պահել Հայաստանը եւ Ղարաբաղը: Պատերազմական ներկայի իրավիճակին մէջ, այն պատճառաբանութեամբ որ հարկ է ահաբեկչութեան դէմ պայքարը սաստկացնել, Ճ. Պուշ պահանջած էր Ծերակոյտէն որ վերատեսութեան ենթարկէ այդ բանաձեւը, որպէսզի կարելի ըլլայ ռազմական գործակցութիւն հաստատել Ազրպէյճանի հետ: Ընդառաջելով այս պահանջին, Ծերակոյտը թեր քուէարկած է ծերակուտական Մաք Գոնէլի ներկայացուցած առաջարկին որով նախագահին իրաւասութիւն կը տրուի կասեցնելու նոյն բանաձեւին գործադրութիւնը, մինչեւ 2002 Դեկտ. 31: Այդ թուականին, կասեցումը շարունակելու համար նախագահը նոր դիմում պէտք է կատարէ Գոնկրէսին: Կասեցումի որոշումը վերջնական ձեւ կը ստանայ Գոնկրէսին վաւերացումէն ետք:

Բանաձեւին նոյնիսկ կասեցումը, —մինչ Բաքու հիմնովին ջնջումը կը պահանջէր—, կը զուգադիպի շրջանի մը երբ Ազրպէյճանի ղեկավարութեան կողմէ Ղարաբաղը ի հարկին զէնքով, զօրքով ետ առնելու յայտարարութիւնները իրարու կը յաջորդեն: Ու այդ տրամադրութեան հետ աւելորդ է շեշտել իսկ թէ ԱՄՆ-էն ռազմական օժանդակութիւն ստացած Ազրպէյճան մը ի՛նչ կը նշանակէ Ղարաբաղի հարցին տեսանկիւնէն: Մանաւանդ որ երբեւ թէ այս կարգի մտահոգութիւններու տեղ չձգելու նպատակով, Ծերակոյտին որոշումը կ'ըսէ թէ Հոկտ. 25-ին քուէարկուած կասեցումը չի կրնար խոչընդոտել Մինսկի խումբին հովանաւորութեամբ կատարուած խաղաղ բանակցութիւնները, կամ Հայաստանի դէմ գործածուիլ յարձակողական նպատակներով:

Տրուած այս «ապահովութեամբ» գոհացած քիչերէն է, վստահաբար, Հայաստանի Արտաքին գործերու նախարարը Վ. Օսկանեան որ ըսած է. «Հայաստանը լինելով հակահաբեկչական միջազգային կոալիցիայի անդամ, սերտօրէն աշխատել է ամերիկեան վարչակազմի հետ՝ ապահովելու, որ միջազգային կոալիցիայի անվտանգութեան պահանջները բաւարարելիս, չվտանգուի ռազմական ու քաղաքական հաւասարակշռութիւնը Կովկասում եւ, ամենակարեւորը, վնաս չհասցուի Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի անվտանգութեան շահերին»:

Նոյն զուգահեռին վրայ է, բնականաբար, Ազգ. Ժողովի նախագահ Ա. Խաչատրեանն ալ որ ԱՄՆ-ու Ծերակոյտին որոշումին մէջ «քաղաքական գնահատականը տեսնել»ով յայտարարած է. «Ամերիկեան կողմը գտնում է, որ այս, Ադրբեջանի տարածքում կան միջազգային ահաբեկչութեան օճախներ եւ սա, կարծում եմ դրական չի բնութագրում Ադրբեջանի իշխանութիւններին»:

Նոյն տրամաբանութիւնը ցոյց տուած է ԱՄՆ-ու Հայկական Համագումարին գործադիր տնօրէնի պաշտօնակատար Արփի Վարդանեան եւս որ արդիւնքը յաղթանակ որակած է, քանի որ ձախողած է Թիւ 907 բանաձեւին ամբողջութեամբ ջնջումը:

Հայ Դատի ԱՄՆ-ու յանձնախումբին գործադիր տնօրէնը Արամ Համբարեան չի բաժներ այս մօտեցումը. ան յայտարարած է. «Մենք խորապէս հիասթափ ենք Ծերակոյտին որոշումէն: Պիտի շարունակենք մեր ջանքերը, որպէսզի մինչեւ փոփոխութեան վերջնական բնոյթ ստանալը բացատրենք Գոնկրէսի անդամներուն թէ Կովկասի մէջ ի՛նչ ժխտական ազդեցութիւն կրնայ ունենալ կատարուածը ԱՄՆ-ու շահերուն համար»:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

ԱՄԵՐԻԿԱ ՊԱՅՔԱՐԻ ՓԱՅԼՈՒՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ԿԸ ՓՆՏՌԷ

ԹԱԼԻՊԱՆՆԵՐԸ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԵՏ ՄԸ ՁԵՌՔ ՁԳԱԾ ԵՆ

ԱՄՆ-ու Պաշտպանութեան (Փենթակոն) նախարարութիւնը, ըստ երեւոյթին այնքան ալ ինքնավստահ չէ այլեւս եւ մրցումի մը դիմած է: Կատակ չէ, Ուաշինկթըն իր ժողովուրդին կը դիմէ որպէսզի գաղափարներ տան պայքարելու համար ահաբեկչութեան դէմ, մրցումը պիտի շահի ամէնէն փայլուն գաղափարը տուողը...: Պէտք է ըսել որ Միացեալ-Նահանգները վարանումներու մէջ են, այն աստիճան, որ Պաշտպանութեան Նախարարն ալ յաջորդական հակասական յայտարարութիւններ կ'ընէ քանի մը ժամ տարբերութեամբ: Այսպէս, Հոկտեմբեր 25-ին, նախ յայտարարեց.— «Հաւանական է որ Միացեալ-Նահանգները երբեք ձեռք չդնեն Պէն Լատէնի վրայ», աւելցնելով.- «Կրցա՞նք ճշդել թէ ո՞ւր է: Ո՛չ: Աշխարհ մեծ է: Շատ երկիրներ կան: Շատ դրամ ունի եւ շատ մարդիկ զօրավիգ են իրեն»: Այս յայտարարութիւնները զորս Ռըմսֆելտ ըրած էր Իւ-Էս-Էյ Թուտէյի բաւական իրարանցում ստեղծած ըլլալով, քիչ ետք «սրբագրած է», հաստատելով մամուլին առջեւ որ «պիտի բռնենք» (իմա՝ Պէն Լատէն): Պարզ է որ երեք շաբաթներու ռմբակոծութիւններէ ետք, ԱՄՆ ոչ մէկ յաջողութիւն արձանագրած է, բացի քիչ մը աւելի քանդելէ քարուքանդ երկիր մը: Հոկտեմբեր 25-ին, Փենթակոնը խոստովանեցաւ, թէ բազմաբեկոր ռումբեր գործածած է, ինչ որ ընդվզում կը պատճառէ մարդասիրական կազմակերպութեանց: Այս ռումբերուն ամէն մէկը իր մէջ կը կրէ 200 փոքր ռումբեր, մէկուկէս քիլօ կշռող, որոնք կը պայթին եւ կը տարածուին, երբ հողին դպչին: Կրնան նաեւ անմիջապէս չպայթիլ եւ վերածուիլ հականձնական ականներու ու երկար ժամանակի վրայ վտանգել շրջանները:

Մինչ Ամերիկացիք կը սկսին գիտակցիլ որ սխալ էր այդքան ինքնավստահ ըլլալ, Թալիպանները յայտարարեցին Հոկտեմբեր 26-ին, որ ձեռք անցուցած են ընդդիմութեան պարագլուխներէն, զինուորական ղեկավար՝ Ապտիւլ Հաք, որ հակախորհրդային պատերազմի հերոս մըն է: Ամերիկացիք փորձեր են թըռաններով, արգելք հանդիսանալ, բայց չեն յաջողիր:

* * *

Թալիպաններէն զատ, ընդդիմութիւնն ալ կը դատապարտէ ամերիկեան ռմբակոծութիւններու գործած վնասները: Ընդդիմադիրները դիմած են Միացեալ-Նահանգներուն, որ ջանք թափեն խուսափելու համար քաղաքացիներ զոհելէ: Ըստ Թալիպաններուն, բնակիչներու մէջ աւելի քան հազար մեռեալ կայ, ինչ որ ԱՄՆ կը հերքէ, առանց կարենալ ուրիշ թիւ մը տալու: Կը խոստովանին միայն թէ 6 — 7 «սխալ» ռմբակոծութիւններ եղած են, ինչպէս ռումբեր՝ հիւանդանոցի մը, բնակութեան թաղամասի մը, Կարմիր Խաչի կեդրոնի մը վրայ: Հանգստեան կոչուած ամերիկացի գնդապետ մը կ'ըսէ. «ամերիկացի զինուորականներու քաղաքականութիւնը կը կայանայ սահմանափակելու մէջ զինուորական թիրախներու, բայց, Աֆղանիստանի մէջ, մանաւանդ երկրին աշխարհագրութեան պատճառաւ, դժուար է խուսափիլ քաղաքացիներու վնասելէ»...:

* * *

Այս անգամ Արտաքին նախարարութեան մէկ պաշտօնեան է որ վարակուեր է ածխախտէ: Իր աշխատանքը կապ ունէր թղթատարի հետ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԹՈՒՐՔԻՈՅ Արտաքին գործերու նախարարը Ի. Ճէմ Պրիւսէլի մէջ ելոյթ ունեցած է «Կովկասի մէջ կայունութեան որոնում» նիւթով ժողովին. ան կազմակերպուած էր Թրքական հիմնարկի մը կողմէ. մասնակցած էին Հայաստանէն, Վրաստանէն, Ազրպէյճանէն, Իրանէն ներկայացուցիչներ: Ի. Ճէմ իր ելոյթին մէջ յղում մը ընելով Ռուսաստանի, ըսած է թէ Կովկասը ոչ մէկ երկրի սեփական պարտէզն է եւ այդ շրջանը պէտք չէ չորս մը հզօր դրացիներու սպառնալիքին տակ գտնուի:

ԹՈՒՐՔԻՈՅ վարչապետի օգնական եւ Հայրենիք կուսակցութեան նախագահ Մ. Եըլմազ գերմանական «Պիլտ» թերթին տուած հարցազրոյցին ընթացքին խօսելով իր երկրին Եւրոպայի միութեան անդամակցութեան մասին, ըսած է թէ շատ յուսախաբ եղած են, տեսնելով որ չեն հրաւիրուած Միութեան յետագայ զարգացումներուն օրակարգով 2002-ի ժողովին: Ան սպառնալիքի ոճով աւելցուցած ալ է թէ ի վերջոյ, Թուրքիոյ համբերութիւնը սահման մը ունի: Իր կարծիքով, պէտք է անյապաղ ընդունուի Թուրքիոյ

(Շար.ը Դ. էջ)

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 25/26)

ՊԱՏԱՆԻՆ ԳՏԱԾ ԵՆ ԾԱՌԷՆ ԿԱԽՈՒԱԾ

Վանաձորի Գիւլագարակ գիւղէն 13-ամեայ Ջաւէն Սուքիասեան անհետացած է մօտ 20 օր առաջ. փնտռտուքները արդիւնք չեն տուած: Հոկտ. 25-ին անտառապահ մը պատահաբար գտած է անտառին մէջ ծառէ մը կախուած անոր դիակը: Քննութիւն բացուած է ստուգելու համար թէ պատանին անձնասպա՞ն եղած է, թէ ոճիրի զոհ դարձած:

ՁՄՐԱՆ ԺԱՄ

Շաբաթ, Հոկտ. 27-էն Կիրակի, Հոկտ. 28 լուսնալիք գիշերը հարկ է ժամացոյցները մէկ ժամ ետ տանիլ, անցնելու համար ձմրան ժամուն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ

«ԴՈՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՑ ՑԵՂԻՍ ՕՐՐԱՆ, ԴՈՒ ԵՒ ԲՆԻԿ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ»

ՍԵՓԱԿԱՆ ԱՉՔՈՎ

2001 Թուականն ենք, ԻԱ. դարուն առաջին տարին: Այս տարի հայ ազգը կը տօնախմբէ քրիստոնէութեան որպէս պետական կրօնք հռչակման 1700–ամեակը, նաեւ աչնան, երկրորդ անկախութեան տասնամեակը: Սքանչելի առիթներ կրկին Հայաստան երթալու: Ու կը միանամ Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ կազմակերպած ուխտաւորներու խումբին, մօտ 100 հոգի: Խումբը կը ղեկավարէ Պօմոնի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Կոմիտաս Վրդ. Յովնանեանը: Ան ունի մարդկային յարաբերութիւններու բնածին յատկութիւն: Գիտէ իր սրամտութեամբ ու զուարթախօսութեամբ ուրախ առիթներ, մթնոլորտ ստեղծել, գիտէ նաեւ եկեղեցիներու, պատմական յուշարձաններու մէջ ինքնամփոփման, լրջութեան հրաւիրել մարդիկ: Իսկ Երեւանի մէջ մեր խումբին «տիրութիւն» կ'ընէ նախկին մարսէյլահայ, այժմ Հայաստանի գնդապետի աստիճանին հասած Յովսէփ Յովսէփեանը, որ իր կարելին, նաեւ անկարելին կ'ընէ մեր կեցութիւնը հաճելի եւ արդիւնաւէտ դարձնելու համար: Հազար շնորհակալութիւն իրենց:

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՈ՞Ւ ԹԷ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻԻ ԱՉՔՈՎ

Ճակատագրի բերմամբ սփիւռքահայ ենք, քաղաքացիութեամբ «օտարերկրացի»: Ծներ ու մեծցեր ենք Եւրոպայի մէջ, եւ որչափ որ ջանացեր ենք հայօրէն ապրիլ, միջավայրը, կրթութիւնն ու որոշ չափով սովորութիւններ մեր մէջ դրեր են չափ մը, ֆրանսացիի, եւրոպացիի, որմէ ձերբազատիլ դժուար է եթէ ոչ անկարելի: Chassez le naturel il reviendra au galop կ'ըսէ ֆրանսական առածը: Ուստի եթէ մէկ բանը մեր մէկ աչքը Հայու աչքով դիտէ, միւսը անպայման Եւրոպացիի աչքով պիտի տեսնէ: Կը խորհիմ որ մենք Սփիւռքահայերս բնաւ ալ իրաւունք չունինք քննադատելու՝ քննադատելու հաճոյքին համար, քանի մեզմէ կարեւոր մեծամասնութիւն մը լումայ մը իսկ չի տար կամ չէ տուած Մայր Հայրենիքի բարգաւաճման համար, բայց եւ այնպէս ժխտական կեցուածք պէտք չէ նկատել Հայու սրտցաւութենէն եկած նկատողութիւնն ու դիտողութիւնը որ երբեք դատապարտում չէ:

Առաջին իսկ վայրկեաններէն պարզ պիտի դառնայ որ Հայաստան հին եւ նոր, հնացեալ եւ արդիականի, նոյնիսկ գերարդիականի համադրութենէ մը աւելի, անոնց յարադրութեան երկիր է, հակադրութիւններու, հակապատկերներու վայր: Եթէ 30 – 40 տարի առաջ «էգուց աւելի լաւ կը լինիվ» եւ մեր Հայու – «հայկական է, պատուական է»ի մտայնութեամբ կարելի էր շատ բան ընդունիլ եւ մարսել, այսօր երկիրը ԻԱ. դարու սեմին, արդէն Եւրոպական Խորհուրդի անդամ դարձած է (ոչ Եւրոպական Միութեան, չխալինք). Եւրոպացիին աչքը կրնա՞յ շատ մը ժխտականներ մարսել: Մանաւանդ որ անոնց մէկ կարեւոր մասը կարելի է սրբագրել առանց շատ մեծ նիւթական միջոցներու, պիտի բաւէր բարի կամք, քիչ մը նախաձեռնութիւն ու աշխատանք...: Պարզապէս: Ու դաստիարակութիւն:

Հայաստանի արտաքին դուռը Երեւանի Զուարթնոց օդակայանն է: Գեղեցիկ կառոյց մը, Փարիզի Ռուասիի սունկը յիշեցնող, որ իր շինութեան ատեն արժանացած էր Խորհրդային Միութեան ոսկէ մետալին: Քիչ պատիւ չէր հայ ճարտարապետներուն եւ շինարարներուն համար: Հոնկէ կը մտնեն ու կ'ելլեն ոչ միայն սփիւռքահայը, այլ նաեւ օտարները որոնք քիչ թիւ չեն կազմեր: Այս սիւնակներուն մէջ շատ գրուած է օդակայանին անխնամ վիճակին, իր աղտոտ արտաքնոցներուն մասին, որոնց վրայ չեմ ուզեր ծանրանալ: Աշխարհի շատ լեզուներով կայ առածը թէ առաջին տպաւորութիւնը լաւագոյնն է: Ծեփիչով մը թափած տուֆէ սալաքարը չաղախով անմիջապէս տեղադրել, քիչիկ մը խնամք ու մաքրութիւն հոս ու հոն, եկողին պիտի տային լաւագոյն տպաւորութիւնը...: Իմ ուշադրութիւնը կը գրաւեն, անկախութենէն 10 տարի ետք ամէնուրեք մնացած ռուսերէն խոշոր արձանագրութիւնները, որոնց տակ միայն տեղ տեղ կան փոքր գիրերով հայերէն եւ անգլերէն գրութիւններ: Հայաստանի պետական լեզուն հայերէնը չէ՞ Սահմանադրութեամբ հռչակուած. Թէկուզ աբեղեանական խեղագրութեամբ: Աւելի՛ն: Մեր անցագրերուն վիզաները ստուգող դռնակին առջեւ հրակողութեան կեցած թխադէմ երիտասարդ ոստիկանը ռուսերէնով կը պատասխանէ մեր հարցումներուն. հայերէն չի՞ գիտեր, թէ չուզեր խօսիլ: Սատանան գիտէ: Կէս գիշեր է երբ կը բռնենք Երեւան տանող մայրուղին. ճամբուն վրայ կը ծածանին եռագոյն դրօշները, երկու ուղիներուն մէջտեղը զետեղուած են «Քրիստոնեայ Հայաստան – 1700» վահանակներ, երեք եռագոյն գմբէթներով, խաչերով պսակուած: Ճամբուն երկու կողքին վրայ շինուած են կնդրիտի լցման արդիական կայաններ, որոնք ոչինչ ունին նախանձելիք հօստեղիններէն: Վրան հայերէն թէ ռուսերէն լուսաւոր գիրերով «բենզին». կայ ատոր հայերէնը, սքանչելի կնդրիտը. բայց երբ այդ բառը գործածես, Հայաստանցին երեսիդ պիշպիշ կը նայի, որպէս թէ հետը չինարէն խօսիս...: Քիչ անդին, Ցաղթանակի կամուրջէն դէպի քաղաքի կեդրոն, գինիի գործատան դիմաց մեր աչքին դէմ կը ցցուի Մետրոպոլ նորակառոյց պանդոկը, գերարդիական. կ'ըսեն թէ տէրը նախկին նախարար մըն է: Եթէ այդպէս է, ուրեմն Հայաստան ալ կը դասուի այն երկիրներուն շարքին, ուր քաղաքականութիւն եւ պիզնէս կ'ընթանան զուգահեռ...:

Մեր կեցութեան օրերուն պիտի բնակինք «Դուին» պանդոկը որ կը գտնուի Պարոնեան պողոտային վրայ: 30 տարի առաջ ան Երեւանի երեք ամենամեծ եւ ամենաշքեղ «հիւրանոց»ներէն մին էր, Արմենիային եւ Անիին հետ: Ան ալ վերջերս սեփականաշնորհուած է եւ մօտերս պիտի վերանորոգուի: Բնաւ աւելորդ չէ այդ խնամքը: Մեր սենեակը կը բացուի եօթնի մէկ անկիւնին վրայ: Երբ առաւօտուն պատշգամ կ'ելլեմ, աչքերուս առջեւ կը պարզուի Արարատի վեհապանծ պատկերը, յաւիտենական «սուրբ» ձիւնով մեծ Մասիսի գագաթին: Իսկոյն կը մտաբերեմ Յովհաննէս Շիրազի տողերը. «Թէ որ չունես դու Արարատ, ի՞նչ ասեմ քեզ ես Հայաստան...»: Իւրաքանչիւրիս սրտին ցաւն է որ մեր խորհրդանիշը տակաւին գերի կը մնայ, ո՞վ գիտէ դեռ որքան անորոշ ժամանակ: 10 օր շարունակ պիտի յագենանք անոր հեռաւոր բարեւով: Այլ է սակայն պանդոկին եօթնի պարզուած պատկերը: Հոն կայ Երեւանի ամենահին Թաղերէն Կոնդը: Անոր կէսը կատարեալ հիւղաւան մըն է մինչեւ այսօր: Ատեն մը երբ ամէն հարցի կը պատասխանուէր «Վաղը լաւ կը լինի»ով, պանդոկին շինութենէն ետք, ժամանակուան պատասխանատուները չէ՞ն մտածած քաղաքին այդ մէկ պալարը վերցնելու մասին: Գոնէ օտարին աչքին համար: Այսօր Երեւան այցելողը նախկին խորհրդահայ քաղաքացին չէ, այլ՝ արեւմուտքցին: Ո՞րքանով ընդունելի է որ 2001 Թուականին մարդիկ փողոցի միակ աղբիւրէն տակաւին դոյլերով ջուր կրեն: Ի տես այդ «Թշուառութեան» մեր խումբէն մարդիկ կը մտածեն «օգնութիւն ընել»: Բայց... այդ Թիթեղաշէն տուներուն քովի նոյնպէս Թիթեղաշէն կառատուներէն դուրս կու գան ինքնաշարժներ, նոյնիսկ նորագոյն Տաքսի մակնիշի «մեքենայ»: Երեւանցին (գոնէ ոմանք) այդքա՞ն կը նախընտրէ «աւտոմեքենան» բնակարանի մը, տարրական հանգստաւէտութեան:

Հայաստանի ամբողջ ենթակառոյցը, բնակարանային ֆոնտ, կրթաուսումնական եւ մշակութային համակարգ, գիտական եւ արդիւնաբերական հաստատութիւններ, նաեւ փոխադրութեան եւ ջերմուժի ցանց, խորհրդային տասնամեակներու արգասիքն է, մանաւանդ յետ – պատերազմեան տարիներունը, 1950–էն 1990: Անտեսել կամ ուրանալ այս իրողութիւնը կամաւոր կոյր ըլլալ է, առնուազն: Գ. Հանրապետութիւնը ժառանգեց այդ ամէնը 1991ին եւ իր աւագ պարտականութիւնն է այդ ամէնը աչքի լոյսի պէս, գուրգուրանքով պահել–պահպանելը: Քանզի առ այժմ չկան, ոչ ալ յայտնի է որ յառաջիկայ 10 տարիներուն ըլլան միջոցներ նմանը ստեղծելու: Այդ կ'ենթադրէ որ պետական վերնախաւին կիրարկած ճշգրիտ քաղաքականութեան մը հետ, իւրաքանչիւր քաղաքացի ինքզինք պատասխանատու զգայ հանրային գոյքին հանդէպ...: Փոխադրութեան հանրային միջոցները, թրամուէյ, հանրակառք նման վիճակի են ինչպէս նախկին Խորհ. Միութեան իւրաքանչիւր քաղաքի. տասը տարիէն աւելի է որ այդ փոխադրամիջոցները չեն նորոգուած. խլխլած ու փլփլած են, հրաշքով կը բանին: Անոնց պակասը եկած է լրացնելու մինիպիւսներու, –Թրքական առածով՝ տոլմուշ–, խիտ ցանց մը որ երեւանցին կը փոխադրէ քաղաքին մէկ ծայրէն միւսները, արագօրէն: Սակն է 100 դրամ, (1 Ֆր. 30), շատ աժան՝ եւրոպական քըսակին համար, սուղ, «թանկ»՝ տեղացիին համար: Ասոնց քով կան եւրոպական մակնիշի Փիւլման օթօպիւսներ, ձեռքէ գնուած, որոնք դեռ կը կրեն իրենց ֆրանսացի, գերմանացի կամ աւստրիացի նախկին տէրերուն անունն ու հասցէները. ջնջելու համար պէտք է օթօպիւսը կրկին ներկել... դրամ կը պահանջէ: Այդ տեսակի կառքերը կը գործածուին ընդհանրապէս զբօսաշրջութեան համար: Կառքերու խտութիւնը եթէ հեռու է արեւմտեան երկիրներէն, բաւական մեծ է սակայն: Խորհրդային, ռուսական մակնիշի կառքերուն քով, որոնք հին են ընդհանրապէս, կան եւրոպական Մէրսէտէս, BMW, Փէօժօ, Վոլքսվակըն եւ այլ մակնիշի նոր կառքեր. ի՞նչով կը բանին անոնք, քանի, վերեւ յիշուած հեղուկ վառելանիւթի կայաններուն մէջ ի սպառ կը բացակայի առանց կապարի կնդրիտը: Ասիկա եւ քարպիւրաթէօրներու աղտոտ ու անխնամ վիճակը կը բացատրէ քաղաքին օդին ապականութիւնը: Մանաւա՛նդ երբ տիզըլ շարժակ մը կը բանի եւ կ'արձակէ հեղձուցիչ մուխերու իր քուլաները...: Չկայ անշուշտ եւրոպական ձեւի քննութեան պարտաւորութիւնը. եթէ ոչ, անոնց 90 տոկոսը շատոնց գացած կ'ըլլար քանդուելու: Աւելցնենք նաեւ որ չկայ կառքերու ապահովագրութիւն: Երբ հարց կու տամ ծանօթի մը թէ բախումի մը կամ արկածի մը հետեւանքները ի՞նչ կ'ըլլան, կը պատասխանէ. «կամ գլխիդ մազը կը ծախես ու կը հատուցանես, կամ ալ մէջտեղէն կ'անյայտանաս»: Իւրաքանչիւր վարորդ ալ պարագաներու բերմամբ դարձած է մեքենագործ, յաճախ «քէն ընող» շարժակը կրկին աշխատցնելու համար: Եւ եթէ աւելցնենք երկու անիւներու հեծանիւ թէ մոթօսիքլէթի ի սպառ բացակայութիւնը, Հայաստանեան ճամբաներու եւ փողոցներու պատկերը կ'ըլլայ գրեթէ կատարեալ, ամբողջական. նախընտրելի է չխօսիլ ազդալոյսերու մասին, քանի յարգողները կը կազմեն պըզտիկ փոքրամասնութիւն մը...:

Միայն ժխտականներու երկիր չէ Հայաստան. ունի շատ դրական կողմեր ալ, «արժանի գրոց յիշատակութեան»: Ամէնէն կարեւորը ապահովութեան իրականութիւնն է, ոչ միայն զգացումը: Երեւանի դէշ լուսաւորուած փողոցներուն մէջ կարելի է գիշերուան որեւէ ժամուն հետիոտն երթեւեկել առանց վախի: Հահեւաբեկչութեան ենթակայ գար ու մէկ դժուարութեան ենթակայ երկրի մը մէջ, բան մըն է զոր կ'արժէ զոյգ գիծերով ընդգծել: Մէկ ուրիշ դրականն ալ մեծի հանդէպ յարգանքն է, որուն մէկ օրինակով կ'անդրադառնամ յաջորդող տողերով:

ՍՏԵՓԱՆ ՓՕՂՈՍԵԱՆ

(Շար. 2)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԻ ՆՈՒՐԲԵԱՑ ՓԱՌԱՏՕՆԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Հայկականէն աւելի լայն շրջանակներու հետաքրքրութեան, գնահատանքին ու արձագանգներուն արժանացաւ հայկական ճաշի եռօրեայ փառատօնը որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 19 – 21, Փարիզի 10–րդ Թաղամասի «Նիւ Մորնինկ» ակումբին մէջ, կազմակերպութեամբ «Հայաստանի համակարգում» խումբին: Այս նոր նախաձեռնութեամբ, Փարիզի երաժշտական ոլորտին մէջ քայլ մը եւս առնուեցաւ հայկական ճաշին ներկայացման առումով, վերջին շրջանին Տաթեւիկ Յովհաննիսեանի ուշագրաւ ելոյթներէն ետք:

«Հայկական ճաշ» սահմանումը երաժշտական կալուած մը բնորոշելուն հետ անմիջական կերպով կը կապուի մեր սփիւռումին ու համարկումի երեւոյթին որ արտայայտութիւն կը գտնէ երաժշտութեան այս ճիւղին մէջ: Տ. Յովհաննիսեանի երգած Կոմիտասը, Սայաթ Նովան կամ հայկական ժողովրդական երգերը ու Արթօ Թունճպօյաճեանի երրեակին, «Արմինիըն Նէյվի Պէնտ»ին կողմէ հայկական աւանդական նուագարաններու մեծ յաջողութեամբ ներգրաւումը ճաշի երաժշտութեան մէջ, ամէնէն ցայտուն ապացոյցներն են ատոր: Եւ հետաքրքրական է նկատել որ Փարիզեան այս ներկայացումներուն առաջին դէմքերուն մէկը կու գար Հայաստանէն, երկրորդը՝ Պոլիսէն:

Հոկտեմբեր 19 – 21-ի փառատօնին յաջողութեան գլխաւոր հեղինակն էր Արթօ Թունճպօյաճեան, նախ իր ուշագրաւ տաղանդով, ապա կազմած երրեակով ու «Արմինիըն Նէյվի» խումբով: Առաջինին մէջ իրեն ընկերացողները եղան Վահագն Հայրապետեան (դաշնակ, քի–պորտ) եւ Վարդան Գրիգորեան (դուդուկ, զուռնա): Այս երրեակը նուագեց փառատօնին բացման երեկոյթին ուր սրահը լեցուած բազմութեան մէջ կը գտնուէր նաեւ Հայաստանի դեսպանը Է. Նալպանտեան:

Օրուան յայտագրին առաջին բաժինը որ յատկացուած էր անոր, անկախ՝ Ա. Թունճպօյաճեանի խօսքի բաժիններէն որոնք անհարկի կերպով երկարեցան, արդար հետաքրքրութեան եւ խանդավառութիւն ստեղծեցին. յատկապէս այն բաժինով ուր Վ. Գրիգորեանի դուդուկը շատ բնական ընթացքով կը վերածուէր ճաշի նուագարանի մը, ընկերանալով Ա. Թունճպօյաճեանի թմբուկներուն եւ Վ. Հայրապետեանի դաշնակին:

Առաջին բաժինէն ետք ուր երրեակէն զատ Ա. Թունճպօյաճեան մեծապէս տպաւորեց որեւէ առարկայով նուագ ու կշռոյթ ստեղծելու իր կարողութեամբ, երեկոյթը քիչ մը մեր շատ սովորական հանդէսներու մթնոլորտին փոխադրուեցաւ որպէս «նոր տաղանդ» ներկայացուած երիտասարդ երգչուհի Ալլա Լեւոնեանի երգերով. ան կու գար Արարատեան դաշտէն, երգելու համար նախ Մշոյ երգեր, ապա Կոմիտաս, Սայաթ Նովա, եւայլն: Իր երկացանկին մէջ տեղ տուած էր իր ստեղծագործութիւններէն «Հօյնար»ին ալ որ հակառակ ճիգին, բան չաւելցուց ստեղծուած տպաւորութեան վրայ. իրեն դաշնակով ընկերացաւ Վ. Հայրապետեան:

Շատ աւելի յագեցած յայտագիրներ ունեցան փառատօնին Բ. եւ Գ. օրերը, Հոկտեմբեր 20–ի երեկոյթին Սոֆիա Տոման-

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ՆԱԵՒ ՔԻՍԻՆԿԷՐԸ ՌՄԲԱԿՈԾԵԼ

Գուրիէ էնթէրնասիոնալ, որ ամէն շաբաթ քաղուածք մը կ'ընէ համաշխարհային մամուլի յօդուածներէն, նախավերջին թիւին մէջ (Հոկտեմբեր 18 – 24), հրատարակած է մեծ հեղինակի մը՝ Էտուարտօ Կալէանօյի մէկ յօդուածը Մեքսիքօյի Լա Խօրնատա թերթին մէջ լոյս տեսած, վերոյիշեալ խորագրով:

Բարիին եւ Չարիին միջեւ պայքարին մէջ, միշտ ժողովուրդն է որ կը տուժէ: Ցանուն Բարիին, ահաբեկիչները շուրջ 60 երկիրներու աշխատաւորները սպաննեցին Նիւ – Եորք եւ Ուաշինկթըն: Միշտ յանուն Բարիին է որ Նախագահ Պուշ ուխտած է Միացեալ – Նահանգներու վրէժը լուծել: Բարիներ եւ չարեր, չարեր եւ բարիներ, դերակատարները դիմակ կը փոխեն, հերոսները հրէշներ կը դառնան՝ եւ հրէշները հերոսներ, ըստ Պատմութիւնը գրողներուն քմահաճոյքին:

Գերման գիտնականը՝ Վէրնհէր Ֆոն Պրաուն չարին կողմն էր, երբ Վի 2 հրթիռները շինեց, զորս Հիթլէր Լոնտոնի վրայ արձակեց, բայց, բարիին կողմը անցաւ, երբ իր տաղանդը դրաւ Միացեալ – Նահանգներու տրամադրութեան տակ: Ստալին բարին մարմնաւորեց համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին, յետոյ Խորհրդային Միութիւնը չարին կայսրութիւնը դարձաւ: Սպա, Ռուսերը կրկին բարի դարձան, այսօր, Պուտին ինք ալ չարը պատժելու մասին կը խօսի:

Սատտամ Հիւսէյն բարի էր եւ լաւ էին քիմիական զէնքերը զորս գործածեց Պարսիկներու եւ Քիւրտերու դէմ: Յետոյ, գէշ ճամբայ բռնեց: Դարձած էր «սատանայ Հիւսէյն», երբ Միացեալ – Նահանգները որոնք արշաւած էին Փանամայի վրայ, յարձակեցան Իրաքի վրայ որովհետեւ Իրաք Քուէյթ արշաւած էր: Հայր Պուշն էր որու ինկաւ այս պատերազմը մղել չարին դէմ: Իր ընտանիքը յատկանշող մարդասիրական եւ գթասիրտ ոգիով, սպաննեց 100 հազար Իրաքցիներ, մեծ մասամբ քաղաքացիներ:

«Սատանայ Հիւսէյն» միշտ հոս է, բայց, այս թիւ մէկ հանրային թշնամին, իջած է թիւ 2 թշնամիի կարգին: Աշխարհի պատուհասը, այսօր, Ուսամա Պէն Լատէն կը կոչուի: ՍԻԱ–ն իրենց դասաւանդած է ինչ որ գիտէ ահաբեկչութեան մասին, Պէն Լատէն, սիրուած ու զինուած ամերիկեան կառավարութեան կողմէ, մէկն էր «ազատութեան մարտիկներու» գլխաւորներէն Աֆղանիստանի համայնավարութեան դէմ: Հայր Պուշ փոխ – նախագահի աթոռը կը գրաւէր, երբ նախագահ Ռեկըն յայտարարեց որ այս հերոսները «հիմնադիր հայրերուն բարոյական համապատասխաններն էին»: Եւ Հոլիվուտ նոյն ալիքին վրայ էր: Ռամպօ Գ.ի մէջ, աֆղան մահմետականները բարիներն էին: 13 տարի յետոյ, կրտսեր Պուշի օրով, վերածուեցան գերչարերու:

Հէնրի Քիսինկէր առաջիններէն եղաւ հակազդելու Սեպտեմբեր 11–ի ողբերգութեան: «Նոյնքան յանցաւոր որքան ահաբեկիչները անոնք են որոնք անոնց կը բերեն իրենց նեցուկը, նիւթականը եւ ներշնչումը» յայտարարած է: Եթէ այդպէս է, հարկ է սկսիլ Քիսինկէրը ռմբակոծելով: Ամերիկեան քանի մը կառավարութիւններու հաշւոյն, բերած է իր «նեցուկը, նիւթականը եւ ներշնչումը» Պետութեան ահաբեկչութեան Ինտոնեզիա, Գամպոճ, Կիպրոս, Իրան, Հարաւի Ափրիկէ, Պէնկլատէշ եւ լատին Ամերիկայի երկիրներուն մէջ, որոնք ճանչցան Գոնտոր ծրագրի աղտոտ պատերազմը:

1973, Սեպտեմբեր 11-ին, այսինքն ճիշդ 28 տարի առաջ այսօրուան կրակներէն, Չիլիի պալատը կ'այրէր: Քիսինկէր պատրաստած էր Սալվատոր Ալյէնտէի եւ չիլիական ժողովրդավարութեան տապանագիրը, ընտրութիւններու արդիւնքը մեկնաբանելով.– «Պէտք չէ որ ընդունինք թէ երկիր մը մարքսիստ դառնայ իր ժողովուրդին անպատասխանատուութեան պատճառով»:

Ժողովրդական կամքին արհամարհանքը հասարակաց բազմաթիւ կէտերէն մէկն է Պետութեան ահաբեկչութեան եւ անհատական ահաբեկչութեան: Ուրիշ օրինակ մը առնելով, ԷԹԱ, որ կը սպաննէ յանուն Պասք երկրի անկախութեան, բանբերի մը միջոցաւ հաստատած է որ «իրաւունքները ոչ մէկ կապ ունին մեծամասնութիւններու եւ փոքրամասնութիւններու հետ»:

Հասարակաց կէտերը բազմաթիւ են արհեստական ահաբեկչութեան եւ կատարելագործուած ահաբեկչութեան, կրօնական ծայրայեղականներու եւ շուկայի ծայրայեղականներու, յուսահատներու եւ զօրաւորներու, ազատութեան խենթերու[11] եւ արհեստաւորներուն միջեւ: Բոլորն ալ մարդկային կեանքի նոյն արհամարհանքն ունին. – 5500 քաղաքացիներու (վերջին հաշուեկշիռը 5972 մեռեալ կամ անհետացող) ջախջախուած թուին Թաուըրներու աւերակներուն տակ, որոնք աւազի դղեակներու պէս փլան եւ 200 հազար Կուաթէմալթէքցիներու մարդասպաններու միջեւ, մեծ մասամբ կարմրամորթներ, բնաջնջուած, առանց որ աշխարհի ոչ հեռատեսիլները, ոչ ալ մամուլը որեւէ ուշադրութիւն դարձնեն անոնց: Այս կուաթէմալթէքները չզոհուեցան մահմետական մոլեռանդի մը կողմէ, այլ զինուորական ահաբեկիչներու, որոնք կը վայելէին Միացեալ – Նահանգներու յաջորդական կառավարութեանց նեցուկը:

Սխալներու ողբերգութիւն մը, այլեւս չենք գիտեր թէ ո՞վ ով է: Կը դիտեմ Նիւ-Եորքի պատի մը վրայ վերջերս հրատարակուած նկար մը, մէկը գրած է. – «Ակն ընդ ական աշխարհը կոյր կը դարձնէ»:

Թ. Ա. Թ.

չէի երրեակով (Ս. Տոմանչէչ՝ դաշնակ, Գլօտ Չամիչեան՝ քոնթրըպաս, Սիմոն Կուպէր՝ թմբուկ) ու Ա. Թունչպոյաճեանի ղեկավարած «Արմինիըն Նէյվի» խումբով եւ Հոկտեմբեր 21–ին՝ Խաչօն Հոստիկեան (սաքսոֆոն), Գագիկ Մուրատեան (քամանչա) եւ Լոյ Էրլիխի (աճուճ, քորա. մարոքեան եւ մալիական նուագարաններ) երրեակով, ապա Տիտիէ Մալէրպի երրեակով (Տ. Մալէրպ՝ սաքսոֆոն – դուդուկ, Փաթրիք Մէյէր՝ կիթառ, Ֆիլիփ Ֆոշ՝ թմբուկ):

Այս բոլորին ամէնէն թագմատարրն էր «Արմինիըն Նէյվի» խումբը, հայկական աւանդական – ժողովրդական ու արեւմտեան նուագարաններու բացառիկ համադրումով մը. անոր արուեստագէտներն են Ա. Թունչպոյաճեանի հետ Անահիտ Արտուշեան (քանոն), Արմէն Այվազեան (քամանչա), Արմէն Հիւսնունց (սաքսոֆոն), Դաւիթ Մինասեան (թրոմպոն), Դաւիթ Նալչաճեան (սաքսոֆոն), Տիգրան Սուչեան (թրոմփէթ), Նորայր Գարտաշեան (բլուլ, դուդուկ, զուռնա), Վարդան Գրիգորեան (դուդուկ, զուռնա), Արման Ճալալեան (պաթերի), Վահագն Հայրապետեան (դաշնակ), Վարդան Առաքելեան (պաս):

Հայկականին ու միջազգայինին յաջող միաձուլումը որուն ապացոյցը եղաւ փառատօնը, իր արտայայտութիւնը գտաւ գրեթէ եօրեայ յայտագիրներուն բոլոր բաժիններով: Այդ իմաստով ամէնէն խորհրդանշականն էր վստահաբար Հոկտեմբեր 21–ի երեկոյթին Խ. Հոստիկեան – Գ. Մուրատեանի «ճամբորդութիւն»ը Երեւանէն Մարսէյլ: Աւանդական ու գերարդիական մեղեդիները, տարաբնոյթ կշռոյթները կ'ընկերակցէին, կը հատէին զիրար, երաժշտական fռլածի մը պատկերը տալով: Ուշագրաւ էր նոյն օրուան յայտագիրը աւարտող միասնական բաժինը, յատկապէս քէմանչայի ու սաքսոֆոնին յանկարծաբանող անցքերով:

Հայկական ճազի եօրեան մասնակիցներով, կազմակերպութեամբ ու արձանագրած արդիւնքով եղաւ յաջող ձեռնարկ մը որուն յաջորդական փուլերուն պիտի սպասէ ոչ միայն հայ երաժշտասէրը:

ՀԱՆԴԻՍԱՏԵՍՆԵՐ

ՁԱՅՆԵՐ ԳԱՒԱՌԷՆ

ՄԱՐՍԷՅԼ

ԵՐԿՈՒ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԹՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ («Յառաջ»). –

Մարսէյլի մշակութասէր հաւաքականութիւնը, ինչպէս ամէն տարի, այս տարի անգամ մը եւս ուրախութեամբ վայելեց Մարսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ կողքին գործող Սահակ – Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնի կողմէ կազմակերպուած եւ Հայ Մշակոյթի Շաբթուան նուիրուած զոյգ հանդիսութիւնները:

Սահակ – Մեսրոպ Մշակոյթի Կեդրոնի տնօրէնութիւնը եւ յանձնախումբը, նախաձեռնողիր՝ մշակոյթի հանդէպ, աւանդութիւն դարձուցած են, Ս. Թարգմանչաց վարդապետներու նուիրուած Հոկտեմբեր ամսուան մէջ եւ Եկեղեցւոյ անուանակոչութեան նախորդող օրերուն կազմակերպել մշակութային ձեռնարկներ, որոնք այս տարի զուգադիպեցան Հոկտեմբեր 19 – 20–ին:

Ձեռնարկներէն առաջինը ՝համերգ մըն էր, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 19, Ուրբաթ իրիկուն Եկեղեցւոյ մէջ, փակ խորանի առջեւ: Երեկոյթի բացման խօսքը արտասանեց Մշակութային յանձնախումբի անունով Պր. Ֆրետերիք Զամանդեան եւ աւելի վերջ Մշակութային Կեդրոնի տնօրէն՝ Պր. Խաչիկ Ելմազեան հակիրճ ձեւով տուաւ օրուան իմաստը, յիշեց Ս. Թարգմանչաց Վարդապետները եւ աւելցուց ըսելով թէ Մշակոյթի Կեդրոնը պարտականութիւն կը համարի ամէն տարի քաջալերել նոր երիտասարդ արուեստագէտ – արուեստագիտուհիներ, անոնց արուեստի փշոտ ճամբուն մէջ խըթան մը հանդիսանալով:

Նախ հանդէս եկաւ սոփրանօ՝ Արմենուհի Սէյրանեան: Ան ծնած է Երեւան եւ աւարտած Կոմիտաս երաժշտանոցը: Այժմ կը դասաւանդէ երգ նոյն երաժշտանոցի մէջ. միաժամանակ մեներգչուհին է՝ «Շարական» երգչախումբի եւ Հայաստանի Պետական Երաժշտանոցին: Յայտագրին առաջին մասը յատկացուած էր հոգեւոր երգերու, որոնց մէջ ունկնդրեցինք՝ Նարեկացիի «Հաւուն հաւուն»ը, Շիրակացիի Օրհներգը եւ «Ո՞ւր ես, Մայր իմ»ը: Ապա մեկնաբանեց Դոլուխանեանի «Ծիծեռնակը», հատուածներ՝ Տիգրանեանի «Անոյշ» եւ Չուխաճեանի «Լեպլեպիճի»էն նաեւ օտար յօրինողներէն Փուչչինի, Պելլինի, Վերտի: Արմենուհի Սէյրանեանին դաշնակով կ'ընկերանար Մարսէյլի Պետական Երաժշտանոցի դաշնակի վաստակաւոր ուսուցչուհի Տիկին Ժիւլիէթ Ելմազեան:

Համերգին երկրորդ մեներգիչն էր թենոր Ռուբէն Էլպաքեան: Ինք եւս Հայաստան ծնած, աշակերտած Գոհար Գասպարեանին եւ աւարտած է Երեւանի Պետական Երաժշտանոցը: 1998–էն ի վեր Փարիզ հաստատուած թաւշային ձայնով մեներգիչը, փոքր տարիքէն իսկ երաժըշտագէտներու ուշադրութիւնը գրաւած եւ դարձած է դափնեկիր միջազգային մըրցոյթներու: Ռուբէն Էլպաքեան իր յայտագիրը սկսաւ «Յորժամ»ով եւ շարունակեց Կոմիտասէն՝ «Զինար ես», «Մոկաց Միրզա»ն, «Մարալ ճան», Քոթոյեանի «Ինչպէ՞ս երազ» եւ Սպենդիարեանի «Այ վարդ»ով: Ապա երգեց օտար յօրինողներէն՝ Կլիւք, Սէն – Սանս, Չայքովսկի, Շթրաուս, Գիւրթիս, Քափուա կըտորներ, դաշնակի ընկերակցութեամբ՝ Կրիկորի Աբրահամեանի: Պր. Աբրահամեան Մոսկուա ծնած եւ ուսած, 1990–ին Փարիզ հաստատուելով հոն շարունակած է Ռախմանինով Երաժշտանոցը եւ այժմ կը մասնակցի համերգներու թէ՛ Ֆրանսայի եւ թէ օտար երկիրներու մէջ իբր նուագակից:

Ներկայ ունկնդիրները, որ այս համերգի առթիւ ամբողջովին լեցուցած էին Ս. Թարգմանչաց Եկեղեցին, յոտնկայս ծափահարութիւններով գնահատեցին մեներգչուհի Սէյրանեան եւ մեներգիչ՝ Էլպաքեանը, որոնք արդէն իսկ գծած են իրենց ասպարէզը, բռնած յաջողութեան ուղին, որու մէջ մենք եւս կը մաղթենք յառաջդիմութիւն եւ նորանոր յաղթանակներ:

*
**

Հոկտեմբեր 20, Շաբաթ երեկոյեան, անգամ մը եւս բերինք մեր ներկայութիւնը Ս. Թարգմանչաց Մայր Եկեղեցիէն ներս, ունկնդրելու՝ երեք դասախօսութիւններ: Ներկայ էր հոգեւորական դասը գլխաւորութեամբ Տարօն Եպիսկ. Ճէրէճեանի եւ լեցուած էր եկեղեցին այնքան, որքան կարելի է դասախօսութեան մը առթիւ...

Դասախօսներն էին բարձաստիճան երեք հոգեւորականներ՝ Մեսրոպ Արք. Գրիգորեան՝ Հայր. Պատուիրակ Կեդր. Եւրոպայի եւ Շուէտի, Գարեգին Արք. Պեքճեան՝ Առաջնորդ Գերմանիոյ Հայոց եւ Նորվան Եպիսկ. Զաքարեան՝ Հայր. Պատուիրակի Փոխանորդ Լիոնի եւ Շրջակայքի:

Բացման եւ բարի գալուստի խօսքը արտասանեց Պ. Խաչիկ Ելմազեան, շընորհակալութիւն յայտնելով ի մասնաւորի ներկայ հիւր դասախօսներուն, որոնք ընդառաջած էին մշակոյթի յանձնախումբի հրաւէրին եւ տուաւ հակիրճ կենսագրականը Մեսրոպ Արք.ի, քանի որ Գարեգին Արք. եւ Նորվան Եպիսկ. արդէն իսկ բաւական ծանօթ դէմքեր են Մարսէյլի հայ համայնքին համար:

Մեսրոպ Արք.ի նիւթն էր «Հայ գրի եւ գրականութեան ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի ձեռամբ»: Ան իրեն տրամադրուած 25 վայրկեաններու ընթացքին շատ ամփոփ ձեւով ներկայացուց Մեսրոպ Մաշտոցը նախ իբր քաղաքական հանրային գործիչ, ապա հոգեւորական եւ ուսուցիչ: Խօսեցաւ հինգերորդ դարու մէջ տարուած աշխատանքներու, աւազ եւ կրտսեր թարգմանիչներու մասին, շեշտելով թէ գիրերու գիւտը ամենամեծ ազդակը եղած է մեր հոգեւոր անկախութեան պահպանման:

Երկրորդ դասախօսն էր Գարեգին Արք. նիւթ ունենալով «Հայ ծէսի ծագումն ու զարգացումը»: Նախ տուաւ «ծէս»ի բացատրութիւնը ըսելով. «ըստ աւանդաբար սահմանուած կարգի համապատասխան ձեւերով, հագուստ եւ առարկաներով, կատարուած արարողութիւններու ամբողջութիւնը՝ խորհուրդներ, բարեպաշտական արարողութիւններ եւ ժամերգութիւնները ծէս կ'անուանենք», ապա խօսեցաւ եկեղեցւոյ եօթը խորհուրդներուն մասին եւ ծանրացաւ Մկրտութեան խորհուրդին վրայ, շեշտելով թէ՝ Մկրտութիւնը իր մէջ կ'առնէ հինգ խորհուրդները: Ներկաներուն բաժնուեցան Գարեգին Արք.ի կողմէ այս նիւթի շուրջ պատրաստուած գրքոյկները:

Երրորդ եւ վերջին դասախօսն էր Նորվան Եպիսկ. ընտրած ըլլալով «Կրօնական անտարբերութիւնը ներկայիս» նիւթը: Ան նախ շեշտեց թէ այսօրուան կրօնական անտարբերութիւնը այս կամ այն տեղի մասնակի երեւոյթներ չեն, այլ ընդհանուր երեւոյթ է որ ծագում առած է 17–րդ դարու վերջաւորութեան, եւ տըւաւ ուրուագիծը տարիներու՝ ընդմէջէն, ինչ–ինչ ազդեցութիւններով այսօրուան դիրքին հասած անտարբերութեան, ընդգծելով հանդերձ թէ մարդիկ ունին յարգանքը եկեղեցւոյ հանդէպ, բայց հեռացած են քրիստոնէութենէ:

Երեք դասախօսութիւններու աւարտին առիթ տրուեցաւ հարց – պատասխաններու, որոնց կարգին հետաքրքրական էին Գրիգոր Լուսաւորչի «Աջ»ին եւ մասունքներուն մասին ուղղուած հարցումները: Միշտ ալ շահեկան են դասախօսութիւնները, որքան որ ալ գոհացուցիչ չըլլան ստացուած պատասխանները:

ԱՆԻ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

(Շար. Ա. էջէն)

անդամակցութիւնը, որպէսզի կրօնամոլ կուսակցութիւնները չզօրանան:

ՖՐԱՆՍԱՅԻ համայնավար կուսակցութեան 31-րդ համագումարը կը բացուէր Հոկտեմբեր 26-ին, Տէֆանս եւ կը տեւէր մինչեւ Կիրակի: Գաղտնիք չէ որ կուսակցութիւնը նահանջի մէջ է եւ շատեր արդէն իսկ չեն վարանիր խոստովանելու որ նախագահական ընտրութեան Շըվէնըմանի ի նպաստ պիտի քուէարկեն: Կառավարութեան մէջ կուսակցութեան մուտքը ծուղակ մը կը նկատեն, որ համայնավար կուսակցութիւնը ընկերվարական կուսակցութեան մասնաճիւղի վերածած է: Այս համագումարին փորձ պիտի կատարուի նոր շունչ մը տալու կուսակցութեան, որու ազգային քարտուղարի աթոռը պիտի գրաւէ Մարի - Ժորժ Պիւֆէ, ներկայիս Երիտասարդութեան եւ Մարզանքի Նախարարուհի եւ Ռոպէր Հիւ պիտի դառնայ նախագահ: Պիտի բաւէ՞ փրկելու համար կուսակցութիւնը:

ՇԱՐՈՆ յօժարեցաւ հետզհետէ քաշել իսրայէլեան ուժերը Այսրյորդանանի պաղեստինեան հողերէն, ուր ներխուժած էին ութ օրէ ի վեր եւ սպաննած 40 Պաղեստինցիներ: Պէյթ Ռիմայի մէջ, իսրայէլեան բանակը գործած է ամէնէն վայրագ ձեւով եւ սարսափ տարածելով: Զինուորները ամէն կողմ կը կրակէին, կը վկայէ երիտասարդ մը:

ՍԷՆ - ԿՈԹԱՐԻ փապուղիին արկածին զոհերու բուն թիւը կարելի չէր եղած ճշդել Հոկտեմբեր 26-ին, հրդեհը մարած ըլլալով հանդերձ, 250 մեթր երկարութեամբ շրջան մը կար որ անմատչելի կը մնար: 11 դիակներ յայտնաբերուած էին, բայց 128 հոգի անհետացած էին, թէեւ այս թիւն ալ չի կրնար ճշգրիտ գաղափար մը տալ, քանի կրնայ պատահիլ որ բոլորն ալ հոն չէին, ընտանիքներն են որոնք կասկածներ ունին այդ մասին:

ՊԱՊԸ ներողութիւն խնդրեց Չինաստանէն, այն սխալներուն համար որոնք գործուած են երկրին աւետարանականացման ատեն: Հոկտեմբեր 24-ին, Յովհաննէս - Պօղոս Բ. այդ ըրաւ համագումարի մը ընթացքին նուիրուած Մաթթէօ Ռինչիի (1552 - 1610) իտալացի յիսուսեանին Չինաստան ժամանման 400-ամեակին առթիւ: Առաջին անգամն է որ Պապը իր խօսքը կ'ուղղէ Չինաստանի: «Խոր զղջում մը կը զգամ անցեալի սխալներուն համար: Կը ցաւիմ որ այդ սխալները այն տպաւորութիւնը ձգած են որ կաթողիկէ Եկեղեցին յարգանքի եւ գնահատանքի թերացում մը ունեցած է չին ժողովուրդին նկատմամբ: Այս արարքը պահանջուած էր Փեքինի կողմէ Վատիկանի եւ Չինաստանի յարաբերութեանց բնականոնացման համար:

Ժ. ՇԻՐԱՔ խօսք առնելով Հոկտեմբեր 25-ին Նիմի մէջ, յայտարարած է թէ Ֆրանսացիին առաջին մտահոգութիւնը ապահովութիւնն է եւ թէ անապահովութեան երեւոյթները անընդունելի սահմանի մը հասած են:

ՍԹՐԱԶՊՈՒՐԿԻ մարդկային իրաւանց Եւրոպական Ատեանին առջեւ, ՕԹԱՆ-ի 17 անդամ եւրոպական պետութիւնները յայտարարած են, որ իւրաքանչիւրը չի կրնար պատասխանատու նկատուիլ սերպական ձայնասփիւռ-հեռատեսիլի կայանին ռմբակոծութեան (1999, Ապրիլ 23) որու հետեւանքով 16 թեքնիսիեններ մեռան Պելկրատի կայանին կեդրոնը: Զոհերուն հինգ ազգականներ եւ մէկ վիրաւոր բողոք ներկայացուցած են Սթրազպուրկի Ատեանին առջեւ գտնելով որ այդ գիտակից յարձակումը բռնաբարած էր մարդկային իրաւանց եւրոպական պայմանագրութիւնը: Յանուն խնդրոյ առարկայ 17 երկիրներուն (Գերմանիա, Պելժիա, Չեխիա, Դանիա, Սպանիա, Ֆրանսա, Յունաստան, Հունգարիա, Իսլանտա, Իտալիա, Լիւքսանպուրկ, Նորվեկիա, Հոլանտա, Լեհաստան, Փորթուկալ, Մեծն - Բրիտանիա, Թուրքիա) անգլիացի ներկայացուցիչը առարկած է բողոքին անընդունելի բնոյթը: Ատեանը պէտք է արտայայտուի մինչեւ տարւոյն վերջ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ վարչապետը՝ Սիմիթիս, Հոկտեմբեր 23-ին, կառավարական ծաւալուն փոփոխութեան մը ձեռնարկած է: Զօրացած Փասոքի (Ընկերվարական Շարժում) համագումարին ունեցած յաջողութենէն (նախագահ վերընտրուած է ձայներու 70%-ով) իր մօտիկ անձերը նշանակած է կարեւոր նախարարութիւններու գլուխը: Եթէ, Փափանտրէու, որ կողմնակից է Թուրքիոյ հետ մերձեցման մը, կը պահէ Արտաքին Նախարարութիւնը, Տնտեսական եւ Ելմտական նախարարութեան գլուխը կ'անցնի Քրիսթօ - Տուլաքիս, համալսարանի դասախօս մը, իսկ նախորդն ալ կը գրաւէ Պաշտպանութեան նախարարութիւնը:

Cathédrale Apostolique Arménienne
SERPOTZ TARKMANTCHATZ
de Marseille

La Commission
Foi et Traditions Arméniennes
dans le cadre des activités
«LOUSSAVORTCHI LESSARANE»
(Atelier «St-Grégoire l'Illuminateur»)
propose
un nouveau cycle de rencontres d'initiation :

Pour Lire et Commenter les Ecritures Saintes

(en français)

avec
le **Rév. Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale

Mercredi 7 novembre à 19 heures
dans la salle «A. Tcherpachian»
339, avenue du Prado, 13008 Marseille

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville, 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 55935

FRANCOPHONIE
ARMENIE 2000

Noël arménien 2002

à bord du **«Napoléon Bonaparte»**
Du 2 au 4 janvier 2002

2 janvier : — Appareillage à 20h de Marseille;
— Dîner avec l'orchestre **«Massis»**;
— Nuitée dansante avec 2 orchestres;
— Nuit en mer.

3 janvier : — Arrivée à Bastia. Petit-déjeuner à bord;
— Excursion en Balagne. Déjeuner typique;
— Visite de cave à vin à Patrimonio;
— Dîner à bord;
— Nuitée avec 2 orchestres;
— Nuit en mer.

4 janvier : — Petit-déjeuner à bord;
— Arrivée à Marseille à 7h30

Tarif: tout compris, 1600 F par personne

Renseignements/réservations :

Maurice Harounian: 04 91 44 47 77;
Jacques Avdoyan: 04 91 76 45 75.
—— Places limitées ——

l'UMAF - Paris

organise
le Samedi 24 novembre

un Grand Dîner Dansant

(animé par l'orchestre Gaidzag's)

AU PROFIT DE SES ACTIONS EN ARMENIE ET AU KARABAGH

dans les salons de l'«Hôtel Méridien»
81, Boulevard Gouvion Saint Cyr — 75017 PARIS

Pour les réservations, téléphonez au siège de l'association :
01 43 68 42 04

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI
et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR
du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le dîner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre M A S S I S»

l'UGAB invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : «Le Val des Neiges»
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :
au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

Հայաստանի Հանրապետութեան Առաջին Տիկին Պելլա ՔՈՉԱՐԵԱՆի
բարձր հովանաւորութեամբ

ԲԱՑԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ

Ի նպաստ Ոսկրածուծի Պատուաստի Հայկական Հիմնադրամի

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՓԻՎԱՔՈՎ (ջութակ)
ԷԼԷՆ ՄԵՐՍԻԷ (դաշնակ)

Յայտագիր՝ Պախ, Պէթհովըն, Ֆրանք

կազմակերպութեամբ՝
Ֆրանսահայ Կապոյտ Խաչի

եւ աջակցութեամբ՝
Ֆրանսահայ Կազմակերպութիւնները Համակարգող Խորհուրդին

ՈՒՐԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, ժամը 20·30-ին

Salle Gaveau — 45, rue La Boëtie, 75008 PARIS

Տոմսերու համար դիմել՝
— Ֆրանսահայ Կապոյտ Խաչ — Հեռ. 01 48 24 46 57
— Կափօ Սրահ — Հեռ. 01 49 53 05 07

ՆԵՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 30
MARDI
30 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL : 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 1·400 Ֆ. — Վեցամսեայ : 725 Ֆ.
Արտասահման : Տար. 1·650 Ֆ. (Անձնական առաքում)
1·500 Ֆ. (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ.
C.C.P. PARIS 15069-82 E

77ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·285
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
77e ANNEE — N° 20·285

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

Ա Ֆ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

ԱՄՆ ՆԵՂ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՏՆՈՒԱԾ

ՄԻՇՏ ՌՈՒՄԲԵՐ,
ՄԻՇՏ ԶՈՀԵՐ
ԵՒ ՈՉ ՄԷԿ ԱՐԴԻՒՆՔ

ՓԱՔԻՍՏԱՆԻ ՄԷՋ 18 ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ ՋԱՐԴՈՒԱԾ

Օրերը կ'անցնին եւ ոչինչ կը փոխուի: Զորրորդ շաբաթն է, որ ռումբեր կը տեղան Աֆղանիստանի վրայ եւ ոչ մէկ արդիւնք կայ, բացի նոր զոհեր պատճառելէ բնակչութեան մէջ: Ամերիկացիք, զոհ չտալու եւ խուսափելու համար հակօդային պաշտպանութենէն, կը ռմբակոծեն 5000 մեթր բարձրութենէն եւ չեն կրնար ճշդել թիրախները: Այդ իսկ պատճառաւ, Հոկտեմբեր 26-ին, Կարմիր Խաչի երկու պահեստանոցներ քարուքանդ եղան, նոյն օրը, ռումբեր ինկած են գիւղի մը վրայ, որու մօտ զինուորական ոչ մէկ հաստատութիւն կար եւ մեռած են տասը հոգի, որոնց ութը մանուկներ: Կան նաեւ բազմաթիւ վիրաւորներ: Այս «ձախող» ռմբակոծութիւնները, սկսած են վրդովել շատեր, նաեւ ոչ մահմետական երկիրներ եւ կը ծառայեն նաեւ ամրապնդելու Թալիպաններու բարոյական կորովը: Տասը հազար Փաքիստանցիներ կը խուժեն արդէն դէպի Աֆղանիստան, միանալու Թալիպաններուն եւ կռուելու համար անոնց կողքին:

***

Ապտիւլ Հաք, խորհրդային ուժերու դէմ պատերազմի աֆղան հերոսը, որ Թալիպաններու ձեռքն անցած էր Հոկտ. 26-ին, նոյն օրը գնդակահարուած էր: Այս ալ ծանր հարուած մըն էր Ամերիկացիներուն համար, որոնց տեսակ մը բանակցող էր հրամանատար Հաք: Թալիպանները թոյլ տուած էին որ զինուորականին մերձաւոր խումբ մը գայ առնէ դիակը եւ թաղէ: Ֆիկառօ, Հոկտ. 29-ին կը հրատարակէր Հաքի տուած վերջին հարցազրոյցը, ուրան կ'ըսէ թէ Ամերիկացիք զիրենք չեն լսած. «տեղեկացուցած էինք, կ'ըսէ, որ ռմբակոծութիւններ լուծում չեն եւ կրնան, ընդհակառակն, բնակչութեան ամբողջ մէկ չափաւոր մասը Թալիպաններու կողմը անցընել»: Ցամաքային միջամտութիւն մը ալ աւելի անձնելի կը նկատէ: Այն հարցումին թէ, ուրեմն ո՞րն է լուծումը, Հաք պատասխանած է. – «Ձգել որ ներսէն գործենք, վարչակարգին տապալումը յառաջացնելու համար: Քանի մը ամիսէն կրնայինք յաջողիլ, առանց Ամերիկացիներու զինուորական միջամտութեան»:

***

Աֆղան ընդդիմութեան ներկայացուցիչներու ժողովը, որ տեղի պիտի ունենար Թուրքիա չորեքշաբթի, պատրաստելու համար յետ – Թալիպան կառավարութեան մը կազմութիւնը, յետաձգուեցաւ ցնոր տնօրինութիւն: Այս հաւաքոյթը մկրտուած էր «120-ներու ժողով»:

***

Քարաչիի մէջ (Փաքիստան) հակամերիկեան ծաւալուն ցոյց մը տեղի ունեցած է, Հոկտեմբեր 26-ին, 50 հազար հոգիի մասնակցութեամբ: Ցուցարարները ամերիկեան դրօշակներ այրած են, ուրիշ ծաւալուն ցոյց մըն ալ տեղի ունեցած է Իսլամապատ, 20 հազար հոգի ալ ցոյց մը ըրած են Քուէթա:

***

Կիրակի, Հոկտեմբեր 28-ին Պահաւալփիւրի (Փաքիստանի արեւելեան շրջան) Սէն – Տոմինիք Եկեղեցւոյ մէջ, 18 քրիստոնեաներ (բողոքական) ջարդուած են արարողութեան աւարտին զինեալ խումբի մը կողմէ: Պապը խստօրէն դատապարտած է «անհանդուրժողութեան այս նոր ողբերգական արարքը»: Քրիստոնեաները, որոնք փաքիստանցի փոքրամասնութիւն մը կը կազմեն, կը բողոքեն որ որեւէ պաշտպանութիւն չեն վայելեր եւ այս ջարդին առթիւ ալ, ոստիկանութիւնը շատ ուշ հասած է եւ յանցագործները կրցած են խոյս տալ:

***

Էֆ. Պի. Այ.-ի քննութիւնները այն եզրակացութեան հասած են որ ածխախտի հարցը ներքին բնոյթ ունի, այսինքն ամերիկացի ծայրայեղականներու գործն է:

Հոկտեմբեր 28-ին, նոր պարագայ մը յայտնաբերուած էր Նիւ - Ճըրզի:

***

Հնդկաստանի մէջ, բուռն ցոյցեր տեղի ունեցած են ամերիկեան ռմբակոծութիւններուն դէմ: Ոստիկանութիւնը միջամտած է, 7 մեռեալ կայ:

***

Մեծն–Բրիտանիոյ Արտաքին նախարարը՝ Ճէք Սթրօ հերքած է որ Իրաքի վրայ յարձակման որեւէ ծրագիր ըլլայ: Այս յայտարարութեամբ, կը պատասխանէր Իրաքի վարչապետին՝ Թարէք Ազիզի որ Սընտէյ Թէլէկրաֆի ըսած էր որ ԱՄՆ եւ Անգլիա կը նախատեսեն հազար հրթիռ արձակել 300 թիրախներու վրայ, տապալելու համար Սատտամ Հիւսէյնը: ԱՄՆ–ու Պաշտպանութեան նախարարն ալ, ոչ հերքած, ոչ ալ հաստատած է, բայց չեշտած որ «Իրաք, անառարկելի կերպով, Պետութիւն մըն է որ ահաբեկչական արարքներ գործած է»:

***

Մոլլա Օմար, Թալիպաններու պետը, խիստ ազդարարութիւն մը ըրած է Միացեալ–Նահանգներուն, ալժերական Էլ Խուպ օրաթերթին մէջ, ուր կ'ըսէ թէ «բուն պատերազմը դեռ չէ սկսած»: «Վարձկան» որակելով նախկին թագաւորը՝ Զահէր Շահը եւ Հիւսիսի Զինակցութիւնը, կ'աւելցնէ թէ բացարձակապէս կը մերժէ որ Ուաշինկթըն եւ արեւմըտեան այլ երկիրներ իր ժողովուրդին պարտադրեն անձեր որոնք զէնքը լքած են անցեալին:

***

Մանհաթանի մէջ, յիշատակի արարողութիւն մը տեղի ունեցաւ Կիրակի, Հոկտեմբեր 28-ին, Սեպտեմբեր 11-ի ահաբեկչական արարքին վայրին վրայ իսկ:

Արարողութիւնը տեւած է ժամ մը համախմբած զոհերուն շուրջ 3000 ընտանեկան պարագաները, նաեւ քաղաքական դէմքեր եւ Նիւ - Եորքի քաղաքապետը:

***

Մարսէյլի մէջ, հրէական դպրոց մը կրակի տրուած է Հոկտ. 27-էն 28-ի գիշերը, հակահրեայ լոզունգներու արձանագրութիւններով: Նաեւ «Պէն Լատէն պիտի յաղթէ» եւ «Մա'հ Հրեաներուն» գրուած են պատերուն վրայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊՈՆԻՖԱՃԻՈՅԻ ՄԷՋ (Գորսիքա) Հոկտեմբեր 26-ին սպաննուած է Սանթոնիի խմբակին մէկ ուրիշ անդամը՝ Նիքոլա Կրօ, 32 տարեկան: Այս նոր ոճիրը կը պատահէր Ներքին նախարար՝ Տանիէլ Վայանի ժամանումէն քիչ առաջ: Ան, ջանք չէր խնայեր որպէսզի Մաթինեոնի գործընթացը վերսկսի եւ այդ ուղղութեամբ որոշեց Պորկոյի (Բարձրագոյն Գորսիքա) բանտին մէջ կեդրոն մը ստեղծել համախմբելու համար արգելափակուած ազգայնական Գորսիքացիները, որոնք ցրուած են, գլխաւորաբար Ֆրանսա: Այս մասին դիմած է Արդարութեան նախարարուհի՝ Մարիլիզ Լըպրանշիւի, որպէսզի ուսումնասիրէ կարելիութիւնները: Այս որոշումը բաւական աղմուկ հանած է ընդդիմութեան մօտ, որ անընդունելի կը գտնէ նման անձնատուութիւն մը: Ցանուն Էռ - Փէ - Էռ-ի, բանբերը՝ Փաթրիք Տէվէճեան յայտարարեց. անձնատուութիւն մըն է, որովհետեւ, ազգայնականներու մէկ նոր պահանջն է, որու կառավարութիւնը գոհացում կու տայ: Ի մօտոյ, աւելցուց, անկախութեան մասին պիտի խօսուի գործընթացը պահպանելու համար: Շըվէնըմանի «Քաղաքացիներու Շարժումը» նոյնքան խիստ է եւ կառավարութեան դիրքը անվայել կը գտնէ: Մնաց որ, հակառակ այս զիջումին, անկախապաշտներու պարագլուխը՝ Ժան - Կի Թալամոնի մերժեց մասնակցիլ խօսակցութիւններուն:

ՖՐԱՆՍԱՅԻ Համայնավար կուսակցութիւնը այլեւս երկու գլուխ ունի, քանի, ինչպէս կը նախատեսուէր, ազգային քարտուղարի աթոռը գրաւեց Մարի – Ժորժ Պիւֆէ եւ Ռոպէր Հիւ դարձաւ նախագահ: Այս ձեւով կուսակցութիւնը յոյս ունի որոշ ժողովրդականութիւն գրաւելու և վերականգնելու իր կորսնցուցած դիրքը: Երիտասարդութեան նախարարուհին, 52 տարեկան, ծագումով լեհ (Քողելէք) առաջին կինն է որ նման աթոռ մը կը գրաւէ: Այն չարքայինները, որոնք մեծ համակրութիւն մը չունին իրեն հանդէպ, կ'ըսեն թէ «ափարաչիք» մըն է, զուտ ստալինական, որ ատենին պաշտպանեց Խորհրդային Միութեան «ընդհանուր ձեւով դրական հաշուեկշիռը», կողմնակից էր Աֆղանիստանի յարձակման, բայց, այսօր միտք չունի պաշտպանելու ծայրայեղ հոտանքը եւ կ'ուզէ մեծ կուսակցութեան մը վերածել Համայնավար կուսակցութիւնը:

ՇԱՐՈՆ իր ուժերը քաշեց Բեթղեհէմէն, բայց կը ձգէ միւս հինգ քաղաքներուն մէջ: Կիրակի, Հոկտեմբեր 28-ին, Թէլ - Ավիվի հիւսիսը, Հատէրայի մէջ, երկու Պաղեստինցիներ կրակ բացած են հանրակառքի կայանի մը վրայ, սպաննելով 4 Իսրայէլացիներ, քիչ ետք իրենք ալ սպաննուած են:

ՊԵԼՃԻՈՅ Ծերակոյտը քուէարկեց օրինագիծ մը որ կը ջնջէ հեշտամահութեան պատիժը: Օրէնքը կը նախատեսէ որ բժիշկ մը պիտի չհետապնդուի, եթէ անբուժելի հիւանդի մը կեանքին վերջ տայ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՀՈԿՏ. 27-Ի Բ. ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԸ

Հոկտեմբեր 27-ի ոճիրին Բ. տարելիցին նախօրեակին, Հոկտ. 26, Ուրբաթ օր, յնդդիմութեան երեք կուսակցութիւնները՝ Հանրապետութիւն, Ազգային միաբանութիւն եւ Ժողովրդական, հանրահաւաք մը ունեցած են Մատենադարանին առջեւ ուր ներկայ եղած է շուրջ 20 հազար հոգի: Ելոյթ ունեցողները չեշտած են Ռ. Քոչարեանի պաշտօնանկութեան անհրաժեշտութիւնը եւ Հոկտեմբեր 27-ի ոճրագործներուն տակաւին պատժուած չըլլալուն պարագան: Այս վերջին կէտը յաճախ կապուած է յանցաւորներուն իշխանութենէն զօրակցութիւն գտնելու պնդումին: Ժողովրդական կուսակցութեան կողմէ խօսք առած է Ս. Դեմիրճեան, Հանրապետութեան՝ Ա. Սարգսեան, Ազգային միաբանութենէն՝ Ա. Գեղամեան:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 26 / 29)

ՄԱՐՍԷՅԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Եռօրեայ այցով Հոկտեմբեր 25 – 28 Երեւան կը գտնուէր Մարսէյլի քաղաքապետ Ժ. – Գ. Կոտէնի գլխաւորած պատուիրակութիւնը: Ան Երեւանի քաղաքապետ Ռ. Նազարեանի հետ ստորագրած է երկարատեւ գործակցութեան համաձայնագիր մը: Ժ. - Գ. Կոտէն ըսած է թէ այսօր Մարսէյլի մէջ 80 հազար հայ կ'ապրի, թէ Ֆրանսա կ'ուզէ օգնել երկրին մէջ ժողովրդավարութիւնը զարգացնելու Հայաստանի նախագահին ջանքերուն: Ան երկու հանրակառք նուիրած է Երեւանին: Հոկտեմբեր 26-ին Մարսէյլի քաղաքապետը եւ ընկերացող պատուիրակութիւնը հանդիպում ունեցած են բժշկական համալսարանի ուսանողութեան հետ: Ան նոյն համալսարանին ալ նուիրած է երկու հանրակառք որոնք կը գործածուին որպէս շրջիկ բուժարան:

Ժ. Գ. Կոտէն ընդունուած է կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ նախագահ Ռ. Քոչարեանի կողմէ:

***

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԿԱՔԱՐՏԸ՝ «Ա Ր Ք Ա»

Հայաստանի մէջ ներքին դրամատնային գործածութեան դրուած է «Արմենիան քարտ» վարկաքարտը որմէ պատրաստուած է հազար հատ: Կը գործեն կանխիկ դրամ տրամադրող 20-է աւելի կէտեր եւ քարտը ընդունելի է շարք մը խանութներէ, ճաշարաններէ: Ներկայիս գործածութեան շրջանակը միայն Երեւանն է, բայց ծրագրուած է ներառնել ամբողջ Հայաստանը եւ Արցախը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ

«ԴՈՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՑ ՑԵՂԻՍ ՕՐՐԱՆ, ԴՈՒ ԵՒ ԲՆԻԿ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ»

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈՂՈՑԻ ՄԱՐԴՈՒՆ ՀԵՏ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԱՌՕՐԵԱՅ ԿԵԱՆՔԷՆ

Դժուար է անշուշտ տասը օրուան մէջ յստակ պատկերացնել երկիր մը, եթէ նոյնիսկ ան մեր Մայր Հայրենիքն է. բայց պիտի ջանամ զննող եւ անաչառ աչքերով տեսնել անոր սեւն ու ճերմակը: Հայերէն սահուն խօսողին համար դիւրին, «հեշտ» է Հայաստանցիին հետ հաղորդակցիլը: Ան, հակառակ վերջին տարիներու դժուարութիւններուն եւ յուսախաբութիւններուն, պահած է ընդհանրապէս իր սրամտութիւնը: Եթէ դուն չմօտենաս անոր ան լսելով արեւմտահայերէնդ, քեզի կը մօտենայ: Բազմամարդ են Երեւանի փողոցները, մանաւա՛նդ կեդրոնական մասին մէջ ուր միշտ շարժում կայ: Բացօթեայ սրճարանները շատ են. անոնց արեւանոցներուն վրայ կան անպայման Կոկա – Կոլայի եւ Մարլպորոյի գովազդները: Կը նստինք մէկ – մէկ գարեջուր խմելու: Հայաստան կ'արտադրէ Կոտայք եւ Կիլիկիա մակնիշի գարեջուր, որոնք որակով շատ ալ հեռու չեն Ֆրանսականներէն: Կը սպասարկեն երիտասարդ աղջիկներ... Նոյնքան անփութութեամբ որքան խորհրդային ժամանակաշրջանին. երկու անգամ պէտք կ'ըլլայ կանչել մինչեւ որ գարեջուրը գայ: Ամէնուրեք բացուած են խանութներ մեծ ու փոքր, կրպակներ: Ոմանք արդիական ճակատներով, ցուցափեղկերով, բազմատեսակ արտասահմանեան ապրանքներով. որո՞ւ համար, քանի որ ժողովուրդին մեծամասնութեան մօտ դրամ չկայ: Ամէն քայլափոխի, ալ կան անհամար լումայափոխներ որոնք գրեթէ նոյն սակով կը փոխեն տոլար, մառք կամ ֆրանք: Տո՛ւր տարադրամդ, ա՛ռ հայկական դրամը եւ գնա. ո՛չ թուղթ ոչ ձեւակերպութիւն: Աչք կը ծակեն ճաշարանները որոնք չեն վարանիր 8·000–10·000 դրամի ճաշացքներ ծանուցանելու, երբ աշխատավարձերը 20·000–էն 40·000 դրամ են ամսական: Նաեւ կան բազմաթիւ խաղարաններ, մեծատառ փոքէր գրութիւններով: Ի՞նչպէս եւ մինչեւ ե՞րբ Հայաստանցին պիտի կարենայ հանդուրժել այդ շլացնող պերճանքին: Մօտ երկու հարիւր տարի առաջ Խաչատուր Աբովեան «Վէրք Հայաստանի» խորագրեց իր հռչակաւոր վէպը: Այսօրուան Հայաստանի բազմաթիւ վէրքերէն են ալքոլն ու ծխախոտը: Ալքոլը ամէնէն աժան բանն է. օղիին շիշը կ'արժէ միայն 1·000 դրամ: Լաւագոյն միջո՞ց առօրեայ հոգերը մոռնալու: Իսկ գլանիկը, սիկառէթը, ամէնուն ձեռքն է, առտուընէ մինչեւ իրիկուն. փողոցը կը ծխեն նոյնիսկ 10–12 տարեկան լակոտները, առանց քաշուելու: Կիներ ու աղջիկներ, քիչ թիւով: Հանրապետութեան հրապարակն ենք Սեպտեմբեր 21–ի իրիկունը: Բազմահազար ժողովուրդը սպասելով հրավառութեան, կ'երգէ ու կը պարէ: Մեզմէ քանի մը մեթր հեռու, հինգ առոյգ պատանիներ 15 – 18 տարեկան, կը պարեն մէկ-մէկ գլանիկ ձեռքերնին: Կը մօտենամ, կը մաղթեմ իրենց միշտ այդպէս ուրախ – զուարթ մնալ ու պարել: Ու կ'աւելցնեմ – միայն մէկ բանի չեմ հաւնիր տղաք, այդ ծուխին մի՛ վարժուիք: Հինգը մէկէն գետին կը նետեն գլանիկները, եւ ներբաններով կը ճզմեն: Մեծին հանդէպ տակաւին յարգանք կայ Հայաստանի մէջ, դրական է, շատ դրական: Անոնք թերեւս յաջորդ առաւօտ, կամ նոյնիսկ ժամ մը յետոյ, կրկին հատ մը վառեցին, բայց այդ վայրկեանին մեծին խօսքը մտիկ ըրին: Կը մտաբերեմ թէ եթէ այդ դիտողութիւնը հոս ըրած ըլլայի, ի՞նչ պատասխանի, ի՞նչ լուտանքի արժանացած կ'ըլլայի. տխմա՛ր ծերուկ, թերեւս, դուն գործդ գրաղէ...: Ուրիշ օր մը, մինիպիւսէն կ'իջնենք. շուրջ 45 – 50–նոց տղամարդ մը լսած ըլլալով մեր այր ու կնոջ արեւմտահայերէնը, մեզ խօսքի կը բռնէ, ինք գլանիկ մը կը վառէ մեզի ալ հրամցնելով: Ծխող չենք. – Ո՞նց գտաք Հայաստանը, վատը չի՞, կը հարցնէ: Կը գանգատի ցած աշխատավարձերէն, անգործութենէն: Կը պատասխանեմ թէ ամէն երկիր իր դժուարութիւնները ունի. եւ կ'աւարկեմ. սիկարէթի մէկ տուփը կ'արժէ 250 – 400 դրամ, ամսական կ'ընէ 8 – 10·000. ի՞նչպէս կ'ընեն մարդիկ, զաւակնին հացէ՞ կը զրկեն ծուխին տալու համար նման գումարներ: Պատասխանը միանշանակ նոյնն է ինչ որ 30 տարի առաջ – մի կերպ եօլա գնում ենք: (Այն ատեն կը գանգատէին 100 ռուբլինոց ամսականին համար):

Իմ կարգին, կը տարուիմ մարդոց, ծանօթ թէ անծանօթ, մի քանի հարցումներ ուղղելու: Նախ քաղաքական վիճակին եւ աւագանիին մասին: Բազմաթիւ կուսակցութիւններու եւ խմբակցութիւններու մասին: Հայաստանցին իր ջախջախիչ մեծամասնութեամբ ո՛չ համակրութիւն, ոչ ալ վստահութիւն ունի անոնց հանդէպ: Մէկը կու տայ հետեւեալ, շատ դիպուկ պատասխանը. «Սրանց կռիւը աթոռակռիւ չէ, գրպանակռիւ է»: Միտքս կուգայ տարիներէ ի վեր Ֆրանսական դատարանները զբաղեցնող դատերը, որոնց մէջ ամէն հոսանքէ քաղաքական մարդիկ մխրճուած են աստիճանին վարէն վեր... ո՞ր երկիրը այնպէս չէ: Պանդոկին առջեւի թաքսիներու վարորդներուն կը հարցնեմ թէ նախկին նախագա՞հն էր լաւը, թէ ներկայինը: Մէկը կը պատասխանէ հիւմուրով. «Ա՛խ Աստուածդ սիրես, սրանց անունը մի՛ տուր, գլխիդ փորձանք չգայ»...: Իսկ Հոկտեմբեր 27–ի դէպքին եւ խեղկատակ դատավարութեան մասին պատասխանները նոյնն են: – Բոլորը գիտեն պատուիրատուին, կամ, «ձուկը գլխից հոտած է»: Առաջին հայեացքով, Հայաստան ժողովրդավար երկիր ըլլալ կը թուի: Մեր քիչ ազատ ժամերուն կը բանանք հեռատեսիլը. իրիկուն մը մէկ ալիքը կը հեռասփռէ Ազգային Ժողովի օրուան նիստը: Երեսփոխանները (հայաստանեան լեզուով՝ պատգամաւոր) կը հարցաքննեն, ոմանք նոյնիսկ խստօրէն կը քննադատեն իշխանութիւնները: Բայց ի տարբերութիւն արեւմտեան խորհրդարաններուն, ոչ մէկ նախարար կը պատասխանէ իրենց...: Հայաստանեան մամուլն ալ ազատ կը թուի իր արտայայտութիւններուն մէջ: Կը գնեմ մի քանի անուններ: Օրաթերթին գինն է 100 դրամ, ծաւալը 8 – 16 էջ: Տպաքանակները 3–էն 5000. քիչ է, շատ քիչ մէկ միլիոննոց մայրաքաղաքի մը համար: Ապրուստի սղութի՞ւնը թէ հանրային մասին անտարբերութիւնն է պատճառը: Հեղինակաւոր ու խայթող խմբագրականները չեն պակսիր անոնց մէջ, ինչպէս «Առաւօտ» Սեպտեմբեր 29 թիւին մէջ: Աբեղեանական խեղագրութիւնը մէկդի, գրելաձեւը դիւրըմբռնելի չէ մեզի համար, լի ռուսերէնի բովէն անցած ացիաներով եւ իցիաներով: Որքա՛ն սահուն կը կարդանք հոգ չէ թէ վատ ծաւալով մեր սփիւռքահայ մամուլը...:

Բաղդատած Արեւմտեան Եւրոպայի քաղաքներուն, քիչ է Երեւանի փողոցներուն մէջ մուրացիկներու թիւը: Անոնք գլխաւորաբար հաշմանդամներ, կամ տարեց մարդիկ են. Հայուն արժանապատուութիւնը միշտ բարձր եղած է. որքա՛ն դժուար բան որ ստիպուած են ուրիշին ձեռք երկարելու: Տրուած մի քանի դրամը կ'արժանանայ հազար ու մէկ օրհնանքի, ի խորոց սրտի:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՅՑԵՐ ԵՒ ՀՈԳԵՑՈՅՑ ՇԱՏ ՊԱՀԵՐ

Ուրբաթ, Սեպտեմբեր 21, մեր կեցութեան առաջին օրն է: Յայտագրի վրայ ծանուցուած՝ Հանրապետութեան հրապարակի վրայի տողանցքը ջնջուած է, մեզի անծանօթ մնացած պատճառներով: Անոր տեղ պիտի բարձրանանք Ծիծեռնակաբերդ: Շատ լաւ է այսպէս. մեր առաջին ժեստը պիտի ըլլայ մեր մէկ ու կէս միլիոն նահատակները յարգել: Երբ կը հասնինք հոն, հարթավայրին վրայ շարուած են տասնեակներով կարմիր վարդէ ու մեխակէ շինուած ծաղկեպսակներ: Անոնք նուիրուած են քրիստոնեայ բոլոր Եկեղեցիներու պետերուն կողմէ, ներառեալ Պապը: Ժապաւէններուն վրայ կայ հայերէն ու անգլերէն. «1915–ի ցեղասպանութեան զոհերուն» արձանագրութիւնը: Ոստիկանութիւնը տօնական ճերմակ զգեստով կը հսկէ կարգապահութեան: Ներկայ հասարակութիւնը բաղկացած է ամբողջութեամբ սփիւռքահայերէ, աւստրալահայ, գանատահայ, արժանթինահայ եւ ֆրանսահայ, բոլորն ալ ճանաչելի իրենց կուրծքերուն վրայի պաճերէն: Յոգնա՞ծ է Երեւանցին հոն բարձրանալէ, թէ ոչ անտեղեակ է այսօրուան «միջոցառումին»: Քիչ յետոյ կը ժամանէ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, շրջապատուած 1700–ամեակի առթիւ Հայաստան եկած Ուղղափառ Եկեղեցիներու պատրիարքներէն՝ Յոյն, Ռուս, Ռումէն, Ասորի, Հնդիկ: Կը հետեւի վեղարներու անտառ մը, սրածայր՝ Հայերու համար, բոլորակ՝ ուղղափառներունը: Ռուս եւ յոյն քահանաները փակեղով են, հայ քահանաները գլխաբաց: Հայկական գեղեցիկ փակեղը կը գոյատեւէ... հոն, Միջին – Արեւելքի մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանիին տակ: Ցաւօք, ո՛չ Հայաստանի մէջ: Կը զետեղուին ծաղկեպսակները անշէջ կրակին շուրջ, մենք ալ մէկ – մէկ մեխակ կը դնենք: Կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն նախ՝ հայերէն ծէսով, ապա բաւական երկար յունարէն, ուղղափառ կղերին կողմէ: Միասնաբար երգուած Տէրունական աղօթքէն ետք Գարեգին Բ.ի «Պահպանիչ»ով կը փակուի արարողութիւնը: Ցնցատակելի առաւօտ, քանի անմիջապէս յետոյ կ'այցելենք հինգ տարի առաջ հոն բացուած ցեղասպանութեան թանգարանը: Ճաշակով շինուած կառոյց, շատ օգտակար մանաւա՛նդ հոն այցելող օտարին համար, իր ճոխ փաստագրութեամբ:

Կէսօրէ վերջ կը կատարենք աւելի յուզիչ այլ այցելութիւն մը, Եռաբլուր: Երեւանէն Էջմիածին տանող մայրուղիին աջ կողմը գտնուող խոպան այդ բլուրը դարձաւ արցախեան պատերազմի երեւանցի զոհերուն գերեզմանատունը: Մուտքի կամարէն սկսեալ, վայրը կը գտնուի հայկական բանակի զինուորական ոստիկանութեան հսկողութեան ներքեւ: Ամառնային «շոգը», այլ մանաւանդ այս տարուան երաշտը, խանձած են ամէն ինչ. բայց հոն կը տիրէ կատարեալ կարգ–կանոն ու մաքրութիւն, ջրուած է ամէն կողմ: Գերեզման յուշահամալիրի մուտքին, մեզի կ'ընդունի զօր. Աստուածատուր Պետրոսեան, շրջապատուած ըսպաներով ու ենթասպաներով, եւ բարի գալուստի խօսքերէ յետոյ, մեր այցելութիւնը կը յանձնէ անոնց: Այդ «տղերքը» արցախեան մարտերու վեթերաններն են. իրենց մորթին վրայ կրած են կրակն ու ցաւը, ընկերներու, եւ մանաւանդ բոլորին պաշտելի Սպարապետին՝ Վազգէն Սարգսեանի կորուստը ամէն օր կ'արիւնէ, եւ իրենց կեանքին մինչեւ վերջը պիտի արիւնէ իրենց սրտերը, ինչպէս որ կ'ըսէ անոնցմէ մին: Մէկ ուրիշը մեզի ուղեկցելով մաքուր ծառուղիներուն մէջ կ'աւելցնէ. «Մենք մահապարտներ ենք, ուխտել ենք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը պաշտպանել հայրենի սուրբ հողը. Արցախը մաքրել ենք չներից. էլ էդտեղ ոտք չեն կոխի»...: Գերզգայուն է Հայաստանցին Ղարաբաղեան հարցին նկատմամբ. Եռաբլուր այցելելով՝ մարդ շատ շուտ կը հասկնայ որ ան՝ մանաւա՛նդ զինուորականը մէկ թիզ իսկ հող զիջելու պատրաստ չէ, ա՛յսքան թանկ ազատագրուած հող...: Կը պըտտինք, կը նայինք ամէն մէկ տապանաքարի արձանագրութեան. 18–էն 30 տարեկան կորիւններ են, քիչերը աւելի մեծ: Կոկորդս կը սեղմուի. չէ՞ որ ես ալ հայր եմ, անոնց տարիքը զաւակներու հայր: Կը մտաբերեմ Գարեգին Եպիսկ. Յովսէփեանի (ապա Կիլիկիոյ կաթողիկոս, Սարդարապատի յաղթանակի ոգին) խօսքը.– «Տէ՛ր Աստուած, ի՞նչքան նահատակներ ենք տուել»: Ի՞նչ իմանար վեհափառը որ դեռ հազարաւոր նահատակներ ալ իրենց ծաղիկ կեանքը պիտի զոհէին ի՛ր սիրելի Արցախ ծննդավայրը ազատագրելու համար: Կեդրոնական ծառուղիին վրայ վերջերս կանգնած է կոթող մը, նուիրուած՝ Անծանօթ Զինուորին, հետեւեալ մակագրութեամբ «Անունդ անյայտ, սխրանքդ անմահ»: Արցախն ալ ունեցաւ իր անյայտացածները, կորսուածները, առեւանգուածները, տասնեակներով: Քիչ յետոյ Սօսէ Մայրիկն է, անդին Մոնթէ Մելքոնեանը: Վերը, գագաթը զոյգ մեծադիր դամբարաններ: Ձախին՝ Սպարապետ Հայոց, Վազգէն Սարգսեանինը: Ան որ ստեղծեց ազգային բանակը, եւ յաղթանակի տարաւ զայն: Աջին, զօրավար Հայոց՝ Անդրանիկինը: Եօթանասունամեայ պանդխտութենէ յետոյ, Հայոց Արծիւը իր յաւիտենական հանգիստը պիտի կարենար առնել միայն հայ քաջերով շրջապատուած: Մեր մեկնումէն առաջ հոգեհանգստեան սուրբ արարողութիւն կը կատարուի Սուրբ Վարդան մատրան մէջ, օծուած 1998–ին, երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի կողմէ: Կը վառուին մոմերը, խունկը կը միայ սիրտերուն հետ, շատերու աչքերուն արցունքի կաթիլներ կը գահավիժին. «Գթա՛, Տէր ի հոգիս մեր ննջեցելոց»: Իսկ իմ աղօթքս է՝ «Տէր Աստուած, ա՛լ այստեղ մարդ չթաղուի, բաւ են մեր կորուստները»:

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍԵԱՆ

(Շար. 3)

ԼՈՒՍԱՆՑՔԻ ՎՐԱՅ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՇՈՒՐՋՊԱՐ

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Երբ ուրիշ ժողովուրդներու մասին կը խօսին, Ամերիկացիները շատ կը սիրեն գործածել «nationalist» բառը, անշուշտ՝ «հիւանդութեան», «ախտ»ի մը ակնարկութեամբ. Օրինակ, Ֆրանսացիները «նասիոնալիսթ» մարդիկ են, որովհետեւ չեն սիրեր այն օտարականները, որոնք Ֆրանսերէն չեն խօսիր, կամ անգլերէնի ներխուժումէն կը խորշին: Բայց երբեք չեմ իմացած, որ ուրիշ լեզու սորվիլ մերժող Անգլիացիները (բնակչութեան 66 առ հարիւրը, ըստ 2000–ին կատարուած լուրջ հարցախոյզի մը) նոյն բառով կոչուին: Իսկ մինչեւ այսօր ըսպաներէնը աղքատի լեզու համարող Ամերիկացիները – քանի որ Միացեալ – Նահանգներու gasterbeiter–ները լատինամերիկեան ծագում ունին, ինչպէս Գերմանիոյ մէջ՝ Թրքական կամ քրտական–, հարկաւ, իրենք զիրենք «նասիոնալիսթ» չեն նկատեր: Արդէն գիտէք, որ իրենց համար «Ամերիկա» եւ «Միացեալ – Նահանգներ» հոմանիշ են (այս կեղծ հոմանիշը հայերէնին ալ անցած է). Գանատան մասն է այդ «Ամերիկա»յին – պէյզպոլի կամ պասքէթպոլի ամերիկեան մրցաշարքերուն գանատական խումբերն ալ կը խաղան, Գանատայի ու Միացեալ – Նահանգներու հեռաձայնի միջազգային կարգանիշը նոյն թիւ 1–ն է եւ այլն–, իսկ ամերիկեան – մեքսիքական սահմանէն դէպի հարաւ՝ մինչեւ Հրոյ Երկիր, ուրիշ բան է, որ ըստ երեւոյթին «Ամերիկա» չէ:

Սակայն, գոյութիւն ունի ամերիկեան ազգայնականութեան ամբողջ վիճակ մը, զոր «հայրենասիրութիւն» երեւութապէս անմեղ բառով ալ կրնան ծածկել: Երբեմն այդ համակարգը լման տեսնելու համար պէտք է դուրսէն նայիլ ու ներսը ըլլալ: Իսկ եթէ բախտաւոր էք ներսը ըլլալու այս օրերուն՝ Սեպտեմբեր 11–ի ահաբեկչական դէպքերու վաղորդայնին, ուրեմն կարելիութիւնը ունիք այլ ձեւով դիտելու բաներ, որոնք մինչեւ հիմա մակերեսի վրայ թեթեւօրէն կը լողային:

Ամերիկեան դրօշասիրութիւնը, օրինակ, աչք ծակող բան մըն է: Բայց այս օրերուն արդէն կուրացնող երեւոյթ դարձած է՝ հայրենասիրական երգերու եւ նշանախօսքերու կրկնութեան կողքին: Հանրախանութներու մէկ ընկերութիւն միայն Սեպտեմբեր 11 – 18–ին 450·000 դրօշակ ծախած է, երբ 2000ի նոյն շաբթուան ընդամէնը 26·000 ծախած էր: Դատապարտելի ոչինչ կայ... երբ իրենք կ'ընեն: Բայց երբ, ըսենք, Ղարաբաղի միացումը կը պահանջուի, ահա «Armenian nationalist»ները իրենց ողջ հասակով ամբողջ մամուլի տարածքին կը փռուին:

Թերեւս ընթերցողին յայտնի է, որ ամերիկեան (նաեւ անգլիական) իրաւակարգին համար երկրին մէջ ապրող, բայց ոչ-հպատակ օտարականները foreigner չեն կոչուիր, այլ alien: Ինչո՞ւ այս տարբերակումը: Անգլերէն բառարանս, հակառակ իր ընդարձակութեան, աւելին չըսեր: Բայց կը յիշեցնէ, որ alien անունով կը կոչուին նաեւ այլ մոլորակներէ եկող էակները, մանաւանդ եթէ վտանգաւոր կամ թշնամական կեցուածք մը ունին: «Alien» անունով գիտա – երեւակայական չորս շարժանկարներու շարք մը կայ, որոնցմէ առաջինը (շարքին լաւագոյնը) դիտելու պատեհութիւնը ունեցած եմ քսան տարի առաջ, եւ կրնամ վստահեցնել, որ շատ գօտեպնդիչ իրողութիւն մը

չէ, երբ անոր «հերոս» հրէշային alien-ը կը բաղդատեմ… ինքզինքիս:

Տարօրինակ պիտի չգտնէք ուրեմն, որ Նիւ-Եորքի մէջ վարձակառքի (թաքսի) վարորդներուն եկամուտները զգալիօրէն նուազած ըլլան Սեպտեմբեր 11-ի դէպքէն ետք: Ո՛չ միայն որովհետեւ Մանհաթընի հարաւային մասը երթեւեկին համար փակ էր, այլեւ մանաւանդ, որովհետեւ հանրային փոխադրութեան այդ միջոցը՝ կարեւոր մէկ մասով, Փաքիստանցիներու մենաշնորհն է: Չորս տարի առաջ, հերթական այցելութեան մը, վարձակառք մը 45 վայրկեանէն առաւօտ կանուխ զիս օդակայանէն քաղաք տարաւ՝ փառահեղ գլխանոցով ու մօրուքով օժտուած Փաքիստանցիի մը վարորդութեամբ, որ ճամբուն ընթացքին բերանը չբացաւ (կը կասկածիմ, որ անգլերէն գիտնար), այլ զիս «օրօրեց» միօրինակ ձայներիզով մը, որ ամենայն հաւանականութեամբ առաւօտեան աղօթքն էր: Երեւակայեցէք, ուրեմն, որ աշխարհագրութենէ լուր չունեցող միջին Ամերիկացին, որ հնդիկ, փաքիստանցի, Արաբ կամ Աֆղան նոյն ջուրով կը լուայ, ստամոքս պիտի չունենայ Ուսամա Պէն Լատէնի նմանող «Արաբ»ի մը անդրադառնալու, երգերը մարսելու համար…:

Միշտ խօսուած է Ամերիկացիներու անհեթեթ ագիտութեան մասին, երբ հարցը կու գայ աշխարհագրութեան: Տարիներով, կը յիշեմ, արժանթինեան ինքնասիրութիւնը վիրաւորող հանգամանք մըն էր, որ Ամերիկացիները Ռիօ տէ Ժանէյրոն Արժանթինի մայրաքաղաքը կը սեպէին: (Հաւանաբար մինչեւ հիմա Պրազիլի մայրաքաղաքը կը համարին զայն): Եւ որովհետեւ Արժանթին ու Պրազիլը աւանդական մրցակցութեան մէջ եղած են միշտ՝ քաղաքականութենէն մինչեւ ֆութպոլը, կրնաք երեւակայել մնացեալը:

Բայց աշխարհագրական ագիտութիւնը պատահական բան մը չէ: Փաստը հեռատեսիլի լրաբերներն են՝ «բաց» թէ լարային (փապլ) տարբերակներով, որոնք 24 ժամուան ընթացքին իր պորտը նայող մարդուն – ինչպիսին է միջին Ամերիկացին – ինքնագոհութիւնը կը սնուցանեն: Հանրայայտ իրողութիւն է, որ ԱՄՆ-ու ներկայ նախագահը նախընտրական պայքարի ընթացքին չէր փայլած իր աշխարհագրական գիտելիքներով:

Արդարեւ, այդ բոլոր յայտագիրներուն մէջ, աշխարհի վերաբերեալ մէկ լուր չէք գտներ, բացի համաշխարհային տարողութեամբ աղէտէ մը: Այլապէս, միջազգային միակ լուրը հրեայ-պաղեստինեան բախումներու հերթական լրատուութիւնն է՝ արդէն կրնաք պատկերացնել ի՛նչ գործօնի բերումով:

Ի դէպ, Սի. Էն. Էն-ի հանրահռչակ սփռումները, զորս ընթերցողը աշխարհի մէջ ամէնուրեք կը ստանայ, Միացեալ-Նահանգներու մէջ չկան: Այսինքն, CNN International-ը, ինչպէս իր անունը կը յուշէ, «միջազգային» է, «ազգային» չէ: ԱՄՆ-ի կայանը նոյն գաւառական սահմանափակումով միայն կը զբաղի… ամերիկեան աշխարհով:

Նոյնը կը պատահի կլիմայի կայանին հետ (The Weather Channel), որ աշխարհի որեւէ տեղ ամբողջ աշխարհի կլիմայական նորութիւնները կը հաղորդէ: Միացեալ-Նահանգներու մէջ, միա՛յն երկրի վիճակը կու տայ: Պատճառ մը կայ, անշուշտ, որ պէյզպոլի ամերիկեան մրցաշարքը World Series կը կոչուի, կարծէք աշխարհի որեւէ ուրիշ երկիր (Ճափոնէն բացի) անոր մասնակցէր:

Երբ «մենք ենք աշխարհը» կը կարծեն մարդիկ, աւելի՛ն՝ կայսերական ճակատագրի մը կոչուած (հոդ չէ թէ «կայսրութիւն»ը ուրիշ հազար մեղմախօսական եզրերով կը ծածկուի), աշխարհի մնացեալը ուրո՞ւ հոգն է: Ի դէպ, «կայսերական ճակատագիր»ը շատ ուշագրաւ կերպով դրսեւորուեցաւ այս օրերուն, որուն փաստը դարձեալ պիտի բերեմ գիտա-երեւակայական ֆիլմագրութենէն:

1978-82-ին արտադրուած նշանաւոր «Star Wars» եռագրութիւնը կը պատմէ մեզի ինչպէ՞ս հեռաւոր ապագային մէջ կայսրութիւն մը կը փորձէ ճզմել ազատութեան համար մարտնչող վերջին խմբակները, ի հարկէ՝ ձախողութեան մատնուելով: Այս եռագրութեան երկրորդ մասը կը կոչուի «The Empire Strikes Back» («Կայսրութիւնը կը հակադարձէ»): Կիրակի, Հոկտեմբեր 7-ին, երբ ամերիկեան օդանաւերը Աֆղանիստանի առաջին ռմբակոծումը կը կատարէին, CNN կը խորագրէր «America Strikes Back»: Խորագիրը ի զօրու է մինչեւ այս տողերուն գրուիլը՝ շուրջ երկու շաբաթ ետք: Ֆրոյտեան անհերքելի սայթաքում մը, ըստ ամենայնի:

Ի դէպ, կատակի համազօր իրողութիւն մը. ռմբակոծումներու երկրորդ օրէն, The Weather Channel-ը սկսած է Աֆղանիստանի կլիմայական համապատկերը ներկայացնելու: Հաւանաբար, վարիչները կ'ուզեն հայրենասիրական իրենց պարտականութիւնը գործադրել եւ ամերիկեան օդատորմիղին օգնել, որ կարենայ լաւագոյնս կողմնորոշուիլ ռմբակոծումներու ժամանակ…:

Այսպէս կը շարունակուի ամերիկեան շուրջպարը, փոխ առնելով հանգուցեալ Յակոբ Կարապենցի մէկ գիրքին վերնագիրէն: Կ'ըսեն ու կը կրկնեն, թէ Սեպտեմբեր 11-էն ետք Միացեալ-Նահանգները փոխուած են: Երանի թէ փոփոխութիւնը միայն ապահովութեան միջոցներու խստացումին մէջ չըլլայ, այլ… մարդոց մտքին մէջ:

Վ. Մ.

Նիւ Յորք

ՇԱՒԻԼ «ROTARY-CLUB»Ի ԵՐԵԿՈՅԹԸ

«Ռոթարի»ն միջազգային կազմակերպութիւն մըն է որ 1.200.000 անդամ կը հաշուէ աշխարհի 185 երկիրներու մէջ, որոնցմէ աւելի քան 30.000-ը՝ Ֆրանսա: Իր կարգախօսն է. «Նախ ծառայել», նպատակ ունենալով ուրիշին օգտակար ըլլալ, միշտ բարեկամական սկզբունքներով տոգորուած: Եւ այս բոլորը, սիրայօժար ձեւով:

Երեւանի «Ռոթարի Քլէօպ»ի ստեղծման առթիւ, Շաւիլի «Ռոթարի»ն փափաքած էր կազմակերպել Հայաստանի նուիրուած երեկոյթ մը, մեր երկիրը ծանօթացնելու համար իր անդամներուն: Այդ ձեռնարկը տեղի ունեցաւ Շաւիլի «Աթրիոմ»ի շքեղ սրահներուն մէջ, Հոկտեմբեր 10-ին, շուրջ 150 հանդիսականներու առջեւ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Կրօնական Ընկերակցութիւնն էր որ յանձն առած էր յայտագրին լման պատրաստութիւնը:

Նախ, կարճ ժապաւէն մը, հակիրճ կերպով նկարագրականը ըրաւ Հայաստանի 3000 տարուան պատմութեան: Ապա, Էտուար Թօփալեան, լուսանկարներով, ներկայացուց հայ ինքնութեան քանի մը դրուագներ.

– Կիլիկիոյ հայկական բերդերը զորս դասախօսը նկարած էր 1998-ին, ճամբորդութեան մը առթիւ,

– Երեւանեան պատկերներ՝ փորձ մը արտացոլելու Հայաստանի մայրաքաղաքի առօրեան (շուկայ, փոխադրամիջոց…), իր լաւ ու գէշ կողմերով,

– Սեպտեմբերեան միջոցառումներ. 1700-ամեակի նշում, միւռոնօրհնէքի արարողութիւն, Երեւանի Մայր տաճարի օծում ինչպէս նաեւ Յովհ. – Պօղոս Բ. Պապին այց:

Երեկոյթին երկրորդ դասախօսն էր Աննա Լէյլոյեան, Արուեստներու պատմութեան տոքթոր, որ եւս լուսանկարներով, մանրամասնօրէն ու մասնագիտական մօտեցումով ներկայացուց հայ արուեստի զանազան ցայտուն երեսները (ճարտարապետութիւն, մանրանկարչութիւն, խաչքար):

Քանի մը հարցումներէ վերջ, բեմը տրամադրուեցաւ «Նաւասարդ» նուագախումբին ու իր մեներգչուհի՝ Ռոզի Թաշճեանի որ, ժողովրդական գողտրիկ երգերով, խանդավառութիւն ստեղծեց սրահէն ներս:

Երեկոյթին աւարտին, ներկաները կրցան մօտենալ երկու տաղաւարներու ցուցիրքերու եւ խտացեալ-սալիկներու ցուցադրութիւն մը, պատեհ առիթ մը ծանօթանալու Հայաստանի պատմութեան եւ արուեստներուն: Միւսը «Շէն» Բարեսիրական կազմակերպութեան սարքած հայրենի ձեռարուեստի նմոյշներու գեղեցիկ գործերու ցուցադրութիւնն էր, որ մեծ հետաքրքրութիւն ստեղծեց: Երեկոյթը վերջ գտաւ ներկաներու ընդհանուր գոհունակութեամբ՝ բարեկամութեան բաժակի մը շուրջ:

Նշենք որ այս ձեռնարկին հասոյթը (շուրջ 10.000 ֆրանք) կը յանձնուի Երեւանի նորաստեղծ «Ռոթարի Քլէօպ»ին, իբր խթան իր ապագայ գործունէութեան:

ՀՐԱՑՐ ՀՐԱՁԵԱՆ

ՁԱՅՆԵՐ
ԳԱՒԱՌԷՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՑԿԵՐՈՅԹ

ՄԱՐՍԷՅԼ («Յառաջ») –

Շաբաթ Հոկտեմբեր 20-ին, Պոմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը կազմակերպեց իր տարեկան հացկերոյթը, եկեղեցւոյ կից սրահը, ջերմ, մտերիմ, պարզ եւ համակրելի մթնոլորտի մը մէջ:

Բացման խօսքը ըրաւ Վ. Խըլոյեան: Ողջունեց օրուան նախագահը՝ Տէր եւ Տիկին Անտրէ Պաղտասարեան, ինչպէս նաեւ քաղաքական անձնաւորութիւնները եւ հրաւիրեց Հոգեւոր Հովիւը՝ Կոմիտաս Վրդ. Յովնանեան սեղանը օրհնելու: Պատւոյ սեղանին վրայ տեղ գրաւուած էին նաեւ Վարդավառ Քհնյ. Գասպարեան եւ Երեւանի օփերայի թատրոնին մեներգչուհի՝ Արմենուհի Սէյրանեան: Այս վերջինը ցոյց տուաւ իր տաղանդը երգելով հատուած մը Անոյշ օփերայէն «Ասում են ուրին աղջիկ էր ինձ պէս» եւ ժողովրդական երգ մը «Հալէ, հալէ նինօ է»:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Կոմիտաս Վրդ. Յովնանեան յայտնեց սրտի իր ուրախութիւնը 69 տարի առաջ հիմը դրուած աշխատանքի մը եւ հետզհետէ զարգացած, իւրաքանչիւր սերունդ բերելով իր սեփական բերքը: Վարդապետը համոզուած եւ համոզիչ խօսքերով ընդգծեց Հայ եկեղեցւոյ դերը դարերու ընթացքին եւ ծանրացաւ այսօրուան հրամայականներուն վրայ: Եկեղեցին հակառակ դարերու բեռին երիտասարդ կառոյց մըն է, ըսաւ Կոմիտաս Վրդ., քանի հոգիներու կամուրջ մըն է, միասնութեան շղթայ մը զոր այսօրուան սերունդը պարտականութիւն ունի զօրացնել սիրոյ եւ եղբայրութեան զգացումներով:

Փր. Տէրտէրեան վարեց օրուան խօսնակի պաշտօնը:

Նուագախումբը, մէջ ընդ մէջ, ուրախութեան տրամադրութիւն մը ստեղծեց խմբերգներով, հայկական պարերու եթերայնութեամբ:

Ներկաները ըրին ինքնաբուխ նուէրներ որոնց գումարը բարձրացաւ շուրջ 45 հազար ֆրանքի:

Անտրէ Պաղտասարեանի օրուան նախագահութիւնը Պոմոնի շրջանին համար յատուկ խորհրդանիշ մըն է, քանի Պաղտասարեան ընտանիքի վաստակը դերակատարութիւնը եւ վեհանձնութիւնը տեւական եղած են: Հայրը Գրիգոր Պաղտասարեան որպէս ազգային եւ կուսակցական դէմք, մայրը Հռիփսիմէ Պաղտասարեան որպէս կանացի կազմակերպութեան ղեկավար տիրական գործունէութիւն ունեցած են գաղութէն ներս, եւ յատկապէս Պոմոն: Առիթ է ըսել չմոռնալու համար անոնք որոնք գաղութին դիմագիծ տուին որովհետեւ ոչ միայն սերունդ փոխուած է, այլ նաեւ Նորահաստատ Հայեր ժամանած Միջին-Արեւելքէն, Թուրքիայէն, Հայաստանէն անտեղեակ են գաղութի կազմութեան, հոլովոյթին եւ զարգացման:

Հացկերոյթը շարունակուեցաւ ուշ գիշեր եւ Կոմիտաս Վրդ. բեմ բարձրացաւ եւ մեկնաբանեց երկու երգ, «Տըլէ եաման» եւ «Արեւնամ դրօշ» որուն մասնակցեցան նաեւ սեղանակիցները:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԹԻԻ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

– Իրաւունք ունիս, – պատասխանեց Վահէ, – մե՛ղք, որ խելք չըրինք, յայտնի կ'երեւայ, որ այս թուղթին մէջ շատ կարեւոր գաղտնիքներ ծածկուած են:

– Հիմա ի՞նչ կրնանք ընել այս նօթագրութիւնը:

– Կարծեմ ոչինչ, – պատասխանեց Վահէ, – այս ալ կը պատռենք ու կը ղրկենք միւսներուն քով:

– Բայց շատ կարեւոր թուղթ մը կ'երեւայ կոր ասիկա… մանաւանդ մէջը անուն մը կայ, որ կրնայ մեզի առաջնորդ ըլլալ:

– Ի՞նչ անուն:

– Ասատիկ Մարկոսեանի անունը:

– Շատ ճիշդ է ըսածդ, այո, այդ անունը ընդհանուր մթութեան մէջ լոյսի նշոյլ մըն է… միայն թէ ինչպէ՞ս կրնանք շահագործել ատիկա:

– Այդ մասին կը խորհինք… հիմակուհիմա այս թուղթը պահենք եւ երթանք հանգստանանք:

Երկու երիտասարդները գացին պառկելու:

Հետեւեալ առտուն կանուխ Տրդատ արթնցաւ եւ անգամ մը եւս կարդաց խորհրդաւոր նօթագրութիւնը:

«Պէտք է, որ անպատճառ ծանօթութիւն հաստատենք Ասատիկ Մարկոսեանի հետ, – կը խորհէր, – այդ մարդը թերեւս լրտես մըն է, բայց չի կրնար մեզի վնաս մը հասցնել, զի իբրեւ հնչակեան միայն Արշակը կար, որ կը ճանչնար եւ Արշակ այլեւս մէջտեղ չիկայ: Հիմա ապահով կրնամ պտըտիլ ամէն կողմ»:

Տրդատ այսպէս խորհելէ ետք հագուեցաւ եւ դուրս ելաւ տունէն՝ Վահէի պատուիրելէ ետքը, որ տունը մնայ եւ հսկողութիւն ընէ:

«Ո՞ւր կարելի է գտնել Ասատիկը», – կը հարցնէր ինքնիրեն Տրդատ:

Գիտէր, որ այդ անձը Թուրք թերթերու կ'աշխատակցէր եւ անորոշապէս կը յիշէր, որ մասնաւորաբար «Իգտամ»ի մէջ պաշտօն ունէր:

Ուղղակի դիմեց Պապը Ալիի պողոտան, յիշեալ Թուրք թերթին խմբագրատունը:

– Ասատիկ էֆէնտին հո՞ս է, – հարցուց հոն գտնուող խմբագիրներէն մէկուն:

– Այո՛, վերի սենեակն է, – պատասխանեց խմբագիրներէն մէկը:

Տրդատ ուղղուեցաւ սանդուխէն վեր:

Արդարեւ Ասատիկ Մարկոսեան գրասեղանի մը առջեւ բազմած՝ գրելու զբաղած էր:

Տրդատ անմիջապէս ճանչցաւ զինքը եւ չիտակ քովը մօտեցաւ:

– Բարե՛ւ, Ասատի՛կ էֆէնտի, – ըսաւ գլխարկը հանելով:

Ասատիկ գլուխը վեր առաւ եւ ճանչցաւ երիտասարդը:

– Վա՜յ, պարո՛ն Տրդատ, ո՞ւր էք եղեր, հրամմեցէք, – գոչեց, – ատ ինչ հով փչեց, երբեք չէի սպասեր ձեր այցելութեան:

– Այս կողմերէն կ'անցնէի, ուզեցի անգամ մը տեսնել ձեզի:

– Շատ աղէկ ըրիք, շատ շնորհակալ եմ, ինծի համար մեծ պատիւ կը համարեմ ձեզի նման երիտասարդի մը այցելութիւնը:

– Կ'աղաչեմ, Ասատի՛կ էֆէնտի, իմ համեստութիւնս կը վիրաւորէք:

– Ինչ ըսել է, ես շողոքորթ չեմ, անկեղծօրէն կը խօսիմ:

Ասատիկ աթոռ մը հրամցուց երիտասարդին եւ միեւնոյն ատեն սիկառէթի տուփը հանելով՝ անոր ներկայացուց:

Տրդատ հատ մը առաւ, վառեց եւ սկըսաւ ծխել:

– Ձեզի մէկը կը փնտռէր կոր, արդեօք գտա՞ւ, – հարցուց Ասատիկ:

– Ո՞վ…

– Արշակ էֆէնտին, երէկ իրիկուն իրեն հանդիպեցայ, ձեզի կը փնտռէր կոր, ես ալ առջի օր, առտուն Շիշլի ձեզի տեսած էի, ըսի իրեն, եւ անմիջապէս ելաւ գընաց, շատ կարեւոր գործի մը համար անպատճառ ձեզի տեսնել կ'ուզէր:

Տրդատ այս խօսքերը լսեց թեթեւ սարսուռ մը զգալով, այսուհանդերձ իր պաղարիւնութիւնը պահեց եւ ըսաւ.

– Ո՞ր Արշակին մասին կը խօսիք:

– Արշակ էֆէնտին, պաշտօնեայ, կառավարական պաշտօնեայ… – կմկմաց Ասատիկ:

– Այդպիսի մէկը չեմ յիշեր կոր:

– Զարմանալի՜ բան, կը կարծէի, որ մտերիմ բարեկամներ էք… ձեզի կը փնտռէր կոր, եւ երբոր ըսի, թէ Շիշլիի կողմերը ձեզ տեսած եմ, չափազանց գոհ եղաւ եւ իսկոյն գնաց ձեզի գտնելու. կը յիշէ՞ք, օր մը նստած էիք յոյնի մը գինետունը, ես ալ եկայ եւ ձեզ առաջին անգամ ճանչնալու բախտը ունեցայ:

(Շար. 91)

APPEL AUX BÉNÉVOLES!

PHONÉTHON 2001

du Fonds Arménien de France

Participez à la construction de la Route Dorsale du Karabagh en offrant un peu de votre temps

Dates et horaires du PHONETHON 2001

du Jeudi 8 Novembre à 18h au Dimanche 11 Novembre à 18h

Pour participer, s'adresser à :

LYON: Séta Sukiasyan au 04 78 60 47 18 (9h à 12h et 14h à 17h)

MARSEILLE: Philippe Krikorian au 04 91 55 67 77 (11h à 12h et après 17h30)

MONTPELLIER: Georges Mouchighian au 04 67 94 24 48

NICE: Gaspard Kayadjanian au 04 93 45 37 03

PARIS: Souren Kévorkian au 01 43 68 29 29 — E-mail: info@fondsarmenien.net

N.B. Sur demande, un certificat de participation au Phonéthon sera remis à chaque bénévole.

PHONÉTHON 2001

du Jeudi 8 au Dimanche 11 Novembre

Pour la construction de la

Route Dorsale du Karabagh





Une infrastructure vitale pour le développement socio-économique du Karabagh

Deuxième tranche des travaux

Un total de 165 km dont 30 km achevés

1 m = 1 000 FF

Pour adresser vos dons :

N° Vert 0800 095 095

FONDS ARMÉNIEN DE FRANCE

BP 12 - 75660 PARIS CEDEX 14 - TÉL. 01 43 68 29 29 - FAX : 01 43 68 15 91 - E-MAIL : info@fondsarmenien.com

CHENE

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

10e Grande Braderie de Noël

Շաբաթ, Կիրակի, Դեկտեմբեր 1 եւ 2

ՇԷՆ ՖՐԱՆՍԸ

301 - 2001

L'Association Cultuelle de l'Eglise Apostolique Arménienne de Paris et de la Région Parisienne

organise

deux cycles de conférences

du Vendredi 23 au Dimanche 25 novembre

et

du Vendredi 30 novembre au dimanche 2 décembre

à l'occasion du 1700ème anniversaire de l'Adoption officielle du Christianisme par l'Arménie

les Coupons d'Alsace

21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 Commission paritaire : No 55935

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 31
MERCREDI
31 OCTOBRE
2001

LE NUMERO : 6,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL · 01 47 70 86 60 FAX : 01 48 00 06 70
E-MAIL : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 1·400 Ֆ· — Վեցամսեայ : 725 Ֆ·
Արտասահման : Տար· 1·650 Ֆ· (Ամէնօրեայ առաքում)
1·500 Ֆ· (Շաբաթական առաքում) — Հատը : 6,00 Ֆ·
C.C.P. PARIS 15069-82 E

77րդ ՏԱՐԻ – ԹԻՒ 20·286
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
77e ANNEE — N° 20·286

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

Ա Ֆ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

ՀԻՒՍԻՍԻ ԶԻՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՅԱՐՁԱԿՄԱՆ Կ'ԱՆՑՆԻ

ՊՈՒՇ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ԸՆԷ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հիւսիսի Զինակցութիւնը որոշած է յարձակման անցնիլ Թալիպաններու դէմ եւ Միացեալ – Նահանգներն ալ կը ջանան զինամթերք հայթայթել անկարգելներու համբով: ԱՄՆ-ու Պաշտպանութեան Նախարարը յայտարարած է որ այդ առաքումները սահմանափակ են, բայց, պէտք է յաւելում կրեն: Ուաշինկթըն «կը քաջալերէ» կ'ըսէ Նախարարը ոչ միայն Հիւսիսի Զինակցութեան, ցեղախումբերու թեան այլ ուժեր որ յառաջխաղացում կատարեն զինուորական գետնի վրայ Թալիպաններու դէմ: Ինչ կը վերաբերի Հիւսիսի Զինակցութեան ցեղախումբերու բաւական տարօրինակ համախմբում մըն է, առաւելաբար բաղկացած ողբացեալ հրամանատար Մասուտի գործերէն: Գըլխաւոր խումբերն են. –

- ՏԱՃԻԿՆԵՐԸ, որոնք երկրին երկրորդ ցեղախումբն են, պաշտօններէն ետք, բնակչութեան մէկ քառորդը կը կազմեն: Գլխաւորաբար, համախմբուած են երկրին հիւսիսը, Տաճիկիստանի սահմանագլուխը եւ մեծ քաղաքներու մէջ: Ղեկավարուած են Մասուտի ենթասպաներուն կողմէ, բայց, ուրիշ հրամանատար մը՝ Իսմայիլ խան իր ճամբան գծած է Իրանի զօրակցութեամբ:

- ՀԱԶԱՐԱՆԵՐԸ, երկրին երրորդ ցեղախումբն են, շուրջ 20%-ը բնակչութեան: Շիի մահմետական են եւ ծագումով մոնղոլեան ցեղէն, երկրին կեդրոնը կ'ապրին: Երկրորդական քաղաքցիներ կը նկատուին, ծնունդ տուած են քաղաքա – զինուորական քանի մը միաւորներու: Ամէնէն գործօնն է Հեզպ-է-Վահտաթը գոր կը վարէ Ապտիւլ Ղարիմ Խալիլի, ան ալ կը վայելէ Իրանի նեցուկը:

- ՈՒԶԲԵԿՆԵՐԸ. – Կը ներկայացնեն երկրին չորրորդ ցեղախումբը: Թրքախօս, հիւսիսի մեծ դաշտերուն մէջ ցրուած են: Իրենց զինուորական ղեկավարը, որ կը վայելէ Ուզբեկիստանի եւ Թուրքիոյ նեցուկը, զօրավար Ռաշիտ Տոսթումն է: Ան կը ջանայ վերագրաւել Մազար-է-Շարիֆը, ուրկէ վռնտուած էր 1998-ին, Թալիպաններու կողմէ:

Ինչպէս կը պարզուի, բաւական խառնակ համախմբում մըն է, որ կրնայ մեծ դժուարութիւններ ստեղծել, երբ իշխանութեան հարց ծագի: Զօրավար Ալիմ Խանալի, որ 3000 մարտիկի հրամանատարն է, հեգնաքով ցոյց կու տայ ինկած ամերիկեան ռումբերը ըսելով. – «Քաթթա քալայի վրայ ինկան, ուր մարդ չկայ երկու ճակատներուն միջեւ, հոն ուր հարուածեցին այծի մըն ալ չեն կրնար վնասել: Եթէ մեզի հետ չհամակարգեն իրենց գործողութիւնները, ոչ մէկ արդիւնք կ'ըլլայ»:

***

Հոկտեմբեր 29-ին, Միացեալ - Նահանգները կրկին մղձաւանջի մէջ էին, քանի Արդարութեան նախարարը յայտարարած էր թէ ահաբեկչական նոր սպառնալիքներ կան Ամերիկայի դէմ եւ հարկ է զգուշանալ: Միւս կողմէ, Պուշ ջանաց բարձրացնել ժողովուրդին բարոյական կորովը եւ չեշտեց թէ համբերութիւն պէտք է ունենալ, այս պատերազմը երկար պիտի տեւէ: Նոյեմբեր 10-ին, պիտի տեսնուի Փաքիստանի Նախագահին հետ:

***

Կիրակի, Հոկտեմբեր 28-ի ջարդէն ետք, Փաքիստանի քրիստոնեայ փոքրամասնութիւնը աւելի մտահոգ դարձած է: Հոկտեմբեր 29-ին, տասը հազար հոգի ներկայ եղած են 18 զոհերու յուղարկաւորութեան: Քրիստոնեաները բնակչութեան 2%-ը կը կազմեն, շուրջ 3 միլիոն հոգի:

***

Թոնի Պլէր ալ կը ջանայ հանդարտեցընել Անգլիացիները, որոնք սկսած են քըննադատել ամերիկեան ռմբակոծութիւնները, որոնք չորս շաբաթ է ոչ մէկ արդիւնքի յանգեցան: Ան հրաւիրեց Անգլիացիները որ «հակակշռեն» իրենց ջիղերը, տարուած պայքարը, բարիին պայքարն է չարին դէմ, արդ. – «Ինչ որ ալ ըլլան իր յանցանքները, Մեծն - Բրիտանիան բարոյականի տէր ազգ մըն է, որ սուր գիտակցութիւնն ունի թէ ի՛նչ արդար է եւ ինչ վատ» կը շեշտէ Պլէր:

***

«Մաչ»ի լրագրողը՝ Միշէլ Փէրար, որ միշտ Թալիպաններու ձեռքն է (ձերբակալուած էր Հոկտեմբեր 9-ին), կրնայ դատուիլ լրտեսութեան ամբաստանութեամբ Թալիպան Ատեանի մը կողմէ:

***

Միացեալ – Նահանգներու մէջ, Սեպտ. 11-էն ի վեր, հազար կասկածելիներ ձերբակալուած կը մնան, հակառակ անոր որ, իրենց հարցաքննութիւնները ոչ մէկ փաստ բերած են, թէ որեւէ կապ ունեցած են ահաբեկիչներուն հետ:

***

Ածխախտը Ուաշինկթընի Գերագոյն Ատեանը հասած է: Կասկածները այլեւս կեդրոնացած են ամերիկեան ծայրայեղ աջ տարրերու վրայ: Ֆրանսայի մէջ ոչ մէկ պարագայ յայտնաբերուած է, բայց, 2285 «ահազանգներ» եղած են եւ 1500 հոգի ալ պատուաստ եղած են նախազգուշութեան համար...:

Ք Ա Ն Ի   Մ Ը   Տ Ո Ղ Ո Վ

ԳՈՐՍԻՔԱՅԻ մասին, Ներքին նախարար Տանիէլ Վայանի նախատեսած կարգադրութիւնը, ինչ կը վերաբերի քաղաքական բանտարկեալներու համախմբման Պորկոյի (Գորսիքա) բանտին մէկ յատուկ կեդրոնին մէջ, կը շարունակէ մեծ աղմուկ հանել եւ Լ. Ժոսփէն, Հոկտ. 29-ին, ստիպուեցաւ կարգ մը ճշդումներ ընել: Իրմէ առաջ, Արդարութեան Նախարարուհին ալ՝ Մարիլիզ Լըպրանշիւ փորձած էր մեղմել մթնոլորտը յայտնելով, թէ Փարիզ արդելափակուած 39 յանցագործները, ահաբեկչութեամբ ամբաստանուած կամ նահանգապետ Էրինեաքի ենթադրեալ մարդասպանները Փարիզ պիտի մնան: Ժոսփէն ալ, Ռէնի մէջ, ուզեց հանդարտեցնել բոլորը, ըսելով թէ լաւ չէ հասկցած բանակէճին պատճառները: Նախարարապետը ուզեց ճշդել թէ Ներքին նախարարը «համախմբում» բառը չէր գործածած, բայց եւ այնպէս շփոթութիւն մը կայ եւ դժգոհութիւնը հասած է նաեւ բանտապահներուն, որոնք կը գտնեն թէ կառավարութիւնը աւելի կը մտահոգուի յանցագործներով քան բանտապահներով: Ժ. Սատ, յանուն «Քաղա-

(Շար·ը Դ· էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Հոկտեմբեր 29 / 30)

ՆԱԽԱՐԱՐԸ ԳՈՀ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՎՐԱՍՏԱՆԷՆ

Պաշտօնական այցով Հոկտեմբեր 25–27 Վրաստան գտնուելէ ետք, Պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեան վերադարձին պատասխանելով լրագրողներու, ըսած է թէ գոհ է այցին արդիւնքներէն: Վրաստանի Պաշտպանութեան Նախարարին հետ գործակցութեան արձանագրութիւն ստորագրած է եւ որոշուած է միասնական յանձնաժողով մը ստեղծել, որպէսզի ուսումնասիրէ գործակցութեան կարելիութիւնները: Ս. Սարգսեան հանդիպում ունեցած է Վրաստանի Նախագահին, Խորհրդարանի Նախագահին հետ: Ան դրական պատասխանած է հարցումին թէ կարելի՞ են հայեւվրացական միասնական զօրափորձեր:

***

Ա. ՍԵՒԵՐԻՆԻ ԿՈՎԿԱՍ ԱՅՑԸ

Օ.ԽՍ.ՍԽ.Ը.-ի խորհրդարանական վեհաժողովի Նախագահը Ա. Սեւերին Երեւան եւ Ստեփանակերտ այցելած է Հոկտեմբեր 27 – 29: Երեւանի մէջ ան հանդիպում ունեցած է Ռ. Քոչարեանի հետ եւ ընդունուած Գարեգին Բ. կաթողիկոսէն: Ստեփանակերտի մէջ տեսակցելով Ապահովութեան Խորհուրդի անդամներուն, Ազգային Ժողովի մշտական յանձնաժողովներու եւ խմբակցութիւններու նախագահներուն հետ, Սեւերին ըսած է թէ եթէ Ղարաբաղը յաջողի կառուցել ժամանակակից ազատ, լայնախոհ, բազմակարծիք եւ ժողովրդավարական հանրութիւն ու այդպէսով շահիլ միջազգային հանրութեան համակրանքը, աշխարհի մէջ իր արժանի տեղը կը գտնէ:

Սեւերին որ այցելած է նաեւ Բաքու եւ Թիֆլիս, Կովկասի մէջ օգտակար նկատած է հաւաքական շուկայի մը կազմակերպումը:

***

ՊԱՐՏՔԻՆ ՓՈԽԱՐԷՆ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Ռուսաստանի ունեցած պարտքին փոխարէն Հայաստան կը պատրաստուի շարք մը ձեռնարկութիւններու բաժնեթուղթերը տալ, ինչպէս ըսած է հայեւռուսական միջկառավարական տնտեսական յանձ –, նաժողովին Նախագահներէն Պաշտպանութեան Նախարար Ս. Սարգսեան: Այդ կարգադրութիւնը որ թեր ու դէմ կարծիքներու բախումին պատճառ է վերջին շրջանին, ինչպէս ըսած է Նախարարը, կ'իրագործուի հաւանօրէն Նոյեմբերի ըսկիզբին երբ ինք կը մեկնի Մոսկուա, հանդիպում ունենալու Ռուսաստանի փոխ – վարչապետ եւ նոյն յանձնաժողովին ռուսական կողմի նախագահին Կլեբանովի հետ եւ ստորագրելու պայմանագրերը:

***

ԼՂՀ ՆԵՐԳԱՂԹՈՂՆԵՐԸ

2000 թուականի Հոկտեմբերէն մինչեւ հիմա «Վերադարձ Արցախ» ծրագրով Ղարաբաղ տեղափոխուած է 52 ընտանիք. մինչեւ տարեվերջ կը նախատեսուի 30 ընտանիք եւս ընդունիլ: Ներկայի կացութեամբ 700 ընտանիք արձանագրուած են, Ղարաբաղ բնակելու ցանկութեամբ: Այդ ընտանիքները կը փոխադրուին ԼՂՀ պետական պիւտճէին միջոցներով որոնք տարեկան 200 – 250 ընտանիքի բաւարար կ'ըլլան. ամէն մէկ ընտանիքի համար կը ծախսուի 5 – 8 հազար տոլար: Ներգաղթողներուն կ'ըլլան դրամական յատկացումներ, երկար տեւողութեամբ վարկեր կը տրուին, նաեւ սեփական տուն, հողամաս, եւ այլն:

***

ՍՊԱՆԻԱ – ՀԱՅԱՍՏԱՆ ՊԱՏԱՆԵԿԱՆԸ՝ 6 – 0

Եւրոպայի ֆութպոլի պատանեկան առաջնութեան զտումի մրցաշարքին Հայաստանի հաւաքականը իր մրցակցին դաշտին վրայ Բ. խաղը խաղացած է Սպանիոյ հաւաքականին հետ եւ նոյն արդիւնքով՝ 6 – 0 պարտուած:

Այսպէսով, Հայաստանի ֆութպոլի պատանիները դաման 4 մրցումի 19 կոլ կերած, միայն հատ մը նշանակած են:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ 1-ԷՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱԿԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՓՈՓՈԽ ԵՆ 1999 ՆՈՅԵՄԲԵՐ 1-ԷՆ Ի ՎԵՐ ՀԱԿԱՌԱԿ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿՐԱԾ ԾԱՆՐ ՅԱՒԵԼՈՒՄՆԵՐՈՒՆ, ԳԼԽԱՒՈՐԱԲԱՐ ՖՐԱՆՍԱՅԻ ԹՂԹԱՏԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՍԱԿԵՐՈՒՆ (50% 5 ՏԱՐՈՒԱՆ ՎՐԱՅ, ԱՄԷՆ ՅՈՒՆՈՒԱՐԻՆ), ԹՈՒՂԹԻ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ԱՅԼ ՏՈՒՐՔԵՐՈՒ, ՅԱՒԵԼՈՒՄ ՊԻՏԻ ԿՐԵՆ ՆՈՅԵՄԲԵՐ 1-ԷՆ ՍԿՍԵԱԼ, ԻՆՉՊԷՍ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԷԻՆՔ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՍԿԻԶԲԸ:

Նոր սակերն են. –

ՖՐԱՆՍԱ. –

Տարեկան	1·500 Ֆր·
Վեցամսեայ	800 Ֆր·

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ. –

Ամէնօրեայ առաքում	1·750 Ֆր·
Շաբաթական առաքում	1·600 Ֆր·

Օդանաւային առաքումներու համար դիմել վարչութեան, սակերը տարբեր ըլլալով ըստ երկիրներու:

***

Նոյեմբեր 1-էն յետոյ ոչ մէկ բաժանորդագրութիւն կը ղանձուի հին սակով:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
« Յ Ա Ռ Ա Ջ » Ի

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ

«ԴՈՒ ՄԱՐԴԿԱՅՆՈՑ ՑԵՂԻՍ ՕՐՐԱՆ, ԴՈՒ ԵՒ ԲՆԻԿ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ»

Շաբաթ, Սեպտեմբեր 22, ամբողջ օրը Էջմիածին: Հայոց հնօրեայ մայրաքաղաքի, Վաղարշապատի փողոցներն ու հրապարակները բազմամարդ են երբ առաւօտուն բաւական կանուխ է: Այսօր հոն՝ 1700 տարի առաջ հոն է հռչակուած քրիստոնէութիւնը պետական կրօնք: Այստեղ են մեր պատմական տաճարները Ս. Հռիփսիմէ, Ս. Գայիանէ, Ս. Շողակաթ եւ մանաւանդ Մայր Տաճարը Սուրբ Էջմիածին, քանի վկաները Հայոց դարձին եւ հաւատքին: Այսօր սակայն, 17-րդ դարադարձի օրերուն, ապաւէ եւ անկախ Հայաստանի Գ. Հանրապետութեան մէջ, ոչ քրիստոնէութիւնը, ոչ ալ անոր մարմնացումը եղող ազգային Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պետական կրօնք չեն: «Լաիք» պետութիւն է Հայաստան, աշխարհական օրինակով: [illegible] Բայց ո՞վ, ի՞նչ 17 դար ամբողջ [illegible] Հայ [illegible] պատմութե՞ան թէ ոչ Հայ Եկեղեցին: Երեսուն տարի առաջ Մարսէյլի մէջ ճաշկերոյթի մը ընթացքին, Հայաստանի այդ օրուան Գերագոյն Խորհուրդի Նախագահ Նագուշ Ցարութիւնեան յայտարարած էր – «Մենք յարգանք ունենք Հայ Եկեղեցու հանդէպ. նրան Հայ ժողովուրդը շատ բանով է պարտական»: Բայց ան համայնավար Հայաստանի նախագահն էր. այսօ՞ր ալ միայն այդքան: Յոյները մեզմէ տգէտ, յետամնա՞ց ժողովուրդ են, որ Յունաստանի Հանրապետութեան պաշտօնական կրօնքն է Սահմանադրութեամբ հռչակուած օրթոտոքսութիւնը:

Մայրավանքի բակն են լեցուած երէկ Ծիծեռնակաբերդ եղող Սփիւռքահայերը, առաւել՝ Թրքահայերու ստուար խումբ մը: Քիչ վերջ Մայր Տաճարի մէջ տեղի պիտի ունենայ էքիւմենիք պաշտօնական արարողութիւն 1700-ամեակի առթիւ, որուն հրաւիրուած են նաեւ Հայաստանի օտար դեսպանները: Անոնց կառքերը դուրսը, հրապարակին վրայ շարուած են, իւրաքանչիւրին ազգային դրօշով զարդարուած: Բացակայ է Վաղարշապատցին. այնքա՞ն զբաղած է ան, կամ անտեղեակ իր իսկ քաղաքին մէջ անցած – դարձածին: Հոս եւս ամէն քայլափոխի տեղադրուած են «Քրիստոնեայ Հայաստան 1700» վահանակները: 35 հազար բնակչութեամբ քաղաքէն 35 հոգի գոնէ եկա՞ծ է վանք: Քիչ յետոյ Մայր Տաճարի զանգակները կը ղօղանջեն զուարթ: Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետները, Երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքները, Ուղղափառ Քոյր Եկեղեցիներու պատրիարքները շրջապատուած՝ իրենց կղերով, եկեղեցական փառաշուք Թափորով, «Հրաշափառ»ի յաղթական հնչիւններով կը մտնեն եկեղեցի: Մէկ ժամ կը տեւէ արարողութիւնը. սուրբ գրական ընթերցումները կ՚ըլլան հայերէն եւ անգլերէն լեզուներով: Աւարտին անգլերէն կը քարոզէ Արամ Կաթողիկոս, հայերէն՝ Գարեգին Բ.: «Էջ միածին ի հօրէ» շարականի երգեցողութեամբ դուրս կ՚ելլէ եկեղեցական Թափորը, որուն կը հետեւին դեսպանները: Կանգնած եմ Իջման սեղանին շատ մօտ. ուղղափառ երկիրներու դեսպանները կը դառնան Իջման սեղանին, կը խոնարհին, աջէն կը խաչակնքեն երեսնին եւ յետոյ դուրս կու գան:

Պարսից դեսպանը մահմետական է, չի կրնար խաչակնքել, բայց ձեռքը կուրծքին կը տանի, կը խոնարհի եւ այնպէս դուրս կ՚ելլէ: Արեւմտեան (քրիստոնեա՞յ) երկիրներու դեսպանները մէկ բացառութեամբ, բոլորովին անտարբերութեամբ դուրս կու գան Մայր Տաճարէն: Որքա՜ն միմիտ են եղեր մեր հայրերը ԺԹ. դարուն, որ անոնց «քրիստոնէական գթասրտութեան» են ապաւիներ. այդ գթասրտութիւնը մեզի պարգեւեր է Պէրլինի դաշնագրին... 61-րդ յօդուածը միայն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր այսօրուան վայելուչ վիճակը ամբողջութեամբ կը պարտի Վազգէն Ա. Կաթողիկոսին: Շինարար Հայրապետը իր գահակալութեան 39 երկար տարիներուն ընթացքին, համբերութեամբ, կամքի տոկունութեամբ եւ դիւանագիտութեամբ կրցաւ, օգտուելով իւրաքանչիւր նպաստաւոր պահէն, մէկ կողմէն լեզու գտնել համայնավար իշխանութեան հետ եւ Հայաստանի մտաւորականութեան մէկ մասը իր շուրջը հաւաքել. միւս կողմէ ալ սփիւռքէն շատ մը բարերարներ ճարեց իր շինարարական ծրագրերը գլուխ հանելու համար:

Ազգասէր կաթողիկոսը յանդգնութիւնը ունեցաւ 1965-ին, Եղեռնի 50-ամեակին առթիւ կանգնեցնելու Հայաստանի տաճարի վրայի առաջին նահատակաց յուշարձանը: Ամէնուն աչքին առջեւ Տէր Զօրէն ոսկորներ բերել տուաւ եւ թաղեց հոն: Ետ առնուեցաւ գեղեցիկ վեհարանը, շէնքի արտաքուստ գեղեցիկ կառոյցը նոյնքան գեղեցկօրէն նոյնքան ճաշակաւոր կերպով պարդարուեցաւ: Քիչ անդին գանձատունն է, 1982-ին կառուցուած կարմիր տուֆ քարէ, Ալեք Մանուկեանի բարերարութեամբ:

Արուեստասէր Հայրապետը հոն ի մի հաւաքեց եկեղեցական եւ մշակութային մեծարժէք գանձեր: Կոմիտաս Վարդապետի առաջնորդութեամբ եւ բացատրութեամբ, կ՚այցելենք Վեհարան եւ Գանձատուն, ոչ առանց հպարտութեան զգացումի: Այսօր Էջմիածինը, որպէս Հայ Առաքելական Եկեղեցւոյ կեդրոն «ճերմակերես» կը հիւրասիրէ Պատրիարք, Պապ, ո՛վ որ կ՚ուզէք: Ի՞նչ վիճակի էր 1945-ին:

Մայր Տաճարի զանգակատան աջ եւ ձախ կողմերը թաղուած են վերջին երկու դարերու Ամենայն Հայոց Հայրապետները: Անոնցմէ երեքին շիրիմները ծածկուած են թարմ ծաղիկներով: «Նուազող վշտից հայրենեաց Հայոց», Խրիմեան Հայրիկը, Վազգէն Ա. եւ Գարեգին Ա. կաթողիկոսներունը: Անդին՝ ձախ կողմը կայ նոր տապանաքար մը. Խորէն Ա. խեղդամահ կաթողիկոսինն է, որուն աճիւնը 58 տարի պանդխտութենէ ետք 1996-ին եկաւ հանգչիլ իր նախորդներուն եւ յաջորդներուն կողքին:

Կէսօրէ վերջ արագ կ՚այցելենք Ս. Գայեանէ, իրարու յաջորդող պսակադրութիւններ են, մէկը կը լրանայ, միւսը կը սկսի: Եկեղեցւոյ ետեւը, ի շարս շատ մը եկեղեցականներու շիրիմներուն, թաղուած են Վարդանը՝ Րաֆֆիի «Խենթը» վէպին հերոսը, Վազգէն Ա.ի մայրը՝ Տիրամայր Սիրանոյշ Պալճեանը եւ երգչուհի Լուսինէ Զաքարեանը:

Երեկոյեան Միւռոնօրհնութիւնն է: 21-րդ դարու առաջին Միւռոնօրհնէքը տեղի կ՚ունենայ անցեալ տարի կառուցուած բացօթեայ Սուրբ Տրդատ խորանին վրայ, որ կը գտնուի Մայր Տաճարին եւ Գէորգեան Ճեմարանին մէջտեղը, ընդարձակ կպրապատ հարթավայրով: Արարողութենէն 2 ժամ առաջ, մեծ է արդէն սպասող բազմութիւնը: Խորանին առջեւ մի քանի շարքի վրայ դրուած են աթոռներ «պաշտօնական անձնաւորութիւննե - րուն» համար, իսկ հարթավայրին շուրջ տեղադրուած են երկաթէ շարժական պարիսպներ ուր կը հսկեն ոստիկանները: Մուտքը հրաւիրատոմսով է, բայց անխուսափելի է հրմշտուքը, նաեւ լուտանքներ: «Ճարպիկներ» յաջողած են տեղ գրաւել աթոռներու վերջին շարքերուն վրայ. ուրիշներ բարձրացած են հեռատեսիլի հարթակին վրայ որուն սանդուխը կը փլի ծանրութենէն – փառք որ վիրաւոր չկայ. «Հրաւիրեալներ»էն յետոյ տեղացին: Կանգնած եմ վերջին աթոռներուն ճիշդ ետեւը, ետեւէն ճնշումը կը սաստկանայ. ճզմուած ենք տուփի պահածոյ ձուկերու նման: Լաւ որ բացօթեայ ենք, եթէ ոչ շնչահեղձ ըլլալը քիչ է: Տաժանելի է ոտքի վրայ սպասումը կիզիչ արեւին տակ: Վերջապէս որոշուած ժամէն կէս ժամ յետոյ կը սկսի արարողութիւնը որուն հետեւելու եկած են Հայաստանի եւ Ղարաբաղի Նախագահները, վարչապետները, պետական աւագանին եւ օտար դեսպանները եւ եկեղեցականները: Երգեցողութիւնը կը կատարէ Պետական Ակադեմական երգչախումբը, Յովհաննէս Չէքիճեանի ղեկավարութեամբ: Հրաշափառի հնչիւններուն տակ երկու կաթողիկոսները, ընկերակցութեամբ 12 լրիւ զգեստաւորուած եպիսկոպոսներու, կը բարձրանան խորան: Կը սկսի Միւռոնօրհնէքի հոգեպարար արարողութիւնը բայց ... չեն դադրիր հազարաւոր մարդոց խօսակցութիւնները, որոնք կը վերածուին կատարեալ ժխորի, երբեմն այն ատեն որ հակառակ բարձրախօսներուն, կարդացուած աղօթք ու Աւետարան հազիւ կը լսուին. մարդիկ իրարու հետ կը խօսին, կը խնդան, մերթ աթոռներու վրայ կը բարձրանան նկարելու անյագ մարմաջով: Շատ քիչերունն է երկիւղած կեցուածքը: Կրօնական հոգեպարար արարողութեան մասնակցելո՞ւ, աղօթելո՞ւ եկած են մարդիկը թէ ոչ հանդիսատեսութեան, «շէյիր»ի: Ո՞ւր են Հռոմի Ս. Պետրոսի հրապարակին վրայի, կամ արեւմտեան կոթական հսկայ տաճարներու մէջ հաւաքուած հազարաւոր երկիւղած բազմութիւնները, լուռ ու մունջ, ուր ճանճի մը բզզիւնը անգամ կը լսուի...: 18-րդ հարիւրամեակին թերեւս Հայր հետեւի՞ այդ բարի օրինակին...: Դժբախտաբար նոյն տգեղ պատկերները պիտի կրկնուին յաջորդ օրը Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ օծման ատեն, եւ չորս օր յետոյ նոյն եկեղեցւոյ մէջ Պապին ընդունելութեան: Երգչախումբը բազմաձայն կ՚երգէ հոգեզմայլ շարականները, կը բացուի Միւռոնի կաթսային կափարիչը: «Առաքելոյ աղաւնոյ» շարականով Գարեգին Կաթողիկոս նոր միւռոնին մէջ կը խառնէ հինը: Այսպէս, 17 դարեր շարունակ, նորին մէջ խառնուած հինով Հայը կը հաւատայ որ այսօրուան Սրբալոյս Միւռոնին մէջ կայ մասնիկ մը, հիւլէ մը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի օրհնած առաջին Միւռոնէն: Արամ Կաթողիկոս ալ կը լեցնէ «ի նշան սիրոյ եւ միասնականութեան», սրուակ մը Անթիլիասի մէջ օրհնուած վերջին միւռոնէն: Վերջապէս, կաթսային մէջ կը մխրճուին Քրիստոսի Ս. Գեղարդը եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը: «Օրհնեսցի եւ սրբեսցի Միւռոնս այս նշանաւ»: Աւարտած է Միւռոնօրհնէքը: Առաջինը կը քարոզէ Արամ Կաթողիկոս. հայրապետին խօսքերը, կը շիկացնեն, կը վերացնեն բազմութիւնը որ աւարտին, բուռն եւ երկարատեւ ծափահարութիւններով կը պատասխանէ: Գարեգին Կաթողիկոս կուտայ իր պատգամը եւ աւարտին 1700-ամեակի ոսկէ մետալը կը յանձնէ Միւռոնօրհնէքի արժանթինահայ կնքահօր: «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»ով կ՚աւարտի վեհաշուք հանդիսութիւնը: Նորէն հրմշտուք, կաթսան համբուրելու համար, մինչ եկեղեցական Թափոր եւ պաշտօնական անձինք կը հեռանան:

Ուրիշ օր մը ուխտագնացութիւն դէպի Խոր Վիրապ, Գրիգոր Լուսաւորչի ապաշխարութեան աւանդական վայրը, որ Արաքսի մօտ ըլլալուն, անցեալին անմատչելի էր որպէս զինուորական գօտի: Գեղեցիկ է Արարատեան դաշտին ոսկի աշունը: Ամէն կողմ մշակութիւններ. գիւղատնտեսութեան սեփականաշնորհումը յաջողած կը թուի ըլլալ: Եթէ քիմիական պարարտանիւթի պակասով բերքերը շատ բարձր չեն, գոնէ հայաստանցին կ՚ուտէ մաքուր, անարատ եւ համով – հոտով պտուղ – բանջարեղէն:

Ահա վանքը բլուրին վրայ, ստորոտը գիւղին ընդարձակ գերեզմանատունը: Ի տարբերութիւն արեւմտեան երկիրներու, Հայաստանի գիւղական գերեզմանները պարսպապատ չեն: Կը բարձրանանք Սքանչելի վանք – հոն եւս մոմ եւ աղօթք: Սքանչելի է տեսարանը վանքէն: Մինչեւ Արաքս, բուսականութիւն, կանաչութիւն. անկէ անդին, միայն չորցած արօտներ եւ թրքական զօրանոցներու շէնքեր երկու-երեք հատ: Մասիսները վեհօրէն կ՚երեւան, կարծես ձեռքդ երկարես կը հասնիս: Խարկանք ու պատրանք. անմատչելի են, անհասանելի. մինչեւ ե՞րբ:

ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ

(Շար. 4)

ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ ԵՒ Ո՞ՒՐ Է ԿԱՐԵԼԻ ՉԱՐԱՇԱՀԵԼ ՊԱՐԱՃԱՆՈՎԻՆ

Վենետիկից խոստացել են գումար տրամադրել, որպէսզի Սարգիս Փարաճանովի «Սայաթ – Նովա / Նռան գոյնը» իր բնօրինակի համաձայն, վերականգնուի մոսկուաբնակ Լեւոն Գրիգորեանի միջամտութեամբ:

Պէտք է ընդգծեմ ու յուշեմ, որ 1969 թուին Փարաճանովի հսկողութեամբ սարքուած (մոնտաժուած) ու ձայնագրուած հայերէն «Սայաթ – Նովա / Նռան գոյնը» պահպանուել է եւ կարիք չկայ այն վերականգնելու: Այն տպագրուել է ֆիլմի հեղինակի համաձայնութեամբ ու ստորագրութեամբ: Ֆիլմը վերականգնելու գաղափարը մի շարք թիւրիմացութիւնների արդիւնք է: Շփոթը հիմնականում ստեղծուել է, 1971 թուին շրջանառութեան մէջ դրուած, Սերգէյ Իւտկեւիչի խմբագրութեամբ ու վերադասաւորմամբ սարքուած ու կրճատուած ռուսերէն տարբերակի բերումով (*): Այդ տարբերակից, 1972 թուին Թեհրանում, տողերիս գրողը, Սովետական Միութեան դեսպանից մէկ օրինակ ստացաւ: Դրա ցուցադրումը նախ Իրանի ազգային ֆիլմադարանում եւ աւելի ուշ՝ Փարիզ, Լոնտոն, Մոնրէալ եւ այլն, պատճառ դարձաւ, որ «Սայաթ – Նովա / Նռան գոյնը» համաշխարհային էկրանների վրայ, Իւտկեւիչի տարբերակով ճանաչուի:

Փարաճանովի հսկողութեամբ սարքուած հայերէն օրինակը, տեւողութեամբ աւելի երկար է: Դասաւորմամբ եւ բովանդակութեամբ այն շատ աւելի յստակ է ու խօսուն: Ցաւօք, մինչեւ 1993 թուականը, փականքի տակ է պահուել «Հայ ֆիլմ»ի պատասխանատուների կողմից: «Հայ ֆիլմ»ի նախկին տնօրէն՝ Ռազմիկ Մաղոյեան, 1999 թուի Յունիս 1-ին, «Փարոս» թերթում, առանց իմանալու, որ ժապաւէնը 1993 թուին անպատասխանատու կերպով չահարկման է ենթարկուել, Փարաճանովին նուիրուած իր յօժ կարեւոր յօդուածաշարքում, այդ օրինակի գոյութեան մասին հարց էր ուղղել: Այսօր հայերէն տարբերակից պատրաստուած կրկնակ նեկաթիւը, փորձարկման համար նկարուած մասերի ու Փարաճանովի կողմից իր վերջնական օրինակի մէջ չներառուած հատուածների հետ, պահւում է Հայաստանի Ազգային Ֆիլմադարանում: Դրանք համարւում են ազգային գոյք:

Ֆիլմադարանում պահպանուող, ֆիլմի մէջ չներառուած, մասերը ներկայացնում են՝

– փորձարկումներ.

– տեխնիկական վրիպակների բերումով կատարուած կրկնակի նկարահանումներ.

– Փարաճանովի կողմից ֆիլմի վերջնական կառոյցի մէջ չներառուած մասեր.

– ոչ նախատեսուած պատահական նկարահանումներ.

Այս բոլորը զուրկ են հնչիւնային՝ ձայնային երիզից, քանի որ մաս չեն կազմել Փարաճանովի հսկողութեամբ սարքուած, ձեւի տակ բերուած, հայերէն օրինակին: Դրանք ֆիլմի կառոյցի մէջ առնելու համար, «վերականգնող» Լեւոն Գրիգորեանը, ստիպուած կ դիմել իր անձնական ճաշակին ու դատողութեանը: Դա արդէն գեղարուեստական ու գիտական առումով չի կարելի վերականգնում անուանել: Կարճ՝ «Սայաթ – Նովա / Նռան գոյնը», վերականգնելու կարիքը չկայ, քանի որ կայ Փարաճանովի կողմից վաւերացուած օրինակը:

Ֆիլմադարանի փոխ-տնօրէն՝ Գարեգին Զաքոյեանը, բարեբախտաբար, միանգամայն իրաւացիօրէն վերջերս մերժել է «Սայաթ – Նովա / Նռան գոյնը» ֆիլմի պահպանուած մասերն ինքնակոչ «վերականգնողներին» յանձնել: Երբ նկատի ենք առնում «վերականգնում» պիտակով, անպատասխանատու կերպով տարուող, մշակոյթի մշակների ստեղծագործութիւնների նկատմամբ այս օրերս ծաւալ ստացած աշխատանքների ցանկը, Հայաստանի Ֆիլմադարանի փոխ – տնօրէնի կիրառած կեցուածքը յօժ ողջունելի ու էապէս պաշտպանելի քայլ է: Այն ոչ միայն պաշտպանում է ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ այլ նաեւ փրկում է ազգային գոյքը մասնակի չահարկումներից ու ոտնձգութիւններից:

Աւարտուն վիճակի հասած ֆիլմերը, երբ ամբողջութեամբ պահպանուել են, կարիք չունեն նախապէս գրուած բեմագրութեան կամ ֆիլմի ստեղծմանը մասնակից աշխատակիցների միջամտութեան, հեղինակի անունից, վերականգնուելու: Դա միանգամայն անբարոյական քայլ է: Առարկելով թէ գրական բեմագրութիւնն է ֆիլմի վերականգմանը հիմք ծառայելու, «վերականգնողները» երբեւի չգիտեն,

որ յաճախ նկարահանելու պահին, հեղինակները զանցում են բեմագրութիւնը: Պարաճանովի պարագային, սա միշտ էլ սկզբունքային ու ստեղծագործական առումով, անխուսափելի քայլ է եղել ։Նա ստեղծագործել է թէ կանխամտածուած ու թէ յանպատրաստից՝ յանկարծաբանումի դիմելով: Հեղինակի բացակայութեան դէպքում, այդ եզակի ու ինքնուրոյն ստեղծագործական ընթացքը շարժման մէջ դնելն անկարելի է: Ցետոյ չէ՞ որ արդէն Պարաճանովը՝ ինչպէս արդէն նշեցինք, ինք անձամբ վաւերական է համարել հայերէն օրինակը:

Շարժարուեստի պատմութեան մէջ, վերականգնուել, կորուստից փրկուել ու նորոգուել են բազմաթիւ եզակի գործեր: Համր ֆիլմերից կարելի է յիշել Գարլ Տրէյըրի «Ժան տ'Արքի չարչարանքները», Ֆրից Լանկի «Մետրոպոլիս»ը եւ այլն: Այդ գործերը վերականգնուեցին քանի որ հեղինակների ստեղծած բուն օրինակից միայն ցաք ու ցրիւ կրկնօրինակներ էին պահպանուել: Տարբեր տեղերում պահպանուած օրինակների օգնութեամբ էր միայն, որ կարելի եղաւ այդ ֆիլմերի ամբողջական կառոյցն ու պատկերը հաստատել: Հայ շարժարուեստի պատմութեան մէջ, ցանկը ոչ միայն բազմանուն չէ, այն նաեւ խիստ պախարակելի է: Յիշենք մի քանի կարեւոր փաստեր: «Հայ ֆիլմ»ը 60-ական թուերին, վերականգնումների անուան տակ մեծապէս խեղաթիւրել է Հ. Բէկ-Նազարեանի «Պէպօ» ֆիլմը՝ հնչիւնային երիզը նորովի ձայնագրելով եւ վախճանուած դերասանների ձայնը, նոր դերասաններով փոխարինելով: Խօսուն կինոյի վերածելով, բնութագրկել է նաեւ համր «Շոր եւ Շորշոր» ֆիլմը: Այդ նոյն տարիներին էր, որ Պարաճանովի միջամտութեամբ փրկուեց հայկական համր կինոյի վերջին արտադրութիւնը՝ «Գիքոր»ը: Պարաճանովն յաջողեց «վերականգնողներին» համոզել, որ այդ ֆիլմի կառոյցի մէջ չմիջամտեն ու փոխարէն խօսք յաւելացնելու, միայն երաժշտական ձայներիզով բաւարարուեն:

Այստեղ կարեւոր եմ համարում նշել, որ տողերիս գրողը 1972 թուին, ոչ շահարկային պայմանագրով, Թեհրանում «Սովէքսպորտֆիլմ»ից գնել էր «Սայաթ-Նովա / Նռան գոյնը» ֆիլմի հայերէն օրինակը: Այն երբեք ինձ չյանձնուեց: Պայմանագիրը փոխարինուեց ռուսերէն տարբերակով: Ապագայ տարիներում, 1989 թուի սկզբին, քանի որ «Հայ ֆիլմ»ի մօտ փականքի տակ պահուած հայերէն բնօրինակի գոյները արդէն սկսել էին խունանալ, որպէսզի փրկուի՝ տարածայրատեւ ջանքերի բերումով համաձայնութիւն կայացաւ, որ Ֆրանսիայի պետութեան ծախքով, «Սինեմաթէք Ֆրանսէզ»ի հսկողութեամբ գունային առումով փոզիթիւը վերահաստատուի եւ կրկնակ նեկաթիւ պատրաստելուց յետոյ, ցուցադրուի Ֆրանսիայի յեղափոխութեան տարեդարձին նուիրուած՝ «Ազատութեան Երգան» կոչուող, ծրագրում: Այս հարցի մասին, Մոսկուան տուել էր իր համաձայնութիւնը: Ինչպէս նաեւ Պարաճանովը: Մնում էր, որ «Հայ Ֆիլմ»ի պատասխանատուները, հայերէն տարբերակը Փարիզ փոխադրէին: Այդ հարցով զբաղուել եմ Պարաճանովի մահից յետոյ եւս՝ մինչեւ 1993 թուականը: Անգամներ Հայաստան եմ անցել ֆիլմը ստանալու համար, սակայն աւաղ, պատասխանատու անձինք երբեք որեւէ խոստում ու պայման չյարգեցին:

Առաւել, նախատեսուած էր նաեւ, որ Փարիզ՝ Ժորժ Փոմփիտուի կենդրոնում կայանալիք հայկական ֆիլմերի մեծ փառատօնի օրերին, ցուցադրուի հայերէն տարբերակը: Ֆիլմը փականքի տակ պահող անձինք, այս ծրագիրը նոյնպէս խանգարելով, շատ չանցած Ամերիկա անցնելու հեռանկարով, հայերէն տարբերակը ցուցադրութեան հանեցին Լոս-Անճըլըսում: Այնտեղ Պարաճանովի օրինակի հիմնական տարբերութիւններն աննկատ անցան ու ամերիկացի «կինոգէտների» կողմից միայն՝ «աւելի լիրիկական օրինակ» որակուեց: Տեսերիզներով վաճառելու նպատակով, շուտով բուն օրինակից պատճէններ հանելու իրաւունքները յանձնուեցին մասնակի ընկերութիւնների:

Այն ներկայիս վաճառւում է ԱՄՆ-ի արեւմտեան ու արեւելեան ափերում: Նման կերպով, ֆիլմը վաճառուել է նաեւ գերմանաֆրանսական «Արթէ» կայանին ու ցուցադրուել է անյարմար ժամին, կէս գիշերից յետոյ, որի բերումով կրկին անցել է աննկատ: Վերջերս ֆիլմը շահարկուել է նաեւ Լոնտոնում:

Որպէսզի պատեհապաշտ անձինք, զգայացունց քարոզչութեամբ ու ազգային կեղծ ցուցամոլութեամբ ամբոխավարութեան դիմել չկարողանան ու նրանց ինքնասիրութիւնը շոյելով, խորամանկութեամբ ճշմարիտ արուեստի գործերը, յանուն անձնական շահերի չչարաշահեն, ազգային մշակոյթի արժէքների պաշտպանութիւնը, միջազգային հաստատ կարգի մէջ պահուած հաստատութիւնների հովանու օժանդակութեամբ ու դրանց զուգակցուած կառոյցների մէջ պէտք է ներառուեն: Ժամանակն է, որ Մշակոյթի նախարարութիւնը մշակոյթի արտադրանքների բոլոր մարզերում, դիտակ մարդկանց օժանդակութեամբ ու խորհրդակցութեամբ, կարգ ու կանոններ հաստատել տայ, որպէսզի ըստ ազգային ու միջազգային օրէնքների, պաշտպանուեն մշակոյթի մշակների հեղինակային իրաւունքներն ու նրանց արտադրանքները:

Ջխախտելու համար Պարաճանովի ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ, պահպանուած հատուածները, խորհրդատրելի է ներառնել մի վաւերագրական ֆիլմի մէջ: Այն կարող է վկայել «Սայաթ-Նովա / Նռան գոյնը» ֆիլմի ստեղծման մասին: Ցաւոտկապէս եթէ ֆիլմի մէջ նկարահանուեն նաեւ, ստեղծման աշխատանքներին մասնակից, դեռեւս ապրող մի շարք վկաներ, ինչպէս օրինակ՝ Տիգրան Մանսուրեան, Պերճ Զէյթունցեան, Ստեփան Անդրանիկեան, Ռազմիկ Մաղոյեան եւ այլն, եւայլն: Նման մի վաւերագրութեան միջոցով, Պարաճանովի ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ եւ նրա ստեղծագործական աշխարհը չպիտի խաթարուի ու պահպանուած հատուածները կարող են աւելի լայն հասարակութեան հաղորդակցուել:

ԱՐԲԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(*) Պարաճանովի շարժարուեստի լեզուն, ոճն ու գեղագիտութիւնը հայերէն օրինակում ուսումնասիրելով, երկու ֆիլմերի տարբերութիւնների մասին, մի ծաւալուն համեմատական ուսումնասիրութիւն եմ պատրաստել: Ֆիլմի շուրջ բստեղծուած շփոթն իր բարի վախճանին հասցնելու նպատակով, շուտով այն կը յանձնեմ հրապարակութեան:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԼԳՈՆԵԱՆԻ ՄԷՋ

Արամ Ա. Կաթողիկոս Կիպրոս տուած հովուապետական այցին օրերուն, Հոկտ. 23-ին, այցելած է Մելգոնեան ուր ջերմ ընդունելութիւն գտած է: Իր հայրական խօսքին մէջ կաթողիկոսը շեշտած է հայկական վարժարանի մը աշակերտը ըլլալու գիտակցութիւնը. ան ըսած է. «դուք այստեղ եկած էք ոչ թէ սորվելու համար, այլ՝ ըլլալու: Ուրիշ դպրոցի մէջ ալ կընաք սորվիլ, բայց այստեղ է որ հայ կը դառնաք: Մեր կեանքը պէտք ունի ձեզի»:

Կաթողիկոսը եւ անոր չքախումբը նոյն կէսօրին ճաշած են Մելգոնեանի աշակերտներուն հետ:

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՍԿ

Պաշտօնաթերթ կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ

Թիւ 6-7 (Յունիս - Յուլիս) եւ Թիւ 8 (Օգոստոս) 2001

Անթիլիաս, Լիբանան

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ՆԵՐԿԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԻՍԼԱՄՆԵՐԸ

Ռուսաստան տէր է 20 միլիոնի մօտ իսլամ քաղաքացիի. անոնք գլխաւորաբար խմբուած են Վոլկայի միջին մասին՝ Թաթարիստանի, Պաշքորտիստանի մէջ եւ Կովկասի հիւսիսը. Չէչէնիա, Ինգուշիա, Տաղստան: Համաշխարհային երկու մեծ, այլ հակադիր կրօնքներու հոն միասնաբար ներկայութիւնը թէ՛ հաւատքի, թէ հողային տեսակէտէն Ռուսաստանը մասնայատուկ կացութեան մը մէջ կը դնէ: Սահմաններուն այնքան մօտիկը լսելի պատերազմին ոտնաձայնը արդէն դրեթէ սկսած է արձագանգներ ունենալ երկրին մէջ: Հարաւային շրջաններու իշխանութեան տէրերը միասնական կերպով կը զօրակցին Աֆղանիստանի մէջ ռուս կառավարութեան եւ ամերիկեան զօրքերու գործողութիւններուն, բայց նոյն շրջաններու մահմետական հոգեւոր պետերը իրարմէ տարբեր կեցուածքներ ցոյց կու տան:

Այսպէս, քաղաքական ղեկավարները մեծ մասով կը գոհանան կրկնելով նախագահ Պուտինի տեսակէտը թէ անհրաժեշտ է պայքարիլ համաշխարհային նոր սպառնալիքին դէմ եւ ատոր համար հարկ է ՄԱԿ-ի հովանաւորութեան տակ միջազգային համախոհութիւն մը ստեղծել: Այսուհանդերձ, Թաթարիստանի, Պաշքորտիստանի նախագահները նախընտրած են լուռ մնալ ու պաշտօնական ոչ մէկ յայտարարութիւն ըրած են Աֆղանիստանը հարուածող գործողութիւններու մասին: Այս երկու նախագահներուն լռութիւնը բաւական խոր զարմանք պատճառած է ռուսական շրջանակներուն: Մոսկուայի «Նիզավիսիմայա» թերթը կը գրէ թէ այդ լռութիւնը կը նշանակէ թէ մահմետական այդ երկու նախագահները երկու կրակի միջեւ ինկած կը զգան իրենք զիրենք: Մէկ կողմէն կան նախագահ Պուտինը եւ Ռուսաստանի կառավարութիւնը որոնց հաւատարիմ են, միւս կողմը կայ մահմետական աշխարհը եւ անոր քաղաքական ղեկավարները որոնց հետ իրենք անկախ յարաբերութիւններ մշակած են: Անոնց լռութիւնը կը մատնէ թէ որոշապէս երկդիմի դիրքի մէջ են երկուքն ալ, հանդէպ՝ Աֆղանիստանի զարգացումներուն:

Իսկ Ռուսաստանի մահմետական կրօնական պետերը դատապարտած են Աֆղանիստանը թիրախ առած գործողութիւնները. Թաթարիստանի մահմետականներուն հոգեւոր վարչութիւնը յայտարարած է թէ միայն Աֆղանները կրնան կարգ ու կանոն հաստատել իրենց երկրին մէջ: Պաշքորտիստանի կրօնական պետն ալ մէջբերած է Գուրանի այն տողը ուր կ'ըսուի թէ ամէն մահմետական իրաւունք ունի իր տունը - տեղը պաշտպանելու: Վոլկայի կրօնական ղեկավարներուն տեսակէտը այն է թէ ահաբեկչութեան դէմ պայքարի պատրուակով ժողովուրդի մը բնաջնջումը եւ աշխարհի բաժանումը կը կատարուի:

Կովկասեան շրջաններէն Կապարտինօ-Պալքարիոյ մզկիթներուն պատասխանատուները ամէն տեղ ժողովներ կազմակերպած են, իրենց վախը յայտնելու որ ԱՄՆ զինուորական կարեւոր գործողութիւններ կը պատրաստէն շարք մը երկիրներու դէմ: Տաղստանի միւֆթին կոչ ըրած է մահմետականներուն որ որոշ անձնաւորութիւններու սրբազան պատերազմի կոչերուն կարեւորութիւն չտան. ան ըսած է թէ այդ անձնաւորութիւնները կրօնքը որպէս գործիք կը ծառայեցնեն եւ Պէն Լատէն անոնց ամէնէն անարգ ներկայացուցիչն է:

Մոսկուայի հարաւի Կուրսկ քաղաքին մէջ պաղեստինցի ուսանողներու նախաձեռնութեամբ սկսած է գործել «Պաղեստինի ազատագրութեան կազմակերպութիւն» մը որ տեղացիներուն կը բացատրէ քամիքազէներու մղիչ ուժերը եւ Ռուսաստանի ու մահմետական աշխարհին միջեւ յարաբերութիւններու զարգացման հեռանկարները:

ՔԱՂՀԱՆ

ԹԻՒ 17 ԽԱՑԻԷՆ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

- Հիմա յիշեցի, - գոչեց Տրդատ, - այո՛, այո՛, Արշակը, որ ժամանակին ճանչցած եմ Պուլկարիոյ մէջ, բայց իրարու հետ մեծ մտերմութիւն մը չունինք, այն օրը դիպուածով իրարու հանդիպեցանք ու քիչ մը տեսնուեցանք. կը զարմանամ, որ զիս փնտռեր է. իրարու հետ որեւէ գործ մը չունինք:

- Թերեւս ինք պէտք ունեցած է ձեզի:

- Կրնայ ըլլալ:

- Ուրեմն ձեզ չգտա՞ւ:

- Ո՛չ, արդէն ինչպէս կրնար գտնել, տունս չէր գիտեր:

- Գոնէ հասցէնիդ տուէք, որպէսզի եթէ կրկին հանդիպիմ իրեն, կարենամ ըսել:

- Դուք իրեն հասցէն տուէք ինծի, ես կ'երթամ կը գտնեմ զինքը, - պատասխանեց Տրդատ:

- Իր տանը հասցէն չեմ գիտեր, բայց զինքը կրնաք ոստիկանատունը գտնել:

- Ոստիկանութեան պաշտօնեա՞յ է...

- Չէ՞ք գիտեր:

- Ո՛չ, տեղեկութիւն չունէի, ինչպէս ըսի, զինքը շատ քիչ կը ճանչնամ:

- Ինչ որ է, կը կարծէի, որ մտերիմ բարեկամներ էք:

- Ձեր ենթադրութիւնը սխալ է, բայց կարեւորութիւն չունի այս խնդիրը:

- Այնպէս է, - հաստատեց Աստիկ, - այդ Արշակը արդէն իմ ալ բարեկամս չէ, երբեմն կը հանդիպիմ իրեն ու մէկ քանի խօսք կը փոխանակեմ, այսչափ... ես շատ չեմ սիրեր ոստիկանութեան հետ կապ ունեցող մարդիկը:

- Արշակը արդեօք լրտե՞ս է:

- Շատ հաւանական է... եւ քանի որ տեղը եկաւ, ըսեմ ձեզի, որ լաւ կ'ընէք, եթէ հետը շատ յարաբերութիւն չունենաք:

- Շնորհակալ եմ ձեր տուած խորհուրդին, - պատասխանեց Տրդատ, - արդէն ես ալ իրմէ հեռու կը փախչէի կոր:

- Այս միջոցիս մանաւանդ շատ զգուշութեամբ վարուելու է, կացութիւնը խիստ ծանր է:

- Իրա՞ւ կ'ըսէք:

- Բնականաբար, չէ՞ք տեսնար, թէ Հայերուն դէմ ի՜նչ հալածանք կայ. մանաւանդ հնչակեաններուն դէմ:

- Այդ մասին վախ չունիմ, - ըսաւ Տրդատ, - ես որեւէ կուսակցութեան չեմ պատկանիր:

- Ես ձեզի համար չեմ խօսիր, - պատասխանեց Աստիկ, - խօսքս ընդհանուրին համար է, բայց ներեցէք, արդեօք մասնաւոր ըսելի՞ք մը ունէիք ինծի:

Այս հարցումը բռպէ մը շփոթեցուց Տրդատը:

Մասնաւոր ըսելիք մը չունէր, այլ պարզապէս փափաքած էր Աստիկի հետ ծանօթութիւն հաստատել, յուսալով, որ պիտի կրնար անկէ տեղեկութիւններ քաղել կարգ մը խնդիրներու մասին, որոնք զինքը կը շահագրգռէին, բայց ատոր համար հարկ էր նախ Աստիկի վստահութիւնը գրաւել:

- Այո՛, - պատասխանեց, - ուզեցի ձեզ տեսնել, յուսալով, որ կրնաք ինծի օգտակար ըլլալ, որովհետեւ լսած եմ, որ պաշտօնական շրջանակներու հետ մօտէն յարաբերութիւն ունիք:

Աստիկ մտածեց, թէ երիտասարդը իրմէ ծառայութիւն խնդրելու եկած էր եւ իսկոյն որոշեց շահագործել զայն:

- Անշուշտ շատ յարաբերութիւններ ունիմ, - պատասխանեց, - իմ պաշտօնիս բերումով, ու բոլոր բարձր պաշտօնեաները իմ բարեկամներս են, շատերը դպրոցական ընկերներ, որոնց հետ մտերմօրէն կը տեսնուիմ եւ այդ յարաբերութիւններուս շնորհիւ կրցած եմ շատերու ծառայութիւն մատուցանել, մանաւանդ այս միջոցիս, ուր զինուորական ծառայութեան խնդիրը կայ, քանինե՛ր կրցայ ազատել զինուորութենէ:

- Իրա՞ւ կ'ըսէք...

- Անշուշտ, բարձրաստիճան սպաները բոլորն ալ ինծի ծանօթ են:

Աստիկ գրասեղանին վրայ դրուած իր պայուսակը բացաւ, մէջէն մէկ քանի թուղթեր հանեց եւ ըսաւ.

- Տեսէ՛ք, ասոնք բոլոր զինուորական ծառայութենէ ազատելու համար ըլլալիք գործողութիւններուն թուղթերն են. ամէնքն ալ հայ երիտասարդներ, բայց նոյնիսկ Թուրքեր եւ Յոյներ կան, որոնք ինծի դիմում կ'ընեն... վստահ եմ, որ դուք ալ այդ տեսակ գործի մը համար եկած էք, մի՛ քաշուիք, ըսէ՛ք:

- Չէ՛, ես զինուորական ծառայութեան հետ գործ չունիմ, - պատասխանեց երիտասարդը:

(Շար. 92)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Ֆիլոր Սարոյեան իր ամուսնոյն Մկրտիչ Սարոյեանի յիշատակին կը նուիրէ 1500 Ֆր. Հայաստան Հիմնադրամին եւ 1000 Ֆր. Դպրոցասէր վարժարանին (ստանալ՝ «Յառաջ»էն):

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կապոյտ Խաչի Սէն Ժերմէ Ջաւօ Շանթ մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կու տայ իրմէ յաւէտ բաժնուած ընկերուհիներու հոգիներուն խաղաղութեան Նոյեմբեր 4, Կիրակի, ժամը 10-ին Թաղիս Ս. Սահակ - Մեսրոպ Եկեղեցւոյ մէջ:

Ա. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՇԱԲԱԹ, Նոյեմբեր 3

Տօն ամենայն սրբոց՝ Հնոց, Նորոց, յայտնից, անյայտից:

Ժամը 10-ին, պատարագ կը մատուցուի:

***

ԿԻՐԱԿԻ, Նոյեմբեր 4

Ը. Կիրակի, Զկնի Սրբոյ Խաչի

Այսօր երկրորդ տարեդարձն է օծման՝ Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր ԳԱՐԵԳԻՆ Բ. Ծայրագոյն Պատրիարք - Կաթողիկոսին Ամենայն Հայոց:

Ի ժամու Սրբոյ պատարագին՝ «ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ» կը կատարուի:

FRANCOPHONIE ARMENIE 2000

Noël arménien 2002

à bord du **«Napoléon Bonaparte»**
Du 2 au 4 janvier 2002

2 janvier : — Appareillage à 20h de Marseille;
— Dîner avec l'orchestre **«Massis»;**
— Nuitée dansante avec 2 orchestres;
— Nuit en mer.

3 janvier : — Arrivée à Bastia. Petit déjeuner à bord;
— Excursion en Balagne. Déjeuner typique;
— Visite de cave à vin à Patrimonio;
— Dîner à bord;
— Nuitée avec 2 orchestres;
— Nuit en mer.

4 janvier : — Petit-déjeuner à bord;
— Arrivée à Marseille à 7h30

Tarif: tout compris, 1600 F par personne

Renseignements/réservations :

Maurice Harounian: 04 91 44 47 77;
Jacques Avdoyan: 04 91 76 45 75.

— Places limitées —

Cathédrale Apostolique Arménienne
SERPOTZ
TARKMANTCHATZ
de Marseille

La Commission
Foi et Traditions Arméniennes

dans le cadre des activités
«LOUSSAVORTCHI LESSARANE»
(Atelier «St-Grégoire l'Illuminateur»)

propose

un nouveau cycle de rencontres d'initiation :

Pour Lire et Commenter les Ecritures Saintes

(en français)

avec
le **Rév. Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale

Mercredi 7 novembre à 19 heures

dans la salle «A. Tcherpachian»
339, avenue du Prado, 13008 Marseille

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SECTION D. MISSAKIAN
de SEVRAN LIVRY

Après le succès remporté par le réveillon de l'an 2000, nous vous invitons à nous rejoindre à Bellefontaine pour fêter la nouvelle année.

Séjour du 28 décembre 2001 au 2 janvier 2002

Un accueil familial et une ambiance arménienne vous seront réservés. Dîner et soirée dansante pour le réveillon.

Date limite d'inscription : 30 Novembre

Réservez au plus vite au numéros de téléphone suivants :
— 01. 42. 36. 33. 73 (la journée)
— 01. 46. 58. 03. 17 (le soir)

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը, իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Պր. Մանուկ Մանուկեանի, Տէր եւ Տիկին Յովհաննէս Պառաւեանի իրենց կնոջ, եւ զարմուհիին Աստղիկ Մանուկեանի մահուան առիթով: Սգակիր է նաեւ Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տունը, որովհետեւ Աստղիկ Մանուկեանի մահով կը կորսնցնէ ուսուցչական մարմնի մաս կազմող կամաւոր անձ մը:

Այս տխուր առիթով Հայ Մշակոյթի Տունը շնորհակալութեամբ ստացած է Պր. Մանուկ Մանուկեանէ 500 Ֆր., Տէր եւ Տիկին Թորիկեանէ 200 Ֆր.:

(Շար. Ա. էջէն)

քացիներու Շարժում»ին կը գտնէ որ այս գնացքով, յաջորդ գիւղումը՝ ներումն է: Կը յիշուի նաեւ, որ դեռ անցեալ տարի, Ազգային Ժողովին մէջ, Լ. Ժոսփէն դէմ արտայայտուած էր բանտարկեալներու Գորսիքա տեղափոխման:

ՎՐԱՍՏԱՆ կ'ամբաստանէ Ռուսաստանը որ ռմբակոծած է անջատողական Աբխազիոյ շրջանը, ինչ որ Մոսկուա կը հերքէ: Շվարնածէ պնդած է որ ռուսական գործողութիւնները շրջանին մէջ, ոչ մէկ արդարացում ունին:

ՄԻԼՈՍԵՒԻՉ, Հոկտ. 29-ին, անգամ մը եւս ուրացաւ Միջազգային Պատժական Դատարանին (Լա Հէ) օրինականութիւնը: Երրորդ անգամ ըլլալով կը ներկայանար դատարան եւ բուռն ոճով յայտարարեց.— «Ամբաստանուած եմ որ պատիւն ունեցած եմ, օրինաւոր կերպով, պաշտպանելու երկիրս ոճրային յարձակումներու դէմ եւ ժողովուրդս ալ ահաբեկչութեան»: Եուկոսլաւիոյ նախկին նախագահը մերժեց կարդալ ամբաստանագիրը եւ շարունակեց ինքզինք պաշտպանել առանց փաստաբանի:

ԿԻԵՒԻ ՄԷՋ (Ուկրանիա) Հոկտեմբեր 29-ին սպաննուած է պետական բարձրաստիճան պաշտօնատար մը, որ պատասխանատու էր սակարանային շուկաներու: Օլեքսի Ռոմաշկօ դաշունահարուած է եւ նաեւ փամփուշտներ ստացած է:

ՆՈՒԷԼ ՄԱՄԷՐ կանաչներու պաշտօնական թեկնածուն դարձաւ Հոկտ. 29-ին, ստանալով շարքայիններու ձայներուն 81.6%-ը:

ԹՈՒՌԻ (Կեդրոնական Ֆրանսա) կեդրոնը, քաղաքապետարանին մօտ, Հոկտ. 29-ի առաւօտը, յանկարծ կառք մը իջնելով, հրացանը ձեռքը, միջին տարիքի անձ մը կը սկսի կրակել անցորդներուն վրայ: 4 մեռեալ կայ եւ 7 վիրաւոր: Քիչ ետք, ոստիկանութիւնը կը յաջողի ձերբակալել Ժան-Փիէռ Ռու-Տիւրաֆուրը, որ չի կրնար բացատրել արարքին պատճառները: Կը վերագրուի խելագարութեան: Մայրը չի կրնար բացատրել, կը ջանայ արդարացնել ըսելով թէ վերջերս շատ յուսալքուած էր, պարտքեր ունէր եւլն., եւլն.:

l'UNION GENERALE ARMENIENNE DE BIENFAISANCE
organise un

SEJOUR DE SKI et Réveillon de la Saint-Sylvestre

à ST-JEAN MONTCLAR
du mercredi 26 décembre au mercredi 2 janvier

Le dîner dansant du Réveillon sera animé par
«Le Grand Orchestre MASSIS»

l'UGAB invite ses membres et sympathisants à découvrir la cuisine arménienne, une ambiance familiale, le charme et la tranquillité du milieu montagnard de ce petit coin de Provence.

Lieu du séjour : **«Le Val des Neiges»**
Centre de Vacances de l'UGAB
04140 St-Jean Montclar
Tél. : 04 92 35 03 21

Renseignements et réservations :

au 01 45 20 03 18
UGAB — 11, square Alboni, 75016 PARIS
ou 06 76 48 58 73 (Mme Herminé Enficiaud-Duzian)

Հայաստանի Հանրապետութեան Առաջին Տիկին Պելլա ՔՈՉԱՐԵԱՆի
բարձր հովանաւորութեամբ

ՔԱՅՑԱՌԻԿ ՀԱՄԵՐԳ

Ի նպաստ Ոսկրածուծի Պատուաստի Հայկական Հիմնադրամի

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՓԻՎԱՔՈՎ (ջութակ)
ԷԼԷՆ ՄԵՐՍԻԷ (դաշնակ)

Յայտագիր՝ Պախ, Պէթհովըն, Ֆրանք

կազմակերպութեամբ՝
Ֆրանսահայ Կապոյտ Խաչի

եւ աջակցութեամբ՝
Ֆրանսահայ Կազմակերպութիւնները Համակարգող Խորհուրդին

ՈՒՐԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 7, ժամը 20.30-ին

Salle Gaveau — 45, rue La Boëtie, 75008 PARIS

Տոմսերու համար դիմել՝
— Ֆրանսահայ Կապոյտ Խաչ Հեռ. 01 48 24 46 57
— Կափօ Սրահ Հեռ. 01 49 53 05 07

CDCA

LANCEMENT DU PRIX DU CDCA

Communiqué

Le CDCA lance un prix qui récompensera l'auteur d'un travail universitaire ayant abouti à l'obtention d'un diplôme durant l'année 2001.

Ce concours, ouvert à toutes les disciplines, récompensera les meilleurs travaux dont le sujet porte, directement ou indirectement, sur l'Arménie ou les Arméniens.

Toutes les disciplines sont concernées: histoire, géographie, sociologie, économie, science de la vie ou de la terre, arts, sciences politiques, sciences physiques, droit, littérature, psychanalyse, architecture, cinéma etc...

Prix?

Trois prix ainsi qu'une possibilité de publication, récompenseront les meilleurs travaux :
— **1er prix:2300 euros (envrion 15090F)**
— **2ème Prix:1500 euros (environ 9800F)**
— **3ème Prix:765 euros (environ 5020F)**

Pour qui?

Tout étudiant titulaire d'un diplôme Bac+3 (niveau Licence ou équivalent) jusqu'à Bac+5 (DEA-DESS ou équivalent).

Type de document?

Tout document rédigé en français ou en anglais ayant donné lieu à la délivrance d'un diplôme par des organismes d'enseignement français : rapport de stage, mémoire, document de fin d'études, film etc...

Jury

Un jury pluridisciplinaire composé de chercheurs, professeurs et universitaires déterminera les trois œuvres jugées les meilleures tant sur le plan de l'originalité du thème que de la forme.

Inscription, remise de documents et des pièces justificatives :
avant le 31 janvier 2002.
Remise des prix: **1er mai 2002.**

Règlement et formulaire d'inscription à retirer auprès du Comité de Défense de la Cause Arménienne (C D C A), 17, rue Bleue, 75009 Paris.
Tél. : 01 44 83 07 02
Règlement du concours disponible sur **http://www.cdca.asso.fr**

Paris, le 24 septembre

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83, rue d'Hauteville — 75010 PARIS
SIRET : 571 027 317 000 15 **Commission paritaire : No 55935**